ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐԽԻՎ
ARCHIVES OF THE FIRST PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Ելույթներ
Հարցազրույցներ
Մամլո ասուլիսներ

ԵՐԵՒԱՆ 2009

ՀՏԴ 323 (479.25) : 342.5 (479.25)
ԳՄԴ 66.3 (2Հ) + 67.99(2Հ)
S – 506

LEVON TER-PETROSSIAN

RETURN

(SPEECHES, INTERVIEWS, PRESS CONFERENCES)

Erevan 2009

Տեր-Պետրոսյան Լեւոն
S – 506 Վերադարձ: Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ. Կազմող՝ Ա. Ռ. Բանուչյան, առաջաբան՝ Ա. Բ. Սարգսյան, խմբագիր՝ Ա. Է. Ավագյան – Եր.: Հայաստանի Հանրապետության Առաջին Նախագահի արխիվ, 2009. – 380 էջ:

ԳՄԴ 66.3 (2Հ) + 67.99(2Հ)

ISBN 978-99941-2-254-7

© Լեւոն Տեր-Պետրոսյան, 2009թ.

ՈՐՊԵՍ ՄՈՒՏՔ

2007թ. սեպտեմբերի 21-ին, Հայաստանի անկախության 16-րդ տարեդարձի առիթով «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան մեծ» սրահում ընդունելություն էր կազմակերպել Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: 800 տեղանոց դահլիճը ոտքի վրա ֆիզիկապես կարողացավ տեղավորել հավաքվածների միայն մի մասին՝ շուրջ 3000 հոգու: Եղան օրվան նվիրված մի քանի ելույթներ, բարձրախոսերը հավաքվեցին: Կարծես ամեն ինչ ընթանալու էր հենց այնպես, ինչպես 1998-ից ի վեր նմանօրինակ միջոցառումների ժամանակ. Նախագահը դրան մասնակցելու էր առանց հրապարակային ելույթի, լոկ իր ներկայությամբ ու անհատական զրույցներով: Սակայն հինգ րոպե անց տեխնիկան կրկին տեղադրվեց: 1998-ից հետո առաջին անգամ, ելույթի համար խոսափողին մոտեցավ Լևոն Տեր-Պետրոսյանը: Անակնկալը քարացրեց դահլիճը: Քարացած դահլիճը անբնական պայթեց, երբ Նախագահն օրվան պատշաճող մի քանի խոսքից հետո ըստ էության բացահայտեց տասնամյա իր «լռության ուխտը» խախտելու շարժառիթը՝ երկրում տիրող իրավիճակին տված գնահատականի հետեւյալ ձեւակերպմամբ. «...իշխանության վերից վար կոռումպացված, հանցագործ մի վարչակազմ, որի հարաբերությունները կարգավորվում են ոչ թե օրենքներով, ոչ թե ժողովրդի կամքով, ոչ թե քաղաքական երկխոսությամբ, այլ քրեական աշխարհի կանոններով: Լիովին մաֆիոզ, մինչեւ վերջին երանգը ստրուկտուրիզացված մի ռեժիմ, որը մեզ այսօր արդեն գլորել է երրորդ աշխարհի նմանատիպ ռեժիմների շարքը: Այս իշխանության գոյատեւումը չի խոստանում, որ մենք կարող ենք երբեւէ դուրս գալ այս վիճակից: Ուրեմն խնդիրն այս համակարգը կազմաքանդելն է, այս համակարգից ազատվելը»:

Բոլորը հասկացան, որ դրանով Լեւոն Տեր-Պետրոսյանն ազդարարում է իր ՎԵՐԱԴԱՐՁԸ. վերադարձը՝ գործնական, հրապարակային քաղաքականություն: Հաջորդ պահին, արդեն ոչ միայն դահլիճում, այլեւ ամբողջ երկրում բոլորը հասկացան, որ այս ելույթով, հերթական նախագահական ընտրության նախաշեմին, Հայաստանում որակապես նոր քաղաքական իրավիճակ է ստեղծվում: Սակայն, ինչպես այդ, այնպես էլ հաջորդ բոլոր պահերին ոչ մեկը չէր կարող պատկերացնել, թե ինչպիսի իրադարձությունների սկիզբ է դրվելու այդ ելույթով:

Դավադիր հեղաշրջումները, որ կարելի է իրականացնել տասնյակ մարդկանցով, զինված կամ թավշյա հեղափոխությունները, որ կարելի է իրականացնել հարյուրավորներով, ազգային-ազատագրական պատերազմները, որ կարելի է իրականացնել հազարավորներով, կարող են ժամանակավորապես այս կամ այն կերպ փոխել ժողովրդի պատմության ընթացքը: Սակայն գործնականում ողջ ժողովրդի ընդգրկմամբ ծավալված համաժողովրդական շարժումներն են, որ ոչ միայն պատմության ընթացք են փոխում, այլեւ կենսունակության մեծ լիցք են հաղորդում, երիտասարդացնող ավիշ ներարկում ազգին, ժողովրդին, եւ, ձեւավորելով որակապես նոր հասարակություն՝ կանխարգելում նրա ծերացումը կամ այլասերումը: 1988–1990 թվականների Ղարաբաղյան կամ Հայկական համազգային ժողովրդավարական շարժումից հետո բոլորովին այլ որակի հասարակություն էր Հայաստանում՝ արմատապես տարբերվող 70–80-ական թվականների հասարակությունից: Հասարակության այդ որակն էր, կամ՝ որակապես նոր այդ հասարակությունն էր, որ հաջորդ տարիներին ոչ միայն կարողացավ իր ուսերին աննախադեպ ծանր բեռ կրել, անհաղթահարելի թվացող խոչընդոտներ հաղթահարել, այլեւ ոչ մեկի մտքով չանցնող հաղթանակների հասնել: Անգամ ժամանակին՝ 1965–1966 թվականների ազգային-քաղաքական խնդիրների մասնակի մի պոռթկումը որակական կարեւոր տեղաշարժեր առաջացրեց հասարակության մեջ՝ նպաստելով խորհրդային բռնապետության պայմաններում քայքայված ու կազմալուծված ազգային ինքնագիտակցության վերականգնմանը:

2008թ. նախագահական ընտրությունների նախաշեմին Լեւոն Տեր-Պետրոսյանի հրապարակային հայտը, որ պաշտոնապես հնչեց մոտ մեկ ամիս

անց՝ հոկտեմբերի 26-ին, այն ակնհայտորեն շարքային ընտրարշավից վերածելու էր համաժողովրդական շարժման։ Դրա համար հասունացած էր օբյեկտիվ պայմանը՝ համընդհանուր ատելության վերածված համաժողովրդական դժգոհությունը վարչախմբի նկատմամբ, ինչին գումարվում էր սուբյեկտիվ գործոնը՝ Առաջին նախագահի անձով ներկայացող փորձառու առաջնորդը։ Դույզն ինչ չնսեմացնելով 1965–1966, 1988–1990թթ. համաժողովրդական շարժումները, առանց երկմտելու պետք է խոստովանել, որ համաժողովրդական այն շարժումը, որ ծայր առավ 2007թ. աշնանից ու շարունակվում է առ այսօր, իր բոլոր չափորոշիչներով, մասնավորապես, հասունությամբ, հետապնդած բարձր քաղաքական խնդիրներով եւ որակական այլ հատկանիշներով գերազանցում է նախորդներին։ Դույզն ինչ չնսեմացնելով, ընդհակառակը՝ շատ բարձր գնահատելով այս Շարժման քաղաքական ընտրանին կազմող անհատների, հայտնի քաղաքական գործիչների կարեւորագույն վաստակն ու դերակատարությունը, այդուամենայնիվ, պետք է ընդունել, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, որ իր ելույթներով ու գործունեությամբ փոթորկեց հասարակությունը, դարձավ համաժողովրդական այդ շարժման խմորիչն ու լոկոմոտիվը։

Հասարակության եւ քաղաքականության մասին գիտությունները նույնպես ունեն իրենց օրենքները, որոնք չի կարելի անպատիժ խախտել։ Օրինակ. խորհուրդ չի տրվում բազմամարդ հանրահավաքներում, ունկնդրի կողմից ընկալելու համար ուղեղի մեծ լարում պահանջող բարդ խնդիրների մանրազնին վերլուծություններ – դրանք ավելի հարմար են եւ ընկալելի տպագիր տեսքով։ Բազմամարդ հանրահավաքներում խորհուրդ չի տրվում երկարաշունչ ելույթներ՝ մարդիկ ֆիզիկապես հոգնում են ոտքի վրա ու ձանձրանում նույն հռետորին երկար լսելով – այդպիսի ելույթներն ավելի հարմար են դահլիճային պայմաններում։ Լեւոն Տեր-Պետրոսյանը համարձակորեն խախտեց այդ օրենքները. նրա հանրահավաքային բոլոր ելույթները ամենաբարդ խնդիրների մանրազնին վերլուծություններ են, յուրաքանչյուրը՝ 1–1,5 ժամ տեւողությամբ։ Ու, դրանով հանդերձ, հարյուր հազարավոր մարդիկ դրանք լսում են համակ ուշադրությամբ եւ հաջորդ հանրահավաքին շտապում՝ հատկապես նրա հաջորդը ելույթը լսելու համար։ Նույն՝ հասարակության ու քաղաքականության մասին գիտությունները խորհուրդ են տալիս երբեմն դիմել նաեւ ժողովրդահաճ մեթոդների, երբեմն տուրք տալ

զանգվածների տրամադրությանը: Լեւոն Տեր-Պետրոսյանը բազմիցս հիմնավորապես խախտել է նաեւ այս օրենքները: Ընդհանրապես մերժելով ժողովրդահաճությունը, նա հաճախ հանդես է եկել «հիասթափեցնող» ելույթներով՝ առաջարկելով կտրուկ ու անսպասելի շրջադարձեր: Եւ, այդուամենայնիվ, նրա նկատմամբ ամենափոքր չափով չի նվազել վստահությունը, չի լսվել որեւէ տրտունջ: Ո՞րն է նրա նկատմամբ ժողովրդի՝ ոչ թե անվերապահ, այլ աննահանջ լայնացող ու խորացող քաղաքական վստահության գաղտնիքը: «Անբնական» այս երեւույթը վարչախմբի ներկայացուցիչները ինչ-որ պահի փորձեցին բացատրել՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ հարուցելով զանգվածային հիպնոսի, կախարդանքի, մարդկանց «հոգեխանգարման» հասցնելու միջնադարյան ինկվիզիցիայի մեղադրանք: Կախարդանքը, իրոք, կա, բայց ոչ որպես մեղք, այլ որպես բացառիկ մի շնորհ՝ հիմնված Նախագահի՝ քաղաքական ու պետական գործչի հարստագույն փորձի, նախանձելի բազմիմացության, լայն մտահորիզոնի, բարձր ինտելեկտի, խորաթափանց վերլուծական մտքի, իրավիճակի զարկերակը ճշգրիտ զգալու, ամենաբարդ խնդիրները պարզ ու դյուրընկալ ներկայացնելու ու հստակ բանաձեւելու կարողության եւ, այս ամենի հետ, ամենակարեւորը՝ ժողովրդի հետ մինչեւ վերջ անկեղծ լինելու իր անսասան սկզբունքի համատեղման վրա:

Հենց սկզբից չէ, որ համընդհանուր ու անվերապահ էր հասարակության ոգեւորությունն ու կողմնորոշումը: Ամբողջ 10 տարի լռել էր Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-նախագահը: Ճիշտ է՝ դրանով իսկ մեծ ինտրիգ էր ստեղծվել: Սակայն նաեւ ամբողջ 10 տարի ավազակապետական ռեժիմի ճարտարապետների ու կամակատարների, մեղմ ասած, քննադատության թիվ մեկ թիրախն էր եղել նա: Ոչ միայն եթերով ու մամուլով, այլեւ ընդհուպ ուսումնական ձեռնարկների մակարդակով աղավաղվել, գլխիվայր էր շրջվել Առաջին Նախագահի իշխանության տարիների ողջ պատմությունը: Յուրացվել էին «անտեր» մնացած հաղթանակներն ու հաջողությունները, որ, ըստ պատմության նոր խմբագիրների, տեղի էին ունեցել նրա կամքին հակառակ, մինչդեռ նույն տարիների բոլոր դժվարությունները բարդվել էին նրա վրա՝ որպես դրանց միակ պատասխանատու: Հազար անգամ կրկնված սուտը, կեղծիքը, ընդհուպ զավեշտի մակարդակի վերագրումները որպես իրողություն նստել էր շատերի ուղեղում: Մեկ-երկու

հրապարակային ելույթով, գործի դնելով ժողովրդի հետ անկեղծ խոսելու իր հիմնական գենքը, Լեւոն Տեր-Պետրոսյանը հալեցրեց այդ սառցե պատնեշը։

Այս գրքում ամփոփված հանրահավաքային ելույթները նախապատրաստվել են գրավոր. դրանցից յուրաքանչյուրի պատրաստման վրա հեղինակն իրեն հատուկ բծախնդրությամբ աշխատել է 2–3 շաբաթ։ Ելույթներից յուրաքանչյուրը բավարարում է մի քանի պարտադիր պայման միաժամանակ։ Առաջինը՝ հավաստիությունն ու ստուգված փաստերի վրա խարսխված լինելն է, ինչն ապահովում է դրանց գիտականությունը։ Ելույթների բազմաթիվ էջեր պարզապես կարող են զարդարել նույն թեմայով ցանկացած ակադեմիական գիտական աշխատություն։ Տասնյակ այդ ելույթներից եւ ոչ մեկի որեւէ թեզ կամ փաստ նրա ընդդիմախոսներն այդպես էլ չփորձեցին ըստ էության վիճարկել։ Երկրորդը՝ խնդիրների ու հարցադրումների արդիականությունը ու գնահատականների համոզիչ լինելն է, ինչն ապահովում է ելույթների անխառն քաղաքական բնույթը՝ անկախ թեմատիկայից։ Երրորդը՝ ինչպես յուրաքանչյուր ելույթ առանձին իր ներսում, այնպես էլ բոլորը միասին որպես ամբողջություն, ունեն ասելիքի հստակ համակարգվածություն ու ներքին անթերի տրամաբանական կապ։ Չորրորդը՝ բազմահասցեականությունն է. հիմնական հասցեատերերը երեքն են՝ Հայաստանի ժողովուրդն իր բոլոր խավերով, գործող իշխանությունը, ապա՝ միջազգային հանրությունը կամ արտաքին աշխարհը։ Եւ վերջապես հինգերորդը՝ խոսքի որակն է. ոմանք խոստովանում են, որ գալիս են հանրահավաքի՝ պարզապես գեղեցիկ ու գրագետ հայերեն խոսք լսելու հաճույքն ստանալու համար նաեւ։ Նրա ելույթների նկատմամբ հասարակական իրական պահանջարկը չբավարարված մնաց անգամ այն բանից հետո, երբ դրանք հանրահավաքից անմիջապես հետո ամբողջությամբ հրապարակում էին միաժամանակ մի քանի թերթեր, տեղադրվում էին ինտերնետում, մի քանի տասնյակ հազար տիրաժով տարածվում տեսասկավառակներով ու նույնքան՝ առանձին գրքույկներով։ Արտաքին աշխարհի նույնպիսի պահանջարկը բավարարելու համար դրանք անմիջապես թարգմանվում եւ տարածվում էին նաեւ ռուսերեն եւ անգլերեն։ Դժվար է հայ իրականության մեջ ցույց տալ ոչ միայն քաղաքական, այլեւ ցանկացած այլ ասպարեզում ու ժանրում մտավոր արտադրանքի որեւէ նմուշ, որն իր ժամանակին եւ կամ հետո նման պահանջարկ է ունեցել։

Որոնք են այն արդյունքները, որ ունեցավ Հայաստանի Հիմնադիր-նախագահի գլխավորած համաժողովրդական շարժումը: Թող տարօրինակ չհնչի, սակայն այդ արդյունքներն այսօր իրենց նշանակությամբ պատմականորեն նույնարժեք, գուցե նույնիսկ ինչ-որ իմաստով ավելին են, քան, եթե 2008թ. տեղի ունեցած լիներ սովորական մի նախընտրական պայքար եւ փետրվարի 19-ին ավարտվեր Լեւոն Տեր-Պետրոսյանի բնականոն հաղթանակով: Կարեւոր այն խնդիրները, որ պետք է լուծվեին այդ հաղթանակից հետո, լուծվեցին ու շարունակում են լուծվել համաժողովրդական շարժման այս ընթացքում:

Լեւոն Տեր-Պետրոսյանը 2007թ. հոկտեմբերի 26-ի հենց առաջին ելույթով բացահայտեց Հայաստանում ձեւավորված ռեժիմի «ավազակապետական» բնույթը, դրա «անատոմիան եւ մեխանիկան»: Ո՛չ այս որակումը, ո՛չ էլ քիչ ավելի ուշ վարչախմբին տրված «թաթար-մոնղոլական խանություն» բնորոշումը պարզապես նսեմացուցիչ գնահատականներ ու այպանանք չէին (ինչպես դա ընկալեցին նրա հակառակորդները), այլ հարուստ փաստական նյութի վրա գիտական բծախնդրությամբ ցուցադրված քաղաքական իրողություններ: Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջին անգամ հասարակությանը ներկայացրեց Հայաստանում 1999թ. հոկտեմբերի 27-ից հետո ու դրա հետեւանքով արմատավորված ռեժիմի իրական ու համակողմանի պատկերը՝ կառուցվածքային մանրամասներով ու գործառնական ամբողջականությամբ: Միաժամանակ նա, ըստ էության, նաեւ ազդարարեց իր հետապնդած քաղաքական խնդիրը, այն է՝ ***ավազակապետության կազմաքանդում ու «Ավգյան ախոռների մաքրում»:*** *Այլ խոսքով՝ սահմանադրական կարգի վերականգնում, օրենքի եւ իրավունքի գերիշխանության հաստատում, մարդու իրավունքների ու ազատությունների ապահովում, մինչ այդ կատարված ապօրինությունների հետեւանքների վերացում եւ այլն: Հարցադրումն անմիջապես հիմք դրեց այն ջրբաժանին, որի մի կողմում հավաքվեցին վարչախմբի պահպանմամբ շահագրգիռ ուժերը՝ անկախ իրենց հրապարակային քաղաքական հռետորաբանությունից, մյուս կողմում՝ իր ազգային, մարդկային ու քաղաքացիական պատվախնդրությանը նախանձախնդիր մարդիկ՝ հասարակության մեծագույն մասը:*

Ընդամենը երեք-չորս ամսում, ներառյալ 2008-ի նախագահական ընտրությունները, դրան հաջորդած շուրջօրյա հանրահավաքները, որ ընդհատվեցին վարչախմբի կազմակերպած մարտիմեկյան հանցագործ ջարդով ու արյունոտ սպանդով, վերջնականապես հստակեցրեցին այդ ջրբաժանը: Ի սկզբանե շատ լավ հասկանալով, որ իրենց հիմնած ռեժիմը հանդիպելու է հասարակության լայն շերտերի դիմադրությանը, ավազակապետության «հիմնադիր հայրերը» մշակել ու հաջողությամբ գործադրում էին այդ դիմադրությունը հաղթահարելու կամ շրջանցելու մի շարք մեթոդներ: Դրանցից մեկն ուղղակի կամ միջնորդավորված ընտրակաշառքն էր, որը, սակայն, մի կողմից՝ ծախսատար էր, մյուս կողմից՝ սկզբունքային ընտրազանգվածի էական մի մաս պարզապես չէր տրվում դրան: Ահա հենց այս մասի հարցերը լուծելու համար է, որ մտահղացվել էր կեղծ ընդդիմության դավադիր համակարգը: Այն արդեն մի քանի անգամ հաջողությամբ գործադրվել էր, եւ պետք է խոստովանել, փայլուն քննություն բռնել, սակայն, ըստ էության եւ ամբողջությամբ չէր բացահայտվել: Լեւոն Տեր-Պետրոսյանի դրած հստակ ջրբաժանը, Համաժողովրդական շարժման արմատականությունն ու թափը մինչեւ վերջ բացահայտեցին սեփական ժողովրդի դեմ կրկնվող այս դավադրությունը: Մի վերջին անգամ ծառայելով վարչախմբին՝ ոչնչացավ ավազակապետական ռեժիմի պահպանման շատ կարեւոր «ինստիտուտներից» մեկը՝ կեղծ, ծախված կամ գրպանային ընդդիմության համակարգը: Ջեռնասուն ու հաստիքային «ընդդիմադիր գործիչների» մի ամբողջ շքախումբ խայտառակ ձեւով նետվեց քաղաքական աղբանոց՝ արժանանալով համաժողովրդական արգահատանքի, իսկ նրանց անունները փոքրատառով՝ ստորացնող բնութագրիչի, հայհոյական խոսքի վերածվեց: Այնքան կատարյալ էր այդ համակարգի փլուզումը, որ առ այսօր, վարչախմբի բոլոր փորձերը՝ ինչ-որ կերպ վերականգնել իր զինանոցի ջախջախված թանկարժեք այս միջոցը՝ մնում են ապարդյուն:

Վարչախումբն ի սկզբանե իշխանության եկավ ժողովրդի մեծագույն մասի ընդդիմացման պայմաններում: Ռ. Քոչարյանը իր իշխանությունը հաստատել ու պահպանել էր ոչ միայն ոտնահարելով Սահմանադրությունը, այլեւ երկիցս խլելով նախագահական աթոռը այդ պաշտոնում ակնհայտ ընտրված Կարեն Դեմիրճյանից, ապա Ստեփան Դեմիրճյանից: Նույն կերպ էին իրականացել նաեւ խորհրդարանական ու մյուս ընտրությունները,

հանրաքվեները: Ոչ լեգիտիմ իշխանությունը դարձել էր քաղաքական կյանքի նորմ, իսկ տասը տարի դրա դեմ պայքարած հասարակությունը, կարծես, արդեն հուսահատվել ու համակերպվել էր: Վարչախմբի հետեւողական ու նպատակադիր ջանքերի շնորհիվ ոչնչացվել էր երկրի քաղաքական դաշտը, այլասերվել ***քաղաքական պայքարի էությունը, քաղաքական գործիչ, քաղաքական խնդիր*** *հասկացությունները: Հսկայական, բառիս բուն նշանակությամբ տգետ մի զանգված էր հավաքվել Ազգային ժողովում, այնքան տգետ, որ հաճախ բողոքում էին այստեղ քննարկվող հարցերի, ընդհուպ՝ Սահմանադրության, «քաղաքականացումից»: Նույնպիսի մի զանգված նշանակվել էր պետական կարեւորագույն քաղաքական պաշտոնների, որոնք օրումեջ հայտարարում էին, թե իրենք քաղաքականությամբ չեն զբաղվում: Իսկ իրենց քաղաքական ու պետական գործիչներ հորջորջողները պարզապես անպատվում, հասարակության աչքում անվանարկում, ծաղրուծանակի առարկա էին դարձնում այդ հասկացությունները: Տեր-Պետրոսյանին հաջողվեց վերջ տալ այս խեղկատակությանը, քայլ առ քայլ ու հետեւողականորեն մաքրել քաղաքական դաշտի «Ավգյան ախոռները», վերականգնել իրական քաղաքական արժեհամակարգը: Նրա անձով եւս մեկ անգամ մարմնացած իրական քաղաքական ու պետական գործչի կերպարը վերականգնեց, վերածնեց այլասերված քաղաքական հասկացություններն ու դրանց հասարակական ընկալումը: Նա դարձավ քաղաքական ու պետական գործչի այն չափօրինակը, որն անհույս փոքրության ու աննշանության մատնեց այդպիսին համարվելու հավակնող իշխանական ու նրա սպասարկու տասնյակ գործամոլների: Նա հետեւողականորեն կարողացավ ստիպել վարչախմբին մտնել պայքարի քաղաքական դաշտ, որտեղ եւ ի ցույց հանեց նրա սնանկությունը: Հենց այս՝ քաղաքական դաշտում վերահաս ու խայտառակ պարտությունից խուսափելու համար էր, որ վարչախումբը դիմեց դեռեւս իր կոկորդում մնացած ամենաբիրտ ընտրախախտումներին, ապա նաեւ մարտիմեկյան ոճրագործությանը:*

Համաժողովրդական շարժումը մի իսկական բաց համալսարան էր, քաղաքական ու քաղաքացիական բարձրագույն կրթության մի իրական կաճառ: Ամեն մի հանրահավաքից հետո մարդիկ հեռանում էին իմացությունների հսկայական ու թանկարժեք մի բեռով, հույսի, հավատի ու ինքնահաս-

տատվածության զգացումով։ Հանրահավաքներում վերջնականապես վերականգնվեց, մեջքը շտկեց Հայաստանի Հանրապետության՝ նախորդ տասնամյակում նվաստացած, կքած, հուսախաբված ու հուսալքված ազատ ու արժանապատիվ քաղաքացին։ Փետրվարի 21–29-ին Ազատության հրապարակում անցկացրած ազատության տոնահանդեսի նմանվող շուրջօրյա հանրահավաքների ամեն մի մասնակից հազիվ-թե համաձայնի իրենց բովանդակային հագեցվածությամբ ու արժեքով բացառիկ այդ օրերից մեկը փոխանակել նախորդ տարիներից որեւէ մեկի հետ։ Այդ օրերին Լեւոն Տեր-Պետրոսյանը օրը մի քանի ելույթ էր ունենում եւ բոլորի հետ գիշերում հրապարակում։ Հենց այդ օրերին՝ փետրվարի 26-ին, գրանցվեց Շարժման բարձրակետը. Հանրապետության հրապարակից Ս. Սարգսյանի՝ այդտեղ ստիպողաբար հավաքած «հակահանրահավաքը», ճեղքելով ոստիկանական պատնեշը, Հյուսիսային պողոտայով գետի նման հոսեց դեպի Ազատության հրապարակ։ Տեսարանը խորհրդանշական էր՝ բռնությունից փախուստ դեպի ազատություն։ Տեսարանը նաեւ առարկայական էր՝ Ազատության հրապարակը վերածվել էր մի հսկայական քվեատուփի, որտեղ շուրջ կես միլիոն քաղաքացիներ ցրտաշունչ այդ օրը իրենց քվեն էին բերել Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ այս անգամ արդեն անձնական ներկայությամբ։ Այստեղ՝ Ազատության հրապարակի շուրջօրյա հանրահավաքներում թրծվեց այն նոր, որակապես նոր քաղաքացիական հասարակության կես միլիոնանոց միջուկը, որը եւ անդառնալիորեն կանխորոշեց Շարժման շարունակականությունն ու ռեժիմի դատապարտվածությունը։ Ասել է թե՝ «Ավգյան ախոռները» մաքրելու եւ Հայաստանում արժանապատիվ կյանքով ապրող, բռնատիրություն չհանդուրժող քաղաքացիական հասարակության ձեւավորման այն խնդիրը, որ խոստանում էր լուծել ՀՀ Հիմնադիր-նախագահը, իր երկրորդ մասով այլեւս փառավորապես լուծված է, ինչից հետո առաջին մասի լուծումը կանխորոշված է, ընդամենը ժամանակի ու քաղաքական տեխնոլոգիայի հարց։

Սկզբում թվում էր, թե վարչախմբի դեմ քաղաքական պայքարի ողջ ծանրությունը ընկնելու է «հին գվարդիայի»՝ 1988-ի սերնդի վրա։ Երիտասարդության նկատմամբ վերապահ վերաբերմունքն իր հիմքերն ուներ. վարչախմբի կողմից հետեւողականորեն ստեղծված քաղքենիական, գլխիվայր շրջված արժեքային համակարգի, հոռի օրինակների մթնոլորտը,

թվում էր, թե ամենից շատ պետք է ազդած լինի անհամեմատ անպաշտպան, ավելի հեշտությամբ գայթակղության տրվող երիտասարդության վրա: Շարժման ընթացքում, այս առումով, տեղի ունեցավ մի իրական հրաշք: Երիտասարդությունը, ու, մասնավորապես, ուսանողությունը, շատ արագ ընդգրկվեց Համաժողովրդական շարժման մեջ՝ իր տեսակարար կշռով դառնալով նրա ամենակարեւոր բաղադրիչը: Եւ դա ոչ միայն հանրահավաքներին ու երթերին մասնակցությամբ, այլեւ շատ ավելի լուրջ, կազմակերպական գործերով ու սեփական նախաձեռնություններով: «Վետերանները» կարող են հավաստել, որ համաժողովրդական այս շարժումն իր միջին տարիքով շատ ավելի երիտասարդ է 1988-ի Շարժումից: Տասնյակ հազարավոր երիտասարդներ անցան քաղաքացիական ու քաղաքական դաստիարակության Շարժման դպրոցը, Հանրապետության Հիմնադիր-նախագահի դպրոցը, ստացան գիտելիքներ, ձեռք բերեցին ունակություններ եւ որակներ, որ նրանց էության անբաժանելի մասն են մնալու ամբողջ կյանքում: Դրանով հայաստանյան հասարակության մեջ ստեղծվեց վստահելի մի ռեսուրս՝ ոչ միայն այսօրվա խնդիրները լուծելու, այլեւ ապագայում երկրի զարգացումն ու ընթացքը խոտորումներից զերծ պահելու համար:

* * *

Սույն ժողովածուն ընդգրկում է Լեւոն Տեր-Պետրոսյանի վերջին մեկուկես տարվա ոչ բոլոր հանրահավաքային ելույթները, հարցազրույցները, մամուլի ասուլիսները եւ այլ նյութեր: Մասնավորապես այստեղ չեն ընդգրկվել նրա հարյուրավոր բանավոր ելույթները նախընտրական քարոզարշավի՝ հանրապետությունով մեկ նրա այցելությունների ընթացքում, 2008թ. փետրվարի 21–29-ին Ազատության հրապարակում նրա տասնյակ բանավոր ելույթները եւ այլն: Եւ այդուամենայնիվ, ժողովածուն ամբողջական պատկերացում է տալիս նրա ՎԵՐԱԴԱՐՁԻ ու, դրա հետ կապված, համաժողովրդական այն Շարժման մասին, որ շարունակվում է եւ անպայման հասնելու է Հայաստանում սահմանադրական կարգի մեկընդմիշտ վերականգնման, երկիրը զարգացման բնականոն ճանապարհի բերելու նպատակի իրականացմանը: Ժողովածուում ընդգրկված նյութերը այժմեական են եւ կարեւորագույն քաղաքական նշանակություն ունեն: Բայց ոչ միայն. դրանք ունեն նաեւ պատմական առաջնակարգ փաստաթղթերի արժեք եւ անփոխարինե-

լի սկզբնաղբյուր են ինչպես այս, այնպես էլ նախորդ տասնամյակի պատմությունն ուսումնասիրողների համար: Այն անփոխարինելի սկզբնաղբյուր ու հիմք է լինելու նաեւ Հայաստանի Հանրապետության Հիմնադիր-նախագահի՝ միջազգայնորեն ճանաչված ու միջազգային մասշտաբի, ամենաարդյունավետ ու ամենաինտելեկտուալ քաղաքական-պետական գործիչներից մեկի գիտական կերպարը կերտող նրա կենսագիրների համար:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԵԼՈՒՅԹՆԵՐ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍՆԵՐ

ԻՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉԵԼՈՒ ԵՒ ՀԱՇԻՎ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

(ելույթ 2007թ. հոկտեմբերի 26-ի հանրահավաքում)

Սիրելի հայրենակիցներ,

1988 թվականի հուժկու համաժողովրդական շարժման սկզբնավորումը հիշեցնող այս մթնոլորտը հուշում է ելույթս վերնագրել «Իրերն իրենց անունով կոչելու եւ հաշիվ պահանջելու ժամանակը»: Դա անհրաժեշտ է՝ նախ եւ առաջ ամփոփելու համար Քոչարյանի նախագահության տասնամյա ժամանակաշրջանը, եւ երկրորդ՝ հստակ պատկերացնելու Հայաստանի առջեւ կանգնած ներկա մարտահրավերները:

Սեպտեմբերի 21-ի ելույթում ես ընդամենը կատարել եմ մեկ-երկու շեշտադրում, որոնց արձագանքներն ինձ այժմ թելադրում են՝ դրանց անդրադառնալ ավելի հանգամանորեն եւ փաստարկված:

Սկզբից եւեթ հարկ եմ համարում զգուշացնել, որ ես տալու եմ զուտ քաղաքական գնահատականներ՝ հիմնված բացառապես պաշտոնական վիճակագրության եւ մամուլում հրապարակված տվյալների վրա: Այդ գնահատականները, հետեւաբար, իրավական ուժ չունեն եւ ամենեին չեն սասանում ստորեւ հիշատակվելիք անձանց անմեղության կանխավարկածը: Քանի դեռ չկան եւ չեն լինի դատական կարգով ընդունված վճիռներ՝ նրանք նույնքան անմեղ են, որքան այս հրապարակում կանգնածներից յուրաքանչյուրը:

Քոչարյանական վարչախմբի կամ ռեժիմի էությունը

Արդեն հիշատակված իմ ելույթում Հայաստանի ներկա իշխանությունը ես բնութագրել էի հետեւյալ խոսքերով. «Վերից վար կոռումպացված, հանցագործ մի վարչակազմ, որի հարաբերությունները կարգավորվում են ոչ թե օրենքներով, ոչ թե ժողովրդի կամքով, ոչ թե քաղաքական երկխոսությամբ, այլ բրեական աշխարհի կանոններով: Այսինքն՝ լիովին մաֆիոզ, մինչեւ վերջին երանգը ստրուկտուրիզացված մի ռեժիմ, որը մեզ այսօր արդեն գլորել է երրորդ աշխարհի նմանատիպ ռեժիմների շարքը»:

Դասական պետականագիտության տերմինոլոգիայում այդպիսի իշխանությունը կոչվում է «կլեպտոկրատիա», բառացի՝ «գողապետություն»: Սակայն ես կնախընտրեի «ավազակապետություն» բառը, որն ավելի ճշգրիտ է արտահայտում հասկացության բովանդակությունը, քանի որ գողությունը անհատական հանցագործություն է, իսկ ավազակությունը՝ խմբային:

Ո՞րն է, արդ, իշխանության ավազակապետական համակարգի գոյության իմաստը եւ հետապնդած նպատակը: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ իշխանության բոլոր լծակներին տիրող մարդկանց սահմանափակ խմբի բարօրության ապահովում՝ սեփական ժողովրդի անխնա հարստահարման եւ կեղեքման գնով: Այդ ամենը ցինիկաբար քողարկվում է հայրենասիրության, պետական շահի, Ցեղասպանության ճանաչման, Արցախի անկախության վերամբարձ կարգախոսներով: Այնինչ միանգամայն ակնհայտ է, որ հայրենիքը նրանց համար ընդամենը նվաճված տարածք է, կամ առավելագույնն՝ օբյեկտ, պետական շահ կոչեցյալը՝ ստորագույն անձնական շահախնդրություն, իսկ Ցեղասպանության ճանաչումն ու Արցախի ազատագրումը՝ էժան մանրադրամ իրենց հակաօրինական ծրագրերի իրականացման գործում: Նրանց ճարտասանության աստիճանն ուղիղ համեմատական է իրենց հափշտակած հարստության ծավալին: Որքան շատ են խոսում հայրենասիրությունից, պետական շահից ու ժողովրդի բարօրությունից, այնքան շատ են կորզում նույն այդ ժողովրդի գրպանից:

Ավազակապետական համակարգի կառուցվածքն ու հանգուցային օղակները

Հայաստանի ներկա իշխանական համակարգը կառուցված է մոնոլիտ բուրգի սկզբունքով եւ հստակ սահմանված նվիրապետական-հիերարխիկ աստիճանակարգով: Բուրգի գագաթը հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն է: Երկրորդ տեղն զբաղեցնում է վարչապետ, ոչ հեռավոր անցյալում պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Երրորդ տեղին հավակնում են փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանը եւ նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գեւորգյանը: Այնուհետեւ գալիս են նախարարների, փոխնախարարների, մարզպետների մեծագույն մասը, ինչպես նաեւ որոշ տխրահռչակ բաղաբապետեր ու թաղապետեր:

Հանցավոր այս համակարգի գործունեությունն ապահովվում է մի քանի հանգուցային օղակների շնորհիվ:

Առաջին. Նախագահի աշխատակազմի ղեկավարը, որի ազդեցությունը հատկապես մեծ էր Արմեն Դարբինյանի եւ Անդրանիկ Մարգարյանի վարչապետության շրջանում, երբ փաստորեն Ալեքսան Հարությունյանն ու Արմեն Գեւորգյանն էին լուծում կադրային հարցերը, սահմանում առուվաճառքի պայմանները, տնօրինում արտոնությունների շնորհումը, ապահովում ձեւական աճուրդների ու տենդերների անցկացումը: Այսինքն, նրանք օժտված էին իրենց իրավասություններից դուրս գտնվող այնպիսի ֆունկցիաներով, որոնք կորզված էին կառավարության օրինական լիազորությունների շրջանակից:

Երկրորդ հանգուցային օղակը Արմեն Ավետիսյանի գլխավորած Մաքսային վարչությունն է, որի ֆունկցիան մաքսային վերահսկողության իրականացումից ու օրինական մաքսավճարների գանձումից վերածվել է համապետական մասշտաբի մաքսանենգության ֆունկցիայի: Մաքսային վարչությունն է մոնոպոլիաների ձեւավորման, ներմուծվող ու արտահանվող ապրանքների քվոտաների բաշխման, գործարարներին անհավասար պայմանների մեջ դնելու, անցանկալի տնտեսական մրցակիցներին ասպարեզից դուրս մղելու եւ սնանկության հասցնելու մեքենան: Թեեւ ոչ նույն չափով, նշված նպատակներին ծառայում է նաեւ հարկային տեսչությունը, որի գործունեությունից տուժում են

հատկապես մանր ու միջին մեծության ընկերություններն ու անհատ ձեռներեցները, քանի որ խոշոր հարկատուներն իրենց մուծումների մեծագույն մասը կատարելով բոլորովին այլ տեղ, ըստ էության, դուրս են այդ ծառայության իրավասությունների սահմաններից:

Երրորդ կարեւորագույն օղակը՝ դատախազության համակարգը, որ ղեկավարում է Աղվան Հովսեփյանը, ապահովում է ավազակապետական ռեժիմի իրավական անվտանգությունն ու անպատժելիությունը, հողարկում եւ պարտակում նրա բոլոր օրինախախտումներն ու հանցագործությունները, շինծու իրեական հետապնդումներով ահաբեկում եւ լռեցնում վարչախմբի հակառակորդներին ու ընդդիմախոսներին:

Ռեժիմի կենսագործունեությունն ապահովող **չորրորդ** հանգուցային օղակի դերում հանդես է գալիս Կենտրոնական բանկը, որի վարած ֆինանսական քաղաքականությունը, մասնավորապես՝ դրամի արժեւորման կասկածելի գործընթացը, կործանում է երկրի առանց այդ էլ խղճուկ արդյունաբերությունը, էապես սահմանափակում տեղական ապրանքների արտահանման հնարավորությունները եւ մսխում արտասահմանյան տրանսֆերների ռեալ արժեքի ավելի քան 40 տոկոսը, որը մտնում է ներկրող մոնոպոլիստների եւ նրանց հովանավորող պետական պաշտոնյաների գրպանը: Բացի այդ, Կենտրոնական բանկի վերահսկողության տակ գտնվող բանկային համակարգն իրականացնում է ռեժիմի ֆինանսական հոսքերը եւ հանցավոր ճանապարհով ձեռքբերված հսկայական գումարների օրինականացման գործը:

Եւ վերջապես **հինգերորդ** հանգուցային օղակը՝ հանրային հեռուստատեսությունը, Ալեքսան Հարությունյանի գլխավորությամբ, ապահովում է հանցավոր վարչախմբի պրոպագանդիստական պաշտպանությունն ու ջանասիրաբար իրականացնում նրա ընդդիմախոսների ու քաղաքական հակառակորդների վարկաբեկման ստորագույն գործը: Այդ հարցում նրանից հետ չեն մնում նաեւ պետության ուղղակի կամ անուղղակի ազդեցության տակ գտնվող մի քանի այլ հեռուստաալիքներ եւ տպագիր մամուլի օրգաններ:

Ռեժիմի ձեւավորման եւ զարգացման ընթացքը

Հանցավոր այս ռեժիմը ձեւավորվել է ոչ միանգամից: Նրա սկզբնավորումն ուղղակիորեն կապված է 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետ: Նման համակարգի գոյությունն անհնար էր Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի քաղաքական դաշինքի առկայության պայմաններում, քանի որ Խորհրդարանի մեծամասնությունը եւ կառավարությունը գտնվում էր նրանց լիակատար հսկողության տակ: Իսկ սա մի այնպիսի լուրջ հակակշիռ էր, որը ոչ միայն անհնար էր դարձնում նախագահի կողմից որեւէ օրինախախտում, այլեւ վերջինիս լիազորությունները հավասարեցնում Անգլիայի թագուհու կարգավիճակի: Հոկտեմբերյան սպանդն էր, ահա, այն գլխավոր հանգրվանը, որը բացեց քոչարյանական ռեժիմի ձեւավորման ու զարգացման լայնահուն ճանապարհը:

Այդ եղեռնագործությունից հետո՝ մնացածն, ինչպես ասում են, տեխնիկայի հարց էր: Հետագա մի քանի ամիսների ընթացքում, հաղթահարելով ապրած կարճատեւ խուճապը եւ ամրապնդելով իր դիրքերը, քոչարյանական վարչախումբն ազատվեց իր հանցավոր գործունեությանը խոչընդոտող բոլոր օտար մարմիններից՝ վարչապետ Արամ Սարգսյանից, Պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանից, գլխավոր դատախազ Բորիս Նազարյանից, Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանից, ինչպես նաեւ Հանրապետական ու ՀԺԿ-ական մնացյալ բոլոր նախարարներից ու պաշտոնյաներից՝ Վահան Շիրխանյան, Լեւոն Բարխուդարյան, Սմբատ Այվազյան, Շահեն Կարամանուկյան, Զավեն Գեւորգյան, Լեոնիդ Հակոբյան, Գեղամ Հարությունյան, Էդուարդ Սիմոնյանց, Անդրանիկ Քոչարյան, Տիգրան Հակոբյան, Դավիթ Մաթեւոսյան, Մուշեղ Սաղաթելյան, Արմեն Եղիազարյան, Արտակ Զեյնալյան եւ ուրիշներ:

Լուրջ ձեւափոխման-տրանսֆորմացիայի ենթարկվեց նաեւ նախագահական իշխանության գլխավոր հակակշիռը՝ Ազգային ժողովը, ինչը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ նրա Հանրապետական ու ՀԺԿական մեծամասնության (այլ կերպ՝ «Միասնություն» դաշինքի) բազմաթիվ պատեհապաշտ ներկայացուցիչներ, դավաճանելով իրենց նահատակված առաջնորդներին, հավատարմության երդում տվին

Ռոբերտ Քոչարյանին: Խորհրդարանն, այդպիսով, քաղաքական մարմնից վերածվեց ամորֆ, գաղափարազուրկ, ստորաքարշ ժողովարանի, դառնալով նախագահական իշխանության պարզ կցորդն ու հլու կամակատարը: Ռեժիմը վերջնական կատարելության հասավ այս տարվա խորհրդարանական ընտրությունների եւ վարչապետի պաշտոնում Սերժ Սարգսյանի հայտնվելու շնորհիվ: Այսօր մենք արդեն գործ ունենք լիովին մոնոլիտ, բացարձակապես անվերահսկելի եւ իրական պարտավորություններով համաձուլված իշխանական փակ համակարգի հետ:

Ռեժիմի գործունեության տնտեսական հետեւանքները

Քոչարյանական ռեժիմի գործունեության ծանրագույն հետեւանքը Հայաստանի տնտեսական համակարգի ձեւախեղումն է: Այն ոչ մի կապ չունի ո՛չ սոցիալիզմի, ո՛չ ֆեոդալիզմի, ո՛չ իսկ անվանապես հոչակված կապիտալիզմի հետ, եւ ավելի շուտ հիշեցնում է թաքարմոնոլոլական տիպի խանական համակարգ: Օրուգիշեր թմբկահարվող լիբերալ տնտեսությունը մեր երկրում սոսկ ֆիկցիա է, քանի որ տնտեսական բնագավառում ամեն ինչ կարգավորվում է ոչ թե շուկայական հարաբերություններով, այլ իշխանությունը բռնազավթած խումտայի կամքով ու հրահանգներով:

Նախագահի ու վարչապետի փակ գրասենյակներում են որոշվում սեփականության բաշխման, պետական գույքի եւ հողի վաճառքի, մենաշնորհային արտոնությունների շնորհման, աճուրդների եւ տենդերների կազմակերպման, արտահանման եւ ներմուծման քվոտաների սահմանման, ընդհուպ մինչեւ լիցենզիաների տրամադրման եւ հողահատկացումների ու շինարարական աշխատանքների թույլտվության հարցերը: Այսինքն՝ հիմնովին խախտված են կապիտալիստական կամ շուկայական տնտեսության երեք ամենագլխավոր սկզբունքները՝ հավասար հնարավորությունների ընձեռումը, ազատ մրցակցության ապահովումը եւ սեփականության անձեռնմխելիության երաշխավորումը: Այլապես աշխարհի ո՞ր երկրում կարելի էր պատկերացնել, որ «ՊԱԶ»-ի մի սովորական վարորդ մեկ-երկու տարում այնքան կարող է հարստանալ, որ ընդունակ լինի տասնյակ միլիոնավոր դոլարի ներդրումներ

կատարել, ասենք, ոչ թե իր հայրենի Արցախի, այլ Ամերիկայի Միացյալ Նահանգների տնտեսությունում: Կամ՝ 25-ամյա մի երիտասարդ, համալսարանն ավարտելուց 2–3 տարի անց, կարող է դառնալ Հայաստանի 10 ամենահարուստ գործարարներից մեկը:

Պաշտոնական վիճակագրությունը տարեցտարի Հայաստանի տնտեսական զարգացման վագրային թռիչքներ է արձանագրում, որոնք արտահայտվում են համախառն ներքին արդյունքի աճի երկնիշ թվերով: Սակայն լուրջ տնտեսագետների ուսումնասիրություններից պարզվում է, որ այդ ցուցանիշները, մեղմ ասած, չեն համապատասխանում իրականությանը, եւ տարեկան աճն իրականում չի գերազանցում 3–4 տոկոսը: Ո՞րն է, արդ, երկնիշ թվերի հայտնության գաղտնիքը: Բանից պարզվում է, ոչ մի գաղտնիք էլ չկա. տնտեսական աճի թվերը ուղիղ համեմատական են արտասահմանյան տրանսֆերների դինամիկային: Այսինքն՝ Հայաստանի տնտեսությունն աճում է այնքան, որքան ավելանում են այդ տրանսֆերները, որոնց ծավալն այս տարի արդեն կհասնի 2 միլիարդ դոլարի:

Դա նշանակում է, որ Հայաստանի տնտեսությունը եթե զարգանում է իսկ, ապա զարգանում է Հայաստանի սահմաններից դուրս, գլխավորապես Ռուսաստան պանդխտած հարյուրհազարավոր հայ աշխատավորների մկանային էներգիայի հաշվին: Պատահական չէր նախորդ ելույթում իմ հնչեցրած այն միտքը, որ Հայաստանի միակ կապիտալն այսօր աշխատուժի արտահանումն է: Ցավալիորեն, հիմնականում օտարների ձեռքում գտնվող հանքային, էներգետիկ եւ հեռահաղորդակցային ընկերությունները դեռեւս Հայաստանին որեւէ ռեալ շահույթ չեն ապահովում, բացի աշխատավարձից եւ սոցիալական հարկի մուծումներից:

Պաշտոնական վիճակագրությունը կեղծ է նաեւ մի այլ առումով: Հանցագործաբար թաքցվում են Հայաստան ներկրվող մենաշնորհային ապրանքների, մասնավորապես բենզինի ծավալները: Դեռեւս 1997թ. աշնանը Հայաստանն արդեն ներմուծում էր ամսական 30.000 տոննա բենզին: 2002 թվականից սկսած, ըստ վիճակագրական տվյալների, բենզինի ներկրման ամսական ծավալները կազմում են ընդամենը 12.000–15.000 տոննա՝ ծիծաղելի մի թիվ, եթե հաշվի առնենք ավտոմեքենաների թվի անընդհատ աճը: Իրականում, սակայն, ամեն ամիս

հանրապետություն է ներմուծվում ավելի քան 50.000 տոննա բենզին: Սա այլ կերպ, քան մեծագույն ձեռնածություն, պետական մաքսանենգություն կամ դարի հանցագործություն չի կարելի անվանել, որը, կասկածից վեր է, հետագայում դառնալու է բազմաթիվ խորհրդարանական հանձնաժողովների եւ դատական մարմինների քննության առարկա: Մոտավորապես նույնն է վիճակը նաեւ մենաշնորհային այլ ապրանքների ներմուծման պարագայում: Մասնավորապես, մի այդպիսի մախինացիա էլ կապված է ղազախական գազի խոշոր ծավալների ներմուծման հետ, որն արտացոլված չէ վիճակագրական պաշտոնագրերում:

Շատերի, այդ թվում՝ պրոֆեսիոնալ տնտեսագետների կողմից փաստվում է, որ Հայաստանի տնտեսության մի զգալի հատված ստվերային է: Իմ կարծիքով, սակայն, սա պարզ եւֆիմիզմ կամ մեղմասացություն է: Գուցե ասածս կարող է պարադոքսալ հնչել, բայց ես պնդում եմ, որ մեր երկրում իրականում ստվերային տնտեսություն չկա: Ստվերայինն այն տնտեսությունն է, որը տարբեր պատճառներով դուրս է մնում իշխանության վերահսկողության սահմաններից, եւ այդ երեւույթն այս կամ այն չափով առկա է բոլոր, այդ թվում՝ ամենազարգացած եւ օրինապահ երկրներում: Մինչդեռ Հայաստանի իշխանական համակարգն այնքան կազմակերպված ու հզոր է, որ նրա հսկողությունից ոչինչ չի վրիպում, այսինքն՝ հանցավոր տնտեսական գործունեության բոլոր դրսեւորումները կառավարվում են նրա կողմից: Հետեւաբար, սա ոչ թե ստվերային տնտեսություն է, այլ համատարած թալան կամ պետական ռեկետ, որի պատճառով Հայաստանում գոյանում է երկու բյուջե՝ մեկը պաշտոնապես հայտարարվածը, մյուսը՝ իշխանությունների գրպանում հայտնվածը: Ընդ որում՝ դատելով հաշվարկներից, երկրորդ բյուջեն անհամեմատ ավելի մեծ է առաջինից: Վերջին հինգ տարիների ընթացքում հանցավոր վարչախումբը ժողովրդից հափշտակել է առնվազն 3–4 միլիարդ դոլար: Եթե այդ գումարը ներդրվեր Հայաստանում, մենք այսօր որակապես ուրիշ երկիր կունենայինք, իսկ եթե ներդրվեր Արցախում, ապա վերջինս արդեն անկախ կլիներ:

Զեզ չձանձրացնելու համար սահմանափակելով եւույթիս այս հատվածը, հարկ եմ համարում, սակայն, կատարել երկու լրացուցիչ նկատառում:

Առաջին՝ չեմ կարծում, թե բարեխիղճ պրոֆեսիոնալներից կազմված վիճակագրական վարչությունը կեղծ տվյալներ է ներկայացնում

կառավարությանը: Կեղծիքը կատարվում եւ վարչության ներկայացրած տվյալները պրոպագանդիստական նպատակներով սրբագրվում են իշխանության վերին օղակներում, ինչպես արվում էր ստալինյան եւ բրեժնեյան ժամանակներում:

Եւ երկրորդ՝ ինձ զարմացնում է Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակների աշխատակիցների պահվածքը, որոնք չէին կարող չնկատել Հայաստանի տնտեսական կյանքում կատարվող ահռելի զեղծարարություններն ու վիճակագրական անպարարությունները: Նրանց պաշտոնական զեկույցներում ներկայացված վիճակն, ըստ էության, համընկնում է Հայաստանի իշխանական պրոպագանդայի մատուցած իդիլիական պատկերին: Այլ է պարագան, սակայն, ներքին օգտագործման համար պատրաստված նրանց կիսագաղտնի զեկույցներում, որոնցում այս կամ այն չափով բացահայտված են Հայաստանի տնտեսական ոլորտի համարյա բոլոր արատավոր երեւույթները, մասնավորապես բենզինի ներկրման հետ կապված ձեռնածությունը:

Վարչախմբի քաղաքականության սոցիալական հետեւանքները

Հեռուստաէկրաններին պատկերվող վիրտուալ աշխարհի, երկնիշ տնտեսական ցուցանիշների եւ Երեւանի կենտրոնի տպավորիչ կառուցապատման ֆոնի վրա, փորձագետներն, այդ թվում՝ միջազգային, Հայաստանի բնակչության կենսամակարդակի որակական փոփոխություն չեն արձանագրում: Այս երեւույթի մասնագիտական բացատրությունները, որքան էլ տրամաբանական, հեռու են համոզիչ, առավել եւս սպառիչ լինելուց: Փաստը մնում է փաստ, որ սոցիալական բեւեռացումը ոչ թե մեղմանում, այլ գնալով խորանում է, այսինքն՝ հարուստներն ավելի են հարստանում, իսկ աղքատներն՝ ավելի աղքատանում: Մայրաքաղաքի կենտրոնի շքեղ խանութներից, ռեստորաններից, ժամանակակից բնակարաններից օգտվում են բնակչության ոչ ավելի, քան 5 տոկոսը: Ժողովրդի մեծագույն մասը, գլխավորապես մարզային քաղաքներում եւ գյուղական վայրերում, մատնված է լիակատար թշվառու-

թյան ու ամենօրյա գոյապայքարի: Կիսադատարկ գյուղեր ու ցաքուցրիվ ընտանիքներ. ահա սա է Հայաստանի իրական պատկերը:

Ասվեց արդեն, որ երկրի բնակչության գլխավոր եկամուտը արտերկրից կատարված դրամական փոխանցումները կամ տրանսֆերտներն են, որոնց ծավալի շուրջ 40 տոկոսը, դոլարի կուրսի անշեղ անկման պատճառով, այլեւս չի հասնում իր հասցեատերերին: Ուստի տրանսֆերտների տարեցտարի աճող ծավալներն ամենեւին բնակչության կենսամակարդակի բարելավում չեն նշանակում: Կա նաեւ հարցի մի այլ կողմ. պաշտոնական տվյալների համաձայն՝ արտերկրից կատարված դրամական փոխանցումների 80 տոկոսը ծախսվում է ներմուծվող ապրանքների սպառման վրա: Այսինքն՝ այդ կապիտալը, որն ընթացիկ տարվա կտրվածքով արդեն կազմում է շուրջ 2 միլիարդ դոլար, ինչ ճանապարհով մտնում, նույն ճանապարհով էլ դուրս է գալիս Հայաստանից, ինչը նշանակում է, որ այն էական ազդեցություն չի գործում երկրի տնտեսության զարգացման վրա:

Չի կարելի ուրանալ, անշուշտ, որ աշխատավարձերը, թոշակները եւ նպաստները, համենայնդեպս, աճում են: Բայց երբ հաշվի ենք առնում վերջին 10 տարիների ընթացքում արձանագրված գների թանկացումը, ապա ժողովրդի դրամական եկամուտների մեծացման էֆեկտը հավասարվում է զրոյի: Այսօր մեր երկրում 100 դոլարն ունի նույն գնողունակությունը, ինչ տաս տարի առաջվա 20–25 դոլարը: Չկա լայն սպառման որեւէ ապրանք կամ ծառայություն, որն այսօր ավելի էժան լինի, քան 10 տարի առաջ: Քանի որ ընթացիկ տարվա պաշտոնական տվյալները դեռ ամփոփված չեն, ես ստիպված եմ բավարարվել 1997 եւ 2006 թվականների համեմատությամբ: Ըստ այդմ՝ վերջին տաս տարիների ընթացքում բենզինը թանկացել է 2,2 անգամ, դիզվառելիքը՝ 2 անգամ, էլեկտրաէներգիայի սակագինը՝ 40 տոկոսով, սառը ջրամատակարարումը՝ 3,5 անգամ, հեռախոսավարձը՝ 3,5 անգամ, տավարի եւ ոչխարի միսը՝ շուրջ 50 տոկոսով, կենդանական յուղը՝ 28 տոկոսով, բուսական յուղը՝ 57 տոկոսով, կաթը՝ 52 տոկոսով, ցորենի ալյուրից պատրաստված հացը՝ 2 անգամ: Իսկ երբ գներն արտահայտում ենք դոլարային արժեքով, ապա ապրանքների թանկացման պատկերը շատ ավելի ցցուն է դառնում:

Ձնայած տնտեսության «բուռն վերելքին» եւ աճի տեմպերի երկնիշ ցուցանիշներին, անգամ պաշտոնական տվյալների համաձայն, արտագաղթը ոչ միայն չի դադարում, այլեւ շարունակում է պահպանվել տարեկան շուրջ 25000 մարդու սահմաններում: Վերջին շրջանում իշխանությունները ու նրանց պրոպագանդիստական մարմինները ցնծությամբ թմբկահարում են մանավանդ այն փաստը, որ գործազուրկների թիվը Հայաստանում իջել է 60 հազարի: Գործազուրկ չեն համարվում, անշուշտ, արտագնա աշխատանքի մեկնած շուրջ կես միլիոն հայաստանցի քաղաքացիները: Այնպես որ, եթե վերոհիշյալ 60 հազար մարդն էլ բռնի գաղթի ճամփան, ապա մեր երկրում այլեւս գործազուրկ չի մնա: Հայաստանն, այսպիսով, կդառնա աշխարհի միակ պետությունը, որը 100 տոկոսով հաղթահարած կլինի այդ համատարած սոցիալական չարիքը:

Բարոյա-հոգեբանական հետեւանքները

Քոչարյանական ռեժիմի գործունեության ամենացավալի հետեւանքներից մեկն, ակներեւաբար, երկրում ստեղծված անառողջ բարոյական մթնոլորտն է: Անկախության առաջին տասնամյակի ոգեւորության, ազատության, հպարտության զգացումը փոխարինվել է վախի, ստրկամտության, հուսահատության, ատելության զգացումով: Բարեի անկումը հասել է այն աստիճանի, որ այլեւս հասարակական չարիք չեն դիտվում քաղքենիությունը, կաշառակերությունը, ընչաքաղցությունը, սուտը, մատնությունը, կարիերիզմը եւ ստորաքարշությունը: Ռեժիմի անբարո գործունեության արդյունքում առաջին պլան են մղվել մարդ-արարածի ամենաստորին բնազդները: Դրանով ահռելի հարված է հասցվել ազնվության, արդարության, պարկեշտության, ինքնազոհության վերաբերյալ մեր ժողովրդի մոտ ավանդաբար ձեւավորված պատկերացումներին: Ժողովուրդը կորցրել է հավատը պետական ինստիտուտների, օրենքի, քաղաքական գործիչների, կուսակցությունների, մինչեւ իսկ բարոյական հեղինակությունների նկատմամբ: Զքացել է մարդկանց բնական կապվածությունը հայրենի հողին: Հայրենիքը, տունը, նույնիսկ ընտանիքը լքելու երեւույթը դարձել է առօրյա եւ սովորական: Հասարակությունը վերածվել է, ավելի ճիշտ՝ նրան վերածել են կասկածամիտ, թերահա-

վատ, իդեալազուրկ, հուսահատ զանգվածի, ինչը չափազանց հեղհեղուկ ատաղձ է հզոր պետություն կերտելու տեսակետից: Մի կողմից հիացմունքով, մյուս կողմից ցավով պիտի նշեմ, որ մեր ժողովուրդը շատ ավելի հպարտ, եռանդուն ու լավատես էր պատերազմի, կամ եթե կուզեք ցրտի ու մթի տարիներին, քան այսօր: Իսկ դա հույս է ներշնչում, որ նա անպայման կվերագտնի իր արժանապատվությունը եւ կրկին տեր կկանգնի իր երկրին ու ապագային:

Իրավական եւ քաղաքական հետեւանքները

Իրավական հետեւանքներ ասելով՝ ես առաջին հերթին նկատի ունեմ դատական իշխանության անկախության լիակատար ոչնչացումը: Դա ապացուցելու համար, եթե չլինեին անգամ այլ փաստարկներ, որոնք, ի դեպ, չափազանց առատ են, բավական էր, թեկուզ, Պարգեւ Օհանյանի հետ այս օրերին կապված ամենաթարմ իրադարձությունը: Տաս տարվա ընթացքում, ի խախտումն միակուռ համակարգի կանոնների, վերջապես գտնվեց մի դատավոր, որը համարձակվեց արդարացման վճիռ կայացնել, եւ հանրապետության նախագահի ձեռքով անմիջապես հեռացվեց զբաղեցրած պաշտոնից: Ինչ վերաբերում է իրավապահ մյուս մարմիններին՝ դատախազությանը, ոստիկանությանը, անվտանգության ծառայություններին, ապա դրանք վաղուց վերածվել են ռեժիմին հավատարմորեն սպասարկող պատժիչ մեքենայի:

Գտնվելով հանրապետության նախագահի եւ վարչապետի լիակատար հսկողության տակ, այդ մարմիններն այսօր օրինակելի ստորաքարշությամբ ու ծառայամտությամբ իրականացնում են երկու ֆունկցիա. առաջին՝ կոծկել, թաքցնել, պարտակել ռեժիմի ահավոր հանցագործությունները՝ կաշառակերությունը, թալանը, նույնիսկ ահաբեկչությունները ու սպանությունները, եւ երկրորդ՝ ահաբեկել ու բեռական հետապնդումների ենթարկել իշխանությունների քաղաքական եւ տնտեսական հակառակորդներին: Նրանց գործունեության գլխավոր մեթոդը բոլոր ակտիվ քաղաքացիների, այդ թվում՝ այս հրապարակում կանգնածներից շատերի վերաբերյալ, այսպես կոչված, կոմպրոմատներ հավաքելն ու հատուկ թղթապանակներ (դոսիեներ) կազմելն է: Ընդ որում, այդ նպատակով գործի է դրվում ստալինյան բռնապետության ողջ զի-

նանոցը՝ մատնությունը, անստորագիր անազանգերը (այլ կերպ՝ անոնիմկաները), անօրինական հեռախոսալսումները, իրեղեն ապացույցների կեղծումը, բռնությամբ ցուցմունքներ եւ ինքնախոստովանական հայտարարություններ կորզելու պրակտիկան, բացառապես մեկ մարդու ցուցմունքով կայացած դատավարությունները եւ այլն: Հայաստանում չկա մի մարդ, որն այս կամ այն չափով ենթարկված չլինի թվարկված անօրինականություններից գոնե մեկին:

Բոլորովին մի՛ կասկածեք. անձնական թղթապանակներ են կազմված բոլոր քաղաքական գործիչների, պատգամավորների, տնտեսվարող սուբյեկտների, մեծ ու փոքր գործարարների, դասախոսների, բժիշկների, մտավորականների վերաբերյալ: Զվստահելով իրենց ենթականերին, երկրի ղեկավարները գործեր են կազմել նաեւ պետական բոլոր պաշտոնյաների վրա՝ նրանց մշտական շանտաժի տակ պահելու եւ հավատարմորեն ռեժիմին ծառայեցնելու նպատակով: Ռեժիմի հավատարիմ ծառաներ ասելով, ես նկատի չունեմ, ամենեւին, դատական եւ իրավապահ համակարգերի, ինչպես նաեւ պետական ապարատի միջին եւ ստորին օղակների տասնյակ հազարավոր ազնիվ ու բարեխիղճ պաշտոնյաներին: Նրանք նույնքան ստորացված, նվաստացած ու խոռված են անտանելի վարչախմբից, որքան մեր ողջ ժողովուրդը: Եթե այսօր նրանք, այլընտրանքի բացակայության պատճառով, դեռ այդ զգացումները չեն արտահայտում, ապա ժողովրդական ալիքի բարձրացմանը զուգընթաց, միահամուռ կերպով կմիանան ժողովրդին, ինչպես դա արեցին 1988 թվականին սկսված համազգային շարժման ժամանակ:

Իրավական հետեւանքներից շատ ավելի սոսկալի են ներկա իշխանությունների գործունեության քաղաքական հետեւանքները: Մեծ հայրենասերներ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Վարդան Օսկանյանի վարած հանձնարեղ ներքին եւ արտաքին քաղաքականության շնորհիվ Հայաստանն արդեն իսկ հայտնվել է համաշխարհային զարգացման հիմնական մայրուղուց շեղված, իզգոյ կամ մերժյալ պետության կարգավիճակում, իր հաստատուն տեղն զբաղեցնելով երրորդ աշխարհի նմանատիպ պետությունների շարքում: Դա ոչ միայն քայքայում է, առանց այդ էլ, անբարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակում գոյատեւելու դատապարտված հայոց պետականության հիմքերը, այլեւ հղի է ղարաբաղյան կարգավորման գործընթացում մեր դիրքերն զգա-

լիորեն թուլացնելու վտանգով: Կոռումպացված, ավտորիտար, բոնատիրական, եւ այդու արտաքուստ հզոր թվացող, բայց սեփական ժողովուրդների համար ատելի դարձած պետություններն իրականում ամենաթույլ պետություններն են: (Հեռուն չգնալու համար բավական է հիշեցնել շաբաթների ընթացքում մեր իսկ աչքի առջեւ կործանված իրաքյան պետության օրինակը): Եւ ընդհակառակը, անհամեմատ ավելի հզոր են իրավական, ժողովրդավար, ազատ, իրենց ժողովուրդների վստահությունը վայելող պետությունները: Առաջիկա նախագահական ընտրություններում կա՛ այդպիսի պետություն ստեղծելու հնարավորություն, եւ այս անգամ հայ ժողովուրդն այդ հնարավորությունը կորցնելու իրավունք չունի:

Ռեժիմի գործունեությունն ունի նաեւ բազմաթիվ այլ աղետաբեր հետեւանքներ, որոնք դրսեւորվում են, մասնավորապես, մշակույթի, կրթության, ժողովրդի հոգեւոր դաստիարակության բնագավառներում, սակայն, ժամանակի սղության պատճառով, դրանց մասին, թերեւս հնարավորություն կունենամ խոսելու այլ առիթներով: Իսկ այժմ ժամանակն է անդրադառնալ օրվա գլխավոր խորհրդին՝ 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ողբերգությանը:

Հոկտեմբերի 27-ի խորհուրդը

Ասվեց արդեն, որ Հայաստանի ներկա հանցավոր իշխանական համակարգի ձեւավորման սկիզբն ուղղակիորեն կապված է 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետ: Չնայած անցած ութ տարիներին արտահայտված հազարավոր գնահատականներին ու վերլուծություններին, ինձ թվում է, այդ սահմոկեցուցիչ իրադարձության էությունը դեռեւս ամենայն խորությամբ չի լուսաբանված: Հայ ժողովրդի եւ Հայոց պետականության շուրջ երեքհազարամյա պատմության մեջ հոկտեմբերի 27-ը հիշեցնող միայն երեք նախադեպ է արձանագրվել: 705 թվականին Նախճավան քաղաքի եւ մոտակա Խրամ ավանի եկեղեցիներում արաբները ողջակիզեցին հայ նախարարների ողջ ավագանուն: 1915 թվականի ապրիլի 24-ին երիտթուրքերը գլխատեցին արեւմտահայ քաղաքական եւ մտավորական ընտրանուն: Իսկ 1930-ական թվականներին Ստալինը ոչնչացրեց Հայաստանի ղեկավարության եւ մտա-

վորականության ամենակարկառուն դեմքերին: Սակայն տվյալ պարագայում համեմատությունը սոսկ արտաքին է ու մակերեսային: Հոկտեմբերի 27-ի սպանդը վերոհիշյալ եղեռնագործություններից արմատապես տարբերվում է նրանով, որ իրականացվել է ոչ թե օտարների, այլ հայերի իսկ ձեռքով:

Մինչեւ բուն նյութին անցնելը, ավելորդ չեմ համարում ձեր ուշադրությանը ներկայացնել հուշապատմական մի պատառիկ: Խորհրդարանական մղձավանջի հաջորդ առավոտյան ինձ զանգահարեցին Պաշտպանության նախարարությունից, հրավիրելով մասնակցել բանակի ղեկավարության եւ քաղաքական ուժերի միջեւ նախատեսված մի խորհրդակցության: Ես կտրականապես մերժեցի, եւ խոսակիցներիս խստորեն սաստելով, ասացի մոտավորապես հետեւյալը. «Բանակի ի՞նչ գործն է խառնվել քաղաքականությանը եւ միջամտել երկրի ներքին գործերին: Դուք բոլորովին ուրիշ առաքելություն ունեք, այն է՝ ապահովել Հայաստանի սահմանների անվտանգությունը եւ կանխել երկրին սպառնացող վտանգները»: Զբավարարվելով այդքանով, ես անմիջապես հրապարակեցի մի հայտարարություն՝ կոչ անելով համախմբվել նախագահի շուրջ եւ միասնաբար հաղթահարել ծագած ճգնաժամը: Դրանից հետո Ռոբերտ Քոչարյանը զանգահարեց ինձ եւ շնորհակալություն հայտնեց այդ առթիվ: Դա իշխանափոխությունից հետո իմ եւ Քոչարյանի առաջին ու վերջին խոսակցությունն էր: Իմ մտահոգությունն այդ պահին ոչ թե նախագահի դիրքի ամրապնդումն էր, այլ քաղաքից խուսափելու եւ Ադրբեջանի հնարավոր ագրեսիվ նկրտումները կանխելու անհրաժեշտությունը: Գաղտնիք չէ, որ Արցախյան պատերազմում հայկական կողմի ձեռքբերած հաջողությունները մեծապես պայմանավորված էին իշխանության Մութալիբովից – Էլչիբեյին եւ Էլչիբեյից – Ալիեւին անցման շրջանների քաղաքային ու գրեթե անիշխանական իրավիճակներով: Ուստի Ադրբեջանը չէր կարող չմտածել Հայաստանի նմանօրինակ վիճակից օգտվելու հնարավորության մասին: Այսքանն՝ իմիջիայլոց: Իսկ այժմ վերադառնանք օրվա ողբերգական թեմային:

Առաջին հայացքից բոլորին թվում էր, թե հոկտեմբերի 27-ի գործի բացահայտումն առանձնապես դժվարություն չպետք է ներկայացնի: Ոճրագործությունը կատարվել էր հարյուրավոր պատգամավորների եւ

միլիոնավոր հեռուստադիտողների աչքի առջեւ, բուն կատարողները ոչ միայն հայտնի էին, այլեւ կալանավորված, ուստի անհնար էր պատկերացնել, թե ի՞նչը պիտի խանգարեր անաչառ քննությանն ու դատավարության ընթացքին: Այս ամենը, սակայն, միայն առաջին հայացքից: Շատ շուտով մենք ազգովին ականատեսը եղանք չափազանց արտառոց մի երեւույթի: Հանրապետության նախագահն, իր բացահայտ միջամտություններով, ոչ միայն ամեն ինչ արեց հետաքննության եւ դատավարության բնականոն ընթացքը խոչընդոտելու ուղղությամբ, այլեւ փաստորեն վիժեցրեց դավադրության հնարավոր կազմակերպիչների բացահայտման գործը:

Նման հնչեղություն ունեցող ոճրագործությունների պարագայում ամենուրեք, հասարակական կարծիքի տրամաբանությամբ, կասկածները սովորաբար ընկնում են իշխանությունների վրա: Ուստի երկրի նախագահն ամենաշահագրգռվածը պետք է լիներ հեռացնելու համար իրենից այդ կասկածները: Եթե նա չուներ որեւէ այլ մոտիվացիա, ապա պետք է բացառնակ ազատություն տար քննչական եւ դատական մարմիններին, հրավիրեր աշխարհի լավագույն փորձագետներին եւ ապահովեր դատավարության լիակատար հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Սակայն տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Նախագահը զինվորական դատախազին արգելեց հանդես գալ խորհրդարանում, իսկ հետո ընդհանրապես հեռացրեց գործի վարույթից; աշխատանքից ազատեց գլխավոր դատախազ Բորիս Նազարյանին, նրա փոխարեն նշանակելով ռեժիմի հավատարիմ գործիք Աղվան Հովսեփյանին; հրապարակային ճնշումներ բանեցրեց տուժող կողմի պաշտպանների վրա, նրանցից մեկին մասնավորապես կոչելով «բոմժ»; վերեւների թելադրանքով դատարանը կարճեց կազմակերպիչների գծով գլխավոր կասկածյալ Ալեքսան Հարությունյանի գործը; որից հետո համաներման պատրվակով ազատ արձակեց նաեւ վեց այլ ամբաստանյալների եւ այլն: Այսինքն, կամա թե ակամա, Քոչարյանը բոլոր կասկածներն ուղղեց իր դեմ, ինչը նշանակում է, որ այդպիսի ռիսկի գնալու համար նա լուրջ պատճառներ պետք է ունենար:

Հոկտեմբերի 27-ի գործում դատարանների թույլ տված ամենակոպիտ օրինախախտումները հետեւյալ երկուսն են.

Առաջին. 2001 թվականի հունիսի 12-ին ընդունված համաներման օրենքում հստակորեն նշված էր, որ այն չէր տարածվում դատաքննությունն սկսված գործերի վրա: Եւ քանի որ, ինչպես հայտնի է, հոկտեմբերի 27-ի գործով դատաքննությունն սկսված էր, ապա այդ օրենքը չէր կարող կիրառվել տվյալ գործով մեղադրվող անձանց նկատմամբ: Հետեւաբար, դատավոր Ուզունյանը, համաներման կիրառմամբ կարճելով վեց ամբաստանյալների գործերը, թույլ է տվել օրենքի աններելի խախտում, ինչը, բնականաբար չէր կարող չազդել դատավարության հետագա ընթացքի վրա:

Երկրորդ. Օրենքի շատ ավելի աղաղակող ոտնահարմամբ մի այլ դատավոր կարճել է Ալեքսան Հարությունյանի գործը՝ հիմք ընդունելով Նաիրի Հունանյանի մերկապարանոց հայտարարությունն այն մասին, թե իբր վերջինիս դեմ տրված ցուցմունքներն իրենից կորզվել են խոշտանգումների միջոցով: Սակայն, Հարությունյանի գործն այդպիսի հիմնավորմամբ կարճելուց առաջ, դատարանը պարտավոր էր խոշտանգումների փաստն ապացուցել դատավճռով եւ խոշտանգողներին ենթարկել համապատասխան պատիժների՝ մի բան, որ չի արվել: Հետեւաբար, Հարությունյանի գործը կարճվել է ապօրինաբար, ինչը նշանակում է, որ Հունանյանի բոլոր ցուցմունքները դեռեւս ուժի մեջ են՝ ցուցմունքներ, որոնցում Ալեքսան Հարությունյանը ներկայանում է որպես կազմակերպիչների գծով հոկտեմբերի 27-ի գործի գլխավոր կասկածյալ եւ հանցուցային ֆիգուր:

Ձեմ կարծում, թե հիշյալ դատավորներն այնքան արհեստավարժ չէին, որ չհասկանային իրենց կայացրած վճիռների անօրինականությունը: Եթե, այդպես լինելով, նրանք այնուամենայնիվ վտանգել են իրենց պրոֆեսիոնալ համբավը եւ հետագա կարիերան, ապա դա նշանակում է, որ կա՛մ ենթարկվել են ճնշումների, կա՛մ էլ առաջնորդվել այլ շարժառիթներով: Երկու դեպքում էլ, սակայն, միեւնույն է, նրանք վաղ թե ուշ պատասխան են տալու օրենքի առաջ:

Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը հավերժ մնալու է որպես Հայոց պետականության գլխին կախված ամոթալի խարան, ինչը կարելի կլինի որոշ չափով մեղմել միայն գործի լիակատար բացահայտման դեպքում: Ուստի այդ խնդրի լուծումը դառնալու է Հայաստանի

ապագա նախագահի ամենագլխավոր պարտականություններից մեկը՝ մի բան, որ բացառված է Սերժ Սարգսյանի ընտրվելու պարագայում:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ներկա վիճակը

Իսկ այժմ՝ համառոտակի անդրադառն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին, որը, ինչպես բազմիցս առիթ ունեցել եմ ընդգծելու, Հայոց պետականության առջեւ կանգնած գերագույն խնդիրն է, քանզի գերազանցապես դրանից է կախված թե՛ Հայաստանի ու Արցախի ապագան, թե՛ մեր երկրների տնտեսական բարգավաճումը, եւ թե՛ հայ ժողովրդի բարօրությունը: Քանի դեռ չի լուծվել այդ հարցը, քանի դեռ չեն վերացել մեզ խեղդամահ անող շրջափակումները, քանի դեռ չեն կարգավորվել հարաբերությունները մեր անմիջական հարեւանների հետ, եւ քանի դեռ մեր երկիրը չի ինտեգրվել տարածաշրջանային ու միջազգային համակարգերում, Հայաստանն այսօրվա աշխարհի պահանջներին զուգընթաց զարգանալու եւ հզորանալու հնարավորություն չունի, որքան էլ բազմաթիվ լինեն հակառակը պնդողները:

Լեռնային Ղարաբաղի հարցը սկզբից եւեթ ինձ համար եղել է ոչ թե հողի կամ տարածքի, այլ բացառապես մարդու իրավունքների հարց: Աշխարհից կտրված մի լեռնազանգվածում ապրում է 150 հազար մարդուց բաղկացած մի ժողովուրդ, որն ընդամենը ուզում է նույնքան ազատ, հպարտ, երջանիկ ու ապահով լինել, որքան ֆրանսիացին, գերմանացին, անգլիացին կամ ամերիկացին: Սակայն, բանից պարզվում է, որ դա չի հետաքրքրում միջազգային հանրությանը: Աշխարհը, որն այդքան հոգ է տանում անհատ մարդու իրավունքների պաշտպանությանը, 150 հազար մարդուն մարդ չի համարում: Դա պարզապես դիտվում է որպես վիճակագրական փաստ, իսկ լավագույն դեպքում՝ ազգային փոքրամասնություն, որի տակ սովորաբար հասկացվում է էքստրատերիտորիալ փոքրամասնությունը: Բայց քանի որ, ի դժբախտություն միջազգային հանրության, Ղարաբաղը էթնո-տերիտորիալ միավոր է, նրա վրա չեն կարող տարածվել ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող միջազգային կոնվենցիաները: Հետեւա-

բար, մնում է միայն հարցի մեկ լուծում, այն է՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի իրացումը: Այլ լուծումները բացառվում են ոչ թե հայերի եւ ադրբեջանցիների օրգանական անհամատեղելիությամբ, ինչպես հայտարարել է Ռոբերտ Քոչարյանը, ոչ էլ կրոնական անտագոնիզմով, ինչպես պնդում են ուրիշները, այլ բաղմաբական այն ակնհայտ իրողությամբ, որ Ադրբեջանն ի վիճակի չէ երաշխավորել Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը, ազատությունը եւ բարօրությունը:

Շուրջ մեկ ամիս առաջ ունեցած իմ ելույթում ես հարկադրված էի ցավով արձանագրել, որ Հայաստանի ներկա իշխանությունների վարած հանցավոր բաղաքականության պատճառով վերջին տաս տարիների ընթացքում Ղարաբաղի հարցի կարգավորումը հասել է համարյա անհուսալի վիճակի, բանի որ Ադրբեջանը, օր-օրի կոշտացնելով իր դիրքը, այսուհետեւ ոչ մի փոխզիջման չի գնալու: Ո՞րն էր այսպիսի հոռետեսական գնահատականի հիմքը: Ո՛չ այնքան այն, որ Հայաստանը բանակցություններում միաժամանակ ներկայացնելով նաեւ Ղարաբաղի հանրապետությունը, վերջինիս փաստորեն դուրս է մղել կարգավորման գործընթացից, նրան զրկելով ԵԱՀԿ-ի բանաձեւերով սահմանված հակամարտության լիիրավ կողմի կարգավիճակից, ո՛չ էլ Ղարաբաղի հարցը ինքնորոշման իրավունքի հարթությունից անխոհեմաբար վիճելի տարածքի հարթություն տեղափոխելու փաստը, որքան անհամեմատ ավելի կարեւոր ու չափազանց ցավալի մի իրողություն:

Հայաստանի իշխանությունները տաս տարի շարունակ, աշխարհին հիմարի տեղ դրած, ձեւացրել են, թե անկեղծորեն շահագրգռված են Ղարաբաղի հարցի շուտափույթ կարգավորմամբ՝ իրականում, սակայն, հետապնդելով բոլորովին այլ նպատակ, այն է՝ ամեն կերպ խափանել ու վիժեցնել այդ գործընթացը: Մեր պետական այրերի խաղաղասիրական հայտարարությունները, փոխզիջումների պատրաստակամության վերաբերյալ տված հավաստիացումները, իբրեւ թե կոնստրուկտիվ նախաձեռնությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ էժանագին բլեֆ՝ միջազգային հանրությանը խաբելու եւ ստատուս-քվոն պահպանելու համար: Նրանց թվացել է, թե ԵԱՀԿ-ի միջնորդներն այնքան միամիտ են, որ կընկնեն թակարդը եւ զերծ կմնան իրենց վրա ճնշումներ բանեցնելուց: Եթե միջնորդները մինչ այժմ ձեւացրել են, թե հավատում են հայկական

կողմի անկեղծությանը, դա ամենեւին չի նշանակում, որ նրանք չեն հասկացել վերջինիս պարզունակ խաղը: Այն, որ նրանք մեծ ջանք չեն թափել կողմերին սկզբունքային համաձայնության բերելու ուղղությամբ, բացատրվում է պարզապես այն պատճառով, որ գերտերությունների առաջնահերթությունների շարքում Ղարաբաղի հարցն զբաղեցնում է, թերեւս, հազարերորդական տեղ: Հայաստանի իշխանությունները, անթաքույց հրճվանքով, այս ամենը համարում են իրենց մեծագույն հաջողությունը, քանի որ, ըստ նրանց, դա նպաստում է ղարաբաղյան ստատուս-քվոն պահպանելու ծրագրին:

Ստատուս-քվոյի պահպանման ձգտումը հիմնված է այն փիլիսոփայության վրա, որ միջազգային հանրությունը վաղ թե ուշ հաշտվելու է կատարված փաստի հետ ու վերջիվերջո ճանաչելու Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Տեսականորեն սա ճիշտ փիլիսոփայություն է, մանավանդ պատմական առումով հիմնավորված մի քանի գործնական նախադեպերով: Ամբողջ խնդիրն այն է, ինչպես դեռ տաս տարի առաջ մի առիթով նշել էի, թե Հայաստանն ունի՞, արդյոք, 20–30 տարի ստատուս-քվոն պահպանելու հնարավորություն, նրա ռեսուրսները կբավարարե՞ն, արդյոք, զարգացնելու սեփական տնտեսությունը, հաղթահարելու շրջափակումների եւ մեկուսացման հարուցած խոչընդոտները, եւ վերջապես՝ մեր երկիրը կդիմանա՞, արդյոք, Ադրբեջանի հետ մրցակցությանը:

Ստատուս-քվոն ոչ թե քարտեզ է, ոչ թե զինադադարի գիծ, այլ ուժերի կայուն հավասարակշռություն: Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս, ցավով պետք է արձանագրել, որ մենք գտնվում ենք բավականին մտահոգիչ, եթե չասենք, անմխիթար վիճակում: Եթե սրանից տաս տարի առաջ Հայաստանը եւ Ադրբեջանն իրենց մարդկային, տնտեսական եւ ռազմական ռեսուրսներով քիչ թե շատ համադրելի ուժեր էին, ապա այսօր, նույն չափորոշիչներով, նրանց միջեւ առաջացել է անհեղեվածք, որը խորանալու միտում ունի: Մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ բոլոր բնագավառներում Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերը տարեցտարի ավելի ու ավելի ետ են մնում Ադրբեջանի զարգացման տեմպերից: 1997–2006 թվականների կտրվածքով Հայաստանի համախառն ներքին արդյունքն աճել է մոտավորապես 4, իսկ Ադրբեջանինը՝ ավելի քան 5 անգամ; ար-

դյունաբերական արտադրանքի աճը Հայաստանում կազմել է 3 անգամ, Ադրբեջանում՝ 5.3 տասնորդական անգամ; բյուջեն՝ Հայաստանում 3.8 տասնորդական անգամ, Ադրբեջանում՝ 5 անգամ; արտահանումը՝ Հայաստանում 4, Ադրբեջանում՝ 8 անգամ; արտաքին առևտրի հաշվեկշիռը 2006թ. տվյալներով՝ Հայաստանում բացասական (1 միլիարդ 190 միլիոն դոլար), Ադրբեջանում դրական (1 միլիարդ 104 միլիոն դոլար): Արդեն իսկ հայտնի է, որ 2007 թվականի ցուցանիշների ամփոփումը մեզ համար ավելի տխուր պատկեր է ներկայացնելու:

Չեմ կասկածում, որ վաղն իմ ընդդիմախոս-բարեկամները հայտարարելու են. «Այսպիսի տվյալներ հրապարակելով՝ Տեր-Պետրոսյանը պարտվողական տրամադրություններ է սերմանում եւ մտադիր է հող նախապատրաստել Ղարաբաղն Ադրբեջանին ծախելու համար»: Կանխավ դիմելով նրանց, թախանձում եմ. «Հանգստացեք հարգելիներս: Դադարեք զբաղվել դեմագոգիայով: Բավական է հայրենասիրական ճառերով մոլորեցնել ժողովրդին: Բավական է նրանից թաքցնել ճշմարտությունը: Ժողովուրդն ավելի խելոք, տրամաբանող ու բանական է, քան ձեզանից շատերը»: Մեկանգամընդմիշտ պետք է գիտակցել՝ Հայաստանի ոչ մի նախագահ, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, չի կարող ծախել Ղարաբաղը: Նախ եւ առաջ այն պատճառով, որ Ղարաբաղի բախտը պետք է վճռի ոչ թե Հայաստանը կամ Ադրբեջանը, այլ միայնումիայն Ղարաբաղի ժողովուրդը: Եւ երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ՝ Հայաստանը չի կարող ստորագրել որեւէ փաստաթուղթ, որտեղ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Ո՞րն է, արդ, պարտվողականությունը՝ ժողովրդին անգիտության մեջ պահելով ու նրա զգոնությունը բթացնելով, մի օր արթնանալ ու տեսնել, որ Ղարաբաղը չկա, թե՞ ճշմարտությունը բացահայտելով ու ահազանգ հնչեցնելով, փորձել համախմբել ազգի ուժերը՝ այդ վերահաս վտանգը կանխելու համար: Մեծագույն հարգանք տածելով մեր ժողովրդի նկատմամբ, ես միշտ ապավինել եմ ոչ թե նրա զգացմունքներին, այլ բանականությանը: Երբեք չեմ թաքցրել ճշմարտությունը նրանից, որքան էլ այն դառը լինի: Երբեք սուտ խոստումներ չեմ տվել ու չեմ զբաղվել ամբոխավարությամբ կամ ամբոխահաճությամբ՝ դե-

մագոգիայով եւ պոպուլիզմով: Եւ այսուհետեւ էլ չեմ պատրաստվում դավաճանել այդ սկզբունքներին: Թո՛ղ դա դիտվի որպես ոչ շահավետ քաղաքական վարքագիծ: Թո՛ղ ազդի իմ վարկանիշի վրա: Ես այն եմ, ինչ կամ ու լինելու եմ: Այդպիսին էի ես նաեւ 1988-ին, եւ դուք հասկացաք ու վստահեցիք ինձ ու «Ղարաբաղ կոմիտեի» իմ ընկերներին, ինչի արդյունքը անկախ Հայաստանն է ու ազատագրված Արցախը: Համոզված եմ, այս անգամ եւս կհասկանաք ու կվստահեք:

Այս ակամա քնարական զեղումից հետո, կրկին վերադառնանք Ղարաբաղի խնդրին: Եռանախագահության կողմից ներկայումս շրջանառության մեջ դրված ոչ-պաշտոնական փաստաթուղթը, որին «սկզբունքորեն» համաձայնել է Հայաստանը, ոչ այլ ինչ է, եթե ոչ տաս տարի առաջ մերժված փուլային տարբերակը: Այսպիսով, Հայաստանի ներկա իշխանություններն, այդքան տարիներ կորցնելուց ու դիվանագիտական անպարարություններից (Վանոն կասեր՝ մայմունություններից) հետո, ինչի հետեւանքներն, ինչպես տեսանք, ավերիչ են, սուսիկ-փուսիկ համաձայնել են մի ծրագրի, որը ժամանակին ջանադրաբար ներկայացնում էին որպես պարտվողական, դավաճանական եւ այլն: Դա կարող է ունենալ երկու բացատրություն. կա՛մ սա մեր իշխանությունների հերթական բլեֆն է՝ միտված նորից ձգձգելու հարցի լուծումը, կա՛մ էլ, եթե ավելի լավատեսորեն գնահատենք, նրանք վերջապես հասկացել են, որ Ղարաբաղի կարգավիճակի շուրջ կողմերի տրամագծորեն հակադիր դիրքորոշումների պատճառով, կարգավորման փուլային տարբերակն, ինչպես անցյալում, այսօր էլ այլընտրանք չունի:

Համանախագահների մշակած խնդրո առարկա փաստաթղթում, կողմերի դեմքը փրկելու համար, ավելացված է միայն մի անորոշ կետ Ղարաբաղում անցկացվելիք հանրաքվեի կամ ժողովրդական հարցման՝ պլեբիսցիտի մասին: Փաստաթուղթն իբրեւ թե համաձայնեցված է շուրջ 99 տոկոսով, եւ մնում է ընդամենը մի քանի մանրամասն, որոնց առնչությամբ կողմերը դեռեւս չեն հարթել իրենց տարաձայնությունները: Մանրամասնություն կոչվածները, սակայն, կարող են այնքան սկզբունքային լինել, որ չհաղթահարվեն դեռեւս երկար ժամանակ: Ադրբեջանը, հույսը դրած նավթադոլարների վրա, բոլորովին չի շտապում, իսկ Հայաստանը, չգիտես ինչին ապավինած, հարցը լուծելու անհրաժեշտ կամք չի դրսեւորում: Ավելին, լուրջ հիմքեր կան պնդելու, որ եթե հարթ-

վեն անգամ բոլոր տարաձայնությունները, միեւնույն է, Քոչարյանը, իր սովորության համաձայն, խուսափելով պատասխանատվությունից, փաստաթուղթը չի ստորագրի՝ այդ բեռը բարդելով հաջորդ նախագահի ուսերի վրա: Մի խոսքով՝ փակուղային մի վիճակ, որում, Քոչարյանից բացի, մեղքի իր բաժինն ունի Վարդան Օսկանյանը, եւ մասամբ՝ Արկադի Ղուկասյանը, որը Ղարաբաղի, որպես հակամարտության լիիրավ կողմի, միջազգային մանդատը զիջել է Հայաստանի նախագահին:

Իրավիճակից դուրս գալու ելքը թեեւ դժվարհաղթահարելի, բայց միանգամայն հստակ է.

Առաջին. նախ եւ առաջ պետք է մաքրել սեփական ախոռները եւ համաժողովրդական հուժկու ալիքով խափանել ներկա հանցավոր ռեժիմի վերարտադրությունը; վերականգնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը; անհաշտ պայքար հայտարարել կոռուպցիայի, հովանավորչության, պաշտոնեական չարաշահումների դեմ; ստեղծել հիրավի ժողովրդավարական, իրավական, ազատ եւ արդար պետություն՝ հաջ գիտակցելով, որ Ղարաբաղի ապագան լիովին կախված է Հայաստանի հզորությունից:

Երկրորդ. անհրաժեշտ է վերադառնալ Ղարաբաղի հարցի կարգավորման նախկին ձեւաչափին, որում Ղարաբաղը ներկայացված էր որպես հակամարտության լիիրավ կողմ: Հասկանալի է, որ դա անհնար է պատկերացնել Սերժ Սարգսյանի նախագահ ընտրվելու պարագայում, որը նույնպես ղարաբաղցի լինելով, Քոչարյանի նման հավակնելու է բանակցություններում ներկայացնել նաեւ Ղարաբաղյան կողմը:

Երրորդ. արմատապես հարկ է փոխել Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացում Հայաստանի ներկա իշխանությունների վարած անհեռանկար եւ վտանգավոր քաղաքականությունը, այսինքն՝ խնդրի լուծումը ձգձգելու, ստատուս-քվոն պահպանելու փիլիսոփայությունից անցում կատարել հարցը լուծելու փիլիսոփայությանը:

Եւ չորրորդ. անիմաստ է վախենալ կամ խուսափել փոխզիջումներից, որովհետեւ այլ լուծում բնության մեջ գոյություն չունի: Քաղաքականության մեջ, ինչպես բիզնեսում, հաջող են համարվում միայն այն գործարքները, որոնցից շահում են երկու կողմերը: Երբ շահում է միայն մեկ կողմը, գործարքն ամենեւին հաջողված կամ տեւական չի կարող լինել:

Որոշ լրացուցիչ նկատառումներ

Երկարաշունչ խոսքս ամփոփելուց առաջ, հայցելով ձեր ներողամտությունը եւ մի-փոքր եւս շարաշահելով ձեր համբերությունը, անհրաժեշտություն եմ զգում ձեզ հետ կիսվել մի քանի այլ նկատառումներով:

Զուտ մարդկայնորեն ինձ մեծագույն ցավ են պատճառում Հայաստանի պետական այրերի հասցեին այստեղ հնչեցված խիստ գնահատականները, որովհետեւ թե՛ Ռոբերտ Քոչարյանը, թե՛ Սերժ Սարգսյանը եղել են իմ անձնական եւ մարտական ընկերները՝ անհատականություններ, որոնց անուններն ըստ արժանվույն պետք է արձանագրվեն հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ: 1999 թվականից հետո նրանց դրսեւորած վարքագիծն ամենեւին չի կարող ջնջել կամ ստվերել նրանց՝ ու նաեւ Սամվել Բաբայանի եւ Արկադի Ղուկասյանի անուրանալի եւ նշանակալից դերը, ինչպես Արցախի ազատագրման, այնպես էլ հայոց պետականության վերականգնման եւ ամրապնդման գործում: Իմ ելույթում հնչեցված կոշտ որակումները թելադրված են ոչ թե նրանց վարկաբեկելու կամ դատապարտելու միտումով, այլ միայնումիայն ներկա վարչախմբի վերարտադրման անթույլատրելիության մասին ահազանգելու անհրաժեշտությամբ: Լավագույն ելքը եւ իրենց պատմական վաստակն ու արժանապատվությունը փրկելու վերջին շանսը կլիներ, եթե Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը կամավոր հեռանային քաղաքական ասպարեզից, ինչը, վստահ եմ, հավուր պատշաճի կգնահատվեր երախտապարտ եւ ներողամիտ հայ ժողովրդի կողմից: Կանխելով հնարավոր մեղադրանքները, միանգամից ուզում եմ ընդգծել. իմ վերաբերմունքի մեջ բոլորովին դեր չի խաղում Քոչարյանի եւ Սարգսյանի ղարաբաղցի լինելու հանգամանքը: Եթե նրանք արժանի լինեին, թող ոչ թե տաս, այլ հարյուր տարի բարով կառավարեին Հայաստանը, ինչպես նրանց նախնիները՝ արցախցի Հեթումյանները 150 տարի կառավարեցին Կիլիկիո թագավորությունը: Ես անթույլատրելի եմ համարում անպարկեշտ խոսակցությունների ու գրգռությունների միջոցով ղարաբաղցիների եւ հայաստանցիների միջեւ սեպ խրելուն միտված տրամադրությունները, դրանք գնահատելով թե՛ անարդար, թե՛ վտանգավոր: Ուստի կանեմ ինձնից կախված ամեն ինչ՝ նման մտայնության տարածումն ու ամրապնդումը կանխելու համար, մանավանդ

որ Քոչարյանի եւ Սարգսյանի ստեղծած իշխանական արատավոր համակարգի հենասյուների 99 տոկոսը կազմում են ոչ այլ ոք, քան հայաստանցիները:

* * *

Բոլորովին չեմ կասկածում, որ իմ ընդդիմախոսներից ոմանք վաղը նորից լուրջ դեմքերով կհայտարարեն՝ Տեր-Պետրոսյանն այս անգամ եւս բավարարվեց միայն փաստերի կոնստատացիայով ու քննադատությամբ, չառաջարկելով որեւէ ծրագրային լուծում եւ չարձագանքելով իրեն ու նախկին իշխանություններին ուղղված մեղադրանքներին: Նախ, ծիծաղելի է տաս տարի լռած մարդու մի ելույթից պահանջել բոլոր հարցերի պատասխանը, քանի որ յուրաքանչյուր ելույթ ունի իր խնդիրը: Մինչ քաղաքական գործչի պլատֆորմը բացահայտվում է մի ամբողջ շարք ելույթների, մամլո ասուլիսների, հարցազրույցների, հոդվածների, նախընտրական ծրագրերի ու քարոզարշավների հիման վրա: Իսկ ինչ վերաբերում է մեղադրանքներին, ապա որպեսզի ոչ ոք չկարծի, թե վախենում կամ խուսափում եմ դրանցից՝ ինքս կներկայացնեմ դրանց ամբողջական կատալոգը կամ այն ամենը, ինչն սպառնաց հիշեցնել մեր հարգարժան նախագահը՝ մութ ու ցուրտ տարիներ, մազութի գործ, էլեկտրաէներգիայի հողանցում, արդյունաբերության քայքայում, վայրենի սեփականաշնորհում, խնայբանկի ավանդների փոշիացում, կուսակցության եւ թերթերի փակում, դավաճանություն Արցախի գործին, սխալ կադրային քաղաքականություն, թուրքամետություն, ապազգայնություն, կոսմոպոլիտիզմ եւ այլն: Հավատացած եմ, ոմանք չարախնդությամբ, իսկ հասարակության մեծամասնությունն ամենայն անկեղծությամբ սպասում են նշված մեղադրանքների վերաբերյալ իմ բացատրություններին: Վստահեցնում եմ, դուք դեռ բազմաթիվ առիթներ կունենաք լսելու այդ բացատրությունները: Իսկ թե որքան համոզիչ կամ անհամոզիչ կլինեն դրանք՝ կմնա ձեր դատին:

* * *

Հասկանում եմ, որ մեծագույն ինտրիգը, որը ձեզանից շատերին բերել է այս հրապարակ, առաջիկա նախագահական ընտրություններ-

ռում իմ առաջադրվելու կամ չառաջադրվելու հարցն է: Ուզում եմ հավատացեմ, ուզում եմ՝ ոչ, այդ հարցն ինձ առանձնապես չի հետաքրքրում: Իմ համոզմամբ, Հայաստանի գլխավոր խնդիրն այսօր ոչ թե ապագա նախագահի անձն է, այլ ներկա վարչախմբի վերարտադրության վիժեցումը, քանզի դա արատավոր, նվաստացուցիչ, սեփական քաղաքացիների հանդեպ օտարավարի վարվող, հայ ժողովրդին պատիվ չբերող իշխանություն է: Ինչպես սեպտեմբերի 21-ի ելույթում հայտարարել էի, եթե հայտնվեր մի ուժ, որն ունակ լիներ լուծել այդ խնդիրը, ես ջանք չէի խնայի նպաստելու նրա հաղթանակին, իսկ եթե՝ ոչ, ապա ինձ ոչինչ չէր մնա, քան հնազանդվել ժողովրդի կամքին: Ճիշտն ասած, ես տրամադրվել էի իմ վերջնական որոշումը կայացնել ընտրական գործընթացի սկզբնավորման նախօրյակին: Սակայն իմ համակիրների նկատմամբ իշխանությունների կողմից վերջերս կիրառված բռնությունները, ինչպես նաեւ այս հանրահավաքի հսկայական էներգետիկան, այլեւս անհետաձգելի են դարձնում նման որոշման կայացումը: Ուստի այս պահից ինձ հայտարարում եմ Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածու:

Սա սոսկ հայտարարություն չէ, այլ իմ, որպես քաղաքական գործչի, կարգավիճակի կտրուկ փոփոխություն: Հետեւաբար, այսուհետեւ իմ կողմնակիցների նկատմամբ գործադրված որեւէ բռնություն կամ հարկային ծառայության որեւէ ապօրինի պատժիչ գործողություն դիտվելու է որպես քաղաքացիների ընտրական իրավունքի հանցավոր խախտում, եւ այդպես էլ ներկայացվելու է ինչպես մեր հասարակությանը, այնպես էլ միջազգային ատյաններին: Թո՛ղ յուրաքանչյուր ոստիկանապետ, թաղապետ կամ հարկահան ականջին օղ անի՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքների դեմ կատարված որեւէ բռնարարք՝ քրեական հանցագործություն է, եւ նրանք վաղ թե ուշ դատական կարգով պատասխան են տալու օրենքի առաջ: Այդպիսիների ցուցակն արդեն գլխավորում են ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ Ալեքսանդր Աֆյանը, Արարատ Մահտեսյանը եւ Ներսես Նազարյանը, իսկ ցուցակում հայտնվելու հավակնություն ունեն Երեւանի երկու թաղապետ, որոնց անունները, կախված նրանց հետագա վարքից, կհրապարակվեն կամ ոչ հաջորդ հանրահավաքներում:

Հայաստանի ներկա իշխանություններն ապրում են իրենց հոգեվարքը: Ոչնչից մի՛ վախեցեք: Նրանք ավելի վախեցած են, քան դուք: Վկա՝ նրանց նյարդային ջղանգումները:

1988-ի համազգային շարժումն ուներ հայտնի մի կարգախոս՝ «Պայքար, պայքար մինչեւ վերջ»: «Վերջի» տակ մենք նկատի ունեինք երկու նպատակ՝ Հայաստանի անկախության վերականգնումը եւ Արցախի ազատագրումը, որոնք արդեն իրականություն են: Իսկ այսօր, «վերջ» ասելով, մենք պետք է դնենք երկու այլ նպատակ՝ Հայաստանի սահմանադրական կարգի ու արժանապատվության վերականգնումը եւ Արցախի ազատության իրավական (դե յուրե) ձեւակերպումը: Ուրեմն՝

Պայքա՛ր, պայքա՛ր մինչեւ վերջ:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Առավոտ», 26 հոկտեմբերի, 2007թ.: «168 ժամ», 28 հոկտեմբերի, 2007թ.: Հրատարակված նաեւ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն առանձին գրքույկներով. «Ավազակապետության անատոմիան եւ մեխանիկան», Երեւան, 2007թ. – "The Anatomy of Bandocracy", Yerevan-2007 – "Анатомия бандократии", Ереван-2007.

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԱԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ
(3 նոյեմբերի 2007թ.)

Նոյեմբերի 3-ին Երեւանի «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան մեծ» սրահում տեղի ունեցավ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը երիտասարդության ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էին շուրջ 1700 երիտասարդներ, որոնք ներկայացնում էին հանրապետության բոլոր մարզերը, եւ քաղաքական տարբեր ուժեր: Հանդիպումը անցավ բացառիկ ջերմ մթնոլորտում. ստորեւ ներկայացնում ենք հանդիպման պաշտոնական սղագրությունը: Հանդիպումը սկսվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի բացման խոսքով:

Սիրելիներս. ինձ համար շատ հաճելի է մասնակցել այս հանդիպմանը: Վաղուց այսման գեղեցիկ երիտասարդություն չէի տեսել: Հոկտեմբերի 26-ին ես ձեզ տեսա Ազատության հրապարակի հարթակից: Այսօր դում այստեղ եմ՝ բարեկամական զրույցի համար:

Իմ խորին համոզմամբ այսօր Հայաստանում սկսվում է մի նոր շարժում, նոր սերնդի շարժում: 19–17 տարի է անցել 88–90 թվականների մեր առաջին համազգային շարժումից: Փոխվել է սերունդ. նրանք, ովքեր 88 թվականին 10–15 տարեկան էին, այսօր արդեն 30–35 տարեկան են: Ես ընդամենը այդ առաջին շարժման եւ ձեր նոր ձեւավորվող շարժման միջեւ կամուրջ եմ: Նոր շարժումը բոլորովին այլ բովանդակություն ունի, այլ նպատակներ, այլ խնդիրներ: Եւ կարծում եմ՝ ձեզ պիտի առաջնորդի նախեւառաջ այն, որ սա ձեր շարժումն է: Ես ընդամենը ձեր գործիքն եմ՝ արտահայտելու համար ձեր կամքը:

Ես կուզեի, որ դում մի-փոքր պատկերացում ունենայիք առաջին շարժման մասին՝ հենց սկզբնաղբյուրից, հանձին նրա ղեկավարության անդամներից մեկի: Երբ ասում են Հայոց համազգային շարժում, դա կուսակցական պատկանելության նշանակություն չուներ այն ժամանակ: Դա իսկապես համաժողովրդական շարժում էր, որում ընդգրկված էին մեր հասարակության բոլոր շերտերը՝ անխտիր: Նույնիսկ շարֆային կոմունիստները: Թվում էր, թե մենք պայքարում էինք կոմունիստական ռեժիմի դեմ, բայց մեր շարժման ամենաակտիվ խավերից մեկը հենց շարֆային կոմունիստներն էին: Զխաբվեք կոմունիստական կուսակցության այն գաղափարախոսությամբ, թե նա էր Խորհրդային Միության առաջատար, կամ ղեկավար մարմինը: Ոչ: Ընդամենը այդ կուսակցության վերին խավն էր, որ օգտվում էր բոլոր բարիքներից, իսկ շարֆային կոմունիստները ընդամենը շիրմա էին ծառայում նրանց համար: Մի փաստ հիշեմ. 88 թվականի հունիսին Մոսկվայում տեղի էր ունենալու, եթե չեմ սխալվում, կոմկուսի 19-րդ կոնֆերանսը, որին հենց Ղարաբաղ կոմիտեի նախաձեռնությամբ ուղղվեց մի պետիցիա, որը ստորագրել էին հայաստանցի 40 հազար շարֆային կոմունիստներ: Ստորագրահավաքը կազմակերպեց Հայոց համազգային շարժումը, այն ժամանակ՝ «Ղարաբաղ» կոմիտեն: Ես հիշում եմ՝ այսօրվա տեխնիկան չկար, համակարգիչներ չկային, մենք աշխատում էինք պապենական մեթոդներով, թղթի երկար փաթեթներով աշխատող նախկին համակարգիչների վրա, եւ 40 հազար ստորագրության քաշը 38 կիլոգրամ էր: Այդ փաթեթը Սիլվա Կապուտիկյանը տարավ Մոսկվա, իհարկե, մի քանի հոգու օգնությամբ: Ինչու եմ բերում այս օրինակը. նշելու համար, որ դա իսկապես համազգային շարժում էր, որում ընդգրկված էին բոլոր խավերը՝ աշխատավորությունը եւ մեր իսկական մտավորականությունը: Իսկական մտավորականություն ասելով, ես նկատի չունեի եւ այսօր էլ չունեմ նոմենկլատուրային մտավորականությունը, որը միշտ էլ ծառայել է ռեժիմին: Ես նկատի ունեմ ուսուցիչների, ինժեներների, գիտաշխատողների, բժիշկների, արվեստագետների հսկայական բանակը: Դա էր այդ շարժման կորիզը: Մեր գյուղացիությունը. թվում էր թե ամռանը պետք է զբաղված լիներ հողի հետ կապված աշխատանքներով, բայց գյուղացիության ողջ ակտիվ, գիտակից զանգվածը մասնակցում էր Երեւանի Ազատության հրապարակում կազմակերպվող բոլոր հանրահավաքնե-

րին: Իսկ ովքեր չէին մասնակցում, հանրահավաքից մեկ-երկու ժամ հետո տեղեկացվում էին. մենք միշտ պատրաստում էինք հատուկ տեղեկատվական թերթիկներ, որոնք երկու ժամ հետո հասնում էին Հայաստանի ամենահեռավոր շրջանները: Ու քանի որ երբեմն կես միլիոնանոց, երբեմն նույնիսկ մեկ միլիոնանոց միտինգներ էին լինում՝ թվում էր, թե մենք հանճարեղ կազմակերպիչներ էինք: Բայց այդպես չէր: «Ղարաբաղ» կոմիտեն՝ 11 հոգի էր, եւ նրան կից կարելի է ասել շուրջ 300 ակտիվ գործիչներ: Ճիշտ է սա արդեն բավականին մեծ ուժ էր, բայց այն ընդամենը կոորդինացնում, ուղղորդում էր շարժումը: Շատերը մեր մասին իսկապես մեծ կարծիքի էին, մտածում էին, թե ունենք հզոր կազմակերպություն, երբ ուզենք կարող ենք ողջ հանրապետությունը կանգնեցնել գործադուլի. երեք ժամում մենք կարող էինք Ազատության հրապարակում 100 հազարանոց հանրահավաք կազմակերպել: Այնպիսի մեխանիզմ էր ստեղծված, ընդ որում՝ մենք չէինք ստեղծել, տարերայնորեն այդպիսի մեխանիզմ էր ձեւավորվել, որ հեռախոսներով, մեքենաներով շրջաններին տեղեկացնելու միջոցով՝ երեք ժամվա ընթացքում հարյուր հազար մարդ միշտ կանգնած էր Ազատության հրապարակում:

Մենք ընդամենը կոչ էինք անում, ասենք, անցնել գործադուլի: Մյուս օրը ստանում էինք՝ չեմ չափազանցում, հազարավոր որոշումներ՝ կոլեկտիվներից: Միշտ այդպես էր լինում, արխիվը կա, պահպանվում է՝ կնքված որոշումներով: Ամբողջ կոլեկտիվներ, հսկայական գործարաններ մեկ մարդու պես կանգնում էին գործադուլի: Կարելի է ասել՝ արդեն 88-ի հունիսից Շարժումը մի այլընտրանքային իշխանություն էր, որը շատ ավելի մեծ հեղինակություն ուներ, եւ շատ ավելի մեծ հարցեր էր լուծում, քան պաշտոնական իշխանությունները: Եթե ասեմ, թե ինչպիսի հարցեր, դուք կզարմանաք: Մենք ստեղծել էինք ուժեղ իրավաբանական մարմին, որտեղ բնակչությունից ստանում էինք ցանկացած տիպի բողոքներ: Ասենք՝ հարեւանների հետ ցանկապատի վեճ, հարս ու սկեսուրի կռիվ: Ինչ ասես. չկար մի հարց, որ մեզ չհասներ: Եւ կարող եմ հավաստիացնել, որ մեր համապատասխան բաժինների միջամտությամբ լուծվում էին այդ հարցերի 80–90 տոկոսը: Հատուկ բաժին էր ստեղծված խորհրդային բանակի զորակոչից խուսափողների եւ խորհրդային բանակից փախուստի դիմածների համար, եւ այն ղեկավարում էր Երջանիկ Աբգարյանը: Մենք այո, այն ժամանակ կոչ էինք անում, որ հայ զո-

ռակոշիկները չծառայեն Հայաստանից դուրս: Մենք գտնում էինք, որ մեր երիտասարդները պետք է ծառայեն բանակում, որովհետեւ ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, դա անհրաժեշտ դպրոց էր, բայց մեր գլխավոր պահանջներից մեկն այն էր, որ Հայաստանի բնակիչները պետք է ծառայեն միայն Հայաստանում: Եւ ովքեր Ռուսաստանից հաջողեցնում էին փախչել, արձակուրդ էին գալիս՝ չէին վերադառնում եւ այլն, մենք նրանց պահում էինք: Խորհրդային բանակը նրանցից ոչ մեկին չկարողացավ ետ վերադարձնել:

Շարժման ժամանակ մենք նաեւ տեսանք ժողովրդական ստեղծագործության ասեմ, թե նախաձեռնության՝ մի հսկայական դպրոց: Ամեն անգամ մենք՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներս, գալիս էինք Ազատության հրապարակ եւ զարմանում: Դա մի հսկայական բացօդյա ցուցահանդես էր: Ամբողջ հրապարակի շուրջ ցուցատախտակներ էին, դրանց վրա պատկերներ, եւ կարելի էր զարմանալ մեր ժողովրդի սրամտության, ճաշակի, էսթետիկայի վրա: Գրվում էին բանաստեղծություններ. ցանկացած մեկը բանաստեղծություն էր գրում, փակցնում այդ ցուցատախտակներին, փակցվում էին նաեւ լուսանկարների հրաշալի շարքեր: Մենք անգամ չէինք ճանաչում այն մարդկանց, ովքեր դա անում էին: Յուրաքանչյուր մարդ իրեն զգում էր ոչ թե որպես հանդիսատես, որ գալիս է հրապարակ թատրոն դիտելու, այլ այդ պրոցեսի ուղղակի մասնակից: Մեզնից ոչնչով չէին տարբերվում. համարձակության, քաջության տեսակետից նրանք գուցե ավելի խիզախ էին: Նրանք էին գնում տանկերի դեմ, նրանք էին, որ չէին վախենում Խորհրդային բանակի եւ, հետագայում, այսպես կոչված՝ սպեցնազի մահակներից: Դա պարզվեց՝ մանավանդ երբ մեզ բանտարկեցին: Երկրաշարժից հետո ուղղակի մղձավանջային վիճակ էր Հայաստանում. հայտարարված էր արտակարգ դրություն, պարետային ժամ, բայց նույնիսկ դա չխանգարեց, որ այդ զանգվածները, հիմնականում երիտասարդներ, ցույց տան իրենց դիմադրական ոգին: Մեր բանտարկությունը չկոտրեց շարժումը: Իհարկե, եղավ մի պահ, երբ ողջ ժողովրդով զբաղված էին աղետյալների վիճակով, բայց դա կարճ տեւեց: Մեզ բանտարկել էին 88-ի դեկտեմբերի 10-ին, բայց արդեն փետրվարից շարժումը սկսեց վերակենդանանալ: Մենք տեղյակ չէինք, իհարկե: Մենք Մոսկվայում էինք:

Բանտարկության ամենամեծ տառապանքը ազատազրկումը չէ, 36 կոպեկ արժողությամբ օրապահիկը չէ: Դում չեմ պատկերացնի 36 կոպեկն ինչ էր. ասենք՝ այսօրվա 70 դրամը: Հենց այդքանով առավոտյան, կեսօրին, երեկոյան պետք է սնվեր խորհրդային բանտարկյալը: 24 տարի ԽՍՀՄ ամենաբարձր շրջանակներում ինարկվում էր 36 կոպեկը 41 կոպեկ դարձնելու հարցը, եւ դա չլուծվեց անգամ բանտից մեր դուրս գալուց հետո: Բայց դա չէր տառապանքը. ամենամեծ տառապանքը մեկուսացումն էր արտաքին աշխարհից: Զկար ոչ մի ինֆորմացիա, բանտախցում աշխատում էր միայն Մոսկվայի քաղաքային ռադիոցանցը, այն էլ, եթե հանկարծ ինչ-որ քաղաքական կամ ուզբեկական գործին վերաբերող նյութ էր լինում, այդ ժամանակ ռադիոն ուղղակի անջատում էին: Ստանում էինք «Պրավդա» եւ «Իզվեստիա» թերթեր, բայց երկու օրը մեկ դրանց մեջ մենք տեսնում էինք կտրված ամբողջական կտորներ:

Սա էր խնդիրը՝ մեզ լիովին անջատել իրարից, անջատել արտաքին աշխարհից: Երեքուկես ամիս, ես դա հետո եմ պարզել, գտնվել եմ մի խցում, որի կողքի խցում գտնվել է «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Ալեքսան Հակոբյանը: Ես դա չեմ իմացել երեքուկես ամիս: Հետո վերջում, մայիսին, երբ պարզ էր, որ մեզ ազատ են արձակելու, ինձ տարան այդ խուց, եւ այդ խցի բնակիչներն ինձ ասացին, որ այդտեղ եղել է Ալեքսան Հակոբյանը, որի մասին շատ լավ հուշեր էին պահպանել:

Ուզում եմ ասել, որ շարժումը մեզանով չէր պայմանավորված: «Ղարաբաղ» կոմիտեին կարող էին ձերբակալել, ձերբակալեցին: Դա է միայն հայտնի. բայց պետք է իմանամ, որ դեկտեմբերի 10-ից հետո ձերբակալվեց Ղարաբաղյան շարժման ողջ ակտիվը. 600 հոգի, որոնք առնվազն մեկ ամիս բանտարկվեցին Սովետաշենի բանտում, իսկ շատերը՝ «ռեցիդիվիստները», բանտարկվեցին եւս մեկ ամիս: Զկոտրվեց շարժումը, որովհետեւ ասացի, դա մեզնով չէր պայմանավորված. ոչ 11-ով, ոչ 600-ով: Այդ ժամանակ ամբողջ ժողովուրդը «Ղարաբաղ» կոմիտեի անդամ էր: Մենք մի ուրիշ բան էլ էինք արել. դեռեւս 88-ի սեպտեմբերին մենք զգացել էինք, թե ինչպես են զարգանում իրադարձությունները եւ կանխատեսել էինք, որ մեզ վաղ թե ուշ պետք է ձերբակալեն: Մենք ստեղծեցինք մի գաղտնի «Ղարաբաղ» կոմիտե, այդ 11-ից դուրս, որում ընդգրկված էին հինգ հոգի՝ Երջանիկ Աբգարյան, Դավիթ Շահնազարյան, Ալբերտ Բաղդա-

սարյան, Ավետիք Իշխանյան, Արշակ Սադոյան: Հետո նրանց ոչ ֆորմալ գումարվեցին նաեւ Վիտյա Այվազյանը եւ Սմբատ Հակոբյանը: Այդ յոթն էին, որոնք գաղտնի էին պահվում, ոչ ոք նրանց մասին չգիտեր: Ես հիշում եմ այսպիսի մի դեպք. 1989 թվականի հունվարի 9-ն էր, իմ ծննդյան օրը: Նախորդ երեկոյան ձերբակալել էին «Ղարաբաղ» կոմիտեի դրսում մնացած անդամներին: Ձերբակալվել էին նաեւ գաղտնի կոմիտեի անդամները. բայց նրանց ոչ թե որպես կոմիտեի անդամ էին ձերբակալել, այլ որպես ակտիվիստներ: Հայտնի էր արդեն, որ մեր դեմ բրեական գործ են հարուցել, եւ մեզ կարող են երկար պահել:

Հայաստանում, Երեւանի բանտում շատ հեշտ էր հաղորդակցությունը՝ Մոսկվայի նման չէր. նամակներ էլ էին փոխանակվում, միջանցքով գոռում էին, իրար ինչ-որ լուրեր փոխանցում. ստեղծվել էր մի կոմունատոր: Շատ երկար կլոր միջանցք էր Սովետաշենի բանտը. եթե չեք տեսել, շուտով կարող է տեսնեք (ներկաները այս ռեպլիկին արձագանքեցին բուռն ծիծաղով եւ ծափահարություններով): Ամեն խցից կարելի էր երկու խուց տեսնել՝ կողքերը եւ դիմացը: Հնարավոր չէր մի ծայրից մյուսը խոսել. կենտրոնում Բաբկեն Արարքցյանի խուցն էր, դրա կողքը Ալեքսան Հակոբյանինը, որը ամենահզոր ձայնն ուներ: Մենք այս ծայրից փոխանցում էինք՝ Ալեքսան, Վազգեն Մանուկյանին փոխանցիր այսինչ բանը: Վազգեն՝ Լեւոնը բեզ փոխանցում է սա: Ստանում էր պատասխանը՝ ետ էր փոխանցում, եւ այլն: Ուրեմն, երբ ես գաղտնի կոմիտեի անդամների ձերբակալության լուրը ստացա, զգացի, որ նրանք տմացել են: Զգացի, որ նրանք «թասիբի» են ընկել, տղայություն են ուզում անել. իբր՝ ոնց նրանց տանում են, մեզ էլ թող տանեն: Ես մի ճառ ասացի, հետո Ալեքսանը նույն ճառը փոխանցեց բոլորին: Լսեք՝ «Ղարաբաղ» կոմիտեն 11 հոգի է, ուրիշ «Ղարաբաղ» կոմիտե չկա, հասկացա՞ք: Դուք ուրիշ բանի համար եք, դուք ուրիշ խնդիր ունեք լուծելու: Այսպես՝ մի կես ժամանոց ճառ եմ ասել, եւ նրանք համոզվել են ու խոստացել, որ չեն բացահայտվելու: Եւ իսկապես այդ տղաներն իրենց գործն արեցին: Մենք բանտարկված էինք, եւ երկու ամիս հետո, փետրվարին (դա Սումգայիթի զոհերի հիշատակի օրն էր) արտակարգ դրության, պարետային ժամի պայմաններում, այդ մարդիկ առաջին ցույցը կազմակերպեցին դեպի Ծիծեռնակաբերդ: Հետո, նույնը տեղի ունեցավ մարտի 8-ին, կանանց շնորհիվ: Ռուսներն էլ, խորհրդային բանակն էլ

հարգում էին այդ տոնը, չկարողացան խանգարել, եւ դա իսկապես դարձավ զանգվածային ցույց։ Ինչու եմ այս ամենն ասում. սա առաջին ինֆորմացիան էր, որ բանտում ինձ հասավ արտաքին աշխարհից։ Այդ ժամանակ արդեն, մարտին, Խորհրդային կենտրոնում էլ խլրտումներ էին սկսվել։ Արդեն ընթանում էին Ժողովրդական պատգամավորների համագումարի ընտրարշավի միջոցառումները. Սախարովը, մոսկովյան դեմոկրատները առաջընթաց էին արձանագրում։ Խլրտումներ էին սկսվել նաեւ դատախազության մարմիններում, սկսում էր բանդվել, փլվել ուզբեկական գործը։ Այդ խլրտումները մենք զգացինք՝ նույնիսկ իմ բննիչի վերաբերմունքից, որը ազգությամբ ղազախ էր, Երուբաեւ ազգանունով մտավորական մի մարդ։ Ես որեւէ ասելիք չունեմ նրա մասին, որեւէ ենշում չեմ տեսել նրա կողմից։ Միայն ամենահարգալից վերաբերմունք՝ առաջին օրից։ Բայց մարտից սկսեցի զգալ, որ նա կամաց-կամաց դառնում է «Ղարաբաղ» կոմիտեի անդամ։ Նա արդեն ինձ գաղտնի թերթեր էր բերում. ինձ հրավիրում էր իբր հարցաքննության, ինքը ինչ-որ բաներ էր տպում, սուրճ էր պատրաստում ինձ համար, շոկոլադ էր հյուրասիրում։

Ոչ «Պրավդա» էր, ոչ «Իզվեստիա»՝ «Մոսկովսկիյե նովոստի», «Արգումենտի ի ֆակտի» եւ 4–5 ժամ թույլ էր տալիս կարդալ։ Ամբողջությամբ ինֆորմացվում էի եւ վերադառնում խուց։ Հաճախ ինձ հարցաքննում էր Գդլյանի կաբինետում։ Գդլյանը «Մատրոսկայա տիշինա» բանտում ուներ իր մշտական գրասենյակը, որտեղ հարցաքննում էր ուզբեկական գործով կալանվածներին։ Ի դեպ, այդպիսի կարգ կար. ես կարող էի միայն բննիչի հետ հանդիպել, ոչ ոք իրավունք չուներ հարցաքննության ժամանակ սենյակ մտնել՝ եթե ոչ դատախազությունից։ Եւ ահա, մի անգամ բննիչս գաղտնի գրասենյակ բերեց մի հայ տղայի, Սիմոն անունով, որը, ինչպես պարզվեց, նույնպես բննիչ էր, ընդգրկված Գդլյանի խմբում՝ կարծեմ Ղազախստանից, թե Ուզբեկստանից։ Այդ բննիչն էր, որ առաջին անգամ ասաց, որ Երեւանում տղաներն արդեն սկսել են. մարտի 8-ին հզոր ցույց է տեղի ունեցել, ամեն ինչ լավ կլինի։ Ես հասկացա, որ իսկապես ամեն ինչ լավ է։ Սիմոնի գնալուց հետո Երուբաեւն ինձ ասաց, որ Սախարովը գնացել է դատախազություն, ամեն ինչ տակնուվրա արել, ընդգրկել է լավ փաստաբանների (Սախարովն էր մեր փաստաբաններին ընտրել), եկել է արտասահմանյան թղթակիցների ուղեկցությամբ, ձեր գործն էլ բանդվում է։

Այսօր այս ամենը պատմում եմ՝ գաղտնի կոմիտեի գործունեությունը ընդգծելու համար: Այդ տղաները մեր բացակայության ժամանակ ոչ միայն պահեցին շարժումը, այլեւ շատ ավելի հզորացրին: Հունիսի մեկին էր, թե մայիսի 31-ին, երբ մեզ բաց թողեցին, տղաները մեզ բերեցին Մատենադարանի հրապարակ: Առաջին իսկ խոսակցություններից ես տեսա, որ մենք իրենցից ահագին ետ ենք ընկել: Շատ կներեմ, ինչպես ասում են՝ տղաների «դուխը ելել իրենց ուտում էր»: Եւ մենք կոմիտեի 11 անդամներով պայմանավորվեցինք, որ պետք է մեկ շաբաթ ընդհանրապես չխոսենք. մեկ շաբաթ ոչ մի լրագրողի հետ չհանդիպենք, ոչ մի հրապարակային ելույթ չունենանք, մինչեւ իրավիճակը հասկանանք: Իսկապես, շարժումը այնքան էր առաջ գնացել, որ եթե ասենք 88 թվականին անկախության գաղափարը հեռավոր մի բան էր թվում, այդ օրը մենք տեսանք, որ մեր ողջ ժողովուրդը վարակվել է այդ գաղափարով: Եթե 88 թվականին մենք դեռ համոզված էինք, որ կարելի է երկխոսություն վարել Հայաստանի կոմունիստական իշխանությունների հետ, եւ աշխատում էինք այդ ուղղությամբ՝ գնում էինք կենտկոմ, մեզ հրավիրում էին, զանազան հարցեր էին լուծվում, կարողանում էինք խուսափել բախումներից ու սուր դրսեւորումներից, մենք հիմա տեսանք, որ շարժումն այլեւս անհաշտ է, բացարձակապես չի ուզում Սուրեն Հարությունյանի հետ խոսել, կենտկոմի հետ շփվել: Խզումը բացարձակ էր, եւ դա չվերականգնվեց ու այդպես էլ մնաց: Արդեն ջրբաժանը տեղի էր ունեցել: Այնպես որ, ես պետք է ասեմ, որ եթե հայտնի են միայն «Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամները՝ այն հինգը, գումարած երկուսը՝ նույնքան վաստակ ունեն, որքան մենք: Բայց սա էլ ամբողջը չէ. դա ամենեւին տեղի չէր ունենա, եթե ինչպես ֆիշ առաջ ասացի, յուրաքանչյուր հայ իրեն շարժման մաս չզգար:

Բացառությունները շատ ֆիշ էին, եւ դրա վավերագիրը 1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեն էր, որի տակ ստորագրեց մեր ժողովրդի ավելի քան 98 տոկոսը: Այսինքն, այստեղ բոլորը կային. եւ դեմոկրատները, եւ ազգայնականները եւ կոմունիստները: 98 տոկոսն այլ բան չի կարող նշանակել: Իսկ դա տեղի ունեցավ այն պատճառով, որ յուրաքանչյուրն իրեն զգում էր ոչ թե հանդիսատես, այլ մասնակից: Եւ իմ կոչը ձեզ սա պետք է լինի: Երբ հոկտեմբերի 26-ին ես եկել էի Ազատության հրապարակ՝ զգում էի, որ մենք միասին ենք, մեկ ենք, եւ

եթե այս զգացումը փոխանցվի նաեւ ձեզ, ես կարծում եմ մեր հաղթանակն անխուսափելի է: Եթե կան հարցեր, ես մեծ սիրով կպատասխանեմ:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ, Հայաստանի ազատական, առաջադիմական կուսակցություն. – Նախ ասեմ, որ ողջունում եմ Ձեր թեկնածության առաջադրումը նախագահական առաջիկա ընտրություններում: Եթե ենթադրենք, որ պարոն Սերժ Սարգսյանը եւ իշխանությունները իրենց սովորության համաձայն կեղծիքների միջոցով հաղթեն նախագահական ընտրություններում, Դուք պատրա՞ստ եք շարունակել պայքարը:

– Ի՞նչ նկատի ունեմ պայքար ասելով. այսինքն գնալ ցանկապատե՞ր կոտրել:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ. – Ցանկապատեր չկոտրել, բայց համենայն դեպս շարունակել...

– Ուրեմն ասեմ շատ հստակ. ես կարծում եմ բանը դրան չի հասնելու: Կարծում եմ, որ մենք թույլ չենք տա որեւէ կեղծիք: Դա կախված է նաեւ ձեզանից. եթե մեզանից յուրաքանչյուրը դառնա զինվոր, այս գործի նվիրյալ, նրանք ոչինչ անել չեն կարող: Ուրեմն, մենք գործը պետք է անենք ոչ թե ընտրություններից հետո, այլ ընտրություններից առաջ: Ավելին, մենք մեր կողմից օրենքի ոչ մի խախտում թույլ չենք տալու: Դրա կարիքը չունենք: Մեր ամենահզոր շարժման ժամանակ, երբ հրապարակում կես միլիոն մարդ էր հավաքվում կամ մեկ միլիոն, որեւէ սիզամարգ չէր տորոնվում: Հանրահավաքի մասնակիցները իրենց ետեւից հավաքում էին հանրահավաքի ընթացքում կուտակված ողջ աղբը: Դա էր մեր ուժը, մենք կոմունիստական իշխանություններին հաղթեցինք ոչ միայն մեր կազմակերպվածությամբ, այլեւ օրենքի տառը մինչեւ վերջ հարգելով: Մենք նրանց դեմ այդպես պետք է պայքարենք. թող իրենք օրենքը խախտեն, թող գիշեր-ցերեկ խախտեն: Միշտ էլ շարը վերջ է ունենում, նրանք տասը տարի դա արեցին, այս անգամ չի հաջողվի:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ. – Պարոն Տեր-Պետրոսյան, լիովին համաձայն եմ Ձեզ հետ, բայց ուղղակի հաշվի առնելով այն հանգամանքը, որ իշխանությունները իրենց ձեռքում կենտրոնացրել են բոլոր ուժերը, եւ ընդդիմությունը իր ձեռքում չունի ոչ մի ուժ, ինչ ձեւով եք Դուք պայքարելու:

– 60 հազարանոց հանրահավաքը ուժ չէ՞, այս գեղեցիկ երիտասարդությունը ուժ չէ՞: Ձեզնից յուրաքանչյուրը հաջորդ անգամ իր հետ հանրահավաքի է բերելու տասը մարդ: Արդեն դառնալու եք բյուր:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՍԵՆ, ԵՊՀ ուսանող. – Քաղաքական ասպարեզ Ձեր վերադարձից, ես գոնե ակնկալում եմ գաղափարական լուրջ պայքար: Դուք ունենալու եք նախընտրական ծրագիր: Տնտեսության մեջ ո՞ր ուղղություններին եք զարկ տալու, որ ուղղություններով եք առաջնորդվելու, տնտեսության ո՞ր ուղղություններն են դառնալու լոկոմոտիվային, որոնց հիման վրա պետք է զարգանա Հայաստանի տնտեսությունը:

– Դուք ուզում եք ժամանակից շուտ իմ ծրագիրը բացահայտե՞լ՝ չի լինի: Մի բան կասեմ. ես տեսնում եմ, որ Հայաստանը ունի մեկ գերխնդիր. ինչպիսի տնտեսական ճյուղ էլ ուզում եք ծրագրել, զարգացնել, ինչպիսի արդյունաբերություն էլ ուզում եք ունենալ, եթե չլուծվի Ղարաբաղի հարցը ու չվերացվեն շրջափակումները, ոչ մի լուրջ բան չի ստացվի: Հասկացեք. կան ֆիզիկական լիմիտներ: Եթե մի երկիր չունի ճանապարհ դեպի արտաքին աշխարհ, եթե մի երկիր իր հարեւանների հետ ընդհանուր շուկա չունի, այդպիսի երկիրը լուրջ զարգացման հնարավորություն չի կարող ունենալ: Կարելի է գոյատեւել, կարելի է գոյությունը քարշ տալ, բայց լուրջ զարգացման մասին խոսելն ուղղակի ծիծաղելի է: Օրինակ բերեմ՝ աշխարհի բոլոր երկրներում հիմնական տնտեսական գործընկերը անմիջական հարեւաններն են: Մեր ամենաբնական տնտեսական գործընկերները պետք է լինեին Ադրբեջանը եւ Թուրքիան: Եւ այդպես էր Խորհրդային Միության ժամանակ. դուք չեք պատկերացնի, թե ինչքան սերտաճած էին Հայաստանի եւ Ադրբեջանի տնտեսությունները: Մանավանդ միջին բիզնեսի, «ցեխավիկների», գյուղատնտեսական ապրանք արտադրողների շրջանակներում, որոնց միջեւ սերտ կապեր էին հաստատված: Դա բնական շուկա էր. Հայաստանը ընդամենը երեք միլիոնանոց շուկա է, իսկ միայն Վրաստանի եւ Ադրբեջանի հետ դառնում է 15 միլիոնանոց շուկա: Այսօր Հայաստանի արդյունաբերությունը խեղդվում է ուղղակի: «Ջերմուկը», «Բջնին», հայկական ծխախոտը այսօր կարող էր տասնյակ անգամ ավելի շատ վաճառվել Ադրբեջանում, քան Հայաստանում: Միայն մի օրինակ՝ Հայաստանում շատ լավ ոչխարաբուծություն կար, Ադրբեջանը այդքան լեռներ

չուներ, եւ ահա Հայաստանում արտադրված ամբողջ բուդը իրացվում էր Ադրբեջանում: Մեր «ցեխավիկների» նույնիսկ ոչ այնքան որակյալ արտադրանքը համարյա ամբողջությամբ տարվում էր Նախիջեւան, Կիրովաբադ: Իհարկե, հիմա ժամանակները փոխվել են, արտադրությունն ուրիշ պահանջներ ունի, բայց գլխավորը ճանապարհներն են եւ շուկան: Աշխարհի բոլոր հզոր պետությունները, անցյալում անգամ՝ Հռոմ, Մակեդոնական կայսրություն, Արաբական խալիֆաթ, Բյուզանդիա, հզորացել են բացառապես ճանապարհների եւ արտաքին աշխարհի հետ բաց հարաբերությունների շնորհիվ: Աշխարհի տնտեսության, ցանկացած արդյունաբերության հիմքը առեւտուրն է, ուրիշ ոչինչ:

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի. – Պարոն նախագահ, ի՞նչ քայլեր եք մտադիր ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանակցային կողմի կարգավիճակը վերականգնելու համար:

– Դա մեր գերագույն խնդիրն է: Դում ծանոթ եք հոկտեմբերի 26-ի իմ ելույթին, ճի՞շտ է: Ես ասել էի, որ դա չորս ամենաանհրաժեշտ քայլերից մեկն է՝ բանակցությունները բնական փուլ տեղափոխելու համար: Ասեմ՝ շատ դժվար հարց է: Տասը տարի թե միջազգային հանրությունը թե համանախագահները արդեն վարժվել են մի ֆորմատի, որ իրենց հարմար է, որովհետեւ ավելի հեշտ է բանակցել երկու կողմի հետ, քան երեք: Զուտ ֆիզիկապես եւ հարցերը համաձայնեցնելու առումով՝ երկուսի հետ ավելի հեշտ է խոսել, քան երեքի: Դում այսօր էլ նման իրավիճակներ ամեն օր կարող եք տեսնել, եւ բիզնեսում եւ, չգիտեմ, ընկերական հարաբերություններում: Եթե երկու հոգի են՝ հեշտ է, եթե երեք՝ ավելի դժվար: Սրան վարժվել է նաեւ Ադրբեջանը: Սկսած 1992 թվականից, երբ սկսվել էր բանակցային պրոցեսը, Ադրբեջանը ուզում էր Ղարաբաղին դուրս մղել այդ պրոցեսից եւ բանակցել ուղղակի Հայաստանի հետ: Որովհետեւ նա ուզում էր աշխարհի առջեւ այս հակամարտությունը ներկայացնել ոչ թե որպես մետրոպոլիայի եւ թեկուզ զուտ իրավականորեն իր մասը կազմող անկլավի, կամ էթնոտերիտորիալ միավորի հակամարտություն, այլ դա դարձնել միջպետական խնդիր: Դա նրան չհաջողվեց, մեր օրոք դա չհաջողվեց: Մենք հասանք այն բանին, որ 1994 թվականի Բուդապեշտի ԵԱՀԿ-ի գագաթնաժողովում արդեն

իրավականորեն ճանաչվեց, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության եռեք հավասարարժեք կողմերից մեկն է: Այս մանդատը վերահաստատվեց հաջորդ տարվա պրագյան գագաթնաժողովում: Այսինքն դա ցանկություն չէր, կապրիզ չէր, դա արդեն Ղարաբաղի միջազգայնորեն ճանաչված կարգավիճակն էր: Ի՞նչ տեղի ունեցավ. երբ Քոչարյանը ընտրվեց Հայաստանի նախագահ: Ղարաբաղցի լինելով, նա ուղղակի իր վրա վերցրեց նաեւ Ղարաբաղի տեսակետը ներկայացնելու գործառույթը: Միջազգային հանրությունը եւ Ադրբեջանը, ինչպես ասում են, ուրախությունից մեռան: Այդպիսի նվեր Ադրբեջանին, չգիտեմ ինչպես կարելի էր անել: Այդ օրվանից, 98 թվականից հետո Ղարաբաղը ընդհանրապես դուրս է մնացել բանակցային բոլոր պրոցեսներից: Հիմա՝ ինչպես ասացի, քանի որ այդպիսի հոգեբանական մթնոլորտ է ստեղծվել, շատ դժվար է լինելու նախկին ձեւաչափը:

Միայն մի էլեմենտ կա, որի հետ ոչ ոք չի կարող հաշվի չնստել՝ Հայաստանի հաջորդ նախագահը պետք է լինի ոչ ղարաբաղցի, որպեսզի հնարավոր լինի գործընթացը ետ պտտեցնել: Պարզ, շատ պարզ, հստակ դիրք է: Ես լինեմ, թե մի ուրիշ ոչ ղարաբաղցի, վաղը չի կարող ասել՝ ես ներկայացնում եմ նաեւ Լեռնային Ղարաբաղի տեսակետը: Կրկնեմ՝ սա դժվար է լինելու. միջազգային հանրությունը, թեկուզ վերը բերված պատճառով կարող է ինչ-ինչ դժվարություններ հարուցել մեր ճանապարհին, որովհետեւ ողջ բանակցային ձեւաչափն է փոխվում, բանակցությունների տրամաբանությունն է փոխվում:

ՀԱԿՈԲ ՍԱՂՈՅԱՆ, Հայաստանի Հանրապետության մեկ այլ քաղաքացի. – Պարոն նախագահ ընտրությունների գնալուց առաջ կներկայացնե՞ք այն թիմը, որի հետ գնալու եք, թե դա կանեք նախագահ ընտրվելուց հետո:

– Գիտեմ այդ մտավախությունը եւ այդ կարծիքը: Բայց ամբողջ աշխարհում՝ գիտե՞ք ինչպես է ներկայացվում կամ ինչպես է ձեւավորվում թիմը: Երբ հայտնվում է նախագահի որեւէ թեկնածու, նրա թիմը պարզ է: Նրա թիմը այն մարդիկ են, ովքեր ջանք չեն խնայում այդ թեկնածուի հաղթանակը ապահովելու համար: Թիմը ձեւավորվում է շարժման ընթացքում, եւ դուք կտեսնեք՝ այս չորս ամսվա ընթացքում ովքեր ամենամեծ ջանքը կներդնեն այդ գործում՝ նրանք էլ կգնահատվեն՝ յուրա-

ֆանչյուրը իր վաստակի չափով: Մի ֆիչ բացեմ: Բոլորին թվում է, թե մեր իշխանությունների ժամանակ նախագահը վերցրել եւ նշանակել է նախարարներ, վարչապետ եւ այլն: Դա այդպես է օրենքի տառի տեսակետից, բայց բովանդակության տեսակետից բոլորովին այլ է: Երբ մենք 90 թվականին եկանք իշխանության, արդեն իսկ հայտնի էր, ինչպիսի մարդիկ են գալիս: Ես Վանո Սիրադեղյանին նախարար նշանակելու միայն ֆորմալ հրամանագիրն եմ ստորագրել: Նույնը Վազգեն Սարգսյանին, նույնը՝ Հրանտ Բագրատյանին, եւ մյուսներին: Ես նրանց նշանակել եմ թղթով, իսկ նրանք այդ պաշտոնը վաստակել են իրենց ներդրած ավանդով: Նույնը լինելու է հիմա: Ուրիշ ճանապարհ չկա: Ես սակարկությունների չեմ գնալու ոչ մեկի հետ, ոչ մեկին պաշտոն չեմ խոստանալու, որպեսզի ներգրավեմ այս շարժման մեջ: Ամեն մեկը պետք է գնահատվի շարժման մեջ ներդրած իր ավանդով, չկա ուրիշ ճանապարհ:

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀՀ եւս մեկ քաղաքացի. – Պարոն Տեր-Պետրոսյան, ինչպես եք պատկերացնում այսօրվա ձեւավորված կլանային տնտեսությունից անցումը դեպի ավելի ցիվիլ դեմոկրատական տնտեսական հարաբերություններ, որպեսզի երիտասարդությունը կարողանա ճիշտ ձեւով եւ ավելի վստահ ընդգրկվել հատկապես մանր եւ միջին բիզնեսում:

– Մի ճշտում, եթե թույլ տաք՝ առանց առարկելու: Ես գտնում եմ, որ Հայաստանում կլանային տնտեսություն չկա: Կլանային տնտեսությունը նշանակում է ուժերի կամ իշխանության եւ կամ տնտեսական ազդեցությունների զանազանություն: Կլանային տնտեսություն կարող է լինել մի դեպքում, եթե լինեն մի շարք կլաններ: Հայաստանում այդպիսի բան գոյություն չունի: Հայաստանում իշխողը կլան չէ: Ես բառն էլ ասել եմ՝ ավազակապետություն է սա: Ավելին ասեմ, կլանային տնտեսությունը համեմատած ավազակապետական տնտեսության հետ, ավելի առողջ տնտեսություն է, որովհետեւ կլանները բոլոր դեպքերում իրար հետ մրցակցում են, այստեղ մրցակցության էլեմենտ կա՝ ազդեցության գոտիների համար, ժողովրդին դուր գալու համար: Իսկ ավազակապետությունը՝ բրգաձեւ կենտրոնացած իշխանությունը, դրա կարիքը չունի. նա ոչ ժողովրդին է ուզում դուր գալ, ոչ էլ մրցակցություն է

թույլ տալիս: Հիմա ձեր հարցին, թե ինչ պիտի արվի: Հոկտեմբերի 26-ի ելույթում թվարկել եմ ամենատարրական խնդիրները: Առաջին՝ ապահովել հավասար հնարավորությունների իրացման դաշտ: Ինչ է դա նշանակում. ոչ մի հովանավորչություն, ոչ մեկին որեէ արտոնություն չպիտի տրվի: Պայմանները պետք է լինեն հավասար: Դուք ուզում եք խանութ դնել, թե մյուսն է ուզում՝ նույն հավասար իրավունքները պետք է ունենաք: Երկրորդ՝ ազատ մրցակցության ապահովում: Ոչ մեկը արտոնություն չպիտի ունենա մաքսատանը ինչ-որ ձեւերով իր ապրանքներն ավելի էժան մաքսազերծել, քան մյուսները: Եթե մեկը դա անում է, արդեն նրա բոլոր մրցակիցները մեռնում են: Այդպես են ձեւավորվում մոնոպոլիաները: Մեկը բերում է հսկայական քանակի ապրանք՝ առանց մաքսավճար մուծելու, կամ շատ չնչին մաքսատուրք վճարելով, մյուսը ամբողջությամբ վճարելով իր բոլոր մաքսերը, գումարած նաեւ հարկերը: Այն մարդը որ մաքսավճարից փախչում է, նաեւ հարկերից է կարողանում փախչել: Ինչ է ստացվում՝ նա ստանում է հսկայական առավելություն եւ մի-փոքր էժան վաճառելով իր ապրանքները կարող է խեղդել իր բոլոր մրցակիցներին: Այդպես Հայաստանում վերացավ միջին եւ մանր բիզնեսը, որը այս իշխանությունների ամենամեծ հանցանքներից մեկն է: Մեր ժամանակ այդպես չէր, մեր ժամանակ իսկապես ստեղծվել էր այդ խավը, եւ գործարարներն ունեին այդ ազատությունը: Իհարկե, միշտ էլ զեղծումներ լինում են, միշտ էլ բյուրոկրատիան ելքեր գտնում է նրանցից ինչ-որ բան շորթելու: Բայց հիմնական սկզբունքները վերը նշվածներն են:

– Պարոն նախագահ ուզում եմ հարցնել հետագա քայլերի մասին մի քիչ: Ասենք հաղթանակի դեպքում մենք ունենալու ենք մի իրավիճակ, երբ ներկա Սահմանադրությամբ նախագահը իր լիազորությունների մեջ բավականին սահմանափակ է: Ինչպե՞ս եք պատկերացնում հետագա աշխատանքը արդեն ընտրված Ազգային Ժողովի հետ, որ դեռ հինգ տարի պետք է գործի:

– Սա լավ հարց է, իսկապես կարեւորագույն հարց, որովհետեւ ինչպես ասացի՝ այսօր ավազակապետական իշխանությունը որեէ հակակշիռ չունի: Եւ օրենսդիր իշխանությունը, եւ դատական իշխանությունը ամբողջությամբ ենթարկված են այդ համակարգի տրամաբանությանը:

Սա, ըստ երեւույթին, մեր առջեւ կանգնած ամենակարեւոր հարցն է՝ իշխանությունների բաժանման, հակակշիռների ստեղծման հարցը: Բայց մենք ունենք ռեալ իրականություն, ունենք այն խորհրդարանն, ինչ ունենք: Ինչ պետք է անի նոր նախագահը: Ինձ թվում է ոչինչ չպետք է անի՝ պետք է աշխատի այդ խորհրդարանի հետ, բանի որ, ըստ էության, նրա լուծարման մեխանիզմ չկա: Պիտի համոզմունքով, իր խոսքով, իր ծրագրերով կարողանա այնպես անել, որ այդ խորհրդարանը շխանգարի գործադիր իշխանության ներկայացրած օրենքները ընդունելուն: Ես չեմ ասում՝ նույն ձեւով պիտի կոճակներ սեղմեն եւ ընդունեն այդ օրենքները: Վստահ եղեք, նույնիսկ այդ մարդիկ, որոնք, թվում է, չեմ ուզում կոպիտ բառեր օգտագործել, այսօր չեն ուզում օգտագործել իրենց բանականության ռեզերվները, պոտենցիալը, վաղը, ուրիշ պայմանների մեջ լինելով ինձնից ու ձեզնից շատ ավելի շնորհքով ելույթներ կունենան եւ շնորհքով հարցեր կդնեն՝ նույն այդ մարդիկ: Ի դեպ, ես գրագողություն եմ անում. այս գաղափարը փոխառել եմ Հրանտ Տեր-Աբրահամյանի հոդվածից: Բայց չեմ ուզում ծավալվել: Ինչո՞ւ՝ որովհետեւ, սա շատ կարեւոր հարց է եւ դառնալու է ապագա, գուցե ոչ առաջիկա հանրահավաքի՝ ելույթում իմ մեկնաբանելիք կարեւորագույն հարցերից մեկը: Նոր նախագահը պիտի աշխատի այս խորհրդարանի հետ, որովհետեւ ինչպես ասացի, չկա խորհրդարանը ցրելու մեխանիզմ: Նոր նախագահը պիտի ելնի նրանից, որ խորհրդարանում կա մեծամասնություն եւ այդ մեծամասնության կարծիքի հետ պիտի հաշվի նստի: Ավելին ասեմ, եթե այդ մեծամասնությունն առաջարկի իր վարչապետին՝ նախագահը այլ բան չի կարող անել, բան համաձայնել դրա հետ: Այսպես է իրականում: Իհարկե, ոչ այն վարչապետին, որ այսօր կա. դրա մասին չէ խոսքը:

ԹԱՄԱՐ ԳԵՈՐԳՅԱՆ. – Պարոն նախագահ, Ձեր կերպարը ունենալով որպես առաջնորդ, ես Սանկտ Պետերբուրգից վերադարձել եմ Հայաստանի Հանրապետություն:

– Ես էլ եմ Սանկտ Պետերբուրգից վերադարձել:

ԹԱՄԱՐ ԳԵՈՐԳՅԱՆ. – Այսօր ունենք այն, ինչ ունենք, եւ իմ գնահատականն է, որ հոկտեմբերի 26-ի Ձեր ելույթից հետո՝ սա ճշտում եմ իմ գնահատականն է, վայրահաչություններ սկսվեցին:

– Եկեք իրենց չնմանվենք, ավելի գեղեցիկ բառեր օգտագործենք:

ԹԱՄԱՐ ԳԵՒՈՐԳՅԱՆ. – Կա մի կարեւոր բան, ինձ համար որպես հայ մարդու եւ որպես հայ կնոջ: Այն հարցականները, որոնցով այսօր առաջնորդվում է իշխանությունը, ասելով, որ իրենք ունեն հիշեցնելու այս կամ այն բանը: Որո՞նք են այն հարցականները, որոնք հաթաթայի մեխանիզմով ուզում է հնչեցնել իշխանությունը, որ իրենք ունեն հիշեցնելու որեւէ բան: Ես առաջարկ եմ ուզում հնչեցնել. եկեք առաջ անցնենք եւ Դուք հիշեցրեք, կամ այն թիմը, որ այն ժամանակ եղել է իշխանության գլուխ: Նշեք այն խոցելի տեղերը, որոնք կարող են մեջբերվել, որովհետեւ հասարակությունը պատրաստ է ընկալելու եւ միանշանակ է, որ մենք փոխելու բան ունենք: Եւ իմ գնահատականով միանշանակ է, որ՝ թույլ տվեք Ձեր փոխարեն ասել, Ձեզ հաճելի չի եղել վերադառնալ ակտիվ քաղաքականություն, որովհետեւ չի գտնվել այն մարդը եւ այն ուժը, որը կարողանար փոխարինել եւ փոխել այն, ինչ այսօր ունենք: Կոռուպցիան, որը անձնավորված էր առաջ եւ որը համակարգված է այսօր, եւ համակարգային բնույթ է կրում: Խնդրում եմ հնչեցրեք այդ խոցելի տեղերը, որպեսզի այսուհետեւ որեւէ իշխանավոր ինձ որպես հայ մարդու չկարողանա հաթաթա տալ եւ ասել, որ ունի հիշեցնելու բան, որի արդյունքում ամբողջ արած գործը, որ պետականության շինարարություն էր եւ պետականության ձեռքբերում, նրանք ցրիվ են անելու այդ հիշեցումներով:

– Սա ելույթ էր եւ շատ գեղեցիկ ելույթ: Հիշեցնելու բան: Ես չգիտեմ, էլ ինչ պետք է անեմ, որ ապացուցեմ, որ իրենց հիշեցրածը ես շատ լավ էլ հիշում եմ: Այն կատալոգը, որ ես հրապարակեցի՝ դա էր: Կարող եք գումարել մի քիչ ավել, մի քիչ պակաս: Այն... Ձեր բառը չեմ օգտագործում, կներեք... ինչ մենք տեսնում ենք, լսում ենք մեր հեռուստատեսությունից՝ դա է: Ուրիշ հիշեցնելու բան նրանք չունեն՝ մի վախեցեք: Բացառնակապես մի վախեցեք. հիշեցնելու բան ունենային, մենք այստեղ չէինք լինի, մենք վաղուց բանտերում կլինեինք: Նախագահությունից իմ հեռանալուց հետո իմ յուրաքանչյուր հրամանագիր, յուրաքանչյուր կարգադրություն ստուգվել է մինչեւ վերջ: Նույնը Բագրատյանի մոտ, նույնը Առարքցյանի մոտ, մյուս պաշտոնյաների մոտ: Նրանց առաջին գործը եղել է՝ տեսնեն ի՞նչ կարող են հայտնաբերել: Դավիթ Վարդանյանին

հատուկ նշանակել էին նախագահի վերահսկողական ծառայության պետ, որ բացահայտի իմ «մաֆիոզ» կերպարը: Ոչինչ չստացվեց՝ հարյուր դոլարի խախտում չգտնվեց: Դում պատկերացրեք, եթե գիշեր-ցերեկ մեզ հայհոյում են, եթե ունենային մի որեւէ կոնկրետ փաստ, մեզ ի՞նչ կանեին. կբզկտեին, կոչնչացնեին, խաչափայտ կդնեին հենց օպերայի հարթակում, մենք այնտեղից կախված կլինեինք: Ի՞նչ գտան. Բլեյանի դպրոցի տանիքի շինարարության մեջ հայտնաբերեցին, որ մի տեսակ շիֆերի փոխարեն, ուրիշ տեսակի շիֆեր է օգտագործել: Մի ՀՀՇ-ական գործարանի տնօրեն ունեինք՝ Հարոյան: Նրան դատեցին, եւ գիտե՞ք ինչ էր նրա դատավճռում գրված. ինչ-որ խողովակներ էր գնել, իբր թե նոր էին, բայց ըստ էության հին, եւ տարբերությունը եղել էր 60 հազար դրամ: Ու պայմանական դատեցին՝ երեք տարի: Բան ունենային՝ այդ մարդկանց չէին դիպչի, մեզ կդիպչեին, ինձ կդիպչեին: Եթե ինչ-որ վախ կա, հանեք ձեր միջից: Մենք լրիվ բաց ենք, իրենք ստուգելու բոլոր հնարավորությունները ունեին, եւ ոչինչ չկարողացան գտնել: Ոչ թե անշնորհք էին, որ չկարողացան: Չգտան, որովհետեւ այդպիսի բան չկա, չի եղել ու չի լինի:

ՄՈՎՍԵՍ ՄԱԿՅԱՆ, Երիտասարդ պահպանողականների միություն. – Մեծարգո պարոն նախագահ, բոլորին հայտնի է, որ մեր կազմակերպությունը հիմա չէ, որ սկսել է Ձեր թեկնածության օգտին արտահայտվել:

– Երեւի առաջինն էիք դում՝ Միքայել Հայրապետյանի գլխավորությամբ:

ՄՈՎՍԵՍ ՄԱԿՅԱՆ. – Այո: Մինչ այժմ մեզ տրված բոլոր հարցերին՝ Ձեր անձի, Ձեր ծավալած գործունեության վերաբերյալ մենք կարող ենք պատասխանել, մանավանդ որ ունենք հրաշալի ուղեցույց՝ Ձեր հրապարակումների ընտրանին: Սակայն դժվարությունների ենք հանդիպում, Ձեր իշխանության ժամանակ պաշտոնավարած որոշ անձանց հետ կապված հարցերին պատասխանելիս, որոնք մինչ այժմ մեր ժողովրդի շրջանում բարի համբավ չեն վայելում: Խնդրում եմ մեզ հուշեք, որպեսզի մենք կարողանանք այս իրավիճակում ի նպաստ գործել:

– Ես կարծում եմ, որ այդպես խոսողների թիվը շատ նվազել է. ասենք կես տարի, մեկ տարի առաջ այդպիսի ավելի լուրջ դժվարությունների առաջ կարող էիք կանգնել, բան այսօր: Վստահ եղեք, որքան մենք

առաջ գնանք, այդ խոսակցությունները այնքան ետ են գնալու։ Այդ հարցերից էլ մի քաշվեք, եւ պարտավորված էլ մի զգացեք ամեն հարցադրման պատասխանել։ Մենք դրանց պետք է պատասխանենք մեր գործով, մեր ապագա թիմով, մեր նոր դեմքերով։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ, Ազատական-առաջադիմական կուսակցություն. – Պարոն նախագահ, մենք լավ հիշում ենք 90-ական թվականների սկզբներին, երբ Սերժ Սարգսյանը եւ Ռոբերտ Քոչարյանը եկան Հայաստան։

– Քանի տարեկան էիք այն ժամանակ։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ. – Չորս-հինգ տարեկան (դահլիճը պայթում է ծիծաղից)։ Նրանք եկան Ղարաբաղից, զբաղեցրին լուրջ պաշտոններ եւ այժմ էլ զբաղեցնում են ամենաակտիվ պաշտոնները։ Ինչպե՞ս դա տեղի ունեցավ, եւ Աստված ոչ արասցե, եթե նրանց քաղաքականությունը՝ նաեւ Ղարաբաղի հարցում, շարունակվի հնարավո՞ր է կանգնենք պատերազմի առաջ, կամ ավելի ահավոր բան տեղի ունենա՝ կորցնենք Ղարաբաղը։

– Ես այսպես եմ հասկանում. հակամարտությունները լուծվում են կամ բանակցություններով, կամ պատերազմով։ Եթե դու վիժեցնում ես բանակցությունները, ստանում ես պատերազմ։ Այս իշխանությունները տասը տարի վիժեցրել են բանակցությունները։ Եթե թույլ տանք, որ շարունակեն այսպես, մենք իսկապես կստանանք պատերազմ։ Ձերչիլը մի շատ գեղեցիկ խոսք ուներ։ Երբ Զեմբերլենը գնաց Մյունխեն եւ հանդիպանալով Հիտլերին զիջեց Չեխոսլովակիան ու հպարտ-հպարտ տուն վերադարձավ, որ խաղաղություն բերեց, Ձերչիլը խորհրդարանում ասաց. մենք ունեինք երկու ընտրանք՝ խայտառակություն եւ պատերազմ։ Մենք ընտրեցինք խայտառակությունը, ստացանք պատերազմ։ Ինչ վերաբերում է Ձեր հարցին, կարծում եմ ուզում էիք ասել, թե ինչու բերեցի Սերժ Սարգսյանին, ինչու բերեցի Քոչարյանին, փաթաթեցի ձեր վզին, հիմա էլ ասում եմ, ապացուցում եմ, որ նրանց պետք է ճանապարհ դնել։ Իսկապես տարօրինակ բան է ստացվում։ Բացատրեմ՝ Սերժ Սարգսյանին ես բերել եմ ոչ թե Ղարաբաղից, այլ Մոսկվայից։ Սերժ Սարգսյանը Ղարաբաղից ախոռված էր, նա այնտեղ ուներ խնդիրներ, ուներ լուրջ վեճեր։ Որքան էլ հիմա այլ բան ասեն, բայց այդպես էր։ Նա արդեն մեկ

տարի ապրում էր Մոսկվայում, շատ օգտակար գործ էր անում. բանակի մատակարարման գործով շատ լավ համագործակցում էր եւ Վազգեն Սարգսյանի հետ եւ Ղարաբաղի իշխանավորներից ոմանց հետ: Օգտակար, շատ կարեւոր գործ էր անում: Նա կարող մարդ էր, նա ուներ փորձ, երեւի մեզանից ամենաշատ փորձը, միշտ աշխատել է պետական ապարատում, կազմակերպչական ընդունակություններ ուներ, ուստի նրա կարողությունների համեմատ դա շատ փոքր գործ էր: Մենք նրան Հայաստան հրավիրեցինք, վստահեցինք Հայաստանի բանակը եւ եկեք անկեղծ լինենք, ազնիվ լինենք՝ լավ էլ նախարար է եղել, շատ լավ նախարար է եղել բոլոր իր զբաղեցրած պաշտոններում՝ եւ անվտանգության, եւ բանակի եւ ոստիկանության մարմիններում: Այստեղ ոչ մի վերապահում ես չեմ կարող անել՝ այդ տարիներին կատարած նրա աշխատանքի համար: Անօգտակար, անպետք մարդ գոյություն չունի: Բայց ամեն մարդ ունի իր կարողություններն առավելագույնս դրսեւորելու առաստաղը: Առաստաղից ցած նրանք հրաշալի մասնագետներ են, հրաշալի պրոֆեսիոնալներ, հրաշալի աշխատողներ: Երբ նրանց մեջ դրանից ավելի ամբիցիաներ են ծագում, այստեղ է արդեն որ երեւում է մարդու եւ իր հավակնությունների հակասությունը: Հիմա Ռոբերտ Քոչարյանի հարցը: Ես անկեղծորեն պիտի խոստովանեմ. 96 թվի աղմկոտ ընտրություններից հետո, Հայաստանում իշխանության նկատմամբ վստահության զգալի պակաս կար: Անկեղծ ասում եմ սա: Եւ երբ մենք Անգլիայից հրավիրեցինք Արմեն Սարգսյանին, դա հաղթահարվեց. նոր մարդ էր բոլորովին անծանոթ, ժպտուն, մտավորական, եւ շատ դրականորեն ընդունվեց մեր ողջ հասարակության կողմից: Բայց նա ժամանակ չունեցավ որեւէ գործ անելու: Երկու ամիս անց լուրջ հիվանդացավ եւ վերադարձավ Լոնդոն: Մենք արդեն հայտնվեցինք ավելի դժվար վիճակի մեջ, քան Արմեն Սարգսյանին հրավիրելուց առաջ: Ուրեմն, հասարակական մթնոլորտն այնպիսին էր, որ Հայաստանի ներսից ում էլ վարչապետ նշանակեի՝ առավել եւս, Աստված մի արասցե, ՀՀՇ-ի «բանդիտներից» մեկին, մի նոր պայթյուն էր լինելու մեր երկրում:

Մեզ պետք էր մի հավասարակշռող պահ, որպեսզի կարողանայինք այս մթնոլորտը հաղթահարել: Ես ունեցել եմ երկու նկատառում, Քոչարյանին Հայաստան հրավիրելիս: Առաջին՝ նա նույնպես, ինչպես ասում են, չեզոք անձնավորություն էր, Հայաստանի ներքին պայքարնե-

ri մեջ հարվածներ չհասցրած եւ հարվածներ չընդունած մարդ: Իսկ ես խաղաղականությունը այդպես եմ հասկանում. եթե խաղաղականության մեջ մտար եւ չունես հարվածներ տալու եւ հարվածներ ընդունելու ընդունակություն, ավելի լավ է գնաս տուն, խաղաղականությամբ զբաղվել պետք չէ: Ուրեմն՝ Հայաստանի ներքին պայքարների մեջ նա ընդհանրապես խառնված չի եղել, ունեցել է դրական կերպար, Ղարաբաղում մեծ գործ է արել, եւ ես գնահատեցի դա: Սա առաջին նկատառումն էր՝ որպեսզի այդ մթնոլորտում վարչապետը ընդունելի դառնար: Նույնիսկ Արմեն Սարգսյանին հրավիրելու ժամանակ եղել են դժգոհություններ, որովհետեւ ասել են՝ նա կտրված է եղել Հայաստանից, միշտ արտասահմանում է ապրել, տեղյակ չէ մեր կյանքին: Բայց Ռոբերտ Քոչարյանի նշանակումից ոչ մի դժգոհություն չի եղել: Հայաստանում չի եղել մի մարդ, որը հավանություն տված չլիներ այդ նշանակմանը: Եղել է ընդամենը երկու հակառակ արձագանք. Վազգեն Մանուկյանն էր, որը մեկ տողով ասել էր՝ սխալ է Ղարաբաղի նախագահին բերել Հայաստան, որովհետեւ դա հետագայում կարող է խնդիրներ առաջացնել Ղարաբաղի եւ Հայաստանի հարաբերություններում: Եւ ճիշտ էր, հեռանկարում նա ճիշտ դուրս եկավ: Եւ երկրորդ՝ Ալեքսանդր Աղամալյանը շատ լուրջ հոդված էր գրել, որտեղ հիմնավորում էր, որ Քոչարյանի նշանակումը սխալ է: Այս երկու արձագանքն է եղել, ուրիշ ոչինչ: Մնացածը միայն հավանություն, միայն դրական վերաբերմունք: Ասեմ ավելին. Քոչարյանը մեկ տարի աշխատեց վարչապետ եւ կրկին շատ լավ աշխատեց, շատ բարեխիղճ, շատ հստակ եւ արդյունավետ: Ինչո՞ւ փոխվեց նա: Հենց սա է նախկին եւ ներկա իշխանությունների տարբերությունը: Նախկին իշխանությունը կենտրոնացած բուրգ չէր, կային լուրջ հակակշիռներ՝ ոչ միայն օրենսդիր եւ դատական իշխանությունների կերպարներով այլեւ նույնիսկ գործադիր իշխանության ներսում: Յուրաքանչյուրը խաղաղական ֆիգուր էր՝ Վազգեն Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը եւ մյուսները, որոնք չէին կարող հլու ենթարկվել: Եթե որեւէ մեկը այդպիսի բուրգ կառուցելու հավակնություն էլ ունենար՝ չէր կարող: Դա կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ գործադիր իշխանությունը խաղաղական մարմնից վերածվում է այլ հարաբերություններով կարգավորվող մարմնի: Այդ պատճառով Քոչարյանն այն ժամանակ ուրիշ ձեւով չէր կարող աշխատել: Նույնը Սերժ Սարգսյանը եւ մյուս-

ները: Ձարմանալի կարող է թվալ, բայց նույն մարդը տարբեր պայմաններում կարող է բոլորովին տարբեր կերպարանքներ ունենալ: Դուք դեռ շատ երիտասարդ եք, ձեր առաջիկա կյանքում հազարավոր այսպիսի օրինակներ եք տեսնելու: Ձեր ամենահավատարիմ ընկերը, որին թվում է՝ ճանաչում եք քառասուն տարի, մի օր պարզվելու է, որ այլ պայմաններում բոլորովին ուրիշ մարդ է դարձել՝ դրական կամ բացասական առումով:

Ամենավախկոտ թվացողը, մեկ էլ կտեսնեք, ամենաքաջն է, հերոս թվացողը՝ կատու է իրականում: Ամենաազնիվը կարող է դառնալ ամենամեծ գողը, կամ ճարպիկ թվացողը լինել ամենաազնիվը աշխատանքի մեջ: Մետամորֆոզներ են, որոնք հատուկ են մարդկությանը: Գլխավորն այն է, որ մարդուն պետք է դնել նորմալ պայմանների մեջ, ոչ թե խարխուսել մարդկանց ստորին բնազդները: Ստալինի ժամանակ եւ հետո կամ առաջ ժողովուրդը նույնն էր: Ինչո՞ւ հանկարծ շատերը դարձան մատնիչ, շատերը դարձան վախկոտ, իսկ Խրուշչովի ժամանակ նույն մարդիկ ուղղեցին իրենց մեջքը, դարձան հպարտ: Ուրեմն խնդիրը մարդը չէ, խնդիրը ժողովուրդը չէ, խնդիրը իշխանություններն են, որոնք մարդկանց դնում են այս կամ այն պայմանների մեջ: Քոչարյանին Հայաստան հրավիրելու երկրորդ նկատառումը նույնպես շատ կարեւոր էր ինձ համար եւ ընդհանրապես Ղարաբաղի խնդրի լուծման համար: Բնականաբար, Ղարաբաղն այս խնդրին մոտենում է Ղարաբաղի շահերի տեսակետից: Սա հատուկ է բոլոր լոկալ մարզային կամ գավառային հայրենասիրություններին, եւ այլ կերպ չի կարող լինել: Մեր ողջ պատմության մեջ բդեշխները, իշխանները ունեցել են իրենց լոկալ շահերը: Շահ ասելով՝ ես շահադիտություն նկատի չունեմ, բնական կապվածություն այդ հողին, բնական պարտք այդ ժողովրդին: Այդպես եղել է, այսուհետեւ էլ այդպես պիտի լինի: Այո, Ղարաբաղի ժողովուրդը, Ղարաբաղի նախագահը հետագայում եւս բանակցություններում եւ կարգավորման պրոցեսում պետք է առաջնորդվեն Ղարաբաղի շահերի տեսակետից: Հայաստանը՝ Հայաստանի շահերի, Ղարաբաղը՝ Ղարաբաղի շահերի, Ադրբեջանը՝ Ադրբեջանի շահերի: Սա է ձեւը, եւ եթե ուզես էլ փոխել՝ չի ստացվի, այդպես պիտի լինի: Բայց այսպիսի պարագայում ծագում են հակասություններ Ղարաբաղի շահերի եւ Հայաստանի շահերի միջեւ: Ցանկացած դեպքում դա միայն այսօրվա բան չէ, ամբողջ պատմության ընթացքում այդպես է եղել: Նույնը Հարավսլա-

վիայում էր. Հարավսլավիայի շահերը մի բան էին պահանջում, իսկ բոսնիական սերբերի շահերը՝ ուրիշ բան: Ի վերջո, բազմաթիվ արյունահեղություններից հետո գտնվեց ինչ-որ մի կոնսենսուս, որը չեմ կարծում, որ վերջնական լուծում է: Ուրեմն սա կա, սա օբյեկտիվ է եւ սա պիտի լինի: Ուստի, Քոչարյանին Հայաստան հրավիրելու իմ երկրորդ նկատառումը այն էր, որ դառնալով Հայաստանի վարչապետ, նա կարողանա Ղարաբաղի խնդրին նայել նաեւ Հայաստանի տեսակետից: Եւ եթե նա ճիշտ քաղաքականություն ընտրեր, այսինքն՝ ոչ թե գնար կարգավորումը խափանելու, վիժեցնելու, այլ կարգավորումը իրացնելու, հարցը լուծելու ճանապարհով, ես կարծում եմ, այսօր նա ի վիճակի կլիներ նույնիսկ իմ նկատմամբ առավելություն ունենալ՝ այն է՝ հարցին մոտենալ թե Ղարաբաղի եւ թե Հայաստանի տեսակետից:

ԵՂՈՅԱՆ ԱՐՄԱՆ, մասնագիտությամբ իրավաբան. – Հարցը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հարցին մեկ ուրիշ կտրվածքից: Հայտնի է Ձեր տեսակետը, որ Հայաստանի տնտեսության զարգացումը կապված է Լեռնային Ղարաբաղի խնդրի հետագա լուծման հետ, բայց ես ուզում եմ հիշել եւ հիշեցնել, որ Հայաստանը եւ Ադրբեջանը, որպես երկու սուվերեն պետություն սկսել են շփվել ընդամենը 1918 թվականին: Շփումը տեւել է կարճ, հետո արդեն Սովետական միության ժամանակ, իսկ դրանից առաջ պարսկական կամ ռուսական տիրապետության ժամանակ: Հնարավո՞ր է արդյոք նույնիսկ Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծելուց հետո, խաղաղության վերջնական պայմանագրի կնքումից հետո, ուղղակի կազմակերպել որեւէ տնտեսական շփում հայկական եւ թուրքական էթնոսների միջեւ՝ առանց որեւէ կայսրի կամ կենտկոմի քարտուղարի հսկողության՝ որպես երկու սուվերեն պետություն:

– Այդ գործոնն իհարկե կա: Հակամարտություններ ունեցող փոքրամասնությունները կարողանում են նորմալ համագործակցել, եթե կա մի ավելի մեծ պետական վերահսկողություն, ինչպես, ճիշտ եմ ասում՝ Ռուսաստանն էր, ինչպես շահական Իրանն էր, ինչպես հետո Խորհրդային Միությունն էր: Շատ ճիշտ է: Բայց ես չեմ կարծում, որ ժողովուրդները չեն փոխվում, չեն աճում: Չի կարելի պատմական բեռը փաթաթել ժամանակակից ազգերի վրա, չի կարելի այսօրվա Թուրքիան նույնացնել

երիտթուրքերի ժամանակի Թուրքիայի հետ, չի կարելի այսօրվա Ադրբեջանը, որի հետ թեեւ հարաբերությունները սրված են Ղարաբաղի հարցով, նույնացնել մուսավաթական Ադրբեջանի հետ: Ժողովուրդներն աճում են, զարգանում են, ավելի իրատեսական են դառնում: Նույն զուգահեռը կարելի է տանել ավելի զարգացած պետությունների միջեւ: Ինչու չեմ հիշում Ֆրանսիան եւ Գերմանիան: 1805 թվականից սկսած մինչեւ 1945 թվականը այդ պետությունները չորս անգամ պատերազմել են իրար դեմ, եղել են ամենաթունդ թշնամիներ, իսկ այսօր աշխարհում չեմ գտնի որեւէ ուրիշ երկու երկիր, որոնք այդքան սերտորեն համագործակցեն իրար հետ: Ինչո՞ւ եմ կարծում, թե մենք չենք կարող Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ նույն ձեւով համագործակցել:

ԴԻԵԳՈ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ. – Պարոն Տեր-Պետրոսյան, անունս Դիեգո Կարամանուկյան է, ես Ուրուգվայում ծնած եմ, հայ եմ, Հնչակյան կուսակցության անդամ եմ, կուզեի նախ ողջունել Ձեր վերադարձը ակտիվ քաղաքականություն եւ ընդգծել, կարեւորել այսօրվա հանդիպման մակարդակը եւ որ միշտ այսպիսի հանդիպումներ տեղի ունենան:

– Մեկ վայրկյան, շատ կներեմ ընդհատեմ: Ես շատ ավելի ուրախ կլինեի, որ դում ոչ թե ողջունեիք իմ վերադարձը, այլ ողջույնով ինձ ճանապարհեիք դեպի գիտություն: Բայց ոչ այսօր. հետո:

ԴԻԵԳՈ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ. – Պարոն Տեր-Պետրոսյան, կուզեի իմանալ Ձեր մոտեցումները Հայաստանի եւ սփյուռքի հարաբերությունների մասին, քանի որ ակնհայտ է, որ Հայաստանի նախագահը նաեւ կարեւորություն պետք է տա սփյուռքի հետ հարաբերություններին:

– Ես յոթուկես տարի եղել եմ Հայաստանի նախագահ, իմ արածը տեսել եք: Իսկ եթե կուզեք իմանալ իմ հիմնական խոհը սփյուռքի մասին՝ սփյուռքը հարակա ինքնուրույն գոյություն է. դրա հետ պետք է հաշտվել, դա կա եւ դա չի փոխվի: Հայաստանը ուրիշ ինքնություն է: Հայաստանը հավաքականություն է, սփյուռքը հավաքականություն չէ, այլ գաղութների մի արշիպելագ: Յուրաքանչյուր գաղութ ունի իր շահերը, իր մշակույթը, պետության հետ հարաբերվելու իր կանոնները, այնպես որ չի կարելի այս երկու ինքնությունները դնել հավասար նժարի վրա: Մեկը ասացի՝ հավաքականություն է, մյուսը արշիպելագ: Հավաքականությունը ունի իր ընտրովի իշխանությունը, ունի իր միասնական որո-

շումներ կայացնելու մեխանիզմը, Հայաստանը կարող է խոսել որպես մեկ սուբյեկտ: Սփյուռքը չի կարող: Դա մեր դժբախտությունն է: Դա սփյուռքի խնդիրն է՝ ինքնակազմավորվել եւ գտնել այն ձեւը, որ կարողանա Հայաստանի հետ խոսել որպես մեկ սուբյեկտ, որը այսօր ինձ թվում է, շատ հեռու իրականություն դառնալու կարող խնդիր է, շատ հեռու: Թեեւ ասացի, որ դրանք առանձին ինքնություններ են, բայց իհարկե միմյանց նկատմամբ պարտավորություններ ունեն: Հայաստանի պարտքն է պահպանել, հզորացնել սփյուռքի ինքնությունը՝ մասնավորապես հոգեւոր, մշակութային, կրթական գործերում: Սփյուռքը մեզանից տնտեսապես ավելի հզոր է, ուստի նյութական օգնության կարիք չունի, ունի մշակութային հաղորդակցության, կրթական եւ հոգեւոր կարիքներ: Հոգեւորը, փառք Աստծո, Մայր աթոռ սուրբ Էջմիածինն է: Հայրենի մշակույթին նույնպես կարելի է ասել, սփյուռքը մասնակից է դառնում՝ ցուցահանդեսների, հյուրախաղերի միջոցով եւ այլն: Ինչ վերաբերում է կրթությանը, այստեղ լուրջ գործ կա, որովհետեւ Հայաստանը, կարծում եմ, առայժմ շատ քիչ բան է անում սփյուռքում հայկական կրթությունը, հայոց լեզուն պահպանելու ուղղությամբ: Ուրիշ բան Հայաստանը չի կարող անել սփյուռքի համար: Հավելյալ միայն այն, որ սփյուռքին կարող է տալ հպարտություն, սփյուռքին կարող է տալ ոգի, որ Հայաստանը կա Հայաստանը ոգեղեն, զարգացող պետություն է: Ինչ վերաբերում նրան, թե է սփյուռքն ինչ կարող է մեզ տալ, ապա սփյուռքի նշանակությունը Հայաստանի համար հայրենասիրական ճառերը չեն, ճաշկերույթներն ու հանգանակությունները չեն: Սփյուռքի նպաստը մենք պետք է գնահատենք ըստ այնմ, թե ինչ է արել սփյուռքը՝ ամբողջապես եւ յուրաքանչյուր գաղութ, Հայաստանի տնտեսության զարգացման, պետականության ամրապնդման եւ նրա միջազգային հեղինակության բարձրացման առումով:

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ. – Ներկայանամ՝ Մանուկ Խաչատրյան: Պարոն Տեր-Պետրոսյան գտնվելով այս դահլիճում բնականաբար կարիք չկա մեկ անգամ եւս նշել, որ Ձեր կողմնակիցներն ենք ու ապագա Ձեր ընտրողները, ուղղակի ես չեմ ուզի որ այս երեկոն վերածվի այսպես կոչված մեծարման երեկոյի, այլ մենք բոլորս խնդրով ենք եկել:

– Շատ կներեմ, ես զգացի, որ շատ խիստ քննության երեկոյի եմ վերածել, հիմա ստուգման գրքույկս տալու եմ, նշանակեմ:

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ. – Դուք Ձեր խոսքի մեջ ճիշտ նշեցիք, որ 88-ից հետո սերունդ է փոխվել եւ Դուք ամենալավը գիտեք, որ ավելի ազատ, ավելի համարձակ եւ ավելի նորմալ մարդու կյանքով ապրող սերունդ է մեծանում այսօր Հայաստանում: Ինչո՞ւ 20 տարի շարունակ հայ մարդը չի տեսնում նոր լիդերներ, չի տեսնում երիտասարդ մարդիկ չի տեսնում նոր մարդիկ ովքեր գալու են նոր խոսք ասեն: Իմ հարցը հետեւյալն է, ես չեմ ուզում հավատալ, որ էս ժողովուրդն այլեւս լիդերներ չի կարողանում ծնել, դա հայ ժողովրդի դեպքում անհնարին է: Դուք եկել եք, նորից եկել եք՝ ես ողջունում եմ այդ ամեն ինչը: Իմ կարծիքով, եթե Լեւոն Տեր-Պետրոսյանը գա իր շնչով, իր խոհեմությամբ, իր հսկայական փորձով, բայց նոր դեմքերով՝ հաղթանակը 99.9 տոկոս է լինելու:

– Ես համաձայն չեմ, որ նոր մարդիկ չկան. իմ կողքերը նայեք, բոլորը նոր մարդիկ են: Ավելին ասեմ, քաղաքական լիդերներ ծնվում են միայն մի պարագայում, եթե կա քաղաքական կյանք: 70 տարի Խորհրդային Միությունում ոչ մի լիդեր չի ծնվել, սիստեմը ինքը իր համար կադրեր է արտադրել, որեւէ մեկս նույն այդ խորհրդային համակարգում լիդերներ չէինք: 43 տարեկան էի ես 88 թվին, ինչու ես կարողացա, շատ ներողություն, ինչ-որ շնորհիներ դրսեւորել դրանից հետո, իսկ դրանից առաջ չէի կարող դրսեւորել: Նույն մարդիկ էինք ողջ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներս, բոլորը: Ո՞վ էր մեզանից պատկերացնում, որ մենք լիդեր կարող ենք դառնալ: Ձկար քաղաքական կյանք, լիդեր ծնվելու հնարավորություն եւ կարիք չկար: Վերջին տասը տարում մեր իշխանությունները երկրում ստեղծել են ահա այդպիսի մթնոլորտ: Տասը տարի Հայաստանում քաղաքական կյանք չկա, քաղաքական դիալոգ չկա, քաղաքական մշակույթ չկա: Երբ որ կստեղծվի, եկեք օգնենք, գանք, ստեղծենք այդ մթնոլորտը, եւ կտեսնեք՝ ինչպիսի գեղեցիկ լիդերներ կծնվեն:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան» (հատվածաբար), 7 նոյեմբերի, 2007թ.: Հրատարակված նաեւ առանձին գրքույկով. «Հանդիպում երիտասարդության հետ», Երեւան, 2007թ.:

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ

(ելույթ 2007թ. նոյեմբերի 16-ի հանրահավաքում)

Սիրելի հայրենակիցներ,

Նախ եւ առաջ ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել այն բոլոր կուսակցություններին եւ հասարակական կազմակերպություններին, որոնց ղեկավարները ֆիշ առաջ հրապարակեցին իմ թեկնածությունը պաշտպանելու վերաբերյալ կայացրած իրենց որոշումները: Նրանցից ոմանք եղել են իմ եւ նախկին իշխանությունների ամենախիստ քննադատները: Ուստի եթե նրանք այսօր կանգնած են այս հարթակում, դա նշանակում է, որ նրանց միավորել է ոչ թե իմ անձի նկատմամբ տածած անվերապահ վստահությունը, այլ Հայաստանի ներկա ավազակապետական վարչախմբի լուծը թոթափելու եւ երկրի սահմանադրական կարգը վերականգնելու հրամայականը:

Իսկ այժմ դիմելով այս խորհրդանշական հրապարակում հավաքված ազատ քաղաքացիներիդ եւ ողջունելով պայքարի ձեր կամքն ու երկրի ապագան սեփական ձեռքերով կերտելու ձեր վճռականությունը՝ կցանկանայի ձեզ հետ բարեկամաբար զրուցել բոլորիդ հուզող որոշ հարցերի շուրջ: Նախորդ ելույթում ես խոստացել էի առաջիկա ընտրարշավի ընթացքում մեկ առ մեկ բացատրություններ տալ այն բոլոր մեղադրանքների վերաբերյալ, որոնք վերջին տասնհինգ տարիներին բազմիցս հնչեցվել են Հայաստանի նախկին իշխանությունների հասցեին եւ ավելի հաճախակիացել ու սաստկացել ներկա նախընտրական շրջանում: Այս հանրահավաքում ես հանգամանորեն կանդրադառնամ դրանցից մի քանիսին՝ մնացյալը թողնելով այլ առիթների:

Ցրտի ու մթի տարիներ

Մինչեւ այս շարաբաստիկ հարցի բուն քննությանն անցնելը, հարկ եմ համարում կատարել որոշ փաստական ճշտումներ: Թեեւ մեր իմաստուն ընդդիմախոսների եւ Ֆոչարյանա-գեբելսյան քարոզչամեքենայի հետեւողական ջանքերի շնորհիվ «ցրտի ու մթի տարիներ» է պիտակավորվել Հայաստանի նախկին վարչակազմի իշխանավարության ողջ շրջանը, սակայն իրականում ցուրտ եւ մութ է եղել միայն 1992–1994 թվականներին: Եթե մի պահ փորձենք հիշել, թե դրանք ինչ տարիներ էին, ապա ապշանքով կնկատենք, որ դրանք աստղաբաշխական ճշգրտությամբ համընկնում են Արցախյան պատերազմի տարիներին: Պատերազմն սկսվել է 1992թ. մայիսի 9-ին՝ Շուշիի գրավմամբ, եւ ավարտվել 1994թ. մայիսի 12-ին՝ զինադադարի կնքումով: Միայն այս փաստը բավական էր, որպեսզի համաշխարհային պատմությանը քիչ թե շատ ծանոթ ցանկացած բանական մարդ, առանց մեծ ճիգ թափելու, կռահեր, թե ինչու այդ տարիներին Հայաստանում ցուրտ ու մութ պետք է լիներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ցուրտ ու մութ էր ոչ միայն ողջ Խորհրդային Միությունում, այլեւ Անգլիայում, Ֆրանսիայում, Հունաստանում եւ պատերազմի մեջ ներքաշված մնացյալ բոլոր երկրներում: Անգլիայում, օրինակ, այդ ժամանակ հազարապատիկ ավելի ծառ է կտրվել, քան ցուրտ ու մութ տարիների Հայաստանում, էլ չխոսած Լենինգրադյան բլոկադայի սարսափների մասին: Սակայն որեւէ այլ երկրում ոչ մեկի մտքով չէր անցնի պատերազմի տարիները կոչել ցրտի, մթի, իսկ որոշ տեղերում՝ նաեւ սովի ու համաճարակի տարիներ: Նման հանճարեղ միտք կարող էր ծագել միայն երեքհազարամյա քաղաքակրթությամբ հպարտացող հայերի ուղեղներում:

Մեր ընդդիմախոսները համառորեն չեն ընդունում կամ փորոգաբար անտեսում են որեւէ փոխկապակցվածություն՝ ցուրտ ու մութ տարիների եւ Արցախյան պատերազմի միջեւ: Ցուրտն ու մութը նրանք բացատրում են բոլորովին այլ պատճառներով: Բերենք դրանցից ամենատարածվածները:

Ամենաարտառոց տեսակետն, ինչպես միշտ, մի քանի տարի առաջ արտահայտել է Ռոբերտ Քոչարյանը: Նրա կարծիքով՝ Հայաստանի էներգետիկ ճգնաժամը բացառնակապես պայմանավորված չի եղել

պատերազմով ու շրջափակումներով, այլ արդյունք է այն իրողության, որ «Ղարաբաղ» կոմիտեն ժամանակին անհեռատեսորեն փակել է Արմավիրի ատոմակայանը: Սա թեեւ թյուրիմացություն է, բայց տվյալ պարագայում՝ ներելի թյուրիմացություն: Գտնվելով Հայաստանից դուրս՝ Քոչարյանը կարող էր տեղյակ չլինել, որ ատոմակայանի փակման ժամանակ, այն է՝ 1989թ. հունվարին, «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր տասնմեկ անդամները, գումարած Իգոր Մուրադյանն ու Խաչիկ Ստամբոլցյանը, արգելափակված էին Մոսկվայի «Մատրոսկայա տիշինա» եւ «Բուտիրկա» բանտերում: Կարող էր չիմանալ նաեւ, որ ատոմակայանի փակման որոշումն ընդունել են իր սիրելի Նիկոլայ Ռիժկովն ու Սուրեն Հարությունյանը: Եւ վերջապես, բացառված չէ, որ մի օր էլ Քոչարյանը կհայտարարի, թե ատոմակայանն ինքն է վերագործարկել: Ու չզարմանամ՝ շատերը հակված կլինեն հավատալու դրան:

Էներգետիկ ճգնաժամի հետ կապված հաջորդ անհեթեթ տեսակետի համաձայն՝ «ցրտի ու մթի» տարիներին Հայաստանի իշխանություններն իբր դիտավորյալ հողանցել են արտադրված էլեկտրաէներգիան՝ իրենց ներկրած նավթն ու մոմը վաճառելու եւ շահույթ ստանալու նպատակով: Երբ սա ասում է հասարակ մարդը, հասկանալի է: Իսկ երբ դրա մասին, հազարավոր հեռուստադիտողների առաջ, դեմքի լուրջ արտահայտությամբ եւ դատավորի կեցվածքով, խոսում է ակադեմիական շրջանակներում ըստ արժանվույն մեծ համբավ վայելող մի պատմաբան՝ Պետական համալսարանի պրոֆեսոր, ապա կարելի է լիովին հիասթափվել Աստծու արարչագործությունից: Պրոֆեսորն, ըստ երեւույթին, դպրոցի վեցերորդ, թե յոթերորդ դասարանում փախել է ֆիզիկայի դասից, որի թեման եղել է «էներգիայի պահպանման եւ փոխակերպման օրենքը»: Շատ լավ, դասից բոլորս էլ փախել ենք, հիմա էլ թոռս է փախչում: Այդ պրոֆեսորի համար ի՞նչ դժվար էր՝ մտնել հարեւան ֆիզիկայի ֆակուլտետ եւ խորհրդակցել որեւէ ֆիզիկոս-պրոֆեսորի կամ թեկուզ առաջին կուրսի ուսանողի հետ: Պատասխանը, չեմ կասկածում, վայրկյան անգամ չէր ուշանա՝ բարձրավոլտ էլեկտրաէներգիայի հողանցման պարագայում Հայաստանի էներգետիկ ցանցի բոլոր ապահովիչները կպայթեին:

Առաջին հայացքից կարող է ավելի լուրջ թվալ էներգետիկ ճգնաժամի հարցում նախկին իշխանություններին ներկայացված այն մեղադրանքը, թե «ցրտի ու մթի տարիներն» իբր արդյունք են էլեկտրաէներ-

գիայի արտադրության ոլորտում, մասնավորապես, խորհրդարանական լատիներենով՝ «մազութ լափելու» պրոցեսում «բացահայտված» մի քանի հարյուր միլիոն դոլարի հասնող յուրացումների: Որպես դրա հիմնավորում բերվում է այն փաստը, որ 1993 թվականին արտադրվել է նույնքան էլեկտրաէներգիա, որքան 1996-ին, բայց առաջին դեպքում եղել են հովհարային անջատումներ, իսկ երկրորդում՝ ոչ: Մեր ընդդիմախոսներին չեն բավարարում այն բացատրությունները, որ 1992–1994 թվականներին արտադրված էլեկտրաէներգիայի առյուծի բաժինը մատակարարվել է արդյունաբերությանը, որ հովհարային միացումների ժամանակ հոսանքը, էժան լինելով, անխնայողաբար օգտագործվել է ոչ միայն լուսավորման, այլեւ ջեռուցման եւ կենցաղային սարքերն աշխատեցնելու նպատակով, որ 1996-ին արդեն գործում էր Ատոմակայանը, որ այդ թվականին, ի տարբերություն 1993-ի, Հայաստան էին ներկրվում հսկայական քանակությամբ այլ էներգակիրներ՝ բենզին, նավթ, դիզելային վառելիք, որ 1996-ին արդեն ջեռուցվում էր հանրապետության խոշոր քաղաքների բնակելի շենքերի մեծ մասը, իրականացել էր էներգետիկ ռեֆորմը, վերացել էին անօրինական լարանցումները եւ այլն: Ձեզ չհոգնեցնելու համար ես չեմ ուզում մանրամասնել թվարկված իրողությունները: Դրանց սպառիչ քննությունը, իր բազմաթիվ հոդվածներում եւ հարցազրույցներում, կատարել է նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը, որի եզրակացությունները ոչ միայն չեն հերքվել, այլեւ առայժմ նույնիսկ չեն վիճարկվել մասնագետ-տնտեսագետների կողմից:

Որտեղի՞ց, ուրեմն, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում հարյուր միլիոնավոր դոլարի յուրացումների մասին շրջանառվող խոսակցությունները: Բանից պարզվում է՝ ոչ այլ տեղից, եթե ոչ նախորդ գումարման Ազգային ժողովում ստեղծված հատուկ հանձնաժողովի եզրակացությունից, որը ներկայացվել էր դատախազություն՝ համապատասխան քրեական գործ հարուցելու պահանջով: Գլխավոր դատախազությունը, օրենքի բոլոր պահանջներին համապատասխան գործը քննելուց հետո, ոչ միայն նախկին իշխանությունների գործողություններում հանցակազմ չգտավ, այլեւ շարձանագրեց հանցանքի փաստն անգամ:

Ցանկացած քաղաքակիրթ երկրում պարկեշտությունը կպահանջեր, որպեսզի գլխավոր դատախազը եւ հանձնաժողովի անդամները պաշտոնապես ներողություն խնդրեին նախկին իշխանություններից, մասնավորապես, վարչապետ Հրանտ Բագրատյանից: Դա չարվեց, ապա-

ցուցելով, որ Հայաստանը դեռեւս խաղաթղթերի երկիր չէ: Դրա փոխարեն հանձնաժողովի հարգարժան անդամներն ու նրանց հարող խաղական գործիչները, չհամաձայնելով դատախազության որոշման հետ, շարունակեցին եւ այսօր էլ շարունակում են պնդել նախորդ իշխանություններին հասցեագրված նույն մեղադրանքները: Մինչդեռ տրամաբանությունը պահանջում էր, որ այս անգամ նրանք բեռական գործ հարուցեին հանրապետության գլխավոր դատախազի դեմ՝ նախկին իշխանությունների «հրեշավոր հանցագործությունը» կոծկելու համար: Իսկ եթե դա էլ չստացվեր, ապա պետք է ներխուժեին գլխավոր դատախազի գրասենյակ եւ, ի նշան բողոքի, անժամկետ հացադուլ հայտարարեին գրասենյակում փակված գորգի վրա: Ինչո՞ւ, ասենք, Վազգեն վեհափառը եւ Վիկտոր Համբարձումյանը կարող էին Մոսկվայում հացադուլի նստել Արցախի հարցի արդարացի լուծման պահանջով (ի դեպ՝ այդ հացադուլից նրանց ես եմ հանել), իսկ պատգամավորական հանձնաժողովի քաջարի անդամները ընդունակ չեն այդպիսի զոհողության գնալու: Ձեմ ուզում ավելի ծավալվել, բայց այս հարցը իրավական եւ քաղաքական հարթությունից ակամա տեղափոխվում է բարոյական հարթություն:

Հարցերի խորքը թափանցելու պարագայում ակնհայտ է դառնում, որ վերը թվարկված մեղադրանքները նպատակ են հետապնդում սոսկ ողարկելու Հայաստանին բաժին ընկած էներգետիկ ճգնաժամի բուն պատճառը, այն է՝ Արցախյան պատերազմն ու շրջափակումները: 1992–1994 թվականներին Հայաստանի իշխանությունները, մեծ զրկանքների ենթարկելով հանրապետության քաղաքացիներին, հայթայթված սուղ միջոցներն ամբողջովին ներդրեցին Արցախի գոյությունն ու անվտանգությունն ապահովելու գործում՝ մեր երկրի տնտեսական գլխավոր խնդիրը դիտելով պատերազմի կարիքների բավարարումը, զենքի, զինամթերքի, դիզվառելիքի, դեղորայքի հայթայթումը, հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծումը, բանակի հանդերձավորումն ու պարենավորումը:

Թեեւ բոլորի մոտ տպավորված է այն պատկերացումը, թե պատերազմն ընթանում էր Լեռնային Ղարաբաղում, սակայն իրականում Հայաստանը նույնպես անմիջականորեն ներքաշված էր չհայտարարված պատերազմի մեջ: Հայ-ադրբեջանական եւ հայ-նախիջեւանյան ողջ սահմա-

նային գոտին երկու տարի շարունակ ենթարկվում էր համարյա ամենօրյա ռմբակոծությունների, հրանգությունների եւ ավերումների: Այդ գոտում՝ սկսած Ոսկեպարից մինչեւ Մեղրի եւ Երասխ, չկա որեւէ գյուղ, որը զոհեր եւ վիրավորներ տված չլինի: Ադրբեջանի կողմից, ըստ էության, պատերազմ էր հայտարարված նաեւ Հայաստանի արտաքին կոմունիկացիաներին: 1992–1995թթ. ընթացքում 42 անգամ պայթեցվել է Հայաստան մտնող գազամուղը եւ 21 անգամ՝ վրաց-հայկական երկաթգիծը: Կարիք չկա ասելու, թե այդ պայթեցումներից հետո ինչ լրացուցիչ ծախսեր են պահանջվել կոմունիկացիաների վերականգնման աշխատանքների համար:

Ես առայժմ չեմ կարող պետական գաղտնիքներ հրապարակել, բայց հավատացնում եմ, որ պատերազմի, զենքի, զինամթերքի, դիզվառելիքի հայթայթման, բանակի մատակարարման, Հայաստանի սահմանամերձ շրջանների պաշտպանության, խափանված կոմունիկացիաների վերականգնման վրա այնքան գումար է ծախսվել, որ լիուլի կբավարարեր մեր ժողովրդին թե՛ լույսով, թե՛ ջերմությամբ ապահովելու համար: 1993–1995 թվականներին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարն է եղել Սերժ Սարգսյանը, որն ամբողջությամբ տիրապետում է այդ գաղտնիքներին, եւ որը չի կարող չհաստատել այս ամենը: Դիմելով այս հրապարակում գտնվող լրագրողներին, խորհուրդ եմ տալիս՝ առիթի դեպքում հարցրեք նրան եւ տեսեք, թե ինչ է պատասխանելու:

Թող տարօրինակ չհնչի, բայց ես երջանիկ եմ, որ մեր ժողովրդի մեծամասնությունը 1992–1994 թվականները համարում է «ցրտի ու մթի» տարիներ, ինչը նշանակում է, որ նա իր մաշկի վրա չի զգացել պատերազմի արհավիրքները: Մինչդեռ Արցախ մեկնած հազարավոր հայաստանցի կամավորների ու նրանց ընտանիքների, սահմանամերձ շրջանների բնակչության համար դրանք եղել են արյան, դիերի, վիրավորների, ռմբակոծումների եւ ավերումների տարիներ՝ զոհողություններ, որոնց գինը ազատագրված Արցախն է: Որ Արցախի ազատագրման գործին Հայաստանի իշխանությունների եւ ժողովրդի անմնացորդ նվիրվածության, ինչպես նաեւ կրած զրկանքների ու տառապանքների մասին ասվածը սոսկ մերկապարանոց հայտարարություն չէ, հաստատվում է Ղարաբաղի ղեկավարության՝ ժամանակին տված անկեղծ գնահատականներով:

Այսպես, ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, 1995թ. հունվարի 9-ին, դիմելով ինձ, գրել է. «Արցախի երախտագետ ժողովուրդը երբեք չի մոռանա Ձեր անձնական ներդրումը մեր հերոսական գոյապայքարում: Մենք մեր թիկունքում միշտ զգացել ենք մայր Հայաստանի, Հայաստանի Հանրապետության զորակցությունը» (ՀՀ առաջին նախագահի արխիվ, 09.01.1995): 1996 թվականին, մի այլ առիթով, Ռոբերտ Քոչարյանը դա արտահայտել է ավելի պերճախոս կերպով. «Այսօր ԼՂՀ-ն կայացած հանրապետություն է, որն ունի ինքնուրույն տնտեսություն, մարտունակ բանակ, ներքին կայուն իրավիճակ եւ հարգանք միջազգային հանրության կողմից: Մեզ համար պարզ է, որ այս ամենը դժվար թե լիներ, եթե մեր թիկունքում չլիներ Հայաստանի Հանրապետությունը... Ես կուզեի շեշտել Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ներդրումը մեր բոլոր հաջողություններում: Առանց նրա հստակ դիրքորոշման, առանց փոխհամաձայնեցված քաղաքական քայլերի, մենք դժվար թե կարողանայինք ունենալ այն, ինչ ունենք: Դա Ղարաբաղում հասկանում են բոլորը, եւ ինձ թվում է, որ Հայաստանում եւ Սփյուռքում՝ նույնպես» («Հայաստանի Հանրապետություն», 19.09.1996թ.): Որպեսզի չթվա, թե սա ընդամենը մեկ մարդու տեսակետ է, բերենք նաեւ ԼՂՀ Ազգային ժողովի երբեմնի նախագահ Արթուր Թովմասյանի գնահատականը. «Անժխտելի է այն փաստը, որ մեր հաջողությունները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության վարած ճկուն դիվանագիտությամբ եւ հավասարակշռված քաղաքականությամբ: Եւ ինչ խոսք, որ այդ դժվարին գործում մեծ է նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի դերը» («Հայաստանի Հանրապետություն», 19.09.1996թ.): Իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը 1996 թվականին հայտարարել է հետեւյալը. «Եթե այսօր արցախահայությունը մասնակցեր Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններին, ապա բացարձակ մեծամասնությամբ իր ձայնը կտար ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանին» («Հայաստանի Հանրապետություն», 19.09.1996թ.):

Համոզված եմ, որ սերունդները «ցրտի ու մթի» տարիները գնահատելու են որպես հերոսական մաքառման եւ հաղթական պատերազմի տարիներ: Բայց դրա հետ մեկտեղ, հասկանում եմ նաեւ, որ իմ երկարաշունչ բացատրությունները, միեւնույն է, չեն փարատելու շատերի կաս-

կածները: Ուստի ինձ մնում է միայն ներողամտություն հայցել մեր ժողովրդից՝ հանուն Արցախի փրկության նրան պատճառած տառապանքների համար:

Խորապես ցավում եմ, որ հարկադրված եղա այսման բացահայտ խոսել Հայաստանի էներգետիկ ճգնաժամի եւ հաղթական պատերազմի փոխկապակցվածության մասին: Նորմալ երկրում դա պետք է այնպիսի տաբու լիներ, որ յուրաքանչյուր մարդ վիրավորված զգար՝ այդ բանն իրեն հիշեցնելու համար:

Ներկա արատավոր ռեժիմի «արմատները»

Կցանկանայի համառոտակի անդրադառնալ նաեւ նախկին իշխանությունների դեմ ուղղված մի այլ հայտնի ամբաստանության: Խոսքը վերաբերում է վերջերս հաճախակի հնչող այն տեսակետին, որ ներկա վարչախմբի արատները բխում են նախկին իշխանությունների ժամանակից: Սա, ինձ թվում է, քաղաքական բանավեճում կիրառվող ամենապրիմիտիվ հնարքն է, որի նպատակն է խուսափել պատասխանատվությունից եւ սեփական օրինազանցություններն արդարացնել պատմական նախադեպերով: Ակամայից հիշում ես Շվարցի պիեսի չարագործ թագավորին, ով իր արարքները բացատրում էր մորաքրոջից ժառանգած վատ գեներով:

Նման տրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում կարելի է արդարացնել ցանկացած հանցագործություն, քանի որ անհնար է պատկերացնել որեւէ օրինազանցություն, որն իր նախադեպը չունենա անցյալում: Նման տրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում մարդկության պատմության մեջ ոչ մի գող չպիտի դատվեր, որովհետեւ առաջին գողերը դրախտի արգելված պտուղը ճաշակած Ադամն ու Եւան էին: Չպիտի դատվեր ոչ մի մարդասպան՝ Կայենի ոճրագործությունից հետո: Եւ վերջապես, չպիտի դատվեր ոչ մի կաշառակեր կամ կաշառատու՝ Եսավից ու Հակոբից հետո:

Յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր իշխանություն, յուրաքանչյուր պաշտոնյա պատասխանատու է իր արատների ու հանցանքների համար, եւ դրանք չի կարող արդարացնել անցյալից ժառանգած գեներով: Ոչ մի առողջ հասարակություն, ոչ մի դատարան նման փաստարկ չի

ընդունի: Հետեւաբար, Հայաստանի նախկին իշխանությունները պատասխանատու են իրենց արարքների համար, իսկ ներկաներն՝ իրենց: Համենայն դեպս, մենք՝ նախկիններս, երբեւէ չենք փորձել մեր արատները բացատրել խորհրդային համակարգից ժառանգած ավանդույթներով, առավել եւս՝ Սերժ Սարգսյանի կարծած մեր ազգային մենթալիտետով: Այդպիսի փաստարկը (կամ «ես էլ քեզ բան ունեմ հիշեցնելու» հնարքը) ոչ միայն անհեթեթ, այլեւ ծիծաղելի կհնչեր, որովհետեւ եթե քո նախորդը կաշառակեր, գող կամ խաբեբա է եղել, ապա քեզ ի՞նչն է խանգարում այդպիսին չլինել: Երբ «քուչի կամ բազարի» կոդեքսի կատեգորիաները թափանցում են պետականության բարձրագույն ոլորտ, ապա վա՛յ այդ պետությանը:

Ոմանք, չբավարարվելով ներկա վարչախմբի արատները նախկինների ժամանակից բխեցնելով, նույնիսկ հայտարարում են, որ նախկին եւ ներկա իշխանությունների միջեւ ոչ մի տարբերություն չկա: Դա կարելի է բացատրել կա՛մ վերը ներկայացված պարզունակ մտայնությամբ, կա՛մ էլ երեւույթների խորքը չթափանցելու ցանկությամբ: Նախկին եւ ներկա իշխանությունները չեն կարող նույնական լինել մեկ պարզ պատճառով: Նախկինները քաղաքական իշխանություն էին, իսկ ներկաներն՝ ավազակապետական: Նախկին իշխանական համակարգում կային հասարակական, քաղաքական եւ ինստիտուցիոնալ հակակշիռներ, իսկ ներկայումս դրանք գոյություն չունեն: Նախկիններ օրոք հակակշիռներ կային անգամ գործադիր իշխանության ներսում: Վարչապետը եւ առանցքային նախարարությունների՝ ներքին գործերի, անվտանգության, պաշտպանության ոլորտների, մաքսային եւ հարկային ծառայությունների ղեկավարները, ինչպես նաեւ կենտրոնական բանկի նախագահը, լինելով քաղաքական անհատականություններ, մրցում էին իրար հետ եւ փոխադարձաբար վերահսկում միմյանց, ինչը չէր կարող թույլ տալ իշխանական մոնոլիտ բրգաձեւ համակարգ ձեւավորել: Բացի այդ, նրանք մշտապես գտնվում էին խորհրդարանի վերահսկողության տակ, որն, ի տարբերություն վերջին գումարման խորհրդարանների, նույնպես ընդգծված քաղաքական մարմին էր: Հիշեք, թե անցյալում ինչպիսի թեժ քննարկումներ եւ քաղաքական բանավեճեր էին ընթանում խորհրդարանում, կամ որքան դժվարությամբ էին ընդունվում կառավարության ներկայացրած օրենքները: Ներկայիս համեմատ մոնոպոլիզաց-

ված չէր նաեւ տեղեկատվական դաշտը. կային մի քանի տասնյակ ընդդիմադիր թերթեր, ինչպես նաեւ անկախ հեռուստատեսային եւ ռադիո կայաններ: Նախկիններեի օրոք հզոր էր նաեւ մի այլ կարեւորագույն հակակշիռ՝ ի դեմս քաղաքական ընդդիմության, որի ազդեցության գագաթը եղավ 1996-ին Վազգեն Մանուկյանի գլխավորած շարժումը:

Ինչ վերաբերում է ներկա վարչախմբին, ապա, ինչպես նախորդ ելույթում փորձեցի հիմնավորել, նրա ձեւավորման սկիզբը համընկավ 1999 թվականի հոկտեմբերի 27-ի ոճրագործությանը: Վերացնելով հանցավոր կենտրոնացած համակարգի ստեղծման գլխավոր խոչընդոտը՝ Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի տանդեմը, ռեժիմը դրանից հետո քայլ առ քայլ ոչնչացրեց իր անօրինական գործունեությանը խանգարող բոլոր մնացյալ հակակշիռները: Գործադիր իշխանության մարմինները լիովին մաքրեց Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի հետեւորդներից, Խորհրդարանը վերածեց անողնաշար եւ ողորմելի կամակատարի, ամայացրեց քաղաքական դաշտը, մոնոպոլիզացրեց համարյա ողջ տեղեկատվական ոլորտը: Այս ամենին զուգընթաց, ֆոչարյանական ռեժիմն աստիճանաբար վերածվեց փակ, անվերահսկելի, ավազակապետական մի համակարգի, որի գոյությունն անհնար էր հակակշիռների առկայության պայմաններում: Տվյալ գործընթացն ապշեցուցիչ կերպով հիշեցնում է ստալինյան բռնապետության ձեւավորման գործընթացը: Օգտվելով Կիրովի՝ իր ամենալուրջ մրցակցի սպանությունից, Ստալինը 1934–1937 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում հիմնովին ոչնչացրեց իր միահեծան իշխանությանն սպառնացող բոլոր առկա եւ հնարավոր հակակշիռները, որից հետո սկսվեց նրա բացարձակ տիրապետությունը:

Այսքանից հետո էլ, միանգամայն պարզ է, որ ոմանք մեր առջեւ արդարացիորեն դնելու են հետեւյալ հարցը. իսկ մի՞թե նախկիններեի օրոք չեն եղել կոռումպացված նախարարներ, պաշտոնական շարաշահումներ կամ այլ տիպի օրինազանցություններ: Իհարկե եղել են, չէին կարող չլինել, քանի որ նման երեւույթներ կան աշխարհի բոլոր, նույնիսկ ամենաօրինապաշտ երկրներում: Այդ արատավոր երեւույթները մարդկությանն ուղեկցել են պետականության առաջացման առաջին իսկ օրվանից ի վեր եւ հետագայում եւս շարունակելու են դրսեւորվել այս կամ այն կերպով: Բայց մի բան են առանձին երեւույթները, անհա-

տական օրինազանցությունները, բոլորովին մի այլ բան՝ խմբային կամ կազմակերպված հանցագործությունները: Ավելի պատկերավոր ասած՝ մի բան է միայնակ անառակը, մի այլ բան՝ անառականոցը, մի բան է անհատ գողը, մի այլ բան՝ ավազակախումբը, բանդան: Նույնիսկ իրական օրենսգրքում այդպիսի հանցագործությունների համար տարբեր պատիժներ են նախատեսված՝ առաջին դեպքում՝ մեղմ, իսկ երկրորդ դեպքում՝ անհամեմատ ավելի ծանր: Նախկին իշխանությունները, պատերազմի, էներգետիկ ճգնաժամի, ցնցումային տնտեսական բարեփոխումների պայմաններում, իրենց ուժերի ներածին չափով, պայքարել են այդ երեւույթների դեմ: Իսկ եթե նրանք դրանում թերացել են, ապա այդ գործը պետք է շարունակեին ներկա իշխանությունները, որոնք մեզ ներելու ո՛չ տրամադրություն, ո՛չ էլ քրիստոնեական առաքինություն չունեին:

Թերեւս քչերն են հիշում, որ 1998-ի իմ հրաժարականի պահին միաժամանակ հրաժարական տվեցին, այսպես կոչված, նախկին կամ ՀՀՇական իշխանության բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները՝ Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, փոխնախագահներ Արա Սահակյանը եւ Կարապետ Ռուբինյանը, խորհրդարանական մշտական հանձնաժողովների նախագահներ Սամվել Գեւորգյանը, Վիգեն Խաչատրյանը եւ Տեր-Հուսիկ Լազարյանը, Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Արզումանյանը, Տարածքային կառավարման նախարար Գալուստ Գամազյանը, Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, Կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը, Արմավիրի մարզպետ Սեդրակ Հովհաննիսյանը, «Հայաստան» հիմնադրամի տնօրեն Մանուշակ Պետրոսյանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վահան Փափազյանը, Հանրապետության նախագահի խորհրդականներ Վահագն Խաչատրյանը, Նիկոլ Շահգալդյանը, Կարեն Շահինյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավար Ավետիս Ավագյանը, մամլո քարտուղար Լեւոն Ջուրաբյանը, կադրերի բաժնի վարիչ Ժոզեֆ Ավետիսյանը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտինյանը եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթի խմբագիր Արմեն Խանբաբյանը:

Այսպիսի միահամուռ հրաժարական, այսպիսի քաղաքական, ինչու չէ, բարոյական կեցվածք, թերեւս իր նախադեպը չունի պետությունների պատմության մեջ՝ կեցվածք, որ անհերեւակայելի է սպասել իրենց աթոռ-

ներին կառչած ներկա քրեական իշխանություններից: Եթե նախկինները որեւէ հանցանք կատարած լինեին ու քրեական հետապնդումներից վախենալու բան ունենային, ապա ինչո՞ւ պիտի այդպես հեշտությամբ գիտենալով, որ թշնամանքով ու քինախնդրությամբ լցված ներկա գավառամիտ իշխանությունները ոչ մի ջանք չեն խնայելու իրենց չգործած հանցանքները բացահայտելու համար:

Եւ իսկապես էլ ջանք չխնայեցին: Մի քանի տարի շարունակ ստուգումներ կատարեցին վերը նշված բոլոր պաշտոնյաների, այդ թվում՝ անձամբ իմ գործունեության ոլորտում: Դավիթ Վարդանյանին հատուկ նշանակեցին Նախագահի վերահսկողական ծառայության պետ, որպեսզի բացահայտի իմ «մաֆիոզ» կերպարը: Ստեղծեցին մի քանի խորհրդարանական հանձնաժողովներ՝ հետաքննելու համար իմ, Հրանտ Բագրատյանի եւ ուրիշների «չարաշահումները»: Ցանկացած գործով դատախազությունում ընթացող քննությունների ժամանակ փորձեցին տարբեր մարդկանցից վկայություններ կորզել իմ, Բագրատյանի, Սիրադեղյանի եւ նույնիսկ հանգուցյալ եղբորս՝ 1985-ից «Հրազդանմեքենա» միավորման գլխավոր տնօրեն Թելման Տեր-Պետրոսյանի դեմ: Ոչինչ չստացվեց՝ հարյուր դոլարի յուրացում անգամ չհայտնաբերվեց: Պատկերացրեք, եթե ունենային որեւէ կոնկրետ փաստ, մեզ բոլորիս ի՞նչ կանեին. ուղղակի կբզկտեին, կոչնչացնեին, հենց այս հարթակում կախաղան կհանեին:

Այս հարցում առանձին խոսակցության նյութ է Սերժ Սարգսյանի յուրահատուկ պարագան: Վերջինս 1993–1995 թվականներին զբաղեցրել է Պաշտպանության, 1995–1996-ին՝ Անվտանգության, իսկ 1996–1999-ին Ներքին գործերի եւ Անվտանգության նախարարի պաշտոնը: Առաջին հերթին հենց նրա պարտականությունն էր բացահայտել իշխանության մարմիններում առկա արատավոր երեւույթները, անհրաժեշտության դեպքում քրեական գործեր հարուցել եւ դրանք ներկայացնել դատախազությանն ու դատական մարմիններին, կամ, առնվազն, նկատված օրինազանցությունների մասին ահազանգել Նախագահին կամ վարչապետին, ինչը նրա կողմից չի արվել: Դա կարող է ունենալ հետեւյալ չորս բացատրություններից մեկը. ա) կա՛մ նա մասնակից է եղել կատարված հանցագործություններին, բ) կա՛մ հանցավոր անփութու-

թյամբ թերացել է կատարել իր պարտականությունները, գ) կա՛մ պրոֆեսիոնալ պատրաստվածությամբ չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին, դ) կա՛մ էլ՝ նախկին իշխանությունների գործողություններում հանցանք չգտնելով, հաջություն եւ ազնվություն չի ունեցել պաշտոնապես հերքելու իր գործընկերների հասցեին ուղղված մեղադրանքները: Համաձայնենք, որ նշված գնահատականներից յուրաքանչյուրն առանձին վերցրած, կամ բոլորը միասին, Հայաստանի Հանրապետության ապագա նախագահի բարոյական կերպարին անհարիր հատկանիշներ են: Ավելին, այսպիսի խաթարված բարոյական հատկանիշներ ունեցող անձնավորությունը, կարծում եմ, ընդհանրապես իրավունք չունի նախագահական ընտրություններում առաջադրելու իր թեկնածությունը:

Քոչարյանի ժառանգած ավերված երկիրը

Ձեզ չհոգնեցնելու համար կանդրադառնամ միայն մեզ ներկայացված եւս մեկ մեղադրանքի՝ դրանով ամփոփելով սույն ելույթում նմանատիպ հարցերի համար նախատեսված սեղմ շրջանակը: Օրեր առաջ Ռոբերտ Քոչարյանը հանդես եկավ մի հայտարարությամբ, թե իբր ինքը նախկին իշխանություններից ժառանգել է ավերված երկիր, որը տաս տարվա ընթացքում վերածել է ծաղկուն դրախտավայրի: Թեեւ կարող է տարօրինակ թվալ, սակայն ես չեմ պատրաստվում պատասխանել այս անհեթեթ մեղադրանքին, որովհետեւ դրան սպառիչ կերպով ժամանակին պատասխանել է ոչ այլ ոք, եթե ոչ ինքը՝ մեր հարգարժան նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Այն էլ պատասխանել է ոչ թե սովորական հայտարարությամբ, կամ հարցազրույցով, այլ կառավարության որոշմամբ եւ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով: Խոսքը վերաբերում է «ՀՀ կառավարության գործունեության ծրագրի մասին» օրենքին, որը 1999թ. նոյեմբերի 30-ին իր ստորագրությամբ վավերացրել է Քոչարյանը: Այդ պատմական վավերագրում նախկին իշխանությունների օրոք Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական իրավիճակի մասին ասված է բառացիորեն հետեւյալը.

«Անկախություն ձեռք բերելուց հետո անցած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունն ունի մի շարք կարեւոր ձեռքբերումներ՝

ա) բազմաթիվ փորձություններ անցած ֆինանսական կայունությունը, հետեւողականորեն իրականացվող կոշտ դրամավարկային քաղաքականությունը, վերահսկվող ու ցածր մակարդակ ունեցող սղաճը եւ բաց տնտեսության արտաքին տնտեսական քաղաքականությունը.

բ) ոչ պետական հատվածի ձեւավորումը՝ շնորհիվ զանգվածային մասնավորեցման, եւ դրա գերակշիռ դերը երկրի համախառն ներքին արդյունքի ձեւավորման գործում.

գ) տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումը, դրա զարգացման համար նախադրյալների ստեղծումը.

դ) միջազգային, այդ թվում՝ ֆինանսական կառույցներին անդամակցությունը, այդ կազմակերպություններից արտոնյալ վարկեր ստանալու լայն հնարավորություններն ու այդ կազմակերպություններում Հայաստանի դրական համբավը.

ե) տարբեր պետություններից 1992 թվականից ի վեր ստացվող նշանակալի օգնությունը, որը նույնպես վկայում է Հայաստանին աշխարհում վստահելի գործընկեր ճանաչելու մասին.

զ) էներգետիկ ճգնաժամի հաղթահարումն ու Հայաստանն էներգոդեֆիցիտ երկրից էներգիայի պոտենցիալ արտահանող դառնելը.

է) 1994 թվականից մինչեւ այժմ շարունակվող, իհարկե ոչ բավարար տնտեսական աճը.

ը) մարտունակ բանակի կայացումը, հաղթանակը Ղարաբաղում եւ 1994 թվականից պահպանվող զինադադարը.

թ) ժողովրդավարական պետության եւ շուկայական տնտեսության համար անհրաժեշտ հիմնական կառույցների առկայությունն ու կանոնակարգված աշխատանքը.

ժ) Սահմանադրության ընդունումը եւ դրանում ամրագրված համակարգերի աստիճանական ձեւավորումը.

ժա) խոսքի եւ մամուլի ազատությունը.

ժբ) այլակարծության վրա խարսխված բազմակուսակցական քաղաքական համակարգը.

ժգ) բոլոր մակարդակների ընտրությունների ավելի ու ավելի ժողովրդավարական բնույթը, պետության կառավարման գործընթացներում բնակչության պատասխանատու մասնակից դառնելը.

ժդ) Հայաստանը ներգրավված է եւ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում միջազգային, եւրոպական, ԱՊՀ եւ տարածաշրջանային կառույցներին: էական դրական տեղաշարժեր են արձանագրված երկկողմ եւ բազմակողմ միջպետական հարաբերությունների ոլորտում, որի արդյունքում ձեւավորվել են Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, եւրոպական, Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների, ինչպես նաեւ բազմաթիվ այլ պետությունների հետ բարեկամական փոխշահավետ հարաբերություններ: Հայաստանը կարեւորել է տարածաշրջանային համագործակցության զուգակցումը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացներին: Մենք հետեւողական ենք մեր հարեւանների հետ խաղաղ, տնտեսական փոխշահավետ միջպետական կապերի ձեւավորման գործում»:

Ինչպես տեսնում ենք՝ ոչ մի խոսք ավերված երկրի կամ նախկին իշխանությունների օրոք դրսեւորված որեւէ արատավոր երեւույթի մասին: Հետո ասում են, թե ներկա իշխանությունները չեն տվել նախկինների քաղաքական գնահատականը: Սրանից ավելի լավ քաղաքական գնահատական չէր կարող երազել ոչ մի նախկին իշխանություն: Քոչարյանին մնում է մեկ բան՝ անիծել շումերներին, փյունիկեցիներին ու Մեսրոպ Մաշտոցին, որ գիր են ստեղծել եւ իրեն դրել այսպիսի անհարմար վիճակի մեջ: Գիրն, ի դժբախտություն Քոչարյանի, արձան է՝ հավերժական ու անջնջելի: Պատահական չէ, որ միջնադարյան հայ գրիչների ամենասիրած պատգամը հետեւյալն էր.

«Ձեռս գնայ, դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակող»:

Իսկ այժմ՝ մի քանի խոսք այսօրվա խնդիրների մասին:

Նախագահական ընտրությունների գործընթացի մասին

Թեեւ ոչ ֆորմալ առումով՝ նախագահական ընտրությունների գործընթացն արդեն սկսվել է: Սերժ Սարգսյանն իր քարոզարշավն, ըստ էության, սկսել է սույն թվականի մայիսի 12-ից, այսինքն՝ վերջին խորհրդարանական ընտրությունների օրվանից, իսկ ես՝ այս տարվա սեպտեմբերի 21-ից: Մյուս հավանական թեկնածուներն առայժմ բավարարվել են իրենց առաջադրվելու մասին արված ոչ պաշտոնական հայտարարու-

թյուններով: Քանի որ, այսպիսով, ընտրական գործընթացն սկսված է, անհրաժեշտ եմ համարում ձեր ուշադրությունը հրավիրել մի քանի հրատապ հարցերի վրա:

1995 թվականից այսկողմ Հայաստանում անցկացված բոլոր ընտրությունները, մեղմ ասած, վիճելի եւ աղմկոտ են եղել: Բացի սուբյեկտիվ պահերից՝ իշխանությունների կամայականություններից, ընտրակեղծիքներից եւ այլն, դա ունի նաեւ մի օբյեկտիվ պատճառ, որը չհաղթահարելու դեպքում մեր երկրում երբեւէ անաղմուկ եւ վստահություն ներշնչող ընտրություններ չեն լինի: Խոսքը վերաբերում է ընտրական հանձնաժողովների ձեւավորման սկզբունքին: Թեւ արտաքուստ թվում է, թե բազմակուսակցական հանձնաժողովները համապատասխանում են ժողովրդավարության պահանջներին, բայց իրականում դրանք չեն նպաստում ազատ եւ արդար ընտրությունների անցկացմանը: Պարտված կուսակցությունները ներկայացնող հանձնաժողովի անդամները, սովորաբար, չեն ընդունում ընտրությունների արդյունքները եւ չեն ստորագրում ամփոփիչ արձանագրությունները: Զլինելով պետական պաշտոնյաներ, ընտրական հանձնաժողովների անդամները փաստորեն որեւէ պատասխանատվություն չեն կրում՝ ընտրությունների ընթացքում եւ ձայների հաշվառման փուլում թույլ տված օրինախախտումների համար:

Մինչդեռ աշխարհի համարյա բոլոր քաղաքակիրթ երկրներում ընտրություններն անցկացնում է պետությունը՝ իհարկե, ապահովելով դրանց լիակատար վերահսկողությունը թեկնածուների վստահված անձանց, կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների կողմից: Շատ երկրներում ընտրական գործառույթը սովորաբար դրվում է ներքին գործերի նախարարության վրա: Այսինքն՝ առկա է հստակ հասցեատեր, որին, ընտրախախտումների դեպքում կարելի է պատասխանատվության կանչել: Թեկուզ աշխատանքը կորցնելու վախից՝ պետական պաշտոնյաները, որպես կանոն, ընտրական հանձնաժողովներում ավելի ազնիվ եւ բարեխիղճ են աշխատում, քան ընտրությունների արդյունքների հարցում բնական շահախնդրություն ունեցող կուսակցական ներկայացուցիչները (փաստ՝ 1990 թվականի խորհրդարանական ընտրությունները): Հետեւաբար, եթե նույնիսկ առաջիկա նախագահական ընտրություններն անցկացնի Հայկ Հարությունյանի գլխավորած

համակարգը, ապա այդ ընտրություններն ավելի մաքուր եւ օրինական կլինեն, քան բազմակուսակցական հանձնաժողովների պարագայում:

Մեր իշխանության օրոք ես նման առաջարկ չէի կարող անել, որովհետեւ դա սվիններով կընդունվեր իմ ընդդիմախոսների կողմից: Հարցը ժամանակին քննարկվել է մեր կողմնակիցների շրջանակում, եւ 1999 թվականի խորհրդարանական ընտրությունների նախօրյակին Դավիթ Շահնազարյանը «Հանրապետություն» խմբակցության անունից այն հնչեցրել է Ազգային ժողովում: Ի դեպ, ՀՅԴ ղեկավարության հետ իմ ունեցած վերջին հանդիպման ընթացքում պարզվեց, որ Դաշնակցությունը նույնպես կիսում է այս տեսակետը: Այս ամենը նշելով հանդերձ, հասկանալի է, որ մինչեւ առաջիկա նախագահական ընտրությունները տվյալ փոփոխությունը հնարավոր չէ իրականացնել, ուստի առայժմ այն մնում է որպես տեսական հարցադրում, որին իմ խորին համոզմամբ, վաղ թե ուշ անդրադառնալու են մեր օրենսդիրները:

Սակայն կան հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծում: Թեեւ անցած խորհրդարանական ընտրությունները բարձր գնահատվեցին միջազգային հանրության կողմից, բայց դրանք, թերեւս, Հայաստանի պատմության ամենախայտառակ ընտրություններն էին, քանի որ ընտրակեղծիքները հողարկված էին այնպիսի ճարտարությամբ, որ ոչ մի դիտորդ չէր կարող նկատել դրանք: Ընտրությունների ընթացքում իշխանությունների կողմից կիրառվել են, մասնավորապես, հետեւյալ երկու հնարքները.

Առաջին. տպագրվել է շուրջ կես միլիոն հավելյալ քվեաթերթիկ, որոնք բաժանվել են համայնքապետարանների աշխատակիցներին, հավատարիմ գործարարներին, թաղային հեղինակություններին եւ նույնիսկ բեռնատարներին: Ընտրությունների օրը վերջիններս ավտոբուսներով ու միկրոավտոբուսներով քաղաքացիներին բերել են ընտրատեղամաս, ավտոբուսում բաժանել արդեն քվեարկած թերթիկները, եւ ձեւական քվեարկությունից ու տեղամասում տրված դատարկ քվեաթերթիկները ստանալուց հետո միայն վճարել նրանց:

Երկրորդ. տասնյակ հազարավոր մարդկանց իշխանությունները տրամադրել են կեղծ անձնագրեր կամ համապատասխան կնիքներով վավերացված գրանցման տեղեկանքներ, որոնց շնորհիվ նրանք հնարավորություն են ստացել մի քանի անգամ քվեարկել տարբեր տեղամասերում:

Նշված հանճարեղ ընտրակեղծիքները, որոնք արժանի են տեղ գրավելու արդի քաղաքագիտության դասագրքերում, ինչպես ասացի, չէին կարող նկատվել դիտորդների կամ վստահված անձանց կողմից: Սակայն, որքան էլ հանճարեղ, գոյություն ունեն չափազանց պարզ մեխանիզմներ, որոնցով կարելի է իսպառ վերացնել այդ տիպի կեղծիքները: Ձեր թույլտվությամբ, այս հանրահավաքի անունից, ես պատրաստվում եմ պաշտոնապես դիմել միջազգային դիտորդական կազմակերպություններին՝ «Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակին (ODIHR), «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովին» (PACE), «Ազգային դեմոկրատական ինստիտուտին» (NDI), ինչպես նաեւ Եւրոխորհրդի գլխավոր քարտուղարին՝ հետեւյալ խնդրանքով կամ առաջարկով.

Հորդորել կամ պարտադրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին՝ կարճ ժամկետներում մեր երկրի «Ընտրական օրենքում» կատարել երկու փոփոխություն.

ա) Առաջիկա նախագահական եւ ապագա բոլոր ընտրությունների քվեաթերթիկները, միջազգային կազմակերպությունների վերահսկողությամբ, տպագրել արտասահմանում՝ բացառելու համար հավելյալ քվեաթերթիկների տպագրման հնարավորությունը.

բ) Քվեարկության ընթացքում կիրառել շատ երկրներում ընդունված՝ ցուցամատի թանաքոտման կարգը, ինչը միակ միջոցն է միեւնույն ընտրողի կողմից կրկնակի կամ բազմակի քվեարկություն թույլ չտալու:

Բացի այդ, իմ կարծիքով, դիտորդական կազմակերպությունները պարտավոր են ընտրությունների որակն ու արդյունքները գնահատել ոչ թե քվեարկությանը նախորդող մեկ շաբաթվա եւ քվեարկության օրվա դիտարկման հիման վրա, այլ ընտրական գործընթացի շուրջ եռամսյա կտրվածքով՝ առնանգրելով եւ դատապարտելով այդ ընթացքում նկատված բոլոր խախտումները:

Եթե այս ամենը չի արվելու, ապա միջազգային դիտորդական կազմակերպությունների առաքելությունը Հայաստանում անիմաստ է դառնում, եւ նույնիսկ ավելին՝ դա նպաստում է աղաղակող կեղծիքներով ու խախտումներով անցկացված ընտրությունների լեգիտիմացմանը: Եթե նախագահի մյուս թեկնածուներն ու կուսակցությունները միանան

այս առաջարկին, ապա ես պատրաստ եմ վերոհիշյալ կազմակերպություններին դիմել համատեղ հայտարարությամբ:

Իսկ մինչ այդ, ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ մենք արդեն իսկ ստեղծել ենք ընտրական գործընթացի վերահսկման եւ օրինախախտումների գրանցման մեր մեխանիզմները: Մենք այսուհետեւ թողարկելու ենք շաբաթական տեղեկանքներ՝ մեր կողմնակիցների նկատմամբ կիրառված վարչական, ոստիկանական եւ տնտեսական բռնությունների, խոսքի ազատության սահմանափակումների, իշխանությունների կողմից նոր ձեւավորվող շարժման ակտիվիստներին ահաբեկելու փորձերի մասին: Բացի այդ, արդեն իսկ առանձին տեղեկանքներ են պատրաստված մի քանի աղաղակող գործերի՝ մասնավորապես սույն թվականի հոկտեմբերի 23-ի պրովոկացիայի, Խաչատուր Սուքիասյանի նկատմամբ ձեռնարկված տնտեսական տեռորի եւ Գյումրու «ԳԱԼԱ» հեռուստաընկերության կազմալուծման փորձի վերաբերյալ: Այդ տեղեկանքները մենք սիստեմատիկաբար ներկայացնելու ենք Հայաստանում գործող բոլոր դեսպանատներին եւ միջազգային ներկայացուցչություններին, ինչպես նաեւ՝ վերը նշված դիտորդական կազմակերպություններին:

Ուստի, դիմելով ձեզ, խնդրում ենք՝ այս տիպի բոլոր բռնարարքների, ահաբեկումների, վարչական, տնտեսական եւ հարկային ճնշումների մասին կազմել մանրամասն զրույցներ եւ ուղարկել կա՛մ «Արմատ» կենտրոն (Երեւան, Բյուզանդի 26), կա՛մ էլ՝ «Տեր-Պետրոսյանի առաջադրման քաղաքացիական նախաձեռնության գրասենյակ» (Երեւան, Եկմալյան 16): Կրկնում եմ նախորդ ելույթում արած իմ զգուշացումը՝ թող ժողովրդի կամքի վրա բռնացող ոչ մի ոստիկան, հարկային տեսուչ, համայնքապետարանի աշխատակից կամ թաղային հեղինակություն չկարծի, որ չորս ամիս հետո խուսափելու է դատական պատասխանատվությունից: Նախորդ հանրահավաքում ես հրապարակեցի այդպիսի պաշտոնյաների մի փոքրիկ ցուցակ, որում առայժմ հարկ եմ համարում ավելացնել Հարկային պետական ծառայության պետ Վահրամ Բարսեղյանի, Անվտանգության ծառայության պետ Գորիկ Հակոբյանի անունները, ինչպես նաեւ հիշեցման կարգով կրկնել Ոստիկանության Երեւանի վարչության պետ Ներսես Նազարյանի անունը, որը ոչ միայն դաս չի քաղել առաջին զգուշացումից, այլեւ դրանից հետո նույնիսկ ֆիզիկական ուժ է կիրառել թուղթիկ բաժանող երիտասարդ-

ների վրա: Եթե Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը հենց այսօր այդ ժանդարմին չհեռացնեն աշխատանքից, նշանակում է՝ իրենք են կանգնած այդ բռնության ետեւում:

Իսկ այժմ՝ եւս մի կարեւոր հարցի մասին, եւ վերջ:

Նախկին իշխանությունների ռեւանշիզմի մասին

Վերջերս մեր ընդդիմախոսների, ընդհուպ մինչեւ Հանրապետության նախագահի եւ վարչապետի կողմից շրջանառվում է այն թեզը, թե իմ առաջադրումը պայմանավորված է նախկին իշխանությունների, մասնավորապես ՀՀՇ-ի ռեւանշիստական նկրտումներով: Այս քաղաքական աբսուրդը կարող էր ծագել միայն Հայաստանի գործող վարչախմբի անդամների կամ նվիրյալների ուղեղներում: Աշխարհի բոլոր նորմալ, ժողովրդավարական պետություններում ոչ մեկի մտքով չէր անցնի պարտված քաղաքական ուժի իշխանության ձգտումը ռեւանշիզմ անվանել: Եթե որեւէ մեկն այսօր ռեւանշիստ հայտարարի, ասենք, ամերիկյան դեմոկրատներին, անգլիական պահպանողականներին կամ ֆրանսիական ու գերմանական սոցիալիստներին, ապա նա կա՛մ կկանգնի դատարանի առաջ, կա՛մ էլ հրաժեշտ կտա քաղաքական կարիերային:

Քոչարյանա-սերժական քարոզչության այս թեզը պարունակում է նաեւ մի այլ աբսուրդ: Քարոզչամեքենան իրեն դնում է ծիծաղելի վիճակում՝ չգիտակցելով, որ նախկին իշխանական համակարգին հասցեագրված որեւէ մեղադրանք ուղղակիորեն վերաբերում է նաեւ Սերժ Սարգսյանին, քանի որ վերջինս նրա առանցքային պատասխանատուներից մեկն էր: Այս առումով ավելի քան տարօրինակ են Հանրապետական կուսակցության վերջին համագումարում նախկին իշխանությունների եւ անձամբ իմ հասցեին Սերժ Սարգսյանի հնչեցրած մեղադրանքները, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ զրպարտություն կամ ինքնախոստովանություն, առավել եւս, եթե նկատի ունենանք, որ մինչեւ 1998 թվականի իշխանափոխությունը նրա շուրթերից ոչ ոք իմ դեմ ուղղված որեւէ քննադատական ակնարկ, կամ, ինչպես ասում են, «թթու խոսք» անգամ չի լսել: Թե ինչպիսի բարոյական նկարագրի տեր մարդ է հավակնում Հայաստանի նախագահի աթոռին, թողնում եմ ձեր դատողությանը: Քանի գնում, ես ավելի ու ավելի համոզվում եմ, որ իսկապես ապաշ-

խարության եւ մեղմերի թողության խնդիր ունեմ: Ուստի, թեեւ ուշացած, ամենայն անկեղծությամբ ձեզանից ներողություն եմ խնդրում՝ Ռոբերտ Քոչարյանին եւ Սերժ Սարգսյանին Հայաստան բերելու եւ ձեր վզին փաթաթելու համար: Եթե կադրային քաղաքականության հարցում ես սխալներ գործել եմ, ապա խոստովանում եմ՝ սա իմ ամենամեծ սխալն է: Ավելին, սա սխալ էլ չէ, այլ փորձանք, որ բերել եմ մեր ժողովրդի գլխին: Ուրեմն՝ թույլ տվեք, օգնեք ինձ՝ ձեզ ազատելու այդ փորձանքից:

Այս ամենն արձանագրելով հանդերձ՝ վերջնականապես հանգստացնելու համար մեր վերադարձից կամ ռեւանշիզմից սարսափողներին, այս բարձր ամբիոնից պաշտոնապես հայտարարում եմ.

Հայոց Համազգային Շարժման հայտնի դեմքերից ոչ մեկը իշխանության մեջ տեղ զբաղեցնելու եւ պետական պաշտոնների տիրելու հավակնություն չունի: Ես առաջադրվելու եմ ոչ թե որպես ՀՀՇ-ի կամ մի այլ կուսակցության թեկնածու, այլ քաղաքացիական նախաձեռնության հիմունքով: Իմ եւ ինձ սատարող բոլոր քաղաքական ուժերի նպատակը ոչ թե բարձր աթոռների բազմելն է, այլ միայնումիայն Հայաստանի ներկա հանցավոր վարչախմբի վերարտադրության խափանումը: Մեր ուզածն ընդամենը նորմալ, քաղաքակիրթ, իրավական պետություն ունենալն է, մեր ժողովրդի, մեր երեխաների ու թոռների անվտանգության, ազատության եւ բարօրության ապահովումը:

Ուստի, որպեսզի այլեւս ոչ մի կասկած չմնա, որ մենք հետապնդում ենք այլ նպատակներ, պաշտոնապես հայտարարում եմ նաեւ հետեւյալը. Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը ստանձնելուց ուղիղ երեք տարի հետո ես պատրաստ եմ ընդմիշտ հեռանալ քաղաքականությունից՝ ձեզ հնարավորություն տալով լիովին ազատ եւ օրինական ընտրությունների միջոցով երկրի նոր Նախագահ ընտրել: Ընդ որում՝ այդ ընտրություններին ես չեմ միջամտելու, դրանք անցկացնելու է Ազգային ժողովի նախագահը: Երեք տարին ինձ անհրաժեշտ է՝ Ավգյան ախոռները մաքրելու եւ պետությունը նորմալ հիմքերի վրա դնելու համար: Իսկ պետությունը նորմալ հիմքերի վրա դնելը ես հասկանում եմ որպես միջոցառումների մի լայն ծրագիր, որը ձեզ կներկայացնեմ իմ հետագա ելույթներում եւ հրապարակումներում:

Ինչպես ասում են, ես խաղում եմ բաց քարտերով՝ առանց կոնսպիրացիայի եւ գաղտնի պայմանավորվածությունների: Քաղաքական ուժերի

հետ իմ ունեցած բոլոր հանդիպումներում ես որեւէ սակարկության չեմ գնացել: Պարզապես շարադրել եմ իմ տեսակետները՝ ներկա իրավիճակից դուրս գալու անհրաժեշտության եւ ֆոչարյանական ռեժիմի վերարտադրման վտանգը կանխելու մասին: Թե՛ Ստեփան Դեմիրճյանի, թե՛ Հրանտ Մարգարյանի, Վազգեն Մանուկյանի, Բաֆֆի Հովհաննիսյանի, Արտաշես Գեղամյանի, Արթուր Բաղդասարյանի, Լյուդմիլա Սարգսյանի հետ հանդիպումներում ես նշել եմ, որ առաջիկա ընտրարշավում իմ միակ թիրախը լինելու է ներկա իշխանությունների ներկայացուցիչը: Մյուս թեկնածուների հետ ես բանավեճի մեջ չեմ մտնելու, չեմ պատասխանելու նրանց ֆննադատություններին եւ հարձակումներին:

Իսկ այժմ, անվանապես դիմելով վերը թվարկված քաղաքական գործիչներին (բացի Ստեփան Դեմիրճյանից եւ Լյուդմիլա Սարգսյանից, որոնք արդեն արտահայտել են իրենց դիրքորոշումը), դիմելով նաեւ նախագահի մնացյալ բոլոր հնարավոր թեկնածուներին, այս հանրահավաքի անունից կոչ եմ անում միանալ ֆոչարյանա-սերժական ավազակապետության դեմ ձեւավորվող համաժողովրդական շարժմանը: Մենք, այսինքն՝ անձամբ ես եւ իմ կողմնակիցները, մեզ ամբողջովին դնում ենք ձեր տրամադրության տակ: Մեզ պարզապես օգտագործեք որպես գործիք՝ հանցավոր վարչախմբից ազատվելու եւ իշխանության ձգտման ձեր օրինական իրավունքն իրացնելու նպատակով, ինչի համար ձեզանից ընդամենը պահանջվում է համբերել երեք տարի, գուցե եւ ավելի քիչ:

Եթե այս կոչն էլ մնա «ձայն բարբառոյ յանապատի», եւ եթե ընդդիմությունն ընտրություններին մասնակցի տրոհված շարքերով, ապա դա կծառայի միայն Սերժ Սարգսյանի շահերին: Կոչին չարձագանքելու պարագայում, ձեր տված ոչ մի հիմնավորում ու բացատրություն երբեւէ հասկացողություն չի գտնի ժողովրդի սրտերում: Այդ պարագայում, բնականաբար, չեղյալ կհայտարարվի նաեւ վերը նշված իմ առաջարկի եռամյա պայմանաժամկետը: Իմ հաստատակամությունն ամենեւին կախված չէ ձեր դրական կամ բացասական պատասխանից: Ես արդեն մտել եմ ջուրը եւ թրջվելուց չեմ վախենում, արդեն նետել եմ ձեռնոցը, եւ առանց աջունախ նայելու, գնալու եմ մինչեւ վերջ: Ուստի՝ Պայքա՛ր, պայքա՛ր մինչեւ վերջ:

Իսկ այժմ ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել հանրահավաքը վարող Նիկոլ Փաշինյանին եւ հանրահավաքի անցկացման ժամանակ ոստիկանության ներկայացուցիչ նշանակված, Երեւանի փոխոստիկանապետ Ալեքսանդր Աֆյանին՝ իր պարտականությունները բարեխիղճ կերպով կատարելու համար:

Բարի գիշեր:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», «Առավոտ», 17 նոյեմբերի, 2007թ.: «168 ժամ», 19 նոյեմբերի, 2007թ.: Հրատարակված նաեւ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն առանձին գրքույկներով. «Բարեկամական զրույց», Երեւան, 2007թ. – "A Friendly Talk", Yerevan-2007 – "Дружеская беседа", Ереван-2007.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ելույթ 2007թ. դեկտեմբերի 8-ի հանրահավաքում)

Սիրելի հայրենակիցներ,

Այսօրվա ելույթում ես կանդրադառնամ երեք թեմայի՝ առաջինը (երկու գլխով)՝ նվիրված պատմության, երկրորդը գաղափարախոսության, իսկ երրորդը՝ պետական համակարգերի տիպաբանության հարցերին:

Հայաստանի «արդյունաբերության քայքայումը»

Ռոբերտ Քոչարյանը վերջերս իր բարձր հեղինակությամբ վավերացրեց մեր հասարակության մեջ բազմիցս կրկնված այն միտքը, թե նախկին իշխանությունները քայքայեցին խորհրդային Հայաստանի ծաղկուն արդյունաբերությունը: Այս պնդումը թե՛ իրականություն է, թե՛ միֆ: Իրականություն է այն առումով, որ այդ արդյունաբերությունն այսօր գոյություն չունի, ինչպես վաղուց գոյություն չունի Քոչարյանի ղեկավարած Ստեփանակերտի մետաքսի գործարանը, իր լեզվով՝ «Կարշոլկի ֆաբրիկան»: Իսկ միֆ կամ առասպել է, որովհետեւ Խորհրդային Միությունը լիովին զուրկ էր ժամանակի պահանջներին եւ տեխնոլոգիական նվաճումներին համապատասխան արդյունաբերությունից: Բացի հումքից եւ մասամբ ռազմական տեխնիկայից, ԽՍՀՄ արդյունաբերությունն ի վիճակի չէր միջազգային ասպարեզ դուրս բերել որեւէ մրցունակ ապրանք: Այս հարցում ԽՍՀՄ-ը խայտառակ կերպով զիջում էր անգամ Արեւելյան Եւրոպայի կոմունիստական երկրներին: Հիշեք, թե

ինչպիսի հերթեր էին գոյանում չեխական, լեհական, հունգարական, արեւելագերմանական ապրանքներ ձեռքբերելու համար՝ սկսած հագուստից ու կոշիկից, վերջացրած գարեջրով ու խոհանոցային սալիկներով: Իսկ չեխական բյուրեղապակյա անոթներն ու ջահերը, լեհական կահույքն ու օծանելիքը, արեւելագերմանական գրամեքենաներն ու ճենապակյա սպասքները ուղղակի հրաշք եւ երազանքի առարկա էին խորհրդային քաղաքացիների համար:

Խորհրդային տնտեսությունը համաշխարհային շուկայից լիովին մեկուսացած, փակ, բանտային կամ, ավելի ճիշտ, լագերային տնտեսություն էր: Ինչպես նախնադարի բնատնտեսական համայնքներում, ցանկացած մեկուսի եւ փակ համակարգ ընդունակ է ստեղծել քիչ թե շատ կենսունակ տնտեսություն: Անձնական փորձից ինձ համար դրա ամենաուսանելի օրինակը Մոսկվայի «Մատրոսկայա տիշինա» մեկուսարանի իմ բանտախուցն է: Կարճ ժամանակում, մասնավորապես փորձառու դատապարտյալների շնորհիվ, այդ խցում ստեղծվեց հիրավի լայնածավալ արդյունաբերություն, որի մասնակիցը դարձա նաեւ ես: Գերժամանակակից այդ արդյունաբերությունը, սեփական սպառման նպատակով, արտադրում էր առաջին անհրաժեշտության հետեւյալ ապրանքները. թրջված հացի շիճուկից պատրաստված բարձրորակ սոսինձ՝ գլանակներ փաթաթելու համար, ծխախոտատուփերից ձեւված գունազարդ խաղաքարտեր, հացի խմորից ձուլված հրաշալի շախմատի քարեր, ցելոֆանե տոպրակներից ստացված վառելանյութ՝ բորբոսնած երշիկը հականեխելու համար, ջեռուցման մարտկոցների վրա չորացված պաքսիմատ, թաշկինակից ծալված աչքակապ, սրբիչից փաթաթված վզնոց եւ այլն: Բանտակիցներիս վկայությամբ՝ շատ ավելի լայն ասորտիմենտ էր ընդգրկում ուղղիչ-աշխատանքային գաղութների արդյունաբերությունը:

Խորհրդային Միությունն, ահա, մի այդպիսի բանտախուց էր, որում արգելափակված 250 միլիոն քաղաքացիները պարտավոր էին արտադրել, օգտագործել, ուտել, հագնել այն ապրանքները, որոնք կսահմաներ ամենազոր Պետպլանը: Այդ բարձրագույն ատյանն էր որոշում, թե ո՛վ, ի՛նչ եւ որքա՛ն պետք է արտադրի, ո՛ւմ եւ ի՛նչ գնով պետք է վաճառի: Հունվարի 1-ի դրությամբ արդեն նրա կողմից վաճառված էր այդ տարվա դեռեւս չարտադրված ապրանքը: Տարեգլխին արդեն հայտնի

էր, թե ուր են առաքվելու Խորհրդային Հարությունյանի դեռեւս չկարված կրծկալները՝ Միջին Ասիա, թե՞ Մոնղոլիա, որտեղ եւ ինչ քանակով է սպառվելու Լենինականի ֆաբրիկաներում արտադրվելիք տրիկոտաժեղենը՝ Կալուգայում, Նախիջեւանում, թե՞ Յակուտսկում: Դրամը (ռուբլին) ընդամենը փոխանակման պայմանական միավոր էր, որի բուն գործառույթը բարտերային առեւտրի սպասարկման եւ հաշվապահության ապահովումն էր:

Հայաստանի արդյունաբերությունն այդ լագերային տնտեսության մի հատվածն էր, եւ իսկապես համարվում էր Խորհրդային Միության ամենազարգացած արդյունաբերություններից մեկը: Սակայն տեսնենք, թե իրականում ինչպիսին էր այդ արդյունաբերությունը: Բացի թեթեւ եւ սննդի արդյունաբերության ոլորտներից, որոնց հումքը մատակարարվում էր հիմնականում դրսից, Հայաստանի տնտեսությունն, ըստ էության, վերջնական ապրանք չէր արտադրում: Ծանր արդյունաբերության բնագավառում Հայաստանը թողարկում էր ընդամենը մի քանի վերջնական արտադրանք՝ հաստոցներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, «Արագած» սառնարանը, «Երազ» ավտոմեքենան եւ այլն: Ի դեպ, 1980-ական թվականների սկզբին, խոտանի անթույլատրելի ծավալների պատճառով, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ, սառնարանը հանվեց արտադրությունից: Իսկ ինչ վերաբերում է «Երազին», ապա այն իր բացառիկ անորակության շնորհիվ, «Հայկական ռադիոյի» անեկդոտների կողմից, դարձավ խորհրդային ժողովուրդների զվարճության առարկան: Հայաստանի ծանր արդյունաբերության հիմնական զանգվածը զուտ կոմպլեկտավորող արդյունաբերություն էր, այսինքն՝ մեզ մոտ արտադրվում էին միայն առանձին դետալներ, սարքավորումներ, ագրեգատներ, որոնք մոնտաժվում եւ վերջնական արտադրանք էին դառնում Խորհրդային Միության տարբեր քաղաքներում, գլխավորապես ռազմական արդյունաբերության բնագավառում: Հայաստանի արտաքին կոոպերացիան կազմում էր շուրջ 95 տոկոս, այսինքն՝ ավելի, քան Խորհրդային Միության որեւէ այլ հանրապետությունում:

Բնական է, որ Խորհրդային կայսրության փլուզմամբ, պիտի փլուզվեր նաեւ կենտրոնացած եւ օրգանապես փոխկապակցված այդ արդյունաբերությունը: Ձեւավորվող շուկայական հարաբերությունների պայմաններում, այն այլեւս չէր կարող ապահովել մատակարարումնե-

ri կանոնավորությունը եւ դիմանալ ազատ մրցակցությանը: Պատահական չէ, որ Խորհրդային Միության փլուզումից տասնվեց տարի հետո էլ ոչ մի նախկին խորհրդային հանրապետություն դեռեւս միջազգային շուկա չի հանել որեւէ մրցունակ ապրանք՝ հումքից բացի: Ամենուրեք ֆիչ թե շատ զարգանում են միայն սննդի արտադրության, սպասարկման, շինարարության ոլորտները եւ հատկապես հանքարդյունաբերությունը, որի անխնա ինտենսիվացումը կարող է հետագայում լուրջ խնդիրների առաջ կանգնեցնել այդ երկրների բնականոն զարգացումը: Նույնիսկ Ռուսաստանի ռազմական արդյունաբերությունը, որը ժամանակին համարվում էր աշխարհի լավագույն արդյունաբերություններից մեկը, այսօր աշխատում է իր կարողությունների 30 տոկոսի չափով, այն էլ շնորհիվ պետական դոտացիաների:

Այն, ինչ ասվեց Խորհրդային Միության մասին, հավասարապես վերաբերում է նախկին սոցիալիստական լագերի բոլոր պետություններին: Դրա ամենավառ ապացույցը Արեւելյան Գերմանիայի օրինակն է: Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը սոցիալիստական ճամբարի ամենազարգացած արդյունաբերական պետությունն էր, որի կենսամակարդակը չորս անգամ գերազանցում էր Խորհրդային Միության կենսամակարդակը: Պատկերացում տալու համար, թե դա ինչ է նշանակում, պատմեմ ինքնակենսագրական մի դրվագ: 1980 թվականին ես, տիկնոջս հետ, մեկ ամիս եղա Արեւելյան Գերմանիայում: Եթե այդ ժամանակ խորհրդային քաղաքացու հիմնական հոգսը կոշիկ, կարագ, սուրճ կամ երշիկ ճարելն էր, ապա ԳԴՀ-ի քաղաքացիներին հուզում էր երեք այլ հարց՝ ինչպե՞ս ավտոմեքենա ձեռք բերել, քաղաքից որքա՞ն հեռու «դաչա» կառուցել, եւ որտե՞ղ անցկացնել ամառային հանգիստը՝ Վառնայում, թե՞ Սոչիում (արեւմտյան երկրներ նրանց մուտքն արգելված էր): Չնայած այս ամենին, սակայն, Գերմանիայի միավորումից հետո արեւելյան երկրամասերի ողջ արդյունաբերությունը, կարելի է ասել, բուլդոզերներով հավասարեցրին հողին: Անցած 18 տարիների ընթացքում նախկին Գերմանական Դեմոկրատական Հանրապետության տարածքում ներդրվեց ավելի քան 500 միլիարդ դոլար: Այնուամենայնիվ, մասնագետների գնահատմամբ, դեռեւս 50 տարի է պետք, որպեսզի Արեւելյան Գերմանիայի տնտեսության մակարդակը հավասարվի Արեւմտյան Գերմանիայի մակարդակին:

Այսպիսով, խորհրդային արդյունաբերությունը հզոր, կենսունակ ու ինքնաբավ էր թվում՝ աշխարհից մեկուսացած, ժամանակակից տեխնոլոգիաներից զուրկ, փակ, լագերային համակարգում: Այդպիսի համակարգի փլուզումն, ինքնաբերաբար, չէր կարող չհանգեցնել արդյունաբերության անխուսափելի վախճանի, ինչը այս կամ այն չափով տեղի ունեցավ Միության բոլոր նախկին հանրապետություններում: Ընդ որում, Խորհրդային տնտեսության քայքայումն սկսվել էր կայսրության փլուզումից էլ առաջ: 1988–1991 թվականներին արդեն իսկ լրջագույն խնդիրներ էին ծագել ձեռնարկությունների փոխադարձ պարտավորությունների կատարման, հումքի, պահեստամասերի, կոմպլեկտավորող սարքերի մատակարարման բնագավառներում, ձեռնարկությունների միջեւ կուտակվել էին հսկայական փոխադարձ պարտքեր, բյուջեի տարեկան ճեղքվածքը կազմում էր 400–500 միլիարդ ռուբլի, լիովին սպառվել էին պետության ոսկու պահուստները: Պավլովի վարչապետության օրոք սառեցվել էին խնայբանկերում տեղադրված ավանդները, դոլարի համեմատ ռուբլին արժեզրկվել էր մոտ հիսուն անգամ, սկսվել էր օր օրի սաստկացող սղաճը, որը շուտով պիտի հասներ ահռելի չափերի եւ այլն: Խորհրդային ծաղկուն տնտեսության մասին խոսողները, չգիտես ինչու, նաեւ մոռացության են մատնում խանութների դատարկ ցուցափեղկերն ու դարակները, կիլոմետրանոց հերթերը, մսի, կարագի, սուրճի, բրնձի, ձավարեղենի, ծխախոտի կտրոնները, էլ չխոսած այն մասին, որ նոր տարվա նախօրյակին ջերմուկ, լիմոնադ եւ թթվասեր հայթայթելը հավասարազոր էր սխրանքի:

Վերջիվերջո ժամանակն է հասկանալ, որ Խորհրդային Միությունը փլուզվեց գլխավորապես 1980-ական թվականների առաջին կեսից սկսված տնտեսական գահավիժման պատճառով: Ո՛չ մի «Ղարաբաղ կոմիտե», ո՛չ մի Բալթյան ժողովրդական ճակատ, ո՛չ մի Սախարովյան դեմոկրատական շարժում չէր կարող կայսրությունը կործանել, եթե այն ծաղկուն տնտեսություն ունենար: Այդ տնտեսության էությունը լիովին ըմբռնելու համար, կարդացեք Եգոր Գայդարի համաշխարհային ճանաչման արժանացած գրքերը:

Խորհրդային Միության բոլոր նախկին հանրապետություններին բաժին ընկած ողբալի վիճակը Հայաստանում ծանրանում էր չորս հավելյալ եւ առանձնահատուկ գործոնների՝ Աղետի գոտու, 300 հազար

փախստականների, շրջափակումների եւ պատերազմի առկայությամբ: Դնեիք այդ պայմանների մեջ որեւէ այլ պետություն, եւ կտեսնեիք, թե ինչպես կդասավորվեր նրա բախտը: Ես չեմ ուզում ծանրանալ բազմիցս չարչրկված այս գործոնների վրա, այլ կբավարարվեմ հետեւյալ հաստատումով.

Չնայած այս լրացուցիչ դժվարություններին, Հայաստանը Անկախ պետությունների համագործակցության անդամ-երկրներից առաջինն էր, որ 1994 թվականին ոչ միայն հաղթահարեց տնտեսության անկումը, այլեւ սկսեց ապահովել կայուն տնտեսական աճ, որը, ինչպես նշեցինք նախորդ հանրահավաքի ելույթում, ժամանակին գնահատել է նաեւ Ռոբերտ Քոչարյանը: Եթե սրան ավելացնենք, որ այդ նույն թվականին հաղթանակով ավարտվեց նաեւ Արցախյան պատերազմը, ապա դժվար է չհամաձայնել, որ դա մի այնպիսի սխրանք էր, որն իր նախադեպը չունի հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ:

Երեւույթները «Կարշոլկի ֆաբրիկայի» պարտկոմի կամ Կեւորկովի օգնականի տեսանկյունից գնահատողների համար, իհարկե, անհնար է ընկալել այս ամենը: Տարածելով Խորհրդային Հայաստանի ծաղկուն արդյունաբերության քայքայման միֆը, Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը ձեզանից ուզում են խլել, ահա, այդ սխրանքը, ոտնահարել ձեր արժանապատվությունը, ինչպես քոչվորաբար ոտնահարել են այս երկրի բոլոր սրբությունները:

«Վայրենի սեփականաշնորհում»

Սեփականաշնորհումը կամ մասնավորեցումը ցանկացած պետության ամենացավոտ խնդիրներից մեկն է: Աշխարհում դեռ չի եղել դեպք, որ սեփականության վերաբաշխման որեւէ լայնածավալ կամ թեկուզ մասնակի միջոցառում հասարակական շերտերում կասկածներ, դժգոհություններ եւ նույնիսկ հուզումներ չառաջացնի: Ուստի ես ամենայն հանդարտությամբ եմ վերաբերվում իբրեւ-թե մեր օրոք իրականացած «վայրենի սեփականաշնորհմանն» առնչվող խոսակցություններին, քանի որ, միեւնույն է, ամենաիդեալական սեփականաշնորհման պարագայում անգամ հնարավոր չէր լինի խուսափել այդ տիպի խոսակցություններից: Միշտ էլ կգտնվեին մարդիկ, ովքեր բաժին չստանա-

լով սեփականաշնորհման արդյունքներից, չէին հավատա իշխանությունների ազնվությանը, էլ չեմ խոսում քաղաքական շահարկումների մասին:

Այսօր, կարծում եմ, ամենահարմար ժամանակն է ներկայացնելու սեփականաշնորհման բնագավառում նախկին եւ ներկա իշխանությունների գործունեության հաշվեկշիռը: Արդ, ի՞նչ է սեփականաշնորհվել նախկին իշխանությունների օրոք.

– Գյուղատնտեսական նշանակության ողջ հողատարածքը, անասնագլխաքանակը եւ գյուղտեխնիկան, բացի հողի 20%-ը կազմող պետական պահուստից, որը նախատեսված էր աճող եւ նոր ձեւավորվող ընտանիքների համար:

– Ողջ պետական բնակարանային ֆոնդը, որը անվճար տրամադրվեց քաղաքներում եւ ավաններում գրանցված բոլոր ընտանիքներին:

– Հանրապետության բոլոր ոչ ստրատեգիական ձեռնարկությունների սեփականության 20 տոկոսը, որը անհատույց շնորհվեց այդ ձեռնարկությունների կոլեկտիվներին:

– Սեփականաշնորհման 1994–1995թթ. առաջին ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների 60 միլիարդ դրամի ընդհանուր արժողությամբ գույքը, որը 20-հազարական դրամի վաուչերներով հավասարաչափ բաշխվեց ողջ բնակչությանը:

– Շուրջ 5000 փոքր ձեռնարկություններ՝ կրպակներ, խանութներ, վարսավիրանոցներ, արհեստանոցներ եւ այլն, որոնք վաճառվեցին քաղաքացիներին՝ կոլեկտիվների համար վերապահված գնման առաջնահերթության իրավունքով:

– Սննդի ու թեթեւ արդյունաբերության մոտ 1250 միջին եւ խոշոր ձեռնարկություններ (առ 01.01.1998թ.), որոնք թեեւ թվով կազմում էին Հայաստանի այդ մասշտաբի ձեռնարկությունների 60 տոկոսը, բայց արտադրական ծավալով՝ միայն շուրջ 40 տոկոսը, այն էլ՝ չընդգրկելով ստրատեգիական նշանակության ոչ մի ձեռնարկություն, բացառությամբ Հայոուսգազարդի գործարքի, որի մասին կխոսվի ստորեւ:

Առանձնահատուկ խոսակցության առարկա է նախկին իշխանությունների իրականացրած հողի սեփականաշնորհումը կամ ագրարային ռեֆորմը: Հայաստանը միութենական հանրապետություններից առաջինն էր, որ դեռեւս 1991 թվականին, Խորհրդային կայսրության

գոյության պայմաններում, կյանքի կոչեց այդ բարեփոխումը՝ երկիրն, առանց չափազանցության, փրկելով սովից: Դա պարզվեց մանավանդ այն բանից հետո, երբ 1992թ. օգոստոսին փակվեց Աբխազական երկաթուղին, եւ Հայաստանի շրջափակումը լիակատար դարձավ: Ստեղծվել էր այնպիսի մի վիճակ, երբ արտասահմանում գնված սննդամթերքի բեռներ ունենալու պարագայում անգամ, Հայաստանը, հաղորդակցության ճանապարհների բացակայության պատճառով, ի վիճակի չէր ներկրել դրանք: Մեզ հաջողվեց մասամբ հաղթահարել շրջափակումը եւ Թուրքիայի ճանապարհով Հայաստան փոխադրել ավելի քան 50 հազար տոննա ցորեն, բայց դա ընդամենը երկու ամսվա պաշար էր: 1993-ի մարտին, Քելբաջարի գրավումից հետո, փակվեց նաեւ Թուրքիայի ճանապարհը, եւ մենք հարկադրված եղանք մեր կարիքների գոնե մի մասը բավարարել Փոթիի նավահանգստի եւ համարյա անգործության մատնված Վրացական երկաթուղու հնարավորությունների օգտագործման միջոցով: 1992–1994 թվականներին երկիրը համարյա ամբողջությամբ մնաց գյուղացու հույսին, որը, թեկուզ զուտ մկանների հաշվին, քիչ թե շատ կերակրեց ոչ միայն իրեն, այլեւ քաղաքներում բնակվող իր հարազատներին: Եթե ժամանակին չիրականացվեր հողի սեփականաշնորհումը, ապա գյուղական նոմենկլատուրան թալանած կլիներ կոլխոզների ու սովխոզների սեփականությունը (ինչպես տեղի ունեցավ այլ հանրապետություններում), եւ Հայաստանը ցրտից ու մթից բացի անխուսափելիորեն կմատնվեր նաեւ սովի: Այդ պարագայում, ինքնըստինքյան հասկանալի է, ոչ միայն կվտանգվեր մեր երկրի գոյությունը, այլեւ անհնար կդառնար թե՛ պատերազմի հաղթական ավարտը, թե՛ Արցախի ազատագրումը: Ուստի, եթե այսօր Հայաստանը կանգուն է, եթե այսօր Արցախն ազատ է, ապա դրա համար մենք առաջին հերթին պարտական ենք սեփականատեր հայ գյուղացու առայժմ չգնահատված սխրանքին:

Իսկ այժմ տեսնենք, թե ի՞նչ է սեփականաշնորհվել ներկա իշխանությունների օրոք.

– Ծանր արդյունաբերության շուրջ 750 միջին եւ խոշոր ձեռնարկություններ, որոնք, ինչպես վերը նշվեց, կազմում էին Հայաստանի արտադրական ծավալների մոտ 60 տոկոսը: Դրանց թվում ընդգրկված էին նաեւ ստրատեգիական նշանակության համարյա բոլոր ձեռնարկու-

թյունները, ինչպես, օրինակ, հիդրոէլեկտրակայանները, էներգետիկ ցանցը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, քաղաքացիական ավիացիան, Արմենթելը, Կոնյակի գործարանը եւ այլն:

– Հայաստանի համարյա բոլոր շահագործվող եւ նույնիսկ միայն հետազոտված հանքերը, որոնք շնչին գներով վաճառվել են հիմնականում երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ մասամբ օտարերկրյա սեփականատերերի:

– Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատարածքի 20 տոկոսը կազմող պետական պահուստը, որը նույնպես սիմվոլիկ գնով բաշխվել է պետական պաշտոնյաների միջեւ:

– Քաղաքների, մասնավորապես Երեւանի՝ շինարարական աշխատանքների համար պիտանի բոլոր տարածքները, ներառյալ զբոսայգիներն ու կանաչ գոտիները:

– Պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող համարյա բոլոր շինություններն ու հողատարածքները, բացի մի քանի հարյուր վարչական շենքերից, որոնք առայժմ չեն հանվել վաճառքի:

– Հանրապետության հանգստի գոտիների, մասնավորապես Ծաղկաձորի, Սեւանի ավազանի, Դիլիջանի, Հանքավանի, Աղվերանի անտառներն ու անտառտնտեսությանը պատկանող գույքն ու շինությունները եւ այլն:

– Այս ամենին պետք է գումարել նաեւ «գույք պարտքի դիմաց» հայտնի գործարքը, որով Հայաստանը Ռուսաստանին հանձնեց «Մարս» արտադրական միավորումը, «Մերգելյան» ինստիտուտն ու գործարանը, Հրազդանի ՋԷԿ-ի անավարտ բլոկը եւ Նյութաբանության գիտաարտադրական ձեռնարկությունը՝ հետագայում, այլ դրդապատճառներով դրանց թվում ընդգրկելով նաեւ Սեւան-Հրազդան կասկադը եւ Արմավիրի ատոմակայանի ֆինանսական կառավարման իրավունքը: 100 միլիոն դոլարի պարտքը այն գումարը չէր, որի վճարման հարցը հնարավոր չլիներ լուծել Ռուսաստանի հետ: Տվյալ գործարքում Ռուսաստանը որեւէ մեղք չունի, եւ միանգամայն անտեղի են նրա հասցեին հնչող տարբեր տիպի դժգոհությունները: Ինչպես հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, գործարքի նախաձեռնողները եղել են Հայաստանի իշխանությունները: Նրանց այդ քայլին մղել է, ըստ երեւույթին, ռուսական պարտքի տոկոսները վճարելու հոգ-

սից ազատվելու եւ իրենց գործը հեշտացնելու միտումը՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, թե այդ անհեռատես ու անպատասխանատու քայլով ինչպիսի վնաս են հասցրել հայ-ռուսական բարեկամական հարաբերություններին:

Հարկ է հատուկ կանգ առնել նաեւ «Հայռուսգազարդի» գործարքի վրա, որը թեեւ կնքվել է նախկին իշխանությունների օրոք, բայց հետագայում, Քոչարյանի տերմինով, ունեցել է որոշ «հետաքրքիր» զարգացումներ: 1997 թվականին ստորագրված պայմանագրի համաձայն՝ «Ռուսգազարդին» բաժին էր ընկել համատեղ ընկերության կապիտալի 45 տոկոսը, «ԻՏԵՐԱ»-ին՝ 10 տոկոսը, իսկ հայկական կողմին՝ մնացյալ 45 տոկոսը, ի դիմաց նախկին «Հայգազի» գույքի արժեքի: Ռուսական կողմն իր մասնաբաժինը պարտավորվել էր վճարել գազով, որը չորս տարի պիտի ձրի մատակարարվեր Հայաստանին: Հանրապետության ներկա իշխանություններն այդ գազամանկն սպառեցին երկու տարում, որից հետո Ռոբերտ Քոչարյանը կառավարության նիստերից մեկում զայրացած բարձրացրեց այն հարցը, թե ուր է Հայաստանում վաճառված գազից ստացված 148 միլիոն դոլարը: Դրանից հետեւում է, որ ձրի ստացված գազը երկու տարի վաճառվել է հանրապետության բնակիչներին ու ձեռնարկություններին, իսկ վաճառքի դիմաց առաջացած աճուրդի գումարը՝ գրպանվել իբրեւ-թե Քոչարյանին անհայտ մարդկանց կողմից: Սակայն նախագահի բարձրացրած հարցը մնաց հարց, քանի որ դրանով չզբաղվեց ո՛չ ֆինանսների նախարարության վերահսկողական վարչությունը, ո՛չ էլ դատախազությունը: Եւ այդպես էլ մինչեւ օրս անհայտ է, թե ինչ ավարտ ունեցավ այդ չարաբաստիկ 148 միլիոն դոլարի պատմությունը: Ուստի կարծում եմ, այժմ արդեն մեր հերթն է հարց տալու. «Պարոն նախագահ, ո՞ւր է այդ 148 միլիոն դոլարը»: 2006 թվականին, երբ գազի գնի շեշտակի բարձրացումից հետո Հայաստանն սկսեց նոր պարտքեր կուտակել «Ռուսգազարդի» մատակարարումների դիմաց, մեր իշխանությունները, կրկին իրենց գործը հեշտացնելու համար, համաձայնեցին վերանայել «Հայռուսգազարդի» մասնաբաժինները: Այժմ այդ ընկերությունում «Ռուսգազարդն» արդեն ունի 57,59 տոկոս, «ԻՏԵՐԱ»-ն՝ 7,7 տոկոս, իսկ հայկական կողմը 34,7 տոկոս: Սակայն անգամ այս պայմաններում գազի գնման դիմաց Հայաստանի պարտքերը շարունակում են կուտակվել, որոնք բնակա-

նաբար մնալու են հաջորդ կառավարությունների, իսկ վերջին հաշվով, ժողովրդի ուսերին:

Սեփականաշնորհման բնագավառում ներկա իշխանությունների կատարած ամենամեծ հանցանքը տնտեսության համարյա լիակատար մոնոպոլիզացիան է, ինչի պատճառով գրեթե վերացման եզրին է հասել փոքր բիզնեսը: Միջին խավը ներկայացնող ձեռնարկատերերի եւ գործարարների մեծ մասը, վաղուց արդեն կորցնելով իր անկախությունը, ընկել է մեծածախ առեւտրով զբաղվող մենաշնորհային ընկերությունների ցանցը: Խանութների, բենզալցակայանների, սպասարկման ոլորտի հիմնարկների շուրջ 70 տոկոսի իրական տերերն արդեն այդ ընկերություններն են: Սերժ Սարգսյանի գլխավորած կառավարությունը որոշել է հանրապետության միջին խավին հասցնել վերջին կործանիչ հարվածը՝ 2008թ. հունվարի 1-ից դադարեցնելով «Պարզեցված հարկի օրենքի» գործողությունը, որը տարածվում էր մոտ 30 հազար ձեռնարկությունների վրա: Անկախ այն բանից, թե տնտեսագիտորեն որքանով է հիմնավորված այդ որոշումը, տվյալ իրավիճակում դրա կիրառման անմիջական դրդապատճառն ակնհայտ է, այն է՝ ավելի ծանրացնել միջին խավին պատկանող ձեռնարկությունների հարկային բեռը, իսկ խոշոր հարկատուների անօրինական մուծումները ծառայեցնել նախընտրական նպատակներին: Թե ինչ աղետալի հետեւանքներ կարող է ունենալ այս կամայականությունը, կառավարությանն այսօր բոլորովին չի հուզում:

Ինչպես տեսանք, նկատի ունենալով արդյունաբերության եւ պետական գույքի բնագավառները, Հայաստանի ներկա իշխանությունները շուրջ երկու անգամ ավելի ունեցվածք են սեփականաշնորհել, քան նախկինները: Այստեղ, ի դեպ, որեւէ կրիմինալ չկա: Ընդհակառակը, ներկա իշխանությունները դրվատանքի են արժանի՝ սեփականաշնորհման գործընթացը ավարտին հասցնելու համար: Կրիմինալը ջրի երես է դուրս գալիս այն ժամանակ, երբ քննում ենք, թե ինչպե՛ս է իրականացել այդ սեփականաշնորհումը, որքանո՛վ է այն համապատասխանել օրենքի տառին, ի՛նչ գնով են վաճառվել ձեռնարկությունները, որքա՛ն թափանցիկ եւ օրինական են եղել աճուրդները, սեփականաշնորհումից ստացված գումարների ո՛ր մասն է մտել պետական բյուջե, սեփականաշնորհման գործընթացում ի՛նչ դեր է խաղացել հովանավորչությունը եւ այլն:

Հեռուն չգնալու համար՝ փորձեմ հիշել կամ պարզել, թե ինչպիսի՛ աճուրդների միջոցով եւ ի՛նչ գնով են վաճառվել Հայաստանի ձեռնարկությունները, կամ ո՛ւմ են պատկանում, ասենք, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, Արարատի եւ Հրազդանի ցեմենտի գործարանները, Հայկական ավիացիան, Արդշինինվեստբանկը, Խնայբանկը, հանրապետության էլեկտրացանցերը, «Կապույտ Սեւան» հանգստարանը, «Լեչկոմիսիա» եւ «Սուրբ Աստվածամայր» հիվանդանոցները, Սեւանի «Սերֆինգ կլուբ» հյուրանոցային համալիրը, երկրի համարյա բոլոր սեփականաշնորհված վարչական շենքերը, Երեւանի ամենաարժեքավոր հողատարածքները, քաղաքային եւ միջքաղաքային երթուղային գծերը եւ այլն:

Փորձեմ հիշել կամ պարզել նաեւ, թե ո՛ր կենդանակերպի նշանի տակ ծնված երջանիկին են պատկանում թեկուզ Խորհրդային Հայաստանի վարչական միավորներից մեկի՝ Արտաշատի շրջանի հետեւյալ ձեռնարկությունները. Արտաշատի գինու գործարանը, նույն քաղաքի մեխանիկական գործարանը, Շահումյան գյուղի շարժական մեքենայացված շարասյունը, այդ գյուղում տեղակայված գյուղշին 5-րդ տրեստի ավտոպարկը, Արտաշատի «Սիրիուս» գործարանը, Արտաշատի կենցաղսպասարկման շենքը՝ վերածված կազինոյի, «Արտաշատ» գաստրոնոմը, Արտաշատի հին բաղնիքը, նույն քաղաքի հյուրանոցի ռեստորանը, Մխչյան գյուղի գինու գործարանը, շրջանի բոլոր գազալցակայանները, Մխչյանի ավտոձեռնարկությունը, Մխչյանի բետոնի գործարանը, Արաքս գետի երեք ավազահանքեր, հազարավոր հեկտար կազմող հողատարածքներ ու հանքավայրեր Նարեկ, Քաղցրաշեն, Ուրցաձոր, Գոռավան գյուղերում եւ Արարատի մարզի այլ բնակավայրերում:

Փորձեմ պարզել այս ամենը, ինչպես նաեւ բյուրավոր նման դեպքեր, եւ ձեզ համար շոշափելի կդառնա, թե իրենից ինչ է ներկայացնում քոչորայանական սեփականաշնորհումը, եւ թե որքան «բարեկիրթ» է այն՝ նախկինների օրոք իրականացված «վայրենի» սեփականաշնորհման համեմատ: Ի դեպ՝ ավելորդ չէ նշել, որ նախկին իշխանությունների օրոք իրականացված սեփականաշնորհման հետ կապված համարյա ոչ մի գործարք կամ որոշում չի վերանայվել կամ չեղյալ հայտարարվել ներկա իշխանություններին ենթակա դատարանների կողմից: «Վայրե-

նի» սեփականաշնորհման առասպելի ավելի սպառիչ հերքում՝ դժվար է պատկերացնել:

Հայոց ցեղասպանության վերաիմաստավորման անհրաժեշտության մասին

Պատասխան չգտնելով իմ նախորդ ելույթների դրույթների դեմ, Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը օրերս հայտնաբերել են ինձ ոչնչացնելու ամենաարդյունավետ միջոցը, այն է՝ ինձ «թրամետ» հռչակելու մահացու խարանը: Նրանց թվում է, թե ինձ հասցրել են թնդանոթի հարված, որից հետո ժողովուրդն ինձ պիտի հոշոտի, կամ որից ես երբեւէ ուշքի չեմ գալու: Ավելի մեծ հաճույք պատճառելու համար իմ նախկին ընկերներին, ստորեւ կփորձեմ ջուր լցնել նրանց ջրաղացին եւ բազմաթիվ նոր ապացույցներ մատակարարել իմ «թրամետության» մասին: Մինչ այդ, սակայն, չեմ կարող չհիշեցնել, որ «թրամետության» մասին խոսում են մարդիկ, ովքեր իրենց գիտակցական կյանքի տեւական մի հանգրվանում ստորաքարշորեն ծառայել են թուրքերին:

Սկսեմ նրանից, որ հանրահավաքի մասնակիցներից շատերի նման՝ ես եւս Հայոց ցեղասպանությունը վերապրածների շառավիղ եմ: Պապս մասնակցել է Մուսա-լեռան հերոսամարտին: Յոթնամյա հայրս ուտելիք եւ ջուր է կրել դիրքեր: Իսկ մայրս այդ օրերին ծնվել է քարանձավում: Եթե ֆրանսիական նավատորմը պատահաբար չանցներ Մուսա-լեռան ափերով, ապա ես գոյություն չէի ունենա եւ, ի հրճվանս Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի, այսօր չէի խոսի այս հարթակից: Իմ գերդաստանի երեք սերունդ այս կամ այն կերպ պայքարել է թուրքերի դեմ: Ասվեց արդեն, որ պապս մասնակցություն է ունեցել Մուսա-լեռան հերոսամարտին: Ավելի վաղ, 1896 թվականին, Զեյթունի ապստամբությունից հետո, նա վեց ամիս անցկացրել է թուրքական բանտերում: Հայրս 1939-ին գլխավորել է Ալեքսանդրեթի սանջակը Թուրքիային հանձնելու ծրագրի դեմ ուղղված հայկական շարժումը: Իսկ ես 1966-ին, Ցեղասպանության տարեդարձի առթիվ կազմակերպված ցույցի ժամանակ, ձերբակալվել եւ շուրջ մեկ շաբաթ բանտարկվել եմ Երեւանի բերդում, երբ Քոչարյանն ու Սարգսյանը ցեղասպանություն բառն անգամ չէին լսել:

Ինձ «թրամետ» են անվանում այն պատճառով, որ իմ նախագահության օրոք ես բազմիցս պնդել եմ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը եւ, որ իբր երբեէ չեմ բարձրացրել Ցեղասպանության ճանաչման հարցը: Փաստերից առաջինը ստույգ է, քանի որ իսկապես պնդել եմ եւ այսօր էլ կարեւորում եմ հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորումը, իսկ երկրորդը, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը: Իմ իշխանության օրոք է կառուցվել Ցեղասպանության Երեւանի թանգարանը: Առաջին անգամ Հայաստանում ե՛ս եմ կազմակերպել Ցեղասպանությանը նվիրված հեղինակավոր միջազգային գիտաժողով, որը տեղի է ունեցել 1995 թվականին, եւ որին մասնակցել են համաշխարհային ճանաչում ունեցող բազմաթիվ մասնագետներ: Սկսած Հայաստանի առաջին հանրապետությունից մինչեւ օրս, ե՛ս եմ եղել մեր երկրի միակ գործող ղեկավարը, որը, թեեւ սեղմ, բայց համակողմանի քաղաքական գնահատական է տվել Ցեղասպանությանը (Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Երեւան, 2006, էջ 477–481):

Ճիշտ է, սակայն, որ այս ամենով հանդերձ, Ցեղասպանության ճանաչումը ես չեմ դրել Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում, դա համարելով անժամանակ ու վտանգավոր, ինչը կփորձեմ հիմնավորել քիչ հետո: Ի տարբերություն ինձ, Հայաստանի երկրորդ նախագահը այդ հարցն անմիջապես դարձրեց հանրապետության արտաքին քաղաքականության անկյունաքարը եւ իշխանավարության առաջին իսկ օրվանից սկսեց հետեւողական քայլեր կատարել այդ ուղղությամբ: Ո՞րն էր այս նոր քաղաքականության տրամաբանությունը: Դա պարզաբանելու համար ես կրկին ստիպված եմ դիմելու հուշապատումի օգնությանը: 1997 թվականին, երբ ես վարչապետ Քոչարյանին առաջարկեցի գլխավորել «Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգման պետական խորհուրդը», նա հրաժարվեց՝ պատճառ բռնելով այն հանգամանքը, որ խորհրդի գործունեության ծրագրում բացակայում է Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ կետը: Երբ ես, «Հայաստան համահայկական հիմնադրամի» տնօրեն Մանուշակ Պետրոսյանի ներկայությամբ, խնդրեցի հիմնավորել իր տեսակետը, Քոչարյանն ասաց բառացիորեն հետեւյալը. «Ես չգիտեմ, թե ինչ բան է ցեղասպանությունը, բայց հաստատ գիտեմ, որ դա պետք է Սփյուռքին: Եթե մենք

մտցնենք այս կետը, ապա Սփյուռքը կոգեւորվի եւ ավելի մեծ նյութական օժանդակություն կցուցաբերի Հայաստանին: Ավելին, եթե Հայաստանը պաշտոնապես ներկայացնի Ցեղասպանության ճանաչման պահանջը, ապա Թուրքիան տեղի կտա եւ մեկ տարուց կբացի հայ-թուրքական սահմանը: Բացի այդ, նա ավելի անկողմնակալ դիրք կգրավի Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում եւ այլեւս ջանասիրաբար չի պաշտպանի Ադրբեջանի դիրքորոշումը»:

1998 թվականի սեպտեմբերին Ռոբերտ Քոչարյանը ՄԱԿ-ի ամբիոնից բարձրացրեց Ցեղասպանության ճանաչման հարցը, ինչը թեեւ պալատական ներբողագիրների կողմից գնահատվեց որպես աննախադեպ քաջագործություն, բայց այդպես էլ մնաց որպես մերկապարանոց եւ անհետեւանք հայտարարություն: Եթե նշված ճղճիմ ու պրիմիտիվ քաղաքական հաշվարկներն էին ընկած Քոչարյանի որդեգրած դիրքորոշման հիմքում, ապա դա կարող է նշանակել միայն մեկ բան, այն է՝ տրորել, պղծել մեր ազգային մեծագույն ողբերգությունը, այն դարձնել անպարկեշտ սակարկությունների առարկա, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի նախագահի վերոհիշյալ կանխատեսումներից ոչ մեկը մինչեւ օրս այդպես էլ իրականություն չի դարձել: Որ ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի հնչեցումը սոսկ ներքին սպառման կարիքները բավարարելուն, այսինքն՝ հայության աչքում հերոս երեւալուն միտված տղայամտություն էր, պարզ է դառնում նրանից, որ Քոչարյանի հայտարարությանը չհետեւեց ոչ մի գործնական քայլ: Ավելի լուրջ մտադրություններ ունենալու պարագայում՝ Քոչարյանն ու Օսկանյանը պարտավոր էին, ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված արարողակարգով, Ցեղասպանության ճանաչման նպատակով կոնկրետ գործընթաց սկսել, որի արդյունքը պիտի հանդիսանար այդ կազմակերպության կողմից ընդունված համապատասխան բանաձեւը: Որպես ՄԱԿ-ի լիիրավ անդամ, Հայաստանն ուներ այդ իրավունքը, բայց, չգիտես ինչու, չօգտվեց դրանից, բավարարվելով ընդամենը հարցի արծարծման պարզունակ իմիտացիայով: ՄԱԿ-ը մամուլի ակումբ չէ, ուր գնում են հայտարարություններ անելու, այլ հեղինակավոր իրավա-քաղաքական ատյան, որտեղ պետությունները կոնկրետ հարցեր են լուծում:

Եւ ընդհանրապես, Հայաստանի ներկա իշխանությունները գործնական խաղաղականությունը չեն տարբերում հայտարարություններից ու հոխորտանքներից, մոռանալով, որ խաղաղականությունը ոչ թե խոսք է, այլ նախեւառաջ ու միայնումիայն՝ գործ: Երբ ազդարարում են, որ Ղարաբաղը մերն է, նրանց թվում է, թե հարցն արդեն լուծված է: Երբ պնդում են, որ Ղարս-Ախալքալաք երկաթուղին չպիտի կառուցվի, նրանք կարծում են, թե այդպես էլ պիտի լինի: Երբ պահանջում են, որ ամերիկյան կոնգրեսը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, համոզված են, որ այդ մարմինը պիտի կատարի իրենց պահանջը: Երբ Թուրքիային թելադրում են բացել հայ-թուրքական սահմանը, կասկած չունեն, որ մեր հարեւանը պիտի ենթարկվի այդ թելադրանքին: Երբ Ադրբեջանին հորդորում են զերծ մնալ միլիտարիստական ռիտորիկայից, մտածում են, որ վերջինս կանսա իրենց հորդորին:

Վերջին տաս տարում Հայաստանի արտաքին քաղաքականությունն, ահա, այսպիսի դատարկ, գավառական, անիմաստ հայտարարությունների մի շարան է: Իշխանությունները չեն իսկ անդրադառնում, թե դրանով ինչպիսի ծիծաղելի վիճակի մեջ են դնում թե՛ իրենց, թե՛ մեր երկիրը: Տպավորություն է ստեղծվում, թե նրանք պետությունը շփոթում են Ստեփանակերտի ԺԷԿ-ի կամ Բուրջ-Համմուդի թաղապետարանի հետ: Երբ իրենց հայտարարությունների ձեռքը կրակն ընկած Ռոբերտ Քոչարյանն ու Վարդան Օսկանյանը հայտնվում են անհարմար վիճակներում, պատճառաբանում են, թե ճիշտ չեն հասկացվել, կամ իրենց խոսքերը սխալ են թարգմանվել: Ո՞վ է երբեւէ, անհոդաբաշխ բարբաջանքներից ու հոխորտալից հայտարարություններից բացի, նրանց շուրթերից որեւէ կշռադատված, տրամաբանական վերլուծություն կամ ծրագրային ելույթ լսել արտաքին քաղաքականությանը վերաբերող խնդիրների մասին: Ե՞րբ են նրանք իրենց հստակ տեսակետը ներկայացրել արտաքին քաղաքականության այնպիսի կենսական եւ հրատապ հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են, ասենք, Ղարաբաղյան հակամարտության լուծումը, Հայաստանի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը եւ թեկուզ Ցեղասպանության ճանաչման խնդրի հետապնդումը, որի նպատակը հայտնի չէ ո՛չ ժողովրդին, ո՛չ էլ նույնիսկ իրենց:

Ազնիվ լինելու դեպքում ներկա իշխանությունները պետք է ընդունեին, որ մեր արտաքին քաղաքականությունը վերջին տաս տարում լիակատար ձախողման կամ կրախի է մատնվել: Ամերիկյան կոնգրեսից պահանջում էին ուժի մեջ թողնել Ադրբեջանի դեմ կիրառված պատժամիջոցներին վերաբերող 907 բանաձևը, բայց կոնգրեսը չեղյալ հայտարարեց այն: Նույն մարմնին պաշտոնապես կոչ էին անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, եւ տեսանք, թե դա ինչ արդյունք ունեցավ: Թուրքիային հորդորում էին մեզ հետ հարաբերությունները չպայմանավորել հայ-ադրբեջանական հակամարտության գործոնով ու բացել ընդհանուր սահմանը, սակայն ոչինչ չստացվեց: Սկզբնապես Թուրքիայի առջեւ պայման էին դնում ճանաչել Ցեղասպանությունը, բայց հետո հրաժարվեցին դրանից, համաձայնելով՝ այդ երկրի հետ հարաբերությունները կարգավորել առանց նախապայմանների: Համաշխարհային հանրությանը թելադրում էին թույլ չտալ Ղարս-Ախալքալաք երկաթուղու կառուցումը, բայց դա արդեն իրականություն է դառնում: Ընդդիմանում էին Ախալքալաքում տեղակայված ռուսական բազայի դուրսբերմանը, սակայն այդ բազան այլեւս գոյություն չունի: Հոխորտում էին, թե Հայաստանը դեռ 100 տարի էլ կարող է զարգանալ շրջափակման պայմաններում, բայց շարունակ բողոքում են շրջափակումներից: Պնդում էին, որ հայերն ու ադրբեջանցիներն օրգանապես անհամատեղելի ազգեր են, բայց գիշեր-ցերեկ խոսում են հաշտությունից: Հայտարարում էին, որ Ղարաբաղի հարցը մեզ համար արդեն լուծված է, բայց, չգիտես ինչու, չեն հրաժարվում բանակցություններից: Փորձում էին խափանել ԵԱՀԿ գագաթնաժողովի անցկացումը Ստամբուլում, բայց գլխիկոր մասնակցեցին այդ գագաթնաժողովին, ու դեռ ավելին, ստորագրեցին նրա ընդունած հայտնի խարտիան, այդպիսով պետական մակարդակով ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Մի խոսքով, դիվանագիտական խայտառակ պարտությունների մի ամբողջ շարան, որոնք խոստովանելու կամ նույնիսկ ըմբռնելու ունակությունը դուրս է Քոչարյանի եւ Օսկանյանի կարողության սահմաններից:

Ի՞նչ կարիք կար ներքաշվել գործընթացների մեջ, որոնք կախված չեն Հայաստանի կամքից, կամ հավակնել դերակատարումների, որոնք վեր են նրա հնարավորություններից: Այդպիսի անխոհեմության ամենավառ օրինակն է մեր միջամտությունը Եւրոմիության եւ Թուրքիայի

հարաբերությունների կառուցման գործընթացին: Մի՞թե հասկանալի չէ, որ Հայաստանը ո՛չ կարող է նպաստել, ո՛չ էլ խոչընդոտել Թուրքիայի անդամակցությանը Եւրոպական Միությանը: Մեր ի՞նչ գործն էր, ուրեմն, նամակներ հղել Բրյուսել՝ պահանջելով չսկսել Եւրոմիություն-Թուրքիա բանակցությունները կամ վերջինիս առջեւ նախապայման դնել՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Մեզ համար ո՞րն է գլխավոր՝ պատշաճ կերպով չձեւակերպված մի սկզբունք, թե՞ Հայաստանի կոնկրետ պետական շահը: Եւրոպան, եթե ցանկանար, այդ նախապայմանը կդներ առանց մեր խնդրանքի, եւ հավատացած եղեք, այդպես էլ վարվել է: Եթե Եւրոմիությունն այսօր տարբեր պատրվակներով ձգձգում է Թուրքիայի հետ բանակցությունները եւ նորանոր պայմաններ առաջարկում նրան, դա ընդամենը նշանակում է, որ առայժմ պատրաստ չէ իր կազմում ընդգրկել այդ երկիրը: Երբ պատրաստ լինի, կբավարարվի Թուրքիայի բացատրություններով եւ մի կողմ կդնի սուր տարաձայնությունները, այդ թվում՝ Ցեղասպանության հարցը:

Հայաստանի իշխանությունների՝ անմեղսունակության հասնող պահվածքն այս հարցում տարօրինակ է նաեւ մեկ այլ առումով: Մի կողմից կեսբերան հայտարարելով, թե համաձայն են Թուրքիայի անդամակցությանը Եւրոմիությանը, մյուս կողմից նրանք, ինչպես տեսանք, անում են ամեն ինչ՝ դա վիժեցնելու համար: Ինչո՞վ բացատրել այս երկակի խաղը: Մի՞թե ակնհայտ չէ, որ Թուրքիայի անդամակցությունը Եւրոմիությանը՝ Հայաստանին ձեռնտու է բոլոր առումներով՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, թե՛ ապահովական: Ո՞րն է ավելի վտանգավոր՝ Եւրոմիության անդամ Թուրքիան, թե՞ Արեւմուտքից մեկուսացված, հայացքը դեպի Արեւելք շրջած Թուրքիան: Կամ ո՞րն է ավելի նախընտրելի՝ Արեւմուտքից մեկուսացած Հայաստանը, թե՞ Եւրոմիությանը սահմանակից Հայաստանը: Մեր երկրի արտաքին քաղաքականությունը վաղուց պիտի պատասխանած լիներ այս պարզ հարցերին: Ի դեպ, իմ տպավորությամբ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Սերժ Սարգսյանն ավելի լրջմիտ եւ իրատես է, քան Ռոբերտ Քոչարյանը, քանի որ չի տառապում վերջինիս նարցիսիզմով:

Ի՞նչ պիտի անեին Հայաստանի իշխանությունները՝ Եւրոմիությանը Թուրքիայի անդամակցությանը խոչընդոտելու փոխարեն: Պիտի անեին իրենց արածի ճիշտ հակառակը: Այսինքն՝ պետք է բարի կամք դրսեւո-

ռեին եւ ոչ մի կերպ չխանգարեին այդ գործընթացին: Ավելին, պետք է Բրյուսելից պահանջեին չշահարկել Ցեղասպանության ճանաչման հարցը՝ հայ-թուրքական հարաբերությունների այդ բարդ կնճռի լուծումը թողնելով կողմերին: Ժամանակն է վերջապես հասկանալ, որ վերջնագրեր ներկայացնելով կամ անկյուն սեղմելով, ոչ ոք չի կարող Թուրքիային պարտադրել՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բոլորովին չեմ կասկածում, որ Թուրքիան վաղ թե ուշ անելու է այդ բանը: Բայց դա տեղի է ունենալու ոչ թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից առաջ, այլ մեր երկրների միջեւ բարիդրացիության, համագործակցության եւ վստահության մթնոլորտի ձեւավորումից հետո: Հետեւաբար, զգացմունքները մի կողմ թողնելով, այդ հարաբերությունները պետք է կառուցել մեկնելով այն իրողությունից, որ 1915 թվականի իրադարձությունները Հայաստանը համարում է Ցեղասպանություն, իսկ Թուրքիան՝ ոչ: Մեզ համար անընդունելի եւ վիրավորական է հայ եւ թուրք պատմաբանների հանձնախումբ ստեղծելու մասին արված հայտնի առաջարկը, քանի որ դա նախ՝ կասկածի տակ է դնում մեր համազգային համոզումը, եւ երկրորդ՝ բազմաթիվ երկրների խորհրդարանների կողմից Ցեղասպանության ճանաչման կայացած փաստն այլեւս ավելորդ ու ժամանակավրեպ է դարձնում նման հանձնախմբի ստեղծումը:

Այն ամենն, ինչ ասվեց Հայաստանի մասին, բոլորովին չի վերաբերում Սփյուռքին: Ցեղասպանության ճանաչման, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Հայաստանն ունի իր ըմբռնումն ու օրակարգը, Սփյուռքն՝ իրենը: Հայաստանը չի կարող եւ իրավունք չունի Սփյուռքին թելադրել իր ըմբռնումն ու օրակարգը: Աշխարհացրիվ հայ ժողովրդի զավակները, որպես տարբեր երկրների քաղաքացի, հարկատու եւ ընտրող, իրավունք ունեն ենթադրում բանեցնելու իրենց կառավարությունների վրա եւ նրանցից պահանջելու՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այդ երկրների ներքին գործն է՝ արձագանքել կամ չարձագանքել իրենց քաղաքացիների պահանջներին: Թուրքիան նախ՝ չպետք է Հայաստանը շփոթի Սփյուռքի հետ, եւ երկրորդ՝ չպետք է դժգոհի վերջինիս պահվածքից, քանի որ Սփյուռքը Ցեղասպանության հետեւանքն է: Թող Ցեղասպանություն չաներ՝ Սփյուռք չէր լինի:

Մենք իրավունք չունենք այլեւս կրկնել 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայ քաղաքական մտքի ճակատագրական սխալը եւ հայ-թուրքական հարաբերություններում ապավինել երրորդ ուժի: Այդպիսի քաղաքականության ողբերգական հետեւանքները հայտնի են բոլորին: Դա քաղաքականություն էլ չէ, այլ խեղճի, որբի, անզորի հոգեբանություն: Երբ ուժ չունես պատժելու քո հակառակորդին, հրճվում ես, որ նրան պատժում են ուրիշները: Ոգեւորվում ես, որ տարբեր երկրներ Թուրքիային վերաբերող աննպաստ որոշումներ են կայացնում: Եւ վերջապես, ցնծում ես, որ Թուրքիայի ֆուտբոլի հավաքականը պարտվում է մի այլ հավաքականի: Մեզանից յուրաքանչյուրը մանուկ հասակում ապրած պետք է լինի այդ հոգեվիճակը: Երբ քեզ ծեծում էին, ու դու անզոր էիր, ուրախանում էիր, որ մի ուրիշը ծեծում է քեզ ծեծողին: Երեխան՝ հասկացանք, հասարակ մարդը՝ հասկացանք, իսկ մի՞թե պետական այրն իրավունք ունի առաջնորդվել այս հոգեբանությամբ:

Շատ ժողովուրդներ ու պետություններ տարբեր հանգամանքներում ու տարբեր պատճառներով հայտնվել են համազգային աղետի առջեւ: Հայերն ու հրեաները ենթարկվել են ցեղասպանության: Գերմանիան ու Ճապոնիան ջախջախիչ պարտություն կրելով, հիմնահատակ ավերվել են: Օսմանյան Թուրքիան, Բրիտանիան եւ Ռուսաստանը կորցրել են իրենց հզորագույն կայսրությունները: Նրանցից յուրաքանչյուրն իր ողբերգությունը համարում է եզակի. ինչպես արտահայտվել է Տոլստոյը՝ «Երջանիկները նման են իրար, իսկ դժբախտները՝ դժբախտ յուրովի»: Սակայն համազգային ողբերգություն ապրած համարյա բոլոր ժողովուրդներն ու պետություններն էլ այդ ողբերգությունը դարձրել են ոչ թե հուսալքության կամ թերարժեքության, այլ ապաքինման ու հզորացման գործոն: Նրանք իրենց մեջ ուժ են գտել ոչ միայն ամոքելու իրենց վերքերը, ազատվելու պատմական բարդույթներից, այլեւ վերածնունդ ապրելու ու դասվելու աշխարհի ամենակենսունակ ու ծաղկուն պետությունների շարքը: Ի՞նչ է մեզ խանգարում՝ շարունակ ողբալու, աշխարհից դժգոհելու եւ արդարություն մուրալու փոխարեն, հետեւել այդ ազգերի օրինակին: Մինչեւ չհաղթահարենք զոհի հոգեբանությունը, մինչեւ չազատվենք անցյալի բարդույթներից, մինչեւ չնայենք դեպի ապագա՝ մենք ժամանակակից ու կենսունակ ազգ չենք կարող դառնալ: Այդ հոգեբանությունը հաղթահարելու միակ միջոցը Հայաստան երկրի շենա-

ցումն ու հզորացումն է՝ երկիր, որն այսօր գտնվում է բորենիների ձեռքում: Պատմությունը հպարտության աղբյուր է շատ ազգերի համար, բայց պատմական բեռը՝ անցանկալի կապանք:

Այս ելույթից հետո էլ, առանց դույզն իսկ կասկածի, կգտնվեն մարդիկ, ովքեր իմ խոսքերը կտրելով կոնտեքստից կամ պարզապես աղավաղելով դրանք, գյուտարարի հրճվանքով ինձ կվերագրեն մտքեր, որոնք իրականության հետ կապ չունեն: Ես պատասխանատու եմ միայն իմ մտքերի, իմ խոսքերի համար, եւ մտադիր չեմ երբեւէ անդրադառնալ այդ տիպի անպարարություններին: Ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը գլխավորապես տուժել է իր կառավարիչների տգիտությունից, անհեռատեսությունից ու արկածախնդրությունից: Մինչդեռ ողջամտությունը երբեք նրան վնաս չի բերել: Ես հավատում եմ ձեր ողջամտությանը եւ կասկած չունեմ, որ դուք ինձ ճիշտ կընկալեք՝ նույնիսկ նախընտրական տրամաբանությամբ ինձ դիվիդենտներ չբերող այս զգայուն հարցում:

Թաթար-մոնղոլական խանություն

Հոկտեմբերի 26-ի հանրահավաքին ներկայացրած ելույթում, բնութագրելով Քոչարյանա-սերժական վարչախմբի ձեւավորած տնտեսական համակարգի էությունը, ես նշել էի, որ այն որեւէ կապ չունի ո՛չ սոցիալիզմի, ո՛չ ֆեոդալիզմի, ո՛չ իսկ անվանապես հոչակված կապիտալիզմի հետ, եւ ավելի շուտ հիշեցնում է թաթար-մոնղոլական տիպի խանական համակարգ: Միանգամից զգուշացնեմ, որ սա էթնիկական բնութագրում չէ, այլ զուտ գիտական հասկացություն՝ հիմնավորապես ուսումնասիրված եւ մշակված համաշխարհային ճանաչում ունեցող ականավոր պատմաբանների, մասնավորապես ռուս արեւելագետների՝ Բարտոլդի, Վլադիմիրցովի, Գրեկովի, Յակուբովսկու կողմից:

Ո՞րն է, արդ, թաթար-մոնղոլական խանության էությունը: Ինչպես հայտնի է, 13–14-րդ դարերում մոնղոլները, Չինգիզ-խանի եւ նրա ժառանգորդների գլխավորությամբ, ստեղծել էին մարդկության պատմության ամենաընդարձակ ցամաքային կայսրությունը: Նրանց աշխարհակալական կամ տիեզերակալական գաղափարախոսության հիմքում ընկած էր «երկնքում մեկ Աստված, եւ երկրում մեկ տիրակալ» սկզբուն-

քը: Մոնղոլների իշխանությունն, ըստ այդմ, երկնապարգեւ էր, եւ նրանք Աստծու կողմից կոչված էին տիրելու ողջ աշխարհին: Մյուս ազգերը պարտավոր էին հնազանդվել նրանց, իսկ դիմադրելու պարագայում ենթակա էին բնաջնջման: Այդպիսի պատկերացման շրջանակներում չէր տեղավորվում ոչ միայն թշնամական, այլեւ նույնիսկ դաշնակից պետությունների գոյությունը, քանի որ դաշինքը կողմերի հավասարություն էր ենթադրում:

Մոնղոլական կայսրության ողջ տարածքը, բովանդակ շարժական եւ անշարժ գույքով համարվում էր խանի ու նրա գերդաստանի սեփականությունը: Ըստ այդմ, խանական տոհմի սեփականություն էին հանդիսանում ոչ միայն հողն ու նրա վրա կառուցված շինությունները, այդ թվում՝ եկեղեցիներն ու մզկիթները, այլեւ ողջ ազգաբնակչությունը՝ տղամարդիկ, կանայք, երեխաները, ինչպես նաեւ՝ նրանց պատկանող անասուններն ու աշխատանքային գործիքները: Մոնղոլական Մեծ խանը կամ խաքանը կայսրության հողերը բաժանում էր իր որդիների եւ եղբայրների միջեւ՝ նրանց օժտելով ժառանգական սեփականության եւ իշխանավարության լայն լիազորություններով: Սակայն առ ի չգոյէ բավարար մարդկային եւ պրոֆեսիոնալ ռեսուրսների՝ մոնղոլները նվաճված երկրների եւ վասալ-պետությունների կառավարման հոգսը սովորաբար դնում էին տեղական թագավորների, իշխանների, սուլթանների եւ էմիրների վրա: Խաների կողմից վերջիններիս շնորհվում էին սեփականության եւ վարձակալության որոշ իրավունքներ, որոնք, սակայն, ժառանգաբար չէին փոխանցվում: Իրենց արտոնություններն ու առանձնաշնորհումները պահպանելու համար՝ տեղական կառավարիչները հլուհնազանդ կատարում էին մոնղոլների կամքը՝ կեղեքելով ու հարստահարելով սեփական ժողովուրդներին: Անհնազանդներն ու ապստամբները, բնականաբար, իսկույն ոչնչացվում էին: Զգտելով շահել իրենց տերերի բարեհաճությունը՝ վասալ-իշխանավորները եւ նրանց սպասարկող մտավորականներն ու հոգեւորականները ներբողներ էին ձոնում մոնղոլ խաներին ու նրանց պաշտոնյաներին, ինչը որոշ չափով նպաստում էր սեփական ժողովուրդների կենսունակությունն ու անվտանգությունն ապահովելու գործին:

Թաթար-մոնղոլների բնորոշ հատկանիշներից էր նաեւ այն, որ նրանք, ի տարբերություն արաբների, չստեղծեցին իրենց ընդարձակ

կայսրությունը միավորող գաղափարախոսություն, ինչը շուտով պիտի դառնար այդ կայսրության վաղահաս կործանման գլխավոր պատճառներից մեկը: Մինչդեռ իսլամն, իր միավորիչ առաքելությամբ, արդեն շուրջ 1400 տարի է, ինչ ապացուցում է իր կենսունակությունը եւ այսօր էլ շարունակում է մնալ համաշխարհային գործընթացները պայմանավորող ծանրակշիռ գործոններից մեկը: Մոնղոլներն ընդհանուր առմամբ անտարբեր կամ հանդուրժող էին նվաճված ժողովուրդների կրոնների ու դավանությունների նկատմամբ: Ի սկզբանե ազգովին լինելով շամանիզմի հետեւորդներ՝ երբ որ պետք էր, նրանք դառնում էին բուդդայական, իսկ երբ հարմար էին գտնում՝ ընդունում էին մահմեդականություն կամ քրիստոնեություն:

Այժմ զուգահեռ անցկացնելով մեր իրականության հետ՝ տեսնենք, թե ինչով է Քոչարյանա-սերժական իշխանապետությունը տարբերվում թաթար-մոնղոլական խանությունից: Նմանությունը, իսկ ավելի ճիշտ՝ նույնությունը պարզապես ապշեցուցիչ է եւ չափազանց ուսանելի՝ պատմաբանների ու քաղաքագետների համար: Թաթար-մոնղոլական խաների նման՝ Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը նույնպես Հայաստանը համարում են իրենց սեփական կալվածքը՝ այն բաժանելով իրենց հարազատների, մոտ ու հեռու ազգականների, խնամիների, փեսաների, քավորների ու սանիկների միջեւ: Ղարաբաղում գործից ազատված յուրաքանչյուր պաշտոնյա անմիջապես պաշտոն է ստանում Հայաստանում: Աստիճանաբար, բայց հաստատուն քայլերով, ղարաբաղցիները տեղ են զբաղեցնում նաեւ մեր երկրի բիզնեսի ոլորտում՝ դառնալով ներկա իշխանությունների հուսալի հենարանը: Իմիջիայլոց, այս, մեղմ ասած, կարճատես, բայց իրականում դավաճանական քաղաքականության պատճառով Քոչարյանա-սերժական զույգը լուրջ վտանգի տակ է դնում Ղարաբաղի գոյությունը՝ խթանելով նրա դատարկումը եւ նպաստելով նրա մարդկային ռեսուրսների նվազմանը, ինչն արդեն իսկ ազդում է վիճակագրության վրա, եւ ինչը մի օր մեզ կարող է կանգնեցնել ազգային աղետի՝ կատաստրոֆայի առաջ: Դա ցույց է տալիս, որ նրանց չի հետաքրքրում Ղարաբաղի ճակատագիրն անգամ: Նրանք վաղուց իրենց ընտանիքների բոլոր անդամներին, ազգականներին, խնամիներին ու քավորսանիկներին տեղափոխել են

Հայաստան: Եթե Ղարաբաղին բան պատահի, նրանք աչք անգամ չեն թարթելու: Մե՛ր եւ ձե՛ր սիրտն է ցավելու, մե՛նք ենք մղկտալու:

Շարունակենք, սակայն, վերը գծված զուգահեռականության անցկացումը: Մոնղոլների պես, չունենալով բավարար մարդկային եւ պրոֆեսիոնալ ռեսուրսներ, Հայաստանի մերօրյա խաները ստիպված են երկրի կառավարման հոգսը հիմնականում դնել տեղական պաշտոնյաների եւ երեւելիների վրա՝ նրանց շնորհելով նախարարական ու պատգամավորական տիտղոսներ, միաժամանակ օժտելով սեփականատիրական եւ գործարարական որոշ իրավունքներով ու արտոնություններով: Վերջիններս, միջնադարյան վասալների նման, հլուհնազանդ կատարում են տերերի հրամանները՝ բավարարվելով սեփական ժողովրդի կեղեքումից ու հարստահարումից իրենց հասնող բաժնով: Նրանց սեփականությունն ու բիզնեսը ապահովագրված չեն իրավական երաշխիքներով, այլ ամբողջովին կախված են Քոչարյանի եւ Սարգսյանի քմահաճույքից: Եթե Միշա Բաղդասարովին, Բարսեղ Բեգլարյանին, Լեւոն Սարգսյանին, Գագիկ Ծառուկյանին, Սամվել Ալեքսանյանին, Ռուբեն Հայրապետյանին, Սամվել Մայրապետյանին, Հրանտ Վարդանյանին, Հարություն Փամբուկյանին թվում է, թե իրենք սեփականատեր ու բիզնեսմեն են, ապա շարաշար սխալվում են: Ցանկացած պահի, խաների քմահաճույքով, նրանք կկորցնեն թե՛ իրենց սեփականությունը, թե՛ բիզնեսը: Եթե նրանցից մեկին ասվի, որ քո հեռուստաընկերությունն ու բանկը պիտի վաճառես մի ուրիշի, ապա այդպես էլ պետք է անի: Եթե «Հայծխախոտ» ընկերության մի մեծ բաժնետիրոջ հրամայվի, որ իր բաժինը զիջի երրորդ անձի՝ պիտի ենթարկվի: Եթե օրինական սեփականատիրոջից խլված ցեմենտի մի գործարան առաջարկվի մի այլ մեծահարուստի՝ պիտի համաձայնի եւ այլն: Իսկ անհնազանդներն ու կիսվել չցանկացողները, առավել եւս՝ անկախ մտածողները, ենթակա են ոչնչացման, ինչի պերճախոս վկայությունը Խաչատուր Սուքիասյանի եւ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության նկատմամբ վերջերս կիրառվող բիրտ գործողություններն են:

Բարձր ամբիոններից ու հեռուստաէկրաններից հայրենասիրության, արժանապատվության, հպարտության, արդարության, այսուծից այսուծ ծնվելու մասին հոյակապ ճառեր արտասանող մեր սիրելի ու հարգարժան ձեռներեցնե՛ր եւ գործարարնե՛ր, մինչեւ ե՞րբ պիտի հան-

դուրժեմ ձեզ պատիվ չբերող այդ նվաստացումը, մինչեւ ե՞րբ պիտի հաշտվեմ ձեր ստրկական վիճակի հետ: Մի՞թե չեմ հասկանում, որ ձեր ծառայամտությամբ դում ամրապնդում եմ խանական իշխանության հիմքերը եւ ստրկության դատապարտում մեր ողջ ժողովրդին, նաեւ՝ ձեր իսկ երեխաներին: Մի՞թե չեմ տեսնում, որ մենք կանգնած ենք բախտորոշ հասարակական վերափոխման շեմին, որի նպատակն է բացառապես խաղաբական պայքարի խաղաղ, օրինական միջոցներով վերականգնել երկրի սահմանադրական կարգը: Մե՛նք չէ, որ ձեզ պետք է հորդորեինք միանալ համազգային նոր շարժմանը: Դո՛ւք պիտի առաջնորդեիք այն, եւ ժողովրդին տանեիք ձեր ետեւից: Ի՞նչն է ձեզ խանգարում համախմբվել ու թոթափել բոլորի, այդ թվում՝ ձեզ համար ատելի խանական լուծը: Ինչի՞ց եք վախենում: Մի՞թե ավելի շատ բան ունեք կորցնելու, քան ժողովուրդը: Ինչպե՞ս եք գիշերները քնում: Արդյոք կարողանո՞ւմ եք նայել ձեր կանանց ու երեխաների աչքերին: Ուստի քանի դեռ ուշ չէ, քանի դեռ չեմ արժանացել ժողովրդի լիակատար համահրանքին, ուղղեք ձեր մեջքը եւ վճռականորեն միացեք մեր շարքերին:

Հասկանալի է, թե դրան ինչն է խանգարում: Հասկանալի է, թե ինչու եք այդքան վախեցած, կուչ եկած: Հասկանալի է, թե ինչու եք շրջապատված սափրագլուխների գումարտակներով: Այս ամենը հասկանալի է, քանի որ քոչարյանա-սերժական ռեժիմը ձեր դեմ կոմպրոմատներ ունի: Դուք ստիպված եք եղել ձեր գործունեության մեջ բազմիցս խախտել օրենքը՝ խուսափել մաքսավճարներից ու հարկերից, կաշառել ու կաշառվել, թաքցնել ձեր իրական եկամուտները եւ այլն: Բայց դա ձեր մեղքը չէ: Դուք հարկադրաբար ենթարկվել եք այն խաղի կանոններին, որոնք սահմանել է ներկա վարչախումբը: Դուք իրականում կատարել եք ձեր հարկային պարտավորությունները, բայց ձեր մուծումները հայտնվել են ոչ թե պետական բյուջեում, այլ բոլորովին ուրիշ տեղ: Վստահաբար, նույնիսկ ավելին եք մուծել, քան պարտավոր էիք: Սա է իրականությունը, եւ դուք այլ կերպ չէիք կարող վարվել, քանի որ հակառակ պարագայում կհայտնվեիք բանտերում կամ ստիպված կլինեիք թողնել բիզնեսը: Նույնիսկ ամենաօրինապաշտ օտարերկրյա գործարարները, երբ հայտնվում են մեր նման երկրներում, կամա թե ակամա ենթարկվում են տեղի խաղի կանոններին՝ կաշառք բաժանում, հարկերից փախչում եւ այլն: Այս ամենը հասկանալով հանդերձ, մեզ հուզում

է այն հարցը, թե որքան ժամանակ պիտի հանդուրժեմ այս դրությունը, մինչեւ երբ պիտի մնամ ստուկի անպատվաբեր վիճակում: Դուք, որ պիտի լինեիք տնտեսության զարգացման առաջամարտիկները՝ ստանձնելով թաթար-մոնղոլական խանության ստորաբաշ վասալների դերը, դարձել եք զարգացման գլխավոր խոչընդոտը: Մինչդեռ գործելով օրենքի դաշտում, դուք կարող եք վերագտնել ձեր արժանապատվությունը, հարգվել հասարակության կողմից, եւ նույնիսկ ընդլայնել ձեր բիզնեսն ու բազմապատկել ձեր եկամուտները: Եթե շարունակեք պատվազրկությամբ ծառայել ներկա իշխանություններին, ապա նրանք ցանկացած պահի ձեզ կոչնչացնեն առանձին-առանձին: Իսկ եթե միահամուռ կերպով ընդդիմանաք նրանց, ապա մեկ օր անգամ չեն դիմանա:

Հայաստանի ներկա իշխանությունները թաթար մոնղոլներին նույնանում են նաեւ գաղափարախոսության բնագավառում դրսեւորած անլուրջ եւ ոչ հետեւողական վարքագծով: Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը մինչեւ 1990 թվականը կոմունիստ էին, այն էլ ոչ շարքային: Հետո դարձան ՀՀՇ-ական. Քոչարյանը նույնիսկ ընտրվեց ՀՀՇ-ի վարչության կազմում, իսկ Սարգսյանն առաջադրվեց, բայց չհավաքեց դրա համար անհրաժեշտ ձայները: Այնուհետեւ Քոչարյանը, թեեւ ոչ ֆորմալ, հակվեց դեպի Դաշնակցություն եւ Հայ դատ, իսկ Սարգսյանը գլխավորեց Նժդեհա-ցեղակրոն կուսակցությունը: Եթե պետք լինի, վաղը նրանք կդառնան մուսավաթական:

Ասվեց արդեն, որ մոնղոլական խանության պարտադիր ատրիբուտներից մեկն էլ նվաճված ժողովուրդների ծոցից ծնված ներբողագիրների առկայությունն էր: Հետեւաբար, արտառոց չէ, որ Հայաստանի ներկա իշխանություններին սպասարկող նոմենկլատուրային մտավորականության ներկայացուցիչներն ու, այսպես կոչված, պատասխանատու լրատվամիջոցների աշխատակիցները, միջնադարյան մատենագիրների ու եկեղեցականների նման, գիշերուզօր ներբողներ են ձոնում մեր օրյա խաներին: Անուններ չեմ ուզում տալ, նախ՝ չպղծելու համար այս սուրբ հրապարակը, եւ ապա՝ քանի որ դրանք հայտնի են բոլորին: Անունները նշանակություն էլ չունեն, որովհետեւ այդպիսի ներբողագիրներ 1937-ին էլ կային, երբ նրանց գործընկերները՝ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Չապել Եսայանը, Մկրտիչ Զանանը, Թադեոս Ավդալբեգյանը գնդակահարվում էին Երեւանի զնդան-

ներում, իսկ Գուրգեն Մահարին, Վահրամ Ալազանը, Վաղարշակ Նորենցը, Մկրտիչ Արմենը, Վալտեր Արամյանը, Աշոտ Հովհաննիսյանը եւ շատ ուրիշներ փտում էին սիբիրյան ճամբարներում:

Այդպիսիք կային նաեւ բրեժնեյան ժամանակներում, երբ բազմաթիվ այլախոհներ, իսկական հայրենասերներ, մարդու իրավունքների պաշտպաններ արգելափակված էին Խորհրդային Միության տարբեր բանտերում, գաղութներում եւ հոգեբուժարաններում: Եթե մոնղոլ խաներին հաճոյացող եւ ներբողներ ձոնող միջնադարյան մատենագիրներն ու եկեղեցականները գոնե արդարացում ունեին, քանի որ նրանց նպատակը խաների դաժանությունը մեղմելն ու ժողովրդի վիճակը թեթեւացնելն էր, ապա մերօրյա պալատական ներբողագիրներին առաջնորդում է բացառապես անձնական շահը եւ պատիվների ու շքանշանների արժանանալու տենչը: Չեմ պատկերացնում, թե նրանք ինչպես պետք է իրենց հայացքը փախցնեն թռուցիկ տարածելու համար ոստիկանատներ տարվող ու ծեծի ենթարկվող իրենց ուսանողներից:

Ինչպես նշեցինք, մոնղոլների սեփականությունն էր համարվում նաեւ նվաճված երկրների ողջ ազգաբնակչությունը, որը ոչ միայն պարտավոր էր հլուհնազանդ կատարել տերերի կամքը, այլեւ երախտագիտություն արտահայտել նրանց ցուցաբերած ողորմածության համար: Նույնն է Հայաստանի ներկա իշխանությունների պարագայում: Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն անկեղծորեն չեն հասկանում, թե ինչո՞ւ Հայաստանի քաղաքացիները պիտի դժգոհեն իրենցից, առավել եւս՝ ատեն իրենց: Չեն ընկալում, թե ինչո՞ւ ժողովուրդը չի գնահատում իրենց ողորմածությունն ու գթասրտությունը: Չեն ըմբռնում, թե ինչո՞ւ մարդիկ գիշերուզօր չեն փառաբանում իրենց եւ չեն աղոթում իրենց արեւշատության համար: Չէ՞ որ նրանք սնվում, շնչում, երեխաներ են ծնում իրենց բարեմտության շնորհիվ: Չէ՞ որ, եթե կամենային, կարող էին նրանց զրկել ոչ միայն հացից, ջրից, օդից ու երեխաներից, այլեւ կյանքից: Ուստի, ի հեճուկս այդ երախտամոռ ժողովրդի, նրանք պիտի ամեն գնով պահպանեն իշխանությունը եւ վրեժ լուծեն Հայաստանի անաղուհաց քաղաքացիներից: Քոչարյանն ու Սարգսյանն, այսպիսով, չեն տարբերվում ոչ միայն մոնղոլ աշխարհակալներից, այլեւ իրենց անմիջական նախնիներից՝ Փանահ-խանից ու Մելիք-Շահնազարից:

P. S. – Հետգրություն

Ես չեմ ուզում այս երեկո ձեզ հրաժեշտ տալ մեր երկրի տխուր իրականությունից ստացած մռայլ տրամադրությամբ: Ուստի կփորձեմ ձեզ զվարճացնել մի քանի անեկդոտատիպ պատմություններով:

* * *

Օրեր առաջ, ամբողջացնելով Հայաստանի ավազակապետության դարաբաղյան բուրգը, Ռոբերտ Քոչարյան – Սերժ Սարգսյան երկվորյակին միացավ քաջահամբավ Սամվել Բաբայանը: Այդ բախտին արժանանալու համար վերջինս, բնականաբար, կանխավճար պիտի մուծեր: Իսկ կանխավճարը հայտնի է՝ ամենահետին խոսքերով հայհոյել Հայաստանի նախկին իշխանություններին եւ, որքան հնարավոր է, լուտանքներ թափել իմ հասցեին: Որպեսզի ձեզ համար պարզ դառնա Բաբայանի բարոյական կերպարը, հարկադրված եմ ներկայացնել, թե ինչպես է նա ինձ գնահատել ընդամենը երեք տարի առաջ. «Մեծարգո Լեւոն Հակոբի, ընդունեցեք իմ ջերմ շնորհավորանքները Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ: Բարձր եմ գնահատում Ձեր տեւական ավանդը ինչպես արցախյան ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման ու նրա համակողմանի նվաճումների ապահովման ասպարեզում, այնպես էլ՝ Հայաստանի ու Արցախի տարածքներում Հայոց պետականության վերականգնման ու ամրապնդման պատմակշիռ գործում: Կրկին կարեւորելով նորանկախ Հայաստանի առաջին նախագահիդ նշանակալից հոբելյանը՝ որպես էական մի շրջափուլ ոչ միայն Ձեր, այլեւ ընդհանրապես հայրենի հասարակական-քաղաքական կյանքում, ի սրտե մաղթում եմ Ձեզ արցախյան արեւշատություն, անձնական երջանկություն եւ հարաճուն հաջողություններ. Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայան. 2005թ. հունվարի 9» (ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 09.01.2005թ.): Կարիք չկա ավելացնելու, որ հերոս-գեներալի արտասանած որեւէ այլ խոսք, որ կհակասի այս գնահատականին, գրոշի արժեք չունի:

* * *

Վերջին շրջանում մի քանի լրատվամիջոցներ ինձ բացահայտել են մի նոր դավաճանության մեջ. թե իբր ես, դիմելով օտարներին, նրանց

դրդում եմ միջամտել մեր երկրի ներքին գործերին: Սա ներելի թյուրիմացություն է, քանի որ այդպես կարծողներն, ըստ երևույթին, գրագիտության պակասի պատճառով, չեն գիտակցում, որ Եւրոխորհուրդը, նրա խորհրդարանական վեհաժողովը եւ ԵԱՀԿ-ն մեր սեփական կազմակերպություններն են, եւ ոչ թե օտար մարմիններ: Չեն գիտակցում նաեւ, որ Հայաստանը, լինելով այդ կառույցների լիիրավ անդամ, պարտավորություններ է ստանձնել նրանց առջեւ: Հետեւաբար, մենք մեր իսկ կառույցներից ընդամենը պահանջում ենք վերահսկել այդ պարտավորությունների կատարումը: Պահանջը հիմնված է այն ակնհայտ իրողության վրա, որ եթե մեր պետությունը պարտավորություններ է ստանձնել այդ կազմակերպությունների առջեւ, ապա դա նշանակում է, որ այդ կազմակերպություններն էլ պարտավորություններ են ստանձնել մեր ժողովրդի առջեւ: Այս ամենից հետեւում է, որ նշված կառույցներն օտար համարելու դեպքում Հայաստանն, ընդհանրապես, տեղ չպետք է ունենա որեւէ միջազգային կազմակերպությունում:

* * *

Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն այս օրերին իրենց մխիթարում են, թե Տեր-Պետրոսյանի փամփուշտներն արդեն սպառվել են, եւ նա իրենց մասին այլեւս նոր ասելիք չունի: Խորապես ցավում եմ, բայց կրկին պիտի հիասթափեցնեմ նրանց: Նախ՝ մինչ այժմ արձակված փամփուշտները դեռ սլանում են, եւ, հազար տարի էլ անցնի, նրանք չեն ազատվելու ավազակապետի պիտակից: Եւ երկրորդ, ինչպես ակնհայտորեն հետեւում է այս ելույթից, իմ փամփուշտներն անսպառ են, որքան անսպառ են անբաժան զույգի դեռեւս մինչեւ վերջ չբացահայտված օրինազանցությունները:

* * *

Որոշ լրագրողներ եւ նույնիսկ համակիր քաղաքական գործիչներ ինձ համարում են Սերժ Սարգսյանի միակ կամ ամենալուրջ այլընտրանքը: Եթե նրանք կարծում են, թե դրանով ինձ պատիվ են մատուցում, ապա շարաչար սխալվում են: Օրինական ընտրություններ անցկացնելու պարագայում Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացի կա-

ռող է հաղթել նախագահացու վարչապետին: Այնպես որ Սերժ Սարգսյանն իրականում այլընտրանք չունի: Իսկ եթե, այնուամենայնիվ, ունի, ապա այդ այլընտրանքը Սաշիկն է կամ Թոխմախի Մհերը:

* * *

Ի դեպ, Թոխմախի, կամ ավելի ճիշտ, Բոշի-մայլի Մհերի մասին: Մտքի այդ տիտանը վերջերս անզգուշություն ունեցավ կատարելու երեք սայթաքում. առաջին՝ Երեւանի երկու բարեհամբավ, բայց անանուն թաղապետերից մեկի անձում ճանաչեց իրեն. երկրորդ՝ մատնեց կամ զրպարտեց իր գործընկերոջը. եւ երրորդ՝ իր վրա բրեական հոդված վերցրեց, խոստովանելով, որ 1996 թվականին կոպիտ ընտրախախտումներ է թույլ տվել: Թող, ուրեմն, չկասկածի, որ երեք ամիս հետո նա դատվելու է հենց 1996-ին կատարած ընտրախախտումների համար:

* * *

Նոյեմբերի 29-ին, թաղային տխրահռչակ ոստիկանապետերից մեկը բերման է ենթարկել մի քաղաքացու եւ «բարեկամաբար» հորդորել ետ կանգնել ինձ սատարելու մտքից՝ միաժամանակ սպառնալով, որ հակառակ դեպքում նրանից կխլի իր խանութը: Երբ քաղաքացին առարկել է ասելով, թե՝ «ո՞նց կխլես իմ սեփականությունը», ոստիկանապետը պատասխանել է. «էս երկիրն էլ Ռոբի ու Սերժիկի սեփականությունն է. բա դում ո՞նց եք ուզում խլել նրանց ձեռից», ավելացնելով նաեւ, որ «տաս տարի Սերժիկն է նստելու նախագահ, դրանից հետո էլ՝ Ռոբի տղեն»: Կարելի է ուղղակի հիանալ այս հիրավի տաղանդավոր ոստիկանապետի խորաթափանցությամբ, որն ապշեցուցիչ ճշգրտությամբ է ընկալել Հայաստանում հիմնադրված թաթար-մոնղոլական խանության էությունը:

* * *

Այս օրերին մամուլում հրապարակումներ եղան այն մասին, որ Հանրապետության նախագահի համար, 45 միլիոն դոլարով գնվել է «էյրբաս Ա-319» մակնիշի մի շքեղ ինքնաթիռ: Կարծում եմ, մեր երկիրն այսօր այն վիճակում չէ, որ իրեն շռայլություն թույլ տա 45 միլիոն դո-

լարի արժողությամբ ինքնաթիռ գնել: Այդ գումարը կբավականացներ առնվազն 200 դպրոց վերանորոգել կամ, Սփյուռքից տարեկան 4–5 միլիոն դոլար մուրալու փոխարեն, կառուցել Ղարաբաղի բոլոր ճանապարհները: Ուստի պաշտոնապես հայտարարում եմ՝ նախագահ դառնալու դեպքում ես կկարգադրեմ անմիջապես վաճառել այդ ինքնաթիռը եւ գումարը մուտքագրել պետական բյուջե:

* * *

Ավարտելով ելույթս, այս անգամ ուզում եմ խորին շնորհակալություն հայտնել Ռոբերտ Քոչարյանին եւ Սերժ Սարգսյանին, որոնց հանճարեղ մտքերն ու ոսկեղենիկ արտահայտությունները մեծապես նպաստում են իմ քարոզարշավին: Նրանց յուրաքանչյուր խոսք, յուրաքանչյուր դիմախաղ, յուրաքանչյուր կեղծ ժպիտ անսահմանորեն հզորացնում է ձեր շարժումը: Ուստի մի՛ գանգատվեք, մի՛ բողոքեք նրանցից, այլ գոհացեք, որ Աստված ձեզ այդպիսի անճարակ մրցակիցներ է պարգեւել: Նրանք այսօր ամենաօգտակար գործիքն են՝ մեր ընդհանուր նպատակի իրականացմանը ծառայեցնելու համար:

Շնորհակալություն ուշադրության եւ համբերության համար:

Բարի գիշեր:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան» (հատվածաբար), 11 դեկտեմբերի, 2007թ.: «168 ժամ», 12 դեկտեմբերի, 2007թ.: Հրատարակված նաեւ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն առանձին գրքույկներով. «Պատմություն. Գաղափարախոսություն. Տիպաբանություն», Երեւան, 2007թ. – "History, Ideology, Typology", Yerevan-2007 – "История, Идеология, Типология", Ереван-2007.

ԵԼՈՒՅԹ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

(22 դեկտեմբերի, 2007թ.)

Հարգելի գործընկերներ,

Ինձ սատարող քաղաքական ուժերի եւ համաժողովրդական նոր Շարժման ակտիվիստների այս հավաքը կոչված է ամփոփելու նախընտրական գործընթացի առաջին փուլի արդյունքները եւ ուրվագծելու մեր հետագա գործունեության խնդիրները: Թեեւ սա զուտ աշխատանքային հանդիպում է, որը թեկուզ տակտիկական առումով ենթադրում է որոշակի գաղտնապահություն, սակայն ես, հավատարիմ մնալով թափանցիկ, հրապարակային քաղաքականության մեր որդեգրած սկզբունքին, կնախընտրեի այս ամենի մասին արտահայտվել բացեիբաց՝ խոսքս ուղղելով ոչ միայն իմ կողմնակիցներին, այլեւ մեր ողջ ժողովրդին: Մոլորությունների մեջ չընկնելու եւ իրավիճակը ճիշտ գնահատելու համար, կարծում եմ, հարկ է նախեւառաջ հստակ պատկերացում ունենալ նախընտրական պայքարի մեջ ներգրավված ուժերի հարաբերակցության եւ վերարտադրության ձգտող ներկա հանցավոր վարչախմբի կարողականության (պոտենցիալի) մասին:

Ներկա վարչախմբի ռեսուրսները

Ի տարբերություն մեզ, Հայաստանի գործող իշխանությունները ընտրական գործընթացում որդեգրել են պայքարի ընդհատակյա, ինտրիգային սկզբունքը՝ հիմնվելով գլխավորապես վարչական, տեղեկատվական, ֆինանսական, ռեպրեսիվ եւ քրեական ռեսուրսների վրա,

որոնցից յուրաքանչյուրին նպատակահարմար եմ գտնում անդրադառնալ առանձին-առանձին:

1. Վարչական ռեսուրս. դրա տակ ենթադրվում է ողջ պետական մեքենան՝ նախագահական ապարատը, կառավարությունը, նախարարությունները, մարզպետարանները, քաղաքապետարանները, գյուղապետարանները, ինչպես նաեւ բյուջետային հիմնարկները՝ բուհերը, ակադեմիական ինստիտուտները, հիվանդանոցները, դպրոցները, մանկապարտեզները եւ այլն: Այդ կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը ջանասիրաբար, իսկ ոմանք աշխատանքը կորցնելու վախից, հլուհնազանդ կատարում են իրենց տերերի հրամանները եւ սեփական ազդեցության ոլորտներում փորձում կանխել վարչախմբին անհաճո այլախոհության ցանկացած դրսեւորում: Վերջին շրջանում նրանց գործունեությունը հիմնականում ուղղված էր իրենց աշխատակիցներին եւ ժողովրդական զանգվածներին ընդդիմության հանրահավաքներից հեռու պահելու խնդրին, ընդ որում, խտրություն չդնելով միջոցների միջեւ՝ սկսած «բարեկամական» զրույցներից ու հորդորներից, վերջացրած ահաբեկումներով ու տարբեր տիպի սպառնալիքներով: Իսկ եթե նկատի ունենանք նաեւ, որ հիմնականում բյուջետային հիմնարկների աշխատակիցներն են ձեւավորում ընտրական հանձնաժողովները, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչ հսկայական դերակատարություն է նրանց վերապահված ապագա ընտրություններում:

2. Տեղեկատվական ռեսուրս. Ինչպես հայտնի է, բացի «Ազատություն» ռադիոկայանից եւ «Երկիր-Մեդիա» ու «ԳԱԼԱ» հեռուստակայաններից, Հայաստանի էլեկտրոնային լրատվամիջոցների ողջ համակարգը գտնվում է ներկա իշխանությունների լիակատար վերահսկողության տակ, ինչը նրանց անարգել թույլ է տալիս իրականացնել միակողմանի քարոզչություն, կոչված ծառայելու մի կողմից՝ վարչախմբի թեկնածուի դրվատման, մյուս կողմից՝ ընդդիմության ներկայացուցիչների վարկաբեկման խնդրին: «Երեւանի մամուլի ակումբի» անցկացրած անկախ դիտարկման տվյալներով՝ Հայաստանի յոթ գլխավոր հեռուստակայանները եւ հանրային ռադիոն հոկտեմբեր – նոյեմբեր

ամիսներին առնակել են Սերժ Սարգսյանին վերաբերող 218 դրական, 16 բացասական եւ 1504 չեզոք, իսկ ինձ հիշատակող՝ 16 դրական, 404 բացասական եւ 468 չեզոք հաղորդագրություն: Վարչախմբի վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցների կողմնակալության ավելի վառ ապացույց դժվար է պատկերացնել: Մենք, ըստ էության, գործ ունենք պետության կողմից տեղեկատվական դաշտի լիակատար մոնոպոլիզացիայի հետ, ինչը բնորոշ է ամբողջատիրական համակարգերին կամ երրորդ աշխարհի բռնապետական ռեժիմներին: Նման պայմաններում մեր երկրում օրինական ընտրությունների անցկացումը պարզապես ծաղրուծանակի է հավասարազոր:

3. Ֆինանսական ռեսուրս. Մեր հասարակության համար գաղտնիք չէ, որ 1998, 2003 եւ 2007 թվականներին անցկացված ընտրություններում կարեւոր տեղ է զբաղեցրել իշխանությունների կողմից բաժանված ընտրակաշառքը, ինչն արձանագրված է նաեւ միջազգային դիտորդական կազմակերպությունների զեկույցներում: Եթե ինչ-որ մեկը հույս է փայփայում, թե առաջիկա նախագահական ընտրություններում իշխանությունները հրաժարվելու են այդ պրակտիկայից, ապա նա շարաշար սխալվում է: Ավելին, հիմքեր կան պնդելու, որ ընտրակաշառքը դառնալու է 2008-ի ընտրություններում նրանց հաջողության հասնելու հիմնական գրավականը: Այնքան ակնհայտ է իշխանությունը պահելու մոլուցքը, որ վարչախումբը պատրաստ է այդ նպատակին հատկացնել թեկուզ կես միլիարդ դոլար՝ չխորշելով ոչ միայն հարկային գերավճարներ գանձելուց ու «Պարզեցված հարկի մասին օրենքի» գործողությունը դադարեցնելուց, այլեւ պետական բյուջեի ու Կենտրոնական բանկի պահուստների օգտագործումից: Ընտրակաշառքի համար նախատեսված գումարի առյուծի բաժինը, սակայն, ինչպես միշտ, հասնելու է ոչ թե բուն քվեարկողին, այլ միջին օղակների պետական պաշտոնյաներին, տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության, անվտանգության, հարկային ծառայությունների ղեկավարներին, ընտրական հանձնաժողովների նախագահներին, ինչպես նաեւ թաղային հեղինակություններին եւ բրեական տարրերին:

4. Ռեպրեսիվ ռեսուրս. Խոսքը վերաբերում է, առաջին հերթին, իրավապահ մարմիններին՝ ոստիկանությանը, անվտանգության ծառայությանը, դատարաններին, դատախազությանը, մասամբ նաեւ՝ հարկային տեսչությանը, որոնք վերջին շրջանում ամբողջությամբ ներքաշված են քաղաքականության ոլորտ: Բարձիթողի մատնած իրենց բուն գործառույթները, այս կառույցները, արդեն երեք ամիս է, ինչ զբաղված են բացառապես իմ կողմնակիցների նկատմամբ իրականացվող անօրինական գործողություններով: Հազարների է հասնում այն քաղաքացիների թիվը, ովքեր կանչվել են ոստիկանատներ եւ ճնշումների ենթարկվել ինձ աջակցելու, մասնավորապես, իմ կազմակերպած հանրահավաքներին մասնակցելու համար: Սպառնալիքները, ահաբեկումները, թռուցիկներ պոկելը, խաղաղ երթերի խափանումը, ապօրինի գաղտնալսումներն ու խուզարկությունները, ֆիզիկական ուժի կիրառումը դարձել են ոստիկանության եւ անվտանգության ծառայության, եթե ոչ միակ, ապա գլխավոր գործելակերպը: Գործի են դրվել նաեւ հարկային տեսչության եւ դատական համակարգի բոլոր լծակները՝ Շարժման ակտիվիստների քաղաքական գործունեությունը կաշկանդելու նպատակով: Ռեպրեսիվ ռեսուրսի օգտագործման ամենացցուն օրինակներն են՝ հոկտեմբերի 23-ի ոստիկանական պրովոկացիան, Նարեկ Գալստյանի դեմ կիրառված բռնությունը, «Սիլ-գրուպ» ընկերությունում եւ «ԳԱԼԱ» հեռուստակայանում սանձազերծված հարկային տեռորն ու դատական քաշքշուկը, «Զորրորդ իշխանություն» թերթի խմբագրատան պայթեցումը, ինչպես նաեւ մարդկանց ստիպողաբար աշխատանքից ազատելու արդեն իսկ արձանագրված տասնյակ դեպքերը:

5. Քրեական ռեսուրս. Ինչպես նախորդ ընտրությունների ընթացքում, քոչարյանա-սերժական ռեժիմը այս անգամ եւս չի խորշում թաղային հեղինակությունների եւ քրեական տարրերի կարողությունների օգտագործումից: Առկա ռեսուրսը, թերեւս, բավարար չհամարելով, իշխանություններն անցած ամիսներին բանտերից վաղաժամկետ ազատել են բազմաթիվ մեղադրյալների ու դատապարտյալների, որոնք այդ շնորհը, բնականաբար, պիտի հատուցեն առաջիկա ընտրությունների ընթացքում մատուցելիք համապատասխան ծառայություններով: Քրեական տարրերին սովորաբար վստահվում են ընդդիմության ներ-

կայացուցիչների եւ հանրային միջոցառումների դեմ ուղղված ամենակեղտոտ գործերը՝ սկսած ահաբեկումներից ու բոնարարքներից, վերջացրած պրովոկացիաներով ու զանգվածային անկարգություններով: Նրանց վրա է դրված նաեւ մեկուսարաններում ու կալանավայրերում գտնվող մարդկանց միջոցով վերջիններիս հարազատների վրա ազդելու ու քաղաքականապես «կողմնորոշելու» պատասխանատվությունը: Թաղային հեղինակություններին ու բեռական տարրերին զգալի դերակատարություն է վերապահված նաեւ ընտրությունների վերջնական փուլում, մասնավորապես, քաղաքացիներին կազմակերպված կերպով ընտրատեղամասեր տեղափոխելու եւ նրանց ձայնը հարկադրանքով կամ կաշառքով կորզելու գործում:

6. Պառակտողական ռեսուրս. Այս հասկացության տակ ես նկատի ունեմ իշխանությունների կողմից ընդդիմության շարքերը ջլատելուն ուղղված, թեեւ պարզունակ, բայց վտանգավոր քայլերը, մասնավորապես, շինծու կամ դրածո թեկնածուների առաջադրումը: Նախընտրական այս տեխնոլոգիան հետապնդում է երկու ակնհայտ նպատակ. առաջին՝ պաշտոնական քարոզարշավի կանոնակարգով այդ թեկնածուներին հատկացված եթերաժամերն օգտագործել ի նպաստ իշխանության ներկայացուցչի, եւ երկրորդ՝ հնարավորության սահմաններում ցրել ընդդիմության ստացած ձայները՝ ընտրակեղծիքները թաքցնելու եւ հիմնական մրցակցի հաղթանակը թույլ չտալու համար: Դրածո թեկնածուների շարքում ես ամենեւին նկատի չունեմ Հայ Հեղափոխական Դաշնակցության եւ «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչներին, որոնք, ունենալով իրենց կայուն ընտրազանգվածը, պայքարի են ելել հստակ գաղափարական նպատակներով: Խոսքը, ինքնըստինքյան հասկանալի է, վերաբերում է որոշ տխրահռչակ աննձավորությունների, ովքեր նույնպիսի չարաբաստիկ դերակատարություն են ունեցել մասնավորապես 1998 եւ 2003 թվականների ընտրություններում, ակնհայտորեն գործելով հաղթող թեկնածուներ Կարեն եւ Ստեփան Դեմիրճյանների դեմ, եւ վերջին հաշվով, նպաստելով Հայաստանի ներկա հանցավոր վարչախմբի կայացմանն ու ամրապնդմանը: Կարծում եմ, մեր հասարակությունը հաշվի կառնի այդ դառը փորձը եւ այլեւս չի խաբվի

նման մարդկանց քաղաքական անպարարություններից, ինչպիսի ամբոխավարական հնարքներով էլ քողարկված լինեն դրանք:

7. Ապատեղեկատվական ռեսուրս. Հայաստանի իշխանությունները վերջին շրջանում, միջոցներ չխնայելով, հարցումներ են պատվիրում արտասահմանյան սոցիոլոգիական կենտրոններին եւ հրճվում դրանց արդյունքներով, որոնց համաձայն՝ Սերժ Սարգսյանին իբր պատրաստ է ձայն տալու հարցվածների շուրջ 30 տոկոսը, իսկ ինձ՝ ընդամենը 2 թե 6 տոկոսը: Ես հիմքեր չունեմ կասկածելու արտասահմանյան այդ հաստատությունների անաչառությանը, սակայն չեմ կարող չնշել տարակուսանք առաջացնող երկու հանգամանք: Առաջին. հարցվածների մոտ 60 տոկոսը հրաժարվում կամ վախենում է արտահայտել իր կարծիքը, ինչը նշանակում է, որ նրանք մտադիր չեն քվեարկելու Սերժ Սարգսյանի օգտին, այլապես վախենալու պատճառ չպիտի ունենային: Եւ երկրորդ. եթե Սարգսյանի եւ իմ վարկանիշներն իսկապես համապատասխանում են իրականությանը, ապա բոլորովին հասկանալի չէ, թե ինչով պետք է բացատրել իշխանությունների սանձազերծած անզուսպ ու տենդագին քարոզարշավն իմ դեմ, ինչպես նաեւ իմ կողմնակիցների նկատմամբ կիրառվող անօրինական գործողություններն ու բռնարարքները, հանրահավաքները խոչընդոտելու կոպիտ փորձերը, մեր գործունեության լիակատար տեղեկատվական շրջափակումը, եւ վերջապես, ոստիկանությանը թռուցիկներ պոկելու նվաստացմանը ենթարկելու ու ծաղրուծանակի առարկա դարձնելու փաստը: Մի՞թե պարզ չէ, որ հրապարակված վարկանիշների իսկության պարագայում նման ջղաձգությունների կարիք չպետք է զգացվեր, եւ Սերժ Սարգսյանն ընտրությունների պիտի գնար դիոլզուտնայի ու փողային նվագախմբի ուղեկցությամբ: Այս ամենից միանշանակորեն հետեւում է միայն մեկ բան, այն է՝ վարչախումբը չի հավատում իր իսկ պատվիրած սոցիոլոգիական հարցումների արդյունքներին, ինչից էլ, ահա, նրա նյարդային վիճակն ու խուճապահար պահվածքը: Սակայն, չնայած դրան, իշխանություններն, այնուամենայնիվ, մեծ հույսեր են կապում այդ հարցումների հետ՝ դրանք դիտելով որպես արտասահմանյան հաստատությունների հեղինակությամբ իրենց ծրագրած ընտրակեղծիքներն արդարացնելու վստահելի միջոց:

Համաժողովրդական Շարժման ռեսուրսները

Ի տարբերություն իշխանությունների, որոնց բոլոր թվարկված ռեսուրսների օգտագործման իրողությունն, անխտիր, օրենքի կոպիտ ոտնահարման տարր է պարունակում, Հայաստանում ձեւավորված նոր համաժողովրդական Շարժումը որդեգրել է բաց, հրապարակային գործունեության մարտավարություն՝ հիմնված իրավագիտակցության, ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության համընդհանուր սկզբունքների վրա: Շարժման սոցիալական բազան ժողովրդական լայն զանգվածներն են, մասնավորապես, հասարակության ընչազուրկ հատվածը, գյուղացիությունը, միջին խավը ներկայացնող գործարարներն ու մտավորականները, ինչպես նաեւ ստորին օղակների պետական պաշտոնեությունը, մի խոսքով՝ վարչախմբից դժգոհ ողջ ընտրազանգվածը: Մեր խնդիրն է, արդ, առավելագույնս մոբիլիզացնել այդ ուժերը՝ Հայաստանի ներկա ավազակապետական ռեժիմի վերարտադրությունը վիժեցնելու նպատակով:

Ընտրական գործընթացի առաջին փուլում, սեպտեմբերի 21-ից մինչ օրս, մեզ հաջողվեց այդ ուղղությամբ հսկայական աշխատանք կատարել եւ հասնել այնպիսի տպավորիչ արդյունքների, որոնք անակնկալ էին մեր ողջ հասարակության համար: Հարկ եմ համարում հատկապես կանգ առնել դրանցից հետեւյալ չորսի վրա.

1. Աջակից ուժերի համախմբումը. Շարժման ամենամեծ նվաճումն, անտարակույս, բազմաթիվ քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների համախմբումն է իմ թեկնածության շուրջ: Ինչպես արդեն առիթ ունեցել եմ նշելու, նրանց միավորում է ոչ թե իմ անձի նկատմամբ տածած անվերապահ վստահությունը, այլ Հայաստանի ներկա ավազակապետական վարչախմբի լուծը թոթափելու եւ երկրի սահմանադրական կարգը վերականգնելու հրամայականը: Ինձ սատարող քաղաքական ուժերի կորիզը կազմում են՝ Ստեփան Դեմիրճյանի առաջնորդած «Հայաստանի ժողովրդական կուսակցությունը», Արամ Սարգսյանի գլխավորած «Հանրապետություն կուսակցությունը» եւ Արարատ Զուրաբյանի ղեկավարած «Հայոց համազգային շարժումը»: Համաժողովրդական նոր Շարժմանը միացած մյուս քաղաքա-

կան ուժերն են՝ «Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը» (ղեկավար՝ Լյուդմիլա Սարգսյան), «Ժողովրդական ուղի կուսակցությունը» (նախագահ՝ Մանուկ Գասպարյան), «Հայաստանի մարքսիստական կուսակցությունը» (նախագահ՝ Դավիթ Հակոբյան), «Պահպանողական կուսակցությունը» (նախագահ՝ Միքայել Հայրապետյան), «Ազատություն կուսակցությունը» (նախագահ՝ Հրանտ Բագրատյան), «Ժողովրդավարական հայրենիք կուսակցությունը» (նախագահ՝ Պետրոս Մակեյան), «Հայաստանի առաջադիմական ազատական կուսակցությունը» (նախագահ՝ Հովհաննես Հովհաննիսյան), «Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ կուսակցությունը» (նախագահ՝ Մկրտիչ (Սոս) Գիմիշյան), «Հայոց հայրենիք կուսակցությունը» (նախագահ՝ Արշակ Բակլաչյան), «Մարդու իրավունքներ-96 կուսակցությունը» (նախագահ՝ Ռուբեն Թորոսյան), «Երրորդ հանրապետություն կուսակցությունը» (նախագահ՝ Կարեն Դավթյան), «Հայրենիք եւ պատիվ կուսակցությունը» (նախագահ՝ Գառնիկ Մարգարյան) եւ «Այլընտրանք հասարակական-քաղաքական նախաձեռնությունը» (համակարգող՝ Նիկոլ Փաշինյան):

Բացի այդ, իմ թեկնածությունը պաշտպանելու վերաբերյալ պաշտոնական հայտարարություններով հանդես են եկել նաեւ հետեւյալ հասարակական կազմակերպությունները՝ «Ազատության փարոս» (նախագահ՝ Սամվել Ավետիսյան), «Համաձայնություն» (նախագահ՝ Դավիթ Շահնազարյան), «21-րդ դարի առաջնորդների ֆորում» (նախագահ՝ Գայանե Սարգսյան), «Երիտասարդ պահպանողականներ» (նախագահ՝ Տիգրան Խաչատրյան), «Հասարակությունն ընդդեմ ահաբեկչության» (նախագահ՝ Տիգրան Հակոբյան), «Իրավունքի եւ ազատության կենտրոն» (նախագահ՝ Վարդան Հարությունյան), «Համագործակցություն եւ ժողովրդավարություն» (նախագահ՝ Գագիկ Ավագյան), «Բազմակարծիքային կենտրոն» (նախագահ՝ Ռուբեն Թորոսյան) եւ «Գործարար կին» (նախագահ՝ Անահիտ Սարգսյան): Շարժմանն իրենց անվերապահ աջակցությունն են հայտնել նաեւ հազարավոր ազատամարտիկներ եւ «Երկրապահ կամավորականների միության» տասնյակ տեղական կառույցներ:

Ոչ մի այլ թեկնածուի շուրջ այսման բազմաբանակ եւ այսման ազդեցիկ ուժեր չեն համախմբվել, ինչը թույլ է տալիս խոսել եթե ոչ ան-

գամ ընդդիմության միասնական թեկնածուի, ապա առնվազն վարչախմբին հակադիր հստակ բեւեռի ձեւավորման մասին: Միանգամայն ակնհայտ է, որ առաջիկա նախագահական ընտրություններում հիմնական պայքարն ընթանալու է Սերժ Սարգսյանի եւ իմ միջեւ: Այս տեսակետն, ի դեպ, արդեն իսկ տիրապետող է ինչպես ներհանրապետական, այնպես էլ արտասահմանյան քաղաքագետների ու վերլուծաբանների հրապարակումներում: Վարչախմբին հակադիր բեւեռի ձեւավորումն, ըստ այդմ, պետք է համարել ընտրական գործընթացի անցած փուլի ամենանշանակալից քաղաքական արդյունքը:

2. Զանգվածային հանրահավաքների անցկացումը. Կարճ ժամանակահատվածում համաժողովրդական Շարժմանը հաջողվեց Երեւանի Ազատության հրապարակում կազմակերպել երեք զանգվածային հանրահավաք, որոնց իրենց մասնակցությունը բերեցին ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ հանրապետության մարզերի բազմահազար բնակիչներ: Ըստ ամենահամեստ գնահատականների՝ հոկտեմբերի 26-ի, նոյեմբերի 16-ի եւ դեկտեմբերի 8-ի հանրահավաքներին ներկա են գտնվել համապատասխանաբար՝ վաթսուն, ութսուն եւ իննսուն հազար քաղաքացիներ: Պետական մարմինները, բնականաբար, շատ ավելի նվազ թվեր հայտարարեցին, իսկ իշխանությունների վերահսկողության տակ գտնվող էլեկտրոնային լրատվամիջոցները կա՛մ ընդհանրապես լռեցին, կա՛մ էլ աղավաղված ու ստահոդ լուրեր արձակեցին այդ հանրահավաքների մասին: Ոչ ոք չժխտեց, սակայն, որ դրանք 2003թ. ընտրություններից հետո ընդդիմության կազմակերպած ամենահուժկու քաղաքական միջոցառումներն էին: Ինքնըստինքյան հասկանալի է, որ վերջին տարիների համար աննախադեպ այդ քաղաքացիական ակտիվությունը չէր կարող չանհանգստացնել իշխանություններին: Ուստի հանրահավաքները խափանելու կամ գոնե դրանց մասնակիցների թիվը նվազեցնելու նպատակով նրանք, չխորշելով ոչ մի միջոցից, դիմեցին բացահայտ օրինազանցությունների ու բռնարարքների: Շուրջ երկու ամիս հանրապետության ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը եւ տեղական ինքնակառավարման մարմինները զբաղված էին բացառապես հանրահավաքների իրազեկմանը խոչընդոտելու, թռուցիկներ պոկելու, Շարժման ակտիվիստների նկատմամբ ճնշումներ

ու բռնություններ կիրառելու ապօրինի գործով: Այս ամենով հանդերձ, իշխանությունները չհասան իրենց ակնկալած նպատակին: Մարդիկ չահաբեկվեցին, չընկրկեցին բիրտ ուժի առջեւ: Ընդհակառակը, թերեւս նաեւ ի հակազդեցություն դրա, ցուցարարների շարքերը հանրահավաքից-հանրահավաք ավելի ստվարացան: Սա միանշանակ կերպով ցույց է տալիս, որ ժողովրդի համբերության բաժակն արդեն լցված է եւ, որ Հայաստանի քաղաքացիների մի զգալի մասը վերջնականապես հաղթահարել է երկրում տիրող վախի մթնոլորտը: Հետեւաբար, մենք ականատեսն ենք մի այնպիսի հուսադրիչ իրողության, որն ընտրությունների միջոցով իշխանական ավազակախմբից ազատվելու ամենաանհրաժեշտ գրավականն է:

3. Տեղեկատվական շրջափակման հաղթահարումը. Կասկած չկա, որ մինչեւ 2008թ. հունվարի 20-ը մեզ համար այդպես էլ փակ են մնալու Հայաստանի էլեկտրոնային լրատվամիջոցների զրահապատ դռները, որոնց ետեւում բարիկադավորված են վարչախմբի աչալուրջ պահապանները: Կասկած չկա նաեւ, որ այդ ընթացքում ողջ պետական մեքենան միեւնույն կամ, գուցեեւ, ավելի մեծ թափով շարունակելու է գեբելսյան ավանդույթների վրա հիմնված իր քարոզչությունն ու հակաքարոզչությունը: Այնուամենայնիվ, վիճակն այնքան էլ անմխիթարական չէ, որքան թվում է առաջին հայացքից: Շարժման ղեկավարության հմտության եւ ակտիվիստների ջանասիրության շնորհիվ մեզ, ըստ էության, հաջողվել է հաղթահարել տեղեկատվական այդ շրջափակումը, եւ վարչախմբի գոեհիկ քարոզչությանը հակադրել մեր անհամեմատ ավելի արդյունավետ քարոզչությունը: Ես նկատի ունեմ, առաջին հերթին, հանրահավաքներում հնչած ելույթների տեսասկավառակների բազմացումն ու տարածումը, որոնց ընդհանուր տպաքանակն անցնում է 100 հազարից: Շարժման հազարավոր անդամների կողմից այդ տեսասկավառակները կազմակերպված կերպով ցրվում են ողջ հանրապետությունով մեկ՝ հասանելի դառնալով ավելի քան կես միլիոն մարդու: Տվյալ միջոցով մենք փաստորեն ստեղծել ենք մեր սեփական հեռուստատեսությունը, ինչի համար երախտապարտ պետք է լինենք Բիլ Գեյթսին: Բացի դրանից, մասնավորապես իմ ելույթների հայերեն բնագրերն ու նրանց անգլերեն եւ ռուսերեն թարգմանությունները

գրոյկների տեսքով տպագրվում են տասնյակ հազարների հասնող տպաքանակով՝ նույնպես արագորեն տարածվելով հասարակության բոլոր շերտերում: Եթե սրան գումարենք նաեւ Շարժման գաղափարակիր կամ համակիր թերթերի՝ «Հայկական ժամանակի», «Հայրի», «Զորոդ իշխանության», «Ժամանակ Երեւանի» եւ «Տարեգրի» հրապարակումները, ինչպես նաեւ իմ անունով բացված ինտերնետային կայքի նյութերը, ապա դժվար է ասել ով ում պիտի նախանձի՝ իշխանությունները՞ մեզ, թե՞ մենք իշխանություններին: Դրա հետ մեկտեղ, հասկանալի է, որ մենք չպետք է բավարարվենք ձեռք բերվածով, այլ ընդհակառակը, պետք է ավելի եւս լարենք մեր ջանքերը՝ վերը նշված քարոզչական հնարավորություններն առավելագույնս օգտագործելու ուղղությամբ, քանի որ բացի հանրահավաքներից, տեսասկավառակներից, գրոյկներից ու թերթերի հրապարակումներից, մենք առայժմ ժողովրդի հետ անմիջականորեն հաղորդակցվելու այլ միջոց չունենք:

4. Ավազակապետական համակարգի մերկացումը. Թեեւ վերջին տաս տարիների ընթացքում շատ քննադատություն է հնչել Հայաստանի ներկա իշխանությունների հասցեին, սակայն մինչեւ այս աշուն, նրանց ձեւավորած ավազակապետական համակարգի էությունը չէր բացահայտվել, եւ մեր հասարակությունը փաստորեն լիովին անտեղյակ էր, թե ինչպիսի երկրում է ապրում: Մարդիկ դժգոհում էին ամեն ինչից՝ սոցիալական վիճակից, գների աճից, դոլարի կուրսի անկումից, չդադարող արտագաղթից, խոսքի ազատության սահմանափակումներից, մարդու իրավունքների խախտումներից, պետական պաշտոնյաների կամայականություններից, կաշառակերությունից, հովանավորչությունից, մաքսային եւ հարկային ծառայությունների սանձարձակությունից, ոստիկանության ապօրինի գործողություններից, դատարանների եւ դատախազության կողմնակալությունից, քրեական հանցագործությունների աճից եւ այլն, բայց ըստ էության, չէին ըմբռնում, թե որն է այդ արատավոր երեւույթների պատճառը: Ընդ որում, օբյեկտիվորեն չէին էլ կարող դա ըմբռնել, որովհետեւ պետության լիակատար վերահսկողության տակ գտնվող էլեկտրոնային լրատվամիջոցները, որոնք հասարակական կարծիքի ձեւավորման ամենաազդեցիկ գործիքներն են, տասը տարի շարունակ գրեթե բացարձակապես անտեսել են նշված երեւույթները եւ

ժողովրդին իրականության բոլորովին այլ պատկեր ներկայացրել: Եթե դատելու լինենք մեր հեռուստատեսությունից, ապա մենք ապրում ենք ծաղկուն, բարգավաճող, լուրջ տնտեսական նվաճումներ արձանագրող, իրավական, ժողովրդավարական, խաղաղակիրթ մի երկրում, որի հոգսերով տառապող պետական պաշտոնյաները գիշեր-ցերեկ մտածում են ժողովրդի բարօրության մասին՝ ձեռքի հետ էլ ժապավեններ կտրում, շքանշաններ բաժանում, տոնախմբություններ ու համերգներ կազմակերպում, ստեղծելով խրախճանքի, լավատեսության ու անհոգության երազային մի մթնոլորտ:

Ընդամենը երեք զանգվածային հանրահավաքների հետեւանքով, որոնցում լիովին բացահայտվեց Հայաստանի ներկա ավազակապետական համակարգի էությունը, իշխանական քարոզչամեքենայի տասը տարվա աշխատանքը, կարելի է ասել, մեկ օրում ջուրը թափվեց: Ժողովուրդն առաջին անգամ հնարավորություն ստացավ ծանոթանալու ողջ ճշմարտությանը, այդպիսով որոշ չափով հագեցնելով իր երկարամյա տեղեկատվական քաղցը: Հանրահավաքների, ինչպես նաեւ մեր տարածած գրքույկների եւ տեսասկավառակների նկատմամբ առկա արտասովոր հետաքրքրությունը մասամբ պետք է բացատրել, ահա, այդ տեղեկատվական քաղցով: Հասարակական կարծիքի ձեւավորման այս նոր մթնոլորտի ազդեցությամբ՝ պետական քարոզչամեքենան հայտնվեց կաթվածահար վիճակում, որի բացահայտ ախտանիշներն են նրա անկազմակերպ, հախուռն ու գոռհիկ հեռարձակումները: Ստի, կեղծիքի, ապատեղեկատվության վրա հիմնված քարոզչությունն այլ վախճան չէր կարող ունենալ: Վերջին հաշվով, ավազակապետական համակարգի մերկացումն էր այն գլխավոր գործոնը, որն առաջացրեց հասարակական կարծիքի վճռորոշ բեկումը:

Ամփոփելով կարճատեւ շրջանում Շարժման անդամների կատարած հսկայածավալ աշխատանքը, կարծում եմ, լուրջ հիմքեր կան պնդելու, որ ընտրական գործընթացի առաջին փուլն ավարտվեց վարչախմբի դեմ տարած մեր փայլուն հաղթանակով: Դրա անժխտելի վկայությունը ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխության վրա հիմնված խաղաղական այն նոր իրավիճակն է, որն անհնար էր պատկերացնել թեկուզ երեք ամիս առաջ: Տվյալ իրավիճակը միաժամանակ

այն հուսալի հենակետն է, որի վրա պետք է խարսխվի բազմապատիկ ավելի արդյունավետ մեր հետագա աշխատանքը:

Ընտրական գործընթացի հաջորդ փուլի խնդիրները

Կարելի է ասել, այսօրվանից սկսվում է ընտրական գործընթացի հաջորդ՝ վճռական փուլը, որի խնդիրների հստակեցմանն էլ նվիրված է, ահա, սույն ներկայացուցչական համաժողովը: Դրանք, բնականաբար, իրենց բնույթով որոշակիորեն տարբերվելու են առաջին փուլում իրականացված խնդիրներից, քանի որ թելադրված են բոլորովին այլ պահանջներով ու մարտահրավերներով: Եթե առաջին փուլում մեր աշխատանքը սահմանափակվում էր հանրահավաքների կազմակերպմամբ եւ դրանց տպագիր ու տեսահոլովակային նյութերի տարածմամբ, նպատակ հետապնդելով համապատասխան հասարակական կարծիք ձեւավորել, ապա առաջիկայում, կարծում եմ, հստակ ուշադրություն պետք է դարձնել կազմակերպչական հարցերի եւ քարոզչական դաշտի ընդլայնման վրա: Կազմակերպչականի տակ ես, առաջին հերթին, նկատի ունեմ հետեւյալ հրատապ խնդիրները.

1. Կենտրոնական նախընտրական շտաբի ստեղծումը. Շարժման ակտիվիստների գործունեությունը կազմակերպելու եւ համակարգելու կոչված այդ մարմինը ձեւավորվելու է օրենքով սահմանված ժամկետներում՝ ունենալով մոտավորապես հետեւյալ կառուցվածքը.

– **Շտաբի պետ**, որի նշանակումը գտնվում է իմ իրավասությունների շրջանակում, ըստ այդմ, քննարկման ենթակա չէ, ինչը չի նշանակում, անշուշտ, որ ես բացառում եմ դրա հետ կապված խորհրդակցությունների անցկացում:

– **Քաղաքական խորհուրդ,** որի կազմում ընդգրկվելու են իմ թեկնածության պաշտպանությամբ հանդես եկած կուսակցությունների առաջնորդները կամ նրանց ներկայացուցիչները: Խորհրդի իրավասությունը նախընտրական քարոզարշավի ընդհանուր ռազմավարության մշակումն ու ինձ սատարող ուժերի գործունեության համակարգումն է: Քաղաքական խորհրդի նիստերը հրավիրելու եւ վարելու է նախընտրական շտաբի պետը:

– **Գործադիր մարմին՝** կազմված գլխավորապես առայսօր գործող «Տեր-Պետրոսյանի առաջադրման քաղաքացիական նախաձեռնության գրասենյակի» աշխատակիցներից, որոնց ուսերին էր դրված ընտրական գործընթացի առաջին փուլի բոլոր միջոցառումների կազմակերպումը՝ պարտականություն, որ նրանք կատարեցին փայլուն կերպով: Դա հիմք է տալիս նրանց օժտելու նաեւ մեր Շարժման հետագա գործողությունները ղեկավարելու լայն լիազորություններով:

– **Աշխատանքային բաժանմունքներ,** որոնցում, ըստ ունակությունների եւ նպատակահարմարության, ներկայացված են լինելու համաժողովրդական Շարժման մեջ ընդգրկված բոլոր կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների անդամները, ինչպես նաեւ պրոֆեսիոնալ հիմունքներով ընտրված բազմաթիվ մասնագետներ: Նախատեսվում է, մասնավորապես, ստեղծել հետեւյալ բաժանմունքները՝ լրատվական, ինտերնետային, քարոզչական, վերլուծական, հրատարակչական, արտաքին կապերի եւ այլն:

Քանի դեռ Կենտրոնական շտաբը ստեղծված չէ, մեր գործունեության մեջ զգացվելու է աշխատանքների կազմակերպման ու համակարգման որոշակի պակաս, ծագելու են ինչ-ինչ անհամաձայնություններ ու թյուրիմացություններ, որոնք, սակայն, վստահ եմ, լիովին կվերանան, երբ այդ կարեւոր կառույցը, վերջապես, սկսի գործել:

2. Տարածքային գրասենյակների ձեւավորումը. Մենք ծրագրել ենք այդպիսի գրասենյակներ բացել Երեւանի բոլոր համայնքներում, Գյումրիում, Վանաձորում, ինչպես նաեւ Հայաստանի նախկին շրջանային կենտրոններում ու քաղաքատիպ ավաններում: Թեեւ այդ ուղղությամբ աշխատանքը վաղուց սկսվել է, եւ շուրջ մեկ տասնյակ այդպիսի գրասենյակներ արդեն իսկ գործում են, սակայն տվյալ բնագավառում ձեռքբերված արդյունքներն առայժմ գոհացուցիչ չեն կարող համարվել: Ուստի Շարժումն իր առաջնահերթ խնդիրը պետք է համարի մինչեւ Նոր տարի ավարտին հասցնել այդ կարեւորագույն գործը:

Տարածքային գրասենյակները կոչված են իրականացնելու հետեւյալ հիմնական գործառույթները.

– Կենտրոնական շտաբից ստացված հրահանգների, ազդագրերի, հրատարակությունների, տեսանյութերի, մամուլի հրապարակումների

արագ եւ կազմակերպված տարածումը՝ այն հաշվով, որ Հայաստանի ոչ մի քաղաքացի անտեղյակ չմնա մեր գաղափարներին ու ծրագրերին.

– Շարժման մասնակից բոլոր քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների տեղական կառույցների ողջ ներուժի օգտագործումը.

– Ամենօրյա քարոզչության եւ գյուղից-գյուղ, շենից-շենք, տնից-տուն այցելությունների միջոցով Շարժման կողմնակիցների եւ համակիրների շրջանակի ընդլայնումը.

– Յուրաքանչյուր գյուղում, յուրաքանչյուր փողոցում, յուրաքանչյուր շենքում քարոզիչների եւ համակիրների բջիջների ստեղծումը.

– Ակտիվ մասնակցությունը ընտրացուցակների կազմման եւ ճշգրտման գործում.

– Իշխանությունների կողմից ընտրական օրենքի խախտումների եւ այլ օրինազանցությունների արձանագրումն ու դրանց հիման վրա կազմված տեղեկանքների ներկայացումը Կենտրոնական շտաբ.

– Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը ոստիկանության, անվտանգության ծառայության, հարկային տեսչության, տեղական ինքնակառավարման մարմինների, թաղային հեղինակությունների եւ բեռական տարրերի ոտնձգություններից.

– Եւ վերջապես, ընտրությունների օրը տեղամասերում ընդհանուր վերահսկողության եւ դիտորդական առաքելության իրականացումը:

Տարածքային գրասենյակներին կարեւոր դեր է վերապահված նաեւ վստահված անձանց ինստիտուտի ձեւավորման, ինչպես նաեւ մարզային, շրջանային, համայնքային հանրահավաքների եւ քարոզչական այլ միջոցառումների կազմակերպման գործում:

3. Մարզային հանրահավաքների կազմակերպումը. Առաջիկա երկու ամիսների ընթացքում ես ծրագրել եմ հատուկ ժամանակացույցով այցելել հանրապետության մարզեր եւ նրանցից յուրաքանչյուրում առնվազն մեկական խոշոր հանրահավաք կամ դահլիճային հանդիպում անցկացնել: Նույնպիսի միջոցառումներ են նախատեսված նաեւ մայրաքաղաքի բոլոր համայնքներում: Բացի այդ, ես կաշխատեմ նաեւ՝ Շարժման ղեկավարության ուղեկցությամբ եւ քարոզչական ավտոերթերով, լինել որքան հնարավոր է շատ գյուղական բնակավայրերում՝

ժողովրդի հետ ավելի անմիջականորեն շփվելու եւ նրանց առօրյա հոգսերին ծանոթանալու նպատակով: Այդ շրջագայությունների ընթացքում, բնականաբար, կայցելեմ նաեւ տարածքային գրասենյակներ՝ կարճ խորհրդակցություններ անցկացնելով նրանց աշխատակազմերի եւ տեղական ակտիվիստների հետ: Մարզերում հանրային միջոցառումների կազմակերպման եւ անցկացման խնդիրը դրվելու է Կենտրոնական շտաբի եւ տարածքային գրասենյակների վրա: Քարոզարշավն ավարտվելու է՝ փետրվար ամսին, Երեւանի Ազատության հրապարակում, ծրագրված առնվազն երկու զանգվածային հանրահավաքներով:

4. Վստահված անձանց ինստիտուտի եւ դիտորդների դասի ձեւավորումը. Վստահված անձանց ինստիտուտում պետք է ընդգրկվեն ինչպես անվանի մարդիկ՝ քաղաքական գործիչներ, մտավորականներ, գիտնականներ, արվեստագետներ եւ այլն, այնպես էլ ընտրությունների վերահսկման փորձ ունեցող մասնագետներ: Վստահված անձանց թեկնածությունները պետք է քննարկվեն տարածքային կառույցներում եւ հաստատվեն Կենտրոնական շտաբի համաձայնությամբ: Ինչպես Կենտրոնական շտաբում, այնպես էլ տարածքային գրասենյակներում վստահված անձանց համար անհրաժեշտ է կազմակերպել մեթոդական կարճատեւ դասընթացներ՝ բացատրելու համար նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ինչ վերաբերում է դիտորդների դասին, ապա անհրաժեշտ է այդ հարցում սերտորեն համագործակցել նման առաքելության իրավունք ունեցող տեղական հասարակական կազմակերպությունների եւ միջազգային կառույցների հետ:

Հասկանալի է, որ առաջիկա ամիսներին եւ մանավանդ պաշտոնական քարոզարշավի ընթացքում հնարավոր են նաեւ այլ տիպի, երբեմն չնախատեսված, միջոցառումներ՝ համերգներ, երթեր, բողոքի ցույցեր, տարածաշրջանային ժողովներ եւ այլն:

Շարժման քարոզչության հիմնական ուղղվածությունը

1. Մեր նախընտրական քարոզչության գլխավոր ուղղությունը լինելու է Հայաստանի ներկա ավազակապետական վարչախմբի լիակատար մերկացումն ու նրա վերարտադրության անթույլատրելիության

գիտակցության արմատավորումը: Շարժման յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա ժողովրդին բացատրել հակակշիռներից զուրկ պետական բուրգի վտանգավորությունը, օրենսդիր եւ դատական իշխանությունների անկախության կենսական անհրաժեշտությունը, իրավական պետության, ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության կարեւորությունը, երկրում առկա հոռի երեւույթների՝ կաշառակերության, հովանավորչության, պաշտոնական շահագրգիռների, տնտեսական մրցակցության բացակայության, սոցիալական վիճակի վատթարացման, հանցագործությունների աճի, արտագաղթի շարունակման, մշակույթի անկման, բարքերի արատավորման պատճառները:

Պատճառներից հիմնականը Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի ստեղծած թաքար-մոնոլոգական տիպի պետական համակարգն է, որի գոյության իմաստը իշխանական բուրգի եւ նրա սպասավորների գերհարստացման ապահովումն է՝ ի հաշիվ օտար զանգված դիտվող ժողովրդի բարեկեցության եւ արժանապատիվ կյանքի: Այդ համակարգի էությունն ու գործողության մեխանիզմը ես հանգամանորեն ներկայացրել եմ դեկտեմբերի 8-ի հանրահավաքի իմ ելույթում, ուստի հարկ չեմ համարում ծավալվել դրա շուրջ: Իշխանության անսահմանափակ կենտրոնացումը պետությունն իրենց սեփական կալվածքը համարող մարդկանց ձեռքում ոչ միայն խարխլում է արդի տնտեսագիտության, ժողովրդավարության, սոցիալական արդարության հիմքերը, այլեւ վտանգում երկրի ապագան անգամ:

Հաջորդ ակնհայտ պատճառը իշխանությունների վարած արատավոր տնտեսական քաղաքականությունն է, որում հիմնովին խախտված են շուկայական տնտեսության երեք ամենագլխավոր սկզբունքները՝ հավասար հնարավորությունների ընձեռումը, ազատ մրցակցության ապահովումը եւ սեփականության անձեռնմխելիության երաշխավորումը: Ինչպես արդեն նշել եմ, տնտեսական բնագավառում մեզ մոտ ամեն ինչ կարգավորվում է ոչ թե շուկայական հարաբերություններով, այլ իշխանությունը բռնազավթած փոքրաթիվ անձանց կամքով ու հրահանգներով: Պետության ամենաբարձր պաշտոնյաների գրասենյակներում են որոշվում, մասնավորապես, սեփականության բաշխման, պետական գույքի եւ հողի վաճառքի, մենաշնորհային արտոնությունների

շնորհման, աճուրդների եւ տենդերների կազմակերպման, արտահանման եւ ներմուծման քվոտաների սահմանման, ընդհուպ մինչեւ լիցենզիաների տրամադրման եւ հողահատկացումների ու շինարարական աշխատանքների թույլտվության հարցերը: Հայաստանի տնտեսության ամենակործանարար խեղումը նրա համատարած մոնոպոլիզացիան է, ինչի պատճառով երկրի հարստության կեսից ավելին հայտնվել է շուրջ 40 ընտանիքի ձեռքում: Ընդ որում, մոնոպոլիզացիան առաջացել է ոչ թե բնական ճանապարհով, այլ հովանավորչության, հրահանգավորման, գործարարների համար անհավասար պայմաններ ստեղծելու հետեւանքով, ինչն այլ կերպ, բան դիտավորյալ հանցագործություն չի կարելի որակել:

Եւ վերջապես, երրորդ նկատելի պատճառը երկրի ներկա վարչախմբի իրականացրած, մեղմ ասած, տարօրինակ, իսկ խստորեն արտահայտված, անճարակ արտաքին քաղաքականությունն է: Տասը տարի շարունակ Հայաստանի նախագահն ու արտաքին գործերի նախարարը՝ ընդհանուր դատարկաբանություններից, հախուռն, կցկտուր, հակասական հայտարարություններից բացի, ժողովրդին արտաքին քաղաքականության վերաբերյալ որեւէ հստակ վերլուծություն կամ փաստարկված ծրագիր չեն ներկայացրել: Ըստ էության, որեւէ առաջընթաց չի արձանագրվել, իսկ որոշ դեպքերում ետընթաց է տեղի ունեցել արտաքին քաղաքականության այնպիսի կենսական եւ հրատապ խնդիրների լուծման գործում, ինչպիսիք են՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, երկրի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, հաղորդակցության ուղիների շրջափակման վերացումը, Հայաստանի ներգրավումը միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական ծրագրերում, հայ-թուրքական հարաբերությունների կառուցումը եւ այլն: Տպավորություն է ստեղծվում, որ միջազգային հարաբերությունների բնագավառում Հայաստանի իշխանություններն, իրենց անպատասխանատու վարքով, ավելի շատ խնդիրներ են հարուցել, բան փորձել հարթել դրանք:

* * *

2. Քարոզչության ընթացքում ժողովրդի հետ պետք է խոսել պարզ, մատչելի, նրան հասկանալի լեզվով՝ խուսափելով տեսական դատողություններից, մասնագիտական տերմինոլոգիայից եւ ընդհանրական գնահատականներից: Իշխանություններին հասցեագրված քննադատությունը հիմնված պետք է լինի ոչ թե մերկապարանոց հայտարարությունների եւ հնչեղ ոռակումների, այլ կոնկրետ փաստերի եւ հիմնավորված մեղադրանքների վրա: Նկատի ունենալով, որ հասարակության համար ամենաանհանդուրժելի երեւույթը կոռուպցիան է, ապա դրա դեմ պայքարը պետք է կարեւորագույն տեղ զբաղեցնի մեր նախընտրական քարոզչության մեջ: Մարդկանց ուշադրությունն անհրաժեշտ է սեւեռել հատկապես պետական մասշտաբի խարդախությունների եւ ֆինանսական չարաշահումների վրա, որոնց պատճառած վնասը հասնում է մի քանի միլիարդ դոլարի՝ ամեն տարի գերազանցելով պետական բյուջեի հայտարարված եկամուտները: Նախորդ ելույթներում ես հիշատակեցի երեք այդպիսի աղաղակող մեքենայություն, որոնց կրկին հարկադրված եմ անդրադառնալ, քանի որ պետական մարմինները որեւէ կերպ չարձագանքեցին իմ բերած փաստերին: Եւ այսպես.

– «Հայոռուսգազարդ» ընկերության հիմնադրման պայմանագրով՝ ռուսական կողմն իր 55% կազմող մասնաբաժինը պարտավորվել էր վճարել գազով, որը չորս տարվա ընթացքում պիտի ձրի մատակարարվեր Հայաստանին՝ վաճառելու համար հանրապետության բնակիչներին ու ձեռնարկություններին: Հանրապետության ներկա իշխանություններն այդ գազաֆանակն սպառեցին երկու տարում, 1998–1999 թվականներին, իսկ նրա վաճառքի դիմաց գոյացած 148 միլիոն դոլարը, նախագահ Քոչարյանի վկայությամբ, պարզապես անհետացավ: Եւ մինչ օրս էլ ոչ ոքի հայտնի չէ, թե ում գրպանում հայտնվեց, նույնիսկ ամենահարուստ երկրների չափանիշներով պատկառելի համարվող, այդ գումարը:

– Պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ 2002 թվականից սկսած, Հայաստան ներմուծվող բենզինի ամսական ծավալները կազմում են 12.000 – 15.000 տոննա, մինչդեռ հայտնի է, որ 1997 թվականի աշնանն արդեն ներկրվում էր ամսական 30.000 տոննա: Ինչո՞վ բա-

ցատրել հանրապետությունում բենզինի սպառման այս շեշտակի անկումը: Չէ՞ որ մեր երկրում արձանագրվող «աննախադեպ տնտեսական զարգացման» եւ ավտոմեքենաների թվի անընդհատ աճի պայմաններում բենզինի պահանջարկը ոչ թե պիտի նվազեր, այլ ավելանար: Իրականում, մասնագետների գնահատմամբ, 2002 թվականից ի վեր, Հայաստանը ներմուծել է ամսական ավելի քան 50.000, թերեւս, անգամ 60.000 տոննա բենզին: Դա նշանակում է, որ վեց տարվա կտրվածքով, պաշտոնական վիճակագրությունը չի հաշվառել շուրջ երեք միլիոն տոննա բենզին, որը, բնականաբար, դուրս է մնացել հարկման դաշտից: Թե ինչ ահռելի չգանձված պետական եկամուտների մասին է խոսքը, ցանկացած տնտեսագետ կարող է հեշտությամբ հաշվել:

– Նույնպիսի արտառոց մի մեքենայություն էլ կապված է ղազախական գազի խոշոր ծավալների ներմուծման հետ, որն ընդհանրապես արտացոլված չէ Հայաստանի վիճակագրական պաշտոնագրերում: Այդ փաստն ինձ հաջողվեց բացահայտել միայն Ղազախստանի պաշտոնական վիճակագրությանը ծանոթանալու շնորհիվ, ըստ որի՝ այդ երկիրը 2006 թվականին Հայաստան է արտահանել շուրջ 1 միլիարդ 200 միլիոն խորանարդ մետր գազ, որի արժեքը կազմում է 157 միլիոն դոլար: Մնում է գուշակել, թե ում բանկային հաշվի վրա է նստել այդ գազաբանակի վաճառքից գոյացած գումարը: Ի դեպ, բացառված չէ, որ այդ գործարքը շարունակվում է նաեւ այս տարի, սակայն քանի որ 2007 թվականի վիճակագրական տվյալները դեռեւս հրապարակված չեն՝ դա չենք կարող պնդել:

– Թեեւ ոչ իմ ելույթում, այլ մամուլում վերջերս հրապարակումներ եղան ներկա վարչախմբի հանցավոր էությունը բացահայտող եւս մի աներեւակայելի փաստի մասին: Խոսքը վերաբերում է 2004 թվականին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության վերահսկողության վարչության կողմից Արարատյան մաքսատանը կատարված ստուգումներին: Այդ ստուգումների հիման վրա կազմվել է Թ. 223 ակտը, որը ստորագրել են՝ վերահսկողության վարչության կողմից Ն. Գրիգորյանը, Գ. Հարությունյանը, Ա. Բաբաջանյանը եւ Ա. Հարությունյանը, իսկ մաքսատան կողմից՝ Ա. Ստեփանյանը, Ս. Ավետիքյանը, Ա. Հարությունյանը եւ Լ. Պողոսյանը: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ 2001–2003 թվականների ժամանակամիջոցում մաքսա-

տան աշխատակիցների անփութության կամ չարաշահումների պատճառով պետական բյուջե չի մուտքագրվել ավելի քան 12 միլիարդ դրամ (մոտ 20 միլիոն դոլար): Թեեւ սա վերոհիշյալ դեպքերի համեմատ մեծ գումար չի կազմում, սակայն տվյալ պարագայում մենք գործ ունենք բոլորովին այլ բնույթի մի ապօրինության հետ: Ստուգման ակտը ինչոր մեկի հրամանով անհետացել է, իսկ Ֆինանսների նախարարության վերահսկողության ծառայության պետը՝ հայտնվել բանտում:

Թեեւ իշխանությունները չափազանց բուռն արձագանքեցին իմ ելույթներին, բայց զարմանալիորեն նրանք բոլորովին շրջանցեցին «Հայռուսգազարդի» մատակարարած գազի գումարին, հանրապետություն մտնող բենզինի ծավալներին եւ ղազախական գազի ներմուծմանը վերաբերող հարցերը: Այդ մասին քար լռություն պահպանեցին թե՛ հանրապետության պերճախոս նախագահը, թե՛ համեստափայլ վարչապետը: Լռեցին նաեւ խորհրդարանի պատվավոր անդամները, օրինապաշտ գլխավոր դատախազը եւ անգամ՝ նախագահի թեկնածուները: Ի՞նչն է, արդ, այս տոտալ համրության պատճառը: Ո՞չ արդյոք այն, որ մենք խփել ենք ճիշտ նշանակետին, եւ իշխանություններին ներկայացրել այնպիսի կոնկրետ ու ծանրագույն մեղադրանքներ, որոնց պատասխանը նրանք չունեն: Մի՞թե ավելի համոզիչ փաստարկ է պետք Հայաստանում առկա կոռուպցիայի աստիճանը պատկերացնելու եւ ներկա վարչախմբի հանցավորությունն ապացուցելու համար: Բերված փաստերի շուրջ լռություն պահպանելով, իշխանությունները թերեւս հույս են փայփայում, որ ժողովուրդը դրանք չի նկատի կամ արագ կմոռանա: Մեր խնդիրն է, ըստ այդմ, ի դերեւ հանել նրանց հույսերը, եւ ամենօրյա հիշեցումով այդ փաստերը հասցնել Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու ականջին:

* * *

3. Իշխանություններն անարձագանք են թողնում ոչ միայն կոռուպցիայի կոնկրետ, թեկուզ աղաղակող, դեպքերին վերաբերող մեղադրանքները, այլեւ մակրոտնտեսական նշանակություն ունեցող աննորմալ ու չափազանց մտահոգիչ երեւույթների քննադատությունները:

Դրանցից մեկը Հայաստանի տնտեսագետների եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների փորձագետների կողմից առաջ քաշված այն սկզբունքային հարցադրումն է, թե ինչու տնտեսական աճի երկնիշ տարեկան ցուցանիշների կամ վագրային թռիչքների պայմաններում բնակչության կենսամակարդակի որակական փոփոխություն չի արձանագրվում: Պարադոքսի բանալին, իմ կարծիքով, տվել են Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները, բայց դրա վրա առայժմ ոչ ոք լուրջ ուշադրություն չի դարձրել: Ես նկատի ունեմ նրանց մատնանշած այն ուշագրավ փաստը, որ Հայաստանի բյուջեն կազմում է համախառն ներքին արդյունքի 14 տոկոսը, մինչդեռ աշխարհի մնացյալ երկրներում, սովորաբար, այն հասնում է ՀՆԱ-ի մոտ 30–45 տոկոսին: Դա կարող է ունենալ երեք ակնհայտ բացատրություն՝ կա՛մ Հայաստանի համախառն ներքին արդյունքի ցուցանիշներն ուռճացված են, կա՛մ բյուջեի իրական եկամուտները թաքցված են, կա՛մ էլ միաժամանակ տեղի է ունեցել թե՛ մեկը, թե՛ մյուսը: Սա նշանակում է, որ բոլոր դեպքերում մենք գործ ունենք ծանրագույն հանցագործության, կամ այլ կերպ ասած, պետական մասշտաբի տնտեսական խարդախության մի ահավոր դրսեւորման հետ, որի համար, առաջին հերթին, պատասխանատու են հանրապետության նախագահը, վարչապետը եւ Կենտրոնական բանկի նախագահը: Ավելորդ չեմ համարում այս առիթով կրկնել նախորդ ելույթներից մեկում իմ արած պատասխանատու հայտարարություններից մեկը, այն է՝ համատարած կողոպուտի եւ պետական ռեկետի պատճառով Հայաստանում գոյանում է երկու բյուջե՝ մեկը պաշտոնապես հայտարարվածը, մյուսը՝ իշխանությունների գրպանում հայտնվածը, ընդ որում, դատելով հաշվարկներից, երկրորդ բյուջեն անհամեմատ ավելի մեծ է առաջինից:

Իշխանությունների կողմից համարյա լիակատար անուշադրության է մատնված մակրոտնտեսական առումով նույնպիսի աղետալի հետեւանքներ ունեցող մի այլ վտանգավոր երեւույթ՝ այսպես կոչված, դրամի արժեւորման չդադարող գործընթացը: «Այսպես կոչված» արտահայտությունը ես օգտագործում եմ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ «դրամի արժեւորումը» սխալ տերմին է, քանի որ այն տեղի է ունենում ոչ միայն համաշխարհային ֆինանսական շուկաներում դոլարի կուրսի անկման, այլեւ տնտեսապես չհիմնավորված արհեստա-

կան պատճառներով: Սակայն սա ընդամենը հարցի ձեւական կամ արտաքին կողմն է: Ինչ վերաբերում է նրա էությանը, ապա կարեւոր է պարզել, թե դրամի «արժեւորման» այդ գործընթացը ինչպիսի բացասական ազդեցություն է գործում երկրի տնտեսության եւ բնակչության սոցիալական վիճակի վրա:

Անզեն աչքով իսկ նկատելի է, որ դրանից, առաջին հերթին, տուժում է արտերկրից կատարված դրամական փոխանցումների հաշվին ապրող Հայաստանի բնակչության զգալի մի հատվածը, որի եկամուտները, փաստորեն, նվազել են շուրջ 40 տոկոսով: Այնպես որ, դրամական փոխանցումների տարեցտարի աճող ծավալներն ամենեւին բնակչության կենսամակարդակի բարելավում չեն նշանակում:

Տվյալ գործոնը լուրջ սոցիալական խնդիրներ է հարուցում նաեւ այլ առումներով: Մասնավորապես, այն խթանում է, առանց այդ էլ, վտանգավոր չափերի հասած արտագաղթը: Դրամի շեշտակի «արժեւորման» պատճառով, մանավանդ ուղեկցված ապրանքների անընդհատ թանկացումով, արտագնա աշխատանքի մեկնած մարդկանց համար ավելի հեշտ է իրենց ընտանիքները պահել արտասահմանում, քան Հայաստանում:

Տնտեսական առումով՝ այդ անվերահսկելի, կամ շահադիտաբար կարգավորվող, գործընթացն ամենամեծ հարվածն է հասցնում Հայաստանի նորաբողբոջ արտահանող արդյունաբերությանը, որի արտադրած ապրանքները, դրամի «արժեւորման» հետեւանքով առաջացած ինքնարժեքի բարձրացման պատճառով, միջազգային շուկայում կորցնում են իրենց մրցունակությունը: Դրամի «արժեւորումը» բացասաբար է անդրադառնում նաեւ ներքին սպառման համար նախատեսված ապրանքների եւ գյուղատնտեսական մթերքների արտադրության վրա, քանի որ դրանց ներմուծումն ավելի ձեռնտու է դառնում, քան արտադրումը:

Սակայն չի կարելի ասել, որ դրամի «արժեւորումից» Հայաստանում կան միայն տուժողներ: Այդ անհասկանալի գործընթացի գաղտնիքը, թերեւս, կայանում է հենց նրանում, որ, ակնհայտորեն, կան նաեւ շահողներ: Այլապես, դրամի կուրսի արհեստական բարձրացումը կամ նրա հանկարծակի փոփոխությունները բացատրություն չէին կարող ունենալ: Շահողներ ասելով, ես նկատի ունեմ ոչ այնքան փոխարժեքի տատանումների վրա սպեկուլյացիա անողներին, որքան ներմուծման բնագավառում մենաշնորհային դիրքեր ունեցող գործարարներին,

որոնք սոսկ դրամի «արժեւորման» շնորհիվ, փաստորեն առանց վաստակի, ահռելի գերշահույթներ են ստանում: Այդ գերշահույթների աղյուծի բաժինը նրանք, բնականաբար, հատկացնում են իրենց հովանավորող իշխանության ներկայացուցիչներին:

Քանի որ իշխանությունները մինչեւ օրս հասարակությանը որեւէ հիմնավորված բացատրություն կամ մասնագիտական վերլուծություն չեն ներկայացրել դրամի «արժեւորման» եւ նրա աղետալի հետեւանքների մասին, ապա դա պետք է դառնա մեր ամենօրյա քարոզչության գլխավոր թեմաներից մեկը:

* * *

4. Այսպիսով, այսօրվանից մենք մտնում ենք ամենօրյա տքնաջան աշխատանք պահանջող պայքարի վճռական փուլ, որի գերագույն խնդիրն է ոչ միայն պահպանել Շարժման արդեն իսկ ձեռքբերված հաջողությունները, այլեւ բազմապատկելով դրանք, փետրվար ամսին հասնել ընտրազանգվածի համախմբման բարձրակետին: Գիտակցում ենք, որ իշխանություններն անելու են ամեն ինչ՝ քարոզչական շրջափակման, ահաբեկումների, տնտեսական ճնշումների, կաշառատվության եւ, վերջապես, զանգվածային ընտրակեղծիքների միջոցով պահպանելու երկրի ներկա ավազակապետական համակարգը: Մենք պետք է կարողանանք ժողովրդին համոզել, որ այդ համակարգի վերարտադրությունը նշանակում է եւս տաս տարվա ստրկություն, թշվառություն եւ ազգային նվաստացում: Մեր իշխանություններն ավելի անհաղթահարելի չեն, քան Խորհրդային Միության իշխանությունները: Եթե մենք կարողացանք հաղթել Գորբաչովին, ապա ի՞նչն է մեզ խանգարում հաղթել Ռոբերտ Քոչարյանին եւ Սերժ Սարգսյանին: Ճիշտ է, Խորհրդային Միության դեմ մղված պայքարն ավելի հեշտ էր, քանի որ այն, լինելով ազգային-ազատագրական պայքար, միավորում էր մեր ողջ ժողովրդին: Մինչդեռ այժմ պատկերն արտաքուստ այլ է թվում, որովհետեւ մենք, կարծես-թե, գործ ունենք զուտ ներազգային դիմադարձության հետ: Սակայն նկատի ունենալով այն ակնհայտ իրողությունը, որ Հայաստանի ներկա իշխանությունները սեփական ժողովրդին վերաբերվում են օտարի պես, ոտնահարելով նրա բոլոր արքությունները ու արժանա-

պատվությունը, ապա այդպիսի իշխանություններեր դեմ մղված պայքարը նույնպես ազգային-ազատագրական պայքարի բնույթ է ստանում: Հետեւաբար, այս գիտակցությունը սերմանելու դեպքում, վստահ եմ, դժվար չի լինելու ժողովրդական ուժերի մեծամասնության համախմբումը վարչախմբից ազատվելու միավորող գաղափարի շուրջ:

Վերջում չեմ կարող չնշել մի խորհրդանշական հանգամանք: Այս ամբիոնից է հնչակվել Հայաստանի Հանրապետության անկախությունը: Եւ այս ամբիոնին է վիճակված մեր նոր հաղթարշավի սկզբնավորման ազդարարումը:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 25 դեկտեմբերի, 2007թ.: Հրատարակված նաեւ առանձին գրքույկով. «Ելույթ Համաժողովրդական շարժման կոնգրեսում», Երեւան, 2008թ.:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱՄ ՀԱՆԴԱՐՏ ԽՈՀԵՐ
(6 հունվարի, 2008թ.)

Նախընտրական ծրագրերը, մանավանդ ետխորհրդային տարածքի երկրներում, ունեն իրենց ստանդարտ կառուցվածքն ու բովանդակությունը, որոշ առումով նմանվելով պաշտոնական հրովարտակների: Դրանք, որպես կանոն, ընդգրկում են հասարակական, քաղաքական, տնտեսական բնագավառներին վերաբերող այն միջոցառումների եւ վերափոխումների կատալոգը, որոնք խոստանում է իրականացնել ընտրողների քվեն հայցող ցանկացած թեկնածու: Նախընտրական ծրագրերի շարադրանքում, սովորաբար, տիրապետող դիրք է զբաղեցնում ամենազոր անորոշ դերբայը՝ «ավելացնել», «բարձրացնել», «զարկ տալ», «էլ ավելի զարգացնել», «ամրապնդել», «ընդլայնել», «խորացնել», «հոգ տանել», «ուշադրություն դարձնել», «հետեւողական պայքար մղել», «արմատախիլ անել» եւ այլն: Սակայն այդ դերբայները որքան անորոշ են ձեւով, այնքան էլ՝ դժբախտաբար, բովանդակությամբ: Այդ է պատճառը, որ հասարակ ընտրողներն, ընդհանրապես, ի վիճակի չեն ոչ միայն խորամուխ լինել բազմազան ծրագրերի մանրամասների մեջ, այլեւ ընկալել թեկուզ նրանց էական տարբերությունները: Հետեւաբար, նրանց համար ավելի առաջնային են դառնում թեկնածուների անձնական հատկանիշները՝ կենսագրությունը, խարիզման, բարոյական նկարագիրը, մասնագիտական ունակությունները, փորձը եւ այլն: Իսկ երբեմն նույնիսկ սրանք էլ ավելորդ են. բավական է արտաքին տեսքը, հմայքը, պերճախոսությունը:

Նախընտրական ծրագրերի մյուս պարտադիր ատրիբուտը կամ բնորոշ կողմը ամբոխահաճության՝ պոպուլիզմի առատությունն է: Մեկը մյուսից առաջ ընկնելով, թեկնածուները, սովորաբար, մրցում են իրար հետ, թե ով ավելի շատ եւ գեղեցիկ խոստումներ կտա ժողովրդին, բոլորովին հոգ չտանելով այն մասին, թե որքան իրատեսական, հիմնավորված կամ իրականանալի են այդ խոստումները: Նպատակը կարճատեւ էֆեկտ ստանալն ու ընտրությունները շահելն է, փույթ չէ, թե տրված խոստումները հետագայում չեն կատարվի եւ իրենք, եթե ամոթի զգացումը դեռեւս չեն կորցրել, կարմրելու առիթներ կունենան: Պոպուլիստական խաբկանքը կամ հիպնոսը, բազմիցս փորձարկված ու արժեզրկված լինելով հանդերձ, ամենուրեք՝ նույնիսկ աշխարհի ամենազարգացած երկրներում, շարունակում է մնալ հասարակության զարգացման ամենավտանգավոր չարիքներից կամ խոչընդոտներից մեկը: Հակառակ դրան, հիասթափվելով մի պոպուլիստից, ժողովուրդն ամեն անգամ ընկնում է հերթական պոպուլիստի գիրկը՝ ամենեւին դաս չքաղելով իր նախորդ հուսախաբություններից: Արտաքուստ անմեղ թվացող այդ մոլորությունն իրականում փակում է իրատես, պատասխանատու եւ պրագմատիկ մարդկանց մուտքը քաղաքականություն: Պետության կյանքում դա հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական ամենեւին ոչ պարտադիր վերիվարումների, վերջին հաշվով, դանդաղեցնելով հասարակության զարգացման բնականոն ընթացքը:

Հավատացած եղեք, որ, անկախ մանրամասներից, թե՛ անորոշ դերբայների օգտագործման հակումով, թե՛ պոպուլիստական խոստումների առատությամբ, ընթացիկ ընտրարշավին մասնակցող թեկնածուների նախընտրական ծրագրերն իրարից էականորեն չեն տարբերվելու: Մինչդեռ ես, շեղվելով ընդհանուր ստանդարտից եւ քարացած ավանդույթից, պիտի փորձեմ ժողովրդի հետ խոսել պարզ, մատչելի, մարդկային լեզվով, ամենեւին չհավակնելով նորարարի կամ վերին ատյանի ճշմարտություններ հրապարակողի դերի:

«Կորուսյալ դրախտի» հուշը

Մեկնելով ներկա անմխիթար իրականությունից, մեր հասարակությանը գրեթե միլտոնյան «կորուսյալ դրախտ» է թվում ոչ հեռավոր

անցյալը, եւ որքան էլ ցավալի է, այդ զգացողության մեջ ճշմարտության որոշ հատիկ կա: Չնայած վերջին հարյուր տարիների ընթացքում հայ ժողովրդի կրած բազում տառապանքներին ու փորձություններին՝ եղեռն, գաղթ, հայրենիքի կորուստ, հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, կոլեկտիվացում, սով, ստալինյան տեռոր, համաշխարհային պատերազմ եւ այլն, այնուամենայնիվ անժխտելի է, որ այդ ժամանակամիջոցում մեր երկիրն ապրել է նաեւ ազգային իղձերի իրականացման, ապահովության, խաղաղության եւ բարօրության երկարատեւ տարիներ:

Ազգային իղձերի իրականացում ասելով, ես նկատի ունեմ, նախեւառաջ, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը եւ նրա շուրջ երեքամյա գոյությունը: Մեզ չվիճակվեց, Լեհաստանի եւ Ֆինլանդիայի նման, մեկանգամընդմիշտ ազատագրվել Ռուսական կայսրությունից, կամ արժանանալ թեկուզ Բալթյան երկրների բախտին, որոնց անկախությունը տեւեց քսան տարի, ինչը միանգամայն բավարար էր ազգային-ժողովրդավարական ոգով մի ամբողջ սերունդ դաստիարակելու եւ պետականության կայուն ավանդույթներ ձեւավորելու համար: Բալթյան ժողովուրդների տարբերությունը Խորհրդային Միության մյուս ժողովուրդներից, ինչպես նաեւ պետականության կերտման ճանապարհին նրանց արձանագրած այսօրվա նվաճումները, պետք է բացատրել, առաջին հերթին, հենց այդ հանգամանքով: Ինչեւէ, առաջին հանրապետությունը, այդուհանդերձ, վճռորոշ դեր խաղաց հայ ժողովրդի քաղաքական կյանքում, որովհետեւ եթե այն գոյություն չունենար, ապա գոյություն չէր ունենա նաեւ Խորհրդային Հայաստանը, իսկ վերջին հաշվով, նաեւ ներկայիս անկախ Հայաստանի Հանրապետությունը: Համենայն դեպս, վերջին 90 տարիների կտրվածքով, մենք գործ ունենք եթե ոչ լիարժեք պետական շարունակականության, ապա առնվազն որոշակի ինքնիշխանության ժառանգականության փաստի հետ, որի պատմական արժեքը դժվար է գերագնահատել:

Ապահովության եւ խաղաղության իմաստով Խորհրդային իշխանության տարիները եղան հայ ժողովրդի 3000-ամյա պատմության, թերեւս, ամենահազվագյուտ ժամանակաշրջաններից մեկը: Թեեւ քաղաքացիական պատերազմը (1921թ.), կոլեկտիվացումն ու սովը (1928–1933թթ.), ստալինյան տեռորը (1937–1938թթ.) շատ կյանքեր խլեցին

ու բազմահազար ընտանիքներ դժբախտացրին, իսկ համաշխարհային պատերազմը (1941–1945թթ.), դրա հետ մեկտեղ, ունեցավ նաեւ լուրջ դեմոգրաֆիական հետեւանքներ, այնուամենայնիվ, փաստ է, որ վերջին 90 տարիների ընթացքում թշնամին ոտք չի դրել ներկա Հայաստանի հողին: Բավական է թեկուզ նշել, որ եւրոպական համարյա ոչ մի երկիր չի կարողացել խուսափել նման ողբերգությունից:

Ինչ վերաբերում է բարօրությանը, ապա Հայաստանի բաղաքացիների միջին եւ ավագ սերունդը դրա տակ հասկանում է 1960–1970-ական թվականների կյանքը, երբ իչ թե շատ ապահովված էր բնակչության նվազագույն կենսամակարդակը, զբաղվածության խնդիր գոյություն չուներ, մարդիկ ստանում էին թեեւ ցածր, բայց կայուն եւ երաշխավորված աշխատավարձ, օգտվում ձրի կրթությունից եւ առողջապահությունից, մտահոգ չէին վաղվա օրվա նկատմամբ եւ այլն: Թեեւ ավտոմեքենան, ամառանոցը, սեփական առանձնատունը, արտասահմանյան հագուստն ու կահույքը դեռեւս ճոխություն էին դիտվում, սակայն հեռուստացույցը, սառնարանը եւ լվացքի մեքենան արդեն լայնորեն մտել էին կենցաղ: Որոշակի առումով բավարարված էր նաեւ հայ ժողովրդի ազգային հպարտությունը՝ շնորհիվ աշխարհահանաչ հայ գիտնականների, զորավարների, գրողների, արվեստի գործիչների, մարզիկների նվաճումների: Վիկտոր Համբարձումյանի, Աբրահամ Ալիխանովի, Նորայր Սիսակյանի, Աբել Աղանբեգյանի, Հովհաննես Բաղրամյանի, Համազասպ Բաբաջանյանի, Հովհաննես Իսակովի, Մարտիրոս Սարյանի, Արամ Խաչատրյանի, Օհան Դուրյանի, Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Ավետ Տերտերյանի, Հրանտ Մաթեւոսյանի, Սերգեյ Փարաջանովի, Արտավազդ Փելեշյանի միութենական եւ միջազգային համբավը, ինչպես նաեւ Տիգրան Պետրոսյանի, Յուրի Վարդանյանի, «Արարատ» ֆուտբոլային ակումբի հաջողությունները ուրախության անսպառ աղբյուր էին հանդիսանում հայ ժողովրդի համար, միաժամանակ շոյելով նրա հայրենասիրական զգացումներն ու ազգային արժանապատվությունը: Մի խոսքով, ստեղծված էր հարմարավետության (կոմֆորտի) ինչ-որ մի մթնոլորտ, որը, ներկայիս համեմատ, եթե ոչ իսկ «կորուսյալ դրախտ», ապա գոնե բաղցր հուշեր արթնացնող ժամանակ պիտի մնա իմ եւ ավելի ավագ սերնդի մարդկանց համար: Չպետք է անտեսել նաեւ հոգեբանական մի գործոն.

մարդիկ հակված են պատանեկության եւ երիտասարդության տարիները համարել իրենց կյանքի լավագույն շրջանը: Եւ քանի որ իմ նշած սերնդի պատանեկությունը եւ երիտասարդությունը համընկնում են հենց 60–70-ական թվականներին, ապա պատահական չէ, որ այդ շրջանը մինչեւ այժմ Հայաստանում որոշակի կարոտախտ է առաջացնում:

Հետո, 1970-ական թվականների կեսերից, եկան, այսպես կոչված, լճացման տարիները: Սպառազինությունների մրցավազքի, նավթի գների անկման եւ համակարգային բնույթի արատների հետեւանքով Խորհրդային Միությունն ընկավ խոր ճգնաժամի մեջ: Սկսեցին գոյանալ անվերջ հերթերը, ահռելի չափերի հասավ ապրանքների դեֆիցիտը, դատարկվեցին խանութների դարակներն ու ցուցափեղկերը, հայտնվեցին մսի, կարագի, սուրճի, շաքարի, բրնձի կտրոնները եւ այլն: Ո՛չ Անդրոպովի կիրառած խիստ վարչական միջոցները, ո՛չ էլ Գորբաչովի տնտեսական բարեփոխումներն ի վիճակի չեղան կասեցնել Խորհրդային Միության գահավիժումը, եւ կայսրությունը, հանրապետություններում առաջացած ժողովրդավարական շարժումների հարվածների տակ, կործանվեց, ընդ որում, ոչ միայն քաղաքականապես, այլեւ տնտեսապես: Ի դեպ, խորհրդային տնտեսության քայքայումն սկսվել էր կայսրության փլուզումից էլ առաջ: 1988–1991 թվականներին արդեն իսկ լրջագույն խնդիրներ էին ծագել ձեռնարկությունների փոխադարձ պարտավորությունների կատարման, հումքի, պահեստամասերի, կոմպլեկտավորող սարքերի մատակարարման բնագավառներում, ձեռնարկությունների միջեւ կուտակվել էին հսկայական փոխադարձ պարտքեր, բյուջեի տարեկան ճեղքվածքը կազմում էր 400–500 միլիարդ ռուբլի, լիովին սպառվել էին պետության ոսկու պահուստները, սառեցվել էին խնայբանկերում տեղադրված ավանդները, դոլարի համեմատ ռուբլին արժեզրկվել էր մոտ հիսուն անգամ, սկսվել էր օր-օրի սաստկացող սղաճը, որը շուտով պիտի հասներ ահռելի չափերի եւ այլն:

Գերկենտրոնացած, անխզելիորեն փոխկապակցված եւ աշխարհից մեկուսացած խորհրդային տնտեսական համակարգի փլուզումը չէր կարող չհանգեցնել արդյունաբերության անխուսափելի վախճանի, ինչն այս կամ այն չափով տեղի ունեցավ Միության բոլոր նախկին հանրապետություններում: Բոլոր նորանկախ պետությունները, գրեթե միանգամից կորցնելով իրենց նախկին տնտեսական կապերն ու

ավանդական շուկաները, հայտնվեցին անելանելի թվացող վիճակում: Տեխնոլոգիական հետամնացության եւ տնտեսական ինքնուրույնության բացակայության պատճառով նրանցից ոչ մեկն ի վիճակի չէր անմիջապես միջազգային շուկա դուրս բերել որեւէ մրցունակ ապրանք: Քիչ թե շատ բարեհաջող դասավորվեց միայն հումք արտահանող երկրների կյանքը: Հումքազուրկ երկրները հարկադրված էին ճգնաժամը հաղթահարել արմատական տնտեսական բարեփոխումների իրականացման, այն է՝ շուկայական հարաբերությունների ձեւավորման ճանապարհով: Խորհրդային Միության բոլոր նախկին հանրապետություններին բաժին ընկած ճգնաժամային վիճակը Հայաստանում ծանրանում էր չորս հավելյալ եւ առանձնահատուկ գործոնների՝ Աղետի գոտու, 300 հազար փախստականների, շրջափակումների եւ պատերազմի առկայությամբ: Չնայած այս լրացուցիչ դժվարություններին, Հայաստանը Անկախ պետությունների համագործակցության անդամ-երկրներից առաջինն էր, որ համակարգային բարեփոխումների շնորհիվ արդեն 1994 թվականին ոչ միայն կասեցրեց տնտեսական անկումը, այլեւ սկսեց առնանագրել կայուն տնտեսական աճ, մեկ տարի անց հաղթահարելով նաեւ էներգետիկ ճգնաժամը: Եթե սրան ավելացնենք, որ այդ ընթացքում հաղթանակով ավարտվեց նաեւ Արցախյան պատերազմը, ապա դժվար է չհամաձայնել, որ դա մի այնպիսի սխրանք էր, որն իր նախադեպը չունի հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ:

Այնուամենայնիվ, անցյալի քիչ թե շատ ապահով կյանքի համեմատ, բնակչության սոցիալական վիճակի շեշտակի վատթարացման գործոնը չէր կարող անհետեւանք մնալ եւ համապատասխան հոգեբանական մթնոլորտ չառաջացնել: Այստեղից էլ, ահա, մարդկանց բնական եւ հասկանալի դժգոհությունն ու մերժողական վերաբերմունքը իշխանությունների իրականացրած «շոկային» տնտեսական բարեփոխումների նկատմամբ, որոնց դրական հետեւանքները պետք է զգացվեին միայն տարիներ անց, ինչը, սակայն, չափազանց դժվար էր բացատրել հասարակությանը: Երբ մարդն այսօր ավելի վատ է ապրում, քան երեկ, ոչ մի տրամաբանական բացատրություն չի կարող գոհացնել նրան: Հետեւաբար, ինչպիսի առարկայական եւ բանական փաստարկներ էլ բերվեն իրականության փոփոխության անխուսափելիության մասին, միեւնույն է, «կորուսյալ դրախտի» հուշը կամ պատրանքը

դեռ երկար դրոշմված է մնալու մեր քաղաքացիներից շատերի մտապատկերում: Սա այն ծանր, բայց միաժամանակ պատվավոր խաչն է, որ հավերժ կրելու են Հայաստանի Հանրապետության հիմնադիր եւ բարեփոխիչ առաջնորդները:

«Վերագտյալ դրախտի» երազանքը

Այսօր մենք ունենք համաշխարհային զարգացման մայրուղուց շեղված, բարգավաճման հեռանկարից զուրկ մի երկիր եւ թշվառ գոյության դատապարտված, հոգեկան անդորրը կորցրած ժողովուրդ: Դա, ինչպես արդեն վերը նշվեց, արդյունք է մի կողմից՝ Խորհրդային Միության քայքայմանը հետեւած անխուսափելի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական ցնցումների, մյուս կողմից՝ Հայաստանի ներկա վարչախմբի հանցավոր եւ, ի բնե, հակազգային գործունեության: Վարչախումբը գիշերուզօր թմբկահարում է երկրի անօրինակ տնտեսական նվաճումները եւ ժողովրդին կերակրում պայծառ ապագայի վարդագույն հույսերով, ինչպես խորհրդային իշխանությունները յոթանասուն տարի սեփական քաղաքացիներին կերակրում էին կոմունիզմի ուրվականով: Այնինչ ժողովրդի մեծամասնության համար օրվա հրամայականը ոչ թե պայծառ ապագան է, որքան էլ վարդագույն այն լինի, այլ այսօր եւեթ գոնե նորմալ երկիր ունենալը: Ի՞նչ է պատկերացնում հայ մարդը՝ նորմալ երկիր ասելով, կամ ինչի՞ մասին է նա գրեթե անդադար երազում: Որքան էլ տխուր է, ո՛չ ամենեւին հարստության, ճոխության, պերճանքի կամ ճամփորդության, այլ մարդկային ամենատարրական կարիքների բավարարման մասին: Մարդիկ այսօր Հայաստանում ընդամենը երազում են.

– Ունենալ մշտական աշխատանք, սեփական քրտինքով վաստակել իրենց հանապազօրյա հացը, արժանապատվությամբ հոգալ իրենց ընտանիքների ապրուստը, պատշաճ կերպով սնել եւ հագցնել իրենց երեխաներին, նրանց կանոնավոր կրթություն տալ եւ չմտահոգվել նրանց ապագայի անորոշությամբ.

– Հարկադրված չլինել արտագնա աշխատանքի մեկնելու՝ թեկուզ ժամանակավորապես լքելով իրենց ընտանիքները. – չանհանգստանալ պանդխտածների ճակատագրով, չտառապել կարոտախտով, ինչը

հատկապես բացասաբար է անդրադառնում երեխաների հոգեբանության եւ դաստիարակության վրա.

– Զվախենալ, որ բանակում ծառայող իրենց զավակներին, մի հարբեցող եւ կաշառակեր հրամանատարի մեղմով, կարող է դժբախտություն պատահի կամ, զինված ուժերում առկա «ոչ կանոնադրական հարաբերությունների» պատճառով, ճարահատյալ չմտածել ծառայությունից խուսափելու մասին.

– Զենթարկվել բյուրոկրատական քաշքշուկների, չնվաստացվել պաշտոնյաների կողմից, պետական մարմինների աշխատասենյակներում չհանդիպել կոպիտ վերաբերմունքի, օրենքով իրենց հասանելիք փաստաթղթերն ստանալու համար ստիպված չլինել միջնորդ-ծանոթներ փնտրել կամ կաշառք տալ.

– Միջոցների սղության պատճառով զուրկ չմնալ մարդկային փոքր հաճույքներից՝ ընթերցանությունից, թատրոն կամ սրճարան հաճախելուց, երեխաներին թեկուզ էժանագին նվերներ մատուցելուց, ընկերական հանդիպումներից ու ազգականներին այցելելուց, զբոսանքից ու հանգստից.

– Հպարտանալ հայրենիքի հաջողություններով եւ միջազգային ասպարեզում վայելած վարկով, չամաչել սեփական իշխանավորների տգիտության կամ անպարկեշտ պահվածքի համար, չբարդույթավորվել ու չընկնել հոռետեսության կամ անտարբերության գիրկը, հարգել իրենց եւ հարգված լինել ուրիշների կողմից:

Մի խոսքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարզապես երազում են ապրել քիչ թե շատ նորմալ երկրում, որի մասին նրանց պատկերացումներն, ընդհանուր առմամբ, հանգում են հետեւյալին.

– Որ իշխանությունը կենտրոնացած չլինի մեկ-երկու մարդու ձեռքում, այլ լիովին ապահովվի նրա օրենսդիր, գործադիր եւ դատական ճյուղերի անկախությունը, այսինքն՝ ստեղծվի մի վիճակ, որում հանրապետության նախագահը, վարչապետը, Խորհրդարանը, դատավորները, ինչպես նաեւ դատախազությունը, նախարարություններն ու պետական մյուս կառույցները գործեն միայն Սահմանադրությամբ եւ օրենքով իրենց տրված իրավասությունների շրջանակում.

– Որ պետության մեջ չգործեն չգրված օրենքներ, տնտեսական հարաբերությունները չկարգավորվեն իրական աշխարհի կանոններով եւ վերջ տրվի աղետալի մակարդակի հասած կոռուպցիային, որը ոչ միայն ժողովրդից կորզում է ազգային հարստության մի զգալի մասը, այլեւ լրջորեն խոչընդոտում երկրի բնականոն տնտեսական զարգացմանը, չխոսած այդ երեւույթի պատճառած բարոյական վնասների մասին.

– Որ ուժային մարմինները՝ ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը, ազգային բանակը չներքաշվեն քաղաքականության կամ տնտեսական գործունեության մեջ, այլ զբաղվեն բացառապես հանցագործությունների դեմ պայքարելու, հասարակական կարգը պահպանելու եւ երկրի անվտանգությունն ու պաշտպանությունն ապահովելու իրենց բուն գործառույթներով.

– Որ մարդիկ չվախենան ոստիկանից, դատավորից կամ դատախազից, այլ ընդհակառակը, նրանց մեջ տեսնեն իրենց պաշտպաններին, եւ չենթարկվեն հարկային տեսուչների ու մաքսային ծառայության աշխատակիցների կամայականություններին, շարաշահումներին ու խտրական վերաբերմունքին.

– Որ գործարարության եւ ձեռնարկատիրության բնագավառներում դեր չխաղան կաշառակերությունը, հովանավորչությունը, կողմնակալությունը, եւ բոլորի համար ստեղծվեն հավասար պայմաններ՝ թույլ չտալու համար ամենակոլ մոնոպոլիաների ձեւավորումը.

– Որ իշխանությունները ժողովրդին կողոպտելու եւ անհամար հարստություններ դիզելու փոխարեն, պատասխանատվությամբ վերաբերվեն քաղաքացիների հանդեպ իրենց ստանձնած պարտավորությունների կատարմանը, մասնավորապես, հստակ ժամանակացույցով եւ պատշաճ փոխարժեքով հատուցեն բնակչության՝ խնայբանկերում սառեցված ավանդները. միայն երկու տարում նրանց կողմից հափշտակված գումարը լիովի բավարար էր սոցիալական լուրջ լարվածություն առաջացնող այդ չարաբաստիկ հարցը լուծելու համար.

– Որ պետական աստիճանակարգում, ծանոթության կամ հավատարմության հիմունքներով, չհայտնվեն կիսագրագետ, ապաշնորհ, անբարեկիրթ անձնավորություններ, առավել եւս հանցավոր ու քրեական տարրեր, այլ պաշտոնյաները նշանակվեն ու առաջ քաշվեն զուտ

իրենց մասնագիտական ունակությունների եւ մարդկային արժանիքների շնորհիվ.

– Որ հասարակության գիտակցության մեջ արժեւորվեն մարդու հիմնական առաքինությունները՝ բարոյականությունը, ազնվությունը, այլասիրությունը, անձնազոհությունը, իսկ ֆծնանքը, ստորաքարշությունը, խարդախությունը, կարիերիզմը ոչ թե ընդօրինակման առարկա դառնան, այլ արժանանան միահամուռ պարսավանքի.

– Որ պետությունը, վերջապես, ձգտի բարիդրացիական հարաբերություններ հաստատել իր բոլոր հարեւանների հետ՝ ազգային շահերին համապատասխան կարգավորելով առկա տարաձայնություններն ու ճանապարհ հարթելով տարածաշրջանի երկրների սերտ եւ համակողմանի համագործակցության համար:

Ահա, ընդհանուր գծերով, հայ ժողովրդի ամենօրյա հոգսերի ու մտատանջությունների ամբողջությունը կամ, այլ կերպ, նրա երազած «վերագտյալ դրախտի» մոտավոր պատկերը: Միայն այն պարագան, որ աշխարհի շատ երկրների համար սովորական այս իրողությունները այդքան հեռու ու ցանկալի են թվում մեր քաղաքացիներին, բավական է ցույց տալու, թե ինչպիսի անմխիթարական վիճակում է գտնվում իր անկախ գոյության տասնվեց տարին բոլորած Հայաստանի Հանրապետությունը: Տասնվեց տարին, մանավանդ 1994 թվականին հաջորդած խաղաղության երկարատեւ շրջանը, քիչ ժամանակ չէր նշված խնդիրներից շատերը լուծելու եւ ժողովրդի հոգսերի գոնե մի մասը թեթեւացնելու համար: Բայց ցավալին միայն այն չէ, որ այդ խնդիրները մինչ օրս լուծված չեն: Ավելի ցավալի է դրանց լուծման հեռանկարի բացակայությունը եւ մարդկանց պատած հուսալքությունը: Դա հատուկ է ոչ միայն ժողովրդական լայն զանգվածներին, այլեւ նյութապես քիչ թե շատ ապահով խավերին, որոնց նույնպես չի լքում անհուսության եւ անպաշտպանության զգացողությունը: Այնպես որ, «վերագտյալ դրախտի» երազանքի իրականացումն առայժմ շարունակում է մնալ որպես անհնարին թվացող հրաշք կամ ուտոպիա:

Հայաստանը ճամփաբաժանի առջեւ

2008 թվականի նախագահական ընտրությունները հայ ժողովրդին հնարավորություն են ընձեռում ընտրություն կատարել իր ապագայի

կերտման երկու տեսանելի ճանապարհների միջեւ: Դրանցից մեկը Հայաստանի վերից վար կոռումպացված ներկա ավազակապետական համակարգի վերարտադրության մղձավանջային հեռանկարն է: 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության արդյունքում ձեւավորված ավազակախումբը, աստիճանաբար վերացնելով իր գոյությանն սպառնացող բոլոր հակակշիռները, իր ձեռքում է կենտրոնացրել ոչ միայն գործադիր, այլեւ օրենսդիր եւ դատական իշխանությունները՝ Հայաստանը վերածելով թաքար-մոնոլոգական տիպի խանության, որը կառավարվում է ոչ թե Սահմանադրությամբ եւ օրենքներով, այլ բացարձակ միապետի անառարկելի կամքով եւ իրական աշխարհի կանոններով:

– Ավազակախմբի շուրջ տասնամյա հանցավոր եւ հակաժողովրդական գործունեության արդյունքում Հայաստանը շեղվել է համաշխարհային գործընթացների գլխավոր մայրուղուց, դատապարտվել լիակատար քաղաքական եւ տնտեսական մեկուսացման, դուրս մնացել տարածաշրջանային զարգացման բոլոր ծրագրերից եւ հայտնվել երրորդ աշխարհի հետամնաց երկրների շարքում:

– Համակարգն իր գոյության իմաստն է դարձրել իշխանական բուրգի եւ նրա սպասավորների գերհարստացման ապահովումը՝ ի հաշիվ օտար զանգված դիտվող ժողովրդի բարեկեցության եւ արժանապատիվ կյանքի: Իշխանության անսահմանափակ կենտրոնացումը պետությունն իրենց սեփական կալվածքը համարող մարդկանց ձեռքում ոչ միայն խարխլում է արդի տնտեսագիտության, ժողովրդավարության, սոցիալական արդարության հիմքերը, այլեւ վտանգում երկրի ապագան անգամ:

– Իշխանությունների վարած արատավոր տնտեսական քաղաքականության հետեւանքով հիմնովին խախտված են շուկայական տնտեսության երեք ամենագլխավոր սկզբունքները՝ հավասար հնարավորությունների ընձեռումը, ազատ մրցակցության ապահովումը եւ սեփականության անձեռնմխելիության երաշխավորումը: Տնտեսական բնագավառում Հայաստանում ամեն ինչ կարգավորվում է ոչ թե շուկայական հարաբերությունների տրամաբանությամբ, այլ իշխանությունը բռնազավթած փոքրաթիվ անձանց հրահանգներով, որոնք բոլորն էլ, առանց բացառության, հանցագործության տարր են պարունակում:

– Հայաստանի տնտեսության ամենակործանարար խեղումը նրա համատարած մոնոպոլիզացիան է, որի պատճառով երկրի հարստու-

թյան կեսից ավելին հայտնվել է շուրջ 40 ընտանիքի ձեռքում: Ընդ որում, մոնոպոլիզացումն առաջացել է ոչ թե բնական ճանապարհով, այլ ավազակախմբի կիրառած ապօրինի մեթոդների՝ հովանավորչության, հրահանգավորման, գործարարների համար անհավասար պայմաններ ստեղծելու հետեւանքով, ինչը բնականաբար, առանց շահադիտության չէր կարող տեղի ունենալ: Բացի տնտեսականից, այս երեւույթն ունի նաեւ քաղաքական նշանակություն, որովհետեւ 40 գերհարուստ ընտանիք կարող է վճռել ողջ հայ ժողովրդի բախտը:

– Մենաշնորհային ընկերությունների համար ստեղծված արտոնյալ պայմանները հանգեցրել են նաեւ մի այլ բացասական հետեւանքի, այն է՝ հարկային բեռի անհավասար բաշխման: Օտարերկրյա փորձագետների գնահատմամբ՝ այսօրվա վիճակով պետական բյուջեի հարկային եկամուտների միայն 22%-ն է վճարվում խոշոր ձեռներեցների կողմից, մինչդեռ պետք է կազմեր դրանց 75%-ը: Դա նշանակում է, որ հարկային բեռը հիմնականում ընկնում է մանր եւ միջին ձեռնարկատերերի ու գործարարների ուսերին: Իսկ խոշոր հարկատուների կողմից չվճարված եկամուտներից Հայաստանում գոյանում է մի երկրորդ՝ ստվերված բյուջե, որը հանգրվանում է իշխանավորների գրպանում, եւ որն անհամեմատ ավելի մեծ է, քան պաշտոնապես հայտարարված պետական բյուջեն:

– «Պարզեցված հարկի մասին օրենքի» գործողության փաստացի դադարեցումն սպառնում է ավելի եւս ծանրացնել միջին խավի հարկային բեռը, որի վիճակն, առանց այդ էլ, վերջին շրջանում բարդացել է մի շարք գործոնների ազդեցությամբ. – բնակչության թվաքանակի նվազման պատճառով փոքրացել է սպառողների ներքին շուկան. – դրամի արհեստական «արժեւորման» հետեւանքով բարձրացել է Հայաստանում արտադրվող ապրանքների ինքնարժեքը. – նույն երեւույթը ծանր հարված է հասցրել արտահանող արդյունաբերությանը. – մանր ու միջին ձեռնարկատերերը կախման մեջ են ընկել ներմուծման բնագավառում մենաշնորհային արտոնություններ ունեցող ընկերություններից, իսկ շատերը, կորցնելով իրենց ինքնուրույնությունը, արդեն հայտնվել են նրանց ամենակուլ համակարգում:

– Բնակչության ցածր կենսամակարդակը, իշխանությունների թմբկահարած տնտեսական աճի երկնիշ ցուցանիշների եւ Երեւանի կենտրոնի տպավորիչ կառուցապատման իրողություններին հակառակ, շարունակում է մնալ Հայաստանի առջեւ ծառացած ամենամտահոգիչ սոցիալական խնդիրը: Առավել անհանգստացնող է մանավանդ այն հանգամանքը, որ սոցիալական բեւեռացումը ոչ թե մեղմանում, այլ գնալով խորանում է, այսինքն՝ հարուստներն ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ ավելի աղքատանում: Չնայած աշխատավարձերը, թոշակները եւ նպաստները ժամանակ առ ժամանակ բարձրացվում են, բայց վերջին տարիների ընթացքում արձանագրված սղաճի պատճառով ժողովրդի դրամական եկամուտների մեծացման էֆեկտը հավասարվում է զրոյի: Այսօր Հայաստանում 100 դոլարն ունի նույն գնողունակությունը, ինչ տասը տարի առաջվա 20–25 դոլարը: Անգամ պաշտոնական տվյալների համաձայն՝ արտագաղթը ոչ միայն չի դադարում, այլեւ շարունակում է պահպանվել տարեկան շուրջ 25.000 մարդու սահմաններում: Վերացել է մարդկանց բնական կապվածությունը հայրենի հողին: Հայրենիքը, տունը, նույնիսկ ընտանիքը լքելու երեւույթը դարձել է առօրյա ու սովորական:

– Սոցիալական դրությունը ծանր է մանավանդ մարզային քաղաքներում եւ գյուղական վայրերում, որոնց բնակչությունը մատնված է լիակատար թշվառության ու ամենօրյա գոյապայքարի: Մեր Շարժումը ձեռնարկել է վիճակագրական մի լայնածավալ միջոցառում՝ պարզելու համար 1997–2007թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում մարզերի բնակչության եւ աշակերտության թվաքանակի փոփոխությունները՝ տվյալներ, որպիսիք ընդհանրապես բացակայում են պաշտոնական վիճակագրության մեջ: Քայքայման ահագնացող միտումի մասին պատկերացում տալու համար, արժե ներկայացնել այդ տվյալներից պատահականորեն ընտրված մի փոքրիկ փունջ.

ա. Սյունիքի մարզի բնակչությունը 1997-ին կազմել է 163.426, իսկ 2007-ին՝ 133.000 մարդ, աշակերտությունը՝ համապատասխանաբար 27.500 եւ 17.875. բացի այդ, մարզում դատարկ է շուրջ 2.000 տուն, այդ թվում՝ Տաթեւ գյուղում՝ 58, Շինուհայրում՝ 80, Խոզնավարում՝ 29 եւ այլն.

բ. Շիրակի մարզի բնակչության թիվը 1997-ին եղել է 362.000, իսկ 2007-ին՝ դարձել 281.000. նույն թվականների միջեւ աշակերտների թիվը 58.000-ից իջել է 44.000-ի.

գ. Արարատի մարզի բնակչությունը 1997-ին կազմել է 275.000, իսկ 2007-ին՝ 183.000 մարդ, աշակերտների թիվը 53.500-ից իջել է 38.900-ի. մարզում դատարկ տների թիվը 1997-ին եղել է 2.000, իսկ այժմ՝ հասել 5.000-ի.

դ. Լոռու մարզի աշակերտների թիվը 1997-ին եղել է մոտ 60.000, իսկ 2007-ին կազմում է 38.758.

ե. Արմավիրի մարզում 1997 թվականին կար 45.000 աշակերտ, իսկ 2007-ին առկա է 39.000.

զ. Դրությունն ավելի ողբալի է պատկերանում առանձին բնակավայրերի կտրվածքով. այսպես, 1997–2007թթ. միջեւ էջմիածին քաղաքում բնակչությունը նվազել է 10.700 մարդով, իսկ աշակերտությունը՝ 3.742-ով, Արմավիրի մարզի գյուղերից Բաղրամյանում՝ համապատասխանաբար 612-ով եւ 142-ով, Քարակերտում՝ 600-ով եւ 286-ով, Շենիկում՝ 160-ով եւ 44-ով, Դալարիկում՝ 600-ով եւ 140-ով եւ այլն: Մի խոսքով, կիսադատարկ գյուղեր, լքված տներ, ցաքուցրիվ ընտանիքներ, վերացող դպրոցներ. ահա սա է քոչարյանա-սերժական շրջանի Հայաստանի իրական պատկերը, եւ ոչ թե Երեւանի կենտրոնի շքեղ խանութները, ճոխ ռեստորանները եւ ժամանակակից բնակարանները, որոնցից օգտվում է բնակչության ոչ ավելի, քան հինգ տոկոսը:

– Եթե Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը որոշ առումով պայմանավորված է օբյեկտիվ գործոններով, այն է՝ շրջափակումներով, միջազգային շուկայում նավթի գների անընդհատ բարձրացմամբ եւ դոլարի կուրսի շարունակվող արժեզրկմամբ, ապա գլխավորապես այն արդյունք է կառավարման արատավորության, ներկա իշխանությունների վարած սխալ տնտեսական քաղաքականության եւ համատարած կոռուպցիայի, որը կրում է համակարգային բնույթ եւ կառավարվում վարչախմբի պարագլուխների կողմից: Ընդ որում, ժողովրդի կեղեքումն ու հարստահարումը տեղի է ունենում ոչ միայն համակարգավորված եւ անթափանցիկ մեխանիզմների, այլեւ պետական մասշտաբի բացահայտ հանցագործությունների միջոցով, ինչպիսիք են՝ «Հայոռուսգազարդի» մատակարարած գազի գումարի անհե-

տացումը, հանրապետություն ներկրվող բենզինի ծավալների եւ ղազախական գազի հետ կապված վիճակագրական մեխենայությունները, հանքերի, պահուստային հողերի, քաղաքային բնակավայրերի հողատարածքների, պետական գույքի սեփականաշնորհման ապօրինի գործարքները եւ այլն:

– Վարչախմբի գործունեությունը համարյա նույնքան խոցելի եւ վնասակար է նաեւ արտաքին քաղաքականության բնագավառում: Անցած տասը տարիների ընթացքում միջազգային հանրությունը եւ տարածաշրջանի երկրները Հայաստանից չեն ստացել ոչ մի դրական ազդակ: Ըստ էության, որեւէ առաջընթաց չի արձանագրվել, իսկ որոշ դեպքերում ետընթաց է տեղի ունեցել արտաքին քաղաքականության այնպիսի կենսական եւ հրատապ խնդիրների լուծման գործում, ինչպիսիք են՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, երկրի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, հաղորդակցության ուղիների շրջափակման վերացումը, Հայաստանի ներգրավումը միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական ծրագրերում, հայ-թուրքական հարաբերությունների կառուցումը եւ այլն: Հայաստանի արտաքին քաղաքականությանը բնորոշ են անպատասխանատվությունը, իրավիճակայնությունը, անհետեւողականությունը եւ համակարգավորվածության բացակայությունը: Արտաքին գործերի նախարարությունը, փաստորեն, վերածվել է միջազգային ասպարեզում վարչախմբի քարոզչության առաքելությամբ օժտված գովազդային ընկերության:

Երկրի «զարգացման» ճանապարհներից մեկն, ահա, իշխանություն կոչված այս քրեական համակարգի վերարտադրությունն է, ինչը հավասարազոր է ազգային աղետի: Եթե վարչախմբին հաջողվի բռնությամբ, ընտրակեղծիքներով եւ կաշառատվությամբ եւս տասը տարի երկարաձգել իր գոյությունը, ապա պետության կորուստներն այլեւս անհատուցանելի կարող են դառնալ: Իր ապագա գործունեության վերաբերյալ ինչպիսի նախընտրական խոստումներ էլ տա նախագահի պաշտոնին հավակնող իշխանական թեկնածուն, միեւնույն է, գործող հանցավոր համակարգի ճարտարապետներից մեկը լինելու նրա հանգամանքը հավատ չի կարող ներշնչել այդ խոստումների նկատմամբ: Փոխպարտավորվածության եւ հանցակցության բազմաթիվ թելերով կապված լինելով ավազակապետական համակարգի բոլոր դերակատարների

հետ, նա, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, չի կարող սահմանազատվել այդ համակարգից, առավել եւս՝ վերափոխել այն, քանի որ կամա թե ակամա դարձել է նրա պատանդը: Ուստի այս ճանապարհը անխուսափելի կործանման ճանապարհն է:

* * *

Մյուս ճանապարհը կամ այլընտրանքը մեկն է՝ վստահել այնպիսի իշխանության, որը երկիրն առաջնորդի հակառակ ուղղությամբ, այսինքն՝ դեմքով շրջվի դեպի մարդը, քաղաքացին եւ ժողովուրդը: Հետեւաբար, Հայաստանի հաջորդ նախագահի համար գործունեության ուղեցույց պիտի ծառայի հայ ժողովրդի մտահոգությունների, բաղձանքների, նյութական եւ հոգեւոր պահանջմունքների այն փաթեթը կամ նրա երազած «վերագտյալ դրախտի» այն պատկերը, որը ես փորձեցի ներկայացնել նախորդ գլխում, եւ որը, վերջին հաշվով, հանգում է Հայաստանը նորմալ երկրի վերածելու պարզ գաղափարին: Իմ ծրագիրը ճիշտ ընկալելու համար կառաջարկեի վերընթերցել այդ ոչ այնքան ծավալուն գլուխը եւ մտապահել այն բոլոր հարցերը, որոնց լուծումը ժողովուրդն ակնկալում է իշխանություններից:

Չեմ կարծում, թե հիմքեր կան ժողովրդի համեստագույն ակնկալիքների իրականացման հույսերը կապելու ներկա իշխանությունների հետ, քանի որ նրանք անցած տասը տարիների ընթացքում ոչ միայն այդ ուղղությամբ որեւէ քայլ չձեռնարկեցին, այլեւ, ընդհակառակը, ժողովրդին դատապարտեցին կատարյալ ստրկության՝ ոտնահարելով արժանապատիվ կյանքի նրա բնական իրավունքը եւ պղծելով նրա բոլոր սրբություններն ու բարոյական սկզբունքները: Համոզված եմ նաեւ, որ ժողովուրդն այլեւս չի գայթակղվի նրանց խոստումներով կամ ընտրակաշառքով, եւ թույլ չի տա նրանց վերարտադրությունը: Հետեւաբար, «վերագտյալ դրախտի» երազանքի իրականացման կամ նորմալ պետության կայացման հիմքերը դնելու պատասխանատվությունը կրելու են Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունները:

Ցավալի է նշել, որ անկախության 17-րդ տարում Հայաստանի հասարակությունը հարկադրված է վերադառնալ քաղաքական եւ սոցիալ-տնտեսական բնույթի այնպիսի խնդիրների արծարծմանը, որոնք վա-

ղուց պետք է գտած լինեին իրենց լուծումը: Խոսքը վերաբերում է Անկախության շարժման գաղափարախոսության եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմքում դրված հիմնարար սկզբունքներին, այն է՝ իշխանության ճյուղերի հավասարակշռություն, օրենքի գերակայություն, ժողովրդավարական ազատությունների ապահովում, մարդու եւ քաղաքացու իրավունքների պաշտպանություն, շուկայական տնտեսակարգի արմատավորում, քաղաքացիական հասարակության ձեւավորում եւ այլն: Թեեւ այս ամենը հստակորեն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքում, սակայն իրականությունը դեռեւս շատ հեռու է արդիական պետության նրա հոչակած գաղափարախոսությունից: Ուստի զարմանալի չպետք է թվա, որ նախագահի պաշտոնում իմ գործունեության ծրագրի առաջնահերթությունները, մանրամասնություններով հանդերձ, հանգելու են վերը նշված հիմնարար սկզբունքների վերահաստատմանը: Դրա անհրաժեշտությունը բխում է նրանից, որ այդ սկզբունքների կիրառումը, դժբախտաբար, նույնքան այժմեական եւ հրատապ է այսօր, որքան տասնյոթ տարի առաջ:

Նորմալ երկրի ուրվանկարը՝ քաղաքական լեզվով

1. Ներքին քաղաքականության բնագավառում Հայաստանի Հանրապետության ապագա նախագահի իրականացնելիք առաջնահերթ խնդիրներն են.

– Սահմանադրական կարգի վերականգնումը, այն է՝ իշխանության ձեւավորումը բացառապես ազատ ընտրությունների միջոցով.

– Ներկա բրգաձեւ ավազակապետական համակարգի կազմաքանդումը, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների անկախության եւ հավասարակշռության ապահովումը.

– Լիարժեք ժողովրդավարության հաստատումը, խոսքի, մամուլի, խղճի ազատության երաշխավորումը, բազմակուսակցականության եւ պառլամենտարիզմի վերջնական արմատավորումը.

– Քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ տեղական ինքնակառավարման մարմինների, առիթիությունների, ստեղծագործական միությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ամրապնդումը.

– Իրավապահ մարմինների եւ բանակի՝ քաղաքականության մեջ ներքաշվածության գոյություն ունեցող պրակտիկայի բացառումը.

– Վարչական ավելորդ օղակների վերացումը եւ վերջին տասը տարիների ընթացքում անհարկի ուռճացած պետական ապարատի կրճատումը:

2. Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի նոր իշխանությունների առջեւ կանգնած խնդիրների շարքում իրենց կարեւորությամբ առանձնանում են.

– Ազգային շահերի վրա հիմնված հավասարակշիռ եւ կառուցողական դիվանագիտության վերականգնումը, աշխարհի բոլոր երկրների հետ բարեկամության եւ փոխշահավետ համագործակցության ձգտումը.

– Միջազգային կազմակերպությունների առջեւ ստանձնած պարտավորությունների կատարումը, նախկինում կնքված միջպետական բոլոր պայմանագրերի նկատմամբ հավատարմության վերահավաստումը.

– Բարիդրացիական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը անմիջական հարեւանների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի հետ, կառուցողական ջանքերի գործադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ.

– Հայաստանի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական համակարգերում երկրի ներգրավվածության աստիճանի բարձրացումը.

– Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում քաղաքական կամքի դրսեւորումը, հանդես գալով արցախահայության ինքնորոշման իրավունքի պաշտպանության եւ հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից:

3. Օրինականության վերականգնման ասպարեզում ծրագրվում է իրականացնել իրավական պետության կայացմանն ու երկրի բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանն ուղղված հետեւյալ հրատապ միջոցառումները.

– Օրենքի առջեւ մարդկանց հավասարության եւ դատարանների լիակատար անկախության ապահովում՝ բացառելով իշխանության մյուս թեւերի կողմից դատավորների վրա գործադրվող որեւէ ճնշում.

– Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունների ընդլայնում՝ նպատակ հետապնդելով այդ ինստիտուտը վերածելու պետական հաստատությունների, մասնավորապես, իրավապահ մարմինների իրական եւ արդյունավետ հակակշռի.

– Անզիջում պայքար կոռուպցիայի, պաշտոնական չարաշահումների, կաշառակերության, դրամաշորթության, վիճակագրական կեղծարարությունների, բրեական եւ տնտեսական հանցագործությունների դեմ.

– Բնակչության ձեռքում գտնվող ապօրինի զենքի եւ զինամթերքի կարգավորված առգրավում, կազմակերպված հանցագործություններին, մանավանդ զինված ավազակախմբերի գործունեությանը վերաբերող օրենսդրության խստացում.

– Առանձնահատուկ վերաբերմունքի դրսեւորում անցյալում կատարված աղմկոտ հանցագործությունների՝ 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության, քաղաքական մյուս սպանությունների, բենզինի եւ գազի ներկրման հետ կապված մեքենայությունների, սեփականաշնորհման բնագավառում տեղի ունեցած չարաշահումների բացահայտման նկատմամբ.

– Հետեւողական աշխատանք ներկա իշխանությունների եւ նրանց հովանավորությունը վայելող որոշ ընկերությունների կողմից ժողովրդից հափշտակված գումարները պետական գանձարան վերադարձնելու եւ դրանք գլխավորապես բնակչության սոցիալական կարիքների բավարարմանը ծառայեցնելու ուղղությամբ.

– Ակտիվ մասնակցություն տեռորիզմի, թմրաբիզնեսի, փողի լվացման, մարդկանց ապօրինի առեւտրի (թրաֆիկինգ) դեմ միջազգային հանրության կողմից հայտարարված անհաշտ պայքարին.

– Տնտեսական հանցագործությունների բացահայտման ընթացքում օրինականության լիարժեք գործադրում, վնուկների որսի եւ սեփականության վերաբաշխման միտվածության իսպառ բացառում.

– Ոստիկանության, Անվտանգության ծառայության, Դատախազության, Հարկային տեսչության, Մաքսային վարչության աշխատակիցների եւ դատավորների աշխատավարձի կտրուկ հավելում՝ նրանց աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու եւ ապօրինի եկամուտներ ստանալու գայթակղությունից զերծ պահելու նպատակով:

4. Տնտեսական բնագավառում Հայաստանի հաջորդ իշխանությունների առջեւ կանգնած գլխավոր մարտահրավերը արդյունաբերության զարգացման խթանումն ու բնակչության կենսամակարդակի որակական փոփոխության ապահովումն է, ինչին նախատեսվում է հասնել հետեւյալ սկզբունքային միջոցառումների իրականացման շնորհիվ.

– Կառավարման բարելավում, օրինականության հաստատում, բարեփոխումների նոր փաթեթի ընդունում, ստվերայնության կրճատում կամ, ավելի ճիշտ, պետական ռեկետի վերացում.

– Շուկայական տնտեսության երեք հիմնական սկզբունքների հետեւողական գործադրում, ինչը ենթադրում է՝ տնտեսավարող սուբյեկտներին հավասար հնարավորությունների ընձեռում, ազատ մրցակցության ապահովում եւ սեփականության անձեռնմխելիության երաշխավորում.

– Օրինականության եւ լիակատար թափանցիկության ապահովում սեփականաշնորհման, պետական գույքի եւ հողի վաճառքի, աճուրդների եւ տենդերների կազմակերպման, լիցենզիաների տրամադրման եւ շինարարական աշխատանքների թույլտվության հարցերում.

– Հարկային օրենսդրության կատարելագործում, հարկման բազայի ընդլայնում, հարկային բեռի հավասարաչափ բաշխում, խոշոր ձեռնարեցների անխտիր ընդգրկում հարկման դաշտ, «Պարզեցված հարկի մասին օրենքի» գործադրման շարունակում, պետության կողմից հարկային կանխավճարների եւ ավելացված արժեքի հարկի վերադարձման երաշխավորում.

– Հակամենաշնորհային քաղաքականության հետեւողական իրագործում, ներմուծվող ապրանքների շուկայում խոտանների բաշխման եւ մենաշնորհային դիրքի առաջացման անթույլատրելիություն, ոչ բարեխիղճ մրցակցության կամ մենաշնորհային գործելակերպի պարագայում օրենքով նախատեսված խիստ պատժամիջոցների կիրառում.

– Արտադրության խթանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացում, նկատի ունենալով, մասնավորապես, հիմնական կապիտալում ներդրվող միջոցների հաշվառումը արտադրանքի ինքնարժեքի կազմում եւ դրանց ազատումը շահութահարկից, ինչպես նաեւ շահութահարկից կանխավճարներ մուծելու պրակտիկայի դադարեցումը եւ ներքին արտադրողի շահերի հավասարեցումը ներմուծողի նկատմամբ.

– Պետական աջակցության ցուցաբերում բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արդյունաբերության, մասնավորապես, ինֆորմացիոն եւ տելեկոմունիկացիոն բնագավառներում գործող արտադրությունների եւ մատուցվող ծառայությունների զարգացման, ինչպես նաեւ՝ արագագործ եւ մատչելի ինտերնետային ցանցի համատարած ներդրման գործում.

– Գյուղացիական տնտեսությունների սպասարկման ենթակառուցվածքների ստեղծում, որոնց տակ ենթադրվում են՝ այդ տնտեսությունների ֆինանսավորման կազմակերպման, ագրոսպասարկման, ոռոգման, գյուղմթերքների վերամշակման եւ իրացման համակարգերը. որպես գյուղատնտեսության զարգացմանն ուղղված լրացուցիչ միջոցներ նախատեսվում են՝ պետության մասնակցությամբ գյուղացիական տնտեսությունների բերքի պարտադիր ապահովագրումը, ներմուծվող սերմնացուի վրա ավելացված արժեքի հարկի տարածման վերացումը եւ դիզելային վառելիքի ազատումը ակցիզային հարկից, ինչպես նաեւ՝ պետության կողմից պարբերական աջակցության ցուցաբերումը սերմնացուի, պարարտանյութերի, տոհմային հոտի ձեռքբերման գործում.

– Բանկային գործունեությանը վերաբերող օրենսդրության վերանայում, մասնավորապես, Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությունների ընդլայնում՝ ի հաշիվ նրա նախագահին վերապահված անհամաչափ լիազորությունների, նոր բանկերի գրանցման պահանջների մեղմացում, ներդրումային հիմնադրամների, ֆոնդային բորսայի, վարկային կազմակերպությունների գործունեության խթանում:

5. Սոցիալական ոլորտում Հայաստանի նոր իշխանությունների գործունեության հիմքում ընկած են լինելու աղքատության վերացման, զբաղվածության եւ ծնելիության խթանման խնդիրները, որոնց լուծման համար, առաջին հերթին, ծրագրվում է իրականացնել հետեւյալ անհետաձգելի միջոցառումները.

– Բնակչության իրական եկամուտների անշեղ աճի ապահովում՝ միջին աշխատավարձի գծով՝ տարեկան շուրջ 20, իսկ թոշակների գծով՝ շուրջ 30–40 տոկոսի չափով, ինչպես նաեւ՝ պետության կողմից մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների գործունեության երաշխավորում.

– Երեխաների ծննդյան համար մայրերին տրվող միանվագ նպաստների կտրուկ հավելում՝ 2008 թվականից եւեթ դրանք սահմանելով՝

500.000, երրորդ երեխայից սկսած՝ 1.000.000, իսկ հինգերորդ երեխայից սկսած՝ 1.500.000 դրամի չափով.

– Բնակչության խորհրդային ավանդների ձեւակերպումը որպես պետական պարտատոմսեր՝ դրանք մարելով կրկնակի անգամ ավելի արագ եւ կրկնակի անգամ ավելի մեծ ծավալներով, բան նախատեսված է 2005 թվականին ընդունված օրենքով.

– Ի տարբերություն, այսպես կոչված, էլիտար շինարարության խթանմանը, պետության կողմից սոցիալական բնակարանային շինարարության լայնածավալ ծրագրի իրականացում, որի խնդիրն է երիտասարդ կամ բնակարանազուրկ ընտանիքներին անվարձ տրվող բնակարաններով ապահովումը.

– Ա՛ռ 1-ը հունվարի 2005թ. դրությամբ զինվորական ծառայությունից խուսափած եւ արտասահմանում ապաստանած շուրջ բան հազար երիտասարդների նկատմամբ համաներման կիրառում, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման պարագայում զինված ուժերի զգալի կրճատում եւ աստիճանական անցում պայմանագրային ծառայության.

– Առողջապահության, կրթության, գիտության ոլորտներում պետական ծրագրերի դերի եւ տեսակարար կշռի մեծացում, հավաստագրային եւ հասցեագրված ֆինանսավորման համակարգերի ներդրում, մասնավոր կապիտալի ներգրավվածության ընդլայնում, ապահովագրական եւ հիպոթեկային հիմնադրամների հնարավորությունների լիարժեք օգտագործում, բուհական ուսման վարձերի ձեւավորումը կանոնակարգող եւ դրանց աճը զսպող մեխանիզմների կիրառում, Հայաստանի բուհերի օժտված ուսանողների կրթությունն արտասահմանում կազմակերպելու նպատակով պետական հատուկ հիմնադրամի ստեղծում:

Այսպիսով, ամենահամեստ հաշվարկներով, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկայացվող ծրագրի համաձայն նախատեսվում է՝ 2008–2012թթ. ընթացքում կրկնապատկել երկրի համախառն ներքին արդյունքը, եռապատկել պետական բյուջեն ու միջին աշխատավարձը եւ քառապատկել միջին կենսաթոշակը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, շրջափակումների վերացման եւ հայ-թուրքական

սահմանի բացման պարագայում սպասելի են շատ ավելի տպավորիչ արդյունքներ:

* * *

Ցանկացած ընտրություն եթե ոչ անպայման պառակտում, ապա որոշակի լարվածություն է առաջացնում հասարակության մեջ: Ուստի ապագա նախագահից պահանջվում է իր գործունեության առաջին իսկ օրվանից լուրջ քայլեր ձեռնարկել այդ լարվածությունը մեղմելու եւ հանդուրժողականության ու ազգային համախմբման մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ: Վստահեցնում եմ, որ հաղթանակի պարագայում ես անշեղորեն առաջնորդվելու եմ այդ գիտակցությամբ:

«Հայք», «Հայկական ժամանակ», «168 ժամ», 8 հունվարի, 2007թ.: Հրատարակված նաեւ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն առանձին գրքույկներով. «Նախընտրական ծրագիր կամ հանդարտ խոհեր», Երեւան, 2008թ. – "Election Program, or Sober Reflections", Yerevan, 2007 – "Предвыборная программа или неспешные раздумья", Ереван, 2007.

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ
(11 հունվարի, 2008թ.)

ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆՅԱՆ (Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի մամլո քարտուղար). – Տիկնայք եւ պարոնայք. շնորհակալություն, որ ընդունել եք Հանրապետության առաջին նախագահի հրավերը: Սա 1997 թվականի սեպտեմբերի 26-ից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջին հրապարակային հանդիպումն է զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Բնականաբար, այս տարիներին բազմաթիվ հարցեր են կուտակվել: Ասուլիսը սկսելուց առաջ, ես կխնդրեմ մեկ րոպե լռությամբ հարգել մեր զինակից-ընկեր, «Ժողովրդավարական ուղի» կուսակցության նախագահ Մանուկ Գասպարյանի հիշատակը (հոտնկայս լռություն): Իսկ այժմ, խնդրեմ, տվեք ձեր հարցերը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ, «Արմինֆո» գործակալություն. – Պարոն Տեր-Պետրոսյան, Դուք տասը տարի լռություն պահպանեցիք, ես կուզեի մատնանշեք՝ ինչը Ձեզ ստիպեց, այնուամենայնիվ, խախտել այդ լռությունը եւ մասնակցել առաջիկա ընտրություններին:

– Ձեր հարցն ինձ շատերն են տալիս, երբեմն նաեւ դրա մեջ քաղաքական բովանդակություն դնելով: Բացատրեմ. նորմալ երկրում, երբ ամեն ինչ կարգին է, երբ ընտրությունների միջոցով, կանոնավոր կերպով, օրինական ճանապարհով, տեղի են ունենում իշխանության փոփոխություններ, նախկին նախագահն ընդհանրապես քաղաքականությամբ չպետք է զբաղվի: Պետք է զբաղվի գիտությամբ, այգեգործությամբ, թոռներով, որեւէ ձեւով չպետք է մեկնաբանի իր հաջորդների գործունեությունը: Նախկին նախագահը քաղաքականության մեջ ինչ-որ պիտի աներ, ինչ-որ պիտի ապացուցեր, ինչ խորհուրդներ որ պիտի տար, ար-

դեն պիտի արած լիներ իր իշխանության շրջանում: Ես երջանիկ կլինեի, որ այդպիսի երկրում ապրեինք, եւ ես այլեւս երբեք չմիջամտեի քաղաքականությանը: Հիմա հարցնում են՝ ինչու եմ տասը տարի լռել, եւ ինչու եմ հանկարծ սկսել խոսել, կամ վերադարձել քաղաքականություն: 2003 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ էլ եղել են այսպիսի խոսակցություններ, նույնիսկ փորձել են հիմնավորել, թե անհրաժեշտ է, որ ես մասնակցեմ այդ ընտրություններին: Բայց ես կտրականապես մերժել եմ, հասկանալով, որ դեռ իմ ժամանակը չէ: 2003-ը Ստեփան Դեմիրճյանի աստեղային ժամն էր: Եթե ես առաջադրվեի էլ, այդ ընտրություններում հաղթելու որեւէ շանս չէի ունենա, առավել եւս՝ կխանգարեի Ստեփան Դեմիրճյանին, ինչը բացարձակապես սխալ կլիներ ե՛ւ ինձ համար, ե՛ւ մեր երկրի համար: Կհարցնե՞ ի՞նչ է փոխվել հիմա: Հիմա որոշ բան փոխվել է. նախորդ տարվա խորհրդարանական ընտրություններից հետո հայտնի դարձավ, որ ընդդիմությունը, չէի ասի հուսալքվել, բարոյալքվել, բայց կորցրել է քաղաքական գործոնի այն դերը, որ մինչ այդ ուներ: Չէի ասի ամայացել էր քաղաքական դաշտը, գուցե դա խաբուսիկ էր, բայց առնվազն չէր երեւում այն ուժը, այն թեկնածուն, որը կկարողանար հաղթահարել ներկա իշխանություններին եւ թույլ չտալ նրանց վերարտադրությունը: Ահա, սա է իմ վերադարձի պատճառներից մեկը: Անկեղծ ասած, անձնական առումով ես դրանից որեւէ ակնկալիք կամ քաղաքական հավակնություն (ամբիցիա) չունեմ: Ես լիովին բավարարված, ինքնաբավ մարդ եմ: Մինչեւ 1988 թվականն էլ այդպիսին եմ եղել, զբաղվել եմ գիտությամբ: Դա ինձ մեծագույն հաճույք է պատճառել: Չէի ասի մեծ գյուտեր, հայտնագործություններ եմ կատարել, բայց իմ բնագավառում եղել եմ միջազգային մակարդակի պրոֆեսիոնալ: Դեռեւս 80-ական թվականներին գրքեր եւ հոդվածներ եմ հրապարակել արտասահմանում՝ Բելգիայում, Իտալիայում, Ֆրանսիայում: Այսինքն, ես լրիվ բավարարված մարդ եմ եղել գիտության մեջ, եւ քաղաքականությունը թողնելուց հետո կրկին զբաղվել եմ իմ սիրած գործով ու մեծագույն ստեղծագործական հաճույք ստացել: Վերջին տասը տարիներն անձնական առումով ինձ համար եղել են ամենաերջանիկ եւ ամենաազատ տարիները, երբ ո՛չ աշխատանքային պլաններն էին ինձ խեղդում, ո՛չ «Գլավլիտն» ու հրատարակչություններն էին խոչընդոտներ առաջացնում: Ինչ

ուզում, երբ ուզում՝ գրում եւ հրատարակում էի, առանց որեւէ արգելքի: Եթե իմ վերադարձի պատճառներից մեկը, ինչպես նշեցի, ներկա վարչախմբին հաղթահարելու ունակ ուժի բացակայությունն էր, ապա մյուս պատճառը՝ պարտքի գիտակցությունն էր, մանավանդ նկատի ունենալով, որ ես էլ որոշակի մեղք ունեմ այդ վարչախմբի կայացման գործում: Վերջին հաշվով, ես եմ այդ մարդկանց հրավիրել Հայաստան: Թեեւ պատասխանատու չեմ, թե դրանից հետո նրանք ինչպիսի պաշտոններ են զբաղեցրել՝ ընտրվել կամ չեն ընտրվել հանրապետության նախագահ, բայց փաստ է, որ եթե ես նրանց չհրավիրեի, նրանք այսօր մեր գլխին նստած չէին լինի: Կարծում եմ, ես կկարողանամ համոզել մեր ժողովրդին, ձեզ, մեր հասարակությանը, որ այս իշխանությունները չարիք են, եւ որ միայն մղձավանջային երազներում կարելի է պատկերացնել ներկա վարչախմբի եւս տասը տարվա իշխանավարությունը: Չեմ ուզում ապոկալիպտիկ տեսարաններ նկարագրել, բայց որ շատ դժբախտությունների ու բազում փորձությունների ենք հանդիպելու այդ պարագայում, բացառնակապես չեմ կասկածում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ, «Ազգ» օրաթերթ. – Պարոն Տեր-Պետրոսյան, ո՞րն է լինելու Ձեր առաջին հրամանագիրը:

– Իմ առաջին գործը պետք է լինի կառավարության ձեւավորումը, քանի որ նոր նախագահի ընտրության դեպքում նախորդ կառավարությունը դադարեցնում է իր լիազորությունները: Այստեղ, հասկանալի է, որ որոշակի խնդիրներ են ծագելու, որովհետեւ մենք խորհրդարանում մեծամասնություն չունենք: Հետեւաբար, պիտի կարողանանք աշխատել գոյություն ունեցող մեծամասնության հետ: Ես արդեն բացատրել եմ, որ խորհրդարանը թեեւ այսօր չի արտահայտում մեր հասարակության եւ քաղաքական դաշտի ուժերի իրական հարաբերակցությունը, բայց հարկադրված ենք աշխատել նրա հետ: Չեմ կարծում, թե լուրջ բարդություններ կլինեն. կառավարությունը սահուն կձեւավորվի, կնշանակվի վարչապետ, որից հետո իմ նախընտրական ծրագրի հիմնադրույթների հիման վրա կներկայացվի կառավարության ծրագիրը:

ԷՄՄԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, «Ժամանակ Երեւան» օրաթերթ. – Պարոն նախագահ, կուզեի իմանալ, արդյո՞ք կա այն թիմը, որը կկազմի ապագա կառավարությունը Ձեր նախագահ դառնալու դեպքում, եւ եթե այո,

Դուք հնարավո՞ր եք համարում գործող իշխանությունների ներկայացուցիչներից ոմանց այնտեղ ընդգրկվելը:

– Ով է լինելու իմ թիմում. այստեղ ոչ մի գաղտնիք չկա: Կարեւոր չեն կոնկրետ անձերն ու նրանց հետագայում զբաղեցնելիք պաշտոնները: Ցանկացած թեկնածուի ընտրարշավ, որը ինչ-որ ձեւով վերածվում է քաղաքական շարժման, ունենում է իր առաջնորդները: Դրանք այսօր ձեր աչքի առջեւ են: Իշխանության են գալու այն ուժերը, որոնք կանգնած են իմ կողքին: Խոսքը վերաբերում է բոլոր այն կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, որոնք սատարում են ինձ կամ պաշտպանում իմ թեկնածությունը: Իշխանության մեջ տեղ զբաղեցնելու սկզբունքը լինելու է հետեւյալը. յուրաքանչյուրը պիտի հատուցվի եւ պետական աստիճանակարգում համապատասխան պաշտոնների արժանանա մեր Շարժման եւ հաղթանակի մեջ ներդրած ջանքերի ու վաստակի չափով: Ինչ վերաբերում է այն հարցին, թե գործող իշխանություններից ինչ-որ մարդիկ կշարունակե՞ն աշխատել՝ իհարկե, կշարունակեն: Երբ մենք 1990 թվականին եկանք իշխանության, պետական ապարատում շատ քիչ փոփոխություն տեղի ունեցավ: Մենք դեռեւս փորձ չունեինք, կադրեր չունեինք, ուստի համարյա ամբողջությամբ պահպանեցինք կոմունիստական պետական ապարատը: Անկախության շրջանի առաջին կառավարության մեջ նախկին կոմունիստական կառավարության անդամները կազմում էին մոտ 80 տոկոս: Հետո կամաց-կամաց մեր կադրերը փորձ ձեռք բերեցին, հմտություն ստացան եւ փոխարինեցին նրանց: Այսօր վիճակն, իհարկե, մի-փոքր այլ է. մենք ութ տարի իշխանության գլուխ ենք եղել, ունենք թե՛ փորձ, թե՛ կադրեր: Բայց չեմ կասկածում, որ ներկա իշխանությունների կազմում կան բավականին արհեստավարժ մասնագետներ, ովքեր պիտի շարունակեն իրենց գործունեությունը, մանավանդ՝ միջին եւ ստորին օղակների ապարատում: Նրանք անհանգստանալու խնդիր չունեն:

ԿԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ, «Իրավունք» շաբաթաթերթ. – Պարոն նախագահ, իշխանության գալու եւ նախագահ դառնալու դեպքում դարաբաղյան բանակցային գործընթացը սկսելու եք 98-ի՞ց, այսօր սեղանին դրված, ըստ համանախագահների՝ տրամաբանական լուծումի՞ց, թե բոլորովին նոր բանակցային գործընթաց եք ծավալելու:

– Իհարկե, 1998-ից չեմ սկսելու: Ղարաբաղյան բանակցությունների գործընթացը մի համակարգ է, որը սկսվել է 1992 թվականից, ունեցել իր տարբեր աստիճանները, եւ այսօր գտնվում է բոլորովին այլ աստիճանի վրա, քան էր՝ 98-ին: Այսօր կա մի նոր, գրավոր առաջարկ: Սա, ի դեպ, նորություն է. համանախագահների կողմից վերջին գրավոր առաջարկը եղել է ընդհանուր պետությանը վերաբերող առաջարկը (1998թ.): Դրանից հետո համանախագահները կողմերին որեւէ գրավոր առաջարկ չեն ներկայացրել: Այսինքն, վերականգնվում է նախկին ավանդույթը: Այս հանգամանքն, ինձ թվում է, ավելի լրջացնում է գործընթացը: Ընտրվելու դեպքում ես, բնականաբար, պիտի կողմնորոշվեմ ըստ վերջին առաջարկի: Ի դեպ, ես ունեմ դրա բնագիրը, բայց քանի որ այն պետական գաղտնիք է, ես էլ պետական պաշտոն չեմ զբաղեցնում, իրավունք չունեմ այդ առթիվ որեւէ վերաբերմունք արտահայտել: Բովանդակությունը մոտավորապես ձեզ ներկայացրել եմ իմ հանրահավաքային ելույթներից մեկում: Ըստ էության, դա նույն փուլային տարբերակն է (թող ոչ մի անպարարություն չանեն), գումարած ընդամենը մեկ նոր տարր, այն է՝ մի հակիրճ ձեւակերպում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ անորոշ ապագայում ինչ-որ չկանոնակարգված հանրաքվե, ժողովրդական հարցում, կամ պլեբիսցիտ անցկացնելու մասին: Ուրեմն, հետագա բանակցությունների հիմքը կարող է լինել բանակցային գործընթացի այսօրվա վիճակի, եթե ոչ անգամ ֆորմալ արտահայտությունը (գրավոր առաջարկը), ապա հաստատապես՝ նրա տրամաբանությունը:

ՆՈՐԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ, «Հայաստանի Հրուցակից» շաբաթաթերթ. – Պարոն Տեր-Պետրոսյան, Ձեր ծրագիրն ավելի շատ քաղաքագետների համար կազմված գրագետ փաստաթուղթ է: Բայց Ձեզ պետք է լսի ամբողջ հանրությունը, ժողովուրդը, որը հակված է լսելու ավելի շատ բարձրագոչ խոսքեր, իր երազների մասին խոսակցություններ, Դուք ինչո՞ւ չեք ցանկացել օգտագործել քաղաքական այդ սնունդը:

– Ես Ձեզ հետ չէի համաձայնի, թե իմ ծրագիրը քաղաքագետների համար է գրված: Բացարձակապես: Ես հենց ժողովրդի հետ եմ զրուցում: Դում խոսում եմ ծրագրի միայն վերջին գլխի մասին, որը կազմում է ընդամենը նրա 25 տոկոսը: Առաջին երեք գլուխը՝ 75 տոկոսը, ժողովրդի

հետ զրույց է, որում ներկայացված են իմ դատողությունները նրա երազանքների կամ պատկերացումների մասին: Ես բացարձակապես չեմ կասկածում, որ երբ ծրագիրը տարածվի նաեւ տեսասկավառակների միջոցով, ժողովուրդը շատ ավելի լավ կհասկանա այն, քան քաղաքագետներից կամ քաղաքական գործիչներից շատերը: Ինչ վերաբերում է ամպագոռգող խոստումներին, դա իմ ոճը չէ: Այդպիսի հակում ունեցող թեկնածուներ շատ կան, եթե նրանք հաճելի են ժողովրդին, թող գնան նրանց ետեւից, ես խնդիր չունեմ: Իմ ծրագիրը սկսվում է հենց այն հավաստումից, որ նրանում պոպուլիզմ չի լինելու (առաջին էջում է գրված): Ծրագրում չկա որեւէ դրույթ, որի տակ չլինեն կոնկրետ տնտեսագիտական կամ քաղաքական հաշվարկներ: Ընդ որում, ներկայացված են միայն ամենահիմնական, հայեցակարգային դրույթները, որոնց հիմքում ընկած է օրենսդրական փոփոխությունների, տնտեսական հարաբերությունների, քաղաքական մոտեցումների վերանայման մի ողջ համակարգ:

ՏԱԹԵՒԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Հայլուր». – Պարոն Տեր-Պետրոսյան, քիչ առաջ Դուք խոսեցիք, որ նորմալ երկրում իշխանափոխությունը տեղի է ունենում օրինական ճանապարհով: Նախագահի մյուս թեկնածուն՝ Վազգեն Մանուկյանը համոզված պնդում է, որ 96 թվին իշխանություններն են կեղծել ընտրությունները, ընդ որում, հակադրվելով Ձեզ, երբ Դուք դա վերագրեցիք հանձնաժողովականներին:

– Ես այդպիսի վերագրում չեմ արել:

ՏԱԹԵՒԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ. – Շատ լավ, եւ ինքը որպես ապացույց բերում է Վանոյի խոսքերը, որ իշխանություններն են կեղծել ընտրությունները եւ կարծում է, որ Դուք դեռ պարտք ունեք վերադարձնելու ժողովրդին եւ չե՞ք պատրաստվում, արդյոք, այդ պարտքը վերադարձնելու համար, հենց Վազգեն Մանուկյանի օգտին հանել Ձեր թեկնածությունը կամ նրան պաշտպանել ընտրություններում: Եւ մի փոքրիկ հարց, միփոքր անհարմարավետության զգացում չե՞ք ունենում, երբ Ձեզ դիմում են «պարոն նախագահ» բառերով:

– Նախ, «պարոն նախագահ» բառերով դիմում են բոլոր նախկին նախագահներին: Եթե դուք գիտեք, դա միջազգային արարողակարգ է: Եթե մեկը նախկինում նախարար է եղել, նա մինչեւ մահ կոչվում է «պարոն նախարար», եթե դեսպան է եղել՝ «պարոն դեսպան», եթե պրոֆեսոր է

եղել՝ «պարոն պրոֆեսոր» եւ այլն: Մյուս հարցը թեեւ ծավալուն է, բայց շատ ուրախ եմ, որ այն տվեցիք: Որ Վազգեն Մանուկյանը համոզված է եւ կարծում է, թե 1996 թվականին ինքը ընտրվել է նախագահ, ես հարգում եմ նրա համոզմունքը եւ կարծիքը: Թող այդպես էլ համոզված մնա ու կարծի: Բայց քաղաքականությունը կարծիք չէ, համոզմունք չէ: Քաղաքականությունը պետության կենսագործունեության հետ կապված իրավական պրոցես է: Վազգեն Մանուկյանը 96 թվականի ընտրություններից հետո դիմել է Սահմանադրական դատարան, ներկայացրել 1000-ից ավելի արձանագրություն տեղամասերից՝ համոզված լինելով, որ այդ արձանագրություններով ապացուցվում է, որ ընտրությունները կեղծվել են: Ներկայացված շուրջ 1030 կամ ավելի արձանագրություններից (ընդհանուր թիվը՝ մոտ 1600) ընդամենը մի քանի տասնյակում են միայն հայտնաբերվել թվական անճշտություններ, այն էլ՝ կապված ոչ թե թեր եւ դեմ ձայների, այլ հանձնաժողովների անփութության պատճառով կատարված թվաբանական հաշվարկների հետ (այդպիսի անճշտություններ բոլոր ընտրություններում լինում են հազարներով): Այսինքն, իմ մրցակիցը որեւէ ապացույց չի կարողացել բերել, որ այդ ընտրությունները կեղծված են. սա մեկ: Ավելին, մրցակցիս ներկայացրած փաստաթղթերի հիման վրա Սահմանադրական դատարանում հաշվարկներ կատարվեցին, եւ իմ ստացած ձայները 0,25 տոկոսով ավելացան: Ես շնորհակալ եմ Վազգեն Մանուկյանին, որ ավելացրեց իմ ստացած քվեները: Մի խոսքով, սա իրավական պրոցես է, սա իմ եւ Մանուկյանի լուծելիք խնդիրը չէ, համոզմունքների, կարծիքների հետ կապված չէ: Իրավական գործընթաց է տեղի ունեցել, ԿԸՀ-ն կայացրել է իր որոշումը, Սահմանադրական դատարանն՝ իրենը: Միջազգային դիտորդական կազմակերպությունները, այո՛, նշել են անճշտություններ, նշել են թերություններ, նշել են կեղծիքներ ինչ-որ հանձնաժողովներում, բայց ընդունել են ընտրությունների արդյունքները: Եղել է երկու դեպք, երբ միջազգային հանրությունը չի ընդունել ընտրությունների արդյունքները՝ մի անգամ Ալբանիայում, մի անգամ՝ Բելառուսում: Այսպիսի բան 96 թվականի ընտրությունների նկատմամբ տեղի չի ունեցել: Ես ավելին չեմ ուզում ասել: Իսկ որ իմ հարգելի մրցակիցը, նախկինում մտերիմ ընկերը, շարունակելու է այդպես մտածել, թող մտածի:

ԿԱՐԻՆԵ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, «Ազատություն» ռադիոկայան. – Պարոն Տեր-Պետրոսյան, Դուք ասացիք, որ պիտի փորձեք համոզել մեր ժողովրդին, որ այս իշխանությունները չարիք են: Այդ հարցում Ձեզ երեւի կօգնեն մյուս ընդդիմադիր թեկնածուները եւս, իսկ կկարողանա՞ք արդյոք համոզել, որ այդ չարիքից ազատողը հենց Դուք եք լինելու:

– Այդ հարցի պատասխանը Դում կստանամ փետրվարի 19-ին: Եթե հաղթեմ, ուրեմն, կարողացել եմ համոզել: Եթե չհաղթեմ, չեմ համոզել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, «Ազգ» օրաթերթ. – Որեւէ նախագահի թեկնածու պետք է սթափ գնահատի իր հնարավորությունները: Դուք սթափ գնահատե՞լ եք Ձեր հնարավորությունները ժողովրդի մեջ եւ այս պահին Ձեր վարկանիշը որքա՞ն է Ձեր գնահատմամբ: Եւ Դուք ասացիք, որ մեծամասնության հետ աշխատելու եք, այստեղ հակասություն չկա՞: Այդ մեծամասնության հետ Դուք ինչպես եք աշխատելու, երբ դրա մեջ մտնում է, օրինակ, Դաշնակցությունը եւ արդյոք լուծարելո՞ւ եք խորհրդարանը, թե ոչ:

– Ես այդ հարցին արդեն մի քանի անգամ պատասխանել եմ: Բոլոր խորհրդարանները մեծամասնություն ունեն, խորհրդարանի էությունը հենց նրա մեծամասնությունն է՝ այսինքն, պատգամավորների այն մասը, որը կարող է վճիռներ կայացնել: Նախագահը աշխատում է վճիռներ կայացնող մարմնի հետ: Թե այստեղ որ կուսակցությունն ինչ դեր է խաղում, ոչ մի նշանակություն չունի: Երկրորդ՝ ես այն մարդը չեմ, որ ասեմ՝ անպայման հաղթելու եմ, այսինքն՝ կասկածներ չունեմ: Թե որքան է իմ վարկանիշը, դա մի կողմ դնենք. բայց որ այսօրվա իշխանություններին հակադիր միակ ռեալ ուժը ես եմ եւ մեր Շարժումը, դա, կարծում եմ, փաստ է: Ինչ վերաբերում է իմ համոզմունքը ժողովրդին հասցնելուն, ես կհասցնեմ: Մի՛ վախեցեք, Հայաստանում չի լինի որեւէ քաղաքացի, որն իմ տեսակետներին չծանոթանա: Ես արդեն խոսել եմ կես միլիոն մարդու հետ. իմ բոլոր ելույթները, գրքույկների եւ տեսասկավառակների տեսքով, հասնում են մարդկանց: Այդպիսի լսարան ոչ մի թեկնածու չունի՝ ոչ իսկ իշխանության թեկնածուն, որը 15 հեռուստակայանով իբր թե խոսում է ժողովրդի հետ: Նրան չեն լսում, չեն տեսնում: Իսկական լսարանն այդ կես միլիոնն է, որը դեռ պիտի ավելանա: Վստահ եղեք, մինչեւ փետրվարի 19-ը Հայաստանի Հանրապե-

տությունում չի լինի որեւէ քաղաքացի, որը չծանոթանա իմ ծրագրերին, իմ ելույթներին, իմ պլատֆորմին: Ի դեպ. չպետք է մտածել, որ իմ ծրագիրը միայն այն է, ինչ ես մի քանի օր առաջ հրապարակեցի: Իմ ծրագիրը սեպտեմբերի 21-ից ի վեր ունեցած բոլոր ելույթներն են. իմ պլատֆորմը, աշխարհայացքը, քաղաքական դատողությունները, մոտեցումները արտահայտված են այդ հրապարակային ելույթներում, որոնք չի կարելի իրարից անջատել: Այսպես, նախընտրական ծրագրում ես Ղարաբաղի մասին ընդամենը հինգ տող եմ խոսում, բայց իմ ելույթներից մեկում այդ հարցը ներկայացրել եմ մի ամբողջ գլխով: Նույնը վերաբերում է նաեւ այլ հարցերի, ինչպես, օրինակ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը եւ այլն: Այնպես որ, չպետք է ֆորմալ մոտենալ իմ նախընտրական ծրագրին:

ԹԱԳՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ, «Տարեգիր». – Պարոն նախագահ, ինձ հետաքրքրում է հետեւյալ հարցը. Սահմանադրության փոփոխությունները Ձեր շուրջը համախմբված ուժերի կողմից ժամանակին դատապարտվել են բազմիցս, եւ բուն հանրաքվեն էլ որակվել է որպես ուրվականների հանրաքվե: Վերընտրվելու դեպքում, Դուք պատրաստվո՞ւմ եք նորից փոփոխությունների ենթարկել Սահմանադրությունը, թե պատրաստվում եք աշխատել այդ Սահմանադրությամբ: Եւ կուզեի Ձեր կարծիքը իմանալ գործող Սահմանադրության մասին:

– Ես գիտեմ, այո՛, որ 2005 թվականին լուրջ դիմադրություն կար Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ, բայց չեմ ուզում խոսել, թե ինչ տեղի ունեցավ, ինչպես անցկացվեց հանրաքվեն: Հիմա մենք ունենք այն, ինչ ունենք: Մենք ունենք մեկ Սահմանադրություն, որը 1995 թվականի Սահմանադրությունն է՝ 2005-ին ընդունված փոփոխություններով: Ես ընտրապայքարի մեջ եմ մտել՝ հիմնվելով այս Սահմանադրության վրա, եւ որպես նախագահ, աշխատելու եմ այս Սահմանադրությամբ՝ ինչպիսի վերապահումներ էլ ունենամ, ինչպիսի թերություններ էլ նրանում տեսնեմ: Մեկ հիմնական թերություն կարող եմ նշել, չմտնելով մանրամասների մեջ: 1995 թվականի Սահմանադրությունը մի համակարգ էր, որը ներքին հակասություններ չուներ: Անկախ այն բանից, թե ինչպես կվերաբերվեք դրան, դա պետական իշխանության մի համակարգ էր, որը զերծ էր ներքին հակասություններից: 2005

թվականին եղան որոշ դրական փոփոխություններ, չեմ ժխտում: Մասնավորապես, լուծվեց վարչապետի ինքնուրույնության խնդիրը, թեեւ ոչ այն ձեւով, ինչպես պետք էր, քանի որ ընդունված տարբերակը հետագայում գործադիր իշխանության մեջ ճգնաժամային իրավիճակներ ստեղծելու վտանգներ է պարունակում: Սահմանադրական դատարանի հարցում դրական փոփոխություններ եղան, մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը հաստատվեց: Դրականի հետ մեկտեղ, սակայն, խախտվեց 1995 թվականի Սահմանադրության մոդելը կամ համակարգը եւ չփոխարինվեց նոր համակարգով: Փոփոխված Սահմանադրության մեջ կան ճեղքեր, կան հակասություններ, որոնք հանգիստ քաղաքական զարգացումների դեպքում կարող են նկատելի կամ վտանգավոր չլինել, բայց ճգնաժամային պահերին կարող են սահմանադրական անլուծանելիության վիճակներ ստեղծել: Հիշո՞ւմ եք, որքան էին քննադատում 1995-ի Սահմանադրությունը, բայց 1998 թվականի իշխանափոխությունից եւ 1999 թվականի ահաբեկչությունից հետո նույնիսկ նրա հակառակորդներն ասում էին՝ Սահմանադրությունն ապացուցեց իր կենսունակությունը, ապացուցեց, որ մենք ունենք մի այնպիսի Սահմանադրություն, որը մեզ չի կանգնեցնում ճգնաժամային վիճակների առաջ: Սա բոլորն ընդունեցին, հակառակորդները նույնիսկ: Ես կնախընտրեի, որ Սահմանադրությունը չփոխվեր: Սահմանադրություններն, ընդհանրապես, մեկ անգամ պետք է ընդունվեն: Այն այնքան հիմնավոր պիտի լինի, որ Սուրբ գրքի նման բան դառնա պետության, ժողովրդի համար: Որքան անսասանելի, անփոփոխելի լինի Սահմանադրությունը, նշանակում է դա այնքան լավ Սահմանադրություն է: Նշանակում է, որ այդ Սահմանադրությունն արդեն ստեղծել է պետական կայուն ավանդույթներ, որոնց, թեկուզ ենթագիտակցորեն, հետեւում են մարդիկ: Սահմանադրությունը քիչ պետք է փոփոխվի: Չեմ բացառում, իհարկե, որ աշխատանքի ընթացքում, հետագա հինգ տարիներին, եթե ծագեն ինչ-որ հարցեր, մենք կարող ենք անդրադառնալ որոշ փոփոխությունների: Բայց դրանք չեն լինի 2005-ին կատարված փոփոխությունների նման: Ի դեպ, ամենասարսափելին եւ վտանգավորը փոփոխությունների անցկացման եղանակն էր. փոփոխություններ անվան տակ հանրաքվեի դրվեց ամբողջ Սահմանադրությունը: Այդպես չի կարելի: Փոփոխությունը պետք է հստակ առանձնացվի,

կոնկրետ պետք է նշվի, թե որ հոդվածներն են փոխվում, հանրաքվեի պետք է դրվի առավելագույնը երկու-երեք փոփոխություն: Միացյալ Նահանգներում կան սահմանադրական փոփոխությունների առաջարկներ, որոնք սկիզբ են առնում դեռևս 30-ական թվականներից, բայց մինչև օրս չեն ընդունվել: Այնտեղ խիստ սահմանափակումներ կան, Նահանգների 2/3-ը պետք է համաձայնի, որ այդ փոփոխությունները տեղ գտնեն Սահմանադրության մեջ (ի դեպ, կենսական, անհրաժեշտ փոփոխություններ), բայց դա չի հաջողվում: Այդուհանդերձ, դա ավելի նախընտրելի է, քան ամեն օր Սահմանադրությունը ձևելը, փոփոխելը և այլն:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ, «Արմինիոն Ռիփորթը». – Պարոն նախագահ, երկու օր առաջ ես հեռավոր շրջաններից մեկում էի և ինձ համար զարմանալիորեն, Ձեր վարկանիշը բավականաչափ, չեմ ուզում այլ բառ օգտագործել՝ բարձր էր: Ինձ հետաքրքրում է, թե ինչպես եք անելու, որպեսզի ամսի 20-ին այդ ձայների տերը լինեք: Այս հարցը տալիս եմ, ելնելով այն իրողությունից, որ գոնե ժողովրդի մեջ կա մի կարծիք, որ 96-ից, Ձեր ընտրությունների ժամանակ էլ, ընտրությունները կեղծվում են և իշխանության չեն գալիս մարդիկ, որոնց իրենք էին ընտրել:

– Ես այդ հարցը ընդհանրապես չեմ հասկանում, ուղղակի չեմ հասկանում: Դա, որպես շատ լուրջ հարց, արդեն տասը տարի հնչում է բոլոր հեռուստակայանների, բոլոր լուրջ լրագրողների անունից, այն է՝ ինչպես եմ տեր կանգնելու ձեր ձայներին: Ֆանտաստիկ հարց: Այդ հարցը տվողն ինքը պետք է տեր կանգնի իր տված ձայնին, և ոչ թե պահանջի, որ ես տեր կանգնեմ: Կա պետություն, կա Սահմանադրական դատարան, կա դատախազություն, կա ԿԸՀ: Նրանց գործն ի՞նչն է: Հենց նրանց գործն է՝ տեր կանգնել ժողովրդի ձայներին: Մինչև այդ գիտակցությունը չլինի, մեր երկրում ոչինչ չի փոխվի: Ինչ վերաբերում է ինձ, թե ինչ եմ անելու, եթե տեսնեմ, որ փետրվարի 20-ին ընտրությունները կեղծվել են, ապա անելու եմ այն, ինչ անում եմ մինչև հիմա: Գիտակցելով իմ իրավունքները, շատ լավ ծանոթ լինելով մեր Սահմանադրությանը, օրենքներին, միջազգային օրենսդրությանը, ես անելու եմ դրանցից բխող բոլոր քայլերը՝ ցույցեր, երթեր, պիկետներ, դատավարություններ և այլն: Սա է լինելու իմ ճանապարհը: Ես Ձեր ակնարկած մարդու նման ցանկապատեր չեմ կոտրելու, շենքեր չեմ գրավելու, խորհրդարանի նախագա-

ճի գլուխը չեմ ջարդելու: Եւ, ի դեպ, իմացեք, նախագահի տվյալ թեկնածուն կործանվեց հենց այդ պատճառով: 1996 թվականին նա ուներ 41–42 տոկոս ձայն, հաջորդ ընտրություններում (1998թ.) ստացավ 13 տոկոս, 2003-ին՝ 0.9 տոկոս: Սա է ժողովրդի վերաբերմունքը 1996 թվականին պետության դեմ նրա կատարած անավոր հարվածի նկատմամբ: Ուրիշ ոչ մի պատճառ չկա: Ժողովուրդը բնազդաբար չի ընդունում այդպիսի քաղաքական գործելակերպը: Եւ դա իմ կողմից երբեք տեղի չի ունենա: Մնացածը ձեզնից է կախված: Որքան ես պիտի պայքարեմ իմ ձայների համար, նույնքան դուք պիտի պայքարեք, եւ ոչ թե բավարարվեք հարց տալով: Ինձնից էլ առաջ պիտի ընկնեք, քանի որ դա ոչ թե ինձ համար, այլ ձեզ համար եք անելու՝ նույնիսկ ինձ չսիրողներդ: «Փակագծի» խմբագիրը պետք է ինքն առաջինը կանգնի ԿԸՀ-ի առջեւ եւ բողոքի, որ ինձնից ձայներ են խլել, այլապես ես չեմ հավատա, որ ուզում եք նորմալ պետություն ունենալ:

ԿԱՐԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ, «Հանրային ռադիո». – Խոսվեց ժողովրդավարություն բերելու մասին, հարցս վերաբերում է ժողովրդավարության բաղադրիչներից մեկին: Կան լուրեր, որ Դուք «Ազատություն» ռ/կ խմբագրակազմի հետ հանդիպման ժամանակ ասել եք, որ ժամանակին Ձեր կողմից ռադիոկայանի փակումը ճիշտ քայլ էր, եւ վերջերս մամուլում հրապարակում եղավ, որ «Ժամանակ Երեւան» օրաթերթի խմբագիր Արմինե Օհանյանը հրաժարական է տվել Ձեր եւ Ձեր թիմի ճնշմամբ, որովհետեւ փորձել եք գրաքննություն հաստատել այդ թերթում:

– Դուք երկու հարց տվեցիք, երկուսին էլ սիրով կպատասխանեմ: Երկրորդ խնդրի՝ «Ժամանակ Երեւան» թերթի խմբագրությունում տեղի ունեցած փոփոխության հետ ես որեւէ կապ չունեմ: Սա հայտարարում եմ ամենայն պատասխանատվությամբ, եւ այդպիսի լուրեր տարածողների խղճին եմ թողնում, թե ինչու են այդ բանն անում: Սա մեկ: Ինչ վերաբերում է «Ազատություն» ռադիոկայանին, Դուք մի քիչ աղավաղված ներկայացրեցիք իրականությունը: Ես եմ ներկա եղել «Ազատությունում» կայացած հանդիպմանը: Դուք չեք էլ եղել. կային սիրուն աղջիկներ եւ մի շորս տղա, որոնցից մեկը Դուք չէիք: Ինձ հարց են տվել, եւ խոսակցության ժամանակ ես իսկապես ասել եմ, որ երջանիկ կլինեի, եթե «Ազատություն» ռադիոկայանը չլիներ: Ի՞նչ նկատի ունեի: Ես ընդ-

հանրապես դեմ եմ, երբ ժողովրդավարությունը հաստատվում է դրսից: Մեր երկրում մենք պիտի հաստատենք ժողովրդավարությունը: Դրսից հաստատված որեւէ գաղափարախոսություն մեր ազգին օգուտ չի կարող բերել: Այդպիսի գաղափարախոսություններ եղել են. մեկը կոմունիզմն էր, եւ տեսանք դրա արդյունքը: Դա դրսից պարտադրված, մեր վզին փաթաթված գաղափարախոսություն էր: Մինչեւ ժողովրդավարությունը չլինի մերը, չբխի մեր սրտից, չգիտակցենք, որ դա առաջին հերթին մեր երեխաներին, մեր պետությանը, մեր ապագային է անհրաժեշտ, այդ ժողովրդավարությունը մեզ պետք չէ: Ուրեմն, ես երջանիկ կլինեմ, երբ Հայաստանում այնպիսի ժողովրդավարություն հաստատվի, որ «Ազատություն» ռադիոկայանի կարիքը չզգացվի, ինչպես արդեն չի զգացվում Արեւելյան Եւրոպայի եւ Բալթյան երկրներում: Այդ երկրների լեզուներով հաղորդումները արդեն վաղուց դադարեցվել են: Այն օրը, երբ որ դադարեցվեն «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումները Հայաստանում, մենք իրար պիտի շնորհավորենք այն առիթով, որ մեզ մոտ արդեն իսկական ժողովրդավարություն է հաստատվել:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, «Ուրբաթ Ռիփորթը». – Պարոն նախագահ, Դուք Ձեր ելույթներից մեկում նշեցիք, որ 1996 թվականից հետո չի եղել մի ընտրություն, որը չի կեղծվել:

– Ոչ, ոչ, կխնդրեմ ուշադիր լինել: Ձեր հարցի մեջ կեղծիք է պարունակվում: Ես ասել եմ՝ 96 թվականից մինչեւ այսօր չեն եղել անաղմուկ ընտրություններ, բոլոր ընտրությունները եղել են աղմկոտ: Եւ բացատրել եմ, թե ինչու: Բացատրել եմ, որ դա գալիս է ընտրական հանձնաժողովների ձեւավորման սկզբունքից: Ինչպիսի ընտրություններ էլ լինեն, եթե հանձնաժողովները ձեւավորված են բազմակուսակցական սկզբունքով, անաղմուկ ընտրություն Հայաստանում չի կարող տեղի ունենալ: Այդ հարցը հանեք, այլ ձեւով ձեւակերպեք:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. – Այդ դեպքում, որն է լինելու անաղմուկ ընտրությունների երաշխիքը սրանից հետո:

– Արդեն ասացի. պետությունը պետք է անցկացնի ընտրությունները, պետությունը, եւ ոչ թե բազմակուսակցական հանձնաժողովները:

ՀՈՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ, «Արմենպրես» գործակալություն. – Իմ հարցը վերաբերում է Ձեր ծրագրի արտաքին քաղաքականության հատվածին, որտեղ

կա հետեւյալ դրույթը՝ «կառուցողական ջանքերի գործադրում Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ»: Կխնդրեի մանրամասնել սա, եւ ո՞րն եք համարում կառուցողական, բացի առանց նախապայմանների հարաբերությունների հաստատումից: Եւ որպես այս հարցի շարունակություն կխնդրեի Ձեր վերաբերմունքը ադրբեջանական եւ թուրքական մամուլում եղած անթաքույց ուրախության վերաբերյալ Ձեր հնարավոր վերադարձի նկատմամբ, որով ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի հարցի շուտափույթ լուծում հօգուտ Ադրբեջանի: Մասնավորապես նման հրապարակում կար «Ձերկալո» օրաթերթում:

– Ես ֆիշ առաջ ասացի, որ իմ ծրագիրը միայն սա չէ, այս համառոտ դրույթները չեն: Ձեր բարձրացրած հարցերի մասին ես շատ ընդարձակ խոսել եմ իմ վերջին ելույթներում: «Կառուցողական ջանքերի գործադրում Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում» ասելով, ես, առաջին հերթին, նկատի ունեմ Ղարաբաղի հարցի լուծումը: Կառուցողականն այն է, որ ոչ կառուցողական չէ: Մինչեւ հիմա տարվել է ոչ կառուցողական քաղաքականություն, այսինքն՝ մեր իշխանությունների կողմից ոչինչ չի արվել այդ հարցը լուծելու ուղղությամբ, անկախ այն բանից՝ ի նպաստ մեզ, թե՞ ի նպաստ Ադրբեջանի: Տասը տարի մեր իշխանությունները որեւէ քայլ չեն ձեռնարկել: Հակառակ ուղղությամբ են գործել, այն է՝ շլուծել հարցը, վիժեցնել բանակցությունները՝ ստատուս-քվոն պահպանելու նպատակով: Իմ ամբողջ տասը տարվա հայեցակարգային պայքարն այս իշխանությունների դեմ՝ սրա շուրջն է ընթացել: Ազնիվ լինելու պարագայում իշխանությունները մեր ժողովրդին պետք է ասեին՝ մենք չենք լուծելու այս հարցը, ձգե՛ք ձեր գոտիները, համբերե՛ք եւս տասը, երեսուն, քառասուն տարի. մենք պիտի ապրենք շրջափակումների մեջ, պիտի զրկանքներ կրենք: Թող ազնիվ լինեն, ասեն այս ամենը: Ոչ սա են ասում, ոչ էլ հարցի լուծման ուղղությամբ որեւէ քայլ ձեռնարկում: Ուրեմն, կառուցողականն այս գործընթացում՝ հարցի կարգավորման փիլիսոփայության փոփոխությունն է: Այսինքն՝ հարցի լուծումը վիժեցնելու փիլիսոփայությունից պետք է անցում կատարել հարցի լուծման փիլիսոփայության: Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման խնդրում ես որեւէ գաղտնիք չեմ տեսնում: Այդ հարաբերությունները կկարգավորվեն միայնումիայն Ղարաբաղի հարցի լուծումից հետո: Դրանից առաջ որեւէ

բան սպասելն անիմաստ է: Մինչեւ Ղարաբաղի հարցը չլուծվի, Թուրքիայի սահմանը մեզ համար փակ կմնա: Խոսքը նույնիսկ չի վերաբերում վերջնական լուծմանը: Համոզված եմ՝ կարգավորման գործընթացում թեկուզ լուրջ առաջընթաց արձանագրվելու պարագայում, Թուրքիան կբացի սահմանը՝ դրանով իր նպաստը բերելով վերջնական լուծման գործին: Ինչ վերաբերում է այն հարցին, թե Ադրբեջանում կամ Թուրքիայում ինչ են մտածում իմ հաղթանակի մասին, դա իրենց գործն է: Մենք մեր խնդիրն ենք լուծում, մեր ժողովուրդն է ինձ ընտրում, ոչ թե թուրքերը կամ ադրբեջանցիները: Ես Ձեզ հետ համաձայն էլ չեմ. Ադրբեջանում տասնյակ ավելի շատ հրապարակումներ են եղել, որոնցում ցանկություն է հայտնվել, որ Սերժ Սարգսյանը դառնա Հայաստանի Հանրապետության նախագահ, տասնյակ ավելի շատ, քան ինձնով ուրախացող: Ես այդպիսիք անգամ չեմ էլ տեսել, գուցե կան, չեմ առարկում: Մի պահ պատկերացրեք, եթե Թուրքիայում, Իրանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում Հայաստանի քաղաքականության մասին պատկերացում կազմեն մեր մամուլի հրապարակումներից, որքան լուրջ կընդունվի դա: Ձեմ ասում մերը վատ մամուլ է, ո՛չ, շատ էլ լավ մամուլ է, բայց նրանում այնքան ձայն կա, այնպիսի անեկդոտատիպ սենսացիաներ եւ հնարովի լուրեր, որ դրանից ոչ ոք գլուխ չի հանի: Ուստի մամուլի այդպիսի հրապարակումների վրա հիմնվելով՝ քաղաքական լուրջ եզրակացություններ անելը, կարծում եմ այնքան էլ ճիշտ չի լինի:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ, «Հայոց Աշխարհ». – Եթե ընտրություններում պարտվեք, իսկ միջազգային դիտորդական կազմակերպությունների գնահատականը եղավ բարենպաստ մեր ժողովրդի համար, մեր երկրի համար:

– Ի՞նչ է նշանակում բարենպաստ երկրի համար, Դուք նկատի ունեք բարենպաստ Սերժի՞ համար:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ. – Այսինքն՝ գնահատականը լինի դրական: Ինչպիսի՞ն կլինեն Ձեր հետագա քայլերը, եթե Դուք լինեք երկրորդ տեղում, երրորդ, չորրորդ կամ հինգերորդ տեղում:

– Կներեք, բայց այդ հարցին ես ֆիշ առաջ պատասխանեցի, ընդամենը 15 ռոպե առաջ: Եթե կուզեք՝ տասներորդ տեղին էլ համաձայն եմ, ես խնդիր չունեմ: Միջազգային դիտորդներն էլ ինչ կասեն, չեն ասի՝ նրանք

վերին ատյան չեն, այլ ընդամենը մի հանձնաժողով, որը կարծիք է արտահայտում: Ես կարող եմ ունենալ իմ կարծիքը, նրանք՝ իրենցը: Դուք գիտեք, հրաշալի կարծիքներ կային սահմանադրական հանրաքվեի եւ անցյալ տարվա խորհրդարանական ընտրությունների մասին: Գնացեք փողոց եւ ժողովրդին հարցրեք, թե ինչ «կարծիք» ունի նա այդ կարծիքների մասին: Մեր խնդիրները մենք լուծելու ենք մեր պետության մեջ: Ինձ համար նշանակություն չի ունենա, թե ինչ կասեն միջազգային ատյանները: Մեր հարցերը պիտի լուծենք մեր երկրի օրենքներով, մեր ունեցած թեկուզ փոքրիկ ազատությունների սահմաններում:

ՍՈՒՍԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ, «Նոյյան տապան». – Պարոն նախագահ, Դուք երկար ընդմիջումից հետո վերադարձաք քաղաքականություն, եւ երեւի հաշվարկել եք Ձեր քայլերը, ես կուզենայի Ձեր կարծիքը եւ գնահատականը իմանալ այն իրավիճակի մասին, որ տիրում է այսօրվա վերնախավում, նկատի ունեմ ե՛ւ տնտեսական, ե՛ւ զինվորական վերնախավում, ե՛ւ պետական պաշտոնյաների շրջանում:

– Հաշվարկներ, իհարկե, բոլորն էլ անում են, բայց մի մասը ճիշտ է դուրս գալիս իր հաշվարկներում, մի մասը՝ սխալ: Ինչ վերաբերում է վերնախավին, ես չհասկացա, թե ինչ նկատի ունեք:

ՍՈՒՍԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ. – Ձեր գնահատականը:

– Այս էլ երեք ամիս է՝ միայն դրանով եմ զբաղված, գիշեր-ցերեկ գնահատում եմ, նույնիսկ թվանշաններ դնելով, մեկին 5, մյուսին՝ 5-ից հանած եւ այլն: Բազմիցս ասել եմ, որ Հայաստանի ներկա իշխանական համակարգը, առանց աննավորելու, ազգակործան համակարգ է, եւ դրա բոլոր պատասխանատուները պետք է համապատասխանաբար գնահատվեն: Այսօր՝ քաղաքական լեզվով, վաղը՝ իրավական լեզվով, այսինքն՝ դատարաններում:

ԳԱՅԱՆԵ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ, «Տարեգիր». – Դատելով Ձեր հիմնական մրցակցին՝ Սերժ Սարգսյանին սատարող ուժերի հայտարարություններից, արդեն ձեւավորվում է ընտրությունների պատկերը: Անկախ ընտրությունների իրական ելքից, արդեն հայտարարվում է, որ Սերժ Սարգսյանին կվերագրվի ձայների 50 տոկոսից ավելին, եւ 2-րդ փուլի տարբերակով նրա մրցակիցը կլինի իրենց շատ ավելի հարմար թեկնածու, քան Դուք եք: Որո՞նք են լինելու Ձեր կոնկրետ քայլերը այս պարա-

գայում, ունե՞ք մշակած մեխանիզմներ եւ եթե ոչ, որոնք են լինելու Ձեր հետագա քայլերը: Այսինքն, կոնկրետ ո՞ր ատյան եք դիմելու եւ ինչի՞ց եք սկսելու:

– Ես Սերժ Սարգսյանի սցենարները չեմ մեկնաբանելու: Ես ունեմ իմ սցենարը, եւ իրականացնելու եմ այն: Համոզված եմ, որ իմ սցենարը հաջողվում է: Եւ եթե մյուսներն ասում են՝ հաղթելու ենք, ես ասում եմ՝ արդեն հաղթած եմ:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, «Առավոտ» օրաթերթ. – Պարոն նախագահ, սեպտեմբերի 21-ին այս նույն դահլիճում Դուք հայտարարեցիք, որ դեռ քաղաքականություն վերադառնալու, առավել եւս առաջադրվելու որոշում չունեք, որ Ձեր նման որոշումը լինելու է քաղաքական, առանց էմոցիաների: Եւ ասացիք որ մինչեւ համոզված չլինեք Ձեր քայլերի արդյունավետության մեջ՝ չեք անի: Նաեւ ասացիք, որ մթնոլորտի փոփոխության կոնդիցիա պետք է լինի: Ձեր առաջադրման պահին այդպիսի կոնդիցիա կա՞ր, եւ ի՞նչ քաղաքական հաշվարկներ էին պետք Ձեր վերադարձի որոշման մեջ: Օրերս Վարդան Օսկանյանը, անդրադառնալով Ձեր նախընտրական ծրագրի արտաքին քաղաքականությանը վերաբերող հատվածին, ասաց, որ դրա մեջ նորություն չկար, ինչպես նաեւ ասաց, որ խնդրի կարգավորման Ձեր տարբերակում խոսք չկար Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման մասին, իսկ ներկա տարբերակում այն առաջնային է. կխնդրեի Ձեր մեկնաբանությունը:

– Եթե ես Սերժին չեմ մեկնաբանում, Վարդան Օսկանյանին, հարյուր տարի էլ անցնի, չեմ մեկնաբանի: Ես արտահայտել եմ իմ տեսակետը, ներկայացրել իմ գնահատականները Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մասին: Ինքն էլ ներկայացրել է իր գնահատականները: Թող ժողովուրդն ընտրի, թե որն է ճիշտը: Ես որեւէ հավակնություն չունեմ վերին ճշմարտություններ արտահայտած լինելու: Ժողովրդավարության իմաստը ոչ թե բանավիճելն է, այլ ժողովրդին տեսակետներ ներկայացնելը: Դատավորը, ժյուրին՝ մանավանդ ընտրությունների ընթացքում, ժողովուրդն է, քաղաքացին, ուրիշ ոչ ոք: Չեմ ուզում ծավալվել, թե Ղարաբաղի հարցում ես ինչ եմ ասել, ինչ չեմ ասել: Չեմ էլ ուզում մանրանալ: Կարող էի հուշեր պատմել, թե ինչ դեր է ունեցել Վարդան Օսկանյանը հենց փուլային տարբերակի մշակման

գործում, թե ինչպես է նա եղել այդ տարբերակի հայրերից կամ հարտարապետներից մեկը, գլխավոր բանակցողը Հայաստանի կողմից, մեր բոլոր պատասխանների հեղինակը համանախագահների առաջարկներին: 1998 թվականի հունվարի անվտանգության խորհրդի նիստում ներկա իշխանությանը մաս կազմող միակ մարդը, որը կրծքով մինչեւ վերջ պաշտպանում էր փուլային տարբերակը, նույն Վարդան Օսկանյանն էր: Իսկ այժմ, վերադառնալով Ձեր այն հարցին, թե ինչն ինձ օգնեց կողմնորոշվել իմ առաջադրման հարցում, հարկ եմ համարում նշել հետեւյալը: Առաջին հանրահավաքում ես դեռեւս չէի ուզում հայտարարել, որ առաջադրում եմ իմ թեկնածությունը: Մեկ հանրահավաքը կողմնորոշվելու համար դեռ քիչ էր: Այդտեղ կարող էր էմոցիոնալ պահ լինել, իսկ ես չէի ուզում հենվել էմոցիաների վրա: Հետաքրքրության պահ կարող էր լինել. մարդիկ տասը տարի ինձ չէին տեսել, կարող է մտածում էին՝ գանք, տեսնենք, ինչ է ասելու: Եթե եկել էին, դա դեռ չէր նշանակում, որ ես նրանց համոզել եմ, կամ որ նրանք իմ կողմնակիցն են: Ո՛չ, մեկ հանրահավաքով դա չէր կարելի հաշվարկել: Չէի ուզում այդ ժամանակ հայտարարել, բայց հարկադրված էի, քանի որ տեսա, թե ինչպես իշխանություններն առնագանքեցին այդ հանրահավաքի կազմակերպմանը, ինչ վայրագություններ գործեցին իմ համակիրների նկատմամբ: Նրանց նպատակն այն էր, որ ինձ վախեցնեն, եւ ես ընդհանրապես հրաժարվեմ առաջադրվելու մտքից: Նրանք ընկան իրենց լարած թակարդը եւ արագացրին իմ որոշումը: Ուստի ես անմիջապես հայտարարեցի իմ առաջադրման մասին, որպեսզի նրանք դադարեցնեն այդ վայրագությունները: Եւ հետագայում, որքան էլ զարմանալի է, դրանք բավականին նվազեցին: Ավելի են նվազելու: Դա վերանալու է: Ուժային կառույցները՝ ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը, հարկային տեսչությունը 10–20 օր հետո բացարձակապես չեն ենթարկվելու Սերժ Սարգսյանին եւ Ռոբերտ Քոչարյանին: Անգամ Հանրային հեռուստատեսության համակարգում հայտնվելու են դիսիդենտներ, կտեսնեք: 10–20 օր հետո նույնպիսի մարդիկ են հայտնվելու նաեւ «Հայոց աշխարհում»:

ՄԱՐԻՆԱ ԲՐՈՒՏՅԱՆ, «Ռեգնում». – Պարոն նախագահ, Ձեր ընտրվելու դեպքում: Ձեր ընտրվելու դեպքում ինչպե՞ս եք կառուցելու Ձեր հարա-

բերությունները Ռուսաստանի հետ եւ արդյոք պատրաստվո՞ւմ եք մինչեւ նախագահական ընտրությունները այցելել այդ երկիր:

– Եթե թույլ տամ, ես կդիմեմ ռամկական հայերենի օգնությանը: Ոչ մի պարագայում ես որեւէ տեղից տղա չեմ բերելու: Դա մոռացեք, դա իմ ոճը չէ: Ո՛չ Ռուսաստանին կդիմեմ օգնության խնդրանքով, ո՛չ Ամերիկային, ո՛չ Եւրոպային, ո՛չ էլ որեւէ այլ մեկի: Ես դրսի աջակցության կարիքը չունեմ: Դրսից տրված իշխանությունն ինձ պետք չէ: Եթե սկուտեղի վրա անգամ ինձ իշխանություն մատուցեն Ռուսաստանից, Ամերիկայից կամ որեւէ այլ երկրից, ես այդ սկուտեղը, մի ծաղիկ էլ վրան ավելացրած, կվերադարձնեմ իրենց: Ինձ պիտի ընտրի իմ ժողովուրդը, եւ աշխարհը պիտի հաշվի նստի իմ ժողովրդի ընտրության հետ: Ռուսաստանին ապացուցելու ես ոչինչ չունեմ: Ութ տարվա իշխանավարության ընթացքում մենք Ռուսաստանի հետ ունեցել ենք ամենահավասարակշիռ, արժանապատիվ, կոռեկտ, պարտնյորական հարաբերություններ, մեր միջեւ չի եղել վասալի եւ սյուզերենի հարաբերություն: Կարող եմ շեշտել նույնիսկ, որ մեր երկրի արտաքին քաղաքականության ոլորտում 1990–1997 թվականներին ամենակոռեկտ, պարկեշտ, փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները եղել են հենց Ռուսաստանի հետ, եւ դրանից շահել են թե՛ Հայաստանը, թե՛ Ռուսաստանը: Հարաբերություններն անկեղծ, պարկեշտ եւ փոխադարձ հարգանքի վրա են հիմնված լինում միայն այն դեպքում, երբ դրանցից շահում են երկուսը: Ես բացառնակապես չեմ կասկածում, որ իմ իշխանության վերադառնալու պարագայում նշված ավանդույթը ոչ միայն կշարունակվի, այլեւ ավելի կխորանա:

ԴԻԱՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ, «Ա1+». – Վերջին տասը տարում բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում նաեւ այսօրվա նախագահի թեկնածուները, խոսում են կոռուպցիայի դեմ պայքարի մասին: Դրա անհրաժեշտության մասին խոսում է նաեւ Ձեր քաղաքական հակառակորդը: Կուզեի ավելի առարկայական նշեք այն մեթոդները, որոնցով պատրաստվում եք պայքարել Ձեր խոսքերով՝ վերից վար կոռումպացված համակարգի հետ: Եւ երկրորդ հարց. գործող իշխանության վերնախավը այսօր սպառնում է միջին եւ ստորին օղակների ծառայողներին, որ Ձեր իշխանության գալու դեպքում, նրանք բոլորը կմնան գործազուրկ: Խնդրում եմ՝ կամ փարատեք, կամ հաստատեք նրանց սպառնալիքը:

– Երկրորդ հարցին ֆիշ առաջ պատասխանեցի. ես ասացի, որ պետության ժառանգականությունը պետք է պահպանվի: Իսկ պետական ժառանգականության ամենակարեւոր ատրիբուտներից մեկը բյուրոկրատիան է, առանց որի պետություն չկա: Ինչ վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարին, ապա դա, քաղաքական բովանդակությամբ հանդերձ, առաջին հերթին իրավական պայքար է: Կոռուպցիայի դեմ պետք է պայքարեն նախեւառաջ իրավապահ մարմինները. ինչի՞ համար է դատախազությունը, ինչի՞ համար են ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը, ինչո՞վ են նրանք այսօր զբաղված: Մի մասն իրենք կոռուպցիոն համակարգի սյուներից են, հատկապես այդ կառույցների վերնախավը: Մինչդեռ իրավապահ մարմինների հազարավոր ցածրաստիճան աշխատակիցներ նույնքան զրկված եւ նույնքան նվաստացած են, որքան այս դահլիճում նստածներից շատերը: Ավելին, նրանք մեզանից ավելի շոշափելի են տեսնում համատարած կոռուպցիան: Մենք դրան տեղեկանում ենք թերթերից կամ մեր բարեկամների պատմածներից, իսկ նրանք ամեն օր իրենց մաշկի վրա են զգում դա: Ոստիկանությունում տեսնում են, թե ինչպես են ապրում իրենց պետերը կամ համակարգի պարագլուխները, եւ ինչպես են ապրում իրենք: Նույնը՝ անվտանգության համակարգում, դատախազությունում, նախարարություններում, ամենուրեք: Նրանք մեր Շարժման ավելի համոզված կողմնակիցներ են, քան շատ ուրիշներ: Որովհետեւ այն երեւույթները, որ մեզ միայն ցավ են պատճառում կամ քաղաքականության խնդիրներ են, նրանց համար կյանքի, առօրյայի խնդիրներ են: Իմ ծրագրում ասված է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ընթացքում վհուկների որս չպետք է լինի, սեփականության վերաբաշխում չպետք է տեղի ունենա: Դրանք դատարկ խոսքեր չեն, այլ ենթադրում են որոշակի մեխանիզմներ: Հակակոռուպցիոն պայքարն, առաջին հերթին, պետք է ուղղված լինի պետական պաշտոնյաների դեմ: Եթե որեւէ նախարար իր գործունեության ընթացքում ինչ-որ ընկերությունում բաժին է ձեռքբերել, կամ ինքը ընկերություն հիմնել, կամ էլ լուրջ սեփականության տիրել, ուրեմն, այդ նախարարը ոչ միայն իրավունք չպետք է ունենա աշխատելու, այլեւ անպայման դատվելու է: Դառնանք ձեռնարկատերերին եւ գործարարներին, որոնց պարագայում հակակոռուպցիոն պայքարի հիմնական խնդիրը լինելու է նրանց հարկային պարտավորությունների կատար-

ման ապահովումը: Եթե որեւէ գործարար կամ ձեռնարկատեր անօրինական գործարքի հիման վրա տիրել է ինչ-որ սեփականության, ապա հիմնական պատիժը, դատական կարգով, պետք է կրեն ոչ թե նրանք, այլ այն պետական պաշտոնյաները, որոնք թույլ են տվել այդ գործարքը՝ քաղաքապետ լինի, նախարար լինի, միեւնույն է: Վստահեք ինձ, եւ երկու տարի հետո կունենաք ուրիշ պետություն, որում այսպիսի կոռուպցիոն համակարգ չի լինի: Եւ ոչ միայն իմ պարագայում, որեւէ այլ նախագահի պարագայում եւս, չի լինի այն, ինչ գոյություն է ունեցել վերջին տասը տարիների ընթացքում: Սա մի ազգային աղետ է, որի նմանն այս կամ այն չափով, այս կամ այն կերպ ապրել են համարյա բոլոր ազգերը: Ռուսաստանն ապրել է ստալինիզմի շրջան, Գերմանիան ապրել է հիտլերիզմի շրջան, մենք ապրում ենք ռոբերտասերժիզմի շրջան. սա էլ է անցնելու:

ԱՆՈՒՇ ՆԵՐՍԻՍՅԱՆ, «Երրորդ Ուժ». – Պարոն նախագահ, ուժեղ երկրի բաղադրիչներից մեկը բանակն է: Դուք համամի՞տ եք, որ մեր բանակը տարածաշրջանի ամենահզոր, մարտունակ բանակն է, եւ ընտրվելու դեպքում ի՞նչ փոփոխություններ, բարեփոխումներ եք անցկացնելու բանակում: Մեզ պե՞տք է վարձու բանակ:

– Իմ ծրագրում այդ մասին հստակ է գրված: Անկեղծ խոսենք. եթե չլիներ ղարաբաղյան պատերազմը, կամ Ղարաբաղի հարցն արդեն կարգավորված լիներ, մեզ այսպիսի բանակ պետք չէր: Սա մի այնպիսի մեծաթիվ բանակ է, որ աշխարհի շատ ավելի հարուստ, մեծ, հզոր պետություններ չունեն: Ես չեմ ուզում կոնկրետ թվեր նշել, դա պետական գաղտնիք է: Էստոնիան ունի հինգ հազարանոց բանակ, Բալթյան մյուս երկրները՝ տաս հազարանոց: Հայաստանն այն երկիրը չէ, որ մեծ ռեսուրսներ կարողանա տրամադրել բանակին: Ուրեմն, մենք ինչպես ենք պատկերացնում լուծումը. նախեւառաջ՝ հաշտ ու խաղաղ ապրել մեր հարեւանների հետ: Մեր ապահովության մեծագույն երաշխիքը ոչ թե միջազգային անվտանգության կամ պաշտպանական համակարգերին՝ ՆԱՏՕ-ին, կամ Հավաքական անվտանգության պայմանագրին անդամակցելն է, այլ մեր չորս հարեւանների հետ նորմալ հարաբերությունների հաստատումը: Ես երազում եմ այն ժամանակի մասին, երբ Հայաստանը կունենա տասը հազարանոց բանակ: Մեր զինված ուժերի այս-

օրվա թվաքանակի պարագայում անիմաստ է խոսել պրոֆեսիոնալ կամ պայմանագրային բանակի մասին: Եթե երկրի ողջ ռեսուրսներն անգամ տրամադրենք, մենք չենք կարող այդ բանակը պահել: Պրոֆեսիոնալ բանակ, պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայություն կարող է լինել միայն Ղարաբաղի հարցի կարգավորումից հետո:

ՄԱՐԻԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ, «Երկիր մեդիա». – Չնայած այս ընթացքում ժողովրդին բազմիցս դիմելուն, ամեն դեպքում, կարելի է ենթադրել, որ Ձեզ համար ժողովրդին դիմելու շատ ավելի մեծ հնարավորություն լինելու է նախընտրական քարոզարշավի ընթացքում եթերի ազատ լինելը, կամ քաղաքական գովազդից օգտվելու հնարավորությունը: Արդեն հստակեցվե՞լ է, թե հատկապես առաջին հնարավորությունը, առաջին ելույթը ինչ շեշտադրում է ունենալու, արդյոք հնարավո՞ր է լինելու զերծ մնալ էմոցիոնալ շեշտադրումներից: Եւ երկրորդ հարցը. ասացիք, որ 2003 թվականը Ստեփան Դեմիրճյանի աստեղային ժամն էր, քանի՞ աստեղային ժամ կարող է ունենալ քաղաքական գործիչը, գուցե Ձերը եղել է 1988 թվականը:

– Բազմիցս. իմ առաջին աստեղային ժամը եղել է 88–91-ին, իսկ երկրորդը՝ հիմա է: Ինչ վերաբերում է նախորդ հարցին, ապա չեմ կարող կոնկրետ պատասխանել: Կա ժամանակացույց, որի վրա իմ թիմն աշխատում է: Նախատեսված է, որ հունվարի 21-ին, քարոզարշավի առաջին օրը, ես պետք է հանդես գամ մի հակիրճ, 4–5 րոպեանոց, կոչով՝ ուղղված մեր ժողովրդին: Եթե ես այսօր բացահայտեմ բովանդակությունը, այդ կոչը հետագայում իր ազդեցությունը չի գործի: Թույլ տվեք այդ փոքրիկ ներքին գաղտնիքը պահպանել:

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԱՆ, «Հայք». – Ի՞նչ եք պատրաստվում անել ընտրվելուց հետո սահմանամերձ եւ բարձր-լեռնային գոտիների բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրները թեթեւացնելու նպատակով: Եւ ապա՝ հասարակական տրամադրությունների մեջ արմատացած է այն կարծիքը, որ հանրապետության նախագահի ընտրվելու վրա մեծ ազդեցություն ունի դրսի գործոնը:

– Գերտերությունների ազդեցությունը շատերը չափազանցում են, ասում են՝ ռուսները, ամերիկացիները ում ուզեն, Հայաստանում նախագահ կնշանակեն: Նման բան գոյություն չունի: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Միացյալ Նահանգները չեն կարող Հայաստանում նախագահ նշանա-

կել կամ ընտրել, եթե այդ թեկնածուն արդեն ռեալ ուժ չէ: Սահակաշվիլուն եւ Յուշչենկոյին Միացյալ Նահանգները չեն նշանակել կամ ընտրել: Այդուհանդերձ, գերտերությունների վերաբերմունքը կարող է որոշ ազդեցություն ունենալ, բայց այդ ազդեցությունը 4–5 տոկոսից ավելին չի կարող լինել: Ոչնչից նախագահ հնարավոր չէ ստեղծել: Երբ կա լուրջ այլընտրանք, որն ունի 40–50 տոկոսի վարկանիշ, ապա այդ դեպքում գերտերությունները կարող են, որոշակի քարոզչական մեխանիզմների կիրառմամբ, փոխել թեկնածուների վարկանիշների հարաբերակցությունը, բայց, միեւնույն է, 4–5 տոկոսից ոչ ավելի: Իսկ ինչ վերաբերում է առաջին հարցին՝ սահմանամերձ եւ բարձր-լեռնային շրջանների վիճակին, ապա ես Հայաստանում չեմ տեսնում որեւէ ոլորտ, որի խնդիրները հնարավոր լինի լուծել առանձին վերցրած: Մինչեւ չառողջանա պետական համակարգը, մինչեւ նորմալ հիմքերի վրա չդրվեն տնտեսական հարաբերությունները, չվերականգնվի օրինականությունը՝ ինչ էլ ասեմ Ձեր ակնարկած ոլորտի մասին, սուտ կլինի: Խնդիրը շատ ավելի լայն պետք է դնել, շատ ավելի համակարգային լուծումներից բխեցնելով:

ՍՈՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ, «Մարդիկ» վերլուծական կենտրոն. – Իմ հարցը բխում է Ձեր ընտրած կարգախոսից. «Իմաստավորելով անցյալը՝ դեպի ապագա»: Ձեր իշխանության տարիներին գործող քաղաքական ուժ է փակվել, եւ պատճառաբանությունները ծանրագույն մեղադրանքներ էին պարունակում՝ ահաբեկչություն, պետական անվտանգության սպառնալիքներ, նարկոբիզնես եւ այլն: Իմաստավորե՞լ եք անցյալը այդ քաղաքական ուժի հետ կապված, թե՞, ինչպես քիչ առաջ նշեցիք, եթե նախագահն ամեն ինչ հիշի, այդ դեպքում նախագահ չի դառնա: Ձեր հրաժարականի ելույթում Դուք նշել էիք, որ հրաժարականը ներկայացվել է հայտնի ուժերի կողմից, կարո՞ղ եք այսօր կոնկրետ նշել, ո՞ր հայտնի ուժերն էին դրանք:

– Նախ՝ առաջին հարցի մասին. ես շատ սիրով դրան կպատասխանեմ: Ինձ ներկայացվող ամենահիմնական մեղադրանքներից մեկն, իրոք, եղել է այն, որ իմ իշխանության օրոք կուսակցություն է փակվել, թերթեր են փակվել, դատավարություններ են տեղի ունեցել: Ամեն ինչ ճիշտ է. փակվել են, դատավարություններ են տեղի ունեցել: Սակայն այս փաստը դեռեւս հանցագործություն կամ ոճրագործություն չի

նշանակում: Պետք է պարզել, թե ինչի համար են փակվել, եւ օրենքո՞վ են փակվել, թե ոչ: Աշխարհի բոլոր պետություններում կան օրենքներ կուսակցությունների գործունեության մասին, որտեղ նախատեսված են դեպքեր նրանց գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ: Շատ երկրներում այդ օրենքները նաեւ բազմիցս գործադրվել են, ինչպես Իսպանիայում, Ռուսաստանում եւ այլն: Գերմանիայում ընդհանրապես արգելված է կոմունիստական կամ նացիստական գաղափարախոսություն կրող կուսակցությունների գործունեությունը: Բայց ոչ ոքի մտքով չի անցնում ասել, թե դրանք ժողովրդավարական երկրներ չեն, կամ նրանց իշխանությունները հանցագործություն են կատարել: Եթե կա օրենք, ուրեմն այն կարող է գործադրվել: Հայաստանի օրենսդրությամբ եւս՝ եթե կուսակցությունը խախտում է օրենքը, կարող է փակվել: Այստեղ տերմինների որոշ շփոթ էլ կա. Դաշնակցությունը չի փակվել, այլ ընդամենը ժամանակավորապես դադարեցվել է նրա գործունեությունը: Տրվել է վեց ամիս ժամանակ՝ կուսակցության գործունեությունը Հայաստանի գործող օրենքին համապատասխանեցնելու համար: Հարցը շատ պարզ էր. ըստ մեր օրենքի՝ կուսակցությունների ղեկավարությունը չի կարող կազմված լինել օտարերկրացիներից: Դաշնակցության ղեկավար մարմինների՝ բյուրոյի եւ համագումարի մեծ մասը սփյուռքահայեր էին. սա էր խնդիրը: Դատարանն այդ կուսակցությանը ո՛չ նարկոբիզնեսի, ո՛չ ահաբեկչության մեղադրանք չի ներկայացրել: Զգիտես ինչու մարդիկ ակամա պատմությունը խառնում, շփոթում են, տպավորություն, մթնոլորտ ստեղծում եւ հետո վերագրումներ անում: Դաշնակցությանը ներկայացվել է մեկ մեղադրանք՝ պահանջելով շտկել կանոնադրական անկարգությունը: Նրա գործունեությունը նախ ժամանակավորապես դադարեցվել է նախագահի հրամանագրով, ապա՝ դատարանի որոշմամբ: Իմ հրամանագրի գործողությունն, այդպիսով, տեւել է տասը-տասնհինգ օր: Ես այդ իրավունքն ունեի. այդ ժամանակ թեեւ դեռեւս սահմանադրություն չկար, բայց կար Հայաստանի նախագահի մասին սահմանադրական օրենք: Նախագահին տրված էր իրավունք՝ պետության համար վտանգ պարունակող իրադրություններում կիրառել սահմանադրական ազատությունների որոշ սահմանափակումներ: Հրամանագրին, ինչպես ասվեց, հետեւել է երկրորդ իրավական ակտը՝ դատարանի վճիռը, որում կուսակցության առջեւ պահանջ

է դրվել իր գործունեությունը վեց ամսվա ընթացքում համապատասխանեցնել Հայաստանի օրենքին: Սակայն այդ պահանջը Դաշնակցության կողմից ժամանակին չի կատարվել: 1997 թվականին ես ինքս արդեն, իմ անձնական նախաձեռնությամբ, բանակցություններ եմ սկսել Դաշնակցության հետ՝ այդ հարցը լուծելու համար: Տեղի է ունեցել բանակցությունների երեք ռաունդ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության դեսպան Շուգարյանն իմ հանձնարարությամբ եւ իմ անունից դիմել է Դաշնակցության բյուրոյին՝ կուսակցությունը վերաբացելու վերաբերյալ բանակցություններ սկսելու առաջարկով: Խնդրո առարկան եղել են ոչ թե քաղաքական հանձնախոսությունները, այլ Դաշնակցության գործունեությունը Հայաստանում վերականգնելու իրավական լուծումները: Բանակցությունների առաջին ռաունդն, այսպիսով, Վաշինգտոնում է տեղի ունեցել, երկրորդը՝ Երեւանում, որին մեր կողմից մասնակցել են Բաբկեն Արարքցյանը, Ալեքսանդր Արզումանյանը եւ Շահեն Կարամանուկյանը, իսկ երրորդը՝ Ամստերդամում, որը վարել է Ալեքսանդր Արզումանյանը: Դժբախտաբար, իշխանափոխության պատճառով այդ գործընթացը չունեցավ իր ավարտը: Բայց ես գտնում եմ, որ այն, վերջին հաշվով, ունեցավ իր արդյունքը: Այսօր Դաշնակցությունը իր կանոնադրությունն իսկապես համապատասխանեցրել է Հայաստանի օրենքին: Դա Գերագույն մարմնի ստեղծումն է, որը գոյություն չուներ Դաշնակցության 120 տարվա գործունեության մեջ: Սա այն իրավական լուծումն էր, որ գտնվեց պետության եւ Դաշնակցության համատեղ ջանքերով՝ լուծում, որում մենք էլ ավանդ ունենք: Ինչ վերաբերում է այն գնահատականներին եւ մեղադրանքներին, որոնք հնչել են մեր իշխանության եւ Դաշնակցության հարաբերությունների առնչությամբ, ապա դրանք զուտ քաղաքական հարթության վրա են: Մինչդեռ խնդիրը պետք է դիտարկել իրավական հարթության վրա, քանի որ նախագահի հրամանագիրը եւ դատական վճիռները իրավական ակտեր են: Ի դեպ, «Դրոյի» գործով դատավարության վերաբերյալ ասում են, թե դատարանը չապացուցեց Դաշնակցության մեղքը: Դաշնակցության նկատմամբ թե՛ նախաքննությունը, թե՛ դատավարությունը որեւէ մեղադրանք չի ներկայացրել: Մեղադրանքները ներկայացվել են կոնկրետ անհատների նկատմամբ, կոնկրետ հանցագործությունների համար: Դաշնակցության դատ չի եղել Հայաս-

տանում: Ուրեմն, քանի որ խոսքը վերաբերում է զուտ իրավական ակտերի, ապա դրանց օրինականության վերաբերյալ գոյություն ունեցող հարցերը պիտի լուծվեն միայնումիայն իրավական ճանապարհով: Եթե մարդիկ գտնում են, որ դատարանի վճիռը սխալ էր, ուրեմն նորից պիտի դիմեն դատարան՝ վերանայման կամ արդարացման վճիռ ստանալու: Ուրիշ ճանապարհ չկա: Ես վերջերս եմ իմացել, որ Ռոբերտ Քոչարյանը չեղյալ է հայտարարել 1994 թվականի դեկտեմբերի իմ հրամանագիրը: Բայց դրա կարիքը չկար: Այդ հրամանագիրն ուժը կորցրած էր դատական վճռի կայացման պահից: Այսինքն. ընդամենը տասնհինգ օր հետո այդ հրամանագիրն այլեւս գործողության ուժ չուներ: Իրավական հարթության վրա գտնվող ցանկացած հարցում (այդ թվում 96-ի ընտրությունների վերաբերյալ) իմ մոտեցումն, ահա, սա է: Իրավական խնդիրներին վերաբերող վեճերը հարթվում են բացառապես իրավական պրոցեսներով: Եթե լինեն այդպիսի պրոցեսներ, միայն ուրախ կլինեմ: Երկրորդ հարցի կապակցությամբ՝ կսպասեմ իմ հուշերին:

«Հայք», 16 հունվարի, 2008թ.: «Հայկական ժամանակ», 18 հունվարի, 2008թ.: «Ժամանակ Երեւան», (հատվածաբար), 12 հունվարի, 2008թ.:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ
(21 հունվարի, 2008թ.)

Սիրելի հայրենակիցներ,

Փետրվարի 19-ին դուք կանգնելու եք ձեր ապագան սեփական ձեռքերով կերտելու լրջագույն պատասխանատվության առջեւ:

Սերժ Սարգսյանի ընտրության պարագայում մեր երկրում որեւէ դրական տեղաշարժ չի լինելու, այլ ընդհակառակը, ավելի են ծավալվելու այն բոլոր արատավոր երեւույթները, որոնք առկա էին Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք, այսինքն.

– Շարունակվելու է ժողովրդի անխնա կեղեքումը եւ ազգային հարստության կուտակումը փոքրաթիվ մարդկանց ձեռքում.

– Խորանալու է հասարակության բեւեռացումը. հարուստներն ավելի են հարստանալու, իսկ աղքատներն՝ ավելի աղքատանալու.

– Տնտեսության ահագնացող մոնոպոլիզացումը վերջնականապես սպառնալու է միջին եւ մանր գործարարության գոյությանը.

– Ջեն դադարելու իրավապահ մարմինների, հարկային տեսչության, մաքսային վարչության կամայականություններն ու օրինազանցությունները.

– Արտագաղթի շարունակվող գործընթացը վերածվելու է դեմոգրաֆիական աղետի.

– Վիժեցվելու է աննախադեպ հանցագործությունների՝ 1999-ի հոկտեմբերի 27-ի ահաբեկչության, քաղաքական մյուս սպանությունների, բենզինի ու գազի ներկրման հետ կապված մեքենայությունների բացահայտումը.

– Չի հաղթահարվելու Հայաստանի քաղաքական եւ տնտեսական մեկուսացումը. մեծանալու է Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման վտանգը:

Մինչդեռ իմ ընտրության պարագայում տեղի է ունենալու նշված փակուղային զարգացումների ճիշտ հակառակը, այն է՝ ավազակապետական համակարգի կազմաքանդում, սահմանադրական կարգի վերականգնում, ժողովրդավարական ազատությունների կենսագործում, օրինականության հաստատում, տնտեսավարողների համար հավասար հնարավորությունների ստեղծում, ազատ մրցակցության ապահովում, սեփականության անձեռնմխելիության երաշխավորում, կառուցողական արտաքին քաղաքականության իրականացում եւ այլն: Գումարած՝ ժողովրդի սոցիալական վիճակի կտրուկ բարելավմանն ուղղված այն բոլոր միջոցառումները, որոնք արտացոլված են իմ ծրագրում: Դրանք են.

– Առաջիկա հինգ տարիների ընթացքում միջին աշխատավարձի եռակի եւ միջին կենսաթոշակի քառակի բարձրացումը.

– Պետական պարտատոմսերի թողարկման միջոցով քաղաքացիների խորհրդային ավանդների հատուցման արագացումը.

– Երեխաների ծննդյան համար մայրերին տրվող միանվագ նպաստների զգալի հավելումը.

– Զինվորական ծառայությունից խուսափած երիտասարդների նկատմամբ համաներման կիրառումը.

– Բուհական ուսման վարձերի ձեւավորման կանոնակարգումը եւ դրանց աճը զսպող մեխանիզմների մշակումը.

– Պետության կողմից սոցիալական շինարարության լայնածավալ ծրագրի իրականացումը, եւ այլն:

Ընտրությունն, այսպիսով, կայանալու է ոչ թե անհատների, այլ երկրի զարգացման երկու հնարավոր ճանապարհների միջեւ, որոնցից մեկը անխուսափելի կործանման, մյուսը՝ փրկության ճանապարհն է: Այլ կերպ ասած՝ մեկը ներկա ավազակապետական վարչախմբի եւս տասը տարվա տիրապետության մղձավանջն է, մյուսը՝ նորմալ պետություն կառուցելու հեռանկարը:

Ամեն ինչ կախված է ձեր կամքից ու վճռականությունից, ձեր քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամությունից, երկրի ապագայի կերտումը ձեր սեփական գործը համարելու գիտակցությունից:

Կատարեք ձեր պարտքը, եւ ոչ մի դաժանաբարո ուժ, ոչ մի բռնություն, ոչ մի ընտրակեղծիք չի կարող կասեցնել մեր ընդհանուր հաղթանակը:

«Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան»:

«Հայք», 29 հունվարի, 2008թ.:

ՈՒՐ ԲԱՆՔՆ ՍՊԱՌԻՆ, ԵՒ ԳՈՐԾՔՆ ԹԱԳԱՒՈՐԵՆ
(ելույթ 2008թ. հունվարի 22-ի հանրահավաքում)

Սիրելի հայրենակիցներ,

1. Իմ բազմաթիվ սխալների շարքում ամենամեծը, թերեւս, այն էր, որ ես հրաժարական տվեցի փետրվարի 3-ին, ինչի պատճառով ընտրարշավը համընկնում է այսման ցուրտ շրջանի. եթե իշխանությունից հրաժարվեի ապրիլին կամ մայիսին, ապա ձեր վիճակը շատ ավելի բարվոք կլիներ: Մեղմս մասնակիորեն քավելու համար այսօր ձեզ չեմ ձանձրացնի երկարաշունչ ելույթով՝ բավարարվելով ընդամենը մի քանի հակիրճ դատողություններով:

2. Այսօրվանից մեր պայքարը մտնում է մի նոր հանգրվան, որի նշանաբանը դեռեւս 13-րդ դարում ձեւակերպել է տաղանդավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը. «Ուր բանքն սպառին, եւ գործքն թագաւորեն», այսինքն, մենք հասել ենք մի շրջադարձային կետի, «որտեղ խոսքերն ավարտվում, եւ տիրում են գործերը»:

3. Այն, ինչ պիտի ասվեր Հայաստանի ներկա վարչախմբի էության, նրա վերարտադրման կործանարար հեռանկարի եւ դրանից խուսափելու անհրաժեշտության մասին, արդեն ասվել է: Երեք ամիս շարունակ, իմ ուժերի ներածին չափով, ես փորձել եմ ձեզ ապացուցել, որ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի գլխավորած իշխանությունը գող, ավազակ, հակաժողովրդական իշխանություն է, որի հանցավոր գործունեության հետեւանքով Հայաստանը թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, եւ թե՛ սոցիալական առումներով մատնվել է թշվառագույն վիճակի: Փորձել եմ ապացուցել նաեւ, որ նրա վերարտադրությունը մեր երկիրը տանելու է անխուսափելի կործանման: Եւ վերջապես, փորձել

եմ ապացուցել, որ այսօր կա՛ այդպիսի տխուր հեռանկարից խուսափելու եւ նորմալ պետություն կառուցելու ռեալ հնարավորություն:

4. Այդ հնարավորությունը խարսխված է այն ակնհայտ իրողության վրա, որ հոչարյանա-սերժական վարչախումբը ժողովրդի համար ատելի, անհարազատ, օտար իշխանություն է, որի դավանած բարոյական արժեքները որեւէ կապ չունեն ո՛չ մեր ազգային հոգեբանության, ո՛չ էլ Հայաստանի եւ անգամ Արցախի իրական շահերի հետ: Եսակենտրոն այդ վարչախմբի գոյության միակ իմաստը իշխանական բուրգի եւ նրա սպասավորների գերհարստացումն է՝ ի հաշիվ օտար զանգված դիտվող ժողովրդի բարեկեցության եւ արժանապատիվ կյանքի:

5. Սերժ Սարգսյանը Հայաստանում որեւէ հենարան կամ ընտրազանգված չունի: Իր ամբողջ հույսը նա դրել է վարչական լծակների, ընտրակեղծիքների, բոնարարքների եւ ընտրակաշառքի վրա: Բայց դրանք, որքան էլ դժվարին թվացող, այնուամենայնիվ միանգամայն հաղթահարելի խոչընդոտներ են: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպիսի կամք, ինչպիսի վճռականություն, անձնազոհության ինչպիսի պատրաստակամություն կդրսեւորի ձեզանից յուրաքանչյուրը: Անձամբ ես եւ իմ տասնյակ հազարավոր կողմնակիցները պատրաստ ենք մատուցել մեր անմնացորդ ծառայությունը ազգային-ազատագրական պայքարի նվիրական գործին: Պատրաստ ենք, հանուն Հայաստանի լուսավոր ապագայի, լարել մեր ողջ ուժերը, ներդնել մեր բոլոր ջանքերը, ենթարկվել ցանկացած զրկանքի ու զոհողության՝ ներշնչված քաջերեքամյա մի հանճարեղ բանաստեղծի աստվածային քնարերգությամբ.

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՜ն քնար. –
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի –
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,

Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նաիրյան իմ ո՜րբ հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
Ու լռություն մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող:
Ու խանութները, գորշ կված, ու այն մարդիկ,
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ –
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա:
Եւ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան –
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ո՞վ դարձրեց – մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտեր երկու:
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհնեցգե ո՛չ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նաիրի...
Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նաիրյան իմ երազի վերջին սիրով, –
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ –
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եւ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախված
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախված
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա, –
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

Հայոց քնարերգության այս անգերազանցելի գլուխգործոցը, որն արժանի է անգիր արտաբերվելու յուրաքանչյուր հայի շուրթերից, հեղինակել է անմահ նահատակ Եղիշե Չարենցը դեռեւս 1920 թվականին: Եթե Շարժման նվիրյալներից բացի, ինքնազոհության չարենցյան ոգին համակի նաեւ մեր ողջ ժողովրդին, ապա ոչ մի ամբարիշտ ուժ, ոչ մի արգելք չի կարող կասեցնել մեր հաղթական երթը, եւ քոչարյանա-սերժական ողորմելի վարչախումբը կնետվի պատմության աղբանոցը:

Կեցցե իր արժանապատվությունը վերանվաճելու ելած հայ ժողովուրդը:

Կեցցե մեր արդար եւ սրբազան պայքարը:

Աստված մեզ օգնական:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 23 հունվարի, 2008թ.:

ՈՒՂԵՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

(17 փետրվարի, 2008թ.)

Սիրելի հայրենակիցներ.

փետրվարի 19-ին դում հնարավորություն եմ ունենալու ձեր կամքի ազատ արտահայտությամբ ազատվելու Հայաստանի ներկա ավազակապետական վարչախմբից եւ դառնալու երկրի իրական եւ արժանապատիվ տերը:

Դրա համար անհրաժեշտ է ընդամենը կատարել ձեր քաղաքացիական պարտքը եւ միահամուռ կերպով մասնակցել ընտրություններին: Ձեր անտարբերությունը կամ հոռետեսությունը, հեշտացնելով վարչախմբի կողմից կիրառվելիք ընտրախախտումներն ու կեղծիքները, կարող են ձախողել համաժողովրդական շարժման բախտորոշ գործը: Որքան ավելի շատ մարդ մասնակցի ընտրություններին, այնքան ժողովրդի հաղթանակն ավելի երաշխավորված կլինի: Ձեր ակտիվության պարագայում այն, ինչ չհաջողվեց 1998 եւ 2003 թվականներին, այս անգամ անպայման հաջողվելու է:

Դիմելով իմ աջակիցներին, համակիրներին, ինձ սատարող բոլոր քաղաքական ուժերին, հասարակական կազմակերպություններին, իմ ընտրարշավային կառույցներում ընտրված տասնյակ հազարավոր ակտիվիստներին, վստահված անձանց եւ դիտորդներին՝ կոչ եմ անում. աչալուրջ կերպով հետեւել քվեարկության ողջ ընթացքին՝ սկսած ընտրացուցակների ճշտումից մինչեւ ձայների հաշվառումն ու ամփոփումը, օրենքին համապատասխան՝ տեղում կանխել ցանկացած ընտրախախտում կամ ընտրողների կամքի բռնադատման յուրաքանչյուր փորձ, ան-

միջապես բողոքարկել եւ արձանագրել բոլոր նման դեպքերը, իսկ քվեարկության ամփոփումից հետո իսկույն պահանջել տեղամասային հանձնաժողովների կազմած արձանագրությունները:

Հարկ եմ համարում կոչով դիմել նաեւ բոլոր մարզպետներին, քաղաքապետերին, թաղապետերին, գյուղապետերին, ոստիկանապետերին, ընտրական հանձնաժողովների նախագահներին եւ բոլոր անդամներին.

– Ձեր խնդիրն ու պարտականությունն է ապահովել լիովին օրինական, ազատ եւ արդար ընտրությունների անցկացում, ինչը կնպաստի թե մեր երկրի հասարակական մթնոլորտի առողջացմանը, եւ թե նրա միջազգային վարկի բարձրացմանը: Ընտրությունների ընթացքում ձեր կողմից թույլ տրված ցանկացած օրինազանցություն յուրաքանչյուրիդ համար կունենա լուրջ իրավական հետեւանքներ: Ձեմ կասկածում, որ ձեզանից շատերը կգտնվեն իրենց քաղաքացիական պարտքի եւ պաշտոնեական պարտականության գիտակցության բարձրության վրա եւ չեն խանգարի ժողովրդի ազատ կամքի արտահայտմանը:

Փետրվարի 19-ը նշանավորելու է հակաժողովրդական, քրեական վարչախմբի դեմ Կարեն Դեմիրճյանի ու Վազգեն Սարգսյանի սկսած, Ստեփան Դեմիրճյանի, Արամ Սարգսյանի ու նրանց համախոհների կողմից շարունակված տասնամյա պայքարի հաղթական ավարտը՝ դառնալով հայ ժողովրդի, Հայաստանի քաղաքացիների արժանապատվության վերականգնման, ազատության երաշխավորման եւ բարգավաճման ապահովման բախտորոշ մեկնակետը: Ավազակախումբն արդեն պարտված է, իսկ ժողովուրդը՝ հաղթանակած: Փետրվարի 19-ին մնում է միայն իրավականորեն ձեւակերպել այդ հաղթանակը:

Հաղթանակ:

«Հայք», 17 փետրվարի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
(5 մարտի, 2008թ.)

Սահմանադրական դատարանի մեծարգո նախագահ, Սահմանադրական դատարանի մեծարգո անդամներ,

Ես միանգամից պետք է ասեմ, որ զերծ կմնամ իրադրության քաղաքական գնահատականից եւ կանգ կառնեմ մի քանի զուտ իրավական շեշտադրումների վրա: Թեեւ իմ իրավաբանական թիմը դրանց անդրադարձել է, սակայն ես անհրաժեշտ եմ համարում անել դա: Այնուամենայնիվ, քանի որ սա իմ առաջին հրապարակային ելույթն է մարտի 1-ի առավոտյան ժամը 6,30-ից հետո, ես ուզում եմ առիթից օգտվելով խորին ափսոսանք արտահայտել մարտի 1-ի ողբերգության առթիվ եւ խորապես ցավակցել բոլոր զոհվածների ընտանիքներին:

Իսկ այժմ իմ բուն ելույթը.

Ուզում եմ ուշադրություն հրավիրել Ընտրական օրենսգրքի 78 հոդվածի վրա. «Գրանցման պահից ՀՀ նախագահի այն թեկնածուները, ովքեր գտնվում են պետական ծառայության մեջ կամ աշխատում են տեղական ինքնակառավարման մարմիններում, ընտրությունների ընթացքում ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց եւ իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքի առավելությունները: Հանրապետության նախագահը կամ Սահմանադրության համաձայն՝ հանրապետության նախագահի պաշտոնակատարը՝ ԱԺ նախագահը կամ վարչապետը հանրապետության նախագահի թեկնածու առաջադրվելու դեպքում շարունակում է իրենց լիազորությունների կատարումը, սակայն չպետք է օգտագործեն իրենց պաշտոնեական դիրքի առավելությունները»: Այս հոդվածը չափազանց

հստակ է եւ իմպերատիվ: Իմպերատիվ հոդվածները մեկնաբանության ենթակա չեն: Գործող վարչապետը միայն մեկ հանգամանքում կարող էր առաջադրվել ու գրանցվել, եթե նա զբաղեցներ ՀՀ նախագահի պաշտոնակատարի կարգավիճակը: Այդպիսի կարգավիճակ գործող վարչապետը չունի: Ես համարում եմ, որ նրա գրանցումն ի բնե եղել է անօրինական, հետեւաբար՝ ոչ լեգիտիմ:

Երկրորդ՝ Սահմանադրության 53.1 հոդվածը. «Ռազմական եւ արտակարգ դրության ժամանակ հանրապետության նախագահի ընտրություն չի անցկացվում եւ հանրապետության նախագահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը»: Նախագահի ընտրություն նշանակում է ընտրական ողջ գործընթացը՝ սկսած առաջադրումից, մինչեւ բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը, այն է՝ ՍԴ վճիռը: Այս պահին մենք գտնվում ենք ընտրությունների պրոցեսի մեջ: Հետեւաբար, քանի որ հիմա արտակարգ դրություն է, այս ընտրությունները վավերական կամ օրինական չեն կարող համարվել:

Երրորդ՝ անհասկանալի է ՍԴ-ի գործընթացի միակողմանի լուսաբանման փաստը: Դիմող կողմը հնարավորություն չունի լուսաբանելու ՍԴ նիստերի ընթացքը: Խախտված է հավասարության սկզբունքը: Բացի այդ, դատավարության ընթացքում պահանջվող վկաներից շատերը, որոնք մեր շարժման համակիրներն են, կողմնակիցները եւ իմ նախընտրական շտաբների ակտիվիստները, ձերբակալված են: Դրանք մեր ամենակարեւոր վկաներն են:

Հետեւաբար այս իրադրության մեջ ՍԴ-ի ցանկացած որոշում, բացի ընտրություններն անվավեր ճանաչելուց, կառաջացնի լեգիտիմության դեֆիցիտ, ինչը վտանգավոր է եւ երկրի ապագայի համար, եւ ՍԴ հեղինակության համար: Ես չեմ պատկերացնում, թե այս պայմաններում ՍԴ կայացրած որեւէ վճիռ ինչպես կընդունվի իմ՝ դիմողիս կողմից, ժողովրդի կողմից եւ միջազգային հանրության կողմից: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության գլխին մշտապես կախված է լինելու ոչ լեգիտիմ իշխանություն ունենալու վիճակը:

Ելքը ես համարում եմ ԵՄ նախագահության երեկվա հայտարարության առաջարկները, որը ես ձեզ կներկայացնեմ եւ կխնդրեմ կցել գործին: Ես ամբողջությամբ ընդունում եմ այդ առաջարկները՝ դրանք հա-

մարելով ՍԴ-ի այս գործընթացում մեր գործելակերպի ծրագիրը, պլատֆորմը: Դրանք են հետեւյալ կետերը.

– դադարեցնել արտակարգ դրության վիճակը, ազատ արձակել բոլոր ձերբակալվածներին, ապահովել ինֆորմացիոն հավասար հնարավորություններ, իրականացնել մարտի 1-ի իրադարձությունների միջազգային անկախ հետաքննություն եւ սկսել երկխոսություն իշխանությունների հետ:

Այդ բոլոր կետերը ես ընդունում եմ եւ, ինչպես ասացի, համարում եմ մեր գործունեության հիմքը ինչպես ՍԴ-ում, այնպես էլ հրապարակայնորեն:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Ժամանակ Երեւան», 6 մարտի, 2008թ.:

ԼՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ

(«Վաշինգտոն Պոստ», 5 մարտի, 2008թ.)

Հայաստանի նախորդ ամսվա նախագահական ընտրություններում ես ներկայիս վարչապետ Սերժ Սարգսյանին ընդդիմադիր հիմնական թեկնածուն էի: Ընտրություններն անցան տխրահռչակ սցենարով. ռեժիմը հալածեց ընդդիմության ներկայացուցիչներին, կաշառեց եւ ահաբեկեց ընտրողներին, լցոնեց քվեատուփերը եւ համակարգված ձեւով իրականացրեց ձայների սխալ հաշվառում: Իհարկե, արդյունքների կեղծումը չէր սկսվել փետրվարի 19-ին: Նախընտրական քարոզարշավի ընթացքում երկրի հեռահաղորդակցության հիմնական միջոցը՝ հեռուստատեսությունը, խստիվ հսկվելով ռեժիմի կողմից, նախաձեռնեց մի պրոպագանդա, որը կստիպեր բրեժնեվյան ժամանակների սովետական պրոպագանդիստներին ամոթից կարմրել:

Մենք՝ ընդդիմադիրներս, զայրացած էինք այս ամենից, բայց ոչ զարմացած: Մեզ զարմացրեց եւ տագնապեցրեց Արեւմուտքի խլացնող լռությունը: Մեզ հատկապես հիասթափեցրեց ԵԱՀԿ-ի Դիտորդական առաքելության տեխնիկական զեկույցը, որը մեխանիկորեն դակեց Սարգսյանի՝ ֆարսի նմանվող պնդումները հաղթանակի մասին:

Հայաստանի ժողովուրդը, ի տարբերություն ԵԱՀԿ դիտորդների, նախընտրեց տեսնել այն, ինչ կատարվել էր ընտրատեղամասերում: Բնականաբար, նրանք մերժեցին Սարգսյանի պնդումները եւ հավաքվեցին, որ պահանջեն արդյունքների անվավերությունը: Նրանք ելան անժամկետ հանրահավաքների Օպերայի հրապարակում, որոնք դարձան ազատության շքեղագույն տոնախմբություն, եւ որոնք կարող են ուսուցանող լինել՝ որպես անօրեն ռեժիմի դեմ խաղաղ եւ օրինական դիմադրության օրինակ:

Մտահոգվելով հանրահավաքների մասնակիցների շարունակ աճող թվով՝ ռեժիմը որոշեց շաբաթ առավոտյան անցնել ուժային գործողությունների: Ոստիկանության հատուկ զորքերին հրամայվեց ցրել մարդկանց բազմությունը, ձերբակալել ընդդիմության ներկայացուցիչներին եւ տնային կալանք սահմանել իմ նկատմամբ: Դրանից մի քանի ժամ հետո քաղաքացիները հավաքվեցին մեկ այլ տեղ՝ իրենց առաջնորդներին տեսնելու պահանջով, սակայն հանդիպեցին հատուկ զորքերի ավելի մեծ քանակի, որն էլ ավելի ուշ համալրվեց Հայկական բանակի զորքերով, որոնց հրամայվեց ջարդել բողոքավորներին: Նվազագույնը 8 մարդ մահացավ անցած շաբաթվա վերջին, եւ հայտարարվեց արտակարգ իրավիճակ:

Ինչպե՞ս մենք հասանք սրան: Ինչո՞ւ հեռացող նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ «ընտրված նախագահ» Սերժ Սարգսյանի գլխավորած ռեժիմը մտածեց, որ իր սեփական ժողովրդի դեմ ուժի կիրառումը կմարսվի: Անշուշտ, այս երկու անձինք ունեին իրենց պատճառաբանությունները, սակայն դրանցից ամենակարեւորը Արեւմուտքի՝ թեկուզ ոչ մտադրված այն ազդանշանն էր, որ իրենք անհանգստանալու ոչինչ չունեն միջազգային խիստ արձագանքի առումով:

Մենք Հայաստանում փորձում էինք հասկանալ Քոչարյան եւ Սարգսյան ռեժիմի կողմից մեր ժողովրդավարության բռնաբարման նկատմամբ գոյություն ունեցող այս անտարբերության արմատները: Առկա ապացույցները երկու բացատրություն են առաջարկում: Առաջին՝ Արեւմուտքի եւ հատկապես Եւրոպայի որոշ ազդեցիկ կազմակերպություններ եւ գործիչներ միամտորեն կարծած են դրական գնահատականներ տալու միջոցով արդյունքի հասնելու գաղափարին: Նրանց թվում է, որ խոշոր թերությունները քննադատելու փոխարեն փոքր բարելավումները գովաբանելով՝ ստեղծում են լավ վարքագծի համար խթաններ: Սակայն, ամեն ոք, ով լավ է ուսումնասիրել այս ռեժիմը, գիտի նման մոտեցման անհեթեթությունը:

Երկրորդ եւ թերեւս առավել կարեւոր բացատրությունն այն հաճախ շրջանառվող դիտարկումն է, որ միակ անձինք, ովքեր ունակ են լուծել Հայաստանի երկարատեւ խնդիրը՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ, ղարաբաղյան ծագում ունեցող ղեկավարներն են, ինչպիսիք Քոչարյանն ու Սարգսյանն են, որոնք եւ երկրի ներսում հայտնի են որպես կոշտ դիրքորոշում ունեցողներ: Սա նման է՝ «միայն Նիքսոնը

կարող էր գնալ Չինաստան» տրամաբանությանը: Խնդիրն այն է, որ չնայած նախորդ 10 տարիների ընթացքում ունեցած իշխանությանը՝ Քոչարյանն ու Սարգսյանը շատ քիչ բան են արել բանակցային գործընթացի առաջընթացի գործում: Առավել կարեւոր է այն, որ բարդ եւ արդյունավետ որոշումներ կայացնող առաջնորդը պետք է ունենա իր ժողովրդի վստահությունը: Սարգսյանը չունի այդ վստահությունը: Մարտի 1-ին իր եւ Քոչարյանի կողմից իրականացրածից հետո նա չի կարողանա այստեղ կառավարել, ուր մնաց՝ բարդ որոշումներ կայացնել:

Եւ այսպես, ի՞նչ է պետք անել: Ի՞նչ սպասելիքներ ունի Հայաստանի ժողովուրդը Արեւմուտքից եւ հատկապես Միացյալ Նահանգներից: Նվազագույնը մենք ակնկալում ենք մարտի 1-ի բռնությունների հզոր եւ աներկբա դատապարտում՝ այն գիտակցությամբ, որ իշխանությունն է, եւ ոչ թե ընդդիմությունը, կրում պատասխանատվությունը: Այս դատապարտումը պետք է ուղեկցվի խիստ զգուշացմամբ՝ ընդդիմության եւ ընդդիմադիր լիդերների հանդեպ աննախադեպ չափերի հասնող եւ չդադարող հետապնդումների դադարեցման, ինչպես նաեւ մամուլի նկատմամբ սահմանափակումները վերացնելու եւ ազատ հանրահավաքներ անելու եւ անկողմնակալ լրատվություն ստանալու մարդկանց իրավունքը վերականգնելու պահանջով: Մենք նաեւ սպասում ենք ընտրությունների անցկացման վերաբերյալ նոր գնահատականի: Ցանկացած լուրջ գնահատական անխուսափելիորեն կբերի այն եզրահանգմանը, որ պետք է անցկացվեն նոր ընտրություններ:

Եթե այս բայլերը չձեռնարկվեն, հայերը կհանգեն երկու խիստ անցանկալի եզրակացությունների. որ քաղաքական պայքարի խաղաղ եւ օրինական միջոցները անարդյունավետ են ու անիմաստ, եւ որ Արեւմուտքը հոգում է ժողովրդավարության մասին, միայն երբ դա իրեն քաղաքականապես նպատակահարմար է: Արեւմուտքը պետք է անի հնարավոր ամեն ինչ, որպեսզի Հայաստանի քաղաքացիներին հետ պահի այս եզրակացություններից:

“The Washington post" (“Silence on Armenia”), 5 մարտի, 2008թ.:
«Ժամանակ Երեւան» («Լռություն Հայաստանի մասին»), 6 մարտի, 2008թ.:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱԿԱՆԱՊԱՏԵՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ

(հայտարարություն 2008թ մարտի 11-ի մամլո ասուլիսում)

Ս.թ. մարտի 5-ին ես Սահմանադրական դատարանի ուշադրությունը հրավիրեցի երկու իրավական հարցի վրա: Ընտրական օրենսգրքի 78.1 հոդվածի համաձայն՝ վարչապետը միայն մեկ հանգամանքում կարող էր գրանցվել ՀՀ նախագահի թեկնածու, այն է՝ եթե ունենար ՀՀ նախագահի պաշտոնակատարի կարգավիճակ, եւ քանի որ Սերժ Սարգսյանը այդպիսի կարգավիճակ չուներ, հետեւաբար նրա գրանցումն անօրինական է: Իսկ ըստ ՀՀ Սահմանադրության 53.1 հոդվածի՝ «Ռազմական եւ արտակարգ դրության ժամանակ Հանրապետության նախագահի ընտրություն չի անցկացվում»: «Նախագահի ընտրություն» նշանակում է ընտրական ողջ գործընթացը՝ սկսած առաջադրումից մինչեւ բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը, այն է՝ Սահմանադրական դատարանի որոշումը: Ուստի, քանի որ Սահմանադրական դատարանի նիստերը կայացել են այդպիսի դրության պայմաններում, ապա ընտրությունները վավերական կամ օրինական չեն կարող համարվել: Իմ կողմից բարձրացված այս հարցերի վերաբերյալ դատարանում իր առարկությունները ներկայացրեց պատասխանող կողմի ներկայացուցիչ Դավիթ Հարությունյանը: Այսպիսով, Սահմանադրական դատարանն ուներ ընտրական օրենսգրքի 78.1 եւ ՀՀ Սահմանադրության 53.1 հոդվածների վերաբերյալ թե՛ դիմող, թե՛ պատասխանող կողմի կարծիքները: Ըստ այդմ, դատարանը պարտավոր էր իր վերաբերմունքն արտահայտել դրանց նկատմամբ եւ համա-

պատասխան եզրակացության հանգել, ինչը զարմանալիորեն տեղի չունեցավ:

Սա նշանակում է մեկ բան. Սահմանադրական դատարանը, իրավական փակուղու առջեւ չկանգնելու կամ անհարմար վիճակի մեջ չընկնելու համար խուսափեց անդրադառնալ անցած ընտրությունների օրինականությունը կասկածի տակ դնող ամենաանառարկելի հիմքերին: Սակայն գերադասելով անտեսել այդ հիմքերը՝ Դատարանն ընկավ ավելի անպատվաբեր եւ խայտառակ վիճակի մեջ. փաստորեն լռելյայն անվավեր ճանաչելով անցած ընտրությունները եւ ական դնելով Սերժ Սարգսյանի լեգիտիմության տակ:

«Հայք», 21 մարտի, 2008թ.: «Հայկական ժամանակ», 22 մարտի, 2008թ.:

ԿՈՉ ՀԱՅԱԴՈՒԼԱՎՈՐՆԵՐԻՆ
(10 ապրիլի, 2008թ.)

Ապրիլի 9-ին, «Խաղաղակիրթ» աշխարհի օրհնությամբ, Հայաստանում հաստատված ավազակապետական վարչախմբի մի պարագլխին փոխարինեց մեկ ուրիշը: Փոխարինեց զանգվածային ընտրակեղծիքների, աննախադեպ բռնությունների, խաղաղական հալածանքների եւ խաղաղ ցուցարարների դեմ կազմակերպված սահմռկեցուցիչ սպանդի միջոցով:

Արեւմուտքը բավարարվեց հայաստանյան իրադարձություններին վերաբերող արտաքուստ խիստ, բայց իրականում դատարկ ու անպատասխանատու հայտարարություններով, կամա թե ակամա նպաստելով հանցագործ իշխանությունների վերարտադրությանը: Եւրոպական կազմակերպությունները, առաջնորդվելով խաղաղական նկատառումներով եւ երկակի ստանդարտներով, բռնեցին ոչ թե ժողովրդավարության, ազատության եւ իրավական պետության գաղափարներով տոգորված Հայաստանի նոր խաղաղացիական հասարակության, այլ անօրինական վարչախմբի կողմը: Առերեւույթ կայունության ապահովման շահագրգռությամբ, բայց ծածկաբար Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում Հայաստանի դիրքերը թուլացնելու նպատակով, Արեւմուտքը նախընտրեց մեր երկրում ունենալ խոցելի լեգիտիմությամբ օժտված բռնապետություն, քան ժողովրդի վստահությունը վայելող իշխանություն:

Անկախ, սակայն, միջազգային հանրության այս վրդովեցուցիչ վերաբերմունքից, ակնհայտ է, որ հայ ժողովուրդը, հավատարիմ մնալով ազատության եւ ժողովրդավարության գաղափարներին, չի համա-

կերպվել եւ երբեւէ չի համակերպվելու իր կամքի բռնի ոտնահարման նմանօրինակ փաստի հետ: Պատահական չէ, որ նորընծա բռնազավթչի երդման արարողությունը տեղի ունեցավ մի կողմից՝ ոստիկանության եւ բանակի ստվարախումբ գումարտակների սվիններեի ներքո, մյուս կողմից՝ համաժողովրդական ցասման ու բողոքի զանգվածային միջոցառումների ուղեկցությամբ: Այդ միջոցառումների շարքում կարեւոր տեղ էր զբաղեցնում նաեւ բանտերում եւ ազատության մեջ գտնվող բազմաթիվ քաղաքական գործիչների ու ազատամարտիկների հայտարարած հացադուլը:

Գիտակցելով հանդերձ քաղաքական պայքարի այդ ծայրահեղ միջոցի կարեւորությունը եւ խորապես գնահատելով հացադուլավորների սխրանքը, ես այնուամենայնիվ կոչ եմ անում՝ այս պահից դադարեցնել հացադուլը: Ձեր առողջությունը, անկոտրում կամքը եւ վճռականությունը անհրաժեշտ են համաժողովրդական պայքարի հետագա հանգրվաններում ավելի արդյունավետ ներդրվելու համար: Ապրիլի 9-ը ոչ թե վերջը, այլ սկիզբն է այդ սրբազան պայքարի, որի դրսեւորման քաղաքական եղանակներն առաջիկայում հասանելի կլինեն մեր հասարակությանը: Կասկած չունեմ, որ համաժողովրդական շարժման հարատեւությունը կստիպի նաեւ միջազգային հանրությանը՝ փոխելու իր վերաբերմունքը մեր պետության նկատմամբ:

«Հայք», 11 ապրիլի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ 2-ՐԴ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

(2 մայիսի, 2008թ.)

Սիրելի հայրենակիցներ եւ զինակիցներ,

Հայաստանի համաժողովրդական շարժման 2-րդ կոնգրեսը տեղի է ունենում չափազանց բարդ իրադրության պայմաններում: Ընդ որում, բարդությունը ոչ միայն իրավիճակային է, այլեւ իմացաբանական, քանի որ հասարակությունը կանգնած է վերջին շրջանի բուռն իրադարձությունների ընկալման եւ վերաիմաստավորման անհրաժեշտության առջեւ: Կուտակված անթիվ հարցերի պատասխանը հնարավոր է տալ միայն իրադարձությունների խոր եւ համակողմանի վերլուծությունից հետո: Այդ խնդիրը, սակայն, թողնելով ապագային, սույն ելույթում ես կբավարարվեմ անդրադառնալով ընդամենը մի քանի հրատապ թեմաների:

Բախում, թե՞ սպանդ

Քոչարյանա-սերժական քարոզչությունը փորձում է 2008թ. մարտի 1-ի իրադարձությունները ներկայացնել որպես ընդդիմության կողմից հրահրված բախում ցուցարարների եւ ոստիկանական ուժերի միջեւ: Այդ նպատակով բեական վարչախումբը գործի է դրել ստի, կեղծիքի, զրպարտության, փաստերի աղավաղման իր ողջ զինանոցը, իսկ իրավապահ մարմինները՝ ոստիկանությունը, դատախազությունը եւ դատարանները ջանադրաբար լծվել են նշված վարկածի «իրավական» հիմնավորման հանցավոր գործին: Նրանցից պահանջվում է ապացուցել անապացուցելին՝ զոհին դարձնել դահիճ, իսկ դահճին՝ զոհ, խնդիր,

որ նրանք, վստահաբար, կլուծեն հասարակական ճնշման բացակայության եւ միջազգային հանրության անտարբերության պարագայում:

Վարկածի հեղինակը, եթե կուզեք՝ դիրիժորը կամ ռեժիսորը, բնականաբար, ոչ այլ ոք է, եթե ոչ վարչախմբի տխրահռչակ պարագլուխ Ռոբերտ Քոչարյանը: Դրանում համոզվելու համար բավական է ուշադիր ընթերցել նրա վերջին երեք մամլո ասուլիսները (մարտի 1, 5 եւ 20), որոնք աչքի են ընկնում բազմաթիվ աղաղակող հակասություններով եւ իրականությունը կոծկելու բացառիկ անճարակ ճիգերով: Ի դեպ, Քոչարյանի ձեռագիրը վերջին տասը տարվա ընթացքում բոլորովին չի փոխվել. մարտի 1-ի իրադարձությունները գնահատելիս, նա, ըստ էության, դրսեւորում է նույն անպարկեշտ վարքագիծը, որի ականատեսն ենք եղել նրա կողմից 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետքերը կոծկելիս: Մերկապարանոց հայտարարություն անողի դերում չհայտնվելու համար այժմ մեկ առ մեկ դիտարկենք Քոչարյանի վերոհիշյալ ասուլիսներում առկա բացահայտ ստերը, փաստական սխալներն ու տրամաբանական հակասությունները, որոնք ոչ միայն լիովին բացահայտում են նշված անձի բարոյական կերպարը, այլեւ մարտի 1-ի ոճրագործության պատասխանատվությունից խուսափելու անթաքույց ձգտումը:

– Մարտի 1-ի մամլո ասուլիսում, խոսելով նույն օրն առավոտյան Ազատության հրապարակում տեղի ունեցած դեպքերի մասին, Քոչարյանը նշում է. «Ինն օր շարունակ չարտոնված հանրահավաքներ էին կազմակերպվում Երեւանում, եւ դրանց բովանդակությունը, անցկացնելու ոճը բերեց նրան, որ վերջապես հրահրվեցին ընդհարումներ ոստիկանության հետ: Ոստիկանության օրինական պահանջին դիմադրեցին, իսկ պահանջը, ընդամենը խուզարկության խնդիր էր, քանի որ լուրջ տեղեկություն կար զենքի եւ զինամթերքի մասին»: Բացարձակ սուտ. ոստիկանությունը ոչ միայն խուզարկության պահանջ չի ներկայացրել Ազատության հրապարակում գիշերողներին, այլեւ անգամ ցրվելու կոչ չի արել նրանց: Երբ շուրջ ժամը վեցն անց քառասուն րոպեին ռետինե մահակներով, էլեկտրաշոկերով եւ վահաններով զինված ոստիկանական ուժերը շրջապատեցին Ազատության հրապարակը, ես բարձրացա հարթակ, եւ խոսափողից դիմելով ներկաներին, ասացի բառացիորեն հետեւյալը. «Սիրելի ժողովուրդ, խնդրում եմ զսպվածու-

թյուն հանդես բերել, հանգիստ մնալ եւ ոչ մի շփում կամ կոնտակտ չունենալ ոստիկանների հետ: Նրանք գուցե մեզ ասելու բան ունեն, սպասեք տեսնենք, թե ինչ են մեզանից ուզում: Ոստիկաններին էլ զգուշացնում եմ նկատի ունենալ, որ հրապարակում կան նաեւ կանայք եւ երեխաներ: Իսկ ցուցարարներին կրկին խնդրում եմ հանդարտություն դրսեւորել եւ հինգ-վեց քայլ ետ քաշվել ոստիկաններից»: Երբ ժողովուրդը կատարեց իմ խնդրանքը եւ հինգ–վեց մետր ետ քաշվեց, ոստիկաններն, առանց որեւէ նախազգուշացման, միանգամից հարձակվեցին ցուցարարների վրա, մահակի անխնա հարվածներ տեղալով նրանց գլխին եւ հանախակի գործի դնելով էլեկտրաշոկերը: Մարդկանցից շատերն արագորեն հեռացան հրապարակից: Ոմանք փորձեցին պաշտպանվել վրանների հենացցերով ու վառելափայտով, բայց ոստիկանների ճնշման տակ նրանք եւս շուտով լքեցին հրապարակը: Տասը-տասնհինգ բոպեից հրապարակը լիովին դատարկված էր ցուցարարներից, եւ այնտեղ լիակատար տիրություն էին անում ոստիկանները, խորտակելով բարձրախոսներն ու դեռեւս կանգուն մնացած վրանները: Ահա սա է ողջ իրականությունը, որի մասին կարող են վկայել դեպքերին ականատես շուրջ երեք հազար ցուցարարներ: Ինչ վերաբերում է Քոչարյանի ստահոդ պնդմանը, ապա դրա հետ կապված հարկ է ուշադրություն դարձնել տարակուսանք առաջացնող երկու հանգամանքի վրա: Առաջին. եթե ոստիկաններն իսկապես խուզարկության կամ ցրվելու պահանջ ներկայացրած լինեին ցուցարարներին, մի՞թե պարզ չէ, որ իշխանություններն այդ տեսարանը հարյուր անգամ արդեն ցուցադրած կլինեին իրենց հեռուստալիքներով: Եւ երկրորդ. աշխարհի ոչ մի երկրում դեռեւս տեսնված չէ, որ իրավապահ մարմինները խուզարկության գնան շուրջ երեք-չորս հազար ոստիկաններով:

– Անդրադառնալով մարտի 1-ի երկրորդ կեսին ֆրանսիական դեսպանատան մոտ ծավալված իրադարձություններին, Քոչարյանը նույն ասուլիսում հայտարարում է, որ «ոստիկանական զորքը զինված չէր հրազենով»: Հիշեցնենք, որ սա ասվել է Արտակարգ դրություն հայտարարելու պահին, այն է՝ երեկոյան շուրջ ժամը 22:30-ին, երբ բանակն իբր դեռեւս գործի չէր դրվել, եւ երբ բազմաթիվ զոհեր ու վիրավորներ պատճառած արյունահեղությունն արդեն տեղի էր ունեցել: Թյուրիմացությունից խուսափելու համար Քոչարյանի ասուլիսի այդ հատվածը

մեջբերենք ամբողջությամբ. «Կա ութ վիրավոր ոստիկանության աշխատողներից: ...Տվյալ պարագայում, երբ զենք է կիրառվում ոստիկանական զորքի դեմ, որը զինված չէ հրազենով, սա ենթադրում է, որ մենք ստիպված ենք բանակի հնարավորությունը կիրառել կարգ ու կանոն հաստատելու համար: Մինչ այս վիրավորների պահը զուսպ էինք մնում նման քայլերից, բայց կիրառվում է զենք եւ, իհարկե, մենք պարտավոր ենք ապահովել մեր քաղաքացիների անվտանգությունը»: Սակայն, ի դժբախտություն Քոչարյանի, այստեղ բնականաբար ծագում է հետեւյալ հարցը. եթե բանակը դեռեւս զորքի դրված չի եղել, իսկ ոստիկաններն էլ հրազեն չեն ունեցել, ապա ինչպես մինչեւ Արտակարգ դրության հայտարարումը յոթ քաղաքացի զոհվեց հրազենից եւ տասնյակ ուրիշներ ստացան հրազենային վնասվածքներ: Հարցին, որքան էլ զարմանալի է, պատասխանում է ինքը Քոչարյանը, ասուլիսի հաջորդ հատվածում անզգուշաբար մատնելով իրեն. «Կրակոցներն արվում էր մի իրավիճակում, երբ կրակողի հետեւում կային նաեւ այն ցուցարարները, որոնք զենք չէին կրում: Կրակողը մեքենայի հետեւից դուրս էր գալիս, կրակում զինվորների վրա եւ թաքնվում: Իսկ իր վրա կրակել, կնշանակեր նաեւ զոհեր այն մարդկանց շրջանում, ովքեր անզեն էին»: Քոչարյանը չի էլ նկատում, թե ինչպիսի թակարդն է ընկել. եթե ոստիկանները, ինչպես ինքն է պնդում, զինված չէին հրազենով, ապա նրանք ինչպես պիտի կրակեին այդպես տմարդավարի վարվող ցուցարարների վրա: Մեկ անգամ էլ նա իրեն մատնում է մարտի 20-ի մամլո ասուլիսում. «Շատ հարցադրումներ կային եւ մամուլում եւ խոսակցություններում, թե ո՞վ է տվել կրակելու հրամանը, եղել է, թե չի եղել այն: Աշխարհի ոչ մի երկրում ոստիկանությունը հատուկ հրամանի կարիք չունի: Մեր «Ոստիկանության մասին» օրենքը նախատեսում է ..., թե երբ եւ ինչպես ոստիկանը կարող է կիրառել զենքը»: Ինչպես տեսնում ենք, Քոչարյանը, ինքն էլ չզգալով, վերջիվերջո ակամա խոստովանում է, որ ոստիկանությունն այնուամենայնիվ զինված է եղել հրազենով: Այլապես կմնար ենթադրել, որ բանակը գործի է դրվել Արտակարգ դրություն հայտարարելուց առաջ, ինչը Սահմանադրության կոպիտ խախտում եւ ծանրագույն պետական հանցանք կլիներ՝ կատարված գլխավոր հրամանատարի կողմից:

– Ինչպես տեսանք, Արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտությունը Քոչարյանը հիմնավորում է նրանով, որ մարտի 1-ին ցուցարարներից շատերն իբր հրազեն են կրել եւ կիրառել ոստիկանների դեմ: Այդ պնդումն, ի դեպ, նա բազմիցս կրկնում է իր բոլոր երեք ասուլիսներում: Սակայն որքան էլ զարմանալի է, իշխանությունների եւ ընդդիմության կատարած հազարավոր տեսագրություններում, դեպքերից երկու ամիս անց իսկ, հրազեն կրող եւ կիրառող որեւէ քաղաքացի չի հայտնաբերվել: Փաստը զարմանալի է մանավանդ այն առումով, որ հրազեն կիրառող ոստիկաններին վերաբերող տեսանյութերը չափազանց առատ են: Ավելին, մինչ Քոչարյանի իսկ պնդմամբ՝ բերման են ենթարկվել մոտ 800, իսկ կալանավորվել ավելի քան 100 քաղաքացիներ (մարտի 20-ի ասուլիս), սակայն տարօրինակ կերպով նրանցից ոչ մեկին մարտի 1-ին հրազեն կրելու եւ կիրառելու մեղադրանք չի ներկայացվել: Այսքանից հետո մի՞թե լրացուցիչ ապացույցներ են պետք Քոչարյանի հորինած այս էժանագին առասպելը հերքելու համար:

– Բացի փաստերն անպարկեշտորեն ու ցինիկաբար աղավաղելու ակնհայտ իրողությունից, ինչը կարելի է բացատրել մարտի 1-ի ոճրագործության պատասխանատվությունից խուսափելու շարժառիթով, Հայաստանի նախագահի բարձր պաշտոնն զբաղեցնող անձը չի խորշում անգամ կենցաղային մակարդակի ստախոսությունից: Այս տեսակետից ուշագրավ է հատկապես մարտի 5-ի ասուլիսի մի ընդարձակ հատված: Պատասխանելով այն հարցին, թե ճի՞շտ է, արդյոք, որ «Լեւոն Տեր-Պետրոսյանը ռուսական լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում ասել էր, թե ինքը պատրաստ է եղել գնալ երկխոսության, եւ ցանկություն է ունեցել գալ եւ միանալ հանրահավաքի մասնակիցներին, սակայն այդ հնարավորությունը չի ունեցել», Քոչարյանն ասում է. «Ծանոթ եմ այդ հարցազրույցին, եւ մեղմ ասած, այդ թեզը իրականությանը չի համապատասխանում: Առաջինն՝ ի՞նչ է նշանակում հնարավորություն չեմ ունեցել: Ո՞վ էր խանգարում: Հանգիստ կարող էր գնալ: Ոչ մեկն իրեն չէր խանգարում: Խնդիրը հետեւյալի մեջ էր. իր թիկնազորը, որը բաղկացած է սպաներից, իրեն ասել են, որ իրենք չեն կարող մասնակցել ապօրինի միջոցառումներին, բայց Տեր-Պետրոսյանն ազատ էր՝ առանց թիկնազորի գնալ: ...Նպատակներն ուրիշ էին: Իրականում երեկոյան պետական պաշտոնյաների անվտանգության ծա-

ռայության ղեկավար Գրիգորի Սարկիսյանի միջոցով նա ինձ փոխանցել է, որ ինքը կցանկանա գնալ եւ հանգստացնել ժողովրդին: Ասել ենք՝ այո, միայն կողջունենք, գնացեք եւ հանգստացրեք: Ասաց՝ չէ, ես պայմաններ ունեմ: Պայմանները հետեւյալն էին. ինքը գնում է եւ այդ մարդկանց առաջնորդում Թատերական հրապարակ, շարունակում է հանրահավաքը, որից հետո եւս 15 օր պետք է երաշխավորված շարունակի նույնը: Բայց երբ այդ առաջարկն իր կողմից եղել է, արդեն վիճակը քաղաքապետարանի դիմաց դուրս էր հսկողությունից. ամբոխը զինված էր փայտերով, երկաթյա ձողերով, արդեն մոտ 30 հրկիզված մեքենա կար եւ բարիկադներ էին կառուցվում, կային ծեծված ոստիկաններ: ... Իրեն ասվել է, որ այդ առաջարկի համար արդեն ուշ է, եթե մտահոգություն ունեք, դուք ազատ եք, ձեզ ոչ ոք չի խանգարում, գնացեք, տեղում հանգստացրեք, կամ տարեք Դինամո մարզադաշտի հրապարակ: Նա մերժեց: Սա է եղել պատմությունը»:

Քոչարյանի այս ընդարձակ պատասխանը, իր իսկ խոսքերով, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում: Նախ՝ մարտի 1-ին Գրիգորի Սարկիսյանի միջոցով ես Քոչարյանի հետ բանակցել եմ ոչ թե մեկ անգամ եւ ոչ թե միայն երեկոյան, այլ երեք անգամ՝ սկսած շուրջ ցերեկվա ժամը 14-ից: Առաջարկիս իմաստը եղել է այն, որ ինձ թույլ տան գնալ ֆրանսիական դեսպանատան մոտ եւ համոզել ցուցարարներին, որ դադարեցնեն հանրահավաքը: Բայց գիտակցելով, որ դա անհնար է առանց ժողովրդին այլընտրանք առաջարկելու, ես, այո՛, պնդել եմ, որ հանրահավաքը տեղափոխվի Ազատության հրապարակ կամ Մատենադարան եւ խոստացվի, որ հաջորդ օրերին մեզ արտոնված հանրահավաքներ անցկացնելու հնարավորություն կընձեռեն: Քոչարյանը գեներալի միջոցով ինձ առաջարկել է ժողովրդին տանել Դինամո մարզադաշտ կամ կայարանամերձ հրապարակ: Ես մերժել եմ, մտավախություն ունենալով, որ դեսպանատներից ու քաղաքի կենտրոնից հեռու, իշխանությունները կարող են ցուցարարների նկատմամբ նոր բռնություններ կիրառել եւ պնդել եմ, որ հանրահավաքը տեղափոխվի Մատենադարան: Երկրորդ անգամ Սարկիսյանը Քոչարյանի անունից ինձ հաղորդել է՝ մի քիչ էլ սպասել, իսկ՝ երրորդ անգամ, արդեն ուշ երեկոյան, նախագահը հայտարարել է, որ ոչ մի կոմպրոմիս չի կարող լինել: Ի դեպ, նույն բանակցությունները Քոչարյանի հետ ես վարել

եմ նաեւ Հայաստանում հավատարմագրված եւրոմիության դեսպանների միջոցով, եւ երեք անգամ էլ դեսպաններին նախագահական նստավայրից տրվել են նույն պատասխանները:

Եւս մեկ անգամ, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում նաեւ Քոչարյանի այն պնդումը, թե իբր «Տեր-Պետրոսյանի թիկնազորը, որը բաղկացած է սպաներից, իրեն ասել են, որ իրենք չեն կարող մասնակցել ապօրինի միջոցառումներին, բայց Տեր-Պետրոսյանն ազատ էր՝ առանց թիկնազորի գնալ»: Իմ թիկնազորը այդպիսի բան չի ասել եւ չէր կարող ասել, քանի որ օրենքով նա այդպիսի լիազորություն չուներ, եւ նրա միակ պարտականությունը իմ անվտանգության ապահովումն էր:

– Նույն ասուլիսի շարունակության մեջ Քոչարյանը ճշմարտության դեմ մի ավելի բացահայտ մեղք է գործում, պնդելով հետեւյալը. «Շահարկում են, թե իբր Լեւոն Տեր-Պետրոսյանը տնային կալանքի տակ է եւ չի կարողանում գնալ Սահմանադրական դատարան: Բայց նման բան չկա, երբ ցանկանա կարող է գնալ: Երբեք տնային կալանք չի եղել, եւ մենք նման իրավական ռեժիմ չունենք Հայաստանի Հանրապետությունում»: Եւ այսպես, մինչ Հայաստանի իրադարձություններին վերաբերող համարյա բոլոր միջազգային փաստաթղթերն արձանագրում են, որ Տեր-Պետրոսյանը գտնվում է **դե ֆակտո** տնային կալանքի տակ, Քոչարյանը հայտարարում է, որ նման բան չկա: Մարտի 1-ից մինչեւ մարտի 25-ը իմ առանձնատան երկու դարպասները հսկվում էին Գրիգորի Սարկիսյանի ղեկավարած ծառայության շուրջ 30 սպաներով ու զինվորներով, որոնք խուզարկում էին ելումուտ անող բոլոր ավտոմեքենաները եւ համապատասխան մատյանում գրանցում ինձ այցելող բոլոր անձանց, այդ թվում տասնյակ արտասահմանյան դիվանագետների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների անունները: Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարան ներկայանալուս պարագային, ապա այդ բանն ինձ թույլ տրվեց միայն դատարանի համապատասխան կարգադրությունից եւ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանի գրավոր հավաստիացումից հետո, այն էլ Սարկիսյանին ենթակա չորս ավտոմատավոր սպաների ուղեկցությամբ: Ճիշտ է, որ Հայաստանում տնային կալանքի իրավական ռեժիմ գոյություն չունի: Այդ դեպքում, սակայն, հարց է ծագում, թե ինչպե՞ս պետք է բնու-

թագրել գեներալ Գրիգորի Սարկիսյանի կողմից իմ տեղաշարժի ազատության դեմ կիրառված սահմանափակումը: Գուցե՝ առեւանգո՞ւմ. սակայն դա արդեն հետագա իրավական գնահատականի խնդիր է:

Քոչարյանի խնդրո առարկա մամլո ասուլիսների կատարված վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ նրա համար կարեւորը, տեղեկատվական դաշտում իշխանությունների վայելած բացառնակ մենաշնորհի պայմաններում, հնարավորինս առավել սուտ լուրերի տարածումն է, հույս ունենալով, որ դրանք, գեբելսյան իմաստությամբ բազմիցս կրկնվելով, մի կողմից կծառայեն ընդդիմության վարկաբեկման անհրաժեշտ գործին, մյուս կողմից կվերածվեն կարծրատիպերի, որոնց հաղթահարման համար հասարակությունից երկար ժամանակ կպահանջվի: Տվյալ գործելաոճն, անտարակույս, նաեւ իրադարձությունների հետաքննությունն ուղղորդելու ակնհայտ միտում է պարունակում, ինչի վկայությունն են, մասնավորապես, դատախազության բազմաթիվ պաշտոնական հայտարարություններն ու հաղորդագրությունները, որոնցում կրկնվում են Քոչարյանի ասուլիսներում առկա համարյա բոլոր հակասությունները, փաստական աղավաղումներն ու ստահոդ պնդումները: Սակայն սա առանձին խոսակցության առարկա է, որին մենք թերեւս կանդրադառնանք այլ առիթով: Իսկ քոչարյանա-սերժական քարոզչության գլխավոր նպատակն, ինչպես արդեն ասվեց, խաղաղ ցուցարարների դեմ իշխանությունների կողմից հիմնավորապես ծրագրված եւ իրագործված հրեշավոր ոճրագործության պատասխանատվությունից խուսափելու ակնհայտ ձգտումն է: Այլ կերպ ասած, եթե իշխանությունները սուտ են խոսում, դա կարող է միայն մեկ բան նշանակել՝ այն է, որ նրանք թաքցնելու բան ունեն, այլապես հարկադրված չէին լինի դիմելու նման անպատվաբեր միջոցի:

Ինչ-որ բան թաքցնելու անհրաժեշտությունը թելադրված է նրանից, որ իշխանությունները խաղաղ ցուցարարների դեմ բռնություն գործադրելու եւ ընդդիմությունը ջախջախելու ծրագիրը սառնասրտորեն մշակել են մարտի 1-ի իրադարձություններից դեռեւս մեկ շաբաթ առաջ: Փետրվարի 23-ին Ռոբերտ Քոչարյանը բողոքի ցույցերը որակեց որպես «իշխանության ապօրինի զավթման փորձ», միաժամանակ սպառնալիքներ կարդալով ընդդիմության հասցեին (ի դեպ, այս փաստի վրա հատուկ ուշադրություն է հրավիրել Ջոն Պրեսկոտը, ապրիլի 14-ին

եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովին ներկայացրած իր զեկույցում): Ի կատարումն Քոչարյանի հրահանգի, հաջորդ օրն եւեթ, փետրվարի 24-ին, ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության ավագ քննիչ, գնդապետ Մ. Մարուքյանը հարուցեց քրեական գործ հետեւյալ հիմնավորմամբ. «ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, գնդապետ Մ. Մարուքյանս, քննարկելով ՀՀ ԿԱ ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանման եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչությունից ստացված նյութերը, **պարզեցի.** Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունների գործընթացում Նիկոլ Փաշինյանը, Սասուն Միքայելյանը, Հակոբ Հակոբյանը, Մյասնիկ Մալխասյանը, Պետրոս Մակեյանը, մյուսներն ու ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը, տեղեկանալով, որ ըստ նախնական տվյալների պարտվել է ընտրություններում եւ ստացել ընտրողների ձայների ընդամենը 21.5%-ը, երկրում օրինական իշխանությունների նկատմամբ անվստահության մթնոլորտ ստեղծելու, հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների բնականոն աշխատանքները կազմալուծելու միջոցով, ինչպես նաեւ զինված խմբավորումներ կազմավորելու եւ դրանք հետագա գործընթացներում օգտագործելու կոչերով, Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը յուրացնելու, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության խախտմամբ պետական իշխանությունը բռնությամբ զավթելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն ուղղված գործողություններ են կատարել: Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օրենսգրքի 27, 175–176, 181–182, 192-րդ հոդվածներով՝ **որոշեցի.** 1. Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ մի խումբ անձանց կողմից պետական իշխանությունը յուրացնելու փաստի առթիվ հարուցել թիվ 58200608 քրեական գործը՝ ՀՀ քր. օրենսգրքի 300 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, այն ընդունել վարույթ եւ կատարել նախաքննություն: 2. Սույն որոշման պատճենն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին»:

Իրավական անգրագիտության այս գլուխգործոցում հատկապես ուշադրության են արժանի «մյուսները» բառը եւ մանավանդ «Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ մի խումբ անձանց կողմից պետական իշխանությունը յուրացնելը» որպես կատարված փաստ ներկայացնելու ձեւա-

կերպումը: Սակայն կարեւորը տվյալ պարագայում սա չէ, այլ այն պարզ իրողությունը, որ նշված փաստաթղթով իշխանությունները փետրվարի 24-ին արդեն գծել են իրենց հետագա բոլոր գործողությունների մանրակրկիտ սցենարը, ընդհուպ մինչեւ մարտի 1-ի արյունահեղությունը, խանութների թալանը, ընդդիմության ղեկավարների ձերբակալությունները եւ այլն: Քաղաքական տեսակետից՝ այս հրեշավոր ծրագրի հետապնդած նպատակը մեկն էր, այն է՝ Արտակարգ դրության հայտարարումը, քանի որ իշխանություններն ակնհայտորեն ահաբեկված էին այն մտքից, որ զանգվածային հանրահավաքների ու անկախ լրատվության գոյության պայմաններում Սահմանադրական դատարանը կարող էր կայացնել իրենց համար անցանկալի վճիռ: Ուստի նրանց այլ բան չէր մնում անելու, քան բռնությամբ ու արյունահեղությամբ ճզմել կեղծված ընտրությունների առթիվ ծագած հասարակական դժգոհության արտահայտությունները եւ փորձել կատարվածի մեղքը բարդել ընդդիմության վրա:

Փաստերի համակողմանի քննությունն, այսպիսով, ցույց է տալիս, որ մարտի 1-ին տեղի ունեցածը ոչ թե բախում էր ցուցարարների եւ ոստիկանության միջեւ, այլ իշխանությունների կողմից ժողովրդի դեմ կազմակերպված իսկական սպանդ, որի պատասխանատվությունը գլխավորապես ընկնում է Ռոբերտ Քոչարյանի վրա: Նա էր այն միակ իրավասու անձը, որ կարող էր խաղաղ ցուցարարների նկատմամբ բռնություն կիրառելու եւ նրանց գնդակոծելու հրաման տալ, քանի որ ուժային բոլոր մարմինները՝ բանակը, ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը եւ Պետական պաշտոնյաների անվտանգության ծառայությունը գտնվում են նախագահի անմիջական ենթակայության տակ: Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանին, որը թեեւ ֆորմալ առումով կապված չէ հրաման արձակելու հետ, ապա նա, որպես ընտրյալ համարվող նախագահ, պարտավոր էր Ռոբերտ Քոչարյանին թույլ չտալ գնալ այդ ծայրահեղ քայլին: Համենայն դեպս, նրա պատասխանատվության չափը կախված է այն դիրքորոշումից, որը նա կդրսեւորի մարտի 1-ի ոճրագործության անկողմնակալ հետաքննության ապահովման գործում: Սարգսյանն իր անմեղությունն ապացուցելու ավելի հարմար եւ շահավետ միջոց չունի, քան համաձայնել այդ ոճրագործության հանգամանքների միջազգային, անկախ հետաքննու-

թյան անցկացմանը: Այլապես հազար տարի էլ անցնի, նա նույնման մեղավոր կդիտվի մարտի 1-ի արյունահեղության գործում, որման Ռոբերտ Քոչարյանը:

Արեւմուտքի վերաբերմունքը հայաստանյան ընտրությունների եւ մարտի 1-ի իրադարձությունների նկատմամբ

Արեւմուտք ասելով, ես, առաջին հերթին նկատի ունեմ Եւրոպական կազմակերպությունները՝ Եւրոպայի խորհուրդը եւ ԵԱՀԿ-ն, որոնց անդամակցել է Հայաստանը եւ համապատասխան պարտավորություններ ստանձնել նրանց առջեւ: Սակայն, նախման բուն նյութին անցնելը, հարկ եմ համարում կատարել հետեւյալ անհրաժեշտ պարզաբանումը: Տրամաբանությունը հուշում է, որ եթե մեր պետությունը պարտավորություններ է ստանձնել այդ կազմակերպությունների առջեւ, ապա դա ինքնաբերաբար նշանակում է, որ այդ կազմակերպություններն էլ պարտավորություններ են ստանձնել մեր ժողովրդի առջեւ, այն է՝ ապահովել նրա անվտանգությունը, ժողովրդավարական ազատությունները եւ քաղաքացիական իրավունքները: Դժբախտաբար, փորձը ցույց է տալիս, որ նշված կազմակերպությունները թերանում են թե՛ Հայաստանի կառավարության ստանձնած պարտավորությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու, եւ թե՛, մանավանդ, մեր ժողովրդի առջեւ իրենց պարտավորությունները կատարելու հարցում: Դա ապացուցելու համար բավական է, թեկուզ, նշել «Ա1+» եւ «Նոյան տապան» հեռուստակայանների վերաբացման հարցում նրանց ցուցաբերած լիակատար անկարողությունը, ինչպես նաեւ այն, որ մինչ այժմ անպատասխան է մնում Ստեփան Դեմիրճյանի կողմից 2003թ. ընտրությունների արդյունքների վերանայման վերաբերյալ Եւրոդատարան ներկայացված հայցադիմումը:

Կարծում եմ, նույնքան եւ գուցե ավելի պերճախոս է այդ կազմակերպությունների դրսեւորած անսկզբունքային վերաբերմունքը Հայաստանում կայացած վերջին նախագահական ընտրությունների եւ մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների նկատմամբ: Առարկայական լինելու համար ես կսահմանափակվեմ միայն այդ կազմակերպությունների կողմից կազմված մի քանի պաշտոնական փաստաթղթերի

դիտարկմամբ: Դրանք են՝ ԵԱՀԿ-ի «Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի» (ODIHR) դիտորդական առաքելության ղեկավար, դեսպան Գերդ Արենսի երկու զեկույցները (փետրվարի 20 եւ մարտի 3), «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի» (PACE) դիտորդական առաքելության ղեկավար Ջոն Պրեսկոտի զեկույցը (ապրիլի 14), «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովին» դեսպան Ժորժ Կոլոմբիեի եւ Ջոն Պրեսկոտի ներկայացրած համատեղ զեկույցը (ապրիլի 15), «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի» թիվ 1609 բանաձեւը (ապրիլի 17), ինչպես նաեւ «Եւրոխորհրդի Մարդու իրավունքների կոմիսար» Թոմաս Համմարբերգի զեկույցը (մարտի 20), որը վերաբերում է մարտի 1-ի իրադարձություններին եւ իր օբյեկտիվությամբ առանձնանում մյուսներից:

Միջազգային դիտորդական առաքելությունների անպատասխանատվությունը դրսեւորվեց նրանց առաջին իսկ զեկույցում, որում, նախքան խախտումների բողոքարկման ու ձայների վերահաշվարկի համար սահմանված ժամկետի ավարտը եւ նախքան ընտրությունների արդյունքների պաշտոնական ամփոփումը, տեղ գտավ հետեւյալ ձախորդ ձեւակերպումը. «Հայաստանի Հանրապետության նախագահի փետրվարի 19-ի ընտրությունները հիմնականում անցկացվեցին ԵԱՀԿ-ի եւ Եւրոխորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների եւ չափանիշների համաձայն»: Թեեւ այնուհետեւ ինչպես այս, այնպես էլ դիտորդական առաքելությունների մյուս զեկույցներում մանրամասնորեն արձանագրվել են ընտրական օրենսգրքի խախտումների, անհավասար քարոզչական հնարավորությունների, լցոնումների, ընտրակաշառքի, կրկնակի քվեարկությունների, իշխանությունների կողմից կիրառված բռնությունների, ձայների ամփոփման ժամանակ տեղի ունեցած զեղծարարությունների, վստահված անձանց աշխատանքի խափանման, վարչական ռեսուրսների օգտագործման հայտնավոր դեպքեր, սակայն դրանք, դիտորդների «հեղինակավոր» կարծիքով ընտրությունների արդյունքների վրա չեն ազդել: Երբ նրանց հարցնում ես, թե ինչպես կարող են այդ աղաղակող փաստերը չազդել ընտրությունների արդյունքների վրա, եւ եթե չեն ազդել, ապա ինչ իմաստ ուներ դրանք արձանագրելը, նրանք լռում են: Երբ հարցնում ես՝ եւրոպական որեւէ երկրում իրենք կհանդուրժեին, արդյոք, նման խախտումներով ուղեկցված ընտրություններ,

նույնիսկ վիրավորվում են, ակամա մատնելով երկակի ստանդարտներով առաջնորդվելու իրենց դիրքորոշումը:

Դիտորդական առաքելությունների աշխատանքի որակի վկայությունն են նաեւ նրանց զեկույցներում առկա բազմաթիվ փաստական սխալները, որոնցից հարկ եմ համարում առանձնակի ուշադրություն հրավիրել հետեւյալ երկուսի վրա: Այսպես, Գերդ Արենսի փետրվարի 20-ի զեկույցում գրված է հետեւյալը. «Հակասություն է առաջացել այն բանի շուրջ, որ Սերժ Սարգսյանը ակտիվ ընտրարշավ էր անցկացնում՝ շարունակելով գործել որպես վարչապետ: ԿԸՀ-ն պարզաբանեց, որ վարչապետը կարող է ընտրարշավ անցկացնել առանց պաշտոնը թողնելու: Պարոն Սարգսյանն իր պաշտոնական դիրքի շնորհիվ ստացավ լրացուցիչ լուսաբանում եւ քարոզարշավի առավելություն»: Օգտվելով Գերդ Արենսից, բայց ավելի առաջ գնալով, Ջոն Պրեսկոտն ապրիլի 14-ի իր զեկույցում հայտարարում է. «Քարոզարշավի հակասության գլխավոր կետը Սերժ Սարգսյանի որոշումն էր՝ որպես թեկնածու գրանցվելուց հետո պահպանել վարչապետի պաշտոնը: **Թեեւ, ըստ օրենքի, նա իրավունք ուներ այդպես վարվելու** (ընդգծ. Լ.Տ.-Պ.), սակայն այդ որոշումը նրան ընտրարշավային անարդար առավելություն ընձեռեց»: Ցավալի է, որ դիտորդական առաքելությունների հարգարժան ղեկավարները զլացել են ընթերցել ՀՀ ընտրական օրենսգրքի 78.1 հոդվածը, որում հստակորեն նշված է, որ վարչապետը միայն մեկ հանգամանքում կարող էր, որպես թեկնածու գրանցվելուց հետո, շարունակել իր պաշտոնավարությունը, այն է՝ եթե օժտված լիներ ՀՀ նախագահի պաշտոնակատարի կարգավիճակով: Իսկ հաջորդ կոպիտ սխալը տեղ է գտել Ժորժ Կոլոմբիեի եւ Ջոն Պրեսկոտի ապրիլի 15-ի համատեղ զեկույցում, որում նշված է, թե Սահմանադրական դատարանն իբր «հերքել է Լեւոն Տեր-Պետրոսյանի փաստարկն այն մասին», որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր նիստեր գումարել եւ վճիռ կայացնել Արտակարգ դրության պայմաններում: Զեկույցի հեղինակներն, ակնհայտաբար, տեղյակ չեն, որ Սահմանադրական դատարանը ոչ թե հերքել է իմ փաստարկը, այլ, խուսափելով պատասխանատվությունից, պարզապես անտեսել է այն:

Այս բոլոր քննադատությունները, սակայն, ոչինչ չարժեն փաստաթղթից-փաստաթուղթ թափառող այն չարաբաստիկ ձեւակերպման համեմատ, որ «Հայաստանի Հանրապետության նախագահի փետրվարի

19-ի ընտրությունները հիմնականում անցկացվել են ԵԱՀԿ-ի եւ Եւրոխորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների եւ չափանիշների համաձայն»: Սոսկ այս մեկ անզգույշ նախադասությամբ ԵԱՀԿ-ի «Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի» դիտորդական առաքելությունը, փաստորեն, միանգամից եւ անվերապահորեն լեգիտիմացրեց Հայաստանում անցկացված խայտառակ ընտրությունները: Դրանից ոգեւորված, Հայաստանի իշխանությունները ոչ միայն վիժեցրին ձայների վերահաշվարկի եւ ընտրախախտումների դատական քննության գործընթացները, այլեւ բողոքի խաղաղ ցույցերը որակելով որպես «իշխանության ապօրինի զավթման փորձ», վերջիվերջո կազմակերպեցին մարտի 1-ի արյունոտ սադրանքը:

Արեւմուտքն, այսպիսով, բավարարվեց հայաստանյան իրադարձություններին վերաբերող արտաքուստ խիստ, բայց իրականում դատարկ ու անպատասխանատու հայտարարություններով, կամա թե ակամա նպաստելով հանցագործ իշխանությունների վերարտադրությանը: Եւրոպական կազմակերպությունները, առաջնորդվելով քաղաքական նկատառումներով եւ երկակի ստանդարտներով, բռնեցին ոչ թե ժողովրդավարության, ազատության եւ իրավական պետության գաղափարներով տոգորված Հայաստանի նոր քաղաքացիական հասարակության, այլ անօրինական վարչախմբի կողմը: Առերեւույթ կայունության ապահովման շահագրգռությամբ, բայց ծածկաբար Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում Հայաստանի դիրքերը թուլացնելու նպատակով, Արեւմուտքը նախընտրեց մեր երկրում ունենալ խոցելի լեգիտիմությամբ օժտված բռնապետություն, քան ժողովրդի վստահությունը վայելող արժանապատիվ իշխանություն:

Ափսոսանքով, բայց միաժամանակ սառնասրտորեն պետք է արձանագրել, որ Եւրոպական կազմակերպությունները հանդուրժեցին Հայաստանում անցկացված խայտառակ ընտրությունները՝ ինչ-որ չափով նաեւ նպաստելով այդպիսի ընտրությունների կայացմանը: Եւրոպական կազմակերպությունները որոշ առումով հանդուրժեցին նաեւ մարտի 1-ի արյունահեղությունը՝ այն համարելով ոչ թե որպես վարչախմբի կիրառած վայրագ բռնության, այլ ընդդիմության եւ ոստիկանության միջեւ տեղի ունեցած բախման արդյունք: Եթե այդ կազմակերպությունները հանդուրժեն նաեւ այն, որ այդ աններելի ոճրագործության հետաքննու-

թյունը վարեն դրա պատասխանատվությունը կրող իշխանությունները, ապա, որեւէ կասկած չի կարող լինել, որ նրանք վերջնականապես կկորցնեն իրենց վարկը Հայաստանում: Եւրոպական կազմակերպությունների նկատմամբ հայ ժողովրդի վստահության թեկուզ մասնակի վերականգնումը կախված է նրանից, թե ինչպիսի հաստատակամություն եւ հետեւողականություն կդրսեւորի «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովը» ապրիլի 17-ին ընդունած իր բանաձեւի պահանջների կատարման գործում:

Հասարակության պառակտում, թե՞ միավորում

Թե՛ միջազգային կազմակերպությունները, թե՛ քաղաքագիտական շրջանակները, եւ թե՛ լրագրողներից շատերը խոր անհանգստություն են արտահայտում ետընտրական շրջանում Հայաստանում տիրող հասարակական պառակտվածության առթիվ, եւ որպես դրա հաղթահարման ամենաբուժիչ դեղամիջոց առաջարկում կառուցողական երկխոսությունը քաղաքական ուժերի միջեւ: Առաջին հայացքից՝ երկխոսության առաջարկը միանգամայն բանական է թվում, քանի որ, ինչպես ասում են, քաղաքականությունը փոխզիջման արվեստն է: Սակայն հարց է առաջանում՝ ճի՞շտ է, արդյոք, երկխոսության առաջարկի այն ելակետը, թե իբր Հայաստանի հասարակությունը պառակտված է: Եթե դատելու լինենք ընտրությունների արդյունքների պաշտոնական տվյալներից, ապա, կարծես-թե, պատասխանը միայն դրական կարող է լինել, քանի որ «հաղթած» թեկնածուն ստացել է 53%, իսկ ընդդիմության թեկնածուները՝ 47%: Մի բան է, սակայն, պարզ թվաբանությունը, բոլորովին մի այլ բան՝ նրա տակ թաքնված իրականությունը:

Պարադոքսն այն է, որ հասարակության պառակտվածության թեզի հետ համաձայն չեն ոչ միայն Համաժողովրդական շարժման ներկայացուցիչները, այլեւ իշխանությունների շուրջ համախմբված ուժերը: Իշխանությունների համոզմունքը կառուցված է տարրական հաշվարկի վրա: Ըստ նրանց, քանի որ քվեների շուրջ 18 եւ 6 տոկոս ստացած երկու թեկնածուներ միացել են իշխող կոալիցիային, դա նշանակում է, որ իրենք ներկայացնում են հասարակության 77%-ը, հետեւաբար խնդիր ունեն ընդամենը 21.5% ներկայացնող անհաշտ ընդդիմության

հետ, որին քաղաքական հալածանքների եւ ագրեսիվ քարոզչության միջոցով չեզոքացնելը լուրջ խոչընդոտ չպետք է համարել: Այլ հարց է, թե որքանով է առաջին հայացքից համոզիչ թվացող այս տրամաբանությունը համապատասխանում իրականությանը: Նշված երկու անձնավորությունները՝ Վահան Հովհաննիսյանը եւ Անվտանգության խորհրդի քարտուղարը (այսուհետեւ հապավված՝ ԱԽՔ) ընտրություններում հանդես են եկել որպես ընդդիմադիր թեկնածուներ, ինչը նշանակում է, որ նրանց օգտին քվեարկած քաղաքացիները բոլորովին չեն ենթադրել, որ իրականում ձայն են տալիս Սերժ Սարգսյանին, թեեւ այդ մասին մենք ժամանակին ահազանգել ենք: Թե՛ Վահան Հովհաննիսյանը, թե՛ ԱԽՔ-ը ընտրությունների հաջորդ օրը հայտարարեցին, որ դրանք կեղծված են, հետեւաբար իրենք չեն ընդունում դրանց արդյունքները: Ավելին, ի նշան բողոքի, Հովհաննիսյանը հրաժարվեց Ազգային ժողովի փոխնախագահի պաշտոնից, իսկ ԱԽՔ-ի զինակից, պատգամավոր Հեղինե Բիշարյանը կեղծված ընտրությունների դեմ ցասումնալից ելույթով հանդես եկավ Համաժողովրդական շարժման կազմակերպած հանրահավաքում:

Թե ինչ տեղի ունեցավ հետո, արդեն վերաբերում է ոչ թե քաղաքականության, այլ բարոյականության ոլորտին: Բայց քանի որ ես խորշում եմ բարոյախոսությունից (շեշտում եմ՝ ոչ թե բարոյականությունից, այլ բարոյախոսությունից), ապա զերծ կմնամ մարդկանց վարքը գնահատելուց, բավարարվելով սոսկ փաստերի արձանագրմամբ: Թեեւ Վահան Հովհաննիսյանը եւ ԱԽՔ-ը, ընդունելով հանդերձ ընտրությունների կեղծված լինելու իրողությունը, այնուամենայնիվ միացան Սերժ Սարգսյանին, դա դեռեւս չի նշանակում, որ վերջինիս միացավ նաեւ նրանց ընտրազանգվածը: Ընդհակառակը, դիտարկումները ցույց են տալիս, որ Հովհաննիսյանի եւ մանավանդ ԱԽՔ-ի թեկնածությունը պաշտպանած քաղաքացիները, հիասթափված իրենց առաջնորդների անվայել պահվածքից, այսօր ավելի լարված են Սերժ Սարգսյանի դեմ, քան նույնիսկ ընտրությունների ժամանակ: Իսկ եթե սրան գումարենք նաեւ այն, որ մարտի 1-ի արյունահեղությունից հետո Սերժ Սարգսյանն ատելի է դարձել անգամ իր ընտրազանգվածի մեծամասնության համար, ապա հասարակության 77%-ը ներկայացնելու մասին իշխանությունների մոտ ձեւավորված պատկերացումը հօդս է ցնդում:

Իշխանություններին համար դժվար է ընդունել, իսկ միջազգային հանրության համար դժվար է պատկերացնել, որ 1988թ. Ղարաբաղյան շարժումից եւ 1991թ. Անկախության հանրաքվեից ի վեր Հայաստանի հասարակությունը երբեւէ այնքան միասնական չի եղել, որքան հիմա: Եթե այնուամենայնիվ անհնար է խուսափել պառակտում բառից, ապա պետք է համաձայնել, որ պառակտումը ոչ թե հասարակության ներսում է, այլ հասարակության եւ իշխող վարչախմբի միջեւ: Իրականում դա պառակտում էլ չէ, այլ ահռելի մի վիհ, որ գոյացել է ժողովրդի մեծամասնության եւ իշխանությունը կեղծիքներով ու արյունահեղությամբ զավթած փոքրաթիվ մարդկանց միջեւ: Հասարակության միասնականությունն, ըստ այդմ, արտահայտվում է ներկա վարչախմբի լիակատար մերժման եւ նրանից շուտափույթ կերպով ազատվելու վճռականության իրողություններում: Սա նոր, ազատատենչ, անարդարություն չհանդուրժող, իր իրավունքները լիովին գիտակցող քաղաքացիական հասարակություն է, որի պատկերացումները պետության, ազգային շահի, ժողովրդի բարօրության եւ արժեքային համակարգի մասին շեշտակիորեն տարբերվում են վարչախմբի պատկերացումներից: Հասարակությունը պատրաստակամ է կերտել ազատ, ժողովրդավարական, իրավական պետություն, խնդիր դնելով՝ հավասար հնարավորություններ ընձեռել բոլոր քաղաքացիներին,– ապահովել ազատ մրցակցությունը,– երաշխավորել սեփականության անձեռնմխելիությունը,– կազմաքանդել ձեւավորված կոռուպցիոն համակարգը,– հավասարաչափ բաշխել հարկային բեռը,– վերացնել մենաշնորհային արտոնություններ շնորհելու սովորույթը,– դադարեցնել վիճակագրական աճպարարությունները,– հստակեցնել արտաքին քաղաքականության սկզբունքները,– միջոցներ ձեռք առնել երկրի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարման ուղղությամբ,– քաղաքական կամք դրսեւորել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում,– հաշտ ու խաղաղ ապրել բոլոր հարեւանների հետ եւ այլն: Եթե Հայաստանի ներկա իշխանություններն ու միջազգային կազմակերպությունները չգիտակցեն այս հասարակության իրական ներուժն ու ձգտումները, ապա նրանք կարող են մեծամեծ սխալներ գործել եւ վտանգել երկրի կայունությունը:

Հասարակության եւ վարչախմբի միջեւ առկա վտանգավոր լարվածության լիցքաթափման միակ միջոցն, ակնհայտորեն, արտահերթ նա-

խազահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացումն է: Սակայն գիտակցելով, որ Հայաստանի ներկա իշխանություններն ու Եւրոպական կազմակերպություններն առայժմ նման հանգուցալուծման պատրաստ չեն, գիտակցելով նաեւ, որ գաղափարի հասունացումը որոշ ժամանակ է պահանջում, մենք՝ Համաժողովրդական շարժման ներկայացուցիչներս, պարտավոր ենք հստակեցնել մեր առաջիկա քայլերը եւ հասարակությանը գործողությունների խորապես մշակված ծրագիր ներկայացնել: Հաջորդ բաժնում ես կփորձեմ Կոնգրեսի ուշադրությունը հրավիրել այս հարցերի հետ կապված որոշ նախնական առաջարկների վրա:

Համաժողովրդական շարժման առաջիկա խնդիրները

Համաժողովրդական շարժման գործունեության ելակետը ետընտրական շրջանում հայաստանյան քաղաքական ուժերի նոր հարաբերակցության ձեւավորումն է: Անկախությունից ի վեր Հայաստանի քաղաքական դաշտը երբեք այնքան հստակ չի եղել, որքան հիմա: Մի կողմում ապօրինաբար իշխանությունը զավթած վարչախումբն ու նրան սատարող փոքրաթիվ կուսակցություններն են, մյուս կողմում՝ հասարակության մեծամասնության համակրանքն ու աջակցությունը վայելող Համաժողովրդական շարժումը: Ուրիշ ընդդիմություն, ըստ էության, գոյություն չունի, ինչը մեզ համար միաժամանակ թե՛ պատվաբեր է, թե՛ պարտավորեցնող:

Համաժողովրդական շարժումը, սակայն, ստեղծվել էր կոնկրետ խնդրի շուրջ, որպես նախընտրական դաշինք, որի գոյությունը, հետեւաբար, այսօր իներցիոն երեւույթ կամ անախրոնիզմ կարող է թվալ: Ուստի մենք, նախեւառաջ, կանգնած ենք Շարժմանը նոր բովանդակություն հաղորդելու մարտահրավերի առջեւ: Կարծում եմ, միանգամայն ակնհայտ է, որ այդ նոր բովանդակությունն այլ բան չի կարող լինել, քան հայաստանյան իրականության հետ չհաշտվող հասարակության իղձերի եւ տրամադրությունների հունավորումը: Կարծում եմ, նույնքան ակնհայտ է նաեւ, որ այդ խնդրի լուծման համար երկրորդական չէ Շարժումն օժտել կազմակերպական նոր ձեւով եւ նոր անվանմամբ:

Քանի որ վերջին շրջանում շատերիս համար բավականին հոգեհարազատ է դարձել «կոնգրես» բառը, ինձ նպատակահարմար է թվում Համաժողովրդական շարժումը վերանվանել «Հայ ազգային կոնգրես» (հապավված՝ ՀԱԿ), նկատի ունենալով ինչպես համաշխարհային պատմության մեջ նմանատիպ անվանումներով հայտնի ազգային-ժողովրդավարական շարժումների փառապանծ ավանդույթները, այնպես էլ այդ շարժումներին բնորոշ գաղափարախոսական եւ սոցիալական բազմաշերտ ներկայացուցչականությունը: Ինչ վերաբերում է «Հայ ազգային կոնգրեսի» կազմակերպական ձեւին, ապա, ինձ թվում է, առայժմ կարելի է պահպանել Համաժողովրդական շարժման կառուցվածքն ու ձեւավորված մարմինները՝ Քաղաքական խորհուրդը եւ Գործադիր վարչությունը: Ըստ այդմ, «Կոնգրեսի» ստեղծումը Շարժման անդամ-կուսակցությունների միաձուլում չի նշանակում. վերջիններս շարունակելու են պահպանել իրենց ինքնուրույնությունն ու կառուցվածքը, ինչպես նաեւ անկախ քաղաքական գործունեություն ծավալելու իրավունքը: Մյուս կողմից, նման բազմազանությունը չի նշանակում նաեւ, որ խոսքը վերաբերելու է մի արհեստական, խայտաբղետ կազմակերպության, քանի որ մեզ բոլորիս միավորում է մի այնպիսի վեհագույն գաղափար, որպիսին ազատ, ժողովրդավարական, իրավական, բարգավաճ պետության կերտումն է: Չի բացառվում, անշուշտ, որ համատեղ գործունեության եւ գաղափարախոսական դիրքորոշումների մերձեցման արդյունքում «Կոնգրեսը» հետագայում վերածվի կուռ կառուցվածքով օժտված կենտրոնամետ կուսակցության: Չի բացառվում նաեւ, որ այդ կուսակցությունն իր գործունեությունը հիմնականում ծավալի ստվերային կառավարության միջոցով, ինչի առավելությունները հայտնի են ողջ քաղաքակիրթ աշխարհին:

«Հայ ազգային կոնգրեսի» ստեղծման գաղափարը, բնականաբար, անակնկալ է ձեզանից շատերի համար, սակայն խնդրում եմ՝ այն ընդամենը որպես նախնական առաջարկ եւ հետագա քննարկումների առարկա համարել: Թերեւս արժե այդ հարցին առավել հանգամանորեն անդրադառնալ մեր հաջորդ հավաքում, որի գումարման մասին ձեզ ժամանակին տեղյակ կպահվի: Անկախ, սակայն, կազմակերպական ձեւափոխումից ու վերանվանումից, ակնհայտ է, որ Համաժողովրդական շարժումը, հասարակական լայն աջակցության շնորհիվ, մշտական եւ

վճռորոշ դերակատարություն է ունենալու Հայաստանի ապագա բոլոր քաղաքական գործընթացներում, այդ թվում՝ միասնական թեկնածուներով կամ ընդհանուր ցուցակներով հանդես գալով բոլոր մակարդակների ընտրություններում:

Ինչ վերաբերում է Շարժման ընթացիկ խնդիրներին, ապա դրանց անդրադառնալուց առաջ հարկ եմ համարում շեշտել հետեւյալը: Մենք մշտապես առաջնորդվել եւ այսուհետեւ եւս առաջնորդվելու ենք քաղաքական պայքարի ընդունված կանոններով, գործել եւ այսուհետեւ եւս գործելու ենք բացառապես օրենքի շրջանակներում՝ ի տարբերություն իշխող վարչախմբի, որն այդ կանոններին ու գործելակերպին սիստեմատիկաբար հակադրել եւ շարունակում է հակադրել ժողովրդավարական ազատությունների սահմանափակումը, ագրեսիվ հակաքարոզչությունը, վարչա-տնտեսական ճնշումները, զանգվածային ձերբակալությունները եւ վերջապես, ֆիզիկական բռնությունը, որի բարձրակետը հանդիսացավ մարտի 1-ի արյունահեղությունը:

Չընդունելով հանդերձ այդպիսի բիրտ մեթոդներով իշխանությունը զավթած վարչախմբի լեգիտիմությունը, մենք, այնուամենայնիվ, հաշվի առնելով ռեալ քաղաքական գործոն լինելու նրա հանգամանքը, պատրաստ ենք երկխոսություն սկսել նրա հետ, սակայն այն դիտելով ոչ թե որպես կողմերից մեկին ծնկի բերելու միջոց, այլ որպես երկրում իրական բարեփոխումներ իրականացնելու եւ քաղաքական գործունեության նորմալ դաշտ ստեղծելու պատեհություն: Դրա համար անհրաժեշտ է, որ Հայաստանի կառավարությունը նախեւառաջ լիապես կատարի «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի» ապրիլի 17-ի թիվ 1609 բանաձեւի՝ որպես երկխոսության նախապայման ներկայացված պահանջները, որոնք են.

– մարտի 1-ի իրադարձությունների անկախ, թափանցիկ եւ վստահելի հետաքննությունը,

– քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով կալանավորված անձանց անհապաղ ազատ արձակումը,

– «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում Ազգային ժողովի կողմից վերջերս կատարված փոփոխությունների եւ լրացումների անհապաղ ուժը կորցրած ճանաչումը՝ համապատասխան Վենետիկի հանձնաժողովի առաջարկների:

Բանաձեւը նաեւ ավելացնում է, որ «եթե վերոհիշյալ պայմանները չապահովվեն, եւ եթե Հայաստանում քաղաքական ուժերի միջեւ լրջորեն չծավալվի բաց երկխոսություն 8-րդ կետում նշված բարեփոխումների վերաբերյալ, ապա կասկածի տակ կհայտնվի Հայաստանի՝ որպես Եւրոպայի խորհրդի անդամ-պետության վստահելիությունը: Ուստի Վեհաժողովը պետք է 2008թ. հունիսյան նստաշրջանի բացման ժամանակ դիտարկի Վեհաժողովում Հայաստանի պատվիրակության՝ քվեարկելու իրավունքները կասեցնելու հնարավորությունը»:

Ինչպես տեսնում ենք, վերջապես խոսքից գործի անցնելով, «Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովը» սպառնում է Հայաստանի իշխանությունների նկատմամբ պատժամիջոց կիրառել, ինչը ողջունելի է: Սակայն ողջունելով հանդերձ վարչախմբի դեմ ուղղված քաղաքական պատժամիջոցները, մենք խորապես անհանգստացած ենք Հայաստանի դեմ ծրագրվող տնտեսական պատժամիջոցների վերաբերյալ արված հայտարարություններից, քանի որ դրանցից տուժելու է ոչ թե վարչախումբը, այլ առաջին հերթին՝ մեր ժողովուրդը: Ուստի օգտագործելով առիթը, Համաժողովրդական շարժման անունից ես դիմում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի վարչությանը, խնդրելով զերծ մնալ Հայաստանին հատկացվող օգնությունները նվազեցնելու կամ դադարեցնելու մտադրությունից:

Դա կարեւոր ենք համարում, նկատի ունենալով, մանավանդ, քաղաքականից բացի՝ նաեւ երկրում հասունացող սոցիալական լարվածությունը, որն արդյունք է սպառողական ապրանքների գների կտրուկ թանկացման եւ հարկային բեռը գլխավորապես մանր ու միջին բիզնեսի ուսերին բարդելու պրակտիկայի: Որպես հիրավի Համաժողովրդական շարժում մենք պարտավոր ենք ուղղորդել ոչ միայն հասարակության քաղաքական, այլ նաեւ սոցիալական դժգոհությունները, մի կողմից՝ դրանց արմատները վերացնելու, իսկ մյուս կողմից՝ սոցիալական բունտի վտանգը կանխելու նպատակով:

Շարունակելով սկզբունքային եւ վճռական պայքարն ընդդեմ հակաժողովրդական վարչախմբի, միաժամանակ մենք պարտավոր ենք նաեւ անել ամեն ինչ՝ խուսափելու համար ներքաղաքական ցնցումներից եւ երկրի կայունությանն սպառնացող զարգացումներից, նկատի

ունենալով, առաջին հերթին, այդպիսի իրավիճակից օգտվելուն միտված Ադրբեջանում արտահայտվող տրամադրությունները: Ադրբեջանը պետք է հասկանա, որ ինչպիսի ներքաղաքական վիճակ էլ տիրի մեր երկրում, միևնույն է՝ Ղարաբաղի դեմ ռազմական ոտնձգություն կատարելու պարագայում կհանդիպի հայ ժողովրդի միահամուռ դիմադրությանը: Իսկ այդ դիմադրության առաջին շարքերում, վստահաբար, կհայտնվեն այսօր բանտերում գտնվող մեր ընկերները: Ռազմական վտանգի առաջացման դեպքում ես ինքս կոչով կդիմեմ Համաժողովրդական շարժման մասնակիցներին, խնդրելով ժամանակավորապես դադարեցնել իրենց քաղաքական գործողությունները եւ լծվել հայրենիքի պաշտպանության նվիրական գործին:

Այս ամենը չի նշանակում, սակայն, որ Համաժողովրդական շարժումը համաձայն է կամ հավանություն է տալիս Ղարաբաղի հարցում վերջին տասնամյակի ընթացքում վարչախմբի վարած խայտառակ քաղաքականությանը, որի արդյունքն են ինչպես Հայաստանի լիակատար մեկուսացումն ու տնտեսական զարգացման հեռանկարի բացակայությունը, այնպես էլ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վերջերս ընդունված տխրահռչակ բանաձեւը: Ուստի մենք Հայաստանի իշխանություններից պահանջում ենք անհրաժեշտ քաղաքական կամք դրսեւորել եւ, որքան հնարավոր է արագ, ձեռնարկել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ռեալ գործընթացի սկզբնավորմանը:

Ժամանակի սղության պատճառով ես անդրադարձա Համաժողովրդական շարժման առջեւ կանգնած բազմաթիվ խնդիրներից միայն մի քանիսին՝ դրանք համարելով ամենակարեւորը: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա դրանք ձեզ կներկայացվեն մեր ընթացիկ գործունեության եւ հրապարակային միջոցառումների ընթացքում: Օրվա ամենահրատապ խնդիրն, անտարակույս, անխտիր բոլոր քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակումն է, առանց որի՝ երկխոսության կամ հասարակական համերաշխության վերականգնման մասին խոսք անգամ չի կարող լինել: Իսկ որպես ընդհանուր ռազմավարություն, ակնհայտ եւ անկասկած է, որ մենք օգտագործելու ենք օրինական բոլոր միջոցները՝ հանցավոր վարչախմբից ազատվելու եւ երկրի սահմանադրական կարգը վերականգնելու նպատակով: Մի բան պետք է պարզ լինի թե՛ Հայաստանի իշխանությունների, թե՛ միջազգային հան-

ության համար, այն է՝ փետրվարյան վերջին տասնօրյակի ազատության վայելքը ճաշակած արժանապատիվ հասարակության հաղթական երթն անկասելի է:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 3 մայիսի, 2008թ.: «168 ժամ», 5 մայիսի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ 2008 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ

Սիրելի բարեկամներ, շատ սիրելի բարեկամներ,

Ետընտրական թոհուբոհում բոլորովին մոռացության է մատնվել պատմական այն նշանակալի իրողությունը, որ վերջապես ավարտվել է Ռոբերտ Քոչարյանի փառահեղ գահակալության տասնամյակը: Այդ բացը լրացնելու համար՝ ես կփորձեմ ներկայացնել Քոչարյանի նախագահական շրջանի գործունեության սեղմ հաշվեկշիռը՝ ավելի համակողմանի բնությունը թողնելով ապագային:

Եւ այսպես, նախագահության տասը տարիների ընթացքում Ռոբերտ Քոչարյանը՝

– կեղծ տեղեկանքի եւ ապօրինի ընտրությունների միջոցով բազմեց Հանրապետության նախագահի աթոռին,

– 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության շնորհիվ ամրապնդեց իր իշխանությունը,

– խափանեց այդ ոճրագործության լիակատար բացահայտումը,

– պարտակեց տասնյակ այլ աղմկոտ սպանություններ,

– ոչնչացրեց օրենսդիր եւ դատական իշխանությունների անկախությունը,

– ստեղծեց իրական աշխարհի հասկացություններով առաջնորդվող ավազակապետական համակարգ,

– կեղծեց իր օրոք կայացած բոլոր ընտրություններն ու սահմանադրական հանրաքվեն,

– վերացրեց խոսքի, մամուլի, հավաքների ազատությունը,

– վարչախմբի վերահսկողության տակ դրեց բոլոր էլեկտրոնային լրատվամիջոցները,

– փակեց «Ա1+» եւ «Նոյան տապան» հեռուստակայանները եւ հարկային տեռորի ենթարկեց «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունը,

– սիստեմատիկաբար ուռճացրեց Հայաստանի տնտեսական զարգացման վիճակագրական տվյալները,

– Հայաստանը ենթարկեց լիակատար քաղաքական եւ տնտեսական մեկուսացման,

– կոռուպցիան, խնամիությունը, հովանավորչությունը, ռեկետը վերածեց պետական քաղաքականության,

– ոտնահարեց շուկայական տնտեսության երեք հիմնական սկզբունքները՝ հավասար հնարավորությունների ընձեռում, ազատ մրցակցության ապահովում եւ սեփականության անձեռնմխելիության երաշխավորում,

– համարյա ողջ պետական գույքը եւ պահուստային հողատարածքները խորհրդանշական գներով վաճառեց իր մերձավորներին,

– հարկային բեռը բարդեց մանր ու միջին գործարարների վրա՝ ըստ էության վերացնելով 90-ական թվականներին ձեւավորված միջին խավը,

– խոշոր գործարարներին ազատեց օրինական հարկեր վճարելու պարտավորությունից,

– դրամի արհեստական արժեւորման հետեւանքով կործանեց արտահանող արդյունաբերությունը եւ հսկայական գերշահույթներ ապահովեց ներմուծման բնագավառում մենաշնորհային դիրք ունեցող ընկերությունների համար,

– ծաղկեցրեց իր ընտանեկան բիզնեսը եւ դիզեց հսկայական հարստություն,

– տնտեսական աճի ի ցույց դրվող երկնիշ թվերի եւ խաղաղության պայմաններում երկրի բնակչությունը նվազեցրեց գաղթի ճամփան բռնած կես միլիոն մարդով,

– Ղարաբաղից Հայաստան տեղափոխեց շուրջ 15 հազար մարդ,

– կորցրեց Ղարաբաղի հարցի բարենպաստ լուծման մի քանի առիթներ,

– Ղարաբաղը դուրս մղեց բանակցությունների գործընթացից,

– Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը վերածեց հայ-ադրբեջանական տարածքային վեճի,

– սերունդներին կտակեց իր ղարաբաղյան քաղաքականության պսակը հանդիսացող ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի խայտառակ բանաձեւը,

– ահագնացրեց Ղարաբաղում պատերազմի վերսկսման վտանգը,

– խորացրեց հայ-թուրքական հարաբերություններում առկա լարվածությունը,

– շնչին պարտի դիմաց իր նախաձեռնությամբ Ռուսաստանին հանձնեց Հայաստանի ողջ էներգետիկ համակարգը,

– եւ վերջապես, իր ազգանվեր գործունեությունն ավարտեց Երեւանի կենտրոնում կատարած արյունահեղությամբ, արտակարգ դրության հաստատմամբ եւ զանգվածային ձերբակալություններով ու բանտարկություններով:

Արդար լինելու համար, սակայն, հարկ է պատշաճը մատուցել Քոչարյանին եւ բարեխղճորեն արձանագրել նաեւ նրա կատարած դրական գործերը.

– պաշտոնավարման տասը տարիների ընթացքում նա կտրեց հինգ կիլոմետր կարմիր ժապավեն, շուրջ երեք հարյուր հոգու շնորհեց գեներալի կամ վաստակավոր եւ ժողովրդական արտիստի կոչումներ, մոտ 10 հազար մարդու պարգեւատրեց շքանշաններով ու մեդալներով,

– նոր աշխատատեղեր ստեղծելու ազնիվ մղումով կրկնապատկեց փոխնախարարների թիվը, եռապատկեց նախագահի, կառավարության եւ նախարարությունների աշխատակազմը, հնգապատկեց պետական պաշտոնյաների պահպանության վարչության ծառայողների քանակը,

– նշանակալի ավանդ ներդրեց հայկական մշակույթի զարգացման գործում, մասնավորապես՝ Կոմիտասի, Խաչատրյանի, Սպենդիարյանի երաժշտության փոխարեն ռադիո-հեռուստատեսային եթերը լցնելով «բարձրաճաշակ» արեւելածոր մեղեդիներով ու պորտապարերով,

– մեծապես հարստացրեց ոսկեղենիկ հայոց լեզվի բառապաշարը իր ստեղծած անզուգական նորաբանություններով՝ «վիզկապ, մասանդրա, ծյունինգ, մտնելորտ, անթռաշ, գնհատել» եւ այլն,

– ժողովրդին զվարճացրեց հրաշալի անեկդոտներով՝ «կլիզմայի», «վատ պարողին խանգարող հանգամանքների», «փղերի ու մոսկաների», «մեջքից ներքև գտնվող փափուկ տեղի մասին»,

– հարմար բնորդ լինելու հանգամանքով անսահմանորեն ճոխացրեց արդի հայ ծաղրանկարչական արվեստը:

Այս անվերջանալի թվացող շարանը ներկայացնում է դեռեւս միայն Ռոբերտ Քոչարյանի հայտնի գործերը: Նրա ծածուկ գործերի նույնքան անվերջանալի շարանը մի օր բացահայտվելու է պետական արխիվներում եւ հանրապետական ու միջազգային դատարաններում:

Պատմությունը, սակայն, մոռանալու է նրա թե՛ հայտնի, թե՛ ծածուկ գործերի մանրամասները: Հանրագումարի բերելով մեր հերոսի կամ «վոյինի» գործունեությունը՝ պատմությունը նրան հիշելու եւ բնութագրելու է ընդամենը մեկ նախադասությամբ, այն է. «Ռոբերտ Քոչարյան անունով ոմն բռնազավթիչ, երկիցս ապօրինաբար տիրելով հանրապետության նախագահի աթոռին, իր գահակալությունն սկսեց եւ ավարտեց այրունահեղությամբ, Հայաստանը վերածեց ավազակապետության եւ ի չիք դարձրեց Ղարաբաղի հարցի հայանպաստ լուծման հնարավորությունը»:

* * *

Իսկ այժմ տեսնենք, թե ինչ ժառանգություն է թողել Ռոբերտ Քոչարյանն իր հաջորդին.

– մինչեւ վերջ կոռուպցիայի մեջ թաթախված, նեխած, փտած կառավարման համակարգ,

– իշխանության եւ տնտեսության բոլոր լծակներին տիրող քրեական օլիգարխիա,

– քաղաքականապես եւ տնտեսապես մեկուսացված պետություն,

– ճնշիչ, աղճատված, հուսալքող բարոյահոգեբանական մթնոլորտ,

– արտասահմանյան դրամական փոխանցումների հաշվին գոյատեւող ժողովուրդ,

– քաղբանտարկյալներով լի բանտեր ու մեկուսարաններ,

– ոստիկանական ու հարկային տեռորի ենթարկվող քաղաքացիներ,

– իշխանությունների լեգիտիմությունը չընդունող, նրանց հանցավորությունը չհանդուրժող հասարակություն,

– տնտեսական զարգացման անմխիթար հեռանկար,

– ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վտանգներով հղի բանաձև:

Ստանալով այսպիսի ծանր ժառանգություն՝ թվում էր, թե Սերժ Սարգսյանն իր պաշտոնավարության առաջին իսկ օրվանից պետք է կտրուկ միջոցներ ձեռնարկեր՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու եւ հասարակական դժգոհության ալիքը մեղմելու ուղղությամբ: Քանի որ դա տեղի չի ունենում, մնում է ենթադրել, որ կա՛մ Սերժ Սարգսյանը դեռեւս դրության տերը չէ, եւ երկիրը շարունակում է կառավարել Ռոբերտ Քոչարյանը, կա՛մ էլ, որ լինելով իր նախորդի օրոք ստեղծված ավազակապետական համակարգի առանցքային դեմքերից մեկը՝ Սարգսյանն ի վիճակի չէ դուրս գալ այդ համակարգի փոխպարտավորիչ կապանքներից:

Սերժ Սարգսյանը կանգնած է քաղաքական վարքագծի որդեգրման երկընտրանքի առջեւ: Նա ունի երկու ճանապարհ, որոնցից մեկի ընտրությունը կախված է պետականության վերաբերյալ իր ունեցած հայեցակարգային մոտեցումներից: Եթե ելակետը երկրի եւ ժողովրդի բարօրությունն ու պետական շահն է, ապա Սարգսյանը օր առաջ պարտավոր է վճռականորեն սահմանազատվել քոչարյանական ավազակապետությունից, անմիջապես ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին, բացահայտել եւ պատժել մարտի 1-ի ոճրագործության իրական պատասխանատուներին, կազմել տեխնոկրատներից կազմված պրոֆեսիոնալ կառավարություն, դադարեցնել ոստիկանական եւ հարկային տեռորը, վերացնել մենաշնորհային արտոնությունները, հարկային դաշտ բերել անխտիր բոլոր խոշոր գործարարներին, ապահովել դատարանների լիակատար անկախությունը, երաշխավորել խոսքի, մամուլի, հավաքների ազատությունը, իրական քայլեր ձեռնարկել ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ եւ այսպիսի դրական բազաժով հաստատել իր լեգիտիմությունը արտահերթ նախագահական ընտրություններում: Իսկ եթե ելակետը ապօրինաբար տիրացած անձնական իշխանության պահպանումն է, ապա Սերժ Սարգսյանը պետք է կտրականապես հրաժարվի կիսամիջոցներից եւ, հետեւելով Սադամ Հուսեյնի ու Մուգաբեի օրինակին, երկրում հաստա-

տի բացառնակ դիկտատուրա, այն է՝ դաժանորեն ճզմի այլախոհության եւ հասարակական դժգոհության ցանկացած դրսեւորում, բանտերը լցնի մեր ժողովրդի ամենաարժանի զավակներով եւ ազգային հարստության տնօրինումը վերջնականապես հանձնի բրեական աշխարհին: Տպավորություն է ստեղծվում, որ Սերժ Սարգսյանը, չունենալով հասարակական հենարան, փորձում է ընտրել 2-րդ ճանապարհը, ինչի վկայությունն են պաշտոնավարման սկզբնավորումից ի վեր նրա կատարած բոլոր քայլերը.

– Սարգսյանը շարունակում է անարձագանք թողնել քաղբանտարկյալներին անհապաղ ազատ արձակելու միջոցով ներքաղաքական լարվածությունը թուլացնելու եւ այդ հիման վրա կառուցողական երկխոսություն սկսելու՝ ընդդիմության առաջարկը,

– ոչ մի քայլ չի ձեռնարկվել Համաժողովրդական շարժման ակտիվիստների եւ համակիրների նկատմամբ սանձազերծված ոստիկանական եւ հարկային տեռորը դադարեցնելու ուղղությամբ,

– ոչ մի տեղաշարժ չի արձանագրվել հավաքների ազատության ապահովման գործում: Սարգսյանն այս տեսակետից յուրատեսակ ռեկորդ է սահմանել՝ շուրջ երեք ամսում արգելելով 45 հանրահավաք: Համեմատության համար արժե նշել, որ ՀՀՇ-ի իշխանության 8 տարիների ընթացքում ոչ մի հանրահավաք կամ երթ չի արգելվել,

– դատարկ ֆրազեոլոգիան եւ սովետական տիպի հանձնաժողովների ձեւավորումը չհաշված՝ որեւէ էական քայլ չի կատարվել կոռուպցիայի դեմ իրական պայքար կազմակերպելու ուղղությամբ:

– Հարկային դաշտ չի բերվել որեւէ խոշոր գործարար,

– բյուջեի համալրման բեռը շարունակում է մնալ մանր եւ միջին ձեռնարկատերերի ուսերին,

– կադրային քաղաքականության բնագավառում մեխանիկական փոխատեղումներից բացի չի կատարվել որեւէ դրական փոփոխություն,

– Սարգսյանը հասարակությանը հաճույք չի պատճառել կամ զարմացրել թեկուզ մեկ արժանավոր կադր նշանակելու կարողությամբ,

– առանձին բրեական գործեր չեն հարուցվել մարտի 1-ի ոճրագործության 10 զոհի փաստի առթիվ: Զոհերի ընտանիքները տուժած եւ նյութական հատուցման սուբյեկտ չեն ճանաչվել, չեն բացահայտվել եւ հրապարակվել մարդասպանների անունները:

Ինչպես առիթ ունեցել եմ նշելու Գյումրիում անցկացված վերջին հանրահավաքում, Սարգսյանի որդեգրած անենկում եւ անհեռանկար ներքին քաղաքականությունը հիմնված է երեք սխալ հաշվարկի վրա.

– առաջին՝ չունենալով ոչ մի հասարակական հենարան՝ իշխանությունները իրենց հույսը դրել են այն բանի վրա, որ համատարած ոստիկանական տեռորի հարկային ճնշումների եւ քրեական տարրերի գործողությունների միջոցով կարող են ահաբեկել ժողովրդին, կոտրել նրա պայքարի կամքն ու վճռականությունը եւ նրան ստիպել դադարեցնել այդ պայքարը,

– երկրորդ՝ նրանց թվում է, որ եթե կարողանան մի քիչ էլ ժամանակ ձգել, ապա ժողովուրդը կհոգնի, կձանձրանա, եւ վերջիվերջո մարդիկ կցրվեն իրենց տները,

– երրորդ սխալը, որ ապակողմնորոշում է Սերժ Սարգսյանին ու նրա շրջապատին, այն է, որ նրանք չեն գիտակցում, թե ինչպիսի հասարակության հետ գործ ունեն:

Երեք դեպքում էլ, սակայն, իշխանություններին մեծագույն հիասթափություն է սպասում: Նախ ապացույցի կարիք չունի, որ մահակները, հրազենի կիրառումը, վիրավորներն ու զոհերը, հազարավոր բերման ենթարկումները, հարյուրավոր ձերբակալությունները, կալանավորումներն ու բանտարկությունները չկարողացան ահաբեկել մեր ժողովրդին: Երկրորդ՝ երեք ամիս շարունակ չդադարող հանրահավաքները, ցույցերը, երթերը, պիկետները, հացադուլները, նստացույցերը եւ մեծ ու փոքր զանգվածային այլ միջոցառումներ ցույց տվեցին, որ ժողովուրդը հոգնելու, ձանձրանալու եւ պայքարից հրաժարվելու տրամադրություն չունի: Եւ երրորդ՝ Հայաստանի ներկա հասարակությունն այլեւս այն անտարբեր ու հնազանդ հասարակությունը չէ, որին իշխանությունները սովոր էին տիրել անցած տասը տարիների ընթացքում, այլ իր իրավունքների համար պայքարի ելած ազատ քաղաքացիների գիտակից հավաքականություն:

Սերժ Սարգսյանի երկընտրանքը կամ հոգեկան տվայտանքները կարող են ծանր նստել թե՛ մեր ժողովրդի, թե՛ պետության ապագայի վրա: Երկրի կառավարման ղեկն ստանձնած անձը պարտավոր է հստակ եւ վճռական դիրքորոշում հանդես բերել եւ իրական գործերով ցույց տալ՝ ժողովրդի՞, թե՞ քրեական օլիգարխիայի հետ է: Նրա դան-

դաղկոտությունը կամ պաշտոնական անգործությունը կարող են հանգեցնել տեւական ապակայունության ու լճացման՝ ժողովրդին ու պետությանն սպառնացող բոլոր անցանկալի հետեւանքներով:

Ժողովրդական շարժումը, անշուշտ, չի կարող հաշվի չառնել վերոշարադրյալ հանգամանքները, բայց պետք է որդեգրի ոչ թե իրավիճակային քաղաքականություն, այլ առաջնորդվի պայքարի սեփական մարտավարությամբ ու ռազմավարությամբ՝ հիմնվելով ինքնուրույն վերլուծությունների եւ հաշվարկների վրա:

Մենք իշխանություններին տվեցինք ժամանակ եւ հնարավորություն՝ լրջորեն մտածել քաղբանտարկյալներին ազատ արձակելու պայմանով կառուցողական երկխոսություն սկսելու մեր առաջարկի վերաբերյալ: Սակայն նրանք չհասկացան կամ սխալ գնահատեցին մեր այդ քայլի դրդապատճառ-մոտիվացիան՝ ըստ երեւույթին դատելով, որ քաղբանտարկյալներին պատանդ պահելով՝ մեզ կհարկադրեն զբաղվել միայն այդ հարցով ու շեղվել շարժման բուն նպատակներից:

Ուստի մենք առաջիկայում որոշ չափով փոխելու ենք մեր մարտավարությունը՝ ձգտելով հուլիս ամսին հասնել հասարակական առավելագույն մոբիլիզացիայի: Շարժումն այդ ընթացքում գործելու է երկու ուղղությամբ.

– առաջին՝ զանգվածային եւ ոչ զանգվածային միջոցառումների, երթերի, պիկետների, նստացույցերի, մարզային հանրահավաքների անցկացում, որի նպատակն է օգոստոսի 1-ի մեր հաջորդ համահանրապետական հանրահավաքի պատշաճ նախապատրաստումը, հանրահավաք, որի ընթացքում ամփոփվելու են Սերժ Սարգսյանի պաշտոնավարման առաջին հարյուր օրերի արդյունքները եւ ներկայացվելու դրանցից բխող մեր հետագա գործողությունների ծրագրերը,

– եւ երկրորդ՝ հիմնարար եւ հետեւողական աշխատանք՝ որպես նախընտրական դաշինք ձեւավորված Համաժողովրդական շարժումը տեւական քաղաքական գործոնի վերածելու, այն է՝ Հայ ազգային կոնգրեսի ստեղծման գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ:

Այս օրվանից շարժումը հանդես է գալու հետեւյալ կտրուկ պահանջներով.

– անհապաղ ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին եւ դադարեցնել ընդդիմության եւ հասարակության դեմ ուղղված քաղաքա-

կան հաշվեհարդարը,

– կտրուկ միջոցներ ձեռնարկել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Միրզոյանի ապօրինի շրջաբերական-հրահանգով ողջ հանրապետությունում մեկ ծավալված քաղաքական հետապնդումները դադարեցնելու նպատակով (ի դեպ, օգտվելով առիթից՝ հանրահավաքի անունից դիմում եմ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանին եւ Ազգային ժողովի պատկան հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանին՝ խնդրելով մանրակրկիտ իրավաբանական գնահատական տալ այդ փաստաթղթին),

– շուտափույթ կերպով բացահայտել եւ դատական կարգով պատժի ենթարկել մարտի 1-ի ոճրագործության բուն պատասխանատուներին, առաջին հերթին՝ Ռոբերտ Քոչարյանին,

– անմիջապես պաշտոններից հեռացնել նախագահական ընտրությունների եւ մարտի 1-ի իրադարձությունների ընթացքում չարաբաստիկ դեր խաղացած, ինչպես նաեւ իրենց գործունեությամբ լիովին վարկաբեկված անձանց՝ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանին, նախագահի աշխատակազմի ղեկավար Հովիկ Աբրահամյանին, գերագույն դատախազ Աղվան Հովսեփյանին, Ազգային անվտանգության ծառայության պետ Գորիկ Հակոբյանին եւ Հանրային հեռուստատեսության խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանին,

– նշված պահանջները չկատարելու եւ մանավանդ մարտի 1-ի ոճրագործության բացահայտումը խափանելու դեպքում՝ օգոստոսի 1-ից սկսած Շարժման գլխավոր կարգախոսը հայտարարել Սերժ Սարգսյանի հրաժարականը եւ արտահերթ նախագահական ընտրությունների անցկացումը:

Օգոստոսի 1-ը պատահական չէ ընտրված, որովհետեւ այդ օրը, ինչպես ասվեց, տեղի է ունենալու մեր հաջորդ համահանրապետական հանրահավաքը:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 5 հուլիսի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ 2008 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ

Սիրելի հայրենակիցներ,

Կասկած չկա, որ քաղբանտարկյալների ազատ արձակումն ու մարտի 1-ի ոճրագործության իրական պատասխանատուների բացահայտումը շարունակում են մնալ հասարակությանը հուզող գլխավոր խնդիրները: Սակայն իրենց սրությամբ ու կարեւորությամբ հանդերձ, այդ խնդիրները մեզ չպետք է շեղեն Համաժողովրդական շարժման բուն նպատակներից, որոնք են՝ սահմանադրական կարգի վերականգնումը, լիակատար ժողովրդավարության հաստատումը, իրավական պետության կերտումը եւ տնտեսական զարգացման պայմանների ստեղծումը: Այդ նպատակների իրագործումը նախ եւ առաջ պահանջում է ամենայն անաչառությամբ գնահատել Հայաստանի ներկա մտահոգիչ քաղաքական իրավիճակը եւ փորձել նախանշել այն հաղթահարելու իրատեսական ուղիները, ցանկացած հանգուցալուծման ելակետ ընդունելով երկրին ու ժողովրդին չվնասելու սկզբունքը:

Նորահռչակ նախագահի ու նրա վարչակազմի գործունեության առաջին 100 օրվա ամփոփումը հարմար առիթ է առկա գործընթացներն ըմբռնելու եւ երկրի զարգացման խորքային միտումները վերհանելու համար: Իրավիճակի սպառիչ համապատկերն, իմ կարծիքով, կարելի է ստանալ միայն՝ ետընտրական շրջանում պետական գլխավոր հաստատությունների գործունեությանն առանձին-առանձին անդրադառնալու պարագայում: Եւ այսպես.

Ազգային Ժողով

1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից եւ մանավանդ վարչապետ Արամ Սարգսյանի պաշտոնանկությունից հետո Ազգային Ժողովը դադարեց իշխանության երեք անկախ ճյուղերից մեկը լինելուց՝ վերածվելով գործադիր իշխանության, կամ ավելի ճիշտ, հանրապետության նախագահի պարզ կցորդի, որի խնդիրն էր հլու-հնազանդ կատարել վերջինիս հրահանգները, միաձայնությամբ դակել կառավարության ներկայացրած օրենքները եւ ապահովել ավազակապետական վարչախմբի օրենսդրական սպասարկումը: Անցած ինը տարիների ընթացքում Ազգային Ժողովը չի մերժել կառավարության առաջարկած ոչ մի օրինագիծ, չի հաղթահարել նախագահի որեւէ վետո կամ առարկություն, չի ծավալել ոչ մի քաղաքական կամ տնտեսական բանավեճ, հանդես չի եկել կառավարության կամ նախագահի գործունեությանը վերաբերող որեւէ քննադատական հայտարարությամբ: Իսկ եթե նկատի ունենանք, որ պատգամավորների մեծագույն մասը, խախտելով Սահմանադրությունը, իր պարտականությունների «կատարմանը» զուգընթաց, զբաղվել եւ շարունակում է զբաղվել նաեւ ձեռնարկատիրական գործունեությամբ, այսինքն՝ անձնական շահադիտությամբ կապված է գործադիր իշխանության հետ, ապա լիովին հասկանալի է դառնում, թե ինչու է Ազգային Ժողովը վերածվել ավազակապետության հիմնական բաղադրամասերից մեկի:

Իսկ այժմ տեսնենք, թե Ազգային Ժողովի գործունեության մեջ ինչ է փոխվել նախագահական ընտրություններից եւ մարտիմեկյան իրադարձություններից հետո: Դժբախտաբար՝ ոչինչ: Իսկ եթե, այնուամենայնիվ ինչ-որ բան փոխվել է, ապա միայն դեպի վատը կամ վատթարը: Ազգային Ժողովի պահվածքը դարձել է ավելի ցինիկ, ավելի հախուռն եւ ավելի անօրինական: Բավական է ներկայացնել վերջին շրջանում նրա ընդունած օրենքների եւ որոշումների խայտառակ շարքը.

– Մարտի 2-ին Ազգային Ժողովը հինգ ռոպեի ընթացքում, առանց քննարկման (չհաշված «Ժառանգություն» խմբակցության առարկությունները), համարյա միաձայն հաստատեց Հանրապետության նախագահի հրամանագիրը Երեւան քաղաքում Արտակարգ դրություն հայտարարելու մասին, բոլորովին հաշվի չառնելով այդ հրամանագրի հա-

կաօրինականությունը, քանի որ մեր երկրում Արտակարգ դրության մասին օրենք գոյություն չունի:

– Մարտի 4-ին, նույնպես առանց քննարկման եւ նույնպես համարյա միաձայն (նորից «Ժառանգություն» խմբակցության դիրքորոշումը չհաշված), Ազգային Ժողովը անձեռնմխելիությունից զրկեց չորս պատգամավորների, նրանց բախտը հանձնելով հանրապետության գլխավոր դատախազի եւ լիովին վարկաբեկված դատական համակարգի կամայականություններին: Դրանով խորհրդարանական մեծամասնությունը ոչ միայն ցուցադրեց իր իսպառ բարոյազրկությունը, այլեւ ապացուցեց իրավագիտակցության լիակատար բացակայությունը, չհասկանալով, որ անձեռնմխելիությունը պատգամավորին տրված է հենց նրա համար, որպեսզի վեջինս պաշտպանված լինի քաղաքական հետապնդումից:

– Մարտի 17-ին Խորհրդարանն ընդունեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը, որը խստագույն քննադատության ենթարկվեց Եւրոխորհրդին կից Վենետիկյան հանձնաժողովի կողմից, եւ որի անհապաղ վերացման պահանջը մտավ Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1609 բանաձեւի մեջ: Թեեւ հետագայում (հունիսի 11), իբրեւ-թե անսալով նշված պահանջին, Ազգային Ժողովը որոշ կոսմետիկ փոփոխություններ կատարեց այդ օրենքում, բայց դրանից նրա էությունը չփոխվեց: Մասնավորապես դա բացարձակապես չազդեց Երեւանի քաղաքապետարանի վարքագծի վրա, որը կրկնակի փոփոխված օրենքի հիման վրա, շարունակում է մեթոդաբար մերժել հանրահավաքներ անցկացնելու իրազեկման բոլոր դիմումները, ինչը, չգիտես ինչու, ամենեւին չի անհանգստացնում Ազգային Ժողովի հարգարժան եւ օրինապաշտ պատգամավորներին:

– Մարտի 20-ին մեր փառապանծ Ազգային Ժողովն ընդունեց եւս մի աշխարհացունց եւ գերկենսական օրենք, որը վերնագրված է. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին»: Քանի որ կատարված լրացումն ու փոփոխությունը վերաբերում են նախկին նախագահին թիկնազորից զրկելու կարգին, իսկ նախկին նախագահ ասելով, օրինագծի հեղինակների ու պատգամավորների

մտքում պատկերանում էր նվաստս, ապա իրավական առումով եւ ըստ էության ավելի ճիշտ կլիներ այդ օրենքը կոչել «Օրենք Լեւոն Տեր-Պետրոսյանի իրավունքները սահմանափակելու, կամ ըստ ճաշակի, նրան կախելու, գնդակահարելու, Լինչի դատաստանի ենթարկելու մասին»:

– Եւ վերջապես, հունիսի 16-ին Ազգային Ժողովը ընդունեց «2008թ. մարտի 1–2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների եւ դրանց պատճառների ուսումնասիրության Ազգային Ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» դարակազմիկ որոշումը, որը ոչ այլ ինչ, եթե ոչ ողորմելի անպարարություն չի կարելի անվանել: Եթե կեղծված ընտրությունների եւ մարտիմեկյան ոճրագործության մեղսակիցներից կազմված այդ հանձնաժողովը շուտափույթ կերպով չլուծարվի եւ մոռացության չմատնվի, ապա կասկածից վեր է, որ այն կդառնա հայկական պաղամենտարիզմի ամենախայտառակ էջը:

Այս ամենից հետեւում է, որ Սերժ Սարգսյանի նախագահության շրջանում Ազգային Ժողովի միակ գործը եղել է ժողովրդավարական ազատությունների սահմանափակումը, քաղաքական հետապնդումների արդարացումը եւ մարտիմեկյան ոճրագործության իրական կազմակերպիչների բացահայտման խափանումը: Ազգային Ժողովն, ըստ այդմ, դադարել է կատարել ժողովրդի կամքի արտահայտման եւ օրենսդրական գործունեության իր հիմնական գործառույթը, ինչն անհետաձգելի է դարձնում արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը եւ այդ միջոցով իշխանության կաեւորագույն ճյուղերից մեկի անկախության վերականգնումը: Առանց անկախ խորհրդարանի Հայաստանում երբեք օրինականություն, արդարություն, ժողովրդավարություն, ազատ շուկայական տնտեսություն, հակակոռուպցիոն պայքար չի լինի՝ ինչպիսի ճարտասանությամբ էլ հանդես գան հակառակը պնդողները:

Կառավարություն

Սերժ Սարգսյանի ձեւավորած կառավարությունն իր բնույթով բացառնակապես չի տարբերվում Ռոբերտ Քոչարյանի վերջին կառավարությունից: Դա նույն կոալիցիոն սկզբունքով կազմված կառավարությունն է, ակնհայտորեն կյանքի կոչված ոչ թե տնտեսական նկատառումներով, այլ շեշտված քաղաքական նպատակահարմարությամբ:

խորհրդարանի հանրապետական մեծամասնությունը, բոլորովին կարիք չունենալով կոալիցիա կազմելու, այդ քայլին դիմել է երկրում քաղաքական համերաշխության պատրանք ստեղծելու նպատակով, ինչն այնքան անհրաժեշտ է գործող նախագահի կողմից իշխանության յուրացման փաստը քողարկելու եւ մարտիմեկյան ոճրագործության հրեշավորությունը կոծկելու համար: Նույն քաղաքական նպատակահարմարության կամ կուլիսային գործարքի արդյունք է նաեւ վարչապետի թեկնածության ընտրությունը, քանի որ դա, վարչապետի իսկ խոստովանությամբ, տեղի է ունեցել Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի համատեղ որոշմամբ:

Կոալիցիոն կառավարություններին բնորոշ բոլոր հայտնի թերությունները զանց առած, ներկա կառավարությունն աչքի է ընկնում նաեւ մի այլ արատավոր առանձնահատկությամբ: Նրանում, ըստ էության, նվազագույնի է հասցված վարչապետի դերը, ինչը մի կողմից բացատրվում է վերջինիս անկուսակցական լինելու, հետեւաբար՝ քաղաքական հենարան չունենալու հանգամանքով, մյուս կողմից՝ նախարարների ու մարզպետների նշանակման հարցում որոշում կայացնելու իրավազորության բացակայությամբ: Բավական է նշել, որ ներկա կառավարության կազմում վարչապետը կատարել է ընդամենը մեկ նշանակում (ֆինանսների նախարար), հետեւաբար նա նախարարների վրա ազդելու եւ անկախ տնտեսական քաղաքականություն վարելու որեւէ լծակ չունի: Իսկ եթե նկատի ունենանք նաեւ, որ նա ստիպված է գործել Ռոբերտ Քոչարյանի նշանակած կոմիսարի՝ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի աչալուրջ հսկողության ներքո, ապա պատկերն, ինչպես ասում են, լիակատար կդառնա:

Այս ամենի պատճառով վարչապետը, ամենաազնիվ մղումներ ունենալու պարագայում անգամ ի վիճակի չէ փոխել իր ենթակայության ոլորտում վերջին տասնամյակում ձեւավորված արատավոր համակարգը, կառավարության, նախարարությունների եւ մարզպետարանների աշխատակազմը մաքրել անբարեխիղճ ու հանցավոր տարրերից, իրական ու արդյունավետ պայքար մղել կոռուպցիայի, հովանավորչության ու խնամիության դեմ, եւ վերջապես, ձեռնարկել հույժ անհրաժեշտություն դարձած համակարգային տնտեսական բարեփոխումների, որոնց մասին բազմաթիվ կառուցողական առաջարկներ են արված ինչպես

հայրենի տնտեսագետների, այնպես էլ միջազգային փորձագետների կողմից (մանրամասն տե՛ս Համաշխարհային բանկի ս.թ. հունիսի 3-ին հրապարակված Հայաստանին վերաբերող զեկույցը)։

Ուստի ամենեին զարմանալի չէ, որ նորակազմ կառավարության արտաքուստ բուռն թվացող գործունեության մեջ նշված կենսական ուղղություններով որեւէ դրական տեղաշարժ առայժմ չի նկատվում, եթե չհաշվենք վարչապետի երկարաշունչ բարոյախրատական ճառերը եւ կաշառակերության դեմ պայքարի կամ մասնային ու հարկային ծառայություններում կարգուկանոն հաստատելու ծիծաղելի բեմականացումները, այլ կերպ ասած, «ազնիվ աշխատելու» միամսյակները։ Ծիծաղելի բառը, սակայն, այնքան էլ տեղին չէ, քանի որ նշված համակարգերում թեկուզ ժամանակավոր, թեկուզ ցուցադրական կարգուկանոն հաստատելու կամ վարչարարության խստացման փորձերը, ինչպես միշտ, այս անգամ էլ կոտրվում են մանր ու միջին գործարարների գլխին, մինչ խոշորները, առաջվա պես, շարունակում են շրջանցել մասնային ու հարկային բոլոր խոչընդոտները, ընդ որում, ոչ առանց նախագահի եւ կառավարության թողտվության։ Այս աղաղակող խտրականությունն, ի դեպ, լուրջ խլրտումներ է առաջացրել ոչ միայն մանր ու միջին ձեռնարկատերերի շրջանում, այլեւ բուն իսկ մասնային եւ հարկային մարմիններում, որոնց աշխատակիցները վրդովված են, որ մի կողմից իրենց ստիպում են աշխատել օրենքով, իսկ մյուս կողմից՝ արգելում են գանձումներ կատարել գործարար աշխարհի արտոնյալ խավերից։

Քանի դեռ չի բացահայտվել Հայաստանի տնտեսական ոլորտում նախկինում կատարված որեւէ խոշոր չարաշահում, քանի դեռ ոչ մի բարձրաստիճան պետական պաշտոնյա կաշառակերության համար չի կանգնել դատարանի առջեւ, քանի դեռ մենաշնորհային արտոնություններով օժտված որեւէ գործարար չի ներգրավվել հարկային դաշտ, եւ քանի դեռ գործադիր իշխանության մարմինները շարունակում են համալրված մնալ հանցագործ եւ վարկաբեկված կադրերով, ժողովուրդը չի կարող հավատ ընծայել կառավարության արտահայտած բարի մտադրություններին ու էժանագին քարոզչական հնարքներին։ Նոր կառավարության գործունեության միակ շոշափելի արդյունքն, ինչպես տեսանք, առայժմ հարկային բեռի լրացուցիչ ծանրացումն է մանր ու մի-

ջին գործարարների ուսերին, ինչն արդեն սպառնում է այդ խավի գոյությանը: Իսկ եթե սրան գումարենք նաեւ վերջին շրջանում նկատվող աննախադեպ գնաճը, մասնավորապես առաջին անհրաժեշտության ապրանքների՝ սննդամթերքի, հագուստի, բենզինի, դիզվառելիքի, տրանսպորտի եւ զանազան այլ ծառայությունների թանկացումները, ապա դժվար է խուսափել Սերժ Սարգսյանի ձեւավորած կառավարության 100 օրվա աշխատանքը անբավարար կամ նույնիսկ վրդովեցուցիչ գնահատելու գայթակղությունից:

Իրավապահ համակարգ

Իրավապահ համակարգ ընդհանուր անվան տակ ես նկատի ունեմ Ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Արդարադատության նախարարությունը, Դատախազությունը, Հատուկ քննչական ծառայությունը եւ դատարանները, այսինքն՝ Ռոբերտ Քոչարյանից ժառանգություն մնացած ավազակապետական վարչակարգի ուժային հենարանը: Անցած հինգ ամիսների ընթացքում այս կառույցների հիմնական գործը եղել է ոչ թե իրենց բուն գործառույթների իրականացումը, այն է՝ օրինականության ապահովումն ու հանցագործությունների դեմ պայքարը, այլ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի քաղաքական պատվերի կատարումը, որի նպատակն է ընդդիմության ջախջախումը եւ մարտի 1-ի ոճրագործության կազմակերպիչների պատասխանատվության կոծկումը:

Իսկ որ խոսքն իսկապես վերաբերում է քաղաքական պատվերի առկայությանը, ապացուցվում է ոչ միայն ընթացող խայտառակ դատավարություններով, Երեւանի կենտրոնում իրականացվող շուրջօրյա ոստիկանական պարեկությամբ, Համաժողովրդական շարժման ակտիվիստների նկատմամբ կիրառվող զանգվածային ահաբեկումներով ու հալածանքներով, հանրահավաքների, երթերի ու ցույցերի սիստեմատիկ արգելումներով, այլեւ երկու ապշեցուցիչ պաշտոնական փաստաթղթերով, որոնք այլեւս որեւէ տարակույս չեն թողնում Հայաստանում սանձազերծված լայնածավալ քաղաքական տեռորի վերաբերյալ: Իրավական անբարեխղճության գլուխգործոց հանդիսացող այդ փաստաթղթերից առաջինը Ազգային անվտանգության ծառայության քննչական

վարչության ավագ քննիչ, գնդապետ Մ. Մարուքյանի 2008թ. փետրվարի 24-ին ընդունած որոշումն է «Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ մի խումբ անձանց կողմից պետական իշխանությունը յուրացնելու փաստի առթիվ» քրեական գործ հարուցելու մասին: «Իշխանության յուրացումը» որպես կատարված փաստ ներկայացնելու աբսուրդից բացի, ուշադրության արժանի է նաեւ որոշման այն պնդումը, թե իբր քրեական գործը հարուցվել է «ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանման եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչությունից ստացված նյութերի» հիման վրա: Թե ինչ նյութերի մասին է խոսքը, անգամ դեպքերից հինգ ամիս անց դեռեւս պարզ չէ, քանի որ այդպիսիք բացակայում են տվյալ որոշման արդյունքում կալանավորված անխտիր բոլոր անձանց գործերում: Դա ինքնաբերաբար նշանակում է, որ այդպիսի նյութեր ընդհանրապես գոյություն չեն ունեցել, եւ Մ. Մարուքյանի որոշումն ի բնե եղել է հակաօրինական, ծառայելով բոլորովին այլ նպատակի, այն է՝ անհիմն քրեական գործի հարուցմամբ Ռոբերտ Քոչարյանի կողմից ընդդիմության դեմ ծրագրված հաշվեհարդարի իրավական քողածածկույթի ստեղծմանը:

Հայաստանում մոլեգնող քաղաքական հալածանքների էությունը սպառիչ կերպով բացահայտող հաջորդ պաշտոնական փաստաթուղթը ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ Ա. Միրզոյանի շրջաբերական-հրահանգն է՝ ուղղված հանրապետության բոլոր տարածքային դատախազներին: Այդ փաստաթղթում մասնավորապես դատախազներին հանձնարարվում է.

– հայտնաբերել հանրահավաքներին մասնակցած բոլոր անձանց եւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերին.

– պարզել, թե հանրահավաքների ժամանակ ինչ էին խոսում օտարերկրյա պետությունների կողմից ցուցաբերվող աջակցության մասին, հատկապես՝ որ երկրների.

– արդյոք հանրահավաքների մասնակիցները չէին գիտակցում, որ անկայուն այս իրավիճակը ձեռնտու է հարեւան պետություններին, ինչպես նաեւ այլ գերատեսչություններին.

– արդյոք հանրահավաքների մասնակիցները չէին խոսում Հայաստանից Ռուսաստանի ներկայությունը հանելու օգտին:

– հարցաքննել հանրահավաքներին մասնակցած անձանց, ինչպես նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերի հարեւաններին՝ պարզելու համար.

– որտեղ են գտնվել հանրահավաքներին մասնակցած անձինք եւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերը փետրվարի 20-ից մինչեւ մարտի 2-ը ընկած ժամանակահատվածում.

– հանրահավաքներին մասնակցած անձինք հարեւանների շրջանում միտինգներին ներգրավելու քարոզչություն կատարել են, թե՞ ոչ.

– ինչպես են նրանք բնութագրվում հարեւանների կողմից, ում հետ են առնչվել նշված ժամանակաշրջանում, ինչ գործողություններ են կատարել.

– բնակության վայրերից վերցնել հանրահավաքներին մասնակցած անձանց, ինչպես նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերի, նրանց ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկանքներ եւ բնութագրեր.

– ստուգել հանրահավաքներին մասնակցած անձանց, ինչպես նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերի դատվածությունը.

– պարզել Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերի հեռախոսահամարները, դրանց մուտքային եւ ելքային զանգերը վերծանելու թույլտվություն ստանալու համար համապատասխան միջնորդությամբ դիմել դատարան.

– պարզել, թե հանրահավաքներին մասնակցած անձինք, ինչպես նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերն ինչ գույք ունեն.

– հանրահավաքներին մասնակցած անձանց, ինչպես նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբների պետերի վերաբերյալ ոստիկանության անձնագրային բաժանմունքներից հանել քաղաքացու անձնագրի ձեւ 1-ի պատճենը.

– օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզել փետրվարի 20-ից մինչեւ մարտի 2-ը ընկած ժամանակահատվածում մարզերից Երեւան տանող երթուղային եւ տաքսի ավտոմեքենաների այն վարորդներին, ովքեր հանրահավաքներին մասնակցած անձանց իրենց ավտոմեքենաներով տեղափոխել են Երեւան, նրանք

ո՛ւմ հետ են եղել, ովքե՛ր են վճարել տեղափոխման վարձը, եւ որտեղ, ի՛նչ են խոսել հանրահավաքների վերաբերյալ:

Ինչ կարելի է ասել իրավաբանական այս հրեշավոր գլուխգործոցի մասին: Սկսենք նրանից, որ հատուկ քննչական ծառայության պետն իրավունք չուներ հանձնարարություն տալ դատախազներին, հետեւաբար նրա կարգադրությունների հիման վրա հայթայթված նյութերը ապացուցողական ուժ չեն կարող ունենալ դատարանում: Երկրորդ, ՀՔԾ-ի պետի վերը թվարկված բոլոր 14 հանձնարարություններն էլ ունեն ակնհայտ քաղաքական ուղղվածություն, քանի որ վերաբերում են բոլորովին ոչ հետապնդելի գործողությունների՝ մասնակցություն հանրահավաքներին, կարծիքի արտահայտում, նախընտրական քարոզչություն, ուղեւորների տեղափոխում եւ այլն: Երրորդ, ՀՔԾ-ի պետը դատախազներին դրդում է կատարել բացահայտ հակաօրինական գործողություններ՝ կոնկրետ օպերատիվ տվյալներով չհիմնավորված զանգվածային գաղտնալսումների իրականացում, Շարժման ակտիվիստների ընտանիքի անդամների եւ հարեւանների ահաբեկում, նրանց գույքի վերաբերյալ տեղեկությունների հայթայթում, հանրահավաքների մասնակիցներին տեղափոխող վարորդների հարցաքննում եւ այլն: Եւ չորրորդ, որն ամենաարտառոցն ու սոսկալին է, խնդրո առարկա շրջաբերականում փաստորեն կասկածյալ են դիտվում ընդդիմության թեկնածուի ընտրարշավի բոլոր ակտիվիստները, շտաբների պետերը, Շարժման կազմակերպած հանրահավաքների բոլոր մասնակիցներն ու նրանց ընտանիքի անդամները, այսինքն՝ շուրջ մեկ միլիոն մարդ: Սա ցույց է տալիս, որ մենք իրականում գործ ունենք այլախոհության դեմ ուղղված մի այնպիսի տոտալ քաղաքական հետապնդման ծրագրի հետ, որին կնախանձեին անգամ Ստալինը կամ Ջաուշեսկուն:

Ես արդեն երկրորդ անգամ եմ այսպես հանգամանորեն անդրադառնում տվյալ պերճախոս փաստաթղթին, ինչը բացատրվում է նրա բացառիկ կարեւորությամբ, քանի որ այն մի կողմից անառարկելիորեն ապացուցում է ընդդիմության լիակատար ջախջախմանը միտված լայնածավալ հալածանքների քաղաքական դրդապատճառը, իսկ մյուս կողմից՝ վերհանում Հայաստանի ներկա իշխանությունների իրավագիտակցության մակարդակը: Ամենեւին զարմանալի չէ, որ փաստաթղթի հրապարակումից հետո անգամ նրա հեղինակը շարունակում է վարել

իր պաշտոնը, իսկ սահմանադրական կարգի երաշխավորը հանդիսացող ինքնահոչակ նախագահը չի շտապում վերաբերմունք արտահայտել այս աղաղակող փաստի նկատմամբ: Ցանկացած նորմալ երկրում նման փաստաթղթի հրապարակումը կառավարության տապալման կամ նախագահի պաշտոնանկության պատճառ կարող էր դառնալ: Ուստի ժամանակն է, որ աշխարհը դադարի հիանալ Հայաստանում իրականացող սահմանադրական եւ օրենսդրական բարեփոխումներով, մեր իշխանավորների բարեկիրթ ժպիտներով եւ ժողովրդավարության խորացման վերաբերյալ տված կեղծ հավաստիացումներով: Ժամանակն է, որ յուրաքանչյուր ոք վերջապես հասկանա, որ Հայաստանի սահմանադրությունը, ներկա իշխանությունների իրավագիտակցությունն ու գործելակերպի հիմքը հանրապետության Հատուկ քննչական ծառայության պետի հեղինակած այս տխրահռչակ փաստաթուղթն է: Ի դեպ, նկատի ունենալով փաստաթղթի չափազանց մեծ ճանաչողական արժեքը, Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահի հետ հանդիպման ժամանակ ես խնդրեցի այն փորձագիտական քննության ուղարկել Վենետիկի հանձնաժողով, ինչը նա սիրահոժար կերպով խոստացավ կատարել:

Ողբերգություն պետք է համարել այն, որ ներկա իշխանությունները իրենց այսրոպեական խնդիրները լուծելու, այն է՝ ընտրակեղծիքները թաքցնելու եւ մարտի 1-ի ոճրագործության բացահայտումը խափանելու դիտավորությամբ, մի քանի ամիսների ընթացքում վերջնականապես ապականեցին ողջ դատական համակարգը: Դատարանները, որոնք մինչ այդ էլ աչքի չէին ընկնում անկախությամբ ու անաչառությամբ, այսօր պարզապես վերածվել են վարչախմբի հանցանքները կոծկելու եւ ընդդիմության դեմ գործ սարքելու նպատակին ծառայող կույր գործիքի, ինչը հասարակության մեջ մեռցնում է նրանց նկատմամբ վստահության վերջին նշույլն անգամ: Կարծում եմ, որեւէ մեկին ապացուցելու կարիք չկա, որ սա չափազանց մահոգիչ եւ վտանգավոր երեւույթ է՝ թե՛ պետության բնականոն կենսագործունեության, թե՛ նրա ապագայի համար: Նույնիսկ ստալինյան մարդակեր բռնապետությունը, ընդհանուր իրավասության դատարանները չհեղինակազրկելու ու չվարկաբեկելու նպատակով, քաղաքական բնույթի գործերը քննում էր հատուկ տրիբունալներում: Դատարանների անկախությունը սոսկ իրավական հարց չէ,

այլ ունի լրջագույն քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ հոգեբանական նշանակություն: Եթե չկա անկախ եւ վստահություն ներշնչող դատարան, որեւէ պետություն չի կարող իրավական, ժողովրդավարական ու արդար ճանաչվել: Եթե չկա անկախ եւ վստահություն ներշնչող դատարան, որեւէ պետության մեջ կոռուպցիան, հանցագործությունը, անպատժելիությունը, սոցիալական անարդարությունը չեն կարող չծաղկել:

Դատական համակարգի վիճակը գնահատելիս, ցավով պետք է արձանագրել, որ իր բարձրության վրա չի գտնվում նաեւ Սահմանադրական դատարանը, որն իր վեհագույն կարգավիճակով պարտավոր էր լինել համակարգի բացարձակ հեղինակությունը: Սա նշելով, ես ամենեւին նկատի չունեմ անցած նախագահական ընտրությունների վերաբերյալ Սահմանադրական դատարանի ընդունած որոշումը: Մարդկայնորեն հասկանում եմ, որ Արտակարգ դրության պայմաններում եւ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների ավտոմատների փողերի ներքո նա այլ վճիռ չէր կարող կայացնել: Ինձ մտահոգողը միայն այն է, որ Սահմանադրական դատարանը, ոտնահարելով արդարադատության սկզբունքը, փոքրոգաբար խուսափեց եզրակացություն տալ իմ ներկայացրած երկու փաստարկների վերաբերյալ, այսինքն՝ կա՛մ ընդունել, կա՛մ հերքել դրանք: (Հիշեցնեմ, որ դրանցից մեկն այն է, որ որպես նախագահի թեկնածու գրանցված վարչապետը պարտավոր էր դադարեցնել իր պաշտոնավարությունը, իսկ մյուսը՝ որ Սահմանադրական դատարանը չէր կարող նախագահական ընտրության արդյունքներին վերաբերող հարցը քննարկել Արտակարգ դրության պայմաններում): Ուզում եմ տեղեկացնել, որ Սահմանադրական դատարանի կողմից հայցվորի նկատմամբ արդարադատություն չկիրառելու այս աղաղակող փաստն է, ահա, որ դառնալու է Եւրոդատարանին ուղղված իմ դիմումի հիմքը:

Տեղական ինքնակառավարում

Օրենսդիր եւ դատական իշխանությունների անկախության վերացումից բացի՝ անցած տասը տարիների բնորոշ երեւույթներից էր նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների՝ մասնավորապես քաղաքապետարանների եւ Երեւանի թաղապետարանների քրեականացումը:

Այդ մարմինների ղեկավար օղակներում, չնչին բացառությամբ, ընտրվում կամ նշանակվում էին իրենց հակաօրինական գործողություններով, բարոյազրկությամբ եւ բռեական հակումներով աչքի ընկած մարդիկ, որոնց միակ «արժանիքը» անսահման հավատարմությունն ու նվիրվածությունն էր գործող վարչախմբին: Նշված «արժանիքի» անհրաժեշտությունը մասնավորապես ծագում էր նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ տեղական ինքնակառավարման մարմինները դրսեւորում էին վարչախմբի գլխավոր հենարանը լինելու իրենց էությունը: Նրանց վրա էր դրված տեղամասային հանձնաժողովները հուսալի անդամներով համալրելու, ոստիկանության ու բռեական տարրերի օգնությամբ անցանկալի թեկնածուների կողմնակիցներին ահաբեկելու, ընդդիմության միջոցառումները վիժեցնելու, ընտրակաշառք բաժանելու եւ քվեարկության օրը բռնություններ կիրառելու «պատասխանատու» գործը: Դրա ականատեսը մենք եղանք նաեւ վերջին նախագահական ընտրություններում, որոնցում իրենց հակաօրինական ու բռնի գործողություններով հատկապես աչքի ընկան՝ Գյումրու, Վանաձորի, Արտաշատի, Գորիսի, Զարենցավանի, Աբովյանի, Սպիտակի, Ալավերդու քաղաքապետերը, Երեւանի էրեբունի, Կենտրոն, Արաբկիր, Աջափնյակ, Քանաքեռ-Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա համայնքների թաղապետերը, ինչպես նաեւ հայրուրավոր գյուղապետեր, որոնց գործընկերներից շատերը, սակայն, ի պատիվ իրենց, թույլ չտվեցին բռնանալ ժողովրդի կամքի արտահայտության վրա:

Բնականաբար, այսպիսի անգնահատելի ծառայությունը շռայլորեն փոխհատուցվում է վարչախմբի կողմից, որն աչք է փակում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ապօրինի որոշումների, տնտեսական չարաշահումների, վարչական կամայականությունների եւ նույնիսկ ծանր հանցագործությունների վրա: Այսինքն՝ վարչախմբի եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ ստեղծվել է փոխպարտավորությունների եւ փոխհատուցումների վրա հիմնված մի կայուն եւ անթափանցիկ շրջանակ, որի խնդիրը եղել եւ մնում է Հայաստանի ներկա հանցավոր իշխանությունների վերարտադրության եւ տեւականության ապահովումը:

Սերժ Սարգսյանի «նախագահության» առաջին ամիսների ընթացքում տեղական ինքնակառավարման բնագավառում տիրող վիճակն ու

բարեւոն ամենեւին չեն փոխվել, ինչի վկայությունն են, մասնավորապես, հանրապետության տարբեր համայնքներում ընթացող մասնակի ընտրությունները: Ոստիկանական եւ հարկային տեսորը, ընդդիմության թեկնածուների նատմամբ կիրառվող խտրականությունը, միակողմանի քարոզչությունը եւ մանավանդ ընտրակաշառքը շարունակում են մնալ իշխանությունների հովանավորությունը վայելող թեկնածուների զինանոցը: Ուստի զարմանալի չէ, որ այդպիսի մեթոդներով անցկացվող ընտրություններում, առանց բացառության, հաղթող են դուրս գալիս կա՛մ նախկին քաղաքապետերն ու թաղապետերը, կա՛մ էլ՝ նրանց նմանները:

Բայց սա հարցի միայն մի կողմն է: Կա նաեւ սահմանադրականության հետ կապված խնդիր, որը, մասնավորապես, վերաբերում է Երեւանում անցկացվող թաղապետերի ընտրություններին: Ըստ Սահմանադրության 117.12 հոդվածի՝ Սահմանադրության ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները պետք է կազմավորված լինեին նոր օրենքի հիման վրա: Այդ ժամկետը լրացել է անցյալ տարվա նոյեմբերի 27-ին, ինչը նշանակում է, որ ավելի քան ութ ամիս է արդեն, որ Երեւանի ինքնակառավարման մարմինները լեգիտիմ չեն, իսկ թաղապետերի ընթացող ընտրությունները՝ հակասահմանադրական: Ի՞նչն է Սահմանադրության այսպիսի բացահայտ ու կոպիտ խախտման եւ նոր օրենքի ընդունման ու գործադրման ձգձգման պատճառը: Այն թաքնված է Սահմանադրության 108 հոդվածում, որի համաձայն՝ Երեւանի քաղաքապետի պաշտոնն այլեւս ոչ թե նշանակովի, այլ ընտրովի է: Իշխանությունները պարզապես վախենում են հասարակության կողմից բացարձակապես մերժված ներկա վիճակում անցկացնել այդ ընտրությունները, նկատի ունենալով, որ Երեւանում ապրում է հանրապետության բնակչության մեկ երրորդը, այն էլ՝ քաղաքականապես նրա ամենաակտիվ մասը:

Սակայն եթե գործադիր իշխանության նման դիրքորոշումը գոնե մարդկայնորեն հասկանալի է, ապա միանգամայն վրդովեցուցիչ է այս հարցում Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների դրսեւորած անտարբեր կեցվածքը: Համաժողովրդական շարժումը բազմիցս հայտարարել է, որ

պատրաստ է մասնակցել Երեւանի քաղաքապետի ընտրությանը, դա դիտելով ոչ միայն որպես Սահմանադրության պահանջի իրագործման արտահայտություն, այլեւ որպես իշխանությունների եւ հասարակության միջեւ առկա լարվածությունը քաղաքական գործընթացի հում տեղափոխելու միջոց:

Սերժ Սարգսյանի դերը

Հարց կարող է առաջանալ, թե որքանով է պետական գլխավոր հաստատությունների գործունեության վերը կատարված քննությունը վերաբերում Սերժ Սարգսյանի 100 օրվա իշխանավարության գնահատականին: Վերաբերում է ուղղակի եւ անմիջականորեն, քանի որ Սահմանադրության 49 հոդվածի համաձայն՝ «Հանրապետության նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»: Իսկ դա նշանակում է, որ նախագահն անձնապես պատասխանատու է պետական բոլոր կառույցների գործունեության համար, եթե, իհարկե, նա կարդացել է Սահմանադրության մեջբերված հոդվածը, ինչը նրա կատարած առաջին քայլերից ամենեւին չի երեւում:

Թե՛ Ազգային ժողովը, թե՛ կառավարությունը, թե՛ իրավապահ համակարգը, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես տեսանք, զբաղվում են ամեն ինչով, բայց ոչ իրենց անմիջական պարտականությունների կատարմամբ: Դրա հետեւանքով լրիվ բարձիթողի են մատնված արդյունավետ օրենսդրական գործունեության, տնտեսական բարեփոխումների իրականացման, արդյունաբերության եւ արտահանման խթանման, բնակչության սոցիալական վիճակի բարելավման, գործարարների համար հավասար պայմանների ստեղծման, հանցագործությունների դեմ պայքարի, կոռուպցիայի եւ պետական ռեկետի վերացման, հակամենաշնորհային միջոցառումների կիրառման, գնաճի եւ դրամի արհեստական արժեւորման սանձահարման, ժողովրդավարական ազատությունների ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդագրական աղետի կանխման, բնապահպանական նորմերի կատարման, կրթության, գիտության, մշակույթի եւ առողջապահության բնագավառների զարգացման հույժ կենսական ու հրատապ խնդիրները:

Իսկ թե ինչով է զբաղված «օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունն» ապահովողը՝ պարզ չէ: Ավելի ճիշտ, նա բոլորովին այլ պատկերացում ունի իշխանության տարբեր ճյուղերի բնականոն գործունեության մասին, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ռոբերտ Քոչարյանի օրոք ձեւավորված ավազակապետական համակարգի պահպանումը: Համենայն դեպս, կեղծ ժպիտները, դատարկ հավաստիացումները եւ վարչարարական անպարարությունները չհաշված, նրա կատարած կամ չկատարած բոլոր քայլերը հակառակը չեն վկայում: Առայժմ չկա որեւէ նշան, որ նա մտադիր կամ ունակ է կազմաքանդել այդ գերարատավոր համակարգը եւ պետությունը ծառայեցնել երկրի զարգացման ու ժողովրդի բարօրության վեհագույն նպատակներին:

Թե ինչպիսի մեծագործություններով է աչքի ընկել կամ ինչ քայլեր է կատարել Սերժ Սարգսյանը իր «նախագահության» առաջին 100 օրերի ընթացքում, այդ մասին ես մանրամասնորեն խոսել եմ հուլիսի 4-ի հանրահավաքում ունեցած իմ ելույթում: Ուստի ձեզ չձանձրացնելու համար խուսափելով դրանց կրկնությունից, ես կբավարարվեմ միայն մի քանի ընդհանուր գնահատականներով:

Միակ բանը, որ այդ ընթացքում Սերժ Սարգսյանը լավ է կատարել՝ ժողովրդավարական ազատությունների էլ ավելի սահմանափակումն է եւ մարդու իրավունքների հետեւողական ոտնահարումը, ինչի հետեւանքով վարչախմբի եւ հասարակության միջեւ գոյացած լարվածությունը հասել է իր գագաթնակետին: Մեծագույն տաղանդ էր պետք այդքան կարճ ժամկետում համարյա ողջ ժողովրդին իր դեմ տրամադրելու համար: Իր վերջին ասուլիսում Սարգսյանն իրավացիորեն նշեց, որ ինքը երկխոսության խնդիր ունի ոչ թե ընդդիմության առաջնորդի, այլ հասարակության ետ: Փառք Աստծու, որ նա վերջապես հասկացել է այս պարզ ճշմարտությունը: Սակայն ցավալի է, որ հասարակության հետ երկխոսությունը նա միանգամայն յուրովի է պատկերացնում, այն է՝ մահակների, ոստիկանական եւ հարկային տեռորի, հանրահավաքների ու ցույցերի արգելման, զանգվածային ահաբեկումների ու ձերբակալությունների միջոցով:

Սարգսյանն անչափ համոզված է իր ճշմարտացիության մեջ, որ այսուհետեւ եւս մտադիր չէ քայլեր ձեռնարկել հասարակության հետ

հաշտվելու ուղղությամբ, այն է՝ ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին եւ բացահայտել մարտի 1-ի ոճրագործության բուն կատարողներին ու կազմակերպիչներին: Դրա վկայությունն է վերը հիշատակված ասուլիսում հնչած եւս մի ուշագրավ միտք, այն է՝ «Եթե մինչեւ հունվար Եւրոխորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի պահանջներից մեկը չկատարվի, ջրհեղեղ չի լինի»: Հատկանշական է, որ Սարգսյանը չի վիճարկում Վեհաժողովի պահանջների արդարացիությունը, չի առարկում դրանց հիմնավորվածության դեմ, այլ վոյինաբար հոխորտում. «Զենք կատարի, եւ վերջ»: Եթե մինչ այժմ Հայաստանի իշխանությունները կիսատ-պռատ քայլերով ու էժանագին անպարարություններով Վեհաժողովի առաջ ձեւացնում էին, թե իբր լրջորեն են վերաբերվում նրա պահանջներին, ապա այժմ ցինիկաբար հայտարարում են, որ չեն պատրաստվում կատարել դրանք: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ միջազգային հանրությանն ու մեր հասարակությանը նետված լկտի մարտահրավեր: Սարգսյանն, այսպիսով, դրսեւորում է ոչ թե երկրի նախագահի, այլ իրավիճակի լրջությունն ու հասարակության հետ իրական երկխոսության անհրաժեշտությունը չգիտակցող բռնապետի պահվածք:

Չգիտեմ, թե ինչպիսին կլինի միջազգային հանրության հակազդեցությունն այդ մարտահրավերին, սակայն Հայաստանի հասարակության արձագանքը որեւէ կասկած չի հարուցում, այն է՝ վճռական շարունակել համաժողովրդական պայքարը եւ այսօրվանից Շարժման գլխավոր կարգախոսը դարձնել Սերժ Սարգսյանի հրաժարականն ու արտահերթ նախագահական ընտրությունների անցկացումը: Հրաժարականի պահանջը հիմնված է ոչ թե ընդհանուր գնահատականների, այլ Սերժ Սարգսյանին ներկայացվող կոնկրետ մեղադրանքների վրա, որոնք են.

– Կեղծված ընտրությունների միջոցով իշխանության յուրացում.
– Մեղսակցություն մարտի 1-ի ոճրագործությանը.
– Այդ ոճրագործության բացահայտման խափանում.
– Կառավարման ավազակապետական համակարգի ստեղծում.
– Իշխանության մարմինների քրեականացում:

* * *

Իսկ այժմ, մի քանի խոսք Համաժողովրդական շարժման առջեւ կանգնած առաջիկա խնդիրների մասին: Վերլուծելով ներկա իրավիճակը եւ նպատակ դնելով սեպտեմբեր ամսին հասնելու հասարակության քաղաքական ակտիվության բարձրակետին, Շարժման կենտրոնը գտնում է, որ այս պահին նախ՝ անհրաժեշտ է, չնայած անտանելի շոգին, ոչ մի վայրկյան չդադարեցնել կամ չթուլացնել զանգվածային ու ոչ զանգվածային միջոցառումները, եւ երկրորդ՝ վերջապես կյանքի կոչել Հայ Ազգային Կոնգրեսի ստեղծման հասունացած գաղափարը, այն դիտելով որպես ժողովրդի ինքնակազմակերպման եւ ինքնակառավարման գործնական մեխանիզմ: Ուրախությամբ ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ այժմ դուք մասնակիցն ու ականատեսն եք դառնալու մի նշանակալի պատմական իրադարձության՝ Հայ Ազգային Կոնգրեսի հիմնադրման հանդիսավոր արարողությանը: Մինչ այդ, սակայն, թույլ տվեք ընթերցել Համաժողովրդական շարժումը ներկայացնող կուսակցությունների միջեւ համաձայնեցված հռչակագիրը, որից հետո, ձեր աչքերի առջեւ, տեղի կունենա նրա պաշտոնական ստորագրումը:

Հռչակագիր Հայ Ազգային Կոնգրեսի մասին

Նկատի ունենալով, որ Հայաստանի Համաժողովրդական շարժումը, ձեւավորված լինելով որպես նախընտրական միավորում, ավարտել է իր անմիջական դերակատարությունը,

Մեկնելով այն իրողությունից, որ իշխանությունը Հայաստանում վերստին բռնազավթված է հանցավոր վարչախմբի կողմից, եւ որ ընտրակեղծիքներն այս անգամ ուղեկցվել են ժողովրդի դեմ իրագործված բիրտ ոճրագործությամբ,

Հաշվի առնելով, որ ետընտրական շրջանում Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է մտահոգիչ մարտահրավերների առջեւ,

Գիտակցելով, որ հրատապ անհրաժեշտություն է առաջացել կազմակերպական նոր ձեւի միջոցով Շարժումը հարմարեցնելու այդ մարտահրավերների դիմագրավմանը,

Մենք՝ Շարժման կորիզը կազմող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներս, հռչակում ենք **Հայ Ազգային Կոնգրեսի** ստեղծումը:

Մեզ միավորում է սահմանադրական կարգի հաստատման՝ ազատ, ժողովրդավարական, իրավական, բարգավաճ պետության կերտման եւ լիարժեք քաղաքացիական հասարակության ձեւավորման գաղափարը:

Կոնգրեսի մաս կազմող քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները պահպանում են իրենց լիակատար ինքնուրույնությունը եւ անկախ գործունեություն ծավալելու, այդ թվում՝ ընտրություններին առանձին մասնակցելու իրավունքը: Կոնգրեսը բաց է Հայաստանի եւ Սփյուռքի բոլոր կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների անդամագրման համար:

Կոնգրեսի գործունեության ընդարձակ ծրագիրը նախատեսվում է ընդունել եւ հրապարակել նրա առաջիկա համաժողովում: Մինչ այդ, սակայն, հարկ ենք համարում Հայաստանի հասարակությանը ներկայացնել երկրի բարդ ներքաղաքական իրավիճակից թելադրված մեր ընթացիկ խնդիրները.

– Անխտիր բոլոր քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակում.

– Խոսքի, մամուլի, հավաքների ազատության ապահովում.

– Միջազգային փորձագետների նշանակալի մասնակցությամբ մարտի 1-ի ոճրագործության իրապես անկախ հետաքննության իրականացում.

– Առնվազն առաջին պայմանի կատարման դեպքում՝ երկրի ժողովրդավարական զարգացմանն ուղղված բարեփոխումների շուրջ իշխանությունների հետ երկխոսության ծավալում.

– Արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացում:

Հայրենիքի ճակատագրով մտահոգված բոլոր ուժերին, կազմակերպություններին եւ քաղաքացիներին կոչ ենք անում ստվար շարքերով անդամագրվել Հայ Ազգային Կոնգրեսին:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 2 օգոստոսի, 2008թ.:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «Ա1+» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ
(20 օգոստոսի, 2008թ.)

– Պարոն նախագահ, կարծես-թե, ռուս–վրացական վերջին պատերազմը լրջորեն չգնահատվեց ո՛չ Հայաստանի իշխանությունների, ո՛չ էլ քաղաքական կուսակցությունների եւ նույնիսկ քաղաքագետների կողմից, մինչդեռ ակնհայտ է, որ այդ պատերազմն անուղղակիորեն շոշափում է նաեւ մեր երկրի կենսական շահերը:

– Ձեմ կարող չհամաձայնել Ձեր դիտարկմանը, բայց կուզեի այդ առթիվ կատարել մեկ հստակեցում. պատերազմը վրաց–օսեթական էր, եւ միայն հետո էր, որ այն վերածվեց ռուս–վրացականի:

– Այսինքն, Դուք ուզում եք ասել, որ նախահարձակը Վրաստանն էր, եւ Ռուսաստանը հարկադրաբար ներքաշվեց պատերազմի մեջ:

– Ես ոչինչ չեմ ուզում ասել, այլ ընդամենը առձանագրում եմ ակնհայտ փաստերը: Ոչ ոք չի կարող վիճարկել, որ պատերազմը սանձազերծել էր Վրաստանը՝ նպատակ հետապնդելով զենքի ուժով վերացնել Հարավային Օսեթիայի հանրապետությունը: Ոչ ոք չի կարող վիճարկել նաեւ, որ Ռուսաստանն, իր վճռական միջամտությամբ, հարավ-օսեթական ժողովրդին փրկեց ցեղասպանությունից: Եթե ռուսական օգնությունն ուշանար թեկուզ վեց ժամով, այսօր Հարավային Օսեթիա գոյություն չէր ունենա:

– Շատերն, ընդունելով հանդերձ Ռուսաստանի միջամտության հիմնավորվածությունը, միաժամանակ պնդում են, որ նրա պատասխանը համարժեք չէր:

– Պատմության մեջ ես չգիտեմ դեպք, երբ հզորների պատասխանը համարժեք է եղել իրենց դեմ կատարված որեէ ոտնձգության: Կարեւորն, ինչպես ասացի, այն է, որ Ռուսաստանը, անկախ նրա պատասխանի համարժեք լինելու կամ չլինելու պարագայից, կանխեց հարավ-օսեթական ժողովրդին սպառնացող ցեղասպանությունը:

– Ինչպե՞ս եք վերաբերվում այն պնդումներին, թե իբր Սահակաշվիլին չէր կարող նախաձեռնել պատերազմը՝ առանց ստանալու Ամերիկայի Միացյալ Նահանգների հավանությունը:

– Այդ պնդումները ես համարում եմ անհիմն եւ անհավատալի, քանի որ բացառված է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների նման լուրջ պետությունը որեէ մեկին դրդեր այդպիսի արկածախնդրության: Այլ բան է, որ նախագահ Սահակաշվիլին կարող էր սխալ ընկալել կամ մեկնաբանել Արեւմուտքից ստացած որոշ բարեկամական ժեստեր:

– Այդ դեպքում ինչի՞ վրա էր հիմնված Սահակաշվիլու հաշվարկը: Միթե՞ նա չէր կարող կանխատեսել իր քայլի հետեւանքները, մասնավորապես, Ռուսաստանի հակազդեցությունը:

– Վրաստանի կառավարության հաշվարկն, իմ կարծիքով, հիմնված էր նախեւառաջ հանկարծակիության գործոնի, եւ երկրորդ՝ բարեկամ երկրներին փաստի առջեւ կանգնեցնելու միջոցով հնարավոր միջազգային աջակցություն ստանալու չերաշխավորված ակնկալիքի վրա: Ըստ այդմ, մենք գործ ունենք «ցանկալին իրականություն ընկալելու» (wishful thinking) տիպական եւ ուսանելի օրինակի հետ:

– Եթե, ինչպես Դուք նշեցիք, Վրաստանը հույսը դրել էր հանկարծակիության գործոնի վրա, ապա ինչո՞ւ նա չփորձեց, դեսանտ իջեցնելով, փակել Ռոքի թունելը եւ դրանով խափանել ռուսական ուժերի առաջխաղացումը:

– Վրաստանի մտադրությունը ոչ թե հարավ-օսեթական ժողովրդի բնաջնջումն էր, այլ նրա տեղահանումը, ինչն անհնար էր իրականացնել առանց այդ թունելը բաց պահելու: Սահակաշվիլին չէր կարող չգիտակցել, որ բնաջնջումը չէր ներվի համաշխարհային հանրության կողմից, մինչդեռ տեղահանումը կարող էր այս կամ այն կերպ հանդուրժվել, ինչպես 1995 թվականին հանդուրժվեց Կրաինայի սերբերի պարագայում:

– Կարո՞ղ եք համառոտակի ամփոփել պատերազմի հիմնական արդյունքները:

– Վրաստանի կողմից սանձազերծված պատերազմը ծանր կորուստներ պատճառեց հարավ-օսեթական ժողովրդին եւ ռուս խաղաղարարներին, բայց այդ պատերազմի գլխավոր զոհը դարձավ ինքը Վրաստանը, որը բացի իր վճարած բազմահազար մարդկային կյանքերից, կորցրեց Հարավային Օսեթիայի ու Աբխազիայի վրացաբնակ կղզյակները (անկլավները) եւ ստացավ տասնյակ հազարավոր նոր գաղթականներ: Ձեմ կասկածում, որ մոտ ապագայում ոչ այլ ոք, քան վրաց ժողովուրդն է, որ այդ ամենի համար հաշիվ է պահանջելու սեփական կառավարությունից: Ես անկեղծ ցավով եմ արձանագրում եղբայրական վրաց ժողովրդին բաժին ընկած ազգային աղետը եւ նրան մաղթում հնարավորինս արագ վերագտնել իր արժանապատվությունն ու ինքնավստահությունը: Այդ մաղթանքը որքան անկեղծ է մարդկային առումով, նույնքան աներկբա է քաղաքական տեսակետից, քանի որ Վրաստանի կայունությունը, հզորությունը եւ բարգավաճումը միանգամայն համապատասխանում են Հայաստանի շահերին:

– Ինչպե՞ս կգնահատեք Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի միջնորդական առաքելությունը ռուս–վրացական հակամարտության կարգավորման գործում:

– Դա միանգամայն ժամանակին նախաձեռնված եւ արդյունավետ առաքելություն էր, ինչն, անշուշտ, հեշտացվեց ռուսական կողմի պատրաստակամության եւ վրացական կողմի այլընտրանք չունենալու պատճառով: Սարկոզիի դերակատարությունը կարեւորվում է մանավանդ այն առումով, որ նա ներկայացնում էր ոչ միայն Ֆրանսիայի, այլեւ Եւրոպական Միության դիրքորոշումը:

– Իսկ ինչպե՞ս այդ համատեքստում կմեկնաբանեք Եւրոմիության որոշ երկրների՝ Լեհաստանի, Բալթյան հանրապետությունների, ինչպես նաեւ Ուկրաինայի ղեկավարների միանշանակ աջակցությունը Վրաստանին:

– Թբիլիսիում տեղի ունեցած համերաշխության այդ ցույցն, իհարկե, հուզիչ արարողություն էր, բայց դրան պետք է վերագրել ավելի շուտ բարոյական, քան քաղաքական նշանակություն:

– Ինչպիսի՞ հետեւանքներ կարող է ունենալ ռուս–վրացական զինված հակամարտությունը գլոբալ քաղաքականության տեսակետից:

– Հակառակ ռուս–վրացական պատերազմի առաջացրած լայն միջազգային արձագանքին, ակնհայտ է, որ այն ունենալու է զուտ տեղական կամ տարածաշրջանային նշանակություն եւ, ըստ էության, չի ազդելու գերտերությունների ռազմավարական բնույթի ներկա հարաբերությունների վրա: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ծավալվող կոշտ հակառուսական ռիտորիկան բացատրվում է նախընտրական կոնյունկտուրայով, ուստի հիմքեր չկան դա երկարաժամկետ գործոն դիտելու: Հարավային Օսեթիան այն կիզակետը չէ, որ սառը պատերազմի վերակենդանացման ազդակ ծառայի:

– Վրաց–օսեթական պատերազմը կարո՞ղ է ինչ-որ կերպ անդրադառնալ մյուս չլուծված էթնիկական հակամարտությունների վրա:

– Անտարակույս: Սակայն, ցավոք սրտի, ոչ թե այդ խնդիրների կարգավորման հեշտացման, այլ բարդացման ու երկարաձգման առումով: Պատերազմը մեկ անգամ եւս վերհանեց միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքների՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման նկատմամբ գերտերությունների դրսեւորած հակասական մոտեցումը: Մինչեւ աշխարհը չհրաժարվի այս հարցում երկակի ստանդարտների կիրառման պրակտիկայից կամ չգտնի նշված սկզբունքների ներդաշնակեցման բանալին, անհնար է պատկերացնել ազգամիջյան հակամարտությունների արագ լուծումը:

– Իսկ ի՞նչ ազդեցություն ունեցավ պատերազմը Հայաստանի վրա:

– Պատերազմը ամենայն ակնհայտությամբ ցույց տվեց, թե որքա՛ն փխրուն եւ խոցելի է Հայաստանի տնտեսությունը: Հարեւան երկրում ընդամենը մի քանի օր տեւած ռազմական գործողություններն անմիջապես խախտեցին Հայաստանի բեռնափոխադրումների կանոնավորությունը եւ որոշակի խուճապ առաջացրին ներքին շուկայում, մասնավորապես գազի եւ նավթամթերքների մատակարարման բնագավառում: Փոթիի նավահանգստի գործունեության թեկուզ ժամանակավոր խափանումն ու Անդրկովկասյան երկաթուղու կամուրջներից մեկի պայթեցումն սպառնում են ավելի եւս բարդացնել իրավիճակը: Սա պետք է Հայաստանի իշխանություններին ստիպի լրջորեն գնահատել այս

դառն իրողությունը եւ համապատասխան եզրակացություններ անել նրանից:

– Ձեր կարծիքով, Հայաստանի կառավարությունն ինչպե՞ս պետք է արձագանքեր պատերազմին եւ ի՞նչ քայլեր ձեռնարկեր ստեղծված իրավիճակում:

– Եթե Դուք նկատի ունեք պաշտոնական կամ դիվանագիտական արձագանքը, ապա դրական չեզոքությունը, թերեւս, այն առավելագույնն էր, որ Հայաստանի կառավարությունը կարող էր դրսեւորել երկու բարեկամ պետությունների միջեւ ծագած ռազմական հակամարտության նկատմամբ: Այս առումով Հայաստանի իշխանությունների դիրքորոշումից դժգոհելու հիմքեր չկան: Իսկ գործնականում Հայաստանի կառավարության կողմից պետք է արվեն եւ մասամբ արվում են իրավիճակից բխող որոշ քայլեր՝ մարդասիրական օգնության ցուցաբերում թե՛ օսեթական, թե՛ վրացական կողմերին, կանոնավոր բեռնափոխադրումների իրականացում ավտոշարասյուների միջոցով, մասնակցություն Փոթիի նավահանգստի վերագործարկման եւ Կասպիի երկաթուղային կամրջի վերականգնման աշխատանքներին եւ այլն: Սակայն «համապատասխան եզրակացություններ» ասելով, նույնիսկ այս ամենը չէ, որ ես նկատի ունեի, այլ շատ ավելի էական պահեր, մասնավորապես՝ պատերազմից քաղելիք մեր դասերը:

– Ի՞նչ դասերի մասին է խոսքը:

– Առաջին, Հայաստանի իշխանությունները վերջապես պետք է հասկանան, թե ինչպիսի չարիք է մեր երկրի շրջափակումը եւ նրա միակողմանի կախվածությունը միայն մեկ հարեւանից: Դա պետք է նրանց ստիպի իրական քայլեր ձեռնարկել Ղարաբաղի հարցի լուծման եւ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Երկրորդ, արկածախնդրությունը մեծագույն վտանգ է փոքր պետությունների համար, որովհետեւ դրա ամենահավանական հետեւանքը ազգային աղետն է: Փոքր պետություններն այդպիսի սխալներ գործելու իրավունք չունեն: Նման շռայլություն թույլատրված է միայն աշխարհի հզորներին, քանի որ նրանց սխալներից սովորաբար տուժում են ոչ թե իրենք, այլ միեւնույն է՝ փոքրերը: Եւ երրորդ, փոքր պետությունները պետք է մեկանգամընդմիշտ հրաժարվեն երրորդ ուժի ապավինելու կործանա-

ռար քաղաքականությունից եւ փորձեն իրենց հարցերը լուծել սեփական միջոցներով ու կարողություններով՝ չխախտելով միջազգային իրավունքի ընդունված կանոնները եւ ժողովուրդների համակեցության նորմերը:

«Հայք», «Հայկական ժամանակ», 21 օգոստոսի, 2008թ.: «168 ժամ», 22 օգոստոսի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ 2008 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ

Սիրելի հայրենակիցներ,

Սեպտեմբերի 26-ի հանրահավաքում ես ձեզ խոստացել էի առաջիկայում հանգամանորեն բացահայտել Համաժողովրդական շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի ռազմավարությունը, ոչինչ չթաքցնելով ձեզանից: Այսօր եկել է այդ խոստումը կատարելու ժամանակը, ուստի խնդրում եմ համբերությամբ զինվել եւ հետեւել իմ ելույթի յուրաքանչյուր բառին:

Ես արդեն առիթ ունեցել եմ ձեր ուշադրությունը հրավիրելու աշխարհաքաղաքական այն աննախադեպ իրավիճակի վրա, որում Հայաստանը հայտնվել է վերջին ժամանակներս, ընդգծելով նաեւ, որ անկախության տասնյոթ տարիների ընթացքում մեր երկիրը երբեք այնքան ենթակա չի եղել արտաքին ճնշումների, որքան հիմա: Եւ այս վտանգավոր իրավիճակում Սերժ Սարգսյանը, պետական շահի կամ ժողովրդի բարօրության գիտակցությամբ առաջնորդվելու փոխարեն, մտահոգված է բացառապես իր լեգիտիմության ճանաչման եւ իշխանության պահպանման խնդիրներով: Ընդ որում, վերջին շրջանում նրա կատարած քայլերը ցույց են տալիս, որ հանուն այդ նպատակների նա պատրաստ է վերանայել անգամ Հայաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգը եւ Ռուսաստանի ու Արեւմուտքի հետ հարաբերություններում հավասարակշռություն պահպանելու փոխարեն, աստիճանաբար թեքվել վերջինիս կողմը:

* * *

Ինչո՞վ բացատրել Սերժ Սարգսյանի կտրուկ շրջադարձը դեպի Արեւմուտք: Չէ՞ որ մինչ այժմ նա հայտնի էր որպես Հայաստանի ամենառուսամետ պետական գործիչը: Զմոռանանք, որ նա է «Գույֆ պարտֆի դիմաց» գործարքի գլխավոր ճարտարապետը՝ գործարք, որի շնորհիվ Հայաստանի համարյա ողջ էներգետիկ համակարգը հանձնվեց Ռուսաստանին: Զմոռանանք նաեւ նրա նշանակալի դերակատարությունը «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության» շրջանակներում, ինչպես նաեւ ռուսական հատուկ ծառայությունների ու հանցագործ աշխարհի հետ նրա սերտ համագործակցության մասին շրջանառվող համառ խոսակցությունները:

Արդ, ի՞նչն է ստիպել Սերժ Սարգսյանին հրաժարվելու ռուսական կողմնորոշումից եւ շրջվելու Արեւմուտքի կողմը: Պատճառն, ակնհայտորեն, Հայաստանի պետական շահը կամ ռազմավարական նկատառումները չեն, այլ իր լեգիտիմության խնդիրը լուծելու պարզ շահագրգռությունը:

Ռուսաստանը Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը կասկածի տակ չի դրել: Նախագահ Վլադիմիր Պուտինն առաջիններից մեկն էր, որ դեռեւս ընտրությունների արդյունքների պաշտոնական ամփոփումից առաջ շնորհավորեց նրան: Իսկ Սարգսյանն, իր հերթին, խախտելով դիվանագիտական վարվելակերպի կանոնները, մի այնպիսի չափազանցված երախտագիտություն հայտնեց Ռուսաստանին, որն անհարմար դրություն ստեղծեց վերջինիս դիվանագիտության համար:

Սերժ Սարգսյանն իր լեգիտիմության ճանաչման խնդիր ունի Արեւմուտքում: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը այդպես էլ մինչ օրս չի շնորհավորել նրան: Իսկ Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովը շարունակում է պահպանել Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու սպառնալիքը, ինչի իրագործումը լուրջ կասկածի տակ կարող է դնել Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը:

Այսինքն՝ Սարգսյանն այս հարցում Ռուսաստանից սպասելիք չունի, եւ նրա միակ հույսը Արեւմուտքի բարեհաճությունն ստանալու ակնկալիքն է, ինչի համար նա պատրաստ է ցանկացած զիջման: Իսկ քանի որ Հայաստանը, հանքային ռեսուրսների, տարանցիկ ճանապարհների եւ գրավիչ շուկայի բացակայության պատճառով, Արեւմուտքին առաջար-

կելու այլ բան չունի, քան իր պետական շահը, Սարգսյանը հետեւաբար ընտրել է այդ շահը զոհաբերելու ճանապարհը: Այս պնդումը հաստատվում է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության եւ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերում նրա դրսեւորած զիջողական կեցվածքով, այլեւ, որ ավելի էական է, Հայաստանի արտաքին քաղաքականությունը «կողմնորոշման» հուն տեղափոխելու նրա մտադրությամբ:

Անկախության ողջ շրջանում Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ ձգտել է առաջնորդվել Ռուսաստանի եւ Արեւմուտքի հետ հավասարաչափ հարաբերությունների հաստատման սկզբունքով: Որդեգրելով հանդերձ ժողովրդավարության, ազատականության, շուկայական տնտեսության արեւմտյան արժեքները, Հայաստանը չի ենթարկվել Արեւմուտքի միակողմանի քաղաքական ազդեցությանը: Մյուս կողմից, սերտ տնտեսական եւ ռազմական հարաբերություններ ունենալով Ռուսաստանի հետ, Հայաստանն այնուամենայնիվ չի դարձել վերջինիս քաղաքական արբանյակը: Այսինքն, Հայաստանը փորձել է լինել ո՛չ ռուսամետ, ո՛չ էլ արեւմտամետ, այլ առաջնորդվել է բացառապես սեփական ազգային շահերով:

Իմ նախագահության օրոք նման դիրքորոշումը կոչվում էր «բալանսավորման» կամ հավասարակշռման քաղաքականություն, Քոչարյանի օրոք՝ «կոմպլեմենտարիզմի» կամ փոխլրացման քաղաքականություն, որոնց տարբերությունը սոսկ տերմինաբանական է:

Սերժ Սարգսյանն, արդ, կտրուկ կերպով խախտում է իրերի այս դրվածքը, եւ առաջնորդվելով բացառապես սեփական շահերով, փորձում է սիրաբանել Արեւմուտքի հետ: Ես ավելորդ եմ համարում գնահատել ռուսական կամ արեւմտյան կողմնորոշման առավելությունները կամ թերությունները, որովհետեւ վտանգավոր եմ համարում ցանկացած քաղաքական կողմնորոշում: Դրանում ինձ նախեւառաջ համոզում է հայ ավանդական քաղաքական մտքի փորձը, որը աղետալի հետեւանքներ է ունեցել Հայաստանի համար: Վերջին հաշվով, կողմնորոշման արատավոր քաղաքականության արդյունքն են թե՛ հայ ժողովրդին բաժին ընկած ցեղասպանությունը, թե՛ Հայաստանի առաջին հանրապետության կրած տարածքային կորուստները: Դրանում ինձ համոզում է նաեւ այսօրվա իրականությունը: Մեր աչքի առջեւ Վրաստանի որդե-

գրած արեւմտյան կողմնորոշումը այդ երկիրը կանգնեցրեց ազգային աղետի առջեւ, ինչից նա կարող էր խուսափել Ռուսաստանի հետ հավասարակշիռ հարաբերություններ ունենալու պարագայում: Արեւմուտքը, համերաշխության դատարկ ցույցերից ու հոխորտալից հակառուսական հայտարարություններից բացի, ոչնչով չկարողացավ օգնել իր հավատարիմ կրտսեր դաշնակցին:

* * *

Կողմնորոշման քաղաքականությունն այսօր մեզ համար ունի ոչ թե տեսական կամ վերացական նշանակություն, այլ չափազանց կոնկրետ եւ գործնական բովանդակություն: Երես թեքելով Ռուսաստանից եւ լիովին ապավինելով Արեւմուտքին՝ հանձինս ԱՄՆ-ի եւ նրա դաշնակից Թուրքիայի, Սերժ Սարգսյանը փաստորեն վերջիններիս է վստահում Հայաստանի արտաքին քաղաքականության ամենահանգուցային խնդրի՝ Ղարաբաղյան հակամարտության միակողմանի կարգավորումը: Նման եզրակացության հիմք է տալիս այն իրողությունը, որ Արեւմուտքն, ակնհայտորեն, ջանում է Ռուսաստանը դուրս մղել Ղարաբաղյան կարգավորման գործընթացից: Դրա ամենավառ արտահայտությունն են ինչպես արեւմտյան դիվանագետների թափանցիկ ակնարկները, այնպես էլ Ղարաբաղի հարցով հայ–թուրք–ադրբեջանական եռակողմ բանակցությունների անցկացման փաստը, եւ մանավանդ՝ Թուրքիայի կողմից Մինսկի խմբի համանախագահությունն ստանձնելու հնարավորությունների վերաբերյալ խոսակցությունները: Ի դեպ, Սերժ Սարգսյանը տվյալ պահին այնպիսի կախյալ վիճակի մեջ է Արեւմուտքից, որ եթե նրա առջեւ պահանջ դրվի Մինսկի խմբի համանախագահությունում Ռուսաստանը փոխարինել Թուրքիայով, ապա նա հազիվ-թե կարողանա ընդդիմանալ դրան:

Ըստ այդմ, այսօր վտանգի տակ է Մինսկի խմբի գոյությունը, որը տասնվեց տարի շարունակ եղել է Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման միակ միջազգային մեխանիզմը: Իր բոլոր թերություններով հանդերձ, Մինսկի խումբը, Արեւմուտքի եւ Ռուսաստանի հավասարաչափ ներկայացվածության եւ մասամբ նաեւ նրանց միջեւ գոյություն ունեցող մրցակցության շնորհիվ, մեզ համար եղել է Ղարաբաղյան հակա-

մարտության կարգավորման հարմարագույն կամ օպտիմալ ձեւաչափը: Պատահական չէ, որ Ադրբեջանը ջանք չի խնայել Մինսկի խմբի գործունեությունը վարկաբեկելու եւ Ղարաբաղի հարցը միջազգային այլ ատյաններ տեղափոխելու ուղղությամբ:

Դժբախտաբար, այդ ձեւաչափի խախտման եւ դրանից Ռուսաստանի դուրսմղման վտանգը միանգամայն իրական է, քանի որ վերջինս, ամբողջապես զբաղված լինելով Վրաստանի իրադարձությունների առթիվ ծագած միջազգային ճգնաժամի հաղթահարմամբ, հազիվ-թե կարողանա ինչ-որ կերպ դիմակայել Ղարաբաղի հարցում Արեւմուտքի դրսեւորած ակտիվությանը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արեւմուտքի ջանքերով Ղարաբաղյան հակամարտության միակողմանի կարգավորման պարագայում Ռուսաստանը դուրս է մնալու նաեւ տարածաշրջանում տեղակայվելիք խաղաղարար ուժերի կազմից: Իսկ դա նշանակում է՝ Այսրկովկասում Ռուսաստանի ազդեցության եթե ոչ լիակատար վերացում, ապա զգալի թուլացում, ինչը հղի է աշխարհաքաղաքական անկանխատեսելի հետեւանքներով, ինչպես, օրինակ, Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցության դադարեցումը ԱՊՀ-ին, ռուսական ռազմակայանի եւ սահմանապահ զորքերի դուրսբերումը Հայաստանից եւ այլն:

* * *

Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխությունն, այսպիսով, նշանակում է Ղարաբաղի հարցի միակողմանի լուծում Արեւմուտքի կողմից, այն էլ Թուրքիայի ամենագործոն մասնակցությամբ, ինչը Հայաստանի համար ամենեին նպաստավոր չի կարող լինել: Իմիջիայլոց, իրատեսությունը պահանջում է նշել, որ Հայաստանի համար ձեռնտու չէր լինի նաեւ Ղարաբաղի հարցի միակողմանի լուծումը Ռուսաստանի կողմից, քանի որ վերջինս բազմիցս պաշտոնապես հայտարարել է, որ այդ լուծումը տեսնում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակում: Սակայն սա ընդամենը վերացական դատողություն է, որովհետեւ գործնականում Ռուսաստանի կողմից Ղարաբաղի հարցի միակողմանի լուծում չի սպառնում, գլխավորապես այն պատճառով, որ Ադրբեջանը երբեւէ դրան չի համաձայնի:

Մինչդեռ հակառակը, այն է՝ այդ հարցի կարգավորումը բացառապես Արեւմուտքի, իսկ ավելի ճշգրիտ, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի ջանքերով, ինչպես փորձեցինք հիմնավորել, միանգամայն իրական է:

Սերժ Սարգսյանը գիտակցո՞ւմ է, արդյոք, Արեւմուտքի գիրկը նետվելու եւ Ղարաբաղի հարցի լուծման մենաշնորհը նրան վերապահելու վտանգավորությունը, որը վերջիվերջո կարող է հանգեցնել ազգային աղետի: Անտարակույս՝ ո՛չ: Նա փորձում է Արեւմուտքի հետ խաղալ նույն խաղը, որ տասը տարի խաղացել է Ռոբերտ Քոչարյանը: Այդ խաղի էությունը, որ ես հանգամանորեն բացահայտել եմ 2007թ. հոկտեմբերի 26-ի իմ ելույթում, հետեւյալն է. ձեւացնել, թե Հայաստանն անկեղծորեն շահագրգռված է Ղարաբաղի հարցի շուտափույթ կարգավորմամբ, սակայն իրականում հետապնդելով բոլորովին այլ նպատակ, այն է՝ ամեն կերպ խափանել ու վիժեցնել այդ գործընթացը եւ պահպանել ստատուս-քվոն:

Ու թեեւ ԵԱՀԿ-ի միջնորդներն, իրենց հերթին, ձեւացրել են, թե հավատում են հայկական կողմի անկեղծությանը, դա ամենեւին չի նշանակում, որ նրանք չեն հասկացել վերջինիս պարզունակ խաղը: Այն, որ նրանք առանձնապես մեծ ջանքեր չեն գործադրել հակամարտության կարգավորման ուղղությամբ, բացատրվում է նրանով, որ գերտերությունների առաջնահերթությունների շարքում Ղարաբաղի հարցն զբաղեցրել է չափազանց երկրորդական տեղ: Միջազգային տեռորիզմը, Հյուսիսային Կորեան, Բալկանները, Աֆղանստանը, Իրաքը, Իրանը, արաբա–իսրայելյան հակամարտությունը եւ բազմաթիվ այլ խնդիրներ, մշտապես ստվերել են Ղարաբաղի հարցը:

Եթե Սերժ Սարգսյանին թվում է, թե իրեն կհաջողվի շարունակել այս խաղը, նա չարաչար սխալվում է, որովհետեւ հաշվի չի առնում Այսրկովկասի աշխարհաքաղաքական իրավիճակում տեղի ունեցած հետեւյալ երեք էական փոփոխությունները.

1. Որքան էլ պարադոքսալ թվա, Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումից հետո Ռուսաստանի ազդեցությունն այս տարածաշրջանում ոչ թե մեծանալու, այլ նվազելու միտումներ է դրսեւորում:

2. Ռուսաստանը դուրս է մղվում Մինսկի խմբի ձեւաչափից, հետեւաբար կորցնում իր դերակատարությունը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում:

3. Ի տարբերություն նախորդ տասը տարիների, այսօր Ղարաբաղի հարցն արդեն Արեւմուտքի համար դարձել է առաջնահերթություն:

Ռուսաստանի հանդեպ Արեւմուտքն առաջնորդվում է մոտավորապես հետեւյալ տրամաբանությամբ. «Շատ լավ, դու լուծեցիր Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հարցը, մենք էլ լուծելու ենք Լեռնային Ղարաբաղի հարցը»: Իրականության ողջ դառնությունն այն է, որ ինչպես Արեւմուտքը չկարողացավ Ռուսաստանին խանգարել լուծելու Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հակամարտությունները, այնպես էլ, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանը չի կարողանալու Արեւմուտքին խանգարել լուծելու Ղարաբաղյան խնդիրը: Միակ խանգարիչ հանգամանքը կարող է լինել միջազգային ֆինանսական ճգնաժամի խորացման եւ անկառավարելի դառնալու վտանգը, որը շեղելով Արեւմուտքի ուշադրությունը, թերեւս որոշ խոչընդոտներ առաջացնի Ղարաբաղյան կարգավորման նրա ծրագրի իրականացման համար:

* * *

Ռուսաստանին հակադրվելու գործոնը, սակայն, Արեւմուտքի վարքը կանխորոշող դրդապատճառներից միայն մեկն է, եւ ամենեւին ոչ գլխավորը: Գլխավորը Սերժ Սարգսյանի թուլությունն է եւ դրանից օգտվելու աննախադեպ պատեհությունը: Այնպիսի լծակների առկայությամբ, ինչպիսիք են լեգիտիմության բացակայությունը, կոռումպացվածության աստիճանը եւ բարոյական նկարագրի խոցելիությունը, Սերժ Սարգսյանն ուղղակի գտնված գանձ է Արեւմուտքի համար: Հայաստանի ուրիշ որ մի ղեկավար կհամաձայներ անմնացորդ կերպով նետվել Արեւմուտքի գիրկը, խորացնել ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը, մեջքով շրջվել դեպի Ռուսաստանը, նպաստել Մինսկի խմբից նրա դուրսմղմանը, ընդառաջել հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողով ստեղծելու մոռացված առաջարկին, դրանով կասկածի տակ դնելով ցեղասպանության իրողությունն ու վիժեցնելով նրա միջազգային ճանաչման գործընթացը, համաձայնել հայ–թուրք–ադրբեջանական եռակողմ բանակցությունների անցկացմանը, եւ վերջապես, բառիս բուն իմաստով, վաճառքի հանել Լեռնային Ղարաբաղը:

Այս ամենի դիմաց Արեւմուտքը, բնականաբար, պատրաստ է աչք փակել Սերժ Սարգսյանի վերը թվարկված բոլոր արատների վրա, մոռանալ փետրվարի 19-ի խայտառակ ընտրություններն ու մարտի 1-ի ոճրագործությունը, չտեսնելու տալ նրա վարած բռնապետական ներքին քաղաքականությունը, հանդուրժել Հայաստանում ժողովրդավարական ազատությունների սահմանափակման ու մարդու իրավունքների ոտնահարման համատարած երեւույթները եւ հաշտվել քաղբանտարկյալների գոյության փաստի հետ: Սերժ Սարգսյանն, ըստ էության, կանաչ լույս է ստացել Արեւմուտքից՝ ներքին քաղաքականության բնագավառում գործելու սեփական հայեցողությամբ, ինչի վկայությունն են, մասնավորապես, ժողովրդի դեմ վերջերս սաստկացած ոստիկանական բռնությունները: Սեփական արժեքները մանրադրամի վերածելու Արեւմուտքի այս վարքագիծը, անբարոյական լինելուց առավել, Հայաստանի ու Ղարաբաղի դեմ նյութվող դավադրության տարր է պարունակում:

Սերժ Սարգսյանը կա՛մ չի զգում այս վտանգը, կա՛մ էլ իր իշխանությունը պահպանելու այլ միջոց չի պատկերացնում: Նա ներքաշվել է աշխարհաքաղաքական մի այնպիսի խաղի հորձանուտ, որի ելքը Հայաստանի ու Ղարաբաղի համար եթե ոչ կործանարար, ապա առնվազն անբարենպաստ է լինելու: Հոկտեմբերի 15-ին Ադրբեջանում կայացած նախագահական ընտրություններից հետո Արեւմուտքը եւ Թուրքիան ուժեղացնելու են իրենց ճնշումը Հայաստանի վրա եւ արագացնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը, միաժամանակ, ինչպես արդեն ասվեց, ձգտելով դրանից դուրս մղել Ռուսաստանը:

Ռուսաստանը կփորձի, անշուշտ, ինչ-որ կերպ հակազդել իր համար անցանկալի այդ զարգացումներին, սակայն որքան արդյունավետ ու Հայաստանի համար օգտակար կլինի այդ հակազդեցությունը, պարզ չէ: Չպետք է անտեսել նաեւ Իրանի գործոնը: Թեեւ այն միակ պետությունն է, որ մինչ օրս հավասարակշռված քաղաքականություն է վարել Այսրկովկասում, ձգտելով նորմալ հարաբերություններ պահպանել թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի հետ, սակայն Արեւմուտքի եւ Թուրքիայի ակտիվությունն այս տարածաշրջանում չի կարող չառաջացնել նաեւ նրա որոշակի անհանգստությունը: Եւ արդեն

իսկ առաջացրել է, ինչի վկայությունն է, մասնավորապես, Հայաստանի արտգործնախարարի հապշտապ կայացած այցն այդ երկիր:

Թե ինչպես է իր հաշիվների մեջ խճճված Սերժ Սարգսյանը գլուխ հանելու աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակից, միայն Աստծուն է հայտնի: Եթե նրան թվում է, թե Արեւմուտքին հանձնյանալով եւ լուրջ զիջումների գնալու պատրաստակամության ցուցադրությամբ, կարող է ժամանակ շահել եւ այս անգամ էլ խուսափել Ղարաբաղի հարցի կարգավորումից, իսկ հետագայում նաեւ ինչ-որ կերպ լեզու գտնել Ռուսաստանի հետ, ուրեմն նա քաղաքականությունից ոչինչ չի հասկանում: Իսկ եթե Սարգսյանը հույսը դրել է այն բանի վրա, որ Ամերիկան, զբաղված լինելով նախագահական ընտրություններով եւ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման խնդրով, մեծ ջանքեր չի գործադրի Ղարաբաղի հարցի կարգավորման ուղղությամբ, ապա այստեղ էլ նրան հուսախաբություն է սպասում, որովհետեւ տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակում դրա համար Ամերիկայի Միացյալ Նահանգներից մեծ ջանքեր չեն պահանջվում: Չի կարելի նկատի չունենալ նաեւ այն յուրահատուկ հանգամանքը, որ իշխանությունը լքող ԱՄՆ-ի ներկա վարչակազմը կփափագեր իր ժամկետի ավարտը պսակել արտաքին քաղաքականության բնագավառում առնանագրած մի այնպիսի հաջողությամբ, ինչպիսին Ղարաբաղյան հակամարտության եւ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորումն է:

* * *

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ մենք կանգնած ենք Ղարաբաղյան հակամարտության մոտալուտ հանգուցալուծման շեմին: Կարգավորման հիմքում, անկասկած, ընկած է լինելու 2007թ. դեկտեմբերին Մինսկի խմբի համանախագահության անունից հակամարտող կողմերին ներկայացված Մադրիդյան առաջարկը, որի գաղափարախոսությունը միջազգային իրավունքի երկու սկզբունքների՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման ներդաշնակումն է: Ինչ վերաբերում է կարգավորման էությանը կամ կոնկրետ ծրագրին, ապա այն բաղկացած է լինելու մոտավորապես հետեւյալ կետերից.

1. Հայկական ուժերի դուրսբերում Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեջանական շրջաններից.

2. Այդ շրջանների վերաբնակեցում ադրբեջանցի փախստականների կողմից.

3. Ադրբեջանցի փախստականների վերադարձ բուն Լեռնային Ղարաբաղի տարածք.

4. Լաչինի միջանցքով Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ցամաքային կապի ապահովում.

5. Լեռնային Ղարաբաղի սահմանների շրջագծով միջազգային խաղաղարար ուժերի տեղակայում.

6. Ադրբեջանին վերադարձված տարածքների ապառազմականացում (դեմիլիտարիզացիա).

7. Ղարաբաղի եւ Հայաստանի արտաքին հաղորդակցության ճանապարհների ապաշրջափակում եւ հայ–թուրքական սահմանի վերաբացում.

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջանկյալ կարգավիճակի սահմանում.

9. Անորոշ ապագայում Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի կամ ժողովրդական հարցման՝ պլեբիսցիտի անցկացում.

10. Հակամարտության գոտու վերականգնման համար միջազգային ֆինանսական օգնության հատկացում:

Նկատի ունենալով, որ ակնհայտորեն խնդիր է դրված Լեռնային Ղարաբաղի հակամարտության եւ հայ–թուրքական հարաբերությունների կնճիռը լուծել փաթեթով, չպետք է բացառել, որ փորձ արվի այդ փաթեթում ընդգրկել նաեւ ցեղասպանության ուսումնասիրության նպատակով հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողովի ստեղծման հարցը: Քանի որ, ինչպես ասում են, Սերժ Սարգսյանը այդ խայծը կուլ է տվել, նրա օձիքը բաց չեն թողնելու:

Կարելի է, իհարկե, քննել այն հարցը, թե վերը նշված կետերից որոնք են ձեռնտու Ադրբեջանին ու Թուրքիային, իսկ որոնք՝ հայկական կողմին, բայց սա անիմաստ զբաղմունք է, որովհետեւ դրանք արժեւորվում են փոխկապակցվածության եւ ամբողջականության մեջ: Ավելի էական է պարզել, թե որ կետերն են բանակցություններում առանձնապես լուրջ բարդություններ հարուցելու: Ամենադժվարալույծը, բնակա-

նաբար, լինելու են 3-րդ, 4-րդ եւ 9-րդ կետերը, որոնք համապատասխանաբար վերաբերում են՝ բուն Ղարաբաղում ադրբեջանցի փախստականների վերաբնակեցման, Լաչինի միջանցքի իրավական կարգավիճակի սահմանման եւ Լեռնային Ղարաբաղում հանրաքվեի անցկացման խնդիրներին: Սակայն նկատի ունենալով աշխարհաքաղաքական վերջին զարգացումները, կարծում եմ, դրանք միջնորդների համար անհաղթահարելի խոչընդոտներ չեն լինելու:

Խնդիրն այն է, որ եթե Մինսկի խմբի համանախագահությունը մինչ այժմ առաջնորդվում էր հակամարտող կողմերի միջեւ համաձայնություն կայացնելու սկզբունքով, ապա այժմ Արեւմուտքը հնարավորություն ունի պարտադրել իր սեփական լուծումը, այսինքն՝ կիրառել Դեյտոնյան տարբերակը: Ցավալին այն է, որ նույն Դեյտոնյան տրամաբանությամբ՝ Լեռնային Ղարաբաղը մասնակցություն չի ունենալու կարգավորման գործընթացին, եւ նրա շահերն առաջիկա բախտորոշ բանակցություններում ներկայացնելու է Հայաստանը, ինչպես բոսնիական սերբերի շահերը ներկայացնում էր Հարավսլավիան: Շուտով մենք, ամենայն հավանականությամբ, ականատեսն ենք լինելու ԱՄՆ-ի ու Թուրքիայի նախաձեռնությամբ եւ Հայաստանի ու Ադրբեջանի մասնակցությամբ գումարվելիք Դեյտոնյան տիպի մի կոնֆերանսի, որին Ռուսաստանը եւ Ֆրանսիան, որպես Մինսկի խմբի համանախագահներ, լավագույն դեպքում, ներկա են գտնվելու դիտորդի կարգավիճակով: Այս կապակցությամբ, կարծում եմ, պատահական չի սահմանված նաեւ Եւրոխորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի Հայաստանին վերաբերող վերջնական բանաձեւի ընդունման ժամկետը, այն է՝ 2009թ. հունվարը: Սերժ Սարգսյանին այդքան ժամանակ է տրված կատարելու Ղարաբաղյան կարգավորման հարցում իր տված խոստումները, հակառակ դեպքում վերջապես գործի դնելով նախատեսված պատժամիջոցները:

Իրավիճակի պատասխանատվությունն, իհարկե, չի կարելի բարդել միայն Սերժ Սարգսյանի վրա: Մեծ հաշվով, սա Ղարաբաղյան հակամարտության եւ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում այն խայտառակ քաղաքականության արդյունքն է, որ վերջին ութ տարիներին վարել է քոչարյանական վարչակազմը, եւ որի համար հավասարապես պատասխանատու են իրար փոխարինած բոլոր կոա-

լիցիոն կառավարությունները, բրեականացած Ազգային Ժողովը, պաշտոնական մամուլը, իշխանության կերակրատաշտից օգտվող մտավորականները եւ գրպանային կուսակցությունները: Այսօր մենք խաղում ենք, ահա, այդ խաղախաղության, ինչպես նաեւ ընդհանրապես Քոչարյանի օրոք ձեւավորված ավազակապետական համակարգի ու նրան սատարող ուժերի հանցավոր գործունեության դարը պտուղները:

* * *

Կասկածից վեր է, որ Արեւմուտքը ձեռքից բաց չի թողնելու Ղարաբաղի հարցի լուծման իր համար հարմարագույն այս առիթը, ինչը լրջագույն խնդիրների առջեւ է կանգնեցնում Հայաստանի իշխանություններին: Վերջիններիս գործողություններից ու հայտարարություններից առայժմ չի երեւում՝ նրանք զգո՞ւմ են, արդյոք, պահի լրջությունը, եւ եթե այո՛, ինչ միջոցներ են ձեռնարկում այդ վտանգավոր մարտահրավերը դիմագրավելու համար: Այնինչ անզեն աչքով իսկ տեսանելի է, որ գոյություն ունեն մի շարք արդյունավետ քայլեր, որոնք ի վիճակի են թուլացնել արտաքին ճնշումները եւ ուժեղացնել Հայաստանի իշխանությունների դիրքերը Ղարաբաղյան կարգավորման առաջիկա բանակցություններում: Քայլեր ասելով, ես նկատի չունեմ հայ ժողովրդի միասնականության մասին հնչեցված դատարկ կոչերը, որոնցով Սերժ Սարգսյանը վերջերս հանդես է եկել ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում, այլ միանգամայն կոնկրետ քաղաքական նախաձեռնություններ, այն է.

1. Մեղմացնել Հայաստանում տիրող քաղաքական եւ հասարակական լարվածությունը, ապահովել օրենքի գերակայությունը, դադարեցնել ժողովրդավարական ազատությունների սահմանափակումներն ու մարդու իրավունքների սանձարձակ ոտնահարումները, արմատախիլ անել համատարած կոռուպցիան եւ վերացնել երկրի հարստության անպատիժ կողոպուտը, ազատվել անբարեխիղճ եւ բրեականացած պաշտոնյաներից, վերականգնել օրենսդիր եւ դատական իշխանությունների անկախությունը, կառուցողական երկխոսություն սկսել հասարակության հետ, այսինքն՝ չեզոքացնել այն բոլոր պատճառները,

որոնք արտաքին աշխարհի ձեռքում լծակ են ծառայում Հայաստանի վրա ճնշումներ բանեցնելու համար:

2. Բարելավել հարաբերությունները Ռուսաստանի հետ եւ հարթել այդ հարաբերություններում վերջերս նկատվող մտահոգիչ տարաձայնությունները: Անել ամեն ինչ Մինսկի խմբի ձեւաչափից Ռուսաստանի դուրսմղումը կանխելու համար, գիտակցելով այն պարզ ճշմարտությունը, որ Ղարաբաղյան կարգավորման գործընթացում Արեւմուտքի եւ Ռուսաստանի հավասարակշռության խախտումը մեզ որեւէ լավ բան չի խոստանում:

3. Ջանքեր գործադրել Ղարաբաղի կարգավիճակին վերաբերող հանրաքվեի խնդրի հստակեցման ուղղությամբ՝ մասնավորապես կոնկրետացնելով հետեւյալ պահերը.

– ով է կազմակերպելու հանրաքվեն՝ ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ը, Ադրբեջա՞նը, թե՞ Ղարաբաղը.

– երբ է տեղի ունենալու հանրաքվեն.

– որ տարածքում է անցկացվելու հանրաքվեն.

– ովքեր են մասնակցելու հանրաքվեին.

– ինչպես է ձեւակերպվելու հանրաքվեի դրված հարցը.

– ինչպիսի իրավական հետեւանքներ է ունենալու հանրաքվեն:

4. Հայաստանը պետք է հրաժարվի կարգավորման գործընթացում Ղարաբաղի անունից խոսելու իրեն չարդարացրած պրակտիկայից, պահանջելով վերականգնել այդ գործընթացի նախկին ձեւաչափը, որում, ԵԱՀԿ-ի 1994թ. Բուդապեշտյան գագաթնաժողովի որոշմամբ, Լեռնային Ղարաբաղը ներկայացված էր հակամարտող կողմի լիիրավ կարգավիճակով: Չպետք է թույլ տալ, որ Ղարաբաղի ճակատագիրը վճռվի առանց իր մասնակցության, քանի որ ինքնորոշման իրավունքի ոտնահարման դրանից ավելի աղաղակող դրսեւորում անհնար է պատկերացնել:

5. Նկատի ունենալով այն մտահոգիչ հանգամանքը, որ Կոսովոյի, Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումից հետո Ղարաբաղի հարցը, որոշակի առումով, դուրս է մնում սառեցված հակամարտությունների լուծման ընդհանուր գործընթացից, թերեւս ժամանակն է մտածել այն մասին, որ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը հանդես գա Լեռնային Ղարաբաղի անկախության

ճանաչման նախաձեռնությամբ: Սերժ Սարգսյանը պարտավորված չպետք է լինի արձագանքելու այդ նախաձեռնությանը, բայց մի կողմից ունենալով խորհրդարանի որոշումը, իսկ մյուս կողմից՝ առկախ թողնելով նրա վավերացումը, նա արտաքին ճնշումները դիմակայելու եւ խուսանավելու մեծ հնարավորություններ կստանա առաջիկա բանակցություններում: Իրադրությունը, ոչ սովորական լինելով, ոչ սովորական քայլեր, դիվանագիտական հրաշագործություններ ու երեւակայության թռիչքներ է պահանջում:

* * *

Լինելով Հայաստանի քաղաքական կյանքում ծանրակշիռ դերակատարություն ունեցող ուժերից մեկը, իր դիրքորոշումն այս իրադրության մեջ պարտավոր է ճշտել նաեւ Համաժողովրդական շարժումը կամ Հայ Ազգային Կոնգրեսը: Եթե հիշում եք, իմ նախորդ ելույթներից մեկում, իշխանության համար մղվող քաղաքական պայքարում ամեն ինչից վեր դասելով ազգային եւ պետական շահը, ես հայտարարել էի, որ Ղարաբաղի դեմ ռազմական սպառնալիքի առաջացման դեպքում կոչով կդիմեմ Համաժողովրդական շարժման մասնակիցներին, խնդրելով ժամանակավորապես դադարեցնել իրենց գործողությունները եւ լծվել համազգային պայքարի նվիրական գործին: Ղարաբաղյան հակամարտության մոտալուտ հանգուցալուծումը, իր պարունակած վտանգներով հավասարազոր լինելով ռազմական սպառնալիքի, կարծում եմ, հրատապ է դարձնում այդ կոչի իրականացումը:

Խոսքը չի վերաբերում, անշուշտ, Շարժման գործունեության լիակատար սառեցմանը, այլ միայնամիայն զանգվածային միջոցառումների՝ համահանրապետական հանրահավաքների եւ երթերի ժամանակավոր դադարեցմանը: Նամանավանդ, որ դադարը երկար չի տեւելու, քանի որ Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծումը ընդամենը երկու–երեք ամիսների հարց է: Իսկ եթե այդ ժամկետը, նոր հանգամանքների ներգործությամբ, մասնավորապես, միջազգային ֆինանսական ճգնաժամի խորացման պատճառով, որոշ չափով ձգձգվի, մենք միշտ էլ հնարավորություն կունենանք ճշգրտել մեր ռազմավարությունը եւ անհրաժեշտ պահին վերսկսել զանգվածային միջոցառումները:

Խոստովանում եմ, սա չափազանց պատասխանատու եւ, առաջին հայացքից, բավականին դժվարամարսելի որոշում է, որն արժանանալու է ոչ միանշանակ գնահատականի: Ուստի առավել ևս հասկանալի պիտի լինի, թե որքան լուրջ ու հիմնավոր պետք է լինեին այն պատճառները, որոնք պայմանավորել են այդպիսի որոշում կայացնելու անհրաժեշտությունը:

Այդ անհրաժեշտությունն ըմբռնելու համար պետք է նկատի ունենալ հետեւյալը: Ռուս–վրացական հակամարտության հետեւանքով Ղարաբաղյան կարգավորման գործընթացում տեղի ունեցած շրջադարձից հետո, Շարժման ակտիվությունն, ինքնաբերաբար, թուլացնում է Սերժ Սարգսյանի դիրքերը ու դրանով մեծացնում նրա վրա արտաքին ճնշումներ բանեցնելու եւ նրանից զիջումներ կորզելու հնարավորությունը: Այսինքն՝ վտանգ է առաջանում, որ ընդդիմությունն, իր կամքից անկախ, կարող է գործիք դառնալ արտաքին ուժերի ձեռքին: Այդ ուժերը, հետեւաբար, կրկնակի անբարոյականություն են գործում. մի կողմից հանդուրժում եւ, կարծես-թե, նույնիսկ խրախուսում են ընդդիմության նկատմամբ Հայաստանի իշխանությունների սանձազերծած հրեշավոր հալածանքները, մյուս կողմից՝ նույն ընդդիմության գոյությունը փորձում ծառայեցնել իրենց հետին նպատակներին:

Ընկնել այս ծուղակը՝ մեր կողմից աններելի մոլորություն ու քաղաքական կարճատեսություն կլիներ: Ավելին, դա հիմնովին կհակասեր Համաժողովրդական շարժման հավատամքին, որը հիմնված է պետական շահի գերակայության սկզբունքի վրա: Հետեւաբար, անկեղծորեն կողմ լինելով թե՛ Ղարաբաղյան հակամարտության, թե՛ հայ–թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորմանը, մենք չենք ուզում Հայաստանի իշխանություններին խանգարել լուծելու այդ խնդիրները: Դադարեցնելով մեր ակտիվությունը, մենք ընդամենը նպատակ ենք հետապնդում նրանց զերծ պահել արտաքին ճնշումներից ու անհարկի զիջումներից: Կան նաեւ այդ քայլին դիմելու որոշ տակտիկական նկատառումներ, սակայն ես առայժմ հարկ չեմ համարում բացահայտել դրանք, քանի որ, ինչպես ակնթարթ ունեցել եմ նշելու, եթե տակտիկան բացահայտվում է, այն դադարում է տակտիկա լինելուց:

Ես քաջ գիտակցում եմ, թե զանգվածային միջոցառումները թեկուզ ժամանակավորապես դադարեցնելու մասին մեր կայացրած որոշումը

ինչպիսի չարախնդությամբ է ընդունվելու իշխանական ճամբարում եւ ինչպիսի տրտունջներ ու տարակուսանքներ է առաջացնելու Համաժողովրդական շարժման շարքերում: Սակայն ուզում եմ հուսախաբ անել չարախնդացողներին եւ հանգստացնել տարակուսողներին. մեր հանձնառության մեջ գործարքի կամ նահանջի տարր փնտրելն անլուրջ է: Մի քանի ամիս անց բոլորը համոզվելու են, թե որքան հիմնավորված ու արդարացի էր այս որոշումը:

Համահանրապետական հանրահավաքների ու երթերի ժամանակավոր դադարեցումը չի նշանակում, որ Շարժումը հրաժարվում է հետագա քաղաքական պայքարից եւ իր առաջ դրած պահանջներից, որոնք են՝ քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակումը, երկրում իրական ժողովրդավարության ու օրինականության հաստատումը, արտահերթ խորհրդարանական ու նախագահական ընտրությունների անցկացումը: Ընդհակառակը, համոզված ենք, որ այդ քայլը ոչ թե դանդաղեցնելու, այլ արագացնելու է նշված նպատակների իրականացումը:

Առաջիկա ամիսներին Շարժումն իր գործունեությունը կենտրոնացնելու է գլխավորապես կազմակերպական աշխատանքների եւ Հայ Ազգային Կոնգրեսի կառույցների ձեւավորման վրա՝ նախապատրաստելու համար Կոնգրեսի հիմնադիր համաժողովի գումարումը, որը նշանակալի իրադարձություն է դառնալու Հայաստանի քաղաքական կյանքում, միաժամանակ հիմք ստեղծելով, անհրաժեշտության դեպքում, ավելի լայնածավալ միջոցառումներ անցկացնելու համար: Դրան զուգընթաց, այս հանգրվանում մենք շարունակելու ենք ոչ զանգվածային միջոցառումների անցկացումը, ակտիվ մասնակցությունը ընթացող քաղաքական դատավարություններին, սեփական թեկնածուների պաշտպանությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, լայնածավալ քարոզչության ծավալումը տեսասկավառակների եւ տպագիր մամուլի միջոցներով, մարտի 1-ի ոճրագործության ինքնուրույն հետաքննությունը եւ նրա իրական պատասխանատուների բացահայտումը:

Իրավիճակը լրջություն է պահանջում Հայաստանի բոլոր քաղաքական ուժերից: Զանգվածային միջոցառումներից միառժամանակ հրաժարվելու համարձակ եւ պատասխանատու քայլով Համաժողովրդական

շարժումն ապացուցում է իր լրջությունը: Նույնը մնում է ապացուցել Հայաստանի իշխանություններին ու նրանց սպասարկուներին:

Հատկանշական է, որ այդ ֆայլին մենք դիմում ենք ոչ թե Շարժման մարման, այլ վերելքի պահին, այն է՝ մարտի 1-ից հետո անցկացված ամենաբազմամարդ հանրահավաքում, ինչը Հայ Ազգային Կոնգրեսի հզորության եւ միաժամանակ նրա զսպվածության ամենացայտուն արտահայտությունն է:

Այսպիսով, մոտակա ամիսներին մեզ սպասում են Ղարաբաղի եւ հայոց պետականության ճակատագրի հետ կապված կարեւորագույն իրադարձություններ, որոնք այս հանգրվանում երկրորդական են դարձնում ներքաղաքական խնդիրները: Մենք ուշի–ուշով հետեւելու ենք այդ իրադարձությունների զարգացմանը, գնահատելու Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերի համարժեքությունը իրավիճակի պահանջներին, հասարակությանը մշտապես իրազեկ պահելու Ղարաբաղյան կարգավորման ընթացքի մասին եւ փորձելու կանխել կամ նվազագույնի հասցնել հայկական կողմի շահերին սպառնացող վտանգները: Նույն արտացավությունը մենք ակնկալում ենք ազգի եւ պետության բախտով մտահոգված բոլոր առողջ քաղաքական եւ հասարակական ուժերից:

Իսկ վերջում, կիսնդրեի շտապ եզրակացություններ չանել իմ ելույթից, այլ նրա մասին վերջնական կարծիք կազմել վաղվա թերթերում այն ուշադիր ընթերցելուց հետո: Հուսով եմ, որ այս ելույթով վերջապես սկիզբ կդրվի Ղարաբաղի հարցի վերաբերյալ վաղուց սպասված լուրջ հասարակական բանավեճի, որի ընթացքում շատ բան ձեզ համար ավելի հասկանալի կդառնա:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 18 հոկտեմբերի, 2008թ.: «168 ժամ», 19 հոկտեմբերի, 2008թ.:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ

(հարցազրույց «Ա1+» գործակալությանը, 4 նոյեմբերի, 2008թ.)

– Պարոն Նախագահ, հոկտեմբերի 17-ի Ձեր ելեույթում Դուք խոստացել էիք հասարակությանը մշտապես իրազեկ պահել Ղարաբաղյան կարգավորման զարգացումներին: Արդյոք, Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի Նախագահներ Մեդվեդեւի, Սարգսյանի եւ Ալիեւի նոյեմբերի 2-ի համատեղ հռչակագիրը կարելի՞ է դիտել որպես այդ զարգացումներից մեկը:

– Նախ՝ ես չեմ մոռացել իմ խոստումը: Ավելին, այս զրույցն առարկայական դարձնելու նկատառումով, ավելորդ չեմ համարում ընթերցողին հիշեցնել ելույթիս համապատասխան հատվածը. «Մոտակա ամիսներին մեզ սպասում են Ղարաբաղի եւ հայոց պետականության ճակատագրի հետ կապված կարեւորագույն իրադարձություններ, որոնք այս հանգրվանում երկրորդական են դարձնում ներքաղաքական խնդիրները: Մենք ուշի-ուշով հետեւելու ենք այդ իրադարձությունների զարգացմանը, գնահատելու Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերի համարժեքությունը իրավիճակի պահանջներին, հասարակությանը մշտապես իրազեկ պահելու Ղարաբաղյան կարգավորման ընթացքի մասին եւ փորձելու կանխել կամ նվազագույնի հասցնել հայկական կողմի շահերին սպառնացող վտանգները»: Ինչ վերաբերում է Ձեր բուն հարցին, ապա, անշուշտ, մոսկովյան հռչակագիրը գործընթացի կարեւորագույն զարգացումներից մեկը պետք է դիտել:

– Շատերի մոտ տպավորություն է առաջացել, որ այդ հռչակագիրը ձեւական բնույթ է կրում եւ զուրկ է կոնկրետ բովանդակությունից:

– Այդպիսի թյուր տպավորություն կարող է առաջանալ Ղարաբաղյան կարգավորման գործընթացի ծալքերին անծանոթ մարդկանց մոտ: Մինչդեռ փորձագետների համար հոչակագիրն, ընդհակառակը, չափազանց պերճախոս է, քանի որ նրանում հստակեցված են մի քանի սկզբունքային եւ կոնկրետ պահեր: Պետք է նկատի ունենալ նաեւ, որ այդ փաստաթուղթն ընդամենը այսբերգի գագաթն է, եւ նրա տակ ընկած է շատ ավելի հանգամանալից մի արձանագրություն, որի բովանդակությունը դժվար չէ գուշակել:

– Որո՞նք են Ձեր ակնարկած սկզբունքային եւ կոնկրետ պահերը:

– Հոչակագրի առաջին իսկ կետը պարունակում է մի մտահոգիչ ձեւակերպում, որի համաձայն՝ «Ղարաբաղյան հակամարտությունը կարգավորվելու է միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի, ինչպես նաեւ դրանց շրջանակներում ընդունված որոշումների եւ փաստաթղթերի հիման վրա»: Մտահոգիչը ոչ այնքան «միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին» վերաբերող դիվանագիտական նրբաացությունն է, որքան «դրանց շրջանակներում ընդունված որոշումների եւ փաստաթղթերի» հիշատակումը: Վերջիններիս տակ, անկասկած Ադրբեջանի պահանջով, նկատի են առնված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 62/243 եւ Եւրոխորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի 1614 բանաձեւերը, որոնցում ճանաչվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ պահանջվում հայկական զորքերի անվերապահ դուրսբերումը Ղարաբաղին հարակից ադրբեջանական տարածքներից:

Մոսկովյան հոչակագրի 2-րդ կետում միանշանակորեն արձանագրված է, որ Ղարաբաղյան կարգավորման հիմքում ընկած է լինելու Մինսկի խմբի համանախագահության 2007թ. նոյեմբերի 29-ի Մադրիդյան առաջարկը: Քանի որ այդ առաջարկի բովանդակությունը ես մանրամասնորեն ներկայացրել եմ հոկտեմբերի 17-ի իմ ելույթում, հարկ չեմ համարում վերստին անդրադառնալ դրան: Հիշեցնեմ միայն, որ Մադրիդյան առաջարկի գաղափարախոսությունը միջազգային իրավունքի երկու սկզբունքների՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման ներդաշնակումն է:

Հոչակագրի նախաբանում եւ 4-րդ կետում, որոնցում խոսվում է Ղարաբաղյան խնդիրը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ընթացող

ուղղակի երկխոսության միջոցով լուծելու անհրաժեշտության մասին, փաստորեն սահմանվում է հակամարտության կողմերի նոր ձեւաչափ: Հոչակագիրն, այսպիսով, վերջնականապես թաղում է ԵԱՀԿ-ի 1994թ. Բուդապեշտյան գագաթնաժողովի ընդունած որոշումը, որով Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը ճանաչվել էր որպես հակամարտության երրորդ լիիրավ կողմ: Իսկ դա նշանակում է, որ ԼՂՀ-ն որեւէ դերակատարություն չի ունենալու իր բախտը վճռող բանակցությունների հետագա գործընթացում:

Մոսկովյան հոչակագրի ամենակարեւոր արդյունքը, սակայն, պետք է համարել այն, որ նոր ձեւաչափով սահմանված հակամարտող երկու կողմերը՝ Հայաստանը եւ Ադրբեջանը, ստորագրելով այդ փաստաթուղթը, պաշտոնապես իրենց համաձայնությունն են տվել Մադրիդյան առաջարկին, ինչը աննախադեպ իրադարձություն է Ղարաբաղյան կարգավորման ողջ գործընթացում: Խնդիրն այն է, որ Մինսկի խմբի համանախագահության նախորդ երեք պաշտոնական առաջարկները, այսինքն՝ «Փաթեթային», «Փուլային» եւ «Ընդհանուր պետության» տարբերակները, չեն արժանացել հակամարտող կողմերի միահամուռ հավանությանը եւ այդ պատճառով հանվել օրակարգից: «Փաթեթային» եւ «Փուլային» տարբերակները մերժվել են Ղարաբաղի, իսկ «Ընդհանուր պետության» տարբերակը՝ Ադրբեջանի կողմից: Մոսկովյան հոչակագրի տակ դրված Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի ստորագրությամբ, այսպիսով, ազդարարված է Ղարաբաղյան կարգավորման ավարտական փուլի սկիզբը:

– Դուք չմոռացա՞ք, արդյոք, նշել նաեւ Քի-Վեստյան տարբերակը:

– Քի-Վեստյան տարբերակը Մինսկի խմբի համանախագահության պաշտոնական առաջարկ չի եղել: Ամեն պարագայում, այդ տարբերակը եւս չի ընդունվել հակամարտող կողմերից մեկի, այն է՝ Ադրբեջանի կողմից:

– Ռուսաստանի նախաձեռնությունն, արդյոք, չի՞ հակասում Ձեր վերջին ելույթում արտահայտված այն մտքին, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ վճռական դեր է խաղալու Արեւմուտքը:

– Ամենեւին ոչ: Մոսկովյան հանդիպումը, թեեւ իսկապես շրջադարձային, սակայն կարգավորման գործընթացի սոսկ սկիզբն է: Այժմ այդ գործընթացը շարունակվում է Եւրոպայում, իսկ ավարտվելու է, ամե-

նայն հավանականությամբ, դեկտեմբեր ամսին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այսինքն, թեեւ կարգավորման սկզբնավորման պատիվն առերեւույթ մատուցվել է Ռուսաստանին, սակայն նրա վերջակետը դնելու մենաշնորհը պատկանելու է Արեւմուտքին: Թե՛ Սարգսյանը, թե՛ Ալիեւը մոսկովյան հանդիպմանը մասնակցել են, եթե ոչ հարկադրաբար, ապա անթաքույց դժկամությամբ, եւ միեւնույն է, թեեւ տարբեր նկատառումներով, նրանք վերջիվերջո նախընտրելու են Արեւմուտքի միջնորդությունը:

– Այդ դեպքում ի՞նչ դեր է վերապահված Մինսկի խմբին, որի գործունեության շարունակման անհրաժեշտությունը ընդգծված է հռչակագրում:

– Որքան շատ է ընդգծվում Մինսկի խմբի գործունեության անհրաժեշտությունը եւ որքան շատ հանոյախոսություններ են շռայլվում նրա հասցեին, այնքան ավելի խորանում են նրա ներսում առկա տարաձայնությունների մասին կասկածները: Մինսկի խումբը, օգտակար աշխատանքային գործիք լինելով հանդերձ, սոսկ արտաքին քողածածկույթ է՝ միջնորդ-երկրների հետապնդած նպատակների դիվանագիտական պատշաճությունն ապահովելու համար:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 5 նոյեմբերի, 2008թ.:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «NEWSWEEK» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԹՂԹԱԿԻՑ ՍԵՄԻՆ ԳՅՈՒՄՈՒՇԵԼԻԻ ՀԵՏ

(1 դեկտեմբերի, 2008թ.)

– Պարոն նախագահ, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական ակտիվության ներկա մակարդակը:

– Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական ակտիվության ներկա մակարդակը հիշեցնում է 1991–1993թթ. վիճակը: Այն ժամանակվա պես, այսօր էլ կողմերը դրական ազդանշաններ են հաղորդում միմյանց, պատրաստակամություն հայտնելով ջանքեր գործադրել երկու երկրների հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Բարիդրացիության հաստատման առաջին փորձը, ինչ-ինչ պատճառներով, ձախողվեց: Հուսանք, որ երկրորդ փորձն ավելի հաջող ավարտ կունենա:

– Այս նոր դիվանագիտական ակտիվության համար խթան հանդիսացավ նաեւ Թուրքիայի նախագահ Գյուլի Հայաստան կատարած այցելությունը: Շարունակվում են նաեւ երկու երկրների դիվանագետների եւ պաշտոնյաների միջեւ գաղտնի բանակցությունները: Այս նոր իրավիճակում Դուք ինչպե՞ս եք գնահատում երկու երկրների մերձեցման փորձի ժամանակացույցը:

– Գնահատելով հանդերձ պարոն Գյուլի այցը, կարծում եմ դեռ վաղ է այն պատմական համարել: Պատմական դառնալու համար անհրաժեշտ է, որ այդ այցը շոշափելի արդյունքներ ունենա: Ինչ վերաբերում է երկու երկրների դիվանագետների եւ պաշտոնյաների կապերին, ապա ես կխուսափեի դրանք գաղտնի կոչել: Դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում այդպիսի խողովակներ միշտ էլ գործել են՝ գլխավորապես տեխնիկական հարցեր կարգավորե-

լու նպատակով: Իսկ Թուրքիայի եւ Հայաստանի ներկա մերձեցման պահի ընտրությունը (timing) պայմանավորված է ռուս–վրացական հակամարտության հետեւանքով Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակով, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի շուտափույթ կարգավորման հեռանկարով:

– Վրաստանում տեղ գտած օգոստոսյան իրադարձություններից հետո տարածաշրջանային կայունությունը դարձավ առաջնահերթություն, ինչը Թուրքիային դրդեց առաջ քաշել Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմի գաղափարը: Ինչպե՞ս եք գնահատում այդ նախաձեռնությունը: Արդյո՞ք այդ պլատֆորմը դրական ազդեցություն կունենա Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա:

– Համաձայն եմ, որ օգոստոսյան իրադարձություններից հետո տարածաշրջանային կայունության անհրաժեշտությունը առաջնահերթություն է դարձել: Սակայն այդ գաղափարը նոր չէ, եթե նկատի առնենք, որ վերջին հաշվով նույն նպատակին էր ուղղված Սեւծովյան երկրների համագործակցության ծրագիրը: Կովկասյան կայունության եւ համագործակցության պլատֆորմը, անշուշտ, ողջունելի է: Սակայն նրա իրականացումը մեծապես կախված է այն բանից, թե որքան անկողմնակալ եւ կոնստրուկտիվ կլինի Թուրքիայի դիրքորոշումը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում: Բացի այդ, դժվար է պատկերացնել նման գաղափարի հաջողությունը առանց տարածաշրջանային կարեւոր դերակատարներից մեկի՝ Իրանի մասնակցության:

– Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացին, ի՞նչ եք կարծում, արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի դիրքորոշումների մեջ կտրուկ փոփոխություն է տեղի ունեցել: Արդյո՞ք կան լավատեսության հիմքեր բանակցությունների ներկա փուլի առնչությամբ, մասնավորապես, Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների կողմից Մոսկովյան հռչակագրի ստորագրությունից հետո: Արդյո՞ք Թուրքիան կարող է միջնորդական դերակատարություն ունենալ հակամարտության կարգավորման մեջ:

– Նկատի ունենալով Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների որդեգրած իռացիոնալ դիրքորոշումները, ես չեմ հավատում, որ այդ

երկրներն ընդունակ են երբեւէ համաձայնության գալու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ: Ամեն ինչ կախված է միջնորդների, առաջին հերթին, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի ներդրած ջանքերի արդյունավետությունից: Մինչ այժմ ո՛չ Արեւմուտքի, ո՛չ էլ Ռուսաստանի համար Ղարաբաղի հարցը առաջնահերթություն չի եղել, ինչի պատճառով էլ նրանք անհրաժեշտ ջանքեր չեն գործադրել այն լուծելու ուղղությամբ: Կարծում եմ, Հարավկովկասյան վերջին զարգացումները նրանց պետք է ստիպեն վերանայել իրենց մոտեցումը: Մոսկովյան հոչակագիրը դրա արտահայտություններից մեկն է, որին, վստահ եմ, շուտով կհետեւեն Արեւմուտքի նախաձեռնությունները: Իսկ Թուրքիայի դրական դերը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում ես տեսնում եմ Ադրբեջանի վրա ազդեցություն գործելու եւ նրան փոխզիջման տրամադրելու ունակության մեջ:

– Պարոն նախագահ, հիմնվելով Ձեր փորձառության վրա, Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը:

– Իմ պատկերացմամբ՝ հարցը պետք է լուծվի փուլ առ փուլ, հավասարակշռված փոխզիջումների հիման վրա, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հանրապետության ինքնորոշման իրավունքը: Կարծում եմ, Մինսկի խմբի համանախագահության ներկայացրած Մադրիդյան առաջարկը լուրջ հիմք է այդպիսի լուծման հասնելու համար: Թեեւ այդ առաջարկը, այսօրվա դրությամբ, լիապես չի բավարարում կողմերից ոչ մեկին, սակայն արդյունավետ միջնորդական ջանքերի գործադրման եւ միջազգային երաշխիքների ապահովման պարագայում հայկական կողմի եւ Ադրբեջանի միջեւ գոյություն ունեցող տարաձայնությունները ինձ միանգամայն հաղթահարելի են թվում:

– Պարոն նախագահ, Դուք քննադատում եք Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին արեւմտամետ դիրքորոշում որդեգրելու համար, Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ հավասակշռության քաղաքականությունը պահպանելու փոխարեն: Ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ արտաքին քաղաքականության նման փոփոխությունը, մասնավորապես, այն բանից հետո, երբ Ռուսաստանը տարածաշրջանում ցուցադրեց իր ռազմական ուժը:

– Ռուսաստանի եւ Արեւմուտքի հավասարակշռության խախտումը Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ ես վտանգավոր եմ համարում թե՛ տարածաշրջանային անվտանգության, եւ թե՛ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման առումով: Մանավանդ, որ այդ վարքագիծը թելադրված է ոչ թե ստրատեգիական նկատառումներով, այլ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի առանձնահատկությամբ: Երկրի ներսում լեգիտիմության դեֆիցիտը Սերժ Սարգսյանը ձգտում է փոխհատուցել արտաքին աշխարհում լեգիտիմություն ստանալով: Ի տարբերություն Ռուսաստանի, որը Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը կասկածի տակ չի դրել, Սերժ Սարգսյանն իր լեգիտիմության ճանաչման խնդիր ունի Արեւմուտքում: ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը այդպես էլ մինչ օրս չի շնորհավորել նրան: Իսկ Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովը շարունակում է պահպանել Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու սպառնալիքը, ինչի իրագործումը կասկածի տակ կարող է դնել Սերժ Սարգսյանի լեգիտիմությունը: Այսինքն՝ Սարգսյանն այս հարցում Ռուսաստանից սպասելիք չունի, եւ նրա միակ հույսը Արեւմուտքի բարեհաճությունն ստանալու ակնկալիքն է, ինչի համար նա պատրաստ է ցանկացած զիջման: Իսկ քանի որ Հայաստանը, հանքային ռեսուրսների, տարանցիկ ճանապարհների եւ գրավիչ շուկայի բացակայության պատճառով, Արեւմուտքին առաջարկելու այլ բան չունի, քան իր պետական շահը, Սարգսյանը հետեւաբար ընտրել է այդ շահը զոհաբերելու ճանապարհը:

– Անդրադառնալով անցյալ տարվա մարտին տեղի ունեցած իրադարձություններին եւ Ձեր երկրի ներքաղաքական ճգնաժամին, Դուք ինչպե՞ս եք մեկնաբանում այն իրադարձությունները, որոնք ավարտվեցին ընդդիմության դեմ բռնի ուժի գործադրմամբ, ինչի արդյունքում անձամբ Դուք հայտնվեցիք տնային կալանքի մեջ: Ձեր կարծիքով Հայաստանի ներկա իշխանությունները շարունակո՞ւմ են վախենալ Ձեզնից որպես քաղաքական գործիչի, թե Հայաստանի քաղաքականության մեջ վտանգ ներկայացնող գործիչի: Ավելին, ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանում ժողովրդավարության հեռանկարները եւ արդյոք հնարավոր է ժողովրդավարության առաջընթաց ակնկալել քաղաքական փակուղու պայմաններում, երբ անգամ քաղբանտարկյալները դեռեւս բանտում են:

– Հայաստանի հասարակության մեծամասնության համար անառարկելի է այն փաստը, որ Սերժ Սարգսյանը իշխանությանը տիրել է կեղծված ընտրությունների եւ խաղաղ ցուցարարների դեմ գործադրված սպանդի միջոցով: Այդ պատճառով ժողովրդավարության վերականգնման միակ հեռանկարը մենք համարում ենք արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացումը, որը մեր ներքին խնդիրն է եւ լուծելու ենք ինքներս: Դրանով հանդերձ, մենք չենք կարող մեր հուսախաբությունը չարտահայտել Հայաստանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոտնահարման հանդեպ Արեւմուտքի դրսեւորած հանդուրժողականության առթիվ, ինչն այլ կերպ, քան քաղաքական շահադիտության վրա հիմնված վարքագիծ չի կարելի կոչել: Տպավորություն է ստեղծվում, որ Արեւմուտքի համար ժողովրդավարությունը եւ մարդու իրավունքները դադարել են ինքնին արժեք լինելուց:

– Պարոն նախագահ, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների բարելավման հարցում Ձեր հայացքները եւ Ձեր վարչակազմի վարած քաղաքականությունը ժամանակին գնահատվում էին որպես բեկումնային եւ առաջադիմական: Այժմ, երբ Սարգսյանը հետեւում է Ձեր առաջ քաշած քաղաքականությանը, չե՞ք ցավում այն բանի համար, որ Հայաստանը այսքան մեծ ուշացումով է գնահատում եւ ընկալում Ձեր ջանքերը:

– Ինձ այնքան էլ չի հետաքրքրում հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման գործում իմ վարած քաղաքականության գնահատականը, ոչ էլ ափսոսում եմ, որ իմ ջանքերն ուշացումով են ընկալվում: Ցավում եմ միայն կորսված ժամանակի եւ բաց թողնված հնարավորությունների համար: Եթե Հայաստանի իշխանություններն անկեղծորեն ձգտում են վերականգնել այդ կորուստները, ես միայն գոհունակություն կարող եմ արտահայտել այդ առթիվ:

– Ձեր քաղաքական կարիերայից տասնյակ տարիներ հետո որո՞նք են Ձեր կարծիքով Ձեր անցյալ սխալները եւ թյուր հաշվարկները հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց դուրս բերելու մոտեցման մեջ: Օրինակ, Ձեր նախկին խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը իր գրքում նշում է ընդհանուր պատմության մասին, որն ազդեցություն է ունեցել ինչպես Հայաստանում, այնպես էլ Թուրքիայում պե-

տականության ձեւավորման հարցում: Ի՞նչ կասեիք ընդհանրական պատմության եւ ապագայի մասին:

– Այդ հարցում իմ սխալների եւ թյուր հաշվարկների մասին պետք է հարցնել թուրքական կողմի կարծիքը: Ես կարող եմ խոսել Թուրքիայի իշխանությունների բացթողումների մասին, որոնցից գլխավորը, իմ կարծիքով, հայ–թուրքական հարաբերությունների պայմանավորումն էր հայ–ադրբեջանական հարաբերություններով: Դա մասամբ բացատրվում էր այն իրողությամբ, որ 90-ական թվականներին թուրքական կառավարությունները մեծամասնության կառավարություններ չէին, եւ այդ պատճառով Թուրքիայում Ադրբեջանի նկատմամբ համերաշխությունը վերածվել էր ներքաղաքական պայքարի առարկայի: Թուրքիայի ներկայիս մեծամասնական կառավարությունը չունի այդ մտահոգությունը, ինչը հույս է ներշնչում նրանից ակնկալել ավելի կառուցողական մոտեցում:

“Newsweek Turkiye”, 1 դեկտեմբերի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ
(21 դեկտեմբերի, 2008թ.)

Սիրելի համախոհներ եւ բարեկամներ,

Հայ Ազգային Կոնգրեսի ընթացիկ համաժողովը, որի խնդիրն է հստակեցնել Համաժողովրդական շարժման ռազմավարությունը, տեղի է ունենում բարդագույն քաղաքական իրավիճակում: Բարդությունն, ընդ որում, վերաբերում է ոչ միայն Կոնգրեսի գործունեությանը, որն ընթանում է Շարժման դեմ սանձազերծված աննախադեպ հալածանքի ու բռնությունների պայմաններում, այլեւ պետության առջեւ ծառացած հրատապ խնդիրներին, որոնց լուծումը համարժեք քայլեր է պահանջում թե՛ իշխանություններից, թե՛ ընդդիմությունից:

Իշխանությունների վարքագծի ընտրությունը թողնելով իրենց, մենք, որպես ժողովրդի առջեւ որոշակի պատասխանատվություն ունեցող քաղաքական ուժ, պարտավոր ենք, առաջին հերթին, ճշտել մեր գործողությունների համարժեքությունը ստեղծված իրավիճակին: Իսկ դրա համար նախեւառաջ անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ այն մարտահրավերների մասին, որոնք այսօր կանգնած են Հայաստանի առջեւ: Ինքնըստինքյան ակնհայտ է, որ դրանք երեքն են. **ա.** Ղարաբաղյան հակամարտության մոտալուտ հանգուցալուծումը. **բ.** Միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը երկրի տնտեսության վրա. **գ.** Սահմանադրական կարգի եւ ժողովրդավարական ազատությունների վերականգնման անհրաժեշտությունը: Ըստ այդմ, հարկ եմ համարում ստորեւ առանձին-առանձին անդրադառնալ այդ մարտա-

հրավերներին՝ շեշտը դնելով հատկապես նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ Շարժման դրսեւորելիք վերաբերմունքի վրա:

Ա. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ

Հոկտեմբերի 17-ի հանրահավաքում ունեցած ելույթում ես տվել եմ Ղարաբաղյան կարգավորման գործընթացի ներկա փուլի հանգամանալից գնահատականը, որը, ելույթին հաջորդած զարգացումների լույսի ներքո, ոչ միայն չի փոխվել, այլեւ ավելի է ամրապնդվել: Դրա վկայությունն են՝ նոյեմբերի 2-ի Մոսկովյան հռչակագիրը, դեկտեմբերի 4-ի Հելսինկյան հայտարարությունը, Մինսկի խմբի համանախագահների գործունեության ակտիվացումը, Սերժ Սարգսյանի հանդիպումները Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի եւ ՆԱՏՕ-ի ղեկավարության հետ, ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի եւ Սերժ Սարգսյանի հեռախոսազրույցը, ԱՄՆ-ի փոխպետքարտուղար Դանիել Ֆրիդի այցելությունն Ադրբեջան, թուրքական դիվանագիտության էլ ավելի աշխուժացումն առկա գործընթացում, բազմաթիվ օտարերկրացի պաշտոնատար անձանց լավատեսական հայտարարությունները Ղարաբաղյան հակամարտության շուտափույթ կարգավորման վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության «Հանրաքվեի մասին» օրենքում կատարված հապշտապ փոփոխությունները, Հայաստանի իշխանությունների ակնհայտ քարոզչական ջանքերը հասարակությանը Ղարաբաղի հարցի լուծման գաղափարին նախապատրաստելու համար եւ այլն: Այս ամենը՝ մի կողմից հաստատում է միջազգային հանրության վճռականությունը Ղարաբաղի խնդիրը շուտափույթ կերպով լուծելու հարցում, մյուս կողմից՝ Սերժ Սարգսյանի ակնհայտ պատրաստակամությունը՝ գնալու այդ լուծմանը: Թե որոնք են վերջինիս՝ տվյալ քայլին դիմելու դրդապատճառները, դրանց մասին ես մանրամասն խոսել եմ հիշյալ ելույթում, ուստի հարկ չեմ համարում կրկին անդրադառնալ այդ թեմային:

Վերը նշված զարգացումներից, անշուշտ, պետք է առանձնացնել Մոսկովյան հռչակագիրը, որը, Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների համաձայնությամբ, վերջնականապես ամրագրեց երկու կարեւորագույն սկզբունք. **ա.** Ղարաբաղյան կարգավորման հիմքում ընկած է լինելու Մադրիդյան առաջարկը. **բ.** Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

տությունը չի մասնակցելու կարգավորման գործընթացին: Մի երրորդ կարեւոր սկզբունք էլ հաստատվել է թուրքական դիվանագիտության կողմից, որի համաձայն՝ Ղարաբաղյան հակամարտությունը եւ հայ–թուրքական հարաբերությունները կարգավորվելու են փաթեթով, ինչի մասին վերջերս պաշտոնապես հայտարարեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանը: Սրանք շրջադարձային, կարելի է ասել, կարգավորման գործընթացին նոր որակ հաղորդող սկզբունքներ են, ուստի արժե մեկառմեկ անդրադառնալ դրանց:

ա. Մադրիդյան առաջարկը, որը Մինսկի խմբի համանախագահության կողմից պաշտոնապես հակամարտող կողմերին է ներկայացվել 2007թ. նոյեմբերի 29-ին, այսպես կոչված, Պրագյան գործընթացի արգասիքն է: Թեեւ Հայաստանի ներկա վարչակազմը, նախորդի նման, ինչ-որ խորհրդավորություն է ուզում ստեղծել կարգավորման այդ ծրագրի շուրջ, սակայն Մադրիդյան սկզբունքներն, ըստ էության, այլ բան չեն, քան այն, ինչ ես տասը կետով ներկայացրել եմ հոկտեմբերի 17-ի ելույթում: Պատահական չէ, որ թեեւ այդ ելույթից հետո արդեն անցել է երկու ամիս, բայց իշխանության ոչ մի ներկայացուցիչ դեռեւս չի հերքել նշված կետերը: Սակայն սա չէ էականը, այլ այն առանձնահատուկ հանգամանքը, որ ստորագրելով Մոսկովյան հռչակագիրը, Սերժ Սարգսյանը պաշտոնապես իր համաձայնությունն է տվել Մադրիդյան առաջարկին՝ հրաժարվելով նախորդ վարչակազմի «սկզբունքորեն համաձայն ենք» հերթապահ խուսափողական պատասխանից եւ որոշակիություն մտցնելով Հայաստանի դիրքորոշման մեջ: Նկատի ունենալով, որ Մադրիդյան առաջարկը պաշտոնապես ընդունել է նաեւ Ադրբեջանը, նշանակում է՝ Հայաստանն այլեւս նահանջի տեղ չունի, եւ Ղարաբաղյան կարգավորման գործընթացն այսուհետեւ զարգանալու է Մոսկովյան հռչակագրի գծած հունով:

բ. Կարգավորման գործընթացից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դուրս մնալու հանգամանքը կարեւորվում է, առաջին հերթին, հենց այս տեսակետից: Որովհետեւ եթե Ղարաբաղը պահպանած լիներ ԵԱՀԿ-ի 1994թ. Բուդապեշտյան գագաթնաժողովում ձեռք բերած հակամարտության լիիրավ կողմի իր կարգավիճակը, ապա, անկախ Հայաստանի եւ Ադրբեջանի կամքից, այսօր հնարավորություն կունենար մերժել Մադրիդյան առաջարկը, ինչպես ժամանակին մերժել է կարգավոր-

ման, այսպես կոչված, «Փաթեթային» եւ «Փուլային» տարբերակները: Այսինքն, հայկական կողմը, փաստորեն, կորցրել է կարգավորման գործընթացում երկու սուբյեկտով հանդես գալու եւ մանեւրելու հնարավորություն ունենալու առավելությունը, չխոսած այլեւս այն մասին, որ կարգավորման գործընթացից Լեռնային Ղարաբաղի դուրս մղումը ծաղրի է վերածել նրա ինքնորոշման իրավունքը: Այս ամենը տեղի է ունեցել, առաջին հերթին, Ռոբերտ Քոչարյանի, Վարդան Օսկանյանի եւ Արկադի Ղուկասյանի մեղքով: Մոսկովյան հոչակագիրը սոսկ ամրագրել եւ իրավականորեն վավերացրել է նրանց «պատմական ձեռքբերումը», եւ Հայաստանի ու Ղարաբաղի ներկայիս իշխանությունները ստիպված են հաշտվել այդ տխրահռչակ աննավորությունների թողած խայտառակ ժառանգության հետ: Անշրջելի է, արդյո՞ք, այս իրականությունը: Դժբախտաբար՝ այո՛, քանի որ, ինչպես ասում են, բանը բանից անցել կամ գնացքը մեկնել է: Իզուր չէ, որ այս ամենը նկատի ունենալով, դեռեւս անցյալ տարվա հոկտեմբերի 26-ի ելույթում ես ահազանգել էի. «Անհրաժեշտ է վերադառնալ Ղարաբաղի հարցի կարգավորման նախկին ձեւաչափին, որում Ղարաբաղը ներկայացված էր որպես հակամարտության լիիրավ կողմ: Հասկանալի է, որ դա անհնար է պատկերացնել Սերժ Սարգսյանի նախագահ ընտրվելու պարագայում, որը նույնպես ղարաբաղցի լինելով, Քոչարյանի նման հավակնելու է բանակցություններում ներկայացնել նաեւ Ղարաբաղյան կողմը»:

Իրավիճակը, թերեւս այլ կլիներ, եթե թեկուզ այդ ահազանգից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարությունը հայտարարեր, որ Հայաստանի իշխանություններին զրկում է իր անունից խոսելու իրավունքից: Նման բան չարվեց, եւ այսուհետեւ էլ չի արվելու, քանի որ Ղարաբաղի ղեկավարությունը, բազմաթիվ պարտավորություններով կապված լինելով Հայաստանի ավազակապետական վարչախմբի պարագլուխների հետ, համարձակություն չի ունենալու հակադրվել նրանց կամքին: Մի՞թե ձեզ չի զարմացնում այն, որ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, տեղի-անտեղի տրտնջալով կարգավորման գործընթացից Ղարաբաղի դուրս մնալու առթիվ, այդպես էլ չի կատարում այդ տարրական հայտարարությունը: Թեեւ արդեն դժվար է ասել, թե այդ ուշացած քայլը որքանով կնպաստի վիճակի շտկմանը:

գ. Անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտությունը եւ հայ–թուրքական հարաբերությունները փաթեթով կարգավորելու ուղվագծվող սկզբունքին, ապա գործնական քաղաքականության եւ մեթոդաբանության առումով, դա, թերեւս, իրատեսական մոտեցում է: Որովհետեւ միանգամայն ակնհայտ է, որ քանի դեռ Ղարաբաղի հարցը լուծված չէ, հայ–թուրքական հարաբերությունները չեն կարգավորվելու եւ հայ–թուրքական սահմանը չի բացվելու: Սակայն մեթոդաբանական այդ սկզբունքի իրականացումը կախված է նրանից, թե որքան անկողմնակալ եւ կառուցողական կլինի Թուրքիայի դիրքորոշումը Ղարաբաղյան կարգավորման գործընթացում՝ մասնավորապես Ադրբեջանի վրա ազդեցություն գործելու եւ նրան փոխզիջման տրամադրելու առումով: Հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման համատեքստում թուրքական կողմն, ակնհայտորեն, նկատի ունի նաեւ Ցեղասպանության հարցով հայ եւ թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողովի ստեղծումը: Մոռացված այս գաղափարը, որն անզգուշաբար քաղաքական օրակարգ մտավ Սերժ Սարգսյանի թեթեւ ձեռքով, կարող է լուրջ եւ անհարկի խոչընդոտներ հարուցել ինչպես Ղարաբաղյան հակամարտության, այնպես էլ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման գործում, քանի որ ակնհայտ է, որ մի կողմից՝ Թուրքիան չի հրաժարվելու այդպիսի հանձնաժողով ստեղծելու սեւեռուն մտադրությունից, մյուս կողմից՝ Սարգսյանը, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, հասարակական կարծիքի ճնշման տակ, չի կարողանալու դրականորեն արձագանքել այդ մտադրությանը:

* * *

Պաշտոնական քարոզչությունը փորձում է Մադրիդյան առաջարկը եւ Մոսկովյան հռչակագիրը ներկայացնել որպես հայկական դիվանագիտության մեծագույն հաղթանակ, ինչը մի կողմից՝ իշխանությունների դեմքը փրկելու միջոց, իսկ մյուս կողմից՝ Ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու նրանց պատրաստակամության արտահայտությունը պետք է համարել: Այդ պատրաստակամությունը հաստատվում է այն հանգամանքով, որ պաշտոնականից բացի, իշխանությունների կողմից տենդորեն տարվում է նաեւ ծածուկ քարոզչական աշխատանք,

որի նպատակն է՝ թիմակիցներին, այսինքն Հայաստանի եւ Ղարաբաղի քաղաքական-տնտեսական վերնախավին, ապացուցել հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը, եւ համոզել, որ այլ ճանապարհ չկա: Դրա համար մասնավորապես կիրառվում է հետեւյալ փաստարկը. «Եթե չգնանք այս լուծմանը, ապա Հայաստանում իշխանափոխություն տեղի կունենա, եւ դուք բոլորդ կկորցնեք թե՛ ձեր զբաղեցրած պաշտոնները, թե՛ ձեր տնտեսական կարողությունները, եւ թե՛ ձեր կուտակած հարստությունները»: Նկատի ունենալով Հայաստանի իշխանական համակարգի բրեական-ավազակապետական բնույթը, համաձայնենք, որ սա ծանրակշիռ փաստարկ է, որը չի կարող ազդեցություն չունենալ: Ծածուկ քարոզչական աշխատանքի մի այլ ուղղություն էլ միտված է փարատելու հասարակության անհանգստությունը՝ շշուկներ տարածելով, թե այս պահին մտահոգվելու կարիք չկա, քանի որ Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման շուրջ ստեղծված աղմուկը լուրջ չէ, եւ կարգավորման համար դեռ երկար ժամանակ կպահանջվի:

* * *

Վերոշարադրյալը կարեւորելով հանդերձ, ինքնըստինքյան հասկանալի է, որ մեզ համար ավելի կարեւոր է ճշտել Համաժողովրդական Շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի դիրքորոշումը Ղարաբաղի հարցի լուծման ներկա զարգացումների համատեքստում: Հոկտեմբերի 17-ից մենք ժամանակավորապես դադարեցրինք զանգվածային միջոցառումների՝ համահանրապետական հանրահավաքների եւ բազմամարդ երթերի անցկացումը, դա պատճառաբանելով՝ Հայաստանի իշխանություններին Ղարաբաղյան կարգավորման գործընթացում ճնշումներից ու անհարկի զիջումներից զերծ պահելու անհրաժեշտությամբ: Ես այստեղ չեմ ուզում կրկնել տվյալ պատասխանատու քայլին դիմելու այն բոլոր հիմնավորումները, որ տվել եմ այդ օրն ունեցած իմ ելույթում: Ընդհակառակը, հարկ եմ համարում կանգ առնել Շարժման ընտրած մարտավարության նպատակահարմարությունը կասկածի տակ դնողների մոտեցման վրա, նկատի ունենալով մանավանդ այն, որ կասկածողները քիչ չեն նաեւ մեր շարքերում: Բուն խնդրին անդրադառնալուց առաջ, ուզում եմ ընդգծել, որ ես անկեղծորեն հարգում եմ

մեր զինակիցների ու համախոհների՝ սեփական կարծիք ունենալու իրավունքը՝ բազմակարծությունը դիտելով Համաժողովրդական Շարժման ամենամեծ հարստություններից ու արժանիքներից մեկը:

Ընդդիմախոսների միակ առարկությունն, ըստ էության, հետեւյալն է. եթե Սերժ Սարգսյանը Ղարաբաղի հարցում, իսկապես, գնում է մի լուծման, որը ձեռնտու չէ հայկական կողմին, ապա ավելի ճիշտ չէ՞ր լինի, որ Շարժումը խափաներ այդ լուծումը՝ այսինքն զանգվածային միջոցառումները դադարեցնելու փոխարեն, ընդհակառակը, բողոքի ավելի մեծ ու տեւական ալիք բարձրացներ, ընտրությունների միջոցով տապալեր Հայաստանի ներկա վարչախումբը, եւ լեգիտիմ իշխանություններ ձեւավորելուց հետո Ղարաբաղյան կարգավորման գործընթացին ձեռնարկեր ուժեղի դիրքերից: Դժվար է, իհարկե, չհամաձայնել, որ տվյալ պարագայում գործ ունենք կուռ տրամաբանության հետ: Սակայն լինելով քաղաքական կազմակերպություն, մենք պարտավոր ենք առաջնորդվել այն սկզբունքով, թե որքանով է իրականանալի առաջարկված ճանապարհը: Այս տեսակետից հարցին մոտենալիս, անհրաժեշտ է հաշվի առնել հետեւյալ հանգամանքները.

ա. Հայաստանի ողջ իշխանական համակարգը եւ տնտեսական վերնախավը միահամուռ կերպով պաշտպանելու են Ղարաբաղի հարցում Սերժ Սարգսյանի առաջարկած ցանկացած լուծում, որովհետեւ նրանց հետաքրքրում է ոչ թե արցախահայության ճակատագիրը, այլ բացառապես սեփական հղհիմ շահերը: Սարգսյանն այս հարցում խնդիրներ չի ունենալու նաեւ կառավարող կոալիցիայի մաս կազմող կուսակցությունների, Ազգային ժողովի պատգամավորների, արտախորհրդարանական գրպանային քաղաքական ուժերի եւ նոմենկլատուրային մտավորականության հետ: Դա նշանակում է, որ Համաժողովրդական Շարժումը, Ղարաբաղի խնդրի կապակցությամբ հասարակական բողոքի ալիք բարձրացնելու պարագայում, բախվելու է միաձույլ մի հակառակորդի, որը որեւէ բանի առջեւ չի կանգնելու այդ ալիքը դիմագրավելու համար: Սրանով այսօրվա վիճակը տարբերվում է 1988 թվականի վիճակից, երբ Հայաստանի պետական պաշտոնեության եւ տնտեսական բնագավառի ղեկավարության մեծ մասը բացահայտորեն կամ գաղտնաբար համակրում եւ աջակցում էր Ղարաբաղյան շարժմանը:

բ. 1988 թվականին Ղարաբաղյան շարժումը վայելում էր նաեւ միջազգային հանրության լիակատար համակրանքն ու աջակցությունը: Բավական է հիշեցնել այն տպավորիչ համերաշխությունը, որ միջազգային հանրությունը, առաջին հերթին, Արեւմուտքը, դրսեւորեց Ղարաբաղ կոմիտեի ներբակալված անդամների նկատմամբ: Ներկա իրավիճակը բոլորովին այլ է: Արեւմուտքն այսօր ոչ միայն որեւէ կերպ չի աջակցում Հայաստանում ձեւավորված հզոր ժողովրդավարական շարժմանը, այլեւ անում է ամեն ինչ այդ շարժումը ոչնչացնելու համար՝ հանդուրժելով թե՛ կեղծված ընտրությունները, թե՛ մարտի 1-ի սպանդը, թե՛ ընդդիմության դեմ սանձազերծված հալածանքն ու բռնությունները, եւ թե՛ քաղբանտարկյալների գոյության փաստը: Դրանով Արեւմուտքը ցավալիորեն ցույց է տալիս, որ պատրաստ է աչք փակել Սերժ Սարգսյանի ցանկացած անօրինականության վրա, միայն թե նա զիջումների գնա Ղարաբաղյան հակամարտության եւ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում: Իսկ թե այս առումով շրջադարձային է, արդյոք, Եւրոխորհրդի Մոնիտորինգի կոմիտեի վերջին որոշումը, դրա մասին դեռ վաղ է խոսել:

գ. Միջազգայինից բացի, Սերժ Սարգսյանն ապահովել է նաեւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության անվերապահ աջակցությունը: Ասվեց արդեն, որ վերջինս, բազմաթիվ պարտավորություններով կապված լինելով Հայաստանի ավազակապետական վարչախմբի պարագլուխների հետ, համարձակություն չի ունենալու հակադրվել նրանց կամքին: Այդ պարագայում անհնար է պատկերացնել, որ Լեռնային Ղարաբաղում զանգվածային շարժում սկսվի հակամարտության կարգավորման Սերժ Սարգսյանի առաջարկած ծրագրի դեմ: Իսկ քանի դեռ Ղարաբաղը ոտքի չի կանգնել, Հայաստանում նույնպես հնարավոր չէ հանուն նրա դատի համաժողովրդական ընդվզման մի այնպիսի մթնոլորտ ստեղծել, ինչպիսին գոյություն ուներ 1988 թվականին: Սակայն սա խնդրի մի կողմն է: Մյուս կողմն այն է, որ գուցե Ղարաբաղի ղեկավարությունը համաձայն է հակամարտության կարգավորման Սերժ Սարգսյանի պաշտպանած ծրագրին: Դա, կարծես-թե, կողմնակիորեն հաստատվում է այն իրողությամբ, որ Ղարաբաղի պաշտոնական ներկայացուցիչները, դժգոհելով Մոսկովյան հռչակագրի տակ իրենց ստորագրության բացակայության առթիվ, բոլորովին չեն վիճարկում այդ հռչակագրի

բուն բովանդակությունը: Իսկ եթե այդպես է, ապա մենք ընդհանրապես այս հարցում անելիք չունենք, քանի որ բազմիցս հայտարարել ենք, որ համաձայն ենք ցանկացած լուծման, որին համաձայն կլինի Լեռնային Ղարաբաղը: Սա է Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման մեր պատկերացումը:

* * *

Այսպիսով, Հայաստանի իշխանական համակարգի եւ տնտեսական վերնախավի միակամությունը, միջազգային հանրության վերաբերմունքը եւ մանավանդ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության կրավորական դիրքորոշումը, անհնար են դարձնում Հայաստանում Ղարաբաղի հարցի շուրջ ժողովրդական ընդվզման հզոր ալիք բարձրացնելու խնդիրը: Ավելին, եթե դա անգամ հնարավոր լիներ, պետք է նկատի ունենալ, որ ժողովրդական ընդվզման ալիքը կարող է երկար տեւել եւ, մանավանդ ուղեկցված տնտեսական ճգնաժամի բարդություններով, տակնուվրա անել երկիրը, որից չի հապաղի օգտվել Ադրբեջանը՝ Ղարաբաղի հարցը պատերազմի միջոցով լուծելու համար: Չպետք է մոռանալ, որ Ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի ձեռքբերումները համընկնում են Ադրբեջանում ստեղծված հենց այդպիսի խառնակ իրավիճակների, այն է՝ իշխանության Մութալիբովից–Էլչիբեյին եւ Էլչիբեյից–Ալիեւին անցման ցնցումային ժամանակների հետ: Մենք Դաշնակցություն կամ ԱԺՄ չենք, որ երկրի գլխին կանգնած վերահաս վտանգի պահին, ապակայունացնող մեր գործողություններով, խորացնենք այդ վտանգը: Շարժման համար իշխանության հասնելը ինքնանպատակ չէ: Հազար տարի էլ չհասնենք, մենք իրավունք չունենք այդպիսի արկածախնդրության դիմելու, քանի որ մեր նպատակը, ինչպես սկզբից եւեթ հայտարարել ենք, ավազակապետության կազմաքանդումն է, եւ ոչ թե պետության քայքայումը: Իսկ ավազակապետությունը, Հայ Ազգային Կոնգրեսի պես հզոր քաղաքացիական շարժման եւ իշխանությունների նկատմամբ համաժողովրդական ատելության առկայությամբ, միեւնույն է, վաղ թե ուշ կազմաքանդվելու է, ընդ որում, թերեւս ավելի վաղ, քան պատկերացնում ենք:

Հետեւաբար, մենք առայժմ մեր մարտավարությունը փոխելու կարիք չունենք, այսինքն, նկատի ունենալով Ղարաբաղյան խնդրի հանգուցալուծման անխուսափելիությունը, այսուհետեւ եւս պետք է ձգտենք նպաստել այն բանին, որ Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանությունները զերծ մնան արտաքին ճնշումներից ու անհարկի զիջումներից եւ, թեկուզ կարգավորման Մադրիդյան ծրագրի շրջանակներում, հասնեն հայկական կողմի համար առավել շահավետ արդյունքների: Սա թե՛ իրատեսական, եւ թե՛ պատվաբեր դիրքորոշում է, որը չի կարող դրական հետեւանքներ չունենալ: Եւ արդեն իսկ ունեցել է, եթե նկատի ունենանք, որ հոկտեմբերի 17-ի հանրահավաքից հետո Շարժմանը հաջողվել է.

– Լայն հասարակական հետաքրքրություն առաջացնել եւ հանրային քննարկում սկզբնավորել Ղարաբաղյան կարգավորման գործընթացի շուրջ, ինչը, չնայած շատերի կողմից բազմիցս թափված ջանքերին, երբեւէ իրականություն չէր դարձել.

– Ուշադրություն սեւեռել Արեւմուտքի կողմից Ղարաբաղի հարցի միակողմանի լուծման եւ Մինսկի խմբի համանախագահության կազմի փոփոխության վտանգի վրա՝ որոշ առումով խթանելով Մոսկովյան հոչակագրի ընդունումն ու դրանով կանխելով այդ վտանգը.

– Լրջացնել Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացման հարցը, ինչի վկայությունն է, մասնավորապես, Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի այն աննախադեպ հայտարարությունը, որ «Ղարաբաղում անցկացվելիք հանրաքվեն, դրա անցկացման եղանակները, ժամկետները, բնակչության մասնակցության եւ կազմակերպման ձեւերը՝ դրանք բոլորը ներկայումս բանակցությունների առարկա են» («Ազատություն ռադիոկայան». 18.11.2008թ.): Դժվար չէ նկատել, որ այստեղ համարյա բառացի կրկնված են այն բոլոր հարցադրումները, որոնք հանրաքվեի վերաբերյալ արվել են հոկտեմբերի 17-ի իմ ելույթում:

Շարժման մարտավարությունը փոխելու անհրաժեշտություն ես առայժմ չեմ տեսնում նաեւ երկրում ժողովրդավարության ու օրինականության հաստատման եւ, մասնավորապես, քաղբանտարկյալների ազատ արձակման խնդիրների լուծման տեսակետից: Իմ նախորդ հանրային ելույթում ես համոզմունք էի հայտնել, որ զանգվածային միջոցառումների ժամանակավոր դադարեցումը «ոչ թե դանդաղեցնելու,

այլ արագացնելու է նշված նպատակների իրականացումը»: Դրա անժխտելի նախանշաններից մեկը Եւրոխորհրդի Մոնիտորինգի կոմիտեի դեկտեմբերի 17-ի որոշումն է, որը, թեեւ ընդհանուր առմամբ, Համաժողովրդական Շարժման համար պայքարի, բայց մասամբ նաեւ նշված մարտավարության արգասիքը պետք է համարել: Իսկ քաղաքականության մեջ, ինչպես կյանքում, անմտություն է հրաժարվել մի գործելակերպից, որը հաջողություն է բերում:

Այս ամենով հանդերձ, մենք չենք համարում, որ մեր ընտրած մարտավարությունը դոգմա է եւ փոփոխությունների ենթակա չէ: Նայած իրադրության՝ այն ցանկացած պահի կարող է փոխվել, մանավանդ նկատի ունենալով, որ Հայաստանին առաջիկայում սպասում են լուրջ ցնցումներ՝ կապված տնտեսական ճգնաժամի խորացման հետ:

Բ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Թեեւ Հայաստանի իշխանությունները սկզբնապես հավաստիացնում էին, որ միջազգային ֆինանսական ճգնաժամը որեւէ ազդեցություն չի ունենա մեր տնտեսության վրա, սակայն այժմ չեն թաքցնում իրենց անհանգստությունը: Դրա հետ մեկտեղ, նրանք խուսափում են հասարակությանը ներկայացնել իրավիճակի ողջ լրջությունը եւ նրան նախապատրաստել երկրի տնտեսությանն ու սոցիալական ոլորտին սպառնացող մարտահրավերների դիմագրավմանը: Մինչդեռ դրությունն արդեն իսկ բավականին ծանր է եւ հրատապ միջոցառումներ է պահանջում:

Տնտեսական ճգնաժամի ախտանշանները

1. 2008թ. առաջին երկու եռամսյակների համեմատ՝ երրորդ եւ չորրորդ եռամսյակներում նվազել է համախառն ներքին արդյունքի աճի տեմպը, ինչը տնտեսական անկման բացահայտ ցուցանիշ է: Մասնավորապես, պաշտոնական տվյալներով, հոկտեմբերին նախորդ ամսի համեմատ անկումը կազմել է 8.3%:

2. Կրճատվել են արտաքին առեւտրի ծավալները, ինչպես արտահանման, այնպես էլ, նոյեմբերից սկսած, ներմուծման ոլորտում: Վտանգավոր չափերի է հասել արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը՝

կազմելով երեք միլիարդ դոլար: Կրճատման միտում է նկատվում նաեւ ներքին առեւտրի բնագավառում:

3. Նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ նվազել են արտերկրից դրամական փոխանցումները կամ տրանսֆերները՝ մտահոգիչ մի երեւույթ, որը խորանալու միտում ունի:

4. Զգալիորեն կրճատվել են շինարարության ծավալները: Անշարժ գույքի եւ ավտոմեքենաների վաճառքի շուկաները համարյա դադարել են գոյություն ունենալ:

5. Երրորդ եւ չորրորդ եռամսյակներում նվազել են բյուջեի մաքսային եւ հարկային մուտքերը, ինչը փոխհատուցելու համար հարկային ծառայությունները անցել են կանխավճարների, գերավճարների եւ կամայական տուգանքների կիրառմանը:

6. Բանկերը գրեթե չեն իրականացնում հիպոթեկային եւ ավտոմեքենաների վարկավորում: Լիկվիդային միջոցների բացակայության պատճառով նրանք, ըստ էության, դադարել են վարկեր տրամադրել նաեւ կենցաղային ապրանքների եւ ոչ մեծ վարկային ռեսուրս պահանջող այլ գործարքների դեպքում:

7. Դրամի փոխարժեքն արհեստականորեն պահպանելու նպատակով հսկայական գումար է տրամադրվել Կենտրոնական բանկի պահուստներից, ինչը վերջին հաշվով ծառայում է ներմուծման բնագավառում մենաշնորհային կարգավիճակ ունեցող ընկերությունների գերշահույթներն ապահովելու խնդրին:

8. Սկսել են թանկանալ լայն սպառման ապրանքների, առաջին հերթին, սննդամթերքի գները, ինչը մասնավորապես ծանր է անդրադառնում անապահով խավերի վրա:

9. Միջազգային շուկայում մետաղի գների շեշտակի անկման պատճառով գրեթե սնանկացման եզրին են հասել հանրապետության հանքարդյունաբերական ձեռնարկությունները:

10. Մանր եւ միջին բիզնեսի շատ ձեռնարկություններ, չդիմանալով առեւտրի ծավալների անկմանը եւ, մանավանդ, հարկային ծառայությունների կամայականություններին, հարկադրված են դադարեցնել իրենց գործունեությունը, ինչն առաջիկա ամիսներին հանգեցնելու է հարկային մուտքերի էլ ավելի նվազեցմանը:

11. Արդեն իսկ կրճատվել են մեծ թվով աշխատատեղեր բարձր տեխնոլոգիաների, հանքարդյունաբերության, շինարարության եւ առեւտրի ու սպասարկման ոլորտներում:

Տնտեսական ճգնաժամի պատճառները

Հայաստանի տնտեսության բնագավառում առկա բացասական երեւույթներն, անշուշտ, ունեն թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներ:

Հայաստանի իշխանությունները, բնականաբար, ամեն ինչ բացատրելու են օբյեկտիվ պատճառներով, այն է՝ միջազգային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամի եւ մետաղի համաշխարհային գների շեշտակի անկման ազդեցությամբ, ինչպես նաեւ տնտեսության մեջ, մասնավորապես, շինարարության բնագավառում արտասահմանյան ներդրումների կրճատմամբ եւ արտերկրից դրամական փոխանցումների կամ տրանսֆերների նվազմամբ:

Ինչ խոսք սրանք լուրջ գործոններ են, բայց շատ բան կախված է նաեւ սուբյեկտիվ պատճառներից, որոնք են.

1. Հայաստանի իրականացած տնտեսական համակարգը, որի էությունը պետական իշխանության եւ բիզնեսի սերտաճվածությունն է:

2. Ներմուծման բնագավառում մրցակցության բացակայությունը եւ որոշ ընկերությունների հատուկ արտոնությունների շնորհումը:

3. Մաքսային եւ հարկային ծառայությունների կամայականությունները ու չարաշահումները:

4. Անկախ դատական համակարգի բացակայությունը:

5. Քաղաքական նկատառումներով, ոչ պրոֆեսիոնալներից կազմված կառավարության ձեւավորումը:

6. Ազգային ժողովի, որպես գործադիր իշխանության հակակշռի, իսպառ բացակայությունը:

7. Չխոսած այլեւս այն մշտական գործոնի մասին, որն առկա է Հայաստանի սահմանների շրջափակման պատճառով:

Ճգնաժամի հաղթահարման կամ մեղմացման ուղիները

Դատելով Հայաստանի իշխանությունների գործողություններից, նրանք առայժմ տեսնում են ճգնաժամի հաղթահարման երեք միջոց.

1. Հարկային կարգապահության հաստատում եւ հարկային խստությունների կիրառում:

2. Պետական ապարատի ծախսերի կրճատում:

3. Օտար պետություններից եւ միջազգային ֆինանսական կազմակերպություններից լրացուցիչ օգնությունների եւ վարկերի ակնկալում:

Սրանք, անշուշտ, անհրաժեշտ, բայց ակնհայտորեն ոչ բավարար եւ արդյունավետ միջոցներ են, քանի որ.

1. Տնտեսության լիակատար իրականացվածության եւ պետական համակարգի կոռումպացվածության պատճառով հարկային կարգապահությունը, ինչպես անցյալում, այսուհետեւ եւս չի տարածվելու բոլոր հարկատուների վրա, եւ տնտեսավարողների ոչ արտոնյալ խավերը ենթարկվելու են կամայականությունների ու խտրության:

2. Պետական ապարատի ծախսերը չնչին տեղ են զբաղեցնում Հայաստանի բյուջեում, հետեւաբար նրանց կրճատումը սոսկ խորհրդանշական իմաստ է ունենալու: Բացի այդ, հակառակ վարչապետի հավաստիացման, հաջորդ տարվա բյուջեում պետական ապարատի ծախսերի կրճատում նախատեսված չէ:

3. Օտար պետություններն ու միջազգային ֆինանսական կազմակերպությունները, համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով իրենք էլ հայտնված լինելով ծանր պայմաններում, այսօր հազիվ-թե կարողանան Հայաստանին կամ մեր վիճակում գտնվող որեւէ այլ երկրի էական ֆինանսական օգնություն ցուցաբերել:

Այնինչ ակնհայտորեն առկա են մի շարք արդյունավետ քայլեր, որոնք ի վիճակի են եթե ոչ լիովին հաղթահարելու տնտեսական ճգնաժամը, ապա էապես մեղմացնելու այն: Դրանք են.

1. Վերացնել ներմուծման բնագավառում մենաշնորհային կարգավիճակ ունեցող ընկերությունների արտոնությունները եւ ազատ առեւտրով զբաղվելու հնարավորություն տալ բոլոր տնտեսավարողներին:

2. Տեղական արտադրությունը խթանելու նպատակով դադարեցնել դրամի փոխարժեքի արհեստական պահպանման քաղաքականությունը:

3. Լիակատար օրինականություն հաստատել մասային եւ հարկային ծառայությունների, ինչպես նաեւ իրավապահ մարմինների ու դատարանների գործունեության մեջ, վերացնել գործարարների նկատմամբ հարկային կամայականությունների կիրառումը:

4. Առանց բացառության բոլոր տնտեսավարողներին, առաջին հերթին, խոշոր ձեռնարկատերերին, բերել հարկային դաշտ:

5. Քայլեր ձեռնարկել հարկային խաղաղության ճկունացման եւ մանր ու միջին բիզնեսի, մանավանդ, ներքին արտադրության հարկային բեռը թեթեւացնելու ուղղությամբ:

6. Միջոցներ կիրառել Հայաստանից կապիտալի շարունակվող արտահանումը կանխելու համար:

7. Թերեւս կարելի է մտածել նաեւ էներգակիրների եւ սննդամթերքի պետական պաշարներ կուտակելու մասին՝ դրանց հավանական սղությունը բացառելու եւ գների անկանխատեսելի աճը թույլ չտալու նպատակով:

Այսպիսով, տնտեսական ճգնաժամի առաջին ախտանշանները եւ իշխանությունների ձեռնարկած անհամարժեք քայլերը ցույց են տալիս, որ մեզ սպասում են դժվարին ժամանակներ՝ հղի սոցիալական լուրջ հետեւանքներով: Դատելով առկա միտումներից, ճգնաժամը Հայաստանում ամենայն սրությամբ դրսեւորվելու է՝ սկսած փետրվար–մարտ ամիսներից:

Գ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հանգամանքների բերմամբ հարկադրված լինելով կենտրոնանալ Ղարաբաղյան կարգավորման գործընթացի եւ տնտեսական ճգնաժամի վրա, մենք չենք մոռանում, անշուշտ, որ Համաժողովրդական Շարժման գլխավոր խնդիրը մնում է երկրում սահմանադրական կարգի եւ ժողովրդավարական ազատությունների վերականգնումը, որի լուծումը մենք տեսնում ենք արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացման մեջ: Այդ նպատակներին հասնելու միակ գրավականը Շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի պահպանումը, ամրապնդումը եւ էլ ավելի հզորացումն է: Այսինքն, մեր խնդիրն է՝ Շարժումը վերածել այնպիսի զանգվածային, կազմակերպված եւ մնայուն գործոնի կամ այլընտրանքային քաղաքական ուժի, որը պատրաստ լինի ցանկացած պահի ստանձնել իշխանությունը եւ երկրի կառավարման պատասխանատվությունը:

Պետք է խոստովանել, սակայն, որ ներկա պայմաններում սա այնքան էլ հեշտ խնդիր չէ, նկատի ունենալով՝

ա. Ֆոչարյանա–սերժական վարչախմբի կողմից Շարժման դեմ ծավալված անօրինակ քաղաքական հալածանքները, Կոնգրեսի գործունեության սիստեմատիկ խափանումները, հանրահավաքների անցկացման կանոնավոր մերժումները, դժվարությունների հարուցումը անգամ դահլիճներ տրամադրելու հարցում, ընդդիմության զրկումը տեղեկատվության էլեկտրոնային միջոցներից օգտվելու հնարավորությունից, ոստիկանական բռնությունները ոչ զանգվածային ցույցերի ու երթերի մասնակիցների նկատմամբ եւ այլն.

բ. միջազգային հանրության եւ մանավանդ Եւրոպական կառույցների՝ Եւրոպառլամենտի, Եւրոխորհրդի եւ ԵԱՀԿ-ի հանցավոր անտարբերությունը Հայաստանում ժողովրդավարական ազատությունների սահմանափակումների եւ մարդու իրավունքների կոպտագույն խախտումների առնչությամբ.

գ. եւ մանավանդ այն հանգամանքը, որ Շարժման ղեկավարության հարյուրից ավելի անդամներ գտնվում են բանտերում եւ թաքստոցներում: Դրանք մեր ամենանվիրյալ, փորձառու, կազմակերպական մեծ ունակություններով օժտված ընկերներն են, որոնց մեկուսացումը, բնականաբար, չէր կարող չազդել Շարժման ակտիվության վրա: Մեկուսացրեք Հայաստանի որեւէ այլ քաղաքական կազմակերպության ոչ թե հարյուր, այլ հինգ–տաս ղեկավարի, այդ կազմակերպությունը պարզապես կդադարի գոյություն ունենալ: Մինչդեռ Համաժողովրդական Շարժումը, այս դժվարին պայմաններում անգամ, ոչ միայն կարողացավ պահպանել իր գոյությունը, այլեւ մշտապես, որպես հարակա գործոն, դրսեւորել իր հզոր ներկայությունը պետության քաղաքական կյանքում:

* * *

Ետմարտիմեկյան շրջանում ազատության մեջ գտնվող Շարժման ակտիվիստներին հիմնականում հաջողվեց լուծել իրենց առջեւ դրված խնդիրները, ինչի շնորհիվ Հայ Ազգային Կոնգրեսն այսօր ներկայանում է որպես ժողովրդական լայն զանգվածների աջակցությունը վայելող եւ որոշ առումով պետության քաղաքական օրակարգը ձեւավորող ամրա-

կուտ միավորում: Ես ուզում եմ ըստ արժանվույն գնահատել այդ գործում Կոնգրեսի անխտիր բոլոր անդամ-կազմակերպությունների նպաստը, առանձնացնելով մանավանդ Հայաստանի Ժողովրդական կուսակցության, Հանրապետություն կուսակցության, Հայոց Համազգային Շարժման, Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության եւ նրանց առաջնորդների՝ Ստեփան Դեմիրճյանի, Արամ Սարգսյանի, Արարատ Զուրաբյանի եւ Լյուդմիլա Սարգսյանի դերը: Հատուկ գնահատանքի է արժանի նաեւ Կոնգրեսի տարածքային կառույցների, քաղաքական խորհրդի, կենտրոնական գրասենյակի եւ վերջինիս աշխատանքները համակարգող Լեւոն Զուրաբյանի գործունեությունը: Հարկ է ընդգծել նաեւ այն հսկայական նպաստը, որ Շարժման հզորացման եւ Կոնգրեսի կայացման գործին բերել ու շարունակում են բերել քաղբանտարկյալների եւ հետախուզման մեջ գտնվող մեր ընկերների ջոկատը, Հյուսիսային պողոտայի քաջարի առաջամարտիկները, նորաստեղծ երիտասարդական կազմակերպությունները եւ երկրի ժողովրդավարական մամուլը:

Շարժումն, ըստ այդմ, անկասելի է, եւ նրա թափն օր–օրի հզորանալու է: Ուստի իշխանությունները թող զուր հույսեր չփայփայեն, որ քաղբանտարկյալներին պատանդ պահելով, կարող են մեզ ծնկի բերել: Դրանով նրանք, իրականում վնասում են ոչ թե մեզ, այլ, առաջին հերթին, երկրի հեղինակությանը եւ Ղարաբաղի դատին: Այսինքն՝ վտանգ է ստեղծվում, որ վարչախմբի ինքնիշխանությունը եւ քաղաքական հաշվեհարդարը վերջիվերջո կարող են վերածվել պետական դավաճանության, որի աղետալի հետեւանքները բաժին են ընկնելու ողջ ազգին: Քանի դեռ ուշ չէ, իշխանությունները պետք է հրաժարվեն Շարժումը ջախջախելու անիմաստ ու վնասակար մտքից եւ անկեղծ երկխոսություն սկսեն նրա հետ, որի միակ նախապայմանը, արձանագրված նաեւ Եւրոխորհրդի բանաձեւերում, քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակումն է:

* * *

Ինչպես հայտարարվել էր, զանգվածային միջոցառումների ժամանակավոր դադարի շրջանում Շարժման ղեկավարության ջանքերն ուղղված էին լինելու Հայ Ազգային Կոնգրեսի կառույցների ձեւավորմա-

նը: Համաժողովում հնչած ելույթներից մեկում մանրամասնորեն ներկայացվեց այդ ուղղությամբ կատարված զգալի աշխատանքը, որի արդյունքում արդեն իսկ Կոնգրեսի տարածքային գրասենյակներ են հիմնադրվել հանրապետության բոլոր մարզային կենտրոններում եւ Երեւանի համայնքներում: Հնարավորությունների առկայության դեպքում նախատեսված է այդպիսի գրասենյակներ բացել խորհրդային ժամանակների բոլոր շրջկենտրոններում, ինչը թույլ կտա ընդարձակել մեր գործունեության ոլորտը եւ Կոնգրեսի շարքերը համալրել բազմաթիվ նոր անդամներով: Այս կապակցությամբ ուրախությամբ պետք է նշել, որ Շարժման մաս կազմող կուսակցությունների շարքերից բացի, Կոնգրեսին արդեն իսկ անհատապես անդամագրվել են տասնյակ հազարավոր անկախ քաղաքացիներ: Ավելորդ չէ հիշեցնել նաեւ, որ Կոնգրեսի մասնաճյուղեր են հիմնադրվել նաեւ Մոսկվայում եւ Լոս-Անջելեսում:

Շարժման ղեկավարությունը Կոնգրեսի կառույցների ուժեղացման կարեւոր խնդիրներից մեկն է դիտում նաեւ ստվերային կառավարություն հիշեցնող մարմնի ձեւավորումը, կազմված մասնագիտական խմբերից կամ բաժանմունքներից, որոնց նպատակն է օր–օրի հետեւել Հայաստանի կառավարության եւ Ազգային Ժողովի գործունեությանը եւ, քննադատական հայտարարություններից բացի, հանդես գալ նաեւ այլընտրանքային կառուցողական ծրագրերով ու առաջարկներով: Կոնգրեսի ներսում արդեն իսկ արդյունավետ կերպով գործում են տնտեսական, իրավական եւ արտաքին հարաբերությունների գծով այդպիսի մասնագիտական կառույցներ, որոնց շուտով կավելանան մշակույթի, գիտության, կրթության, բնապահպանության, առողջապահության եւ սոցիալական հարցերի հանձնախմբերը:

* * *

Շարժման գործունեության մյուս կարեւոր ուղղությունը եղել եւ մնում է մարտի 1-ի ոճրագործության ինքնուրույն հետաքննության անցկացումը եւ ընդդիմության դեմ սանձազերծված հալածանքների քաղաքական բնույթի բացահայտումը: Այդ հարցում ձեռքբերված ամենամեծ նվաճումը պետք է համարել այն, որ մեզ լիովին հաջողվեց ապացուցել այդօրվա իրադարձությունները որպես ցուցարարների եւ

ոստիկանության միջեւ ընդդիմության կողմից հրահրված բախում ներկայացնելու պաշտոնական վարկածի բացառնակ սնանկությունը: Իսկզբանե իսկ այդ վարկածին հավատ չընծայող Հայաստանի հասարակության համար այլեւս անվիճելի ճշմարտություն է, որ մարտի 1-ի ոճրագործությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հրեշային սպանդ՝ սառնասրտորեն կազմակերպված ավազակապետության պարագլուխների կողմից: Փաստերի ճնշման տակ դրանում վերջիվերջո սկսեց համոզվել նաեւ միջազգային հանրությունը:

Ավելորդ չեմ համարում մեկ անգամ էլ հիշեցնել այդ հանրահայտ փաստերը.

– Մինչ այժմ ընդդիմության որեւէ ներկայացուցչի մարտի 1-ին զենք կրելու, հրազեն կամ նռնակ օգտագործելու, մեքենա հրկիզելու եւ խանութ թալանելու մեղադրանք չի առաջադրվել:

– Սպանության տասը դեպքերը եւ դրանց կատարողները այդպես էլ դեռեւս չեն բացահայտվել, ինչը պետք է լիներ իրավապահ մարմինների առաջին գործը:

– Ոչ մի ոստիկան կամ զինվորական, թեկուզ անհամաչափ ուժի կիրառման կամ անփութության մեղադրանքով, պատասխանատվության չի ենթարկվել:

Իսկ եթե սրանց գումարենք նաեւ հետաքննության ընթացքում իրավապահ մարմինների կողմից թույլ տրված օրենքի կոպտագույն խախտումները, կասկածյալներին ներկայացված անհիմն եւ անապացույց մեղադրանքները, ընթացող խայտառակ դատավարությունները եւ, մանավանդ, բացառապես ոստիկանական ցուցմունքների հիման վրա կայացված դատավճիռները, ապա իշխանությունների իրականացրած ոճրագործության պատկերը լիակատար կդառնա:

Մարտի 1-ի ոճրագործության պաշտոնական վարկածի հերքումը, սակայն, մեր անցկացրած հետաքննության միայն մի կողմն է: Մյուս, ավելի կարեւոր կողմը վերաբերում է այդ ոճրագործության իրական պատասխանատուների բացահայտմանը՝ խնդիր, որի ուղղությամբ մեզ նույնպես հաջողվել է լուրջ առաջընթաց արձանագրել: Մասնավորապես, հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա մենք պարզել ենք, որ մարտի 1-ին մեքենաների հրկիզումները, խանութների թալանը եւ այլ սադրանքներ իրականացրել են որոշակի

ավազակախմբեր, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմել է 950 հոգի: Այդ ավազակախմբերը կազմավորվել, հանդերձվել եւ նշված գործողությունները համակարգող կենտրոնի տրամադրության տակ են դրվել հինգ բարձրաստիճան պետական պաշտոնյաների եւ չորս հայտնի օլիգարխների կողմից: Պարզել ենք նաեւ ցուցարարների վրա ինքնաձիգներից կրակ արձակած դիմակավոր ոստիկանների ինքնությունը: Բոլոր այդ տվյալները Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենյակը ներկայացրել է Փաստահավաք խմբին, ինչպես նաեւ տրամադրել Եւրոխորհրդի Մարդու իրավունքների կոմիսար Թոմաս Համմարբերգին եւ Հայաստանում հավատարմագրված մի քանի օտարերկրյա դեսպանների: Հարկ չկա ավելացնել, որ տվյալ ուղղությամբ մեր աշխատանքները նույնպիսի հետեւողականությամբ շարունակվելու են, եւ ոճրագործության բոլոր իրական պատասխանատուները, իրադրության փոփոխության դեպքում, կանգնելու են դատարանի առաջ:

* * *

Ամփոփելով ելույթս, ավելորդ չեմ համարում կատարել մի վերջին շեշտադրում: Համաժողովրդական Շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի գործունեությունը գնահատելիս, այսուհետեւ անհարժեշտ է մեկնել Ղարաբաղյան կարգավորման եւ տնտեսական ճգնաժամի խնդիրների ներառմամբ նրա օրակարգի ընդլայնման իրողությունից: Այդ նորածագ իրողությունն է, որ թելադրում է մեր ընթացիկ գործողությունների տրամաբանությունը եւ ներկայիս մարտավարության բնույթը: Սակայն ասվեց արդեն, որ նայած իրադրության, մեր գործողություններն ու մարտավարությունը կարող են փոխվել, եւ ցանկացած պահի մենք կարող ենք վերսկսել զանգվածային միջոցառումները: Ամեն ինչից անկախ, արդեն իսկ որոշված է այդպիսի զանգվածային միջոցառում, այսինքն համահանրապետական հանրահավաք եւ բազմամարդ երթ անցկացնել մարտի 1-ին՝ այդ թվականի հետ կապված ողբերգության տարելիցը նշելու եւ անմեղ զոհերի հիշատակը պատշաճ կերպով հարգելու նպատակով:

Առիթից օգտվելով, ուզում եմ նաեւ կանխապես շնորհավորել ձեր բոլորի, մասնավորապես, քաղբանտարկյալների եւ նրանց ընտանիքնե-

ri Նոր տարին՝ մաղթելով, որ այն դառնա հասարակական համերաշխության եւ երկրի առջեւ ծառացած մարտահրավերների բարեհաջող դիմագրավման տարի:

Շնորհակալություն ուշադրության համար:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», 23 դեկտեմբերի, 2008թ.:

ԵԼՈՒՅԹ 2009 Թ. ՄԱՐՏԻ 1-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ

Սիրելի հայրենակիցներ,

Պատկերացնելու համար, թե ինչպիսի կարծիք է ձեւավորվել Արեւմուտքում Հայաստանի մասին, բավական է ուշադրություն դարձնել հետեւյալ հատկանշական փաստի վրա: Վերջերս ադրբեջանցի լրագրողներից մեկի հարցին, թե «ինչո՞ւ է քաղբանտարկյալների խնդրում ԵԽԽՎ-ն երկակի չափանիշներ կիրառում, մասնավորապես հրաժարվելով ընդունել, որ Հայաստանում քաղբանտարկյալներ կան», այդ կազմակերպության Ադրբեջանի գծով համազեկուցող Անդրես Հերկելը տվել է հետեւյալ ցնցող պատասխանը. «Արեւմուտքն Ադրբեջանը դիտարկում է որպես իր դաշնակից երկիր եւ չի ցանկանում, որ նա իրեն համեմատի Հայաստանի հետ: Ադրբեջանը շատ ավելի հիշտ կանի, եթե իրեն համեմատի Թուրքիայի, Խորվաթիայի, Սլովակիայի եւ արեւելաեւրոպական մյուս երկրների հետ, որոնք մեծ հաջողությունների են հասել ժողովրդավարության զարգացման հարցում: Իսկ ի՞նչ կարելի է վերցնել Հայաստանից: Մենք ցանկանում էինք պատժել Հայաստանին, բայց դուք գիտեք, որ այդ երկրի թիկունքին կանգնած են Ռուսաստանը եւ մի շարք պետություններ, որոնք կարողացան ազդել եւրոխորհրդարանականների վրա» («Հայք», 07.02.2009թ.): Եւրոպացի դիվանագետն, այսպիսով, պետությունները բաժանում է երեք կարգի, այն է՝ արեւմտաեւրոպական ժողովրդավարություններ, որոնց հետ Ադրբեջանը դեռեւս համեմատվելու հիմքեր չունի, ժողովրդավարացման ուղին բռնած արեւելաեւրոպական երկրներ, որոնք օրինակ պետք է ծառայեն Ադրբեջանի նման երկրների համար, եւ վերջապես, համեմատության առումով անպիտան, անհույս,

«իզգոյ» բռնապետություններ, որոնց շարքին է դասված Հայաստանը՝ հաստատաբար Սոմալիի եւ Զիմբաբվեի կողքին:

Վիրավորականը, եթե չասենք զավեշտալին, այն է, որ մինչդեռ նախկինում Հայաստանին էին խորհուրդ տալիս չհամեմատվել Ադրբեջանի հետ, այժմ արդեն Ադրբեջանին են հորդորում օրինակ չվերցնել Հայաստանից: Ահա, թե ինչ վիճակի է հասել երբեմնի ժողովրդավարության կղզյակ համարվող մեր երկիրը Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի տխրահռչակ իշխանության օրոք: Եւ ինչպե՞ս կարելի էր այլ բան ակնկալել, երբ նրանցից մեկի իշխանությունը հիմնված է հոկտեմբերի 27-ի ոճրագործության, իսկ մյուսինը՝ մարտի 1-ի սպանդի վրա: Հետեւաբար, ինչպիսի հաճոյախոսություններ էլ եւրոպական կառույցները շռայլեն Հայաստանի իշխանությունների հասցեին, կամ նրանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառեն՝ թե ոչ, միեւնույն է, հոգու խորքում միջազգային հանրությունը մեր երկրին վերաբերվում է այս երկու արյունոտ իրադարձությունների եւ ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպանության խայտառակ մակարդակի դիտակետից: Այսքանն իմիջիայլոց:

* * *

Դառնալով օրվա խորհրդին, ցավով պետք է արձանագրել, որ մարտի 1-ի ողբերգության տարելիցը մենք ստիպված ենք նշել ընկճող մթնոլորտում: Բանտերը շարունակում են լցված մնալ շինծու մեղադրանքների հիման վրա քրեական հետապնդման ենթարկված մեր տասնյակ ընկերներով: Ամբողջ մի տարի իշխանությունները ոչինչ չեն արել ոճրագործության բուն պատասխանատուների՝ մարդասպանների, հրձիգների, խանութներ թալանողների բացահայտման ուղղությամբ, ընդհակառակը, ջանք չեն խնայել նրանց հանցագործությունները կոծկելու համար: Քաղաքապետարանը 94 անգամ ապօրինաբար մերժել է հանրահավաքներ ու երթեր անցկացնելու մեր դիմումները: Հեռուստատեսությունն, իր բոլոր ալիքներով, վերածվել է պետության բացարձակ վերահսկողության տակ գտնվող ստորաքարշ քարոզչամեքենայի: Ոստիկանությունը բազմիցս բռնություններ է կիրառել ինքնաբուխ եւ ոչ զանգվածային միջոցառումների մասնակիցների նկատմամբ: Տասնյակ

հազարավոր քաղաքացիներ հարկադրաբար կանչվել են ոստիկանական բաժանմունքներ եւ զգուշացվել ետ կանգնել հանրահավաքների մասնակցելու մտադրությունից: Հարյուրավոր մարդիկ քաղաքական նկատառումներով ենթարկվել են պաշտոնեական կամայականություններ, հեռացվել աշխատանքից կամ կորցրել իրենց բիզնեսը: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն ուղեկցվել են նույն տիպի կեղծիքներով, խախտումներով ու բռնություններով, ինչ անցած նախագահական ընտրությունները:

Այսինքն, իշխանությունները ոչ մի դաս չեն քաղել մարտի 1-ի ողբերգությունից եւ ոչ մի քայլ չեն կատարել ժողովրդավարության եւ օրինականության հաստատման, ինչպես նաեւ ներքաղաքական մթնոլորտի առողջացման ուղղությամբ: Եթե միջազգային որոշ կառույցներ պնդում են հակառակը եւ ուզում են հավատալ, որ այդ բնագավառներում, այնուամենայնիվ, ինչ-որ առաջընթաց արձանագրվել է՝ դա իրենց գործն է: Մնում է, որ այդ հավատը նրանք ներշնչեն նաեւ մեր ժողովրդին, ինչը դժվար, եթե չասենք, անհնարին խնդիր է, քանի որ առաջընթաց կոչվածը շատ հեռու է իրականությունից: Հայաստանի իշխանությունների կողմից առերեւույթ ժողովրդավարության եւ օրինականության հաստատմանն ուղղված կիսատ-պռատ քայլերն ու օրենսդրական նախաձեռնություններն իրականում սոսկ քարոզչական անպարարություններ են կամ սովորական խաբկանք, արեւելյան խորամանկություն եւ ժամանակ շահելու միջոց՝ որքան էլ նրանց փաստաբանների դերն ստանձնած միջազգային բյուրոկրատները փորձեն դրանցում ինչ-որ դրական զարգացումներ փնտրել:

Միակ լուսավոր կետն այս մղձավանջում եւ Հայաստանի արատավորված պատիվը փրկող միակ հանգամանքը ժողովրդի անկոտրում կամքն է եւ հզոր ընդդիմության ձեւավորումը՝ ի դեմս Համաժողովրդական շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի: Չնայած մարտի 1-ի դաժան սպանդին ու դրան հաջորդած տոտալ եւ ամենօրյա հալածանքներին, ակնհայտ է, որ իշխանություններին չհաջողվեց ահաբեկել կամ ծնկի բերել ժողովրդին եւ նրան ստիպել ետ կանգնել իր քաղաքացիական իրավունքների վերականգնման համար մղվող պայքարից: Ընդհակառակը, հալածանքներն ինչ-որ առումով նույնիսկ կոփեցին ժողովրդին եւ ավելի եւս ամրապնդեցին նրա հաստատակամությունն ու վճռակա-

նությունը: Ժողովուրդն այլեւս բանտից ու բռնությունից վախեցողը չէ, նահանջողը չէ, ընկճվողը չէ: Ժամանակն է, որ Հայաստանի իշխանությունները լուրջ հետեւություններ անեն այս իրողությունից եւ հասկանան, որ ժողովրդին ճզմելու կամ անխոս զանգված դարձնելու ջանքերը ոչ միայն ապարդյուն են, այլեւ կործանարար, ընդ որում, թե՛ իրենց, թե՛ երկրի համար: Ժամանակն է, որ նրանք արմատապես փոխեն իրենց գործելակերպն ու մեթոդները եւ ժողովրդի հետ մահակի լեզվով խոսելու փոխարեն, փորձեն խոսել բոլորովին այլ, քաղաքակիրթ աշխարհում ընդունված լեզվով, ինչը չի կարող չընկալվել ու ըստ արժանվույն չգնահատվել հասարակության կողմից: Ժամանակն է, քանի որ ներքաղաքական լարվածությանն արդեն սպառնում է գումարվել նաեւ սոցիալական լարվածությունը՝ կապված ֆինանսա-տնտեսական ճգնաժամի եւ բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման հետ:

* * *

Հայաստանի իշխանությունները, որդեգրելով ջայլամի քաղաքականություն, առայժմ հանրության առջեւ չեն բացահայտել առկա տնտեսական ճգնաժամի էությունն ու ընդգրկումը, ակներեւաբար, ժողովրդին հանգստացնելու եւ նրա մոտ խուճապ չառաջացնելու նպատակով: Սկզբում դա արվում էր նոր ատոմակայանի, Ջանգեզուրի երկաթգծի, Համահայկական բանկի եւ Հայկական աշխարհի սին առասպելների օգնությամբ, իսկ այժմ՝ Ռուսաստանից, Չինաստանից եւ Համաշխարհային բանկից սպասվող վարկերի շուրջ պտտվող հուսադրիչ խոսակցությունների միջոցով: Որքան էլ, սակայն, իշխանությունները պնդեն, թե միջազգային ֆինանսական ճգնաժամն առանձնապես չի ազդել մեր երկրի տնտեսության վրա կամ մենք հաջողությամբ հաղթահարել ենք այդ ճգնաժամի առաջին ալիքը (թեեւ այդ պնդումը նրանց համար հավասարազոր է քաղաքական ինքնասպանության), անժխտելի է, որ իրականում Հայաստանում եւս գործ ունենք ողջ աշխարհում դրսեւորվող միեւնույն երեւույթի, այն է՝ դոլարի զանգվածի կտրուկ նվազման հետ:

Հայաստանում, ի մասնավորի, խոսքը վերաբերում է արտաքին առեւտրի բացասական հաշվեկշռի սպասարկման կենսական խնդրին: Անցյալ տարի այն կազմել է 3 մլրդ դոլար, այսինքն՝ ներմուծվել է շուրջ

4 մլրդ, իսկ արտահանվել՝ շուրջ 1 մլրդ դոլարի ապրանք: Պակասորդը կամ դեֆիցիտը մոտ երկու-երրորդով ծածկվել է տրանսֆերների, իսկ մեկ-երրորդով՝ միջազգային վարկերի, արտասահմանյան ներդրումների եւ զբոսաշրջիկության հաշվին: Եւ քանի որ, միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, դոլարի ներհոսքի այդ աղբյուրներն զգալիորեն նվազել են ու էլ ավելի նվազելու միտում ունեն, կառավարությունն այս տարի կանգնած է լինելու առնվազն 1,5–2 մլրդ դոլար հայթայթելու խնդրի առջեւ, որը նրա ուժերից վեր է: Հետեւաբար, խնդիրը լուծվելու է այլ ճանապարհով, այն է՝ ներմուծման ծավալների շեշտակի կրճատմամբ, որը հանգեցնելու է կենսամակարդակի կտրուկ անկման, եւ Հայաստանը ետ է շպրտելու առնվազն 10–15 տարով՝ հայտնվելով 1990-ական թվականների երկրորդ կեսի վիճակում: Այսինքն, մենք գործ ունենք ոչ թե անսպասելի աղետի, այլ տրանսֆերային կապիտալի եւ բրեա-օլիգարխիկ համակարգի վրա հիմնված քոչարյանական արատավոր տնտեսական մոդելի կրախի կամ փլուզման հետ:

Օբյեկտիվ եւ համակարգային հանգամանքներից բացի, խնդիրը բարդանում է նաեւ իշխանությունների վարած սխալ տնտեսական քաղաքականության եւ ճգնաժամային իրավիճակին ոչ համարժեք քայլերի պատճառով, որոնց առանձնակի դրսեւորումներն են.

– Դրամի փոխարժեքի արհեստական պահպանման նպատակով Կենտրոնական բանկի պահուստների անհաշվենկատ վատնումը.

– Ներմուծման բնագավառում մոնոպոլիաների սանձարձակ գերիշխանության հանդուրժումը.

– Հարկային բեռի բարդումը մանր եւ միջին ձեռնարկատերերի վրա.

– Մանրածախ առեւտրի շուկաներում ՀԴՄ-ների կիրառման անհետեթությունը.

– Խոշոր ձեռնարկատերերին հարկային դաշտ բերելու անկարողությունը.

– Հարկային եւ մաքսային ծառայություններում օրինականություն հաստատելու չկամությունը.

– Պետական ապարատի ծախսերի կրճատումից խուսափելու տրամադրվածությունը.

– Քարոզչական նպատակներով ուռճացված պետական բյուջեի անխուսափելի սեկվեստրի ուշացումը.

– Տեղական արտադրության եւ արտահանման խթանման ուղղությամբ անբավարար միջոցների ձեռնարկումը.

– Կոռուպցիայի դեմ իրական, եւ ոչ թե ցուցադրական, պայքարի լիակատար բացակայությունը.

– Կապիտալի արտահանման երեւույթի նկատմամբ ցուցաբերվող հանցավոր անտարբերությունը.

– Ժողովրդին ճգնաժամի հաղթահարմանը չնախապատրաստելու անհասկանալի պահվածքը եւ այլն:

Տնտեսագետ չլինելով եւ ամենեւին չհավակնելով մասնագիտական վերլուծության, այդուհանդերձ ավելորդ չեմ համարում պարզ մարդկային լեզվով ներկայացնել, թե ինչպիսի անդրադարձ է ունենալու տնտեսական ճգնաժամ կոչված վերացական հասկացությունը սովորական մարդկանց ճակատագրի վրա:

Երկիրն, իմ խորին համոզմամբ, ուղղակի գլորվում է վիհը: Շատ շուտով կառավարությունն ստիպված է լինելու հրաժարվել դրամի փոխարժեքի արհեստական պահպանման քաղաքականությունից: Ընդ որում, դրամն արժեզրկվելու է ոչ թե սահուն կերպով, ինչպես տեղի ունեցավ ռուսական ռուբլու պարագայում, այլ պարզապես գահավիժելու է: Առաջիկա ամիսներին հարյուրավոր արտադրական ձեռնարկություններ դադարեցնելու են իրենց գործունեությունը: Արտահանման նվազմանը զուգընթաց շեշտակիորեն նվազելու են նաեւ ներմուծման ծավալները: Անխուսափելիորեն կրճատվելու են բյուջեի մուտքերը: Ահռելիորեն մեծանալու է գործազուրկների թիվը: Սառեցվելու կամ կրճատվելու են աշխատավարձերը: Հաճախակիանալու են աշխատավարձերի վճարման ուշացումները: Էապես նվազելու են բնակչության իրական եկամուտները: Ուսանողները չեն կարողանալու վճարել ուսման վարձը: Պարտատերերն ի վիճակի չեն լինելու հատուցել իրենց պարտքը: Գազի եւ էլեկտրաէներգիայի սպասվող թանկացումը մեծապես ազդելու է թե՛ բնակչության, թե՛ արտադրողների վրա՝ իր ետեւից բերելով նաեւ այլ ապրանքների թանկացումներ: Փակվելու են հազարավոր խանութներ եւ սպասարկման ոլորտի ձեռնարկություններ: Մանր ու միջին ձեռնարկատերերի խավն, ըստ էության, դադարելու է գոյություն ունենալ: Դա հանգեցնելու է սեփականության վերաբաշխման եւ նրա կենտրոնացման մենաշնորհատերերի ձեռքում: Ժողովրդի թշվառացմանը զուգըն-

թաց կրկին շահելու ու հարստանալու են բարձրագույն պետական պաշտոնյաներն ու խոշոր ձեռնարկատերերը:

Մի խոսքով, ի տարբերություն շատ այլ երկրների, Հայաստանը կանգնելու է ոչ թե տնտեսական կայունացման, այլ պարզապես հումանիտար աղետի կամ գոյատևման խնդրի առջև, որի լուծումը գերբնական ճիգեր է պահանջելու թե՛ իշխանությունից, թե՛ հասարակությունից: Թող տպավորություն չստեղծվի, թե ես թանձրացնում եմ գույները: Ընդհակառակը, վախենում եմ, որ իրականությունն ավելի դառը լինի, քան իմ ներկայացրածը: Շատերի համար՝ այն ամենն, ինչ ասվեց, արդեն իսկ իրականություն է: Իսկ եթե այդ իրականությունը դեռևս լիովին զգալի չէ հասարակության մնացյալ մասի համար, բացատրվում է պարզապես նրանով, որ վերջինս առայժմ օգտվում է իր որոշ խնայողություններից ու ձմեռվա պաշարներից, որոնք, սակայն, շուտով կսպառվեն: Ներկա ճգնաժամն, ըստ երևույթին, ավելի ծանր ու դժվարհաղթահարելի է լինելու, քան նույնիսկ 1990-ականների սկզբի ճգնաժամը, որը տեղի էր ունենում համաշխարհային առողջ տնտեսական մթնոլորտում, երբ միջազգային ֆինանսական կազմակերպություններն ու հարուստ պետությունները հնարավորություն ունեին օգնության ձեռք մեկնելու դժվարությունների մեջ գտնվող երկրներին: Իսկ այժմ, երբ համաշխարհային տնտեսությունն ինքը հայտնվել է գրեթե կաթվածահար վիճակում, այդ հնարավորությունը բացակայում է:

* * *

Ձեմ ուզում թաքցնել. ձեզանից շատերը մեծ հույսեր են կապել այս հանրահավաքի հետ, այն դիտելով որպես համաժողովրդական պայքարի նոր ալիքի կամ վճռական գործողությունների սկիզբ: Իսկ վճռական գործողությունների տակ հասկացվում են շուրջօրյա հանրահավաքներ, չդադարող երթեր ու պիկետներ, գրոհ նախագահական նստավայրի ուղղությամբ, մի խոսքով՝ անհապաղ իշխանափոխություն, ապստամբություն կամ հեղափոխություն: Միանգամից հարկ եմ համարում հայտարարել. Համաժողովրդական շարժման կամ Հայ Ազգային Կոնգրեսի բառապաշարում իսպառ բացակայել եւ այսուհետեւ եւս բացակայելու են գրոհ, ապստամբություն, հեղափոխություն հասկացությունները: Եթե

այս հասկացություններն են կազմում քաղաքական ուժերի վճռականության մասին պատկերացման հիմքը, ապա մենք կտրականապես մերժում ենք այդպիսի վճռականությունը: Ապստամբության կամ հեղափոխության հնամաշ գաղափարները պետք է վերջնականապես դուրս մղվեն մեր երկրի քաղաքական օրակարգից: Քանի դեռ դա տեղի չի ունեցել, Հայաստանը իրավական, ժողովրդավարական պետություն դառնալու հեռանկար չի կարող ունենալ: Պատմությանը գրեթե հայտնի չէ որեւէ հեղափոխություն, որի արդյունքում ժողովրդավարություն ծնվի: Հեղափոխության արդյունքում, սովորաբար, մի բռնապետությանը փոխարինում է մի այլ բռնապետություն, որովհետեւ ուժով նվաճված իշխանությունը այլ կերպ քան ուժով հնարավոր չէ պահպանել: Իսկ դա այն հեռանկարը չէ, որի համար արժե վատնել ժողովրդի եռանդը: Ցանկացած իշխանափոխություն պետք է տեղի ունենա բացառապես սահմանադրական ճանապարհով, այն է՝ օրինական ընտրությունների միջոցով, ինչը իրավական, ժողովրդավարական պետության կառուցման միակ երաշխիքն է:

Մեր խորագույն համոզմամբ՝ քաղաքականության մեջ վճռականությունը ոչ թե մեկանգամյա խելահեղ պոռթկումն է, այլ համառ, համբերատար, երկարատեւ պայքարի ունակությունը: Ավելի պատկերավոր ասած՝ վճռականը ոչ թե ոտքի կանգնողն է, այլ կանգնած մնացողը: Հետեւաբար, հաջողության հասնելու միակ գրավականը մենք դիտում ենք գիտակից քաղաքացիական հասարակության ձեւավորումը եւ լուրջ, պատասխանատու, ինստիտուցիոնալ ընդդիմության ստեղծումը, որը պատրաստ է համառ, թեկուզ երկարատեւ, պայքարի: Ահա, սա է մեր գլխավոր խնդիրը, եւ ոչ ոք չի կարող ժխտել, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում Համաժողովրդական շարժմանը հաջողվել է այս երկու ուղղություններով էլ հսկայական առաջընթաց արձանագրել, ինչը չի կարող վերջիվերջո չտալ իր պտուղները: Այսօր մենք արդեն իսկ վստահությամբ կարող ենք խոսել որոշ չափով ձեւավորված գիտակից քաղաքացիական հասարակության եւ գրեթե լիովին կայացած ընդդիմության մասին, որի մարմնավորումը Հայ Ազգային Կոնգրեսն է:

Կոնգրեսն ըմբռնումով է մոտենում հասարակության որոշ տարրերի տրամադրություններին, բայց դա չի նշանակում, որ պատրաստ է անվերապահորեն ենթարկվել դրանց: Վստահեցնում եմ, չկա ժողովրդին

հուզող կամ քաղաքական շրջանակներում եւ մամուլում արծարծվող որեւէ հարց, որը համակողմանիորեն չքննարկվի Կոնգրեսի ղեկավար մարմիններում եւ համապատասխան դիրքորոշում չճշտվի դրա վերաբերյալ: Մեզ համար իշխանափոխությունը ինքնանպատակ չէ, եւ ամեն գնով դրան հասնելը չի մտնում մեր հաշիվների մեջ: Կոնգրեսի դավանած գլխավոր սկզբունքը պետության շահն է եւ ժողովրդի անվտանգությունն ու բարօրությունը: Ուստի եթե նա երբեմն չի կատարում որոշ մարդկանց պահանջած կամ ակնկալած գործողությունները, դա նշանակում է, որ կա՛մ սխալ ու վնասակար, կա՛մ էլ՝ ժամանակավրեպ է համարում դրանք: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, շուրջօրյա հանրահավաքների եւ անդադար երթերի ու պիկետների անցկացման պահանջին: Կոնգրեսի ղեկավարությունն ամենեւին չի մերժում պայքարի այդ մեթոդների կիրառումը, դա դիտելով որպես քաղաքացիների անօտարելի սահմանադրական իրավունքը, սակայն գտնում է նաեւ, որ այսօր դեռեւս դրա ժամանակը չէ: Երբ պահը հասունանա, Կոնգրեսը չի վարանի օգտվել այդ իրավունքից, դրա նպատակահարմարությունը, բնականաբար, գնահատելով ոչ միայն Շարժման, այլեւ պետության, այն էլ՝ առաջին հերթին պետության շահի տեսակետից:

Հայաստանն այսօր կանգնած է ժողովրդավարության վերականգնման, Ղարաբաղյան կարգավորման, տարածաշրջանային մեկուսացման հաղթահարման եւ տնտեսական ճգնաժամի դիմագրավման մարտահրավերների առջեւ: Իսկ առջեւում մեզ սպասում են ավելի դժվարին ժամանակներ՝ հղի սոցիալական եւ անգամ հումանիտար աղետի առաջացման վտանգներով: Հետեւաբար, ներկա հանգրվանում Կոնգրեսից պահանջվում է գործել առավել զգուշությամբ ու պատասխանատվությամբ՝ չբարդացնելու համար, առանց այդ էլ, բարդ իրավիճակը: Մեզ չի հետաքրքրում՝ իշխանությունները ճիշտ թե սխալ կհասկանան մեր քայլերն ու գործողությունները: Կարեւորը մեզ համար այդ քայլերի ու գործողությունների ճշտությունն է: Իսկ որ Հայ Ազգային Կոնգրեսը, հանձինս իրեն մաս կազմող տասնութ կուսակցությունների եւ տասնյակ հազարավոր անհատ անդամների, ի վիճակի է, առնվազն գլխավոր հարցերում, ճիշտ կողմնորոշվել, ամենեւին չեմ կասկածում: Պետք է նկատի ունենալ, որ վճռական գործողությունների անցնելու պահի հասունացումը կախված է ոչ միայն մեր կամքից, այլեւ բազմա-

թիվ այլ անհրաժեշտ գործոններից, որոնք առայժմ առկա չեն կամ արտահայտված են դեռեւս ոչ բավարար չափով: Այդ գործոններն անպայման առաջանալու են, քանի որ Հայաստանի ներկա իշխանություններն, իրենց ինտելեկտուալ կարողություններով ու մասնագիտական պատրաստվածությամբ, իրենց գիշատիչ էությամբ ու բռեական վարքուբարքով, ի վիճակի չեն լուծելու պետության առջեւ կանգնած որեւէ կենսական խնդիր:

Կարծիքներ են հնչում նաեւ այն մասին, որ եթե Կոնգրեսը մի-փոքր էլ դանդաղի, նրա տեղը կզբաղեցնեն արմատականները: Նման մտավախության հիմքեր առայժմ չկան. շորս ամիս է՝ Կոնգրեսը դադարեցրել է զանգվածային միջոցառումների անցկացումը: Ո՞ւր էին այդ արմատականները. թող նրանք լրացնեին քաղաքական այդ վակուումը: Ո՞ւր էին մեզ անվճռականության մեջ մեղադրողները. թող իրենք դիմեին վճռական գործողությունների: Իսկ եթե, այնուամենայնիվ, արմատականների ու ծայրահեղականների ի հայտ գալու վտանգը կա, ապա դրա մասին, առաջին հերթին պետք է մտածի իշխանությունը եւ ընդառաջ քայլեր կատարի դեպի հասարակությունը: Պետք է մեկանգամընդմիշտ գիտակցել հետեւյալը: Յուրաքանչյուր քաղաքական ուժ ինքն է որոշում իր օրակարգն ու մարտավարությունը: Ինչպես արդեն ասվեց, նա, անշուշտ, չի կարող հաշվի չնստել տարերային տրամադրությունների հետ, բայց պարտավոր չէ նաեւ դառնալու դրանց պատանդը: Յուրաքանչյուր քաղաքական ուժ իրականացնում է իր սեփական ծրագիրը: Անհեթեթություն է կարծել, որ ինչ-որ մարդիկ պետք է գաղափարներ ու ծրագրեր մշակեն, իսկ ուրիշներն իրականացնեն այդ գաղափարներն ու ծրագրերը: Քաղաքականությունը պատվերով համերգ չէ, որտեղ մեկը պատվիրում, իսկ մյուսը երգում է: Ոչ ոք չի կարող սոցիալիստին թելադրել, որ լիբերալ դառնա, կամ ազգայնականին ստիպել, որ կոսմոպոլիտ դառնա:

Ինչպես ասում են, սուրբ տեղը դատարկ չի մնում: Եթե կա հասարակական պահանջարկ, եւ այդ պահանջարկը մենք չենք բավարարում, ուրիշները կբավարարեն: Երբ մենք, օրինակ, պնդում էինք, որ քանի դեռ արցախահայությունը ոտքի չի կանգնել, Հայաստանում Ղարաբաղի հարցով ժողովրդական ալիք բարձրացնել հնարավոր չէ, շատերն առարկում էին: Մինչդեռ ակնհայտ է, որ եթե նման հասարակական պահանջ լի-

ներ, այդ ալիքը մեր կամքից անկախ կառաջանար: Այնպես որ, վճռական գործողությունների դրդողները թող բարի լինեն՝ իրենք իրականացնեն այդ գործողությունները: Թող ներվի ասել՝ ես առանձնապես չեմ էլ հավատում վճռականության կոչ անողներին, որովհետեւ վճռական պահերին նրանք, սովորաբար, ասպարեզում չեն երեւում կամ ասպարեզից առաջինն են ճողոպրում: Բացառելու չէ նաեւ նրանց հիմնականում ազնիվ շարքերում սադրիչների առկայությունը, որոնցից հատկապես պետք է զգուշանալ:

Անցյալում էլ մեզ անվճռականության մեջ մեղադրողներ եւ ծայրահեղ քայլերի դրդողներ կային, ընդ որում ոչ միայն փողոցներում ու մամուլի էջերում, այլեւ անգամ խորհրդարանում: Այսպես, մեզանից պահանջում էին՝ առանց հանրաքվեի անկախություն հռչակել, բռնագրավել Հայաստանում տեղակայված խորհրդային բանակի զինապահեստները, չեղյալ համարել Կարսի պայմանագիրը, պատերազմ հայտարարել Ադրբեջանին եւ այլն: Եթե մենք տեղի տայինք եւ կատարեինք այդ ամենը, այսօր ո՛չ ազատագրված Արցախ, ո՛չ էլ երկիր չէինք ունենա:

Ղարաբաղյան կարգավորման գործընթացում սպասվող լուրջ զարգացումների եւ, մանավանդ, տնտեսական ճգնաժամի խորացման ու սոցիալական ցնցումների ահագնացող վտանգի պայմաններում ալեկոծությունների հրահրումը հավասարազոր է խելագարության: «Որքան վատ՝ այնքան լավ», «Ամեն ինչ՝ կամ ոչինչ», «Մահ՝ կամ ազատություն» զուգաբանությունները մեր կարգախոսները չեն, քանի որ դրանք անպատասխանատու եւ ազգակործան կարգախոսներ են: Հայ ժողովուրդը, հախուռն թվացող բնավորությամբ հանդերձ, ճգնաժամային պահերին գնահատել է չափավորությունը, ողջախոհությունը, ինքնատիրապետումը, ուստի ամենեին չեմ կասկածում, որ այս անգամ էլ ճիշտ կկողմնորոշվի ստեղծված իրադրությունում:

Որոշ ժամանակ անց վճռական գործողությունների անցնելու եւ իշխանափոխության համար ստեղծվելու է բոլորովին մի նոր, շատ ավելի նպաստավոր իրավիճակ: Պահի հասունացումը կախված է ոչ միայն օբյեկտիվ գործոններից, այն է՝ երկրում կուտակված խնդիրների լուծման հարցում իշխանությունների դրսեւորած ապիկարությունից, այլեւ, առաջին հերթին, հասարակության հասունացումից: Մինչեւ Շարժմանը չմիանան հասարակական նորանոր շերտեր, մինչեւ մարդ-

կանցից ոմանք չհասկանան, թե ինչպիսի աններելի սխալ են գործել՝ վերակելով 5000 դրամի դիմաց, մինչեւ ընտրական հանձնաժողովների անդամները չգիտակցեն, թե ինչի կարող է հասցնել ընտրությունների արդյունքների կեղծումը, մինչեւ գործարար աշխարհը չըմբռնի իր իրական շահերն ու դրանց պաշտպանության համար միավորվելու անհրաժեշտությունը, մինչեւ իշխանությունն անընդունելի չդառնա ողջ հասարակության համար, պահը հասունացած համարել չի կարելի, իսկ ժամանակից շուտ կատարված գործողությունները կարող են միայն խանգարել ընդհանուր գործին եւ վիժեցնել ժողովրդի վերջնական հաղթանակը:

Մի՞թե դժվար է հասկանալ, որ մի քանի ամսից իշխանություններն ի ցույց են դնելու իրենց ողջ մերկությունը: Ուժերից վեր խնդիրների եւ ներքին գզվռտոցի պատճառով նրանք իրենք–իրենց քանդվելու են: Եւ որքան մենք հանգիստ մնանք, որքան խնայենք մեր նյարդերը, այնքան ավելի շուտ են քանդվելու: Հեռու չէ այն պահը, երբ իշխանությունների, առանց այդ էլ գոյություն չունեցող, վարկանիշը հավասարվելու է զրոյի: Նրանք այլեւս ժողովրդի հետ խոսելու փաստարկներ չեն ունենալու: Վերջին փաստարկը՝ դրամի բարձր փոխարժեքը, որով առայժմ հաջողվում է կայունության որոշ պատրանք ստեղծել, պայթելու է շատ շուտով: Չեմ բացառում, որ առաջիկայում վարչախումբը կարող է հայտնվել մի այնպիսի ճարահատյալ վիճակում, որ հարկադրված լինի իր ողջ կազմով հրաժարական տալ: Չեմ բացառում նաեւ, որ մեզ առաջարկեն ազգային համաձայնության կամ, ավելի ճիշտ, ազգային փրկության կառավարություն կազմել: Եթե նման առաջարկ արվի, ապա նրա ընդունել–չընդունելու հարցը, բնականաբար, ոչ թե Կոնգրեսը, այլ ժողովուրդը պետք է որոշի:

Եւ վերջինը. վարանողներ, տրտնջացողներ, տեղի-անտեղի վճռական գործողությունների կոչողներ եւ պարզապես անհամբերներ եղել են նաեւ 1988–1990 թվականների Շարժման ընթացքում: Այն ժամանակ էլ մենք ենթարկվեցինք բազմաթիվ ճնշումների, այն ժամանակ էլ մեզ լցրին բանտերը, ահաբեկեցին ժողովրդին, արտակարգ դրություններ հայտարարեցին, կրակեցին ցուցարարների վրա (1988թ. հուլիսի 5, 1990թ. մայիսի 27): Բայց Շարժումը հետեւողական, համակարգված, երկարատեւ եւ նպատակասլաց պայքարի շնորհիվ վերջիվերջո կարո-

ղացավ հաղթել անսասան թվացող բռնապետությանը: Թող ոչ ոք չկասկածի, որ ներկա Համաժողովրդական շարժումը, նույնպիսի որակներ դրսեւորելու պարագայում, այս անգամ էլ հաստատապես հաղթելու է: Այս հանրահավաքի բազմամարդությունը ցույց է տալիս, որ Շարժումն, ի հեռուկս չարախինդների եւ ի սփոփումն մեր անհամբեր համակիրների, ոչ միայն չի մարել, այլեւ շատ ավելի է հզորացել, ինչը լրջանալու խթան պետք է լինի թե՛ Հայաստանի իշխանությունների, թե՛ միջազգային հանրության համար: Համաժողովրդական շարժումը կամ Հայ Ազգային Կոնգրեսը, անգամ օբյեկտիվ պատճառներով, մարելու կամ թուլանալու տարբերակ չունի, քանի որ իշխանություններն իրենց ձախող ու անճարակ գործողություններով մշտապես սնուցում, իսկ հասարակությունը նորանոր լիցքեր է հաղորդում նրան: Հայ Ազգային Կոնգրեսը քաղաքական բոլորովին նոր մշակույթի եւ նոր որակի համընդգրկուն միավորում է, որն իր նախադեպը չունի Հայաստանի նորագույն պատմության մեջ: Իսկ նոր քաղաքական մշակույթն ու նոր որակը հաստատապես բերելու են նոր հաղթանակ:

Իսկ այժմ բոլորիդ խնդրում եմ՝ Կոնգրեսի ղեկավարության ետեւից երթով շարժվել դեպի Ալեքսանդր Մյասնիկյանի արձան, ի հարգանս մարտի 1-ի զոհերի հիշատակի՝ պսակներ ու ծաղիկներ դնել նրա պատվանդանին, եւ հանգիստ գնալ ձեր տները: Երթուղին ձեզ կներկայացնի Հայ Ազգային Կոնգրեսի համակարգող Լեւոն Ջուրաբյանը: Իսկ հաջորդ հանրահավաքը, որը, չեմ կասկածում, սրանից շատ ավելի բազմամարդ է լինելու, տեղի կունենա մայիսի 1-ին: Դա չի նշանակում, անշուշտ, որ անհրաժեշտության դեպքում միջանկյալ հանրահավաքներ չեն կարող կայանալ: Թերեւս կարիք չկա հիշեցնելու նաեւ, որ մենք, ինչպես անցյալ տարի, մեկ մարդու պես պետք է մասնակցենք ապրիլի 24-ի սգո երթին:

«Ժամանակ Երեւան», 2 մարտի, 2009թ.: «Հայք», «Հայկական ժամանակ», «168 ժամ», 3 մարտի, 2009թ.:

ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ
(ելույթ 2009թ. մայիսի 1-ի հանրահավաքում)

Սիրելի հայրենակիցներ,

Նախ եւ առաջ կցանկանայի հանձինս ձեզ շնորհավորել մեր ողջ ժողովրդին աշխատավորների համերաշխության միջազգային տոնի առթիվ, որի այժմեականությունը մանավանդ կարեւորվում է Հայաստանի ներկա անմխիթար իրականության հանգամանքով:

Մարտի 1-ի հանրահավաքից անցել է ուղիղ երկու ամիս՝ կարճատեւ մի ժամանակամիջոց, սակայն հագեցած բազմաթիվ նշանակալի գործընթացներով ու իրադարձություններով, որոնցից ձեր ուշադրությանն եմ ուզում ներկայացնել հետեւյալ չորսը.

1. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացում.
2. Յոթ քաղբանտարկյալների գործի տապալում.
3. Հայ–թուրքական երկխոսության խորացում.
4. Երեւանի քաղաքապետի ընտրության նախապատրաստություն:

Ստորեւ ես կփորձեմ, որքան հնարավոր է սեղմ կերպով, մեկնաբանել Հայ Ազգային Կոնգրեսի դիրքորոշումը նշված խնդիրներից յուրաքանչյուրի վերաբերյալ:

Սոցիալ-տնտեսական իրավիճակ

Ինչպես կանխատեսել էինք մարտի 1-ի հանրահավաքում, երկրի տնտեսությանն սպառնում էին լուրջ փորձություններ, գլխավորաբար կապված դրամի արժեզրկման սպասվող վտանգի հետ: Իմ ելույթում ես մասնավորապես նշել էի. «Շատ շուտով կառավարությունն ստիպ-

ված է լինելու հրաժարվել դրամի փոխարժեքի արհեստական պահպանման քաղաքականությունից: Ընդ որում, դրամն արժեզրկվելու է ոչ թե սահուն կերպով, ինչպես տեղի ունեցավ ռուսական ռուբլու պարագայում, այլ պարզապես գահավիժելու է»: Գահավիժումն իրականացավ հանրահավաքից երկու օր անց, մարտի 3-ին՝ բացահայտելով կառավարության եւ Կենտրոնական բանկի վերջին շրջանում վարած քաղաքականության ողջ սնանկությունը, եթե չասենք՝ հանցավորությունը: Իշխանությունները մինչ այդ հասարակությանը հավատացնում էին, թե իբր դրամի փոխարժեքը ոչ թե արհեստական, այլ լողացող է, ինչը բացառնակ սուտ դուրս եկավ, որովհետեւ լողացող փոխարժեքը մեկ օրում 30%-ով անկում չէր ապրի: Պարզվեց նաեւ, որ անցյալ տարվա վերջին եւ այս տարվա առաջին ամիսներին Կենտրոնական բանկի պահուստներից դուրս գրված շուրջ 800 միլիոն դոլարը ծառայել է ոչ այնքան դրամի փոխարժեքի պահպանման, որքան բոլորովին այլ նպատակի: Այդ գումարը, ինչպես նաեւ փոխանակման միջոցով բնակչությունից հայթայթված արտարժույթի պատկառելի քանակը նստել են բանկիրների, պետական պաշտոնյաների եւ օլիգարխների հաշիվներին, ինչն այլ բան, քան ազգային հարստության բացահայտ կողոպուտ, չի կարելի համարել:

Իշխանություններն այժմ գոհունակությամբ նշում են, որ մարտի 3-ի գահավիժումից հետո դրամի փոխարժեքը կայունացել է: Բայց, չգիտես ինչու, նրանք մոռացության են մատնում այն փաստը, որ դրամի արժեզրկման եւ նրա պատճառած գնաճի հետեւանքով բնակչության կենսամակարդակում շուրջ 30%-ի անկում է արձանագրվել: Կառավարության երկաթյա տրամաբանությամբ՝ կայունացումը նույնիսկ կատարյալ կարելի է համարել, նկատի ունենալով այն նշանակալի իրողությունները, որ այս տարվա առաջին եռամսյակում Հայաստանում արդեն իսկ գրանցվել է 6,1%-ի տնտեսական անկում, իսկ հարկային մուտքերը կազմել են բյուջեով նախատեսված եկամուտների ընդամենը 40%-ը: Եւ մի այսպիսի կայունացում, եւ ժողովուրդը կհայտնվի լիակատար աղքատության գրկում: Թեեւ դրամի փոխարժեքն այժմ արդեն իսկապես լողացող է, բայց, չգիտես ինչու, այն լողում է միայն մեկ ուղղությամբ՝ դեպի հարաճուն ու տեւական անկում: Դա նշանակում է, որ առայժմ եւ մոտակա ապագայում տնտեսական կայունացման

մասին խոսք անգամ չի կարող լինել: Զպետք է մոռանալ, որ չափազանց ծանր դրության մեջ են հայտնվել բանկերը՝ դրամային վարկերի պարագայում դրամի արժեզրկման հետեւանքով կրած վնասների, իսկ դոլարային վարկերի պարագայում՝ դրանց մարման խնդրում առաջացած անհաղթահարելի դժվարությունների պատճառով: Այս երեւույթն անխուսափելիորեն հանգեցնելու է մի շարք բանկերի սնանկացման եւ, որպես դրա հետեւանք, դրամի փոխարժեքի մի նոր կտրուկ անկման:

Դրամի արժեզրկման եւ գնաճի պատճառով Հայաստանի տնտեսությունը բախվել է նաեւ մի այլ բացասական երեւույթի՝ առեւտրի ծավալների էական կրճատման եւ դրա հետեւանքով հարկային մուտքերի կտրուկ նվազման հետ: Բյուջեի մասին օրենքը վերածվել է թղթի կտորի, որովհետեւ կառավարությունն, ըստ էության, գործում է ոչ թե այդ օրենքի, այլ տարրական հաշվապահության հիման վրա, այսինքն՝ օրական որքան ստանում, այնքան էլ ծախսում է, հազիվ կարողանալով հոգալ պետական ապարատի կենսագործունեության եւ աշխատավարձերի վճարման կարիքները: Մուտքերի աղետալի նվազումը կառավարությանն ստիպում է խստացնել վարչարարությունը եւ խրախուսել մաքսային ու հարկային ծառայությունների կամայականությունները, այդ նպատակով որպես գործիք օգտագործելով նաեւ դատական մարմինները: Հարկային բեռն, այսպիսով, ինչպես անցյալում, շարունակում է ծանրանալ, առանց այդ էլ սնանկության եզրին հասած, մանր ու միջին ձեռնարկատերերի ուսերին: Սերժ Սարգսյանն ինքն էլ իր վերջին ասուլիսում ակամա խոստովանեց, որ խոշոր բիզնեսը հարկային դաշտից դուրս է մնում: Եթե այդ խոստովանությունն անկեղծ լիներ, ապա կարող էր վիճակը շտկելու հույս ներշնչել: Բայց քանի դեռ նախագահի աթոռն զբաղեցնում է Սարգսյանը, խոշոր բիզնեսը շարունակելու է այդպես էլ դուրս մնալ հարկային դաշտից, որովհետեւ նա է նրա գլխավորած ավազակապետական համակարգի ամենահուսալի հենարանը եւ սեփական բարգավաճման հիմնական աղբյուրը:

Մարտի 1-ի հանրահավաքից հետո զգալիորեն սրվել են նաեւ սոցիալական դժգոհության արտահայտությունները, մասնավորապես տաքսու վարորդների, մանրածախ առեւտրի շուկաների եւ տոնավաճառների աշխատողների շարքերում, որոնց շուտով կարող են միանալ գործազուրկներն ու բյուջետային ոլորտի աշխատողները: Դրանք առայժմ կրում են տարե-

ռային ու չկազմակերպված բնույթ, սակայն բավարար լուծումներ չգտնելու պարագայում սպառնում են վերածվել լուրջ ցնցումների: Իշխանությունները թեթեւամտորեն փորձում են սոցիալական բողոքի ակցիաները ճզմել ահաբեկումների ու ոստիկանական գործողությունների միջոցով, ինչը չափազանց վտանգավոր եւ հակաարդյունավետ մտահղացում է: Այնինչ նրանք պարտավոր էին անել ճիշտ հակառակը, այսինքն՝ ոչ թե բնում խեղդել իրավացի դժգոհությունները, հուսալով, որ դրանք չեն ծավալվի, այլ ջանքեր գործադրել մանր ու միջին ձեռնարկատերերին եւ վարձու աշխատողներին հուզող խնդիրները լուծելու ուղղությամբ: Պետությունն իրավունք չունի ձեռքերը լվանալ գործատերերի եւ աշխատավորների, վարձատուների եւ վարձակալների հարաբերություններից: Նրա պարտքն է ակտիվորեն միջամտել եւ կարգավորել այդ հարաբերությունները: Կարող են առարկել, թե օրենքները բավարար են այդ հարաբերությունները կարգավորելու համար: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ հակասություններն առաջանում են հենց օրենքների խախտման, պաշտոնեական կամայականությունների եւ համատարած կոռուպցիայի պատճառով: Եթե պետությունը չստանձնի այդ հակասությունների լուծման պարտավորությունը, վաղը դա արդեն անելու են արհեստակցական միությունները, որոնք պետության կրավորականության հետեւանքով անպայման ձեւավորվելու եւ հզորանալու են, քանի որ աշխատավորների իրավունքների պաշտպանության այլ միջոց գոյություն չունի: Նկատի ունենալով խնդրի կարեւորությունը եւ անկանխատեսելի սոցիալական ցնցումներից խուսափելու անհրաժեշտությունը, Հայ Ազգային Կոնգրեսը պատրաստ է խորհրդատվական եւ իրավաբանական աջակցություն ցուցաբերել անկախ արհեստակցական միությունների կազմակերպման հարցում: Մենք բազմիցս հայտարարել ենք, որ Կոնգրեսի գլխավոր նպատակը Հայաստանում քաղաքացիական հասարակության ստեղծումն է, իսկ արհեստակցական միությունները քաղաքացիական հասարակության ամենակարեւոր բաղկացուցիչ մասերից մեկն են:

Յոթի գործի անփառունակ վախճանը

Թեեւ Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենյակը ս.թ. ապրիլի 2-ին հարցի կապակցությամբ հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, սակայն ավելորդ չեմ համարում ներկա ընդարձակ

լսարանի առջեւ եւս մեկ անգամ վերհանել այդ նշանակալի իրադարձության կարեւորությունը: Այսպես կոչված յոթի (իրականում՝ տասնմեկի) գործի էությունն ըմբռնելու համար նախ հարկ է պարզել, թե ինչ նպատակով էր հարուցված այդ գործը: Տարակույս չի կարող լինել, որ նպատակը պարզից էլ պարզ էր, այն է՝ ողջ աշխարհին ապացուցել ընդդիմության կողմից իշխանության բռնի յուրացման փաստը եւ դրանով արդարացնել իշխանությունների պատասխան գործողությունները, որոնք են՝ խաղաղ ցույցի սառնասիրտ գնդակոծումը, 10 քաղաքացիների սպանությունը եւ արտակարգ դրության հաստատումը: Ըստ այդմ, դատական մարմինների առջեւ խնդիր էր դրված յոթի գործը շուտափույթ կերպով հասցնել ավարտի եւ կայացնել պահանջված դատավճիռը՝ ի հաստատումն մարտի 1-ի իրադարձությունների պաշտոնական վարկածի: Սակայն համաժողովրդական համառ պայքարի, քաղբանտարկյալների կորովի պահվածքի, փաստաբանների գրագետ մարտավարության, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների միջամտության շնորհիվ այդ խնդիրը տապալվեց: Դեմքը փրկելու համար իշխանություններն ստիպված եղան լուրջ փոփոխություններ կատարել քրեական օրենսգրքում, դրանց հիման վրա վերաձեւակերպել ներկայացված մեղադրանքները եւ յոթի գործը մասնատել առանձին գործերի:

Այս քայլով, մասնավորապես քրեական օրենսգրքի 300 հոդվածով առաջադրված մեղադրանքի վերացմամբ, իշխանությունները փաստորեն խոստովանեցին, որ յոթի գործը սկզբից եւեթ շինծու է եղել, եւ որ ընդդիմության կողմից իշխանության յուրացում կամ նույնիսկ յուրացման փորձ տեղի չի ունեցել: Իսկ սպանությունների գործի անջատմամբ իշխանությունները խոստովանեցին նաեւ, որ այդ սպանությունները որեւէ կապ չեն ունեցել ցուցարարների գործողությունների հետ: Այսպիսով, մարտի 1-ի իրադարձությունների պաշտոնական վարկածը վերջնականապես ջուրն ընկավ, եւ հրապարակում մնաց միայն իշխանությունների իրագործած սահմռկեցուցիչ ոճրագործությունը, որը վաղ թե ուշ բացահայտվելու է ամենայն մանրամասնությամբ:

Այդ դեպքում, բնականաբար, հարց է առաջանում, թե ինչով էին հիմնավորված մարտի 1-ին իշխանությունների, մեղմ ասած, ոչ համարժեք, իսկ իրականում բարբարոսական գործողությունները: Թերեւս ընդդիմության կողմից զանգվածային անկարգությունների կազմակերպ-

մա՞մբ, ինչում վերաձեւակերպված մեղադրանքով ամբաստանվում են նույն յոթ անձնավորությունները: Զխոսած այն մասին, որ ինքնին իրավագիտական անգրագիտություն կամ անհեթեթություն է միեւնույն զանգվածային անկարգությունների առանձին կազմակերպիչներ ճանաչել յոթ անձնավորության, կասկածից վեր է, որ մասնատված գործերը եւս արժանանալու են մայր գործի բախտին, քանի որ ընդդիմության ոչ մի ներկայացուցչի այդպես էլ մինչ այժմ անձամբ բռնություն գործելու, մեքենա հրկիզելու կամ խանութ թալանելու կոնկրետ մեղադրանք չի ներկայացվել: Եթե այնուամենայնիվ դատարանին հաջողվի, անգամ օրենքի կոպտագույն խախտումներով, դատավճիռներ կայացնել, միեւնույն է, դրանք հօդս են ցնդելու եւրոպական դատարանում:

Իսկ թե իրականում ովքեր են եղել զանգվածային անկարգությունների կազմակերպիչները, մեքենաներ հրկիզողներն ու խանութներ թալանողները, այդ մասին սահմանափակ լսարանի առջեւ ես խոսել եմ 2008թ. դեկտեմբերի 21-ին, Հայ Ազգային Կոնգրեսի առաջին համաժողովում, մասնավորապես նշելով հետեւյալը. «Հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա մենք պարզել ենք, որ մարտի 1-ին մեքենաների հրկիզումները, խանութների թալանը եւ այլ սադրանքներ իրականացրել են որոշակի ավազակախմբեր, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմել է 950 հոգի: Այդ ավազակախմբերը կազմավորվել, հանդերձվել եւ նշված գործողությունները համակարգող կենտրոնի տրամադրության տակ են դրվել հինգ բարձրաստիճան պետական պաշտոնյաների եւ չորս հայտնի օլիգարխների կողմից: ... Բոլոր այդ տվյալները Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենյակը ներկայացրել է Փաստահավաք խմբին, ինչպես նաեւ տրամադրել Եւրոխորհրդի Մարդու իրավունքների կոմիսար Թոմաս Համմարբերգին եւ Հայաստանում հավատարմագրված մի քանի օտարերկրյա դեսպանների»: Նշված տեղեկությունների հավաստիությունը հաստատվում է նրանով, որ իշխանությունները կտրականապես արգելել են Փաստահավաք խմբին ստուգումներ կատարել Պաշտպանության նախարարության պահեստներից մեկում, որտեղից հիշյալ ավազակախմբերը ստացել են իրենց հանդերձանքը: Հարգելով Փաստահավաք խմբի գործունեության գաղտնիությունը, մենք առայժմ զերծ ենք մնում այդ ավազակախմբերի պարագլուխների անունները հրապարակելուց: Այդ մարդիկ այսօր էլ բարձրագույն պետական պաշտոններ եւ ազդեցիկ տնտեսական

դիրքեր են զբաղեցնում Հայաստանում: Զպետք է կասկածել, որ գալու է պահը, երբ մենք այդ անունները դարձնելու ենք հանրության սեփականությունը, եւ բոլորը համոզվելու են, թե իրական ինչպիսի զազրելի տարրերի ձեռքում է գտնվում Հայաստանի ու նրա ժողովրդի բախտը:

Հայ–թուրքական հարաբերություններ

Հայ–թուրքական հարաբերություններում վերջերս նկատվող աննախադեպ տեղաշարժը արժանի է հատուկ գնահատականի, որովհետեւ այն շոշափում է Հայոց պետականության զարգացման ամենակենսական խնդիրներից մեկը: Միանգամից նշեմ, որ Հայ Ազգային Կոնգրեսը, բացառությամբ իր մասը կազմող մի կազմակերպության, կողմ է հայ–թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորմանը եւ պատրաստ է այդ հարցում աջակցել Հայաստանի իշխանությունների ձեռնարկած բոլոր դրական քայլերին: Մեր միակ առարկությունը վերաբերում է Ցեղասպանության ուսումնասիրման նպատակով հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծմանը, քանի որ մեր համոզմամբ՝ դա այլ բան, քան Հայոց ցեղասպանության ուրացում, չի նշանակում:

Իսկ այժմ տեսնենք, թե ինչում է արտահայտվում հիշյալ տեղաշարժը: Ակնհայտ է, որ հայ եւ թուրք դիվանագետների գաղտնի շփումների արդյունքում ստեղծվել է մի աշխատանքային փաստաթուղթ, որն ընդգրկում է հետեւյալ կետերը.

– Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատում.

– Պետական սահմանների փոխադարձ ճանաչում.

– Հայ–թուրքական սահմանի բացում.

– Հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողովի ստեղծում:

Հետագայում այդ փաստաթուղթը կոչվեց «ճանապարհային քարտեզ», եւ բացահայտվեցին մի քանի այլ մանրամասներ: Ինչեւէ, թվում է, թե մենք գործ ունենք միջպետական հարաբերությունների հաստատման մի լուրջ մտադրության հետ, մանավանդ նկատի ունենալով, որ Թուրքիան, կարծես-թե, հրաժարվել է հայ–թուրքական հարաբերությունների կարգավորումը Ղարաբաղի խնդրի լուծմամբ պայմանավորելու

իր նախկին ապակառուցողական դիրքորոշումից: Սակայն առկա են երկու հանգամանքներ, որոնք մթագնում են այս տպավորությունը: Հայկական կողմի համար ակնհայտորեն որոշակի դժվարություն պիտի հարուցեր հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծման գաղափարը, եւ վերջիվերջո նրան հաջողվել է այն վերանվանել միջկառավարական հանձնաժողով: Բայց դա ընդամենը միայն խնդիրը հողարկելուն եւ հայ ժողովրդին հանդարտեցնելուն միտված մեղմասացություն (եւֆիմիզմ) է, քանի որ միջկառավարական հանձնաժողովում եւս ենթադրվում է ստեղծել պատմաբանների ստորաբաժանում, ինչից հարցի էությունն ամենեւին չի փոխվում: Իսկ թուրքական կողմը չի կարող հաշվի չնստել ադրբեջանական հասարակության եւ սեփական ընդդիմության ճնշման հետ, ուստի ստիպված կրկին վերադառնալու է իր նախկին դիրքորոշմանը: Այսինքն, հակառակ լավատեսական կանխատեսումներին եւ հակառակ բոլոր սպասումներին, Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները չեն կարգավորվելու եւ հայ–թուրքական սահմանը չի բացվելու, քանի դեռ էական առաջընթաց չի արձանագրվել Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում:

Այս դեպքում հարց է առաջանում. ի՞նչն էր, ապա, բարձրացված այդ ամբողջ աղմուկի իմաստը: Ցավոք, հարցի պատասխանը դառնահամ է լինելու հայկական կողմի համար: Ամբողջ խնդիրն այն է, որ Թուրքիան, Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու ընդհանուր տրամադրվածությունից բացի, իր առջեւ նաեւ մի ավելի նվազագույն եւ կոնկրետ նպատակ էր դրել, այն է՝ ամեն գնով կանխել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի եւ ամերիկյան կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վտանգը: Թուրքիան լիովին հասավ իր նպատակին, Հայաստանը մնաց ձեռնունայն, իսկ Սփյուռքը դարձյալ հուսախաբ եղավ: Ֆուտբոլային դիվանագիտությամբ սկսված խաղի առաջին կեսն ավարտվեց 1 : 0 հաշվով՝ հօգուտ Թուրքիայի:

Թուրքիայի ղեկավարները նախագահ Օբամայի առջեւ դրին հայ եւ թուրք դիվանագետների աշխատանքի արդյունքում ծնված վերոհիշյալ փաստաթուղթը եւ, ինչպես սպասելի էր, նրան հեշտությամբ համոզեցին, որ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման բնագավառում լրջագույն գործընթաց է մեկնարկել: Օբաման, թեեւ գովելի ազնվությամբ, հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության գնահատ-

ման հարցում չի փոխել նախընտրական շրջանում արտահայտած իր տեսակետը, սակայն պետական այրին վայել կեցվածքով բացատրեց, որ մտադիր չէ խանգարել այդ դրական գործընթացին, հասկացնել տալով, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն առայժմ հանվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրակարգից:

Կարելի՞ է, արդյոք, Թուրքիային եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներին մեղադրել երկերեսանիության մեջ: Ամենեւին ոչ: Թուրքիան, նախանձելի դիվանագիտական հնարամտություն դրսեւորելով, այս հանգրվանում փայլուն կերպով լուծեց իր հետապնդած առաջնահերթ խնդիրը: Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը վարվեց այնպես, ինչպես նման իրավիճակում կվարվեր ցանկացած պատասխանատու առաջնորդ: Եթե, այնուամենայնիվ, մեղադրանքի թիրախ փնտրելու անհրաժեշտություն կա, ապա այդ թիրախը կարող են լինել միայն Հայաստանի վերջին տասնմեկ տարվա իշխանությունները՝ հանձինս Ռոբերտ Քոչարյանի, Վարդան Օսկանյանի, Սերժ Սարգսյանի եւ Էդվարդ Նալբանդյանի, որոնք բառացիորեն պղծեցին ցեղասպանության սուրբ գաղափարը, այն վերածելով քաղաքական աճուրդի ու սակարկության առարկայի: Եւ դա ոչ թե պետական կամ ազգային վեհ նպատակների, այլ բացառապես Սփյուռքին հանձնայանալու եւ ներքաղաքական դիվիդենտներ ստանալու մանրախնդիր նկատառումով:

Այս կապակցությամբ հետաքրքիր է հետեւել նրանց վարած միանգամայն սնանկ ու վնասակար քաղաքականության էվոլյուցիային.

– Քոչարյանի վարչակազմի առաջին գործը եղավ դավաճանական կամ հակազգային հայտարարել Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու՝ նախկին իշխանությունների որդեգրած քաղաքականությունը:

– Հայաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարը հռչակվեց Ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջը, որը որպես հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման բանական հիմք, հոխորտանքով դրվեց նաեւ Թուրքիայի առջեւ:

– Երբ, երկար համառելուց հետո, Քոչարյանը եւ Օսկանյանը ի վերջո համոզվեցին, որ այս ճանապարհը փակուղային է, նրանք վերադարձան իրենց կողմից ժամանակին դավաճանական հայտարարված՝ Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու

սկզբունքին, ակամա բացահայտելով Հայաստանի թուլությունը եւ Թուրքիային հիմք տալով ավելի կոշտացնելու իր դիրքորոշումը:

– Թե՛ այս օբյեկտիվ պատճառով, եւ թե՛ սեփական լեգիտիմության խնդրի լուծման նկատառումով, Սերժ Սարգսյանն ընկավ մի ավելի վտանգավոր ծայրահեղության գիրկը՝ հայ–թուրքական սահմանի բացման դիմաց անխոհեմաբար համաձայնելով ընդառաջել ցեղասպանության ուսումնասիրման հարցով հայ եւ թուրք պատմաբաններից կազմված հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Էրդողանի կողմից տարիներ առաջ արված համարյա մոռացված առաջարկին:

Ոչ մի այլ բան, բան քաղաքական խարխափումների, անհեռատես քայլերի եւ անպատասխանատու ձեռնարկների այս խայտառակ շարքն է, ահա, որ հանգեցրեց նախագահ Օբամայի Թուրքիա կատարած այցի բերած արդյունքին: Իհարկե, չի կարելի պնդել, որ եթե չլիներ հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում մեկնարկած վերոհիշյալ գործընթացը, Օբաման ապրիլի 24-ի իր ուղերձում, արդեն Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի հանգամանքով, անպայման կարտասաներ ցեղասպանություն բառը կամ ամերիկյան կոնգրեսը կճանաչեր Հայոց ցեղասպանությունը: Այսպիսի իրավիճակներ շատ են եղել, բայց երբեք այդ բանը տեղի չի ունեցել: Բայց ներկա իրավիճակն էականորեն տարբերվում է նախորդներից, քանի որ այս անգամ արդեն հարցի մերժման ֆորմալ պատրվակը Թուրքիայի հետ ամեն գնով, այդ թվում ցեղասպանության ուրացման գնով, մերձենալու Սերժ Սարգսյանի ձախորդ նախաձեռնությունն է: Այսպիսով, առանց դույզն իսկ չափազանցության, հարկադրված ենք արձանագրել. Սերժ Սարգսյանը հանուն սեփական իշխանության երկարաձգման, բառիս բուն իմաստով, ծախեց Ցեղասպանությունը: Նրա հաջորդ քայլն, անկասկած, լինելու է Ղարաբաղը ծախելը, ինչից հետո, բնականաբար, նա դառնալու է առաջին հայը, որը կարժանանա Նոբելյան մրցանակի:

Ես մեղմ եմ արտահայտվում. վստահաբար, Սարգսյանի վարքը շատ ավելի անխնա գնահատականների է արժանանալու Հայաստանի եւ մանավանդ Սփյուռքի արմատական շրջանակներում: Արդարությունը պահանջում է, սակայն, կատարվածում մեղադրանքի որոշ բաժին հասցեագրել նաեւ Սփյուռքի ազգային ջոջերին, ովքեր ոչ միայն երբեւէ Հայաստանի իշխանություններին չզգուշացրին ցեղասպանության ճա-

նաչման հարցը պետականորեն բարձրացնելու ձեռնարկի անխոհեմության ու վնասակարության մասին, այլեւ ընդհակառակը, ոգեւորությամբ խրախուսեցին վերջիններիս ջանքերն ու թմբկահարեցին նրանց «սխրանքները»՝ արդյունքում ստանալով այն, ինչ ստացան: Ավելի քան քառասուն տարիների ընթացքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նպատակով Սփյուռքի ներդրած հսկայական ջանքերն ու դրամական միջոցներն, այսպիսով, մեկ օրում ջուրը թափվեցին: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է շտկել վիճակը եւ դարմանել պատճառված վնասը:

Այս ամենով հանդերձ, թեկուզ նման տխուր արդյունքով ավարտված հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման ներկա գործընթացը բոլորովին զուրկ չէ դրական տարրերից: Մի կողմից՝ Թուրքիայի բնական շահագրգռվածությունը հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում, իսկ մյուս կողմից՝ այդ կարգավորման պայմանավորումը հայ–ադրբեջանական հարաբերություններում ակնկալվող տեղաշարժով, որոշ հող է ստեղծում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի խթանման համար: Դրական պետք է համարել նաեւ դեպքերի բերումով նախագահ Օբամայի ստանձնած բարոյական պատասխանատվությունը, ինչը նրա ղեկավարած երկրի առջեւ պարտավորություն է դնում ավելի ակտիվորեն ու անկողմնակալ կերպով ներգրավվել ինչպես հայ–թուրքական հարաբերությունների, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Բարաք Օբաման իդեալիստ է՝ բառիս ամենադրական իմաստով: Իսկ հայտնի է, որ թեեւ աշխարհը սովորաբար կառավարում են պրագմատիկներն ու ցինիկները, բայց քաղաքակրթությունն առաջ են մղում ժամանակ առ ժամանակ հայտնվող իդեալիստները: Ընդ որում, իդեալիստ ասելով, ես ամենեւին նկատի չունեմ իդեոլոգներին, այլ բարոյականության, ազնվության եւ արդարության հարցերում կայուն սկզբունքներ ունեցող հազվագյուտ պետական անձանց:

Երեւանի քաղաքապետի ընտրությունները

Երբ Հայ Ազգային Կոնգրեսը հայտարարեց, որ իմ գլխավորությամբ մասնակցելու է Երեւանի քաղաքապետի առաջիկա ընտրություն-

ներին, իշխանական ճամբարից հնչած առաջին արձագանքն այն եղավ, որ Կոնգրեսը քաղաքականացնում է այդ ընտրությունները, այսինքն՝ գործում է զարհուրելի մի հանցանք, որի նմանը տեսնված չէ համաշխարհային պատմության մեջ: Ցանկացած հարցի քաղաքականացումն այդպես արձագանքողների համար, կարծես-թե, հավասարազոր է ժանտախտի, որից գլխակորույս պետք է փախչել: Նախ՝ դրանով իշխանական կոալիցիայի մաս կազմող խորհրդարանական կուսակցությունները իրենց դնում են ծիծաղելի դրության մեջ, մոռանալով, որ հենց իրենք են իսկզբանե ծայրահեղորեն քաղաքականացրել քաղաքապետի ընտրությունները, որդեգրելով հայոց տոկոսանոց համամասնական սկզբունքը: Եւ երկրորդ՝ նման արձագանքով նրանք անզգուշորեն մատնում են իրենց բրեական էությունը, որովհետեւ քաղաքականացման այլընտրանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ բրեականացումը:

Ժամանակն է վերջապես գիտակցել, որ պետության մեջ ոչ քաղաքական հարց գոյություն չունի, որովհետեւ պետության կենսակերպը հենց քաղաքականությունն է: Եթե այդպես չլիներ, ապա ինչ իմաստ կունենային, ասենք, տնտեսական քաղաքականություն, սոցիալական քաղաքականություն, ագրարային քաղաքականություն, կրթական քաղաքականություն, մշակութային քաղաքականություն, առողջապահական քաղաքականություն եւ բազմաթիվ այլ նմանատիպ հասկացությունները: **Պետություն** եւ **քաղաքականություն** բառերն անգամ ծագումնաբանությամբ նույնական են, եթե նկատի ունենանք, որ քաղաքականություն (**պոլիտիկա**) բառն առաջացել է հունական **պոլիս** (քաղաք-պետություն) բառից: Այս բանն, ի դեպ, գիտակցվել է անգամ միջնադարում, ինչի վկայությունն է այն, որ XIII դ. հայ մատենագիր Հովհաննես Երզնկացին **պետություն** հասկացությունն արտահայտելու համար գործածում է **քաղաք** բառը:

Պաշտոնական քարոզչամեքենան ընտրությունների քաղաքականացման մեջ Կոնգրեսին մեղադրելուց բացի, փորձում է մեզ անհարմար դրության մեջ դնել նաեւ մի այլ ծիծաղելի հնարքով՝ քաղաքապետին, իր պատկերացմամբ, օժտելով միայն աղբահավաքի նվաստ դերով: Նախ՝ ո՞վ է ասել, որ աղբահանությունն ինքնին կարեւոր գործ չէ: Եւ երկրորդ՝ եթե քաղաքապետի միակ պարտականությունը աղբահանությունն է, ապա ինչո՞վ բացատրել, որ Երեւանի մասին 60 մեծադիր էջից բաղ-

կացած օրենքում այդ խնդրին ընդամենը մեկ տող է հատկացվել, մինչդեռ ողջ մնացյալը վերաբերում է քաղաքականությանը: Եթե տրված բացատրություններից հետո էլ կարծիքներ կհնչեն, թե Հայ Ազգային Կոնգրեսը քաղաքականացնում է քաղաքապետի ընտրությունները, ապա դրա համար պետք է միայն շնորհակալություն հայտնել Կոնգրեսին, քանի որ քաղաքականացնելով, նա ձգտում է կանխել ընտրությունների բռեականացումը:

Այսօր ես ամենեին մտադիր չեմ զբաղվել նախընտրական քարոզչությամբ: Դա մենք կանենք մեր հաջորդ հանրահավաքներում: Սակայն առաջիկա ընտրությունների կապակցությամբ չեմ կարող ձեր ուշադրությունը չհրավիրել մի վերջին կարեւոր հարցի վրա: Ի՞նչ տեղի կունենար, եթե Հայ Ազգային Կոնգրեսը որոշեր չմասնակցել Երեւանի քաղաքապետի ընտրություններին: Անկասկած, ոչ այլ բան, քան այն, ինչ տեղի ունեցավ 2007թ. խորհրդարանական ընտրություններում: Դրանք կանցնեին արտաքուստ նույնքան ազատ ու արդար պայմաններում, իշխանական թեկնածուն համոզիչ հաղթանակ կտաներ, իսկ միջազգային դիտորդներն այդ ընտրությունները կգնահատեին որպես ժողովրդավարության խորացման ուղղությամբ կատարված նշանակալի քայլ: Սերժ Սարգսյանն, այդ ընտրությունները դրոշ դարձնելով, հետին թվով ինչ-որ առումով կլեգիտիմացներ 2008թ. նախագահական կեղծված ընտրությունները եւ հսկայական վարկ ձեռք կբերեր միջազգային հանրության աչքում:

Եթե Սարգսյանն իսկապես մտածում է իր եւ պետության վարկի մասին, ապա նա այսօր էլ ունի տվյալ նպատակին հասնելու հնարավորությունը: Թող անցկացնի օրինական ընտրություններ, որոնք, վստահաբար, կարժանանան ոչ միայն միջազգային դիտորդների, այլեւ մեր հասարակության գնահատանքին: Նա պետք է վերջիվերջո գիտակցի, որ օրինական ընտրությունների արդյունքում ոչ միայն իշխանության, այլեւ նույնիսկ ընդդիմության հաղթանակը ուժեղացնում է պետությունը եւ նրան զերծ պահում արտաքին ճնշումներից: Այլապես նա երբեւէ պետական այր կոչվելու իրավունք չի ձեռքբերի: Իսկ եթե Սարգսյանը, նեղմտություն դրսեւորելով, փորձի կրկնել այն, ինչ կատարեց նախագահական ընտրությունների ժամանակ, չխորշելով ոչ միայն բացահայտ կեղծիքներից, այլեւ ֆիզիկական բռնություններից, ապա պետությանը կհասցնի հերթական ծանր

հարվածը, որից այս անգամ արդեն այն կարող է այլեւս ուշի չգալ: Քաղաքապետի ընտրությունների օրինականության ապահովումը Սերժ Սարգսյանի համար Հայաստանի հասարակության եւ միջազգային հանրության առջեւ որոշ հեղինակություն ձեռքբերելու վերջին շանսն է: Այդ շանսը չօգտագործել, հերթական անգամ, նա կարող է միայն Հայաստանի պետական շահը զոհաբերելու գնով:

Եւ այսպես, վաղվանից մենք մտնում ենք ընտրապայքարի մի նոր փուլ, որը մի էական հատկանիշով, այն է՝ ընդդիմության միասնականությամբ, տարբերվում է նախագահական ընտրապայքարից, ինչը մեծապես կնվազեցնի ընտրությունների արդյունքները կեղծելու իշխանությունների հնարավորությունը: Մենք չափազանց ափսոսում ենք, որ չհաջողվեց ընտրություններին մասնակցել Հայ Ազգային Կոնգրեսի եւ Ժառանգություն կուսակցության ընդհանուր ցուցակով: Սակայն գնահատում ենք նաեւ՝ ընդդիմության քվեները չփշրելու նկատառումով ընտրություններին չմասնակցելու վերաբերյալ Ժառանգության կայացրած որոշումը: Միաժամանակ համոզված ենք, որ Ժառանգությունն, այնուամենայնիվ, կանի ամեն ինչ՝ առաջիկա ընտրություններում ընդդիմությանը սատարելու համար:

Մեր հաջորդ, արդեն նախընտրական հանրահավաքը տեղի կունենա մայիսի 15-ին: Մենք հանրահավաքներ եւ ընտրողների հետ հանդիպումներ ենք նախատեսել նաեւ Երեւանի թաղային համայնքներում: Ուզում եմ նաեւ տեղեկացնել, որ Հայ Ազգային Կոնգրեսի բոլոր շտաբներում գործելու են հատուկ բաժիններ, ուր դուք կարող եք ներկայացնել քաղաքի խնդիրների վերաբերյալ ձեր գրավոր առաջարկները, որոնք բարեխղճությամբ քննության կենթարկվեն եւ հաշվի կառնվեն մեր հետագա գործունեության մեջ: Իսկ այժմ՝ բարի երթ, որի ուղին եւ անցկացման կարգը, ինչպես միշտ, ձեզ կներկայացնի Հայ Ազգային Կոնգրեսի կենտրոնական գրասենյակի համակարգող Լեւոն Զուրաբյանը:

«Հայք», «Հայկական ժամանակ», «Ժամանակ Երեւան», «168 ժամ», 2 մայիսի, 2009թ.:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

ԱԲԳԱՐՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ, 49, 51
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳՈՌ, 191
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀՈՎԻԿ, 21, 259
ԱԴԱՄ, 80
ԱԼԱՋԱՆ ՎԱՀՐԱՄ, 123
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ, 55
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 120
ԱԼԻԵԻ ԻԼՀԱՄ, 305, 307, 308
ԱԼԻԵԻ ՀԵՅԴԱՐ, 33, 323
ԱԼԻԽԱՆՈՎ ԱԲՐԱՀԱՄ, 158
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 66
ԱՂԱՆԲԵԳՅԱՆ ԱԲԵԼ, 158
ԱՅՎԱԶՅԱՆ ՍՄԲԱՏ, 23
ԱՅՎԱԶՅԱՆ ՎԻՏՅԱ, 52
ԱՆԴՐՈՊՈՎ ՅՈՒՐԻ, 159
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ, 83
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ, 194
ԱՍԱՏՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ, 83
ԱՎԱԳՅԱՆ ԱՎԵՏԻՍ, 4, 83
ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿ, 136
ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՈՍ, 122
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ, 21
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԺՈՋԵՖ, 83
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 136
ԱՎԵՏԻՔՅԱՆ Ս., 148
ԱՐԱՄՅԱՆ ՎԱԼՏԵՐ, 123
ԱՐԱՐՔՅՅԱՆ ԲԱԲԿԵՆ, 52, 62, 83, 203
ԱՐԵՆՍ ԳԵՐԴ, 238, 239
ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 83, 203
ԱՐՄԵՆ ՄԿՐՏԻՉ, 123
ԱՖՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 44, 95

Բ

ԲԱԲԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 42, 124
ԲԱԲԱՋԱՆ ԱԼԻ, 317
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Ա., 148
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՌՆՈ, 158
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՀԱՄԱՋԱՍՊ, 158
ԲԱԳՐԱՏՅԱՆ ՀՐԱՆՏ, 59, 62, 76, 84, 136
ԲԱՋԵՅԱՆ ԱԼԲԵՐՏ, 23
ԲԱԿԼԱՋՅԱՆ ԱՐՇԱԿ, 136
ԲԱԿՈՒՆՑ ԱԿՍԵԼ, 122
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ, 51
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 94
ԲԱՂԴԱՍԱՐՈՎ ՄԻՇԱ, 120
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 158

ԲԱՆՈՒՋՅԱՆ ԱՐՇԱԿ, 4
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ԼԵՒՈՆ, 23
ԲԱՐՍԵՂՅԱՆ ՋՈՅԱ, 191
ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԱՐԻԱՄ, 200
ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎԱՀՐԱՄ, 91
ԲԱՐՏՈԼԴ ՎԱՍԻԼԻ, 117
ԲԵԳԼԱՐՅԱՆ ԲԱՐՍԵՂ, 120
ԲԻՇԱՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ, 242
ԲԼԵՅԱՆ ԱՇՈՏ, 63
ԲՈՒՇ ՋՈՐՋ Վ., 288, 312
ԲՐԱՅԶԱ ՄԵԹՅՈՒ, 324
ԲՐՈՒՏՅԱՆ ՄԱՐԻՆԱ, 196

Գ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԷՄՄԱ, 181
ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ, 200
ԳԱԼՍՏՅԱՆ ՆԱՐԵԿ, 132
ԳԱՄԱՋՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ, 83
ԳԱՅԴԱՐ ԵԳՈՐ, 101
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ, 136, 179
ԳԴԼՅԱՆ ԹԵԼՄԱՆ, 53
ԳԵՂԱՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 94
ԳԵՅԹՍ ԲԻԼ, 138
ԳԵՒՈՐԳՅԱՆ ԱՐՄԵՆ, 21, 259, 265
ԳԵՒՈՐԳՅԱՆ ՋԱՎԵՆ, 23
ԳԵՒՈՐԳՅԱՆ ԹԱՄԱՐ, 61, 62
ԳԵՒՈՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 83
ԳԻՄԻՇՅԱՆ ՄԿՐՏԻՉ (ՍՈՍ), 136
ԳՅՈՒԼ ԱԲԴՈՒԼԼԱՀ, 309
ԳՅՈՒՄՈՒՇԵԼԻ ՍԵՄԻՆ, 309
ԳՈՐԲԱՉՈՎ ՄԻԽԱԻԼ, 152, 159
ԳՐԵԿՈՎ Բ.Դ., 117
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ն., 148

Դ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՈՆԱ, 201
ԴԱՎԹՅԱՆ ԿԱՐԵՆ, 136
ԴԱՎԹՅԱՆ ԿԱՐՄԵՆ, 182
ԴԱՐԲԻՆՅԱՆ ԱՐՄԵՆ, 21
ԴԵՄԻՐՃՅԱՆ ԿԱՐԵՆ, 11, 23, 82, 133, 214
ԴԵՄԻՐՃՅԱՆ ՍՏԵՓԱՆ, 11, 94, 133, 135, 180, 200, 214, 237, 331
ԴՈՒՐՅԱՆ ՕՀԱՆ, 158

Ե

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ, 23
ԵՂՈՅԱՆ ԱՐՄԱՆ, 68
ԵՍԱՅԱՆ ՋԱՊԵԼ, 122
ԵՍԱՎ, 80
ԵՐՈՒԲԱԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 53
ԵՒԱ, 80

Զ

ԶԵՅՆԱԼՅԱՆ ԱՐՏԱԿ, 23
ԶՈՒՐԱԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ, 135, 331
ԶՈՒՐԱԲՅԱՆ ԼԵՒՈՆ, 83, 331, 349, 364

Է

ԷԼԶԻԲԵՅ ԱԲՈՒԼՖԱԶ, 33, 323
ԷՐԴՈՂԱՆ ՌԵՋԵՓ, 360

Թ

ԹԱՄԱՋՅԱՆ ԱՐԱՄ, 233
ԹՈԹՈՎԵՆՑ ՎԱՀԱՆ, 122
ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 79
ԹՈՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ, 136

Ի

ԻՇԽԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ, 52
ԻՍԱԿՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 158

Լ

ԼԱԶԱՐՅԱՆ ՏԵՐ-ՀՈՒՍԻԿ, 83
ԼԻՊԱՐԻՏՅԱՆ ԺԻՐԱՅՐ, 313

Խ

ԽԱՆԲԱԲՅԱՆ ԱՐՄԵՆ, 83
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ, 158, 253
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ, 59
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ, 70, 71
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ, 186
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ, 83
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԻԳԵՆ, 83
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ, 136
ԽՐՈՒՇՉՈՎ ՆԻԿԻՏԱ, 67

Ծ

ԾԱՌՈՒԿՅԱՆ ԳԱԳԻԿ, 120

Կ

ԿԱՅԵՆ, 80
ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ, 48
ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԻԵԳՈ, 69
ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ ՇԱՀԵՆ, 23, 203
ԿԵՒՈՐԿՈՎ, 102
ԿԻՐՈՎ ՍԵՐԳԵՅ, 82
ԿՈԼՈՄԲԻԵ ԺՈՐԺ, 238, 239
ԿՈՄԻՏԱՍ, 253

Հ

ՀԱԿՈԲ, 80
ՀԱԿՈԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ, 51, 52
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՐԻԿ, 91, 259
ՀԱԿՈԲՅԱՆ ԴԱՎԻԹ, 136
ՀԱԿՈԲՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ, 187
ՀԱԿՈԲՅԱՆ ԹԱԹՈՒԼ, 189
ՀԱԿՈԲՅԱՆ ԼԵՈՆԻԴ, 23
ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ, 235
ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ, 52
ՀԱԿՈԲՅԱՆ ՏԻԳՐԱՆ, 23, 136
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԻԿՏՈՐ, 77, 158
ՀԱՄՄԱՐԲԵՐԳ ԹՈՄԱՍ, 238, 334, 356
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, 63, 136
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ, 120
ՀԱՐՈՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ, 63
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա., 148
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ, 21, 22, 34, 35, 259
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 158
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ, 259
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ., 148
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ, 23
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ, 64
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ, 223, 259
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽՈՍՐՈՎ, 99
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ, 88
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ, 54, 75
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ, 23
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 136
ՀԵՐԿԵԼ ԱՆԴՐԵՍ, 337
ՀԻՏԼԵՐ ԱԴՈԼՖ, 64
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅԻ, 362

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՇՈՏ, 123
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 136
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ, 83
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ, 242
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՐԱՖՖԻ, 94
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՂՎԱՆ, 22, 34, 259
ՀՈՒՆԱՆՅԱՆ ՆԱԻՐԻ, 35

Ղ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ, 190
ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ, 41, 42, 318

Մ

ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ, 23
ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ, 158
ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ, 235
ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ, 181
ՄԱԿԵՅԱՆ ՊԵՏՐՈՍ, 136, 235
ՄԱԿՅԱՆ ՄՈՎՍԵՍ, 63
ՄԱՀԱՐԻ ԳՈՒՐԳԵՆ, 123
ՄԱՀՏԵՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ, 44
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՆԱԻՐԱ, 195
ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 120
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՍԵՆ, 56
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 179
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱԶԳԵՆ, 52, 66, 82, 94, 184, 185
ՄԱՇՏՈՑ ՄԵՍՐՈՊ, 87
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, 21
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ, 136
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՐԱՆՏ, 94
ՄԱՐԿՈՍՅԱՆ ԴԻԱՆԱ, 197
ՄԱՐՈՒՔՅԱՆ Մ., 235, 268
ՄԵԴՎԵԴԵՒ ԴՄԻՏՐԻ, 305
ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐ, 123
ՄԻՐԶՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, 259, 268
ՄԻՐԶՈՅԱՆ ԷԴՎԱՐԴ, 158
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՍՈՒՆ, 235
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 349
ՄՈՒԳԱԲԵ ՌՈԲԵՐՏ, 255
ՄՈՒԹԱԼԻԲՈՎ ԱՅԱԶ, 33, 323
ՄՈՒՍԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ, 179
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԻԳՈՐ, 75

Յ

ՅԱԿՈՒԲՈՎՍԿԻ, 117
ՅՈՒՇԶԵՆԿՈ ՎԻԿՏՈՐ, 201

Ն

ՆԱԶԱՐՅԱՆ ԲՈՐԻՍ, 23, 34
ՆԱԶԱՐՅԱՆ ՆԵՐՍԵՍ, 44, 91
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԷԴՎԱՐԴ, 359
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՏԱԹԵՒԻԿ, 184
ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՆՈՒՇ, 199
ՆԻՔՍՈՆ ՌԻՉԱՐԴ, 220
ՆՈՐԵՆՑ ՎԱՂԱՐՇԱԿ, 123

Շ

ՇԱՀԳԱԼԴՅԱՆ ՆԻԿՈԼ, 83
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ, 83
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ, 51, 89, 136
ՇԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ, 23
ՇՈՒԳԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ, 203
ՇՎԱՐՑ ԵՒԳԵՆԻ, 80

Ո

ՈՒԶՈՒՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 35

Զ

ԶԱՈՒՇԵՍԿՈՒ ՆԻԿՈԼԱԵ, 270
ԶԱՐԵՆՑ ԵՂԻՇԵ, 122, 212
ԶԵՄԲԵՌԼԵՆ ՆԵՎԻԼ, 64
ԶԵՐՋԻԼ ՈՒԻՆՍՏՈՆ, 64
ԶԻՆԳԻՋ-ԽԱՆ, 117

Պ

ՊԱՎԼՈՎ ՎԱԼԵՆՏԻՆ, 101
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ, 79
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ, 83, 110
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ, 194
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ, 158
ՊՈՂՈՍՅԱՆ Լ., 148
ՊՈՂՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ, 193
ՊՈՒՏԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ, 105, 288
ՊՐԵՍԿՈՏ ՋՈՆ, 234, 238, 239

Ջ

ՋԱՆԱՆ ՄԿՐՏԻՉ, 122

Ռ

ՌԱՅՍ ԿՈՆԴՈԼԻԶԱ, 316
ՌԻԺԿՈՎ ՆԻԿՈԼԱՅ, 75
ՌՈՒԲԻՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ, 83

Ս

ՍԱԴԱՄ ՀՈՒՍԵՅՆ, 255
ՍԱԴՈՅԱՆ ԱՐՇԱԿ, 52
ՍԱԴՈՅԱՆ ՀԱԿՈԲ, 58
ՍԱԽԱՐՈՎ ԴՄԻՏՐԻ, 53
ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻ ՄԻԽԱԻԼ, 201, 282
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱ, 83
ՍԱՀԱԿՅԱՆ ԲԱԿՈ, 318
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՄՈՒՇԵՂ, 23
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ, 136
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ, 4, 15
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ, 23, 135, 214, 262, 331
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ, 65, 66
ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ, 136
ՍԱՐԳՍՅԱՆ ԼԵՒՈՆ, 120
ՍԱՐԳՍՅԱՆ ԼՅՈՒԴՄԻԼԱ, 94, 136, 331
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՇԻԿ, 126
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺ (ՍԵՐԺԻԿ), 13, 21, 24, 31, 36, 41–43, 55, 64, 66, 78, 81, 84, 87, 92–94, 102, 107, 109, 114, 119, 120, 122–127, 131, 134, 137, 145, 152, 193–196, 205, 209, 210, 219–221, 223, 224, 236, 239, 242, 255–259, 264, 265, 267, 273, 275–277, 287–290, 292–298, 300, 301, 305, 307, 308, 311–313, 316–319, 321, 322, 338, 353, 359, 360, 363, 364
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ, 23, 59, 65, 66, 82, 214
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆՈՐԱ, 183
ՍԱՐԿԻՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ, 232–234
ՍԱՐԿՈՉԻ ՆԻԿՈԼԱ, 283, 316
ՍԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, 158
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՄՀԵՐ, 126
ՍԻՄՈՆ, 53

ՍԻՄՈՆՅԱՆՑ ԷԴՈՒԱՐԴ, 23
ՍԻՍԱԿՅԱՆ ՆՈՐԱՅՐ, 158
ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ՎԱՆՈ, 40, 59, 66, 83, 84, 184
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ, 91, 120
ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 253
ՍՏԱԼԻՆ ԻՈՍԻՖ, 32, 67, 82, 270
ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ ԽԱՉԻԿ, 75
ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա., 148

Վ

ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ, 77
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ, 62, 84
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀՐԱՆՏ, 120
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՅՈՒՐԻ, 158
ՎԼԱԴԻՄԻՐՅՈՎ Բ.Յ., 117

Տ

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀՐԱՆՏ, 61
ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ ԹԵԼՄԱՆ, 84
ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՒՈՆ, 3–14, 39, 43, 47, 52, 55, 59, 69–71, 79, 91, 110, 124, 125, 142, 179, 181, 183, 184, 186, 231, 233, 235, 239, 264, 268, 269
ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՎԵՏ, 158
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 57
ՏՈԼՍՏՈՅ ԼԵՒ, 116

Փ

ՓԱՄԲՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, 120
ՓԱՆԱՀ-ԽԱՆ, 123
ՓԱՇԻՆՅԱՆ ՆԻԿՈԼ, 95, 136, 235
ՓԱՐԱՋԱՆՈՎ ՍԵՐԳԵՅ, 158
ՓԱՓԱՋՅԱՆ ՎԱՀԱՆ, 83
ՓԵԼԵՇՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ, 158

Ք

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ, 186
ՔՈՋԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, 23
ՔՈՋԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ, 11, 19, 21, 24, 31, 33, 34, 37, 41, 42, 58, 64–67, 74, 79, 85, 87, 92, 93, 97, 102, 106, 109–114, 117, 119, 120, 122–127, 145, 147, 152, 196, 204, 205, 209, 220, 221, 227–229, 231–237, 251, 253–255, 259, 264, 265, 267, 268, 276, 289, 292, 298, 318, 338, 359

Օ

ՕԲԱՄԱ ԲԱՐԱՔ, 358, 360, 361
ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ, 190
ՕՀԱՆՅԱՆ ՊԱՐԳԵՒ, 30
ՕՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 31, 41, 111–113, 195, 196, 318, 359
ՕՐԲԵԼՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ, 209

Ֆ

ՖՐԻԴ ԴԱՆԻԵԼ, 316

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

ԱԲԽԱԶԻԱ, 104, 283, 292, 293, 299
ԱԲՈՎՅԱՆ քաղաք, 273
ԱԴՐԲԵՋԱՆ, 33, 37–40, 56–58, 67–69, 78, 111–113, 172, 192, 193, 248, 291, 294, 296, 297, 299, 305–307, 310, 311, 314, 316, 317, 319, 323, 337, 338, 347
ԱԼԱՎԵՐԴԻ, 273
ԱԼԲԱՆԻԱ, 185
ԱԼԵՔՍԱՆԴՐԵԹ, 109
ԱԽԱԼՔԱԼԱՔ, 113
ԱՂՎԵՐԱՆ, 105
ԱՄՆ, 25, 87, 113, 189, 197, 201, 203, 221, 247, 282, 284, 288, 290, 292, 295, 297, 298, 308, 311, 312, 316, 358–360
ԱՄՍՏԵՐԴԱՄ, 203
ԱՅՍՐԿՈՎԿԱՍ, 291, 292, 294
ԱՆԳԼԻԱ, 23, 65, 74
ԱՆԴՐԿՈՎԿԱՍ, 284
ԱՋԱՓՆՅԱԿ համայնք, 273
ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱԹ, 57
ԱՐԱԲԿԻՐ համայնք, 273
ԱՐԱՐԱՏ, 44, 135, 331
ԱՐԱՐԱՏ քաղաք, 108
ԱՐԱՐԱՏ մարզ, 108, 168
ԱՐԱՔՍ գետ, 108
ԱՐԵՒԵԼՔ, 114
ԱՐԵՒՄՈՒՏՔ, 114, 219–221, 225, 237, 240, 282, 287–295, 297–299, 307, 308, 311–313, 322, 324, 337
ԱՐՄԱՎԻՐ մարզ, 75, 83, 105, 168
ԱՐՏԱՇԱՏ շրջան, 108
ԱՐՏԱՇԱՏ քաղաք, 108, 273
ԱՐՑԱԽ, 20, 25, 26, 33, 36, 40, 42, 43, 45, 74, 77–80, 102, 104, 124, 160, 210, 347
ԱՖՂԱՆՍՏԱՆ, 292

Բ

ԲԱԼԹՅԱՆ երկրներ, 101, 157, 191, 199, 283
ԲԱԼԿԱՆՆԵՐ, 292
ԲԱՂՐԱՄՅԱՆ շրջան, 168
ԲԵԼԱՌՈՒՍ, 185
ԲԵԼԳԻԱ, 180
ԲՅՈՒՋԱՆԴԻԱ, 57

ԲՈՇԻ թաղ, 126
ԲՈՒԴԱՊԵՇՏ, 57, 299, 307, 317
ԲՈՒՐՋ-ՀԱՄՄՈՒԴ, 112
ԲՐԻՏԱՆԻԱ, 116
ԲՐՅՈՒՍԵԼ, 114, 115

Գ

ԳԵՐՄԱՆԻԱ, 69, 100, 116, 199, 202
ԳՅՈՒՄՐԻ, 91, 142, 257, 273
ԳՈՌԱՎԱՆ գյուղ, 108
ԳՈՐԻՍ քաղաք, 273

Դ

ԴԱՎԱՐԻԿ գյուղ, 168
ԴԵՅՏՈՆ, 297
ԴԻՎԻՋԱՆ շրջան, 105

Ե

ԵՐԱՍԽ գյուղ, 78
ԵՐԵՒԱՆ, 3, 23, 27, 44, 45, 47, 48, 52, 53, 71, 83, 91, 95, 105, 108–110, 122, 126, 127, 130, 137, 139, 142, 144, 153, 167, 168, 177, 181, 190, 203, 204, 212, 217, 221, 228, 249, 253, 259, 262–264, 267, 269, 272, 274, 275, 279, 303, 308, 332, 335, 349, 351, 361–364
ԵՒՐՈՊԱ, 97, 113, 114, 191, 197, 216, 220, 225, 233, 237, 240, 244, 247, 283, 307, 330

Զ

ԶԱՆԳԵԶՈՒՐ, 105, 108, 340
ԶԵՅԹՈՒՆ քաղաք, 109
ԶԻՄԲԱԲՎԵ, 338

Է

ԷՋՄԻԱԾԻՆ, 70, 168
ԷՍՏՈՆԻԱ, 199
ԷՐԵԲՈՒՆԻ համայնք, 273

Թ

ԹԲԻԼԻՍԻ, 283
ԹՈԽՄԱԽ թաղ, 126
ԹՈՒՐՔԻԱ, 56, 68, 69, 104, 109, 111–116, 172, 192, 193, 290–292, 294, 296, 297, 309–311, 313, 314, 317, 319, 337, 357–361

Ի

ԻՍՊԱՆԻԱ, 202
ԻՏԱԼԻԱ, 180
ԻՐԱՆ, 68, 172, 193, 292, 294, 310
ԻՐԱՔ, 292

Լ

ԼԱՋԻՆ շրջան, 296, 297
ԼԵՀԱՍՏԱՆ, 157, 283
ԼԵՆԻՆԱԿԱՆ, 99
ԼԵՆԻՆԳՐԱԴ, 74
ԼՈՆԴՈՆ, 65
ԼՈՌԻ, 168
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 332

Խ

ԽՈՋՆԱՎԱՐ գյուղ, 167

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 97, 102, 108, 157
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 48–51, 53, 56, 68, 71, 74, 81, 97–101, 103, 123, 152, 157, 159–161
ԽՈՐՎԱԹԻԱ, 337
ԽՐԱՄ ավան, 32

Ծ

ԾԱՂԿԱՁՈՐ, 105
ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ, 52

Կ

ԿԱԼՈՒԴԱ, 99
ԿԱՍՊԻ, 285
ԿԱՐՍ, տե՛ս նաեւ ՂԱՐՍ, 347
ԿԻԼԻԿԻԱ, 42
ԿԻՐՈՎԱԲԱԴ, 57
ԿՈՍՈՎՈ, 299
ԿՈՎԿԱՍ, 310, 311
ԿՈՐԵԱ, 292
ԿՐԱԻՆԱ, 282

Հ

ՀԱՅԱՍՏԱՆ, 3–6, 8–10, 13–15, 19–21, 24–29, 31–33, 35–42, 44, 45, 47, 49, 50, 52, 54–59, 61, 64–69, 71, 73–81, 83, 85–93, 97, 99, 101, 102–108, 110–116, 119, 120, 122–126, 129, 130, 133–135, 138–140, 142–144, 146–153, 157–162, 164–172, 174–176, 181, 183, 186, 187, 191, 193–195, 197, 199, 200, 202, 203, 205, 206, 209, 210, 213, 214, 216, 219–221, 225, 227, 231, 233, 235, 237–241, 243, 244, 246–248, 252–254, 257, 261, 264, 266–268, 270, 271, 273, 277–279, 281, 283–285, 287–294, 296–303, 305–307, 309–313, 315–318, 320–325, 327–334, 337–341, 343–347, 349, 351–354, 356–360, 364
ՀԱՆՔԱՎԱՆ, 105
ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ, 68, 297
ՀԵԼՍԻՆԿԻ, 316
ՀՈՒՆԱՍՏԱՆ, 74
ՀՌՈՄ, 57
ՀՐԱԶԴԱՆ, 84, 105, 108

Ղ

ՂԱԶԱԽՍՏԱՆ, 53, 148
ՂԱՐԱԲԱՂ, 6, 36–41, 48, 50–52, 54, 56–58, 64–69, 71, 75, 77–79, 86, 101, 111–113, 119, 120, 127, 146, 169, 172, 176, 183, 187, 192, 195, 196, 199, 206, 225, 240, 243, 248, 252–254, 285, 289–301, 303, 305–307, 310–312, 315–324, 329, 331, 334, 345–347, 357, 358, 360, 361
ՂԱՐՍ, տե՛ս նաեւ ԿԱՐՍ, 112, 113

Ճ

ՃԱՊՈՆԻԱ, 116

Մ

ՄԱԴՐԻԴ, 295, 306, 307, 311, 316, 317, 319, 324
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ համայնք, 273
ՄԱԿԵԴՈՆԻԱ, 57
ՄԵՂՐԻ, 78
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔ, 87
ՄԻՆՍԿ, 290–293, 295, 297, 299, 306–308, 311, 316, 317, 324
ՄԻՋԻՆ ԱՍԻԱ, 99
ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ, 87
ՄԽՋՅԱՆ գյուղ, 108
ՄՅՈՒՆԽԵՆ, 64
ՄՈՆՂՈԼԻԱ, 99, 118
ՄՈՍԿՎԱ, 48, 50–52, 64, 65, 75, 77, 98, 332
ՄՈՒՍԱ-ԼԵՌ, 109

Յ

ՅԱԿՈՒՏՍԿ, 99

Ն

ՆԱԻՐԻ, 211
ՆԱԽԻՋԵՒԱՆ, ՆԱԽՃԱՎԱՆ, 32, 57, 99
ՆԱՐԵԿ գյուղ, 108

Շ

ՇԱՀՈՒՄՅԱՆ գյուղ, 108
ՇԵՆԻԿ գյուղ, 168
ՇԻՆՈՒՀԱՅՐ գյուղ, 167
ՇԻՐԱԿ մարզ, 168
ՇՈՒՇԻ, 74

Ո

ՈՍԿԵՊԱՐ գյուղ, 78
ՈՒԶԲԵԿՍՏԱՆ, 53
ՈՒԿՐԱԻՆԱ, 283
ՈՒՐՈՒԳՎԱՅ, 69
ՈՒՐՅԱՁՈՐ գյուղ, 108

Զ

ԶԱՐԵՆՅԱՎԱՆ, 273
ԶԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ, 64
ԶԻՆԱՍՏԱՆ, 221, 340

Պ

ՊՐԱԳԱ, 317

Ռ

ՌՈՒՍԱՍՏԱՆ, 25, 50, 68, 87, 100, 105, 116, 172, 193, 197, 199, 201, 202, 253, 268, 281, 282, 287–295, 297, 299, 305, 307, 308, 311, 312, 337, 340
ՌՈՔԻ թունել, 282

Ս

ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 61
ՍԵՒԱՆ, 105, 108
ՍԼՈՎԱԿԻԱ, 337
ՍՅՈՒՆԻՔ, 167
ՍՈՄԱԼԻ, 338
ՍՈՉԻ, 100
ՍՈՎԵՏԱՇԵՆ, 51, 52
ՍՈՒՄԳԱՅԻԹ, 52
ՍՊԻՏԱԿ քաղաք, 273

ՍՏԱՄԲՈՒԼ, 113
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 97, 112

Վ

ՎԱՆԱՁՈՐ, 142, 273
ՎԱՇԻՆԳՏՈՆ, 203, 219
ՎԱՌՆԱՅ, 100
ՎԵՆԵՏԻԿ, 246, 263, 271
ՎՐԱՍՏԱՆ, 56, 104, 172, 281–283, 289, 291, 294, 310

Տ

ՏԱԹԵԻ, 167

Փ

ՓՈԹԻ, 104, 284, 285

Ք

ՔԱՂՅՐԱՇԵՆ գյուղ, 108
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ համայնք, 273
ՔԱՐԱԿԵՐՏ գյուղ, 168
ՔԵԼԲԱՋԱՐ, 104
ՔԻ-ՎԵՍՏ, 307

Օ

ՕՍԵԹԻԱ (Հարավային), 281, 283, 284, 292, 293, 299

Ֆ

ՖԻՆԼԱՆԴԻԱ, 157
ՖՐԱՆՍԻԱ, 69, 74, 83, 180, 193, 283, 297, 316

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՐՊԵՍ ՄՈՒՏՔ 5

ԻՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉԵԼՈՒ ԵՒ ՀԱՇԻՎ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ (26.10.2007թ.) 19–45

Քոչարյանական վարչախմբի կամ ռեժիմի էությունը 20

Ավազակապետական համակարգի կառուցվածքն ու հանգուցային օղակները 21

Ռեժիմի ձեւավորման եւ զարգացման ընթացքը 23

Ռեժիմի գործունեության տնտեսական հետեւանքները 24

Վարչախմբի քաղաքականության սոցիալական հետեւանքները 27

Բարոյա-հոգեբանական հետեւանքները 29

Իրավական եւ քաղաքական հետեւանքները 30

Հոկտեմբերի 27-ի խորհուրդը 32

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ներկա վիճակը 36

Որոշ լրացուցիչ նկատառումներ 42

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԱԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ (03.11.2007թ.) 47

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՁՐՈՒՅՑ (16.11.2007թ.) 73–95

Ցրտի ու մթի տարիներ 74

Ներկա արատավոր ռեժիմի «արմատները» 80

Քոչարյանի ժառանգած ավերված երկիրը 85

Նախագահական ընտրությունների գործընթացի մասին 87

Նախկին իշխանությունների ռեւանշիզմի մասին 92

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ,
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (08.12.2007թ.) 97–127

Հայաստանի «արդյունաբերության քայքայումը» 97
«Վայրենի սեփականաշնորհում» 102
Հայոց ցեղասպանության վերաիմաստավորման անհրաժեշտության մասին 109
Թաթար-մոնղոլական խանություն 117
P. S. – Հետգրություն 124

ԵԼՈՒՅԹ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ (22.12.2007թ.) 129–153

Ներկա վարչախմբի ռեսուրսները 129
Համաժողովրդական Շարժման ռեսուրսները 135
Ընտրական գործընթացի հաջորդ փուլի խնդիրները 141
Շարժման քարոզչության հիմնական ուղղվածությունը 144

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱՄ ՀԱՆԴԱՐՏ
ԽՈՀԵՐ (06.01.2007թ.) 155–177

«Կորուսյալ դրախտի» հուշը 156
«Վերագտյալ դրախտի» երազանքը 161
Հայաստանը ճամփաբաժանի առջև 164
Նորմալ երկրի ուրվանկարը՝ քաղաքական լեզվով 171

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ (11.01.2008թ.) 179

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ (21.01.2008թ.) 205

ՈՒՐ ԲԱՆՔՆ ՍՊԱՌԻՆ, ԵՒ ԳՈՐԾՔՆ ԹԱԳԱՒՈՐԵՆ (22.01.2008թ.) 209

ՈՒՂԵՐՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ (17.01.2008թ.) 213

ԵԼՈՒՅԹ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ (05.03.2008թ.) 215

ԼՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ (05.03.2008թ.) 219

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱԿԱՆԱՊԱՏԵՑ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ (11.03.2008թ.) 223

ԿՈՉ ՀԱՅԱԴՈՒԼԱՎՈՐՆԵՐԻՆ (11.04.2008թ.) 225

ԵԼՈՒՅԹ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
2-ՐԴ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ (02.05.2008թ.) 227–249

Բախում, թե՞ սպանդ 227

Արեւմուտքի վերաբերմունքը հայաստանյան ընտրությունների եւ մարտի 1-ի իրադարձությունների նկատմամբ 237

Հասարակության պառակտում, թե՞ միավորում 241

Համաժողովրդական շարժման առաջիկա խնդիրները 244

ԵԼՈՒՅԹ 2008 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ 251

ԵԼՈՒՅԹ 2008 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ 261–279

Ազգային ժողով 262

Կառավարություն 264

Իրավապահ համակարգ 267

Տեղական ինքնակառավարում 272

Սերժ Սարգսյանի դերը 275

Հուշակագիր Հայ Ազգային Կոնգրեսի մասին 278

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «Ա1+» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ (20.08.2008թ.) 281

ԵԼՈՒՅԹ 2008 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ 287

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ (04.11.2008թ.) 305

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «NEWSWEEK» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿԻ ԹՂԹԱԿԻՑ ՍԵՄԻՆ ԳՅՈՒՄՈՒՇԵԼԻԻ ՀԵՏ (01.12.2008թ.) 309

ԵԼՈՒՅԹ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ (21.12.2008թ.) 315–335

Ա. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐԿԱ ՓՈՒԼԸ 316

Բ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ 325

Տնտեսական ճգնաժամի ախտանշանները 325

Տնտեսական ճգնաժամի պատճառները 327

Ճգնաժամի հաղթահարման կամ մեղմացման ուղիները 327

Գ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 329

ԵԼՈՒՅԹ 2009 Թ. ՄԱՐՏԻ 1-Ի ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ 337

ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ (01.05.2009թ.) 351–364

Սոցիալ-տնտեսական իրավիճակ 351

Յոթի գործի անփառունակ վախճանը 354

Հայ-թուրքական հարաբերություններ 357

Երեւանի քաղաքապետի ընտրությունները 361

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 365

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 371

Տպագրությունը՝ «ՓՐԻՆԹԻՆՖՈ» ՀՁ ՍՊԸ